Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

4093

22
7-79

23 ОСТ 2009

№ 1028

Александровская
№ 1818
Библиотека

А. ЕКАТЕРИН. ГОРОДСКАЯ
Цѣна кн. — р. 80 к., пер. 15 к.
БИБЛІОТЕКА-ЧИТАЛЬНЯ

ՋԱՆԱՉԱՆՈՒԹԻՒՆ

ՀԻՆԳ ԳԱՐՈՒՑ

Յորմնից եւ բացատրեց

(† Երուսաղէմի միաբան եւ Կ. Պոլսոյ Պատրիարք)

ՊՕՂՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԴՐԻԱՆՈՒՊՕԼՍԵՑԻ

1007
32286

ՀԱՏՈՐ Ա.

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀՐԱՏԱՐԱԿԻ

Տ. Տ. ՄԿՐՏՉԻ Ա.

Վեհափառ եւ Սրբազնագոյն Կաթուղիկոսի

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Թարգմանեց

ՄԱՂԱԹԻԱ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԷՐՈՒՆԵԱՆ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի

1902

СССР
А. Мясникяна
ЕРЕВАНСКАЯ ГОСУДАРСТВЕННАЯ БИБЛИОТЕКА

22 ար.
Գ-79

ՋԱՆԱՋԱՆՈՒԹԻՒՆ

ՀԻՆԳ ԴԱՐՈՒՑ

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ

Ծորիվից եւ բացատրեց

(† Երուսաղէմի միաբան եւ Կ. Պոլսոյ Պատրիարք)

ՊՕՂՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԴՐԻԱՆՈՒՊՕԼՍԵՑԻ

ՀԱՏՈՐ Ա.

ՀՐԱՏԱՆԱՒ

Տ. Տ. ՄԿՐՏՉԻ Ա.

Վեհափառ եւ Սրբազնագոյն Կաթուղիկոսի

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Թարգմանեց

ՄԱՂԱՔԻԱ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԷՐՈՒՆԵԱՆ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի

1901

22.07.2013

4093

Дозволено Цензурою 30 Марта 1898 г. г. Тифлисъ.

ՆԱԽԱԲԱՆ ՀԵՂԻՆԱԿԻՆ

Յոյժ լիցին քեզ աւուրքն յաւիտենից,
Իմացարուք զամս յազգաց մինչև յազգս.
(Բ. Օրինաց. ԼԲ. 7):

Երկրիս վրայ մարդուս համար ամենէն հարկաւոր գիտութիւնն է ճանաչել զԱստուած[1]. եւ ամենէն կարեւոր գործն է՝ կատարել նորա պատուէրները: Վասն զի, Աստուած՝ իւր զերազոյն կամօք ստեղծելով զմարդ՝ իւր հրամանը կատարելու ծառայութեան կոչեց զայն: Իսկ Աստուած կատարեալ հաւատով կը ճանչցուի, եւ նորա պատուէրը բարեգործութեամբ կը կատարուի, զորս Ս. Գիրք կուսուցանեն մեզ: Ուրեմն Աստուածաշունչ գրոց հմուտ լինելէ աւելի կարեւորագոյն գիտութիւն չկայ մարդուս համար[2]:

---

1. Այս են յաւիտենական կեանք, զի ճանիցեն զքեզ միայն ճշմարիտ Աստուած՝ և զոր առաքեցեր զՅիսուս Քրիստոս. Յովհ. ԺԷ. 3.

2. Ամենայն գիրք Աստուածաշունչք և օգտակարք, ի վարդապետութիւն են՝ և ի յանդիմանութիւն

Սահան Ս. Գիրքը կը նմանի մի մեծ ծովու, որու վրայ՝ ինչպէս որ երեք յարկանի նաւը կառողջ է բացէն նաւարկել ու նաւահանգիստը մնալ, իսկ մի թիակով փոքրիկ նաւակը միայն եզերքը քերելով՝ մի եւ նոյն նաւահանգիստը կը հասնի, նմանապէս բոլոր հասատացեալք՝ գիտութիւն ունենան կամ ոչ, իւրաքանչիւրը՝ իւր սիրոյն կամ եռանդին համեմատ, այսինքն ի վերուստ իրեն պարգեւեալ կարողութեան չափով, (նման նաւավարին՝ որ ուղեցոյցին նայելով՝ կորոշէ իւր ճանապարհը) Ս. Գրոց իմաստին հմտանալով՝ եւ նորա պատուէրին համեմատ գործելով՝ հնարաւոր Աստուծոյ կը մնայ փրկութեան նաւահանգիստը:

Այս պատճառաւ Ս. Գրոց իմաստը հորս ատիճանների կը բաժանուի.

Առաջին՝ ըստ ձառին, այսինքն ինչպէս որ գրուած է:

Երկրորդ՝ ըստ մտաց, այսինքն ինչպէս որ իմաստունք կը հասկնան:

Երրորդ՝ ըստ յայտնութեան, յատկապէս Աստուծոյ կողմանէ սրբոց յայտնուածին պէս:

Չորրորդ՝ ըստ կատարելութեան, այն է արքայութեան հասնողների գիտցածին նման[1]:

և ի խրատ արդարութեան. զի կատարեալ եղէ մարդն Աստուծոյ յամենայն գործս բարութեան հատատաեալ. Բ. Տիմ. Գ. 16.

1. Քանզի փոքր ի շատէ պեսեմք, և փոքր ի շա-

Ցիրաւի մարդս որքան աւելի գիտութիւն ծովը քերէ, դարձեալ ամէն կերպով կատարեալին կարող չէ հասնիլ: Ինչպէս որ ճանապարհորդը մի քաղաքի դրսէն անցած ժամանակ՝ նուագածութեան ու երգոց ձայները լսէ, կիմանայ որ քաղաքի մօտակիքը կը զուարճանան, բայց աչքով չը տեսնելուն համար կարող չէ որոշել թէ քաղաքի զարդը ու մարդոց զգեստը ինչ է, նոցա փառքն ու պերճութիւնը ինչ կերպ է, նմանապէս մարդս՝ ամբողջ կեանքում ճանապարհորդի նման է. Ս. Գիրքը՝ նուագածութեան պէս արքայութեան փառքն ու գուարճութիւնքը կը յայտնէ մեզ, բայց որով չը գիտցուիր այս երկրի վրայ թէ ինչ կերպ է այն եւ որ աստիճան մեծ է, քանի որ մարդուս աչքը տեսած չէ, ականջը լսած չէ եւ սրտումը զգացած չէ, ինչ որ Աստուած իւր սիրելիներին համար պատրաստեց[1]: Վասն զի մարդուս համար որքան որ հարկաւոր էր, այնքան գրուեցաւ Ս. Գրոց մէջ[2]:

տէ մարգարէանամք: Այլ յորժամ եկեսցէ կատարումն, փոքր ի շատէս խափանեսցի. Ա. Կորն. ԺԳ. 9, 10.

1. Զոր ակն ոչ ետես, և ունկն ոչ լուաւ, և ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, զոր պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց. Ա. Կորն. Բ. 9:

2. Այլ այս այնչափ ինչ գրեցաւ՝ զի հաւատայցէք, եթէ Յիսուս Քրիստոս է Որդի Աստուծոյ. Յովհ. Ի. 31:

Արդ՝ աշխարհի արարչագործութենէն մինչեւ Ջհուս Քրիստոսի խաչելութիւնը անցած ժամանակը հինգ դարերի կը բաժանուի:

Առաջին դար, Ադամէն մինչեւ Նոյ նահապետի ապրանէն եղնելը:

Երկրորդ դար, Նոյ նահապետէն մինչեւ Աբրահամու կոչումը:

Երրորդ դար, հայր Աբրահամու կոչումէն՝ մինչեւ Սինա լերան վրայ Մովսէսին օրէնք տրուիլը:

Չորրորդ դար, Մովսէսէն մինչեւ Բաբիլոնի գերութիւնը:

Հինգերորդ դար, Բաբելոնի գերութենէն մինչեւ Քրիստոսի խաչելութիւնը:

Վերոյիշեալ դարերում հին կտակարանը կը յայտնէ թէ Մեսիան ո՛ր ժամանակ, որո՛ւ ցեղէն եւ ո՛ր տեղում պէտք է ծնի, ինչպէ՛ս եւ որտե՛ղ մարդկային ազգը մեղքէն պէտք է փրկէ, որպէս զի մարդկ նորա ողորմութեան ապաւինելով միխիթարուին, եւ եկած ժամանակ՝ հաւատան իրեն, եւ նորա պատուէրներին հնազանդելով՝ արքայութեան արժանանան:

Սակայն, դժբաղդաբար մեր ազգայինք շատ տեղ հայերէն չը հասկնալով՝ այդ կենսատու հոտը քարեաց վայելումէն զուրկ կը մնան: Այս պատճառաւ ոմանց քարեկամաց խնդրանօք այս Հանգանութիւն հինգ դարուց գիրքը գրուեցաւ, որ կը պարունակէ իւր մէջ հին կտակարանում գրուած պատմութիւնները, փոքր ինչ էլ մեկնութեանց գրքերէն քաղուածներ, այնպէս, որպէս թէ մեծն Ովկիանոսէն մի կաթիլ ջուր առնուած լինէր. եւ երբեմն էլ իբրեւ իրատ աւելցնելով հասարակ թուրքերէն լեզուով գրեցինք, որպէս զի հայերէն չը հասկցողները կարելի եղածին չափ ճաշակն առնելով թերեւս իրենց նախահարց լեզուն ուսանելու փափաքին:

Եւ մանաւանդ իրենց որդիքը ուսումնարան ղրկելով կարողալ գրել սովորեցնեն, որպէս զի Սուրբ Գիրքը իրենք հասկնալով օտար լեզուի կարօտ չը լինին: Որովհետեւ իւր ազգային կամ մայրենի լեզուն չը գիտնալը՝ մեծ յանցանք է մարդուս:

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ ԸՆԹԵՐՑՈՂԻՆ

Անհրաժեշտ մի ճշմարտութիւն է որ քրիստոնեայ աշխարհի քաղաքակիրթ և յառաջադէմ ազգերը շատ բան կը պարտին Աստուածաշունչ մատենից ընթերցանութեան։

Ա. Դիրք թէ իբրև ազբիւր հոգևոր ու փրկարար ճշմարտութեանց, որք կատարելապէն զմարդիկ յաւիտենական կենաց, որ նոցա այս կենաց վախճանական նպատակն է, և թէ իբրև գերազանցապէս բարոյախօսութեան, օրէնսդիտութեան, բանաստեղծութեան և պատմութեան ճոխ պաշար պարունակող մի ընտրելագոյն ու հնագոյն գիրք՝ շատ և շատ նպաստած են ու ցարդ կը նպաստեն ազգաց և ժողովրդոց բարոյական և իմացական զարգացման ու յառաջդիմութեան։

Այսօր շատ անկեղծ և ազնիւ անգլիացի ու ամերիկացի գիտնականք կը խոստովանին թէ իրենց ազգի հոկայաքայլ յառաջադիմութիւնը գլխաւորապէս Ս. Գրոց ընթերցանութեան աստիճին տարածման արգասիքն է։ Զայս ժխտել՝ կը նշանակէ արևու դէմ աչք փակել։

Արդարև մենք հաւատացած ենք որ մեր անմահ նախնիքն ևս Կիւդէմպէրկի անմահ

պիտեն չատ առաջ Ս. Գրոց ընթերցանութիւնը մեր խղճալի հայ ազգին մէջ տարածելու համար անհատական ջանքեր ի գործ դնելով, Ս. Գիրքը ընդօրինակելով ու հազարաւոր ձեռագիրներ Հայաստան աշխարհի չորս կողմերը ցրուելով նպատակ ունեցած են ոչ միայն հոգիներուն փրկութեան օգնել, ինչ որ, ի հարկէ, էական տեսակէտ է, այլ և հանդամանաց ներածին չափ, ազգիս մտաւոր ու բարոյական զարգացման ձեռնտու լինել։

Դժբաղդաբար մենք կարող չենք պարծենալ թէ՛ թէև աւելի նպաստաւոր հանգամանաց մէջ, միևնոյն եռանդով և միևնոյն աշխատասիրութեամբ և զոհաղութիւններով կը ջանանք տարածել Ս. Գրոց ընթերցանութիւնը մեր տարաբաղդ Ազգին մէջ, ինչպէս արած են մեր հոգևոր և պանծալի նախնիք։ Ահա այս խօսքը ճշմարտութիւնը աչքի առաջ ունենալով մեր նորին վեհափառ Հայրապետը, Տ. Տ. ՄԿՐՏԻՉ Սրբազնագոյն Կաթուղիկոսն ամենայն Հայոց, արդէն հաստատապէս որոշած և ձեռնարկած է ի մօտոյ ամբողջ Աստուածաշունչ մատեանը նոր տպագրութեամբ Ս. Էջմիածնի տպարանէն ի լոյս ընծայել յօգուտ և ի վայելումն օրհնեալ ազգիս։

Բացի այդ, Նորին Ս. Օծութիւնը բարեհաճեցաւ տակէ մօտ չորս տարի յառաջ հրամայել

նուաստս՝ Էմիրնեցի մեծն Պօղոս պատրիարքի հայապիր և տաճկերէն լեզուաւ հեղինակած «Ջանապատութիւն հինգ գարուց» անուամբ գիրքը թարգմանել ի հայ լեզու, որ ուրիշ բան չէ, եթէ ոչ դրեթէ ամբողջ Աստուածաշունչը պատմական նօրէն յառաջ բերուած և ըստ Հայաստանեայց եկեղեցւոյ մեկնաբանուած՝ պարզ ու հասկանալի կերպով։

Ցիրաւի սորա նման երկասիրութիւնք կան ազգիս մէջ, տպեալ աստ ի Ս. Էջմիածին, յԵրուսաղէմ, ի Կ. Պոլիս և այլուր, սակայն սորա մի մեծ առաւելութիւնն այն է, որ ոչ միայն խրատ քանչիւր գլխոյ վերջում, այլ նաև դրեթէ ամէն մի պատմական կտոր յառաջ բերելէ վինէ՝ հանդերձ մեկնաբանութեամբ դեղեցիկ, ազգու և ճոխ խրատական յորդորներ կը յաւելու, որ իւր տեսակին մէջ առաջինն է, և որ՝ բնական մի եղանակ կը թուի մեզ՝ ընթերցողի սրտին ու հոգւոյն մէջ առաքինութեան և Աստուածպաշտութեան սէրը արծարծելու համար։

Գրքին այն հանդամանքը այն աստիճան ուշադրաւ է, որ ոչ միայն ամէն դասակարգի ընթերցողաց կարող է օգտակար լինել, երբ բարեպաշտ դգացմամբ ու հաւատով կարդացուի, այլ մանաւանդ քարոզչաց, նկատելով որ Ս. Գրոց վկայութիւնք խիստ քաջայարմար կերպով դասաւորուած են իրենց տեղում ըստ ամենայնի։

Մի երկու բառ ևս թարգմանութեան մասին։ 1897-ի վերջերը սկսանք թարգմանել այդ պրպտան երկը, բայց հապճեպ նորա կէսը թարգմանած էինք, (դէրքը ինչպէս յառաջ, նոյնպէս և այժմ 3 հատորներէ պէտք է բաղկանայ) և ահա Նորին Վեհափառութեան որոշմամբ և հրամանաւ սակաւուեցանք գործը կիսակատար թողուլ և գնալ ի Պարսկաստան, ուրանօր երեք տարի պաշտօնավարելէ յետոյ, երբ վերադարձանք ի Ս. Էջմիածին, Նորին Վեհափառութեան հրամանաւ ապրէն ապաւորութեան յանձնուած եր թարգմանուած մասը, որով մեզ կը մնար շարունակել և աւարտել վերջով ինչ որ սկսած էինք ի Ս. Էջմիածին և բաւական յառաջացուցած ի Նոր-Զուղա մեր առաջնորդական բազմաշրջապ վիճակում. հետևաբար ժամանակ չենք ունեցած և ես արբապրութիւն կատարելու. վասնորոյ բանիբան ընթերցողաց ներողամտութիւնը կը խնդրուի լեզուի ինչ ինչ անհարթութեանց համար։

Եթէ մեր այն թարգմանական աշխատութիւնը ամենց բարեպաշտ ազգայնոց օգտակար կարողանայ լինել, այն պէտք է լինի նաև մեր վարձք։

1901 Օգոստոս
Ս. Էջմիածին։

Մ. Ե. Տ.

ԶԱՆԱԶԱՆՈՒԹԻՒՆ

ՀԻՆԳ ԴԱՐՈՒԻՑ

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

կը բովանդակէ Ս. Բ. Գ. դարուց եւ Յոբայ պատմութիւնները, ինչպէս նաեւ Դ. դարը մինչեւ Յեսու.

ՋԱՆԱՉԱՆՈՒԹԻՒՆ

ՀԻՆԳ ԴԱՐՈՒՑ

ԱՌԱՋԻՆ ԴԱՐ

Ա—ԱՐՔԱ ՀԱՐՑԱ—Ց

Աշխարհս մի ժամանակ առեղծուած է։

ՊԱՏՄԱԲԱՆ

Աշխարհս ժամանակի նկատմամբ առեղծուած չէ, այլ ժամանակն սկսած է աշխարհիս արտաքուստ թնանիլ։ Արդ՝ յայտնի է որ աշխարհ ժամանակին սկիզբը առեղծուածաւոր։ որովհետեւ ժամանակը ատաղձագործ չէ, որ ձեռագործ ըլլալով՝ նոցա փոփոխութիւնները կը չափէ. և այս չափը արեւու շրջան անուանեն։ Ուրեմն աշխարհ առեղծուածէն առաջ ոչ ժամ կար և ոչ չափելիք, այլ յաւիտենական մի յառաջ կու գայ, ինչպէս օր, ամիս, տարի։

Աստուած, որ ժամանակի տակ չէր մտներ։ Վասնզի ժամանակն երեք մասերու կը բաժանուի—անցեալ, ներկայ, ապառնի—բայց յաչս Աստուծոյ չկայ անցեալ և ապառնի. բոլորը՝ ներկայ է Անոր։

Աշխարհիս արարչութեան ժամանակը գիտնալ օգուտ չ'ուներ. այլ՝ խորհէ որ դուն քանի տարի է աշխարհ եկած ես, և ի՞նչ ծառայութիւն արիր Աստուծոյ. ինչու որ քեզի համար ստեղծեց աշխարհը, որպէս զի դուն զԱստուած ճանչնալով՝ անոր հնազանդիս, որով՝ Նորա արքայութեան մէջ ես յաւիտենական փառք քեզ չնորհուի։

Հարցում Բ.

Քանի որ ժամանակն աշխարհի ստեղծագործութենէն կ'սկսի, անտի առաջ ինչպէ՞ս հասկնալու ենք։

Պաս. Մարդն ժամանակի տակ ստեղծուած ըլլալով, հազիւ կարող է ժամանակի ներքոյ ինկած բաները գիտնալ։ Արդ՝ աշխարհէս առաջ արարած չ'ստեղծուեցաւ, այլ միայն մէկ Աստուած կար յաւիտենական, անսկիզբն և անվախճան. և որչափ ալ հարցուի թէ աւելի առաջ ի՞նչ կար, դարձեալ կը պատասխանեմ — յաւիտենականութիւն, առանց սկզբի և առանց վախճանի—միօրինակ տեղութիւն։ Աշխարհ ստեղծուելէն առաջ ի՞նչ կարը մի՛ մտածեր, այլ՝ աշխարհի վախճանին վրայ խորհէ, կամ թէ դուն մեռնելէ յետոյ ի՞նչ կայ, դորա մասին մտածէ։ Այո՛, արդարև մարդու մարմինը ոչինչէ գոյացաւ, բայց հոգին անմահ ընելով, Աստուծոյ պատուիրանաց հնազանդողին համար արքայութիւն կայ և անհնազանդին համար յաւիտենական պատիժ կայ։

Հարցում Գ.

Աշխարհ ասելով ի՞նչ կ'իմանանք

Պաս. Երկինքն ու երկիրը, և անոնց մէջ եղած բոլոր արարածները, զորս Աստուած իւր ամենազօր և անսահման մեծ կարողութեամբ ոչինչէ ի գոյ բերաւ։ Սակայն Աստուծոյ կարողութիւնը ոչ թէ միայն ստեղծուած արարածոց մէջ կը սահմանափակուի, այլ՝ պարունք անոնցմէ իբր անհուն ովկիանոսի մէկ կաթիլ չուրը, մարդկային մտաց անհաս աստուածային մեծ կարողութիւնը մտաբերել և հասկնալ։ Որովհետև Աստուած ամենակարող չէր ասուեր, եթէ ստեղծուած արարածներէն զատ ուրիշ բան ստեղծելու անկարող ընէր, մինչ Աստուած ոչ թէ իր կարողութեան համեմատ արարածները ստեղծեց, այլ իր բարձր կամաց համաձայն[1]։ Քանզի Աստուծոյ կարողութեան չափ և սահման դնել կարելի չէ, բայց անչափ և անսահման արարած ևս չի լիներ։ Մարդն իր ուղածին համեմատ կարող չէ գործել, այլ իր

1. Աստուած մեր յերկինս և յերկրի զամենայն զոր ինչ կամեցաւ և արար։ Սաղմ. ճԺԳ. 11.

կարողութեան համեմատ. բայց Աստուած իր կարողութեան համեմատ չ՚անէր, այլ իր կամքոյ համաձայն:

Մի՛ հպարտանար, ով մարդ, քու պիտուութեան, կարողութեան, իշխանութեան և հարստութեան վրայ, այլ Աստուծոյ մեծ կարողութեան վրայ խորհելով, զարժացիր և ամաչէ, ու հպարտութենէ դիտս կաց:

Հարց–ՀԴ.

Աստուած ինչու համար արարածները ստեղծեց:

Պատ. Ինք համար[1]: Բայց ո՛չ թէ անոնց կարօտեր, այլ որպէս զի իր մեծ կարողութիւնը, պիտութիւնը, բարութիւնը և մեծաշուք փառքը անոնց մէջ յայտնի երևիւն[2], և հրեշտակաց հետ՝ մարդկային ազգը իր անմահական անդրութեան ու փառաց արժանի անէ. քանի որ բովանդակ արարածոց մէջ միայն հրեշտակներն ու մարդկային հոգին գիտէ, որ բարձրեալն Աստուծոյ շնորհիւ, այն յաւիտենական փառքին ընդունակ են:

Որովհետև նոքա մարքի և կամքի տէր լինելով կարող են մտքով ճանաչել և կամքով սիրել զԱստուած, և անմահ լինելով ևս, Աստուծոյ յաւիտենական արքայութեան մէջ նորա երկնային փառքով փառաւորուել: Ինչպէս որ հրեշտակները հոգիէն էակներ լինելով չեն մեռներ, այսպէս էլ մարդկան հոգիները հոգեղէն լինելով չեն մեռներ, և այս պարգևը ծրի շնորհէց նոցա, բայց այս պայմանաւ որ իւր հրամանին հնազանդին: Ուստի իրաւամբ հրեշտակներն ու մարդիկ պարտական եղան Աստուծոյ հնազանդելու:

Սակայն ո՛չ թէ նոցա հնազանդութեամբ Աստուծոյ փառքը կ՚աճէնայ, և ոչ հնազանդելով նորա փառքը կը նուազի, քանի լոյս. այլ նոքա ըստ իրաւանց իրենց պարտքին ազատելով Աստուծոյ փառքին կ՚արժանանան:

Եւ ինչպէս որ Աստուած աշխարհս ստեղծելուն՝ հնազանդելոյ համար յաւիտենական ուրախութիւն պատրաստեց իր արքայութեան մէջ, քանի որ բարեբար և ողորմած է. այսպէս էլ նա՝ անհնազանդելոյ համար յաւիտենական պատիժ սահմանեց ի բնակարանս չժոխոց, որովհետև արդար է:

Արդ՝ ինչպէս որ Աստուծոյ դէմ ըմբոստ գտնուող հրեշտակները այդ պատասխանութեան վայրն աքսորուեցան, նոյնպէս մարդոցմէ ապստամբները նոյն պատժավայրը պիտի ձգուին ամենայն իրաւամբ:

Թէպէտև արքայութիւնը մարդուն՝ և չժոխքը

---

1. Ջամենայն ինչ պատճառս Տէր վասն իւր Առակ. ԺԶ. 4:
2. Երկինք պատմեն զփառս Աստուծոյ Սաղմ. ՃԸ. 1.

սատանային համար պատրաստուեցաւ[1], բայց մարդն իր մեղաց պատճառաւ Աստուծոյ դէմ ապստամբելով իրեն համար պատրաստուած արքայութիւնը կը թողու և սատանային յատկացեալ գժոխքին կը ցանկայ. քանի որ մարդուն՝ դժոխք գնալու պատճառն իր մեղքն է. որովհետև Աստուած արդար լինելով ոչ մի անմեղ մարդ կը պատապարտէ:

Արդ՝ ինչպէս որ հնազանդութեան մէջ մընացող հրեշտակները յաւիտենապէս Աստուծոյ փառաց մէջ լինելով, զԱնի կը փառաւորեն և կը սիրեն. և Նորա սիրովը Արքայութեան անվախճան երանութեան մէջ կը հրճուին և կ'ուրախանան, նմանապէս մարդն ալ, եթէ աշխարհիս մէջ Աստուծոյ կը հնազանդի, արքայութեան մէջ հրեշտակաց նման պիտի լինի:

Աշխարհիս մէջ Աստուծոյ հրամանին համաձայն ապրելէն ի պատ, մարդս ուրիշ գործ չ'ունի[2]. և մարդուն համար ասկէց մեծ և կարևոր գբաղում կամ ծառայութիւն չի կարող լինել:

---

1. Եկայք օրհնեալք Հօր իմոյ, ժառանգեցէք զպատրաստեալ Ձեզ զարքայութիւնն ի սկզբանէ աշխարհի... եթէպայք յինէն անիծեալք ի հուրն յաւիտենական, որ պատրաստեալ է սատանայի և հրեշտակաց նորա. Մատթ. ԻԵ. 34, 41.

2. Առա գործել զգործս Աստուծոյ, և անդ հանգչիլ ընդ Աստուծոյ. Շարակ.

Որովհետև եթէ կարևոր չը լինէր, մարդն ի զուր ստեղծուած պիտի լինէր: Բայց Աստուած զմարդն ի զուր ստեղծեց ասելը՝ պարզապէս հայհոյութիւն է[1]: Արդ՝ եթէ ծառայութիւն կայ, հարկաւ վարձ էլ կայ[2]: Ահա այս է մեր սուրբ հաւատոյ վախճանական նպատակը. այն է՝ թէ այս աշխարհի մէջ Աստուծոյ հաւատարմութեամբ ծառայողին՝ արքայութեան անվախճան ուրախութիւնը կը շնորհուի[3]. վասն զի եթէ արքայութեան մէջ մարդուն մի ուրիշ վարձատրութիւն ու շնորհ չը լինէր, մարդն անատնոց նման կը լինէր, քանի որ մարդն էլ կը մեռնի, անասունն էլ. և մեռնելէն զկնի այս աշխարհի վարած կեանքին ուրախութիւնն և իշխանութիւնը երապի նման կը լինի:

Արդ՝ այս մասին կամ արքայութիւնը հարկ է ընդունել, կամ զմարդն մարդկութենէ դուրս հանել. և արքայութիւնը ընդունածիդ պէս, ի հարկէ Աստուծոյ հրամանին պարտիս հնազանդել, և ով որ չի հնազանդիր, յիմարի աստիճանին կ'իջնէ. ինչու որ օգուտն ու վնասը չը զանազանել՝ յիմարութիւն է:

---

1. Միթէ ի զո՞ւր ինչ ստեղծեր պամենայն որպիս մարդկան Սաղմ. ՀՀ. 43.

2. Արժանի է մշակն վարձու իւրոյ. Ա. Տիմոթ. Ե. 18.

3: Ակնիւ ծառայ, բարի և հաւատարիմ... մուտ յուրախութիւն Տեառն քոյ. Մատթ. ԻԵ. 21.

Հատոր Ե.

դարձլի է արդեօք ըստ կարելւոյն աշխարհի արարչութեան եղանակը հասկանալ:

Պաս. Աշխարհի արարչութեան կերպը՝ Մովսէս Մարգարէի պատմութենէն, և դիտոց կոդմանէ ամփոփուած, սակս կը հասկացուի թէ բոլոր արարածոց պատկերը կամ նկարը յաւիտենական Աստուած լինելով, իւր բարձրագոյն կամաց համաձայն, այդ նկարին համեմատ՝

Ա. Առաջին օրուն՝ սկիզբը Աստուած սահեցոյց երկինքը, և երկիրը. երկիրն լինելոց հետ սահմանց հրեշտակներն ու լոյսը: Երկիրը հատատանց գտատրկութեան մէջ[1] և անոր չորս կոդմը ջուրը շրջապատանց[2]. ու հոդին սուրբ այս ջրին վրայ կը շրջէր, որ անոր պօրութիւն տայ[3]: Եւ Ջրոյն շուրջը օդ, և օդէն վեր լոյսն էր, զոր երկրին մէկ կողմը կանդնեցնելով, այն կողմը լոյս եղաւ, և միւս կողմը խաւար[4]. ահա այս կերպով երեկոյ և առաւօտ եղաւ կ՚ասուի[5]:

1. Նախնաց պերկիր և վերայ ուշնչ. Ծննդ. Ի. 7:
2. Եւ երկիր եր անեղեւոյթ. Ծննդ. Ա. 2.
3. Եւ հոդի Աստուծոյ շրջէր և վերայ ջուրց. Ծննդ. Ա. 2:
4. Եւ խաւար և վերայ անդնդոց. Ծննդ. Ա. 2:
5. Եւ եղև երեկոյ և եղև վաղորդեան օր մի. Ծննդ. Ա. 6.

Երկրորդ օրուն՝ ջուրը՝ որ երկիրը շրջապատած էր, բաժանուելով՝ մէկ մասը դէպ ի երկինք բարձրացաւ, իսկ միւս մասը վարը մնաց: Եւ այս երկու ջուրերուն միջև երկինքը հաստատուեցաւ, որ հաստատութիւն ալ կը կոչուի[1]:

Երրորդ օրուն՝ վարը մնացած ջուրը մէկ կողմ ժողովուելով՝ ծովը կազմեց. և միւս կողմը ցամաքը երեւցաւ[2]: Եւ ահա իսկոյն Աստուծոյ հրամանաւ երկիրը տեսակ տեսակ բոյսերն ու ծառերը բուսցուց. և երկիրն երեսը ամէն կերպ բուսականութեամբ զարդարուեցաւ: Եւ Աստուած դրախտն ալ անկից, որուն մէջ կենաց ծառն և բարին ու չարը գիտնալու ծառը կային:

Չորրորդ օրուն՝ Աստուած արեգակն ու լուսինը և աստղերը սահցնց. որ աշխարհիս լոյս տալով, դիշեր, ցերեկ, ամիս, տարի և ժամանակն որոշուին:

Հինգերորդ օրուն՝ Աստուած հրամայեց որ Ջուրը տեսակ տեսակ ձուկերն ու թռչուններըր, և Ջրին մէջ եղած բոլոր կենդանիները յառաջ բերէ, և հրաման արաւ անոնց որ բազմանան:

Վեցերորդ օրուն՝ Աստուած հրամայեց որ երկիրը դուրս հանէ բոլոր ցամաքային կենդանիքը, և երբ սոքա ամրողջացան, Աստուած մարդուն

1. Եւ եղեցի մեծին և մէջ ջուցդ և ջուց. Ծննդ. Ա. 9.
2. Եւ երեւեցաւ ցամաքն. Ծննդ. Ա. 9.

մարմինը հողէն շինելով, անոր հոգի տուաւ փըչելով. այնպէս որ մարդն եղաւ բանական կենդանի: Աստուած օրհնելով զմարդն կը հրամայէ որ շատնան, և բոլոր կենդանեաց վրայ իշխեն. նմանապէս հրամայեց որ պտուղք և բուսեղէնք իրենց սնունդ լինին: Եւ բոլոր ցամաքի վրայ գտնուած կենդանիքն ու թռչունք Աստուծոյ հըրամանաւ եկան առ Ադամ, որ անոնց ամենուն յարմար անուններ դրաւ: Աստուած Ադամը իր եղած տեղէն դրախտը փոխադրեց, ուր Ադամայ վրայ թմրութիւն մը գալով Աստուծմէ, ննջեց, և նորա կողերէն մին առնելով՝ Եւայի մարմինը շինեց, ու անոր ևս տուաւ հոգի, ինչպէս տուած էր Ադամին: Երբ Ադամ զարթնելով Եւան տեսաւ, իմացաւ թէ Աստուած իրեն օգնական տուած է զանի: Արդ՝ այսպէս վեց օրուան մէջ երկինքն ու երկիրը և անոնց միջի համայն արարածներն ամբողջացան:

Իսկ եօթներորդ օրում, որ շաբաթ օրն է, Աստուած հանգստացաւ. այսինքն աշխարհի նըկատմամբ կարևոր եղած բաներն ամբողջացան:

Եւ որովհետև Աստուած բոլոր արարածներէն աւելի մարդը սիրեց ու զանի մեծապես փառաւորելով աշխարհի իշխան կարգեց, ուստի որպէս զի նորա առ իւր Արարիչն ունեցած հնազանդութիւնը յայտնի լինի, Ադամին կը պատուիրէ որ դրախտին միջի բոլոր ծառոց պտուղէն ուտեն,

բայց բարւոյ և չարի գիտութեան ծառոյն պտուղէն չուտեն, որ չը մեռնին: Սակայն սատանան՝ օձին միջոցաւ Եւային և վերջնոյս ձեռամբ ալ Ադամին որուած պատուէրին հակառակ գործել տալով, դրախտէն նոցա արտաքսուելուն պատճառ եղաւ: Այս պատճառաւ Աստուած հրամայեց քերովբէներուն որ կենաց ծառին ճանապարհը պահպանեն:

Ով մարդ, Աստուած զքեզ երկրի վրայ գտնուած բոլոր արարածներէն աւելի փառաւորեց և անոնց ամենուն իշխան կարգեց, ուստի պարտաւոր ես Աստուծոյ մարդասիրութիւնը գնահատելով՝ ամենայն հաւատարմութեամբ միշտ Անոր ծառայել:

Հարց. 9.

Ինչո՞ւ համար աշխարհս վեց օրում լրացաւ:

Պաս. Աստուած կարող էր աշխարհի ստեղծագործութիւնը իսկոյն կատարել, բայց այս պարագային մէջ օրինակ կուտայ մարդուն, որ իւր ամէն գործերուն մէջ կարգով շարժի և չ'ամաչպարէ: Նմանապէս արարածոց աստիճանաբար կատարելութեան հասնելը՝ բնութեան պայմանն է:

Սակայն Աստուած անոնց գոյացութիւնը իսկոյն ստեղծեց յոյնչէ[1]: Ուրովհետև վեց օրուան

1. Զի նա ասաց և եղեն. Սաղմ. ՃԽԸ. 5.

մէջ երկաք տեսակ կարողութիւն ի գործ դրաւ — առեղծել, գտանել, և զարդարել. Առաջին օրում առեղծեց երկրորդ օրում ջուրը բաժանեց երկնքի և երկրի, երրորդ օրում ծովը և ցամաքը զատելով զարդարել սկսաւ. նմանապէս ճեացեալ երկաք օրերում զանազան դէմպատկերութիւններով երկինքն ու երկիրը կատարելագոյն շքեղազարդեց:

Արդ՝ արարածոց սահմանման մէջ Աստուծոյ մեծ կարողութիւնը յայտնուեցաւ և զանազան գտանելով բաժանելուն մէջ՝ Նորա մեծ գիտութիւնը, և զարդարելուն մէջ՝ Նորա մեծ բարութիւնը, աշխարհը մարդուն ապրուստի մէջ՝ Նորա բարեբարութիւնը, և մարդը այս ամենուն վրայ իշխան կարգելուն մէջ ալ Նորա մեծ իշխանութիւնը յերեւան եկան. որովհետև ինքն է ամենուն Տէրը, որուն որ ուզէ, անոր կուտայ[1]:

Հարց—Ե.

Դրախտն ո՞ւր էր:

Պատ. Մարդը գիրքէն կ'իմանանք որ արեւելեան կողմը Եդեմ կոչուած տեղումն էր[2]. և Եդեմ՝ Հայաստանի Խնուս գաւառին Պին-կէօլ ասուած վայրն է կը կարծուի: Որովհետև դրախ-

1. Երկինք երկնից Տեառն են, և կերկիր եւ որ[illegible] մարդկան. Սաղմ. ՃԺԴ. 21:

2 Եւ անկեաց Աստուած դրախտն յԵդեմ ընդ արեւելս. Ծննդ Բ. 8.

տէն երած չորս գետերը, որք են Փիսոնն, Գիհոնն, Տիգրիս և Եփրատ՝ այդ կողմի լերանց ստորոտներէն կը բղխին: Փիսոնն՝ որ Ճորոխ գետն է, բազերդաս լճակներէն եղնելով կիւմիւշխանէի և Ճանիկու կողմերը շրջան կ'անէ, ուր ոսկու, արծաթի և պղնձի հանքեր կան: Երկրորդը՝ Գիհոնն, որ Արազ գետն է, Ելեովպիոյ կամ որ նոյն է Դաւրիժի կողմերը պատյտ կ'անէ. ինչու որ առաջներէն այդ կողմը բնակող ժողովուրդը Ելեովպիացի կը կոչուէր: Երրորդը՝ Տիգրիս որ Տաճն է, Ասորեստանի կողմերը կը վազէ, այսինքն Տիգրանակերտ և Մուսուլ քաղաքաց կողմը: Չորրորդը Եփրատ, որ Մուրատ գետն է, Մշոյ գաւառէն անցնելով կը գնայ և Տիգրիսի հետ կը միանայ:

Եդեմական դրախտին ուր լինելը մի՛ հարցնեք, այլ մանաւանդ երկնային դրախտին ուր լինելը. և թէ ինչպէս և ինչ ճանապարհով այնտեղ մտնել կարելի է, ահա այդ սովորէ: Վասն զի Եդեմական դրախտը մտնողը դուրս եկաւ, իսկ երկնային դրախտը մտնողը միշտ հոն կը մնայ: Ցայտնի է նաև որ յանցանքի պատճառով մարդը դրախտէն արտաքսուեցաւ: Արդ՝ եթէ յանցանքը կ'արտաքսէ մարդը դրախտէն, Յիսուս Քրիստոսի շնորհօք առաքինութիւնը մարդը կը մտցնէ երկնային դրախտը—արքայութիւնը:

Հաբցա–ՏՐ.

Ադամն ինչ ստեղծուեցաւ։

Պապ. Սուրբ գրոց մէջ անյայտ ծնացած իւրաքանչիւր մը կարելի չէ որոշ պատասխան տալ, միայն թէ ոմանց կարծիքով կ'ասուի թէ Քանանու Քեբրոն կոչուած տեղին ստեղծուած է։ Հայր Աբրահամի գերեզմանը այն տեղ լինելով, հիմա Արապները Խալիլ Ռաղրահիմ անունը կուտան այն տեղին, որ Ս. Երուսաղէմից վեց ժամ է։

Ադամ դրախտէն հանուած առեն, դարձեալ Քեբրոնի մէջ բնակեցաւ կ'ասուի. ինչու որ հողը առնուած կամ ստեղծուած տեղն աքսորուելով ի հարկէ հոն բնակութիւնը հաստատեց[1]։ Նաև Ադամ կարմիր և արեան վերաբերեալ կը թարգմանուի. վասն զի տէմ արաբական լեզուով արիւն կը նշանակէ. այս պատճառաւ ոմանք կ'ասեն թէ Ադամայ հողը Դամասկոսի դաշտէն առնուած է, զի Դամասկոսին Ցըմըշգ անունը կուտան, որ նոյնպէս արիւն կը նշանակէ։ Եւ այս մտքով ոմանք՝ հասարակութեան մէջ գործածական այն խօսքը (էվելի շամ՝ ակըլի շամ) կը մեկնեն այսպէս թէ «Մարդուն սկիզբը հող էր և վերջն էլ հող պիտի լինի»[2]։ Դարձեալ որչափ որ

1. Եւ եհան արձակեաց զնա ՏԷր Աստուած . . . ուստի առաւ. Ծննդ. Գ. 23։

2. Հող եմը և ի հող դարձցես. Ծննդ. Գ. 19։

Ադամայ գերեզմանը Քեբրոնի մէջ է. յետոյ նորա գլուխը Գողգոթայ լեռը փոխադրուած և թաղուած է[1]։ Հայր Աբրահամ իր որդին Իսահակը այս լերան վրայ Աստուծոյ պատարագ մատոյց, այդ պատճառաւ յիշեալ լերան Գողգոթայ անունը տրուեցաւ, որ կը նշանակէ գլուխ կամ գլուխ կարելու վայր[2], ուր մեր Յիսուս Քրիստոս Փրկիչը խաչուեցաւ։ Ահա այս իմաստով պատկերհանք խաչելութեան պատկերաց ներքևը Ադամայ գլուխն ալ կը նկարեն։

Հարկ է մարդուն մեծ ուշադրութիւն նուիրել այս պարագային, ինչու որ մարդ (ատէմ, տէմ) բառն արիւն նշանակելով, ամէն անգամ որ յիշէ կամ իր անուան իմաստը հասկանայ, պարտի վախնալ և զգոյշ լինել որ Աստուծոյ կամայ հակառակ ուրիշի արիւնը չը մտնէ. վասն զի պատուէրին դէմ կեցողը նախ իր արիւնը կը մտնէ, ինչպէս որ Եսայի մարգարէն մեղքը արեան կը նմանցնէ[3]։

---

1. Սոսկալին Սերովբէից՝ բառնայր ընքեամբ զփայտ խաչին, մինչ է տեղի Գողգոթային, յորում եդեալ մարդն առաջին. Շարակ.

2. Գողգոթայ՝ որ է տեղի կառափելոյ. Մատթ. ԻԷ. 33.

3. Զեռք ձեր լի են արեամբ. Եսայի. Ա. 45.

Հարց–՝ Թ.

Աստուած ինչու՞ համար Ադամն պահպանին մէջ չստեղծեց։

Պաս. Ադամ չը կարծէ, որ պահապը իւր սեփականութիւնն է. այլ Աստուծոյ պարտութիւնն քմբռնելով, ջանայիր լինի զան պահպանելու, որպես թե անկէ դուրս չը հանուի։ Ուստի Ադամայ ուրիշ անդ տեղծուելն ու պրսկապը փոխարինելը՝ մեծ խրատ կը տար։

Մարդու մը բարիք անել՝ երկու տեսակ կը լինի մին այն է՝—իւր բազձանքին հասցնել. և միւսն իւր վախցած կամ կասկածած բանէն ազատել։ Բարերարն Աստուած երկու բարիքը ի միասին կը շնորհի մարդուն. ինչու որ հարկաւոր եղածը այն կերպով կուտայ, որ անկէց մարդուն վնաս չի գար։ Շատ անգամ մարդն հարստութիւնը գիւրութեամբ կը գանէ, բայց գժուարութեամբ կը պահէ զայն, և կամ չը կրնալով պահպանել կը կորնցունէ։ Հարստութեան հասնիլ՝ քաջութիւն չէ, այլ խելացութիւն է յայնմ յարատևել միայն։ Աստուծոյ բարիքը միշտ պարմանութիւն է, մարդուն, բայց Նա և պարտական է որ այն պարմանութիւնը պահէ պահպանէ, և պղտչանայ պայն կորնցունել է։

Հարց–՝ Ժ։

Ինչու՞ համար մինչեւ Ադամայ ստեղծուիլն բարձրելոյն անունը Աստուած միայն գրուած է սուրբ գրոց մէջ, իսկ Ադամ ստեղծուելէն յետոյ Տէր Աստուած գրուած է։

Պաս. Որովհետև Աստուած պատուէր պէտք է տար Ադամայ, և պատուէրը իշխանութեան տէր եղողը կուտայ, այդ պատճառաւ Ադամ ստեղծուելէ յետոյ իշխանութիւն յայտնող բառն էլ Աստուած բառին հետ միասին գրուեցաւ. որպես զի մարդն ինչպես որ Արարիչ կը ճանաչէ զԱստուած, այնպես ալ Տէր և իշխան ճանաչելով հնազանդի Անոր։ Որովհետև մարդը կամքի տէր լինելով կարող է Աստուծոյ հրամանին հնազանդիլ կամ չը հնազանդիլ։ Արդ՝ պատուէր կը լինի որ հնազանդողին պատիւ և փառք, իսկ անհնազանդողին՝ պատիժ կը պատւի. քանի որ իշխանութիւնը պատուէր տալու, և պատուէրն ալ փոխարինն հնազանդութիւն տեսնելու մէջ կը կայանայ. որովհետև փոխարին հնազանդութիւն չը պահանջող պատուէրը խրատ կ՚անուանի։

Ճիշդ, Աստուած ամենուն կը հրամայէր, բայց որոնք որ կամքի տէր չ՚են, անոնց եղած հրամանին մէջ պատուէր չկայ, այլ պարզապես հրաման. որովհետև անոնք հրամանի հակառակ

007
32286

շարժելու անկարող լինելով, իրենց բնութեան մէջ հաստատուած զօրութիւնը կարող չ'են թողուլ, միայն թէ Աստուծոյ բարձր կամքն լինի. և այն առեն բնութեան զօրութիւնը եա մնալով հրաշք կը լինի, և մի' ասեր թէ հրաշք լինելով բնութիւնը կը բռնաբարուի, այլ մանաւանդ թէ բնութեան մէջ հնարանդական կարողութիւն դրած նուելով անոր կատարելութիւնը եա առաւել կը յայտնուի։

Հարց. ԺԱ.

Ինչպէս պէտք է իմանալ թէ Աստուած զմարդն իր պատկերին համեմատ եւ իրեն նմանութեամբը ստեղծեց։

Պաս. Մարդն Աստուծոյ պատկերին համեմատ ստեղծուած է ըսելը մարմնոյ համար չէ, այլ անոր՝ հոգևոր կարողութեան, մտքի և կամքի տէր լինելուն համար է. և այս պատկերն ի բնական կարգի հիմնուած լինելով, մեղայ պատճառաւ բոլորովին չ'եղծաւ, այլ միայն նսեմացաւ. որովհետև մարդուն կամքը չարութեան, միտքն յիմարութեան և մոռացութեան հակամիտեցաւ[1]։ Մանաւանդ մարդն համայն արարածներէն վերջ ստեղծուած լինելով, անոնց մէջ եղած

1. Նամաց տկարեաց չարութիւն, մտաց՝ տգիտութիւն, և յիշողութեան՝ մոռացութիւն. Հեղին.։

կարողութիւնք իր մէջ ամբողջապէս կան, այն է՝ էութիւն կամ գոլ, կեալ, զգալ, ճանաչել, իմանալ, կամիլ և յիշել. բոլոր արարածոց կատարելութիւնքը աստոց մէջ կը կայանան և մարդն ամենուն վախճանն ու կնիքը լինելով, Աստուծոյ պատկեր ասուեցաւ։ Ո՛չ ապաքէն Աստուծոյ անհուն կարողութիւնը, գիտութիւնը, բարութիւնն ու սէրը ամենէն աւելի և մանաւանդ մարդուն վրայ յայտնի են. ինչպէս որ թագաւորին նշանը կամ պատկերը կրող անձն՝ ուրիշներուն վրայ կ'իշխէ, այնպէս ալ մարդն ուրիշ արարածոց վրայ կը տիրապետէ, իբր երկնային թագաւորին փոխանորդը։ Ու դարձեալ, ինչպէս որ թագաւորը՝ իր շինած քաղաքին վրայ իր պատկերը կը դնէ, որ անունը չը մոռացուի, այսպէս ալ Աստուած այս աշխարհն ստեղծելով, անոր վրայ մարդը դրաւ, որ անորմէ Արարիչն իմացուի։

Մանաւանդ՝ Աստուած կամեցաւ որ մարդն ուրիշ արարածոց կարօտ չը լինի զԱստուած ճանաչելու համար, այլ իր մէջ գտնուած կարողութիւններէն ճանաչէ։ Ինչպէս որ արարածք արարչին հետքն են և Նորա գոյութիւնը կ'ապացուցանեն, անոնց բոլորին կատարելութիւնքը գերազանցաբար յԱստուած բովանդակեալ կ'իմացուին, այսպէս էլ Աստուծոյ անչափ կատարելութեան նշանն ու ստուերը նուազաբար այլ ամեն արարածներէն աւելի մարդուն վրայ տեսնուելով,

Աստուծոյ պատկերը կը կոչուի, քանի որ Աստուծոյ հատարելութեան նայելով մարդուն կատարելութիւնը տակաւ տաւելի մը պէս է։

Սակայն Աստուծոյ նմանութիւնը ի բարոյական կարգին, մեր կամքը Նորա կամայ հպատակեցնելուն մէջ կը կայանայ, Աստուծոյ կամաց ներհակ գործելուն պէս՝ մարդն Աստուծոյ նմանութիւնը կը կորնչնէ։ Այո՛, մարդն ի սկզբնական արդարութեան՝ Աստուծոյ նման[1] ստեղծուեցաւ, բայց միշտ այդ վիճակի մէջ մնալը կամ չը մնալը մարդուն կամաց թողուելուն պատճառաւ, 27-րդ համարին մէջ նմանութիւնը չը յիշուելով, միայն պատկերը գրուած է[2]։—

Ընդունելի պատկերն այն է, որ նախատիպին նմանի. ընդունելի մարդն այն է, որ Աստուծոյ կամացը միշտ հպատակելով իւր վիճակին համեմատ Աստուծոյ կը նմանի առաքինութեամբ։ Որովհետև առաքինութիւնը չնորհօք կը գործուի, և չնորհքին հիմը Աստուծմէ լինելով, մագնիս քարը երկաթը իրեն քաշելուն նման մարդն Աստուծոյ սիրովը շաղկապելով՝ Աստուծոյ կը նմանցունէ, ինչու որ սէրը նմանողութեան մէջ կը կայանայ[3]։

1. Աբրահամ մարդ ըսած պատկերն մեծամ և քան նմանութեան։ Ծննդ. Ա. 26։

2. Աբած Աստուած զմարդն ի պատկեր իւր, ըսած պատկերն Աստուծոյ ասած չնա։ Ծննդ. Ա. 27։

3. Ըսած առածին, նման գնմանն սիրէ։

և նմանողութիւնն էլ երկու կամաց միացումէն յառաջ կուգայ,—

Արդ՝ ուր որ կամքերի միութիւն կայ, այնտեղ նաև սէր կայ, և ուր որ ներհակ կամք կայ, այնտեղ սէր չիկայ։ Ուրեմն ջանա՛ որ Աստուծոյ կամաց համաձայն շարժիս, որ Նորա սէրը ջ կորսընցունելով ողորմութեան ու չնորհաց արժանի լինիս։

Հարցում ԺԲ.

Դրախտին մէջ Ադամ ինչ պէտք էր գործել և պահել, ինչու որ կը զրէ թէ Աստուած՝ Ադամը դրախտին մէջ դրաւ գործելու և պահելու[1]։

Պատ. Առաջին Աստուծոյ մեծութեան, կատարողութեան, գիտութեան և բարութեան վրայ խորհելով, պարտ էր գոհութեամբ և փառաբանութեամբ հանդերձ ամէն բանէ վեր և ամէն բանէ առաւել զԱնի սիրելով պատուէրը պահել։ Երկրորդ՝ ժամանակը պարապ չ'անցունելու համար գործութեամբ այդ պարտիզին մէջ գործել. սակայն ոչ թէ հողագործ մշակի նման նեղութիւն քաշելով ապրուստի համար հոգայ, ինչու որ ուտեստի համար տեսակ տեսակ պտուղներ պատրաստ կային արդէն, և ուրիշ բանի կարօտ չէր, ինչպէս

1. Եւ եդ զնա ի դրախտին վարելութեան գործել զնա և պահել։ Ծննդ. Բ. 13։

որ պրահատն արտաքսուելէն յետոյ նեղութեամբ և ժժուարութեամբ հայ ձարելու կարօտացաւ՝ Մհռաւանդ որ պարտական էր զայն Թշնամիէն պահպանելով միշտ իւր անձին համար պահել։

Ցիրաւի, ուրիշ ո՛չ ոք կարող էր Ադամը պըրախտն գտնել, ուստի նա մնաւանդ իւր անվախկուշ ընթացքէն պարտական էր զայն պահպանել, քանի որ միայն իւր մեղաց պատճառաւ անկէ վռնտուեցաւ։ Արդ այս մասին շատ մեծ մտադրութեամբ խորհէ, որ մարդն իւր մեղքով իրեն հասուցած չարիքն ու ձլատը՝ բովանդակ աշխարհ մկիսող պայ, կարող չ'է անոր հասցունել։ Այո՛, մարդուն հոգևոր Թշնամին՝ անիծեալ սատանան, կուզէ որ մարդը մեղաց մէջ ձգելով, իւր նման սպատամբ և Թշուառ անէ. միայն թէ չի կարող բռնադատել, այլ պատճառ կ'որոնէ. և եթէ փոքրիկ առիթ մը գտնէ, հազար կերպ խորամանկ և քսու միջոցներով իւր գիտաւորութիւնն ու նպատակը գործադրելու կը ջանայ։ Մեղաց առիթ տալը վառօդին կրակ տալուն կը նմանի։ Աստուծոյ պատուէրը միայն մէկ ծառին համար էր, բայց սատանան՝ իւր չարամիտ խորհրդովը իրը թէ բոլոր ծառոց համար պատուէրը եղածի պէս կը հարցնէ[1]. և այս խորամանկ հարցումը՝ ոսկեզօծ

1. Չի՛ է պէ ասաց Աստուած, Թէ յամենայն ծառոց սրք եղեն ի դրախտի այդը՝ մի՛ ուտիցէք. Ծննդ. Գ. 1։

դեղահատի նման՝ յառաջապէս անվնաս երևելով, յետոյ Թունաւորեց մարդը. ճիշդ ասոր նման մեղաց առիթ առաջք անպակաս են միշտ։

Թշնամւոյն չը յաղթող զինուորին պատկ չի տուիր. սատանան՝ Թշնամի և մարդն Աստուծոյ զինուոն է[1]. այս անգութ Թշնամին՝ փախստականը կը հալածէ, իսկ զիմադրողէն ինքը կը փախչի. զիշերային գողի կը նմանի, աղմուկ հանածիդ պէս փախչելու տեղ կը փնտռէ, հարկ է ունենալ Աստուծոյ շնորհիւ սատանան առնախօք անելով պատկն առնելու ջանալ. եթէ միշտ մեղաց առիթներէն չփախչիս և կամ Թշնամւոյն քաջաբար դիմադրելով չյաղթես, մրցանակ և վարձ չ'ես կարող ստանալ[2]։ Ինչպէս որ իւրաքանչիւր արարած ծառայութեան մը սահմանուած է, նոյնպէս մարդուն պաշտօնն ու ծառայութիւնն է Աստուծոյ կամքը կատարել երկրիս վրայ[3]. եթէ

1. Չի՛ է մեզ պատերազմ ընդ մարմնոյ և ընդ արեան, այլ ընդ իշխանութիւնս, և ընդ պետութիւնս, ընդ աշխարհակալս խաւարիս այսոսիկ. Եփես. Զ. 12.

2. Եւ եթէ մարտիկ ոք լիցի՝ ո՛չ պսակի՝ եթէ ո՛չ քաջ օրինին մարտիցի. Բ. Տիմոթ. Բ. 5.

3. Չի Նորա արարած եմք՝ հաստատեալք Քրիստոսիւ Յիսուսիւ ի գործս բարութեան, յորս յառաջագոյն պատրաստեաց Աստուած, զի և նոյնս գնասցուք. Եփես. Բ. 10։

մարդը սահմանուած և իրեն յատկացեալ ծառայութեան մէջ թերանայ, անտարակոյս կը պատժուի:

Հարց. ԺԹ.

Ինչո՞ւ համար առաջին պատուէրը կերակուրի մասին եղաւ:

Պաս. Ինչպէս որ Աստուած նախ կերակուր յատկացուց մարդուն, այսպէս ալ առաջին պատուէրը կերակուրի վրայ եղաւ: Որովհետև մարդը միշտ իւր օգին հակամէտ է, և օգուտն այն է որ մկրտուն բաղձանքը կը լրացնէ, և բաղձանքը ծանօթ բանի համար կը լինի: Արդ՝ քանի որ մարդն այս աշխարհի մէջ է, մարմնոյ վերաբերեալ բաներու կը բաղձայ, զորս կը տեսնէ, և մարմնոյ բաղձանաց ամէնէն առաջինը՝ կերակուրն է[1]:

Մանաւանդ մարդն այն աստիճան պարտական է զԱստուած սիրել, մինչև իւր անձը անոր սիրոյն համար զոհել յանձն առնու. և մարդուն անձը երկրին վրայ կերակրով կը սնանի և ողջ կը մնայ. այս պատճառաւ առաջին պատուէրը կեանքոյ մասին եղաւ: Մարդս մանուկ եղած ատեն կաթով կը սնանի, և քանի մեծանայ զանազան կերակուրները կուտէ. այո՛, մարդուս կերակուր

1. Ամենայն ջանք մարդոյ ի բերան լբ. Ժողով. Ջ. 7:

պէտք է, սակայն հացէն և ջուրէն զատ անպատճառ այսպէս լինի ասել և կամ տեսակ տեսակ համեղ կերակուր խնդրել անձը փչացնել կը նշանակէ, ինչու որ շատ ախտեր չափազանց կերուխումէն յառաջ կուգան: Ուտեստի խնդիրը մարդուն հոգածութեան մի մեծ առարկայ եղած ատեն, հպարտութեամբ անուան ու համբաւի սիրովը և տոչորուելով, հանդերձի և բնակարանի նկատմամբ անհաշիւ և անխորհուրդ ըրածնաց ենթարկուիլ՝ պարզապէս ինքզինքը դատապարտել և պատժել կը նշանակէ:

Ցիտղոսի և զուարճութեան համար շատ դրամ պէտք է, շատ դրամ ձեռք բերելու համար կամ շատ նեղութիւն կրելու և կամ շատ մեղք գործելու է, ասոնց երկուքն էլ մարդուս հոգւոյն, մարմնոյն և հանգստութեան ջնասաբեր են: Մանաւանդ որ այսպիսի անվայելուչ վարմունք Աստուածային հրամանի հակառակ են, և Աստուծոյ հրամանին ներհակ գործողը անպատճառ կը պատժուի:

Մարդուն անձն և էութիւնը միմեանց ներհակ նիւթերէ բաղկացած լինելով, արդէն մի մեծ պատերազմ մղելու ստիպուած է միշտ[1]. որովհետև մարդս՝ երկրիս վրայ մարմնաւոր բաները

1. Ձի մարմին ցանկայ հակառակ հոգւոյ, և հոգի հակառակ մարմնոյ. Գաղատ. Ե. 17:

տեսնելով անոնց կը ցաղձայ, և հոգևոր բաները առ ժամն չը կընալով տեսնել, միայն ականջովը կը լսէ։ Թէպէտ ըստ աշխարհի աչքը ականջին կը յաղթէ[1], բայց հոգևոր խնդրոց համ պարագայից մէջ՝ ականջը աչքին կը յաղթէ[2]։ Արդ եթէ մեր մարմնաւոր աչքով տեսած բաներուն ցանկալով, հոգևոր բաները չը խորհինք և զանց աներնք, անասունի նման կը լինինք։

Վասն զի անասունը ներկայ եղած և տեսած բանը կ'ըմբռնէ. բայց մարդուն փառքը՝ հոգին է, որչափ առաւել հոգւոյն վերաբերեալ խնդրոց մէջ կատարելութիւն սաանայ, այնչափ փառքը կ'առաւելու։ Ուրեմն հոգևոր երից վրայ լաւ և շատ խորհէ. մի՛ ասեր թէ առաջ հասկանամ և յետոյ հաւատամ՝, այլ առաջ հաւատա, որ յետոյ հասկանաս[3]։

Հարց–ՃԺ.

Աղամին արգիլուած պտուղն ծառին անունն ինչ էր։

Պաս. Անունը յայտնի չ'է, բայց հասարակ ծառ մի էր և անոր անունը Ս. Գրոց մէջ յայտ-

1. Բաւ առածին, թէ ճշմարտապէս է տեսութիւն աչաց, քան զլսելիս ականջաց։
2. Հաւատաք ի լսելոյն են, և լաւ է քանէն Քրիստոսի. Հռոմ. Ժ. 17։
3. Բաւ առածին, մի՛ խմանալ՝ պի հաւատալոյ, այլ հաւատա պի խմանալոյն։

նուած չէ լինելուն պատճառաւ, ով ինչ ալ ասէ, հաստատելու կարող չ'է։ Եթէ ինչ ծառ լինելը յայտնի լինէր, աշխարհ գայն վառ պիտի նկատէր. բայց անոր բնութեան համ իսկութեան մէջ յոռետիւն չիկար[1]. պի Աստուած յոռի բան չ'ստեղծեց[2]։ Այո՛ ինչ ինչ բաներ կան, զորս եթէ մարդիկ և անասունք ուտեն, կը մեռնեն. սակայն անոնց ևս վառ չ'ասուիր, ինչու որ անասնակոյս մի բանի հարկաւոր են, որ Աստուած գայնս ստեղծած է։ Այս մասին եթէ մէկը՝ անպատճառ ծառ համ ուտելու պատրաստ չ'է ասելով, ուրիշ մեկնութիւն տայ, Ս. Գրոց իմաստը կը խեղաթիւրէ։

Պատիժը վառ գործի համար է, բայց վառ գործը երկու տեսակ է, մէկը ինքն ըստ ինքեան բնութեամբ վառ է, զոր օրինակ մարդասպանութիւն, շնութիւն, գողութիւն, ստութիւն, ագահութիւն և այլ ասոնց նման բաները, որոնք բնական օրինաց ներհակ լինելով արգիլուած են, և զորս գործողները անպատճառ պատժոյ արժանի կը լինին, իսկ միւսը՝ արգիլուած լինելուն համար վառ կ'ասուի։ Առաջինը՝ վառ համ չար լինելուն համար կ'արգիլուի, երկրորդը՝ արգիլուած լինելուն համար չար կը կոչուի։

1. Բաւ էր ծառն ի կեցակութ. Ծննդ. Գ. 6։
2. Զի ամենայն արարածք Աստուծոյ՝ բաւ են. և չիք ինչ խոտան. Ա. Տիմոթ. Դ. 4։

Եթէ բնապէս չար չ'ելլող բաներու նկատմամբ արգիլք և պատուէր չըլլայ, զանոնք գործողները պատժոյ արժանի չ'են լիներ. զոր օրինակ թագաւոր մը իր տերութեան մէջ ինչ ինչ բաներ կ'արգիլէ, որք ուրիշ թագաւորի մը հողին մէջ արգիլուած չ'են, միայն արգիլուած տեղերնուն զանոնք գործողները իրաւամբ կը պատժուին: Ահա այսպէս հասկցիր նաև արգիլեալ պատուղի մասին, վասն զի եթէ պատուէր չը լինէր, զայն ուտել յանցանք չ'էր[1]. ուրեմն խնդիրը պատուղի և ուտելուն վրայ չ'է, այլ անհնազանդութեան:

Հարցո՟ւմ ԺԵ.

Աղամայ պատուէրը տրուած ատեն՝ Եւան ստեղծո՞ւած էր:

Պաս. Ստեղծուած էր, և պատուէրը երկուքին համար արուեցաւ. բայց Ադամ իմաստուն և կնոջ վրայ գերիշխան լինելով պատուէրը անոր եղաւ: Ադամ պարտական էր ուշադրութիւն անել որ չը լինի թէ Եւան պատուէրին հակառակ շարժի. նմանապէս Եւան պարտեր Ադամայ քովէն չը բաժանուիլ, ինչու որ Եւան պրախտին մէջ առանձին շրջապատած տեղն խաբուեցաւ. և եթէ Ադամ չանի յանդիմանելով ինքն էլ անոր չը

1. Պատճառը տեղին մեղքն պատուերանաւն... զի առանց օրինացն մեղքն մեռեալ էին. Հռոմ. Է. 8.

յարմարէր, ըլաս մի չ'ի կար. ինչպէս որ Եւայի կերած տեղն՝ մերկութիւնը չ'զգացին, չը մերկացան, բայց Ադամ կերածին պէս՝ մերկ լինելնին իմացան[1]:

Շատ մեծ խոհեմութիւն հարկաւոր է կանանց սեռի կառավարութեան համար, որովհետև եթէ զանոնք իրենց ցանկութեանց թողուս, շատ անգամ անվայելուչ ընթացքի և վարմանց միտելով, թէ իրենց և թէ ուրիշներու դժբաղդութեան պատճառ կը լինին:

Հարցո՟ւմ ԺԶ.

Ինչո՞ւ արգիլուած պտղոյն ծառը կոչուեցաւ ծառ գիտութեան բարւոյ եւ չարի:

Պաս. Որովհետև պատուէրը յիշեալ ծառի մասին եղաւ. և նորաստեղծ ամլը անոր պտուղէն ուտելնուն պէս իրենց երանական վիճակը կորնցնելով մերկ և թշուառ եղան, ու այն ատեն բարւոյն ու չարին զանազանութիւնը իմացան. այս պատճառաւ բարւոյ և չարի գիտութեան ծառ կոչուեցաւ այն:

Բարին ու չարը գիտնալու ծանօթութիւնը պատուէրով կը լինի[2]. Երբ պատուէր մի կը տրուի,

1. Եւ եա առն իւրում ընդ նմա, և կերան. և բացան աչք երկոցունց, և գիտացին զի մերկ էին. Ծննդ. Գ. 7.

2. Զի մեզս ոչ գիտէի, եթէ ոչ օրինաւք. Հռոմ. Է. 7:

անոր վրայ ապաքսուելով հակառակը գործել՝ անհնազանդութենէ և անվստահութենէն յառաջ կու գայ: Աստուծոյ հրամանը իմանալով, փոխանակ առանց կասկածանքի՝ կատարեալ հնազանդութեամբ յարգելու և պահելու, Եւան՝ սատանայի թելադրութեամբ Աստուծոյ նկատմամբ ապստամբեցաւ թէ թերևս այդ պտուղը դիտմամբ խնայից մեզմէ, որպէս զի մեր միտքը չբացուին, և այս կերպով իւր վստահութիւնը Աստուծոյ վրայէն վերցուներով՝ ուշեալ պտուղը կերաւ. և Ադամ ևս Եւայի սիրոյն համար ուտելուն պէս, անհնազանդութեան որ ապրիճան չար լինելը իմանալուն փորձով իմացան առաջին անգամ:

Հարց. Ժէ.

Ի՞նչ կ'իմացուի մահու մեռանիլ ասելով:

Պաս. Մարմնոյ մահը բնական է մարդուն. որովհետև մարմինը իրարու հակառակ չորս տարրերէ բաղկացած է: Բայց հոգին մասերէ միացած չը լինելով պարզ գոյացութիւն է, հետևաբար մարդկային հոգին անկարելի է որ մեռնի. և Աստուծոյ շնորհօք առաքինութիւն գործելով յաւիտենական կենաց երանութեան հասնելու ընդունակ ու յարմար է[1]. բայց նա՝ որ մահացու մեղք

1. Շնորհիւ Աստուծոյ կեանք յաւիտենից է քրիստոս Յեսուս. Հռոմ. Զ. 23:

կը գործէ, պարզևեալ շնորհքը կը կորնցունէ. և առանց շնորհքի արքայութիւն մտնելու յարմարութիւն չը ճանչով, իրրև թէ հոգւով յաւիտենապէս մեռած կը համարուի:

Որովհետև զոր օրինակ մարդուս աչքն առանց լոյսի կարող չէ տեսնել, նմանապէս հոգին առանց շնորհքի կարող չէ յաւիտենական կենաց արժանանալ. բայց հոգին բնութենապէս անմահ լինելով՝ մեզաց պատճառաւ յաւիտենական դատապարտութեան արժանի կը լինի, և ահա այս կերպ պատժին կ'ասուի՝ մահու մեռանիլ:

Հարց. ԺԸ.

Սատանան ինչո՞ւ համար խաբեց մարդը:

Պաս. Իւր չարութեան և նախանձու համար: Որովհետև սատանան բոլոր հրեշտակաց պարագլուխն լինելով, հպարտութեանը պատճառաւ Աստուծմէ պատժուեցաւ և դժոխոց դատապարտուեցաւ[1]: Նա իւր յամառութեամբ յաւիտենական ապստամբութեան մէջ անզիղջ յարատևեց մնաց: Վասնորոյ Աստուծոյ հակառակ լինելով՝ ի հեճուկս դիտմամբ խաբեց մարդը, որ իրեն նման ապստամ-

1. Եթէ և հրեշտակներն յանցուցեալս ո՛չ խնայեաց Աստուած, այլ խաւարային կապանօք արկեալ ի տարտարոսն՝ ետ պահել ի դատաստան. Կաթուղ. Բ. Պետր. Բ. 4:

բելով առ Աստուած ուսեցած հնազանդութենէն հեռանայ և ալքայութենէ զրկուի։

Հաւ. խմացիր. եթէ սատանան մարդը չը խաբեր, իւր առաջին մեղաց պատիժը միայն պիտի կրեր. բայց մարդը մեղաց մէջ ձգելով իւր պատիժն աւելցուց։ Դիտդպաբար բոլոր նախանձոտ մարդոց ընթացքն այսպէս է. որպէս պի ուրիշներուն բաղդաւորութիւնը խանգարուի, իրենց պատիժն էլ կը սատակացնեն։

Հարց՝ ԺԹ.

Ինչու՞ սատանան օձի միջոցաւ խաբեց մարդը։

Պաս. Սատանան իւր մեքենով թունաւորուած լինելով, և օձն էլ արդէն բնապէս թունաւոր է, այս պատճառաւ անոր ձեռքով խաբեց մարդը։ Որովհետև մի այսպիսի ամենաչար և գաւազանուած գործի մէջ պէտք էր իրեն օձի նման սիրտը թոյնով լեցուն, երեսի վրայ սողացող և ուրիշ քայլելու անկարող կենդանի գործիք մը։ Մանաւանդ որ օձը բոլոր կենդանիներէն աւելի խորամանկ է[1]. անոր միջոցաւ դիւրութեամբ կարող էր իւր նպատակին հասնել։ Ջոր օրինակ անիրաւ մարդիկ չարամիտ և ճարպիկ սուտ վկաներ կը գտնեն որ ի վերայ երկրի. Ծննդ. Գ։ 1։

1. Օձն էր խմաստնագոյն քան զամենայն գազանս որ ի վերայ երկրի. Ծննդ. Գ։ 1։

անոնք յափշտակելու համար, և ինչպէս որ սատանան ի սկզբան օձի բերանով Աստուծոյ պատուիրին հակառակ մեկնութիւն տալով մարդը խաբեց, այսպէս էլ նա միշտ օձի նման թունաւոր և չարամիտ նպատները գործիք անելով շատերուն ատելի կորստեան պատճառ կը լինի, և աշխարհի կատարածին մծա ժամանակում էս նեռին միջոցաւ շատ չարիք պէտք է անէ[1]։

Հարց՝ Ի.

Աստուած չէ՞ր գիտեր որ Ադամ պիտի մեղանէ, ինչու՞ հանգիպ պատուէրը տուաւ։

Պաս. Գիտէր. սակայն Աստուծոյ կանխագիտութիւնը մարդուն մեղաց պատճառ մը չէ։ Որովհետև Նորա գիտութենէն չէ հարկաւորիր որ մարդը մեղանչէ. և պատուէրը հարկաւոր էր, վասն զի մեծի և պզտիկի միջև տարբերութիւն մը անհրաժեշտ է. և այս տարբերութիւնը կատարեալ սիրոյ և պատուոյ վրայ հիմնուած է. այլ՝ պատուոյ և մեծարանաց մէջ ամենէն առաւել ընդունելին՝ մեծի հրամանը կատարել է[2]. այս պատճառաւ պատուէր տրուեցաւ, որ մարդ

1. Եւ յայտնեցաւ մարդն անօրէնութեան՝ որդին կորստեան... որոյ գալուստն բուռ ազդեցութեան սատանայի է. Բ. Թեսաղ. Բ. 1. 9։

2. Եթէ ոք սիրէ զիս՝ զբանն իմ պահեսցէ. Յովհ. ԺԴ. 23։

դուն առ Աստուած ունեցած սէրն ու Նորա պատիւը պահպանելու արամադրութիւնը յայտնուի։ Քանզի մարդն ամէն տեսակէտով պարտական է զԱստուած սիրել և պատուել, և զայս կարող չէ ուրիշ բանով յայտնել, եթէ ոչ Նորա պատուէրը կատարելով։

Մանաւանդ՝ եթէ Աստուած պատուէր տուաւ, զայն գործադրել կարենալու համար միտք և կամք ևս տուաւ, որպէս զի մարդն իւր մտքով ճշմարիտը ճանաչէ և կամքովն էլ բարին սիրէ։ Արդ՝ ճշմարտութեանց մէջ Աստուծոյ հրամանը ամենէն ճշմարիտն է, և սիրելեաց մէջ Աստուծմէ աւելի սիրելի էակ չի կայ։ Բացի ասոնից, Աստուած բաւական շնորհք տուաւ մարդուն, որ եթէ հրամանի հակառակ գործէ, չքմեղանքի տեղի չը ճնալով յանցանքը մարդուն լինելը յայտնի և պարզ երևի։ Ցիրաւի, Աստուած գիտէ մարդուն սիրտը, սակայն որպէս զի մարդուն ևս յայտնի լինի, պատուէր կուտայ անոր, որով[1] մարդիկ կը պարտաւորին Աստուծոյ այդպարութիւնը դովել, երբ հնազանդ եղողին՝ պատիւ և փառք, իսկ անհնազանդին՝ պատիժ ապ։ Եթէ Աստուծոյ պա-

1. Ցիշեցեր զամենայն ճանապարհն՝ զոր էած զքեզ Տէր ընդ անապատն. զի լիցէ զքեզ՝ և փորձեսցէ զքեզ, և ճանաչիցէ թէ զի՞նչ կայցէ ի սրտի քում, եթէ պահեսցես զպատուիրանս Նորա, և թէ ոչ։ Ռ. Օրին. Ը. 2.

տուէրը անհնար մի բան լինէր, ոչ ոք կարող կը գայն կատարել, սակայն շատերը կատարեցին. և ով որ կը Թերանայ իւր պարտուց կատարման մէջ, ոչ թէ անկարողութեան, այլ՝ կամք չունենալուն համար է, ինչու որ Աստուած երբէք անկարելի բան չի հրամայեր[1]։

Պատուէրն հարթուած ուղիղ ճանապարհի մը կը նմանի, որոյ վրայէն գնացողը շուտով և անմոլար կը հասնի սահմանեալ իջեւանը. եթէ պատուէր չը լինի, մարդն անկոխ և անհետք անապատի մէջ կորսուած ճանապարհորդի մը պէս գնալու ճանապարհը չը գիտէ և հետևաբար իջեւանն էլ չը կրնար հասնել։ Մանաւանդ՝ եթէ պատուէր չը լինի, կամ թէ Աստուած մարդուն կամքը՝ իւր պատուէրը գործադրելու բռնադատէ, այն ատեն մարդն վարձուց արժանի չը լիներ և անասնոց աստիճանին կ'իջնէ ու կ'ստորանայ։ Ցիրաւի, եթէ բոլոր մարդիկ ըստ իրաւանց և արդարութեան շարժին, պատուէրի պէտք չիկար, ինչպէս էին, օրինակի համար, Ենովք, Նոյ, Մելքիսեդեկ, Յոբ, և ուրիշ սուրբեր. բայց շատերն ապօրէն ընթացից հակամէտ լինելով՝ Աստուած իւր հրամանն և օրէնքը և իւր կամքը Ս. Գրոց

1. Մի ասեցես ի սրտի քում ով ելանիցէ յերկինս... կամ ով կջանիցէ յանդունդս... մերձ է բանն ի բերան քո՝ և ի սրտի քում է։ Հռոմ. Ժ. 6։

մէջ յայտնեց, որպես զի «չը գիտէինք» ասելով պատրուակի և պատճառաբանութեանց չը դիմեն։

Ուրեմն՝ ով մարդ, կամ օրէնքի հնազանդելու ես, կամ ալքայութենէ յայտ կարելու ես. Դուն Աստուծոյ պատիւը պահէ, որպես զի Աստուած և քեզի ըստ արժանեացդ փառաւորէ[1]։

Հարցո՜ւմ ԻԳ.

Աստուած միթէ չէը գիտեր Ադամայ պահուած տեղը՝ որ կը հարցունէ թէ ո՞ւր ես։

Պաս. Անշուշտ գիտէր. բայց հարցումը զանի զղջման հրաւիրել էր. որովհետև ոչ թէ անոր ո՞ւր լինելը կը փնտռէ, այլ՝ անոր ինչ վիճակի մէջ գտնուիլը անոր իմացնել կուզէ, որ զղջայ և ապրի զղջմ։ Իբր թէ ասել կը կամէր — ով Ադամ, այս ինչ թշուառ կացութեան մէջ ընկած ես. ո՞ւր է քու հոգևոր զարդն, ո՞ւր և քեզ պարգեւեալ շնորհն. ով գիտէ սոյն գժբաղդ վիճակի մէջ ձգեց, այնպես որ ծառոց տերևով ծածկուելու կարօտ եղած ես. բայց Ադամ մերկ լինելը պատրուակելով զղջում չը յայտնեց, մեղայ չ'ասաց։ Եւ նկատէ մարդուն արգահատելի կացութիւնը, փոխանակ մեղքին վրայ զղջալու, ընդհակառակն մեղաց փոխարէն ընդունած պատիժն կը դան-

1. Զիտաւորութեամբ եմ փոխաւորեցնել, և որ արհամարհէն գիտ՝ անարգեսցի. Ա. Թագ. Բ. 30։

գատի, իմանալ որ մերկութիւնը մեղք չէ, այլ պատիժ։ Այդ պատճառաւ Աստուած կը պատասխանէ, Թէ Ով ասաց քեզ Թէ մերկ ես (զի այդ քու կամօքդ չէ), չը լինի Թէ «Մի ուտեր» ասածս ծառին պտուղէն կերար, որմէ ուտել կամ չուտելը քու ձեռքն էր»։ բայց Ադամ մեղայ չասելէն զատ, Եւան պատճառ բանելով Աստուծոյ առջև պատրուակել ուզեց։

Նկատէ, Ադամ պատուէրի հակառակ գործելուն պէս Աստուծմէ իրեն շնորհուած երանութիւնը կորսնցնելով հանդերձ, տակաւին դրախտին մէջն էր. և փոխանակ զղջալու Աստուծոյ հարցման անտեղի պատասխան տալուն համար առաւել պատժոյ արժանացաւ. որովհետև դրախտէն արտաքսուելէն ի զատ ապրուստը նեղութեամբ գտնելու պարտաւորեցաւ[1]. մանաւանդ որ երկրին էլ անէծք արուեցաւ[2] իբր ծանր սխալին պատճառաւ։

Մարդն իբր մեղաց համար ոչ Թէ միայն իբր անձին, այլ նաև ամացուածոց, զաւակաց և սիրելեաց վրայ կը պատժուի. որով մեղք գործողը Աստուծոյ սիրոյն երես դարձնելով աշխարհային

1. Քրտամբ երեսաց քոց կերիցես զհաց քո Ծննդ. Գ. 19։

2. Անիծեալ լեսցի երկիր ի գործս քո. Ծննդ. Գ. 17։

բաներուն սէր կուտայ, ուսաի և իրաւամբ անոնց միջոցաւ ԵՒս կը պատժուի[1]:

Հարկ է դիտել թէ Աստուած որչափ որ գթած է, նոյնչափ էլ արդար է, Նորա զթութեան կամ ողորմութեան դէմ կեցողը Հարկաւորապէս Նորա արդարութինէն կը պատժուի. վասն զի զթութեան արժէքը արդարութեամբ կը յայտնուի: Մի՛ ասեր թէ «եթէ Աստուած մարդուն մեղքերը ներէ, ով ինչ կարող է ասել. յիրաւի, ո՛չ ոք կարող է ժպրհիլ Աստուծոյ գործին խառնուելու. բայց ինչպէս որ Նորա ողորմութիւնը չափ չունի, նոյնպէս Նորա արդարութեան չափ չկայ[2]: Եթէ արդարութիւն չը լինի, օրէնքը կը խափանուի, և օրէնքը խափանուելուն պէս՝ ապատամբական ոգին թոյլատրուած և գօրացած, մարդիկ աներկիւղ իրենց չար կամաց համաձայն կը վարուին, և հետզհետէ ամէնքն էլ կապականին միանգամայն:

Արդ՝ բանի մը արտօնութիւն տալ երկու պատճառէ յառաջ կուգայ. կամ հաճութենէ, և կամ արգելելու անկարողութենէ. յայտնի է որ Աստուած մեղքին չհաւորժիր, զի սուրբ է, նմանապէս Նա՝ ամենակարող լինելով, իրաւամբ մեղաւորը կը պատժէ[1]: Այս աշխարհի մէջ մեղաւորն որչափ էլ պատժուի, դարձեալ զթութեան հետք կամ նշան մի կը նշմարուի անոր վրայ[2]. օրինակը պայծառ կը տեսնենք նոյն իսկ Ադամայ և Եւայի վրայ. արհվհետև դրախտէն արտաքսուած միջոցին Աստուած զանոնք մերկ չը թողուց ծածկուելու համար (ոչխարի կաշիէ լինի) զգեստ հագցնելու[3]. բայց մեռնելէ վերնի ողորմութեան գործը փակուելով, մեղաւորը արդարութեամբ կը պատժուի, ինչպէս որ գժոխոց մէջ մեծատան կաթիլ մը ջուր անգամ չը տուեցաւ:

Հարց. ԻԲ.

Աստուած ինչո՞ւ ասաց Ադամին թէ հող էիր եւ ի հող դառնաս, քանի որ նա անմահ հոգի ունէր:

Պաս. Որպէս զի Ադամ իւր չափը ճանաչէ. որովհետև նա հող լինելով հանդերձ առաւ անոր անմահ հոգի և այս կերպով հրեշտակաց աստիճանին բարձրացաւ և փառաւորից զանի, բայց Ադամ այս բարութիւնն ու շնորհը չը ճանաչելուն համար, Աստուած վճռեց որ նա մեռնելով

---

1. Ողջը մեղանչէ աք, նովհմբք և տանջի. Ե-մատա. ԺԱ. 17:

2. Իբաւունք քո որպէս լոյք բազում. Սաղմ. Լե 7:

1. Զամենայն մեղաւորս առատակէ Տէր. Սաղմ. ՃԽԹ. 21:

2. Խրատելով խրատեաց զիս Տէր, և ի մահ ոչ մատնեաց. Սաղմ. ՃԺԲ. 17:

3. Արար... հանդերձս մաշկեղէնս. Ծննդ. Գ. 21:

իւր առաջին սկզբնական վիճակին դառնայ։ Եւ դարձեալ յիւրաքանչիւր մարդուն հոգին չէ մեռնիր, բայց նա հրեշտակաց պէս միայն հոգի չէ, այլ նաև հոգի չինուած մարմին ունի։ Արդ՝ մարդն իւր ներկայ վիճակի մէջ, եթէ նոցա վերաբերեալ դէպքերի վարմունք ունենայ, հրեշտակային պատիւ կ՚առանայ, իսկ եթէ մարմնոյն վերաբերեալ անարժան վարմանց մէջ գտնուի, հոգի և անառակաց ասպիրանին կը հաւասարի [1]։ Ինչու որ հոգևոր իղձերը թողած՝ միայն մարմնաւոր զուարճութենանց և փափաքանաց սէր կապել հոգին հակասիրել առել է, այս պատճառաւ մեզաւոր մարդուն «հոգ դառնաս» ասաց [2]։

Հարցումն ԻԲ.

Ինչո՞ւ Աստուած օձին ասաց թէ քո որովայնի վրայ քալես եւ հող ուտես. միթէ արդէն հիմակուան պէս չ՚էր քալեր եւ հող չ՚էր ուտեր։

Պատ. Այո՛, արդէն հիմակուան պէս կը քալէր և կուտէր, բայց Աստուած անիծից պատճառով, անկէ յետոյ, որովայնի վրայ գնալ և հող ուտելը՝ պատիժ եղաւ [3]։

1. Մարդ է պատուէ էր և ոչ լմնցաւ, հաւասարեցաւ անառակաց անբանից և նմանեցաւ նոցա։ Սադմ. ԽԸ. 11։

2. Հող էիր և ի հող դարձցես։ Ծննդ. Գ. 10։

3. Ի վերայ լանջից և որովայնի քոյ գնասցես, և հող կերցես։ Ծննդ. Գ. 14։

Ասկէ զատ մարդուն անկման գործիք լինելուն համար, ամենուն Թշնամի դառնալով՝ Աստուծմէ Թոյլատուութիւն եղաւ մարդուն, որ անոր գլուխը ջախջախէ [1]։

Սակայն յիշատակներէն չէ Թէ միայն օձին, այլ նաև սատանայի մասին հասկանալով, օձին իւր կուրծքի և փորի վրայ սողալով գնալը ու հող ուտելը՝ սատանայի հպարտութիւնը, ինչպէս նաև կերակուրի պատճառաւ մարդը խաբել և մահուան պարտաւորիլը կը ցուցնէ. որովհետև օձին կուրծքը՝ հպարտութեան, և որովայնը՝ որկրամոլութեան նշանակ է։ Ուստի օձին՝ մարդուն գալշապարը խայթելու համար ապառնալը՝ սատանային միշտ մարդը մեղաց մէջ ձգելու պատրաստ լինելն ու մինչև մահը անդադար անոր չարիք հասցնելու յիտս չը կասիլը կը յայտնէ։ Հոգևոր կամ կրօնական մտքով մեր Տէրն Յիսուս Քրիստոս ջախջախեց սատանայի գլուխը, և նորա շնորհօք բոլոր առաքինի և բարեպարծ մարդիկ մեզաց դէմ կենալով սատանային գլուխը կը ջախջախեն [2]։

1. Եդից թշնամութիւն ի մէջ քո և ի մէջ կնոջդ, և ի մէջ զաւակի քո և ի մէջ զաւակի նորա. նա ապառնացէ քեզ գլխոյ, և դու ապառնացես նորա գալչապարի։ Ծննդ. Գ. 15։

2. Եառ ձեզ իշխանութիւն կոխել գօձս և գխարխնս. Ղուկ. Ժ. 19։

Հարց. ԻԴ.

Աստուած պատժելով Ադամն եւ Եւան եւ օձը, ինչո՞ւ համար չարեաց հեղինակ սատանային բան մը չասաց։

Պաս. Պատժոյ նպատակն է—առնուլ պատժելոյն ձեռքէն ինչ լաւ բան որ ունի, զրկել զայն այն լաւագոյն բանէն, որուն համար կը յուսայ, եւ կամ թէ տանջանք տալ անոր անձին. բայց սատանան Աստուծոյ ներկայութենէն սկիզբէն հեռացած՝ չարութեան մէջ այնչափ զարգացաւ, որ իւր գոյութենէն զատ՝ ես առնուելու համար բան չը մնաց իւր վրայ. և յուսալու ոչ մի բարւոյ կամ լաւութեան նշոյլ չկար, յորմէ զրկուէր. նմանապէս արդէն հանդատութիւն չունի, որ անոր տանջանք տուի. որովհետև Աստուծոյ արդար դատաստանաւ միշտ տանջանաց մէջ է։

Մանաւանդ Աստուծոյ շնորհքը կորսնցնելով յուսահատութեան մատնուելը՝ պատիժներուն ամենէն սոսկալին է. արդ՝ սատանան բոլորովին յուսահատ՝ միայն իւր թշուառ գոյութիւնը կը պահէր, և առանց շնորհաց գոյութիւնը և ս մեծ պատիժ է անոր, քանի որ յաւիտենապէս կը տանջուի։ Այս աշխարհի մէջ մարդուն տուած պատիժը զեղի նման է. և զեղը՝ առողջանալու հիւանդին կը տուի, որչափ որ մարդը մեղանչելով հոգիպէս հիւանդացաւ, առողջանալու յոյսը միայ

վրան. վասնզոյ պատժոյ զեղը տուեցաւ որ բժշկուի, բայց սատանան մեռած մարդու մը նման զեղ ընդունելու վիճակի մէջ չը լինելով անոր մասին Աստուած մի բան չասաց։ Եւ դարձեալ, սատանային՝ հրեշտակաց գասէն վռնտուիլը զլխիվայր անկումն բացատրութեամբ մեզ կիմացնէ Քրիստոս[1]. և այսպիսի անկումն՝ սատանայի մեզաց անդառնալի լինելուն նշանն ու պատկերն է, բայց Ադամ զրախտէն արտաքսուելով հանդերձ, զարձեալ Աստուած զայն զրախտին յանդիման տեղ մը բնակեցուց, որպէս զի իւր մեղաց ներումն սատանալու յոյս ունենայ[2]։

Հարց. ԻԵ.

Կենաց ծառն ի՞նչ էր։

Պաս. Հասարակ մի ծառ էր, բայց անունը յայտնի չէ. անոր պտղոյն մէջ այն ատիճան զօրութիւն կար, որ ժամանակ առ ժամանակ անկէ ուտողը մահուան ենթակայ չը լինելով, Աստուծոյ բարձր կամայ համաձայն սահմանեալ ժամանակը լրացածին պէս արքայութեան արժանի պէտք է լինէր. այս պատճառաւ Ս. Գիրք կենաց ծառ անուամբ կը յիշէ զայն։ Եւ այս գօրութիւնը չէ

---

1. Տեսանէլ զսատանայ անկեալ յերկինց նըման զփայլակն. Ղուկ. Ժ. 18։

2. Եւ եհան զԱդամ, և բնակեցոյց յանդիման դրախտին փափկութեան. Ծննդ. Գ. 24։

թէ ծառին բնութենէն էր, այլ Աստուծոյ կարգադրութենէն, ինչպէս որ ամէն տեսակ բանականութիւն մէկ մէկ կերպ գօրութիւն և յատկութիւն պարգեւած է, որ մարդկային մարմնոյ մէջ գոյացած ախտերուն առողջարար դեղ կը լինին, ինչպէս փորձով կը տեսնենք:

Հարցում ԻԶ.

Եթէ Ադամ կենաց ծառէն ուտելու լինէր, ինչ կը հետեւէր:

Պաս. Եթէ խաբեբային առաջ ուտէր, լաւ կը լինէր, որովհետեւ ինչպէս վերը յիշուեցաւ, արքայութիւն կերթար. բայց եթէ խաբեբային յետոյ ուտէր, միշտ մեղաց մէջ ապրելուն՝ շատ վատ հետեւանք կունենար. որովհետեւ լաւագոյն է մեռնիլ քան մեղօք ապրիլ. այս պատճառաւ Աստուած իր գթութեամբ դրախտէն զանի արտաքսեց, որպէս զի յիշեալ պատուէրն չուտէ[1]:

Հարցում ԻԷ.

Աստուած ինչու համար կենաց ծառին ճանապարհը պահպանելու պատուէրը տուաւ հրեշտակաց (Քերովբէից):

Պաս. Անոր համար որ չը լինի թէ մարդիկ շատ

1. Եւ արդ գուցէ ձգեցէ զձեռն, և առնուցու և ծառոյն կենաց, ուտիցէ և կեցցէ յաւիտեան. Ծննդ. Գ. 22:

ապրելու բարձանքով անոր պատուէրն ուտեն և պայպաշտան: Մանաւանդ չը լինի թէ սատանան ատոր միջոցաւ մարդուն կեանք խոստանալով իրեն կապէ, և այս կերպով չկարծուի թէ սատանան մարդուն բարեկամ է և խօսքը՝ ճշմարիտ: Դարձեալ որովհետեւ Ադամ իր չափէն աւելի գիտնալու բարձանք ունեցաւ, այդ պատճառաւ Քերովբէներուն հրամայից կենաց ծառին ճանապարհը պահպանել, որպէս զի մարդն անկարող լինի մերձենալու. զի Քերովբէ բառը շատ վիճող նշանակելուն՝ Ադամայ յանցանաց համեմատ պատասխան կարգեցաւ անոր վրայ պատշաճապէս[1]:

Դու նայէ Աստուծոյ ողորմութեանը. մարդը մեղքէն խնայելու համ զգուշացնելու համար այն ատեճան իմաստուն կարգադրութիւններ կանէ, որոց մեր խելքը չի հասնիր: Մի ասեր թէ Ադամ չը խաբեւած՝ ինչու համար Աստուած չարգելեց սատանան մարդը մեղաց մէջ ձգելէ. յիրաւի, եթէ կամենար, կարող էր, բայց Աստուած պատճառ չ'ուզեր սատանան արգիլելու, քանի որ պէտք եղած կարգադրութիւնը՝ իրմէ զինք՝ տուաւ անոր, որ թշնամւոյն յայտնէ անոր, հետեւաբար յանցանքը մարդուն է. վասն զի միտք և կամք ունենալով, (ինչպէս քանիերորդ հարցման մէջ յիշուած է)

1. Եւ հրամայեաց քերովբէից... պահել զճանապարհս ծառոյն կենաց. Ծննդ. Գ. 24:

կարող էր սատանայի գաւաճանութիւնը իմանալ և անոր չար ու հրապուրիչ գործին դէմ դնել, կանգնել։

Մանաւանդ, կարող ենք ասել թէ, այս ներկայ դէպքի մէջ Աստուծոյ կարողութիւնը, գիտութիւնն ու բարութիւնը յիրեւան պէտք է գային, որովհետեւ սատանայի՝ մարդուն հասուցած չարիքը՝ բարիքի փոխարկելը՝ նորա կարողութեան իմաստուն ճանապարհներ գտնելը՝ նորա գիտութեան և իմաստութեան, իսկ իր ողորմութիւնը ձրի շնորհելը՝ նորա անհուն բարութեան փայլուն և անհերքելի ապացոյցներ են։

Նմանապէս՝ երբ Աստուած անմեղին շնորհ և ողորմութիւն, իսկ մեղաւորին պատիժ կուտայ, նորա գթութիւնն և արդարութիւնը յայտնուելով՝ ի հարկէ լսողները պէտք է որ նորա արդար դատաստանը գովեն և ներբողեն։ Եւ դարձեալ, մարդն իր չարը ճանաչելով չամբարտաւանի, ու սատանայի չարութիւնն ամենուն յայտնի լինի։ Թող ուրեմն խելքը չը հասնող անձինք Ս. Գրոց մէջ գրուած նիւթոց դէմ յիմարաբար չը խօսին. մի Աստուծոյ խորհրդոց ոչ ոք կարող է խելք հասցունել[1]։

1. Ո՞վ գիտաց զմիտս Տեառն, կամ ո՞վ եղև նմա խորհրդակից. Հռոմ. ԺԱ. 34։

Հարց. ԻԸ.

Աստանայ յանցանքն ի՞նչ էր։

Պաս. Անհնազանդութիւն[1]։ Անհնազանդութիւնը՝ յառաջագոյն որուած պատուէր մը կ'ենթադրէ. և պատուէրն էլ կերակուրի մասին եղաւ, այս կերպով որկրամոլութիւնը՝ մեղք համարուեցաւ։ Սակայն ոչ թէ նա կերաւ զայն իբրև իրեն տնունդ, այլ՝ անով առաւել գիտութիւն սատանայով Աստուծոյ նման բարին ու չարը ճանաչելու փափաք ունեցաւ. այս կերպով գիտութեան անչափ բաղձանքը յանցանք սեպուեցաւ։ Դարձեալ, արդեօք ի՞նչ կայ այդ պատուղին մէջ ասելով, իր համար հետաքրքրութեան առարկայ կամ կիրք շինեց, թէ թերեւս վախ տալու համար միայն այդ պատուէրը որուեցաւ, մանաւանդ Եւային սիրտը չ'կոտրելու համար, անոր սէրը՝ Աստուծոյ պատուէրէն աւելի նախամեծար համարեց. վասն զի Ադամ գիտէր[2], որ պատուիրանազանցութիւնը մեղք է և անոր հետեւանքը՝ ծանր և ապերասներ։

1. Անհնազանդութեամբ միոյն մարդոյ մեղաւորք բազումք եղեն. Հռոմ. Ե. 19։

2. Ադամ ոչ պատրեցաւ, այլ կինն պատրեցաւ. Ա. Տիմոթ. Բ. 14։

Հատված ԺԲ.

Ադամայ յանցանացս փոխարէն ինչ պատիժ տրուեցաւ։

Պատ. Անհնազանդութեան փոխարէն՝ իւր անձին մէջ մարմնաւոր ցանկութիւնք այլ ևս հոգւոյն չը հնազանդելով, խոպոն մեզս շարժուիներ պզաց և սա ամօթոյ թզինիի տերևներով ծածկուելու կարօտ եղաւ[1]։

Իւր չափէն առաւել գիտութիւն սատանայով Աստուծոյ նման բարին ու չարը գիտնալ ուզելուն փոխանակ, ունեցած սուրբ յիշողութեան զօրութիւնը տկարացաւ, և մահուան վճիռն արձակուեցաւ։ Աստուծոյ վրայ կասկածի գնալուն փոխարէն՝ սատանայի գերի եղաւ։ Պաղտին գեղեցկութենէն և համեղութենէն ախորժ զգալուն փոխանակ, մարմնոյն համար անձին վրայ տեսակ տեսակ ախտերու ենթարկուելով՝ ապրուստն էլ աշխատութեամբ ճարելու սահպուեցաւ։ Վերջապէս կնոջ սերը Աստուծոյ պատուէրին գերազանց տեսնելու համար էլ՝ դրախտէն արտաքսուելով աշխարհի վիշտը կրելու դատապարտուեցաւ։

Արդարև բոլոր մարդիկ, ալք և կանայք, յիշեալ պատժոց և ախտից ենթարկուեցան, բայց

1. Եւ դնացին ի մեզկ էնն, և կոխեցին տերևս թզենւոյ, և ագաբին ի բերանց տեսանելիս։ Ծննդ. Գ. 7։

կանանց տեսին՝ ցաւով զաւակ ծնելու պատիժն էլ աւելի տրուեցաւ[1]։ Այս պատճառաւ կինը պարտական է ամէն կերպով իրեն վիճակեալ տղոմթեան և տրամութեանց համբերելով՝ միշտ իւր էրկան հնազանդ լինել։ Բնաւ մի՛ ասեր թէ մենք ո՛չ մի բանէ տեղեկութիւն չունենալով հանդերձ, միայն Ադամայ պատճառաւ այսչափ կը նեղուինք։ Այո՛, մեղքը գործողը Ադամն էր, բայց պատիժը տուողն՝ Աստուած է։ և Նա՝ արդարադատ լինելով ոչ աքի զրկանք և անիրաւութիւն չ'աներ, մեկուն յանցանքին փոխարէն ուրիշ մը երբէք չի պատժեր։ Այս բանին մէջ մի խորին գաղտնիք կայ, որուն մարդուն միտք կարող չէ թափանցել։ Միայն այսչափ գիտենք, որ Ադամ բոլոր մարդոց նախահայր լինելով՝ իւր սերունդը ևս իւր հետ հետևաբար մեղաւոր համարուեցան[2]։ Զոր օրինակ երբ ծնողք բորոտ լինին, բնականապէս իրենց սերունդն էլ բորոտեալ կը լինին, ինչպէս նաև թունաւոր օրթատնկոյն խաղողի գինին, նմանապէս թունաւոր կը լինի։

Ի միտ առ, ինչպէս որ դուն բանէ մը տեղեկութիւն չունեցած մեղաւոր եղար, նոյնպէս էլ դուն բանէ տեղեկութիւն մը չունեցած փրկութեան

1. Տրամութեամբ ծնցես որդիս, և առ այր քո պարծ քո, և նա տիրեսցէ քեզ։ Ծննդ. Գ. 7։

2. Մեղաք մեք ընդ հարսն մեր։ Սաղմոս. ՃԶ. 6։

արժանացար: Որովհետև Յիսուս Քրիստոս մի՛ ՏԷ-ՐՆ՝ Ադամին մեզի ժառանգութիւն մնացած հոգևոր մահէն, այլ՝նաև սկզբնական մեղքէն զմեզ փրկելով՝ Ադամայ կորուսածը վերստին մեզ շնորհուեցաւ: Մանաւանդ՝ նորա շնորհքն ուրիշ շատ հոգևոր բարեաց արժանի լինել մեզ վիճակեցաւ[1]. սակայն մարմնոյ մահն և աշխարհի ցաւք և վիշտք մնացին, որպէս զի մարդն այս աշխարհի վրայ անոնց զգայութեամբ կարողանայ առաքինութեան վարժուիլ և զարգանալ կատարելութեան մէջ և ո՛չ երբէք Աստուծոյ հրամանին և օրինաց դէմ գործել: Ուրեմն Ադամը մի՛ մեղադրեր, ո՛վ մարդ, այլ մանաւանդ Յիսուս Քրիստոս մեր Փրկիչ Տիրոջմէն գոհ և շնորհակալ եղիր, ու մեղքէ եա կեցիր, որ զԸ-ժոխքի տանջանաց ԸԷ դատապարտուիս:

Հպցո–Տ Լ.

Ադամ՝ իւր զաւակաց եւ թոռանց պատուէրի վերաբերեալ մի քան աւանդեց:

Պաս. Ընդունուած է որ Ադամ զոհ մատուցած է Աստուծոյ և իւր որդիքը զոհագործու-

---

1. Այլ Թագաւորեաց մահ յԱդամայ մինչև ցՄովսէս, և ի վերայ չմեղացեալոցն, ըստ նմանութեան յանցաւածոյն Ադամայ... զի եթէ մինոյն յանցանօք բազումք մեռան, որչափ եւս առաւել շնորհքն Աստուծոյ և պարգևք շնորհօք մինոյն մարդոյ Յիսուսի Քրիստոսի ի բազումս առաւելոյ. Հռոմ. Ե. 14:

թիւնը անորմէ սովորեցին. մանաւանդ՝ ապօթք, ազաչանք, փառաբանութիւն ու գոհութիւն առ Աստուած մատուցանել և այլ ասոնց նման առաքինական միջոցներ և ճանապարհ և ժամանակի պիտոյից համաձայն հրահանգներ անշուշտ տուաւ:

Բայց հաւանական է, որ յանդիմանութեան ու պատժոյ արժանի եղողներուն նկատմամբ լուռ մնաց, քանի որ բոլորին յայտնի էր, որ անոր յանցանքին համար մարդիկ այս աշխարհի տառապանաց մատնուած էին. ինչու որ մէկուն յանցանքը՝ իւր բերնին սանձ և աչքին վարագոյր լինելով թոյլ չի տար որ ուրիշներուն յանցանքը յիշելով յանդիմանէ կամ խրատ տայ[1]:

Սակայն Նոյ նահապետ՝ իւր Քանան թոռն անիծեց, երբ անոր յանցանքը լսեց և իմացաւ[2]. նմանապէս Յակոբ նահապետ՝ իւր որդիքը՝ Շմաւոն ու Ղեւին յանդիմանեց[3], երբ նոքա իրենց Դինա քրոջ համար Սիւքէմի բնակիչները կոտորեցին: Որովհետև Նոյ և Յակոբ անյանց և անմեղ լինելով յանցաւորն ու մեղաւորն յանդիմանելու համարձակութիւն ունեցան:

---

1. Զի՛ տեսանես դշիւղ յական եղբօր քոյ, և ի քում ականդ զգերանդ ո՛չ տեսանես. Մատթ. Է. 3:
2. Անիծեալ Քանան մանուկ. Ծննդ. Թ. 25:
3. Առեալ արարեք զիս. Ծննդ. ԼԴ: 30:

Հարց՟ ԺԱ.

Ինչու Աբելի զոհն ընդունելի եղաւ, ու Կայէնինը՝ ոչ։

Պաս. Սիրով չը մատուցանելուն համար. վասն զի զոհն Աստուծոյ կը մատուցուի իբրև ընծայ, և ընծան սիրոյ նշան է. եթէ մարդու սրտին մէջ սէր չը լինի, անոր ընծան ընդունելի չէ. և սէր չի լինիր բայց եթէ սիրտը նուիրելով, այս պատճառաւ Աստուած մարդուն սիրտը կուզէ[1]. որովհետև սիրտը նուիրողն՝ իւր կեանքն ու բոլոր հարստութիւնն էլ նուիրած կը լինի։ Արդ Կայէնի սրտին մէջ Աստուծոյ սէրը չը լինելուն անոր զոհն ընդունելի չ'եղաւ. վասն զի Կայէն երկրագործ էր, հողի արդիւնքէն ընծայ բերաւ, բայց լաւն և իւր ժամանակին չ'ընծայեց[2], մինչդեռ Աբել, որովհետև հովիւ էր, պարարտ և նախածին կենդանիներէն ընծայեց առանց ժամանակն անցնելու։

Այն ժամանակի պահանջման համեմատ ընդունուած ընծային վրայ երկինքէն հրաշիւք կրակ իջնելով ընդունելի լինելը կը յայտնէր[3]։ Աբելի

1. Տես ցես սղեակ գնչբա գս. Առակ. ԻԳ. 26։
2. Եւ եղև յետ աւուրց՝ եբեր Կայէն ի պտղոց երկրի պատարագ Աստուծոյ. Ծննդ. Գ. 3։
3. Որով վկայեցաւ իսկ արդար լինել, վկ ի վերայ պատարագացն եղև նմա վկայութիւն յԱստուծոյ. Եբրայ. ԺԱ. 4։

զոհին վրայ երկինքէն հուր իջաւ, բայց Կայէնի զոհին վրայ չ'իջաւ[1]։ Այս մասին Կայէն թէպետ մեծ արհամարհանք ցոյց տուաւ, բայց արածին վրայ չը զղջացաւ՝ և իւր անառակ ախորժակով յանգանքն առնելի առատակացուց. որովհետև յանցանքը չը ճանաչելով՝ իւր զոհին չընդունուելուն վրայ նեղացաւ։ Սակայն Աստուած՝ իւր ողորմածութեամբ հաճեցաւ ապրարարել Կայէնին, թէ[2] յանցանք գործեցիր, պէտք է ուրիշին լռես. այսու հանդերձ նա դարձեալ անպիղծ կը մնայ։

Ու որովհետև Աստուած Աբելի պատարագն ընդունեց, կարելի է որ անդրանկութեան պատիւն էլ անոր կուտայ. Կայէն սկսաւ կասկածել, և Աբելը սպանելու չար խորհուրդն յղացաւ։ Այս սոսկալի վատութենէն զանի եա կեցնելու համար, Աստուած՝ Կայէնի կը յայտնէ[3] թէ Աբելը իրեն պիտի հնազանդի և ինքն անոր վրայ պէտք է իշխէ. իբր թէ ասել կուզէր—անդրանկութեան պատիւը քեզ կը պատկանի, միայն զղջա և եզ-

1. Նայեցաւ Աստուած ի Հաբէլ և ի պատարագս նորա, և ի Կայէն և ի զոհս նորա ոչ նայեցաւ. Ծննդ. Գ. 4։
2. Եւ ուղիղ ոչ բաժանես՝ մեզաս, լաւ լեր. Ծննդ. Գ. 7։
3. Առ քեզ լեսցի դարձ նորա, և դու տիրեսցես նմա. Ծննդ. Գ. 7։ Տես ի մեկնութիւն Սարգսի. Կաթուղ. Ա. Յօհան. Գ. 2։

բօրէ չարիք մի՛ հասցուներ, բայց նախանձը լոյս
էր տուաւ որ կայէն՝ իւր վատ և եղբայրասպան
խորհուրդէն եա կենայ։ Կը կարծուի նաև թէ
Կայէն իւր պատասխանին չընդունելուն համար
Աստուծոյ մասին դանդատեցաւ Աբէլի, որ իրա-
ւունք տալով Աստուծոյ, Կայէնին անիրաւ լինելը
յայտնելուն վրայ՝ Կայէն բարկանալով սպանեց իւր
եղբայրն Աբէլը [1]։ Հաւ նկատէ, ինչպէս որ բարձրէն
ընկած քարը հետզհետէ ստոտկութիւնն աւելցնե-
լով գետին կ'իջնէ, այսպէս Կայէն հետզհետէ
աւելի և աւելի իւր չարութեան մէջ յառաջա-
ցաւ։ Մարդասպանութիւնը մեծ մեղք է անշուշտ,
բայց եղբայրասպանութիւնը՝ առաւել ևս. ամէն
մեղք գործողը կը պատժուի, բայց նա, որ մեղքի
մը հնարիչը կը դառնայ, շատ աւելի մեծ պատժոյ
արժանի է։ Արդ ինչպէս որ Կայէն առաջին մար-
դասպանն եղաւ, նոյնպէս Աբէլ՝ առաջին արդարն
է երկրիս վրայ։

Ահա պատ՝ երբ Աստուած կը հարցունէ Կա-
յէնի թէ եղբայրդ ո՞ւր է [2], փոխանակ զղջալով
մեղքը խոստովանելու, լրբաբար և իւր հատասա-
րին պատասխան տալու պէս կը պատասխանէ, ասե-
լով—Մի թէ ես եղբօրս պահապանն եմ՞—որով

1. Ցաբեաւ Կայէն ի վերայ Հաբէլի եղբօր նորա
և սպան զնա. Ծննդ. Դ. 8.

2. Ո՞ւր է Հաբէլ եղբայր քո. Ծննդ. Դ. 9։

ինքզինքը իբր անտեղեակ և անմեղ՝ և զԱստուած
էլ անդէպ ակնու մը տեղ դրաւ։ Ո՛վ անդուէթ,
որովհետև եղբօրդ պահապանը չէիր, ինչու հա-
մար անոր սպանողը եղար. ով անողորմ մարդ,
պարտաւոր էիր պահպանել, զի եղբայրդ էր։
Որովհետև յանցաւոր չեղող մարդու մը նման
պատասխանեց և որպէս զի չը կարծուի թէ Աս-
տուած անտեղեակ է իւր արած չարութեան, այդ
պատճառաւ յայտնելով նորա ծածուկ արածը,
կասէ թէ «եղբօրդ արիւնը քեզի դէմ կը բողոք
առ իս» [1]. բայց եթէ նորէն այդ բռնաւոր անզուէթը
իւր անզգայութեան մէջ կը յառաջէ կը մնայ, այն
ատեն Աստուած կ'անիծէ զայն վերջապէս։

Այն ատեն Կայէնը բոլորովին յուսահատելով
Աստուծոյ ողորմութեան ու գթութեան դէմ պա-
տասխան տալուն համար նորա յանցանքն աւելի
ծանրացաւ. որովհետև իւր մեղքը Աստուծոյ
ողորմութենէն աւելի մեծ համարեց [2]. այդ պատ-
ճառաւ Աստուծոյ ողորմութեան այլ ևս իսկապէս
անարժան լինելով, ինչպէս որ Աստուծոյ ակը
հանած էր իւր գլուխն, նոյնպէս ինքն էլ Աստու-

1. Գոչումն արեան եղբօր քո բողոքէ առ իս
յերկրէ. Ծննդ. Դ. 10։

2. Մեծ է պատիժ իմ քան զթողուլ ինձ. Ծննդ. Դ. 13։

ծոյ երեսէն անդարձ կերպով արտաքսուելու[1]։

Ո՛վ որ ես, ընթերցող, լաւ ի միտ առ այս կէտը. որու դործին համ օրինակին հետեւիս՝ անոր պէս փոխարէնը պէտք է ընդունիս։ Աչացդ առջեւ կայենի վիճակը պատկերացուր. ձեռքերն և ոտքերը կը դողան, կոխած տեղը կ'երերայ, տեղ մը կարող չէ կենալ, բոլորէն կը վախնայ, ոչ ոք անոր կը համակրի և կ'յարձկ. երկիրն և երկինքն անոր թշնամի են, և բոլոր արարածք անոր դահիճի նման կերեւին, որովհետեւ բոլոր արարածոց Արարչին հետ թշնամացաւ։ Աստուծոյ մերժածը՝ բոլոր սիրելիք կը մերժեն, կեանքը մահէն աւելի վատթար կը թուի, կեանքը իր պատիժն է։ Որովհետեւ գիտէ թէ արդարութեան դատաստանը իրր դահիճ իր աւերը կը սրէ, օր մը իր վրայ սպառնութեան ահեղ գործը կատարելու համար, և ժոռքը պատրաստ է յաւիտենական անշէջ հրով զինքն այրելու։

Ո՛հ, մահը կը փնտռէ կայէն, բայց կարող չէ դանել. վասն զի պակուցիչ օրինակ և խրատ լինելու համար բոլոր աշխարհի Աստուծոյ հրամանաւ նշան արուեցաւ անոր վրայ, որպէս զի ոչ

1. Եւ Կայէն յերեսաց Տեառն. Ծննդ. Դ. 16։— Մերժեցաւ ի նմանէ անկըսան խրով բարկութեամբ, ընդ եղբայրասպան սրտմտութիւնս կոչեաւ. Իմաստ. Ժ.3։

ոք զանի չը մեռցունէ[1]. ահա մեղայ չ'ասող անզիջ մեղաւորին ողորմելի և ահաւոր վիճակն այս է։

Հարցում 16.

Պատիժէն յետոյ Կայէն ի՞նչ եղաւ։

Պաթ. Վերին ատենէն վճռաթար կացութեան մը մնանուած էր. որովհետեւ Աստուած Ադամայ յանցանաց համար անէծք տուած տանն, ոչ թէ Ադամայ անձին, այլ երկրին յատուկ էր այն. միայն Կայենի տուած անէծքը անոր անձին վրայ թափելով[2], թէ Աստուծոյ շնորհքէն և թէ ամէն երկնային և երկրային օրհնութենէն զրկուեցաւ. և ինչպէս որ անմշակ ու խոպան մնացած արտին մէջ փուշեր կը լեցուին, այսպէս էլ Կայենի մէջ ամէն տեսակ չարութեանց սերմունք ծլան և աճեցին։ Վերջը Նայիդ կոչուած գաւառին մէջ բնակելով, իւր սերունդը շատցաւ, և այնտեղ քաղաք մը շինելով, իւր որդւոյ՝ անունը տուաւ անոր. զի իւր անունը բոլորին աւելի էր։

Կայէն երկրի վրայ առաջին անգամ քաղաք շինելով, կը հասկացուի թէ ալքայութեան յոյսը բոլորովին կտրած՝ միայն մարմնաւոր փափաքանաց անձնատուր եղած էր։ Այսպէս թշուառականը

1. Եւ Տէր Աստուած նշան է Կայէն՝ չ'սպանանել. Ծննդ. Դ. 15։

2 Անէծեալ լեզնի դու է վերայ երկրի. Ծննդ. Դ. 11։

ամէն կերպով Աստուծոյ բարեմեծան յիշատակն անգամ մոռնալով, օր քան զօր չարութեան մէջ այնչափ յառաջ գնաց, որ վերջապէս իւր թոռան թոռ Ղամէքի ձեռամբ անաստուն մը պիտ մեռաւ կ'ասուի: Որովհետեւ յիշեալ Ղամէքը մի օր ծառայի մը հետ անտառին մէջ որս փնտռած ատեն, կայէն եւ անոր ծառոյ մէջ կը գտնուէր. և ծառան կարծելով թէ այնտեղ կենդանի մը կայ, Ղամէքին իմաց տուաւ, և նա եւ անդիտութեամբ նետովը զարկաւ և սպաննեց զայն. սակայն որս կարծուածը կայէնը լինելը յայտնուածին պէս Ղամէք բարկանալով ծառային էլ սպաննեց [1]:

Հարց. ՃԹ.

Կայէնէն եւ Աբէլէն զատ Ադամ ուրիշ զաւակ ունեցա՞ւ:

Պատ. Ունեցաւ. Թէպէտ Ադամ շատ արուեւ էգ զաւակներ ունեցաւ, բայց երեք որդուց անուանք միայն յայտնի են. Կայէն, Աբէլ և Սէթ: Կայէն իւր մեղաց պատճառաւ մերժուեցաւ, Աբէլ չամուսնացաւ՝ Կայէնի ձեռամբ սպանուեցաւ. յետոյ Սէթ ծնելով մեծ վերիմաստութիւն եղաւ Ադամայ: Մանաւանդ որ Աստուած զանի իւր շնորհօքը կ'զարդարէր, որ մարդիկ Աստուծոյ

1. Այլ մի սպանի ի վերս լինայ, և երիտասարդ՝ ի հարուածս լինայ. Ծննդ. Գ. 23:

ողորմութենէն յոյսերնին չկտրեն. այնպէս որ Սէթ առաքինի և Աստուծոյ միշտ հնազանդ մնալով՝ նորա սերունդը Աստուծոյ որդիք կոչուեցան [1]: Սորա որդին Ենովս էր, որ առաջին անգամ յայտնի կերպով և պատուով ժողովրդեան հետ Աստուծոյ երկրպագութիւն մատուցանելով աղօթք և ապաշնորհ արաւ [2]: Դարձեալ նորա ցեղէն Ենոք Աստուծոյ հաճոյ և առաքինի լինելուն՝ Աստուած զանի փոխադրեց մարմնով ուրիշ տեղ [3]: Նմանապէս Նոյ նահապետ նոյն ցեղէն Աստուծոյ հաւատարիմ և հաճոյ անձ մի էր:

Ի միտ առ, Աստուծոյ կատարեալ հնազանդութիւն ցոյց տուողը՝ որդիական պատիւ տատնալով ամէն կերպ նեղութենէ զերծ կը լինի. ինչպէս որ Նոյ՝ Աստուծոյ ողորմութեամբ ջրհեղեղից ազատեցաւ. բայց Աստուծոյ հրամանին անհնազանդը՝ Աստուծոյ որդիութեան պատուոյն չ'արժանանալով մարդկան որդիք կը կոչուին. ինչպէս որ Կայէնի ցեղի աղջիկներն մարդկան աղջիկները կոչեցան [4], որոնք յետոյ ջրհեղեղով կորսուեցան:

1. Տեսեալ որդւոյն Աստուծոյ. Ծննդ. Զ. 2.

2. Նա յուսացաւ կոչել զանուն Տեառն Աստուծոյ. Ծննդ. Դ. 26:

3. Եւ հաճոյ եղեւ Ենովք Աստուծոյ, և ոչ ուրեք գտանիւր զի փոխեաց զնա Աստուած. Ծննդ. Ե. 24:

4. Տեսեալ որդւոյն Աստուծոյ զդստերան մարդկան. Ծննդ. Զ. 2:

Հարց՝ Ա.

Ինչու Աստուած Նոավքը փոխեց աշխարհէս։

Պաս. Մեղաց մէջ չընկնելու համար, որովհետև յիշեալ անձը առաքինի էր՝ Աստուած զայն սիրելուն համար մեղաւորաց միջէն գաղտով ուրիշ տեղ փոխեց, որ չը լինի թէ մեղաց մէջ ընկնի[1]։ Մանաւանդ որ մարդիկ իրենց յոյսը չը կարեն Աստուծոյ ողորմութենէն և արքայութենէն, այլ եւանդով և սիրով աշխատեն Անոր հաճոյ լինելով արքայութեան արժանանալ։ Եւ դարձեալ յայտնի լինի, որ եթէ Ադամ հնազանդութեան մէջ մնար, առանց մահ ճաշակելու արքայութիւն պէտք է փոխուէր (ինչպէս 25-րդ հարցման մէջ յիշուեցաւ)։ Արդ՝ Նոավք ամէն կերպով հնազանդ էր, վասնորոյ Աստուած վերացուցանէ, որ իմացուի թէ մարդուն մահուան ենթարկումը միայն մեղաց պատճառաւ է[2]։

Ամէն դառ, եթէ մարդիկ չը մեղանչէին, բոլորն էլ արքայութիւն պէտք է գնային. բայց հի-

---

1. Հաճոյ եղեալ Աստուծոյ (Նոավք) սիրեցաւ, և կենդանւոյն ի միջոյ մեղաւորաց փոխեցաւ... պի մի չարութիւն ինչ չոչնչէ պիճառութիւն իւր, կամ նենգութիւն պատրեսէ զանձն նորա. Իմաստ. Գ. 10։

2. Աստուած հաստատեաց զմարդն յանեղծութիւն... նախանձու բանսարկուին եմուտ մահ յաշխարհ. Իմաստ. Բ. 23։

մայ որոնք որ Հիմարիա հաւատով Քրիստոսի (Մեսիային) կը հնազանդին, նոքա միայն արքայութեան կարժանանան։ Նոավքին ուր վերափոխումը այս գլխոյն մէջ գրուած չը լինելով հանդերձ, այնու ամենայնիւ Ս. Գիրք այլ տեղ ղրահատ անունով կը յիշեն զայն[1]։ Ս. եկեղեցին ևս նորա գտնուած տեղը՝ վերին Երուսաղէմ և դրախտ կ'անուանէ։ Նոավք՝ բնական օրէնքի, իսկ Եղիա մարգարէն՝ մովսիսական օրինաց ժամանակէն հաւատարիմ վիպաք լինելով, աշխարհիս վերջը նոր ժամանակ վերսին պէտք է գան քրիստոնէական սուրբ հաւատոյ ճշմարտութիւնը մարդոց քարոզելու համար։ Մատաք. Դ. 5։ Տես նաև Յայտ. ԺԱ. 3։

Հարց՝ Ա.

Ինչու չընտրեց նոաւ։

Պաս. Մարդկան մեղաց համար։ Վասն զի թէպէտ Սէթ իւր ցեղի մարդոց առաքինութեան ուղիղ ճանապարհը սորվեցուց, բայց Կայէնի ցեղը՝ իւր նախահայրին վատ օրինակ տեսած և հետզհետէ չարութեան մէջ առաւել ևս յառաջ գնացած լինելով, Սէթի ցեղն էլ, բայց ի նոյ նահապետէն, Կայէնի ցեղին անպարկեշտ և անամօթ

---

1. Նոավք հաճոյացաւ Աստուծոյ և վերափոխեցաւ ի դրախտն. Սիրաք. ԽԴ. 16։

աղջկանց հետ խառնակուելոյն, որով ամենքն էլ այն սահմանն ապականութեան մէջ ընկան, որ այլ եւս չարն ու բարին չը զանազանելով, ամէն մարդ մեղքը փառք և պատիւ կը սեպէր իրեն [1]: Ամօթ է ասելու համար անմեղ մարդ պէտք է, հիտակ քաւէ ասել խոստանալու համար՝ ուղիղ մարդ պէտք է: Արդ՝ ամենքն այսպէս վատթարութեամբ և ամէն կերպ ախտերով վարակուելն՝ իրաւամբ հարկ եղաւ, որ Աստուած իւր շնորհքն անոնց վրայէն բոլորովին վերցնելով պատժէ, քանի որ Նոքա շնորհքոյ բացարձակապէս անարժան հանդիսացան [2]: Որովհետև մեղքն այնչափ շատցաւ, որ Աստուած մարդն ստեղծելուն վրայ զղջման և բարկութեան երեսոյթ կը ցուցնէ [3]:

Արդարև Աստուած ամենակարող է և ամենագէտ, Նա բարկութիւն և զղջում չունի, վասն զի բարկութիւնը՝ անկարողութեան, իսկ զիղջը՝ անգիտութեան հետևանք են: Այսպիսի խօսքեր ցոյց կուտան իրաւացի գանգատ մարդոյ ապականեալ վիճակին վրայ, և թէ՝ մեղքը այնչափ դարձեր

1. Բազմացան չարքը մարդկան ի վերայ երկրի, և ամենայն սր խորհէը ի սրտի իւրում ենամամ ի չարչիս. Ծննդ. Զ. 5:

2. Մի մնասցէ ոգի իմ ի մարդկանդ յայդմիկ յաւիտեան, վասն լինելոյ դոցա մարմին. Ծննդ. Զ. 3:

3. Եւ սրբջացաւ Աստուած զի արար զմարդն. Ծննդ. Զ. 6:

չելի և Աստուծոյ սրբութեան հակառակ բան է, որ Նա՝ մեղաւոր մարդն ստեղծելուն վրայ զղջալու և բարկանալու չափ չ'ախորժիր անկէ: Ծեծ և հիացիր Աստուծոյ ողորմութեան վրայ, որ յիշեալ ապստամբ մարդիկ ամէն կերպով և անմիջական պատժոյ արժանի եղած ատեն, իւր անսահման զթութեամբ, փոխանակ իսկոյն պատժելու, 120 տարի յետոյ ջրհեղեղով պատժելու սպառնալիք կ'անէ, որպէս զի վախնան մեղայի գան ու բնաջինջ կորսուելու ահաւոր վտանգէն ազատուին [1]:

Որովհետև պատիժը ջրով պէտք է լինէր, վասնորոյ Աստուած հրաման կուտայ Նոյի տապան մը շինելու համար, որպէս զի ջրհեղեղը սկսած ատեն, անոր մէջ մտնելով ազատի: Մանաւանդ՝ մեղաւոր մարդկի տապանին շինութիւնը տեսնելով և միանգամայն հասկանալով թէ պատժոյն գործադրութիւնը պէտք է տեղի ունենայ, զղջալ փութան: Իսկ ջրհեղեղի ժամանակ տապանը մտնելու փրկուելու յոյսը չունենալու համար՝ յառաջագոյն Նոյին կը յայտնէ թէ որո՞նք պէտք է տապանը մտնեն, ասելով «դուն և քու որդիքդ, կինդ և որդւոցդ կիները մտնելու էք

1. Եւ եղեցեն աւուրք դոցա ամք հարիւր քսան... Ժամանակ ամենայն մարդոյ հասեալ է առաջի իմ... ածից զջրհեղեղ ջրոյ ի վերայ երկրի, ապականել զամենայն մարմին. Ծննդ. Զ. 3—17:

տապանը», որպես զի ծածուկ չը մնայ թէ անանցմէ զատ մնացեալ ամէնքն էլ պէտք է խեղդուին: Դարձեալ՝ չը կարծելու համար թէ աշխարհի վերջն է, կը հրամայէ որ թռչնոց և ցամաքային կենդանեաց ցեղը չը կորսուելու նպատակաւ, անանցմէ արու և էգ տապանն առնուի. որպես զի լաւ հասկացուի թէ երկիրը նորէն պիտի ծաղկի ու շէննայ և թէ սոյն պատիժը միմիայն մարդոց մեղքին համար է:

Հարց՝ ՀԲ.

Նոյ հաղօթից Աստուծոյ, որ մարդոց մեղքերուն ներէ, կամ մեղաւորները չը խրատից, եւ կամ զանոնք չը յանդիմանից, որ պատճառ իրենց հար ճանապարհէն:

Պաս. Ցիրաւի, մեղաւորին համար ապօթել հաճելի և ընդունելի է Աստուծոյ, բայց պայմանաւ որ մեղաւորն էլ զինքը յանցաւոր ճանաչելով զղջումի գայ. որովհետև Աստուծմէ ներում խընդրելի՝ կը նշանակէ նորա մեծութիւնը, իշխանութիւնն ու զթութիւնը ճանաչել. նոյնպէս մարդուն կողմանէ զղջման և խոնարհութեան նշան պէտք է լինի խոհապատ: Ինչպէս որ հայր Աբրահամ ապօթքով՝ Աբիմելէք թագաւորին, (ծննդ. ի. 17:) Ցոր երանելին աղաչանքով՝ իւր բարեկամաց, (Ցովբ. խԲ. 10:) Մովսէս մարգարէի պաղատանօք՝ Իսրայէլի ժողովրդեան յանցանքը

ներուեցան (Ելք. ԼԲ. 31:): Որովհետև ասոնք իրենց յանցանքն իմանալով՝ իսկոյն զղջացին: Սակայն ջրհեղեղի ժամանակին մարդիկը ոչ միայն իրենց մեղաց վրայ չը զղջացին, այլ օր ըստ օրէ աւելի վատթարացան. իսկ Նոյ՝ թէև անոնց համար ապօթեց, բայց չընդունուեցաւ. ինչու որ յիշեալք ասստիկ հպարտութեամբ փքացած՝ իրենց զօրութեան ապաւինած էին[1]: Նոյնպէս խրատի մասին Նոյ՝ թէև բանիւ բերանոյ Աստուծոյ հրամանը հաղորդելու, և թէ առաքինութեամբ անոնց բարի օրինակ լինելու պարտուց մէջ չը թեթացաւ[2], բայց նոքա չ'ուղղուեցան բնաւ, ինչու որ մեղքը՝ մարդուն միտքն այն աստիճան կը կուրացնէ, որ այլ եւս բարին ու չարը զանազանել կարող չէ[1]: Դարձեալ, Նոյ զանոնք պատժելու անկարող լինելով, նորա ապօրէն վարմանց վրայ կը տրտմէր: Ինչու որ այն աստն դատաւոր և թագաւոր չը լինելուն՝ իւրաքանչիւրն իւր ցանկութեան համեմատ շարժելով յԱստուծոյ չ'երկնչէր և ի մարդկանէ չէր ամաչեր. ըստ որում ամէնքն էլ գօռող և ամբարտաւան, ամէնքն էլ բռնաւոր և ինքնագլուխ[2], ամէնքն էլ անամօթ և

---

1. Ի սկզբանէ և կընչել սկայեան ամբարտաւանանց. Իմաստ. ԺԴ. 6:

2. Զութերորդն գնոյ, զարդարութեանն քարոզ, պահեաց և ջրհեղեղ. Բ Պետր. Բ. 5:

ամէնքն էլ միով բանիւ, ինք՝ ահաւասիկ, անապատին և բարբարոս լինելով, մեծն ու փոքրը զուարճութեան ու շռայլութեան անձնատուր եղած՝ Նոյ նահապետին խրատներէն և առաքինութենէն ոչ կ՚ապրուին և ոչ օրինակ կառնուն: Ինչպէս որ յառաջագոյն յիշուեցաւ, 120 տարի անցնելուն պէս՝ տապանի շինութիւնն էլ վերջացաւ և այնչափ երկար ժամանակամիջոցին մէջ ոչ ոք չզղջաց և ապաշխարեց:

Դու տես Աստուծոյ մարդասիրութիւնը, որ թէև արդարութեամբ մեղաւորները պատժել որոշած է, բայց ոգորմած լինելով՝ անձրևը սկսելէն եօթն օր յառաջ Նոյ նահապետին կը հրամայէ որ կենդանիները, ինչպէս նաև անոնց և իրենց համար կարևոր եղած պաշարն առնելով, իբր երեք որդւոց՝ Սեմ, Քամ և Յաբեթ, իբր կնոջ և իբր որդւոց կանանց հետ փութայ մտնել տապանը: Արդ՝ Նոյ ըստ հրամանին Աստուծոյ տապանը մտածին պէս՝ ով զարմանալեացս, հրեշտակը դրսէն տապանին դուռը կը փակէ[3], որ ուրիշ մարդ անոր մէջ մտնելու կարող չը լինի. բայց

1. Ըստ առածին, Ըմբռնեալքն ի մեղս և մտաց ևս անկանին:

2. Հանգիստ էին և վերայ երկրի յառաջան այնոսիկ. Ծննդ. Զ. 1:

3. Եւ փակեաց Տէր Աստուած արտաքոյ նորա զապատանն. Ե. 17:

ականատեսները խնդալով կը ծաղրեն. որովհետև չրհեղեղ լինելուն չեն հաւատար:

Հարցո–՛ Լէ.

Ամէն տեսակ անասուններէն առնուեցան նաւուն մէջ:

Պաս. Յայտնի է, որ չրի մէջ ապրողներէն, խոնաւութենէ, փտած տախտակէ և նեխութենէ գոյացողներէն չ՚առնուեցաւ. անուտելի կենդանիներէն և թռչուններէն երկ երկու հատ, արու և էգ, իսկ ուտելի և Աստուծոյ զոհելի կենդանիներէն արու և էգ եօթնեական հատ առնուեցաւ, ըստ հրամանի:

Եթէ կատարկես թէ այնչափ կենդանիք ամբողջ մի տարի ինչպէ՞ս կառավարուեցան տապանին մէջ, կը պատասխանեմ թէ տապանին երկայնութիւնն երեք հարիւր կանգուն, լայնութիւնը յիսուն կանգուն և բարձրութիւնը երեսուն կանգուն լինելով, ներսն ու դուրսը նաւթով ծեփուած էր. լայնութեամբը վարէն մինչև ի վեր ամիսփուած լինելով մինչև մէկ կանգուն թանձրութեամբ սնուկի ձևով շինուած լինելուն՝ տապան[1] կոչուեցաւ: Եւ ներսէն երեք յարկանի, ու զատ զատ բնակելու յարմար վայրեր շինուեցան, որ կենդանիքը միմեանց վնաս տալու անկարող լինին:

1. Ըստ դու քեզ տապան. Ծննդ. Զ. 14:

Պէտք չէ ասել թէ Նոյ այսչափ կենդանիները
ինչպէս կարողացաւ տապանը ժողովել, որովհետև
ինչպէս որ անոնց անուններ դնելու համար անոնք
ինքնին Ադամի ներկայութիւնը եկան, նմանապէս
իրենց փրկութեան համար Աստուծոյ հրամանաւ
տապանը մտնելով Նոյ նահապետի հնազանդեցան։
Տապանի շինութեան տեղը Աստուածաշունչին
մէջ թէև գրուած չէ, բայց Անախոթի մէջ շինուած
է կ՚ասուի, ինչպէս որ Մովսէս Խորենացին իւր
Աշխարհացոյցին մէջ գրած է։

Հարցում ԼԲ.

Անձրեւը սկսելուն՝ մարդիկ անոր պատիժ լինելը հասկանալով զղջացին։

Պաս. Ընթերք չը գղջացին. մարմնոյ աչաց լոյս պէտք է որ տեսնէ, հոգւոյ աչաց շնորհք պէտք է որ Աստուծոյ բարերարութիւնը ճանաչելով զղջանայ մի գայ. ինչու որ Աստուած իրենց մեղաց պատճառաւ իւր շնորհքն անոնցմէ առած լինելով, ինչպէս որ այնչափ ատեն Աստուծոյ բարիք ճաշակելու անկարող եղան, նոյնպէս պատժոյ ժամանակն էլ տեսնելով հանդերձ՝ ուղղութեան չեկան։ Այո՛, կարելի է պարտք իսկ էր ճանաչել և հասկանալ թէ այնպիսի մի ահագին տապան, զոր Նոյ Աստուծոյ հրամանաւ շինեց, ի զուր չէր կարող շինուիլ։ ի հարկէ ատոր մէջ գաղտնիք մի կար

ժանաւանդ այնչափ կենդանիներ, լեռնային և դաշտային թռչուններ և գազաններ հրաշալի կարգաւորութեամբ տապանը կը մտնեն, և Նոյ այսչափ գեղեցիկ հանգիստաւորութեամբ անոր մէջ կը բազմի. այս տեսնելով փոխանակ խրատ առնելու՝ ընդհակառակն արհամարհեցին, և իրենց շուայտ կերպերնէ մէ անառակութիւնը ուրախութեամբ շարունակելով բան ամէնոյնի անհոգ կը մնային[1]։

Լաւ նկատողութեան մէջ այսպէս թշուառ մեղաւորաց վիճակին որպիսութիւնը. որովհետև մեղաց չափը լցուածին պէս, ապերէն յանկարծ նետը թռչելուն նման՝ երկնքի և երկրի ջուրց ամբարներն ու պրիւնները բացուելու հրամանը կ՚արձակուի, որպէս զի արդարութեան սուրին մէջ արձանագրուած պատժոյ վճիռը գործադրուի իսկոյն[2]։ Ահագին մրրիկի մը նման հողմը փչելով երկնից երեսը կը ծածկէ, և իրրև թէ թշնամւոյն դէմ պատերազմ մղելու համար, անձրեւի նետերը կ՚իջնեն ամէնայն ուժգնութեամբ։ Մարդիկ նախ՝ հասարակ անձրեւի տեղ գնելով՝ ի հարկէ շուտով կը զգաստին, զուարճութեան արգելք մի՛ լինիք

---

1. Ուտէին և ըմպէին, կանայս առնէին, և արանց լինէին, մինչև յօրն՝ յորում եմուտ Նոյ ի տապանն, և ո՛չ գիտացին՝ մինչև եկն ջրհեղեղն, և երարձ զամենեսեան. Մատթ. ԻԴ. 38։

2. Եւ պատուհասեցան ամենայն աղբիւրք անդնդոց բաղմաց, ահանձք երկնից բացան. Ծննդ. Է. 11։

ասելով վիճանց խրախոյս կուտան[1]: Բայց երբ օրը կսկսի տարաժամիլ և անձրևն հետզհետէ առատել կը սասկանայ, այն ատեն՝ այս ինչ տարօրինակ բան է ասելով մոռատանջութեան մէջ կընկնին. այն ատեն բանը բանէն անցած լինելով ապաստանելու վայր կ'որոնեն:

Երբ ապաշաւելու ժամանակ կայ, խնդալով և ծիծաղելով ծապլեցին, հիմայ ազազակելով կ'ողբան և կարտասուեն, բայց լսող չի լինիր, ինչպէս որ իրենք Աստուծոյ հրամանը չը լսեցին[2]: Ո՞ւր են, որոնք որ ուտելով և ըմպելով զուարճութեան և անարժան հաճոյից անձնատուր եղած ամէն յորդորանաց և խրատու անսասանելով՝ արդար Նոյը քամահանօք և երգիծաբան լեզուով կը հիգնէին: Ի՞նչ եղան իրենց բազկի զօրութեան ապաւինած քաջերը. ի՞նչ կը խորհին հիմայ այդ անսասակութեան ազգին մէջ խոզի նման թաւալող արարածները: Ո՞ւր պէտք է պահէ անիրաւ մարդը իւր զրկողութեան պիղած ապրանքն ու հարստութիւնը, ինչու որ ահա ջուրը ամբողջ երկիրը պատից: Ծես, ոմանք ձագի սեղանը թողած փախչելու տեղ կը փնտռեն. մին՝ իւր սիրելին բա-

---

1. Ըստ՝ նկատք և վայելեսցուք և բարութիւնս ոչք կան. Բ. 6:

2. Քանզի կուշէք և ոչ լսեիք. այսուհետև՝ ես ծիծաղեցայց վկորատեամբ ձերով. Առակ. Ա. 24:

ժանուած՝ իւր ազատութեան ձայը կը նայի. ուրիշ մը իւր հարազատ մանուկը գրկէն կը նետէ. երանայք կուլան, երիտասարդներ ծառերը կելնեն. ծերերը՝ երիտասարդներէն օգնութիւն կը յուսան. վերջապէս մեծն ու պզտիկը խելագարուած, ոտք ու ձեռք դողդոջուն, արտերը կը բարախեն, ոչ ոք ոչ ոքի կ'օգնէ, որովհետև ամէն մէկը՝ իւր փըրկութեան զբաղած է անձկանօք:

Աւա՛ղ, այս ի՞նչ դժբաղդութիւն է, կ'ասեն. Նոյ իմաց տուաւ մեզ, բայց մենք չը հաւատացինք. գայն յիմարի տեղ դրինք, սակայն նա իմաստուն՝ և յիմարը մենք ենք եղեր. երանի անոր, որ տապանին մէջ պատսպարուած է, վայ մեզ, որ պիտի կորսուինք: Ահա չորս տարեկք մեզ թշնամի են. հողը բերանը բացած է որ կուլտայ. ջուրը կ'յորդի, որ խեղդամահ անէ. հովը աստիճաբար կը շնչէ որ կործանէ. հուրը այն աստիճան մեր տարերը կայրէ, զոր բոլոր ջուրերը կարող չեն մարել. երկինքը սև սև ամպերով երեսը մեզմէ ծածկեց, ցամաքն անգամ ջուրէն անտեսանելի եղաւ:

Ոմանք էլ դեռ կը յուսան թէ արդեօք տապանը մտնել կարելի՞ չէ, ինչու որ տապանէն զատ ապաւինելու տեղ չկայ. սակայն անոր դուռն էլ փակուած է: Անձրևը միօրինակ աստիճութեամբ և հեղեղանման կը վազէ, և ջուրը՝ տուները մտնելով, վարի յարկին մէջ եղողները վերի յարկը

կելնեն և անոր տան կտուրը կը վազեն, սինամով փրկութիւն գտնել յուսալով. բայց իսկոյն յուսահատ կը լինեն, տեսնելով որ ջուրերը կատաղաբար այնտեղ կ՚հասան և թէ յոյս չկայ: Արդարև արգահատելի վիճակ:

Որովհետև անձրևի ընթացքին նայելով խեղդամահ լինելնին սաստկապէս դիտեն, և թէպետ հեղեղանման արտասուք թափելով կակծալին հառաչանօք օդրացին ու կծնեցին, բայց անօգուտ. զի Թոպութեան և նեման ժամանակին անցած էր: Ցերեկ, պաժոյ երեսէն օր յառաջ, եթէ մեղայ ասելով կաթիլ մը արցունք թափէին, իրենց մեղայ նեռութեան սահանալով սոսկալի պատուհասէն կազատէին: Վասնզոյ ոմանք կը յուսան որ բարձր լեռներու վրայ կարելի է փրկութիւն ձեռք բերել, բայց քաշութիւնն այն լեռները հասնելի է. որովհետև սար ու ձոր ջրին նեղլեն ծնային. պաշտին մէջ գտնուողները թէև երան բարձրացան լեռներու վրայ, բայց չը փրկուեցան, քանի որ ջուրը սատն ու հինգ կանգուն անոնցմէ էլ վեր բարձրացաւ[1]. այլք՝ կը ջանան լողալ, բայց ի՞նչ օգուտ. զի անձրևը քառասուն օր և քառասուն գիշեր անդադար հոսելով ցամաքը բոլորովին անհետացաւ. և տապանէն դուրս գտնուած բոլոր

1. Հնդեստանի կանգուն բարձրացաւ ջուրն ի վեր, և ծածկեաց զամենայն լերինս. Ծննդ. Է. 20:

մարդիկ և անասունք չրասոյզ կորան[1], ինչպէս որ վճռուած էր Ամենակալէն:

Ո՛րատ ան, ով մահկանացու, սոյն ահեղ անցքէն. նկատէ՛ որ Նոյ չրին վրայ անվեհաս ծնաց տապանին մէջ, մինչդեռ մեղաւորք ցամաքին վրայ խեղդուեցան: Աստուծոյ զօրութիւնն այսպէս անդիմադրելի և նորա իմաստութիւնն ու խորհուրդն անքննելի են. նա՝ իւր հաւատարիմ ծառայն կը պահպանէ ուր որ էլ լինի, իսկ նենգաւորը կը պատժէ չարաչար: Ջուրը հարիւր յիսուն օր[2] բարձրանալէ յետոյ տապանը Հայաստանի Արարատեան գաւառին Մասիս լերանը վրայ նստաւ[3]: Մի՛ ասեր թէ անկէ բարձր լեռ չ՚կայ միթէ, որ տապանը անոր վրայ նստէր, կարելի է որ լինի. բայց այդ նաւուն նաւապետն Աստուած լինելով Մասիս լերան վրայ կենալը կամեցաւ[4]:

---

1. Եւ եղև անձրև ի վերայ երկրի քառասուն աւր և քառասուն գիշեր... և մեռաւ ամենայն մարմին շարժուն ի վերայ երկրի... և ամենայն մարդ. Ծննդ. Է. 12:

2. Եւ բարձրացաւ ջուրն ի վերայ երկրի աւուրս հարիւր յիսուն. Ծննդ. Է. 24:

3. Եւ նստաւ տապանն... ի լերինս Արարատայ. Ծննդ. Ը. 4:

4. Քանզի և ի սկզբանէ ի կորնչել սկայիցն ամբարտաւանից, յոյս աշխարհն ի լաստատիացան ապաւէնեալ, եթող աշխարհն զատակ լինելոյ քո ձեռամբդ նաւապետեալ. Իմաստ. ԺԴ. 6:

Հիմայ ուրեմն, ով մեզաւոր մարդ, միշտ խորհէ այս բանիս վրայ, ինչու որ այդ մարդոց պատահածը քեզ էլ օր մը պէտք է պատահի. մանաւանդ դուն աւելի արժանի ես պատժոյ որովհետև նոքա՝ Նոյ նահապետի քարոզութիւնը չէ լսեցին, իսկ դուն Քրիստոսի Աւետարանին չես լսեր. Նոցա՝ նախորդ օրինակ չ'կար, իսկ քեզ անհամար օրինակներ լինելով հանդերձ անուղղայ կը մնաս և հաճոյիդ միայն կը հետևիս:

Մարդ ինքզինքդ լեռան մը վրայ ննջած կը տես, հոն այն ատեն ահա դորճածդ մեղքերը, զորս խոստովանիլ չ'ուզեցիր, Ջրհեղեղի նման զքեզ պիտի շրջապատեն, որ ընկղմեն[1]. վասն զի Քրիստոս դատաստանի օրը Ջրհեղեղին կը նմանցուն[2]: Մարմնոյ թշնամին՝ օրշափ էլ անգութ լինի, անոր իշխանութիւնը մինչև մահը կը հասնի. իսկ մահու մեղքը այս աշխարհի վրայ մարդուս կորսուտեան պատճառ լինելէն զատ հանդերձեալ կեանքին մէջ ևս յաւիտենական դատապարտութեան կ'առաջնորդէ: Մահացու և մեծ մեղաց մէջ ընկղմող մարդը Աստուծոյ սիրոյն կապը խզած՝ իրեն թէ Աստուածմէ փախչել ուզող մէկուն կը նմանի.

1. Ընդէ՞ր բնաւ երևնիմ ես յաւուրս չարիս, զի անօրէնութիւնք գնացից եմոց շուրջ եղեն զինեւ. Սաղմ. ԽԷ. 5:

2. Որպէս աւուրքն Նոյեայ, նոյնպէս եղիցի գալուստն Որդւոյ մարդոյ. Մատթ. ԻԴ. 37:

միայն թէ Աստուած ողորմած լինելուն՝ հովուին մոլորեալ ոչխարը փնտռելուն նման, մեզաւորը շատ անգամ ի դարձ կը հրաւիրէ[1]: Սակայն նա՝ որ չը պառնար և օր ըստ օրէ չարութեան ու մոլութեան կը յառաջադիմէ, ահա այն ատեն Աստուած անոր վրայէն իւր ընորհքը կը վերցունէ: Մարդուն համար ասկէ աւելի մեծ պատիժ չը լինիր, քան զրկուիլ Աստուծոյ ընորհքէն: Որովհետև չափը լեցուած՝ պատժոյ վճիռը գրուելուն պէս ևս գառնալը անհնար է, ինչպէս պատահեցաւ վերոյիշեալ ապստամբաց, Սոդոմ Գոմորի բնակչաց, Փարաւոնի և այլ շատերուն. արդ՝ եթէ պատիժէն ազատել կուզես, մեղք մի՛ գործեր. և եթէ սխալելով մեղաց մէջ ընկար, ուղիղ օրտով զղջա՝ այս է և այս պէտք է լինի ողջամիտ մարդուն ընթացքը:

Հպյտ–ՀՀ Լ.Ի.

Նոյ կատարելոց կարեկցելով չը տրտմեցաւ:

Պաւլ. Ցրտմեցաւ. որովհետև մարդ պարտական է վշտացելոց կարեկցիլ. բայց նա՝ որ Աստուծոյ հրամանին հակառակ կը կենայ, իրաւամբ կը պատժուի: Արդ՝ Աստուծոյ արդարութեան օրինաց համաձայն անպիտէ մեզաւորին պատիժը տես-

3. Դարձարուք առ իս՝ և ես գառնամ առ ձեզ. Մաղաք. Գ. 7:

նելով, ամէն մարդ պէտք է Աստուծոյ պատասանը գովելով, իրեն համար խրատ առնէ անպատճառ: Այո՛, Նոյ կը սրտմէր, բայց ան թէ Աստուծոյ տուած պատժոյն՝ այլ մարդոց անօրէն ընթացքին վրայ, որով իրենց պատասխատուԹեան պատճառ՝ իրենք կը լինին:

Հարցում Խ.

Քրնեղէն ո՞ր ամսուն մէջ պատահեցաւ:

Պաս. Մայիս ամսուն պատահեցաւ, կը կարծուի: Որովհետև ԹԹէ ձմերային եղանակի մէջ պատհէր, պիտի ասուէր ԹԹէ բնական օրինաց համաձայն կատարուած մի անցք է. և դարձեալ գարնանային եղանակը զուարճուԹեան ժամանակ լինելով, այնպիսի մի պօսանաց առն պատժոյն հանդիպումը առաջել սրամտուԹիւն պէտք էր լինել այդ հեշտասէր և պօսասէր անխիղճ և անպիղծ մարդկան:

Հարցում ԽԱ.

Նոյ որչափ տարին տապանին մէջ մնալեն գետ ելաւ սրտնօք:

Պաս. Չէ պիտի. ինչու որ Աստուած այս մասին ժամանակ չէր յատկացուց. և նա էլ չի հարցներ, քանի որ կատարեալ հնազանդուԹեան մէկ պայմանն է, որ առանց պատճառ հարցնելու,

միայն հրամանին գործադրուԹեան ուշադրուԹիւն անել:

Ծիրան է, Նոյ հաւատարիմ լինելով, առանց իր հնազանդուԹեան պարտուց մէջ Թերանալուն, իր որդիքն էլ կը մխիԹարէր, որ Աստուծոյ ողորմուԹիւնէն իրենց յոյսը չը կտրեն: Արդարև, այս գործը շատ մեծ նեղուԹեան և նախընԹաց օրինակը չէր տեսնուած չարչարանք էր, որովհետև իր տունն ու հանգիստը ԹողլովՀ տապանը մտնել սոխպուեցաւ, մանաւանդ անկէ դուրս ելնելն էլ իր ձեռքը չէր. բայց ապատամբայ գլխուն գալիք չարիքն և իր տան հրաշալի կերպով ազատուԹիւնը մտաբերելով Աստուծմէ կը գոհանար, ինչպէս որ կատարեալ հաւատքը Ս. Գրոց մէջ յիշուած է գովուԹեամբ[1]:

Հարցում ԽԲ.

Նոյ որչա՞փ տարին մնաց տապանին մէջ:

Պաս. Մէկ տարի. վասն զի հարիւր յիսուն օր ջուրերը միօրինակ շարունակէլէ զինի, փառք Աստուծոյ, սկսան նուազիլ և լերանց գագաԹները

1. Հաւատովք առեալ հրաման Նոյէ՝ վասն չէ ևս երևելեացն՝ զահն հարեալ կազմէը զտապանն և վերուԹիւն տան լուծոյ, որով գտեցաւ զաշխարհ, և հաւատոցն արդարուԹեան եղև ժառանգաւոր. Եբրայ. ԺԱ. 7:—Նոյ գտաւ կատարեալ արդար, և ի ժամանակի քարկուԹեան եղև վերահաշուԹիւն. Սերաք. ԽԳ. 17.

երեւցան[1]: Բայց եթէ Ջուրն արագ արագ քաշուելը դիտանց Հոան՝ օդը ապականելով կարող էր նաւէն ելնողներուն վնասել, ուստի Ջրերուն զդչալ ժամանակ ծնողովը՝ դիերուն մի մասը ձկներէն կերան եւ ծացեալք փսեցան:

Ապա քառասուն օր եւս անցնելուն՝ Նոյ առաքանին պատուհանը բանալով արձակեց, որպէս զի երկրի վիճակին վրայ տեղեկութիւն առնէ՝ բայց այն՝ իբր որկորի հոգերոմն գրաւած՝ եւս չը դարձաւ: Ապա հեզաբարոյ ագաւնին արձակեց, որ թառելու տեղ չը գտնելուն եւս դարձաւ: Եօթն օր յետոյ նորէն ագաւնին արձակեց, որ իբրեւ աւետաբեր բերանը ձիթենիի ճիւղիկ մի առած՝ առաքանը վերադարձաւ[2]: Նոյ զայն տեսնելով հասկացաւ որ Ջուրերը քաշուած ցամքած են, եւ եօթն օր էլ սպասելէ յետոյ վերստին արձակեց զայն, որ այլ եւս եւս չը դարձաւ: Ուստի Նոյ առաքանին վրայի մասը բանալով, ցամքած տեսնելու սկսաւ իբր նոր աշխարհ եկած շատ ուրախացաւ. եւ Աստուած հրամայեց որ առաքանէն դուրս գան, ինքն եւ իր կինը, որդիքն եւ անոնց կիները եւ բոլոր կենդանիքը:

1. Եւ նուազէր Ջուրն յետ հարիւր եւ յիսուն աւուրց... երեւեցան գլուխք լերանց. Ծննդ. Ը. 3:

2. Եւ դարձաւ առ նա ագաւնին ընդ երեկոյ, եւ ունէր տերեւ ձիթենւոյ չիւղ ի բերանի իւրում. Ծննդ. Ը. 11:

Հարց. ԽԹ.

Ինչո՞ւ հաւատը տապանը ստնելու ատեն առաջ Նոյ եւ որդիքը, յետոյ կինն եւ որդւոց կիները կը մտնեն, մինչդեռ դուրս ելնելու ատեն առաջ Նոյ եւ կինը, յետոյ որդիքն եւ իրենց կիները միմեանց ետեւէ տեղազետէ կարգաւ դուրս կելլեն:

Պաս. Տապանը մտնելու ատեն, այլ մարդուն իւր կնոջմէ բաժանուած մուտքը տապանին մէջ անոնց զատակ տառնալու բաղձանք չ'ունենալնին կը ցուցնէ: Որովհետեւ տապանը անոնց փրկութեան համար կազմուած եւ կարգադրուած լինելով, իբրեւ տեղի ապաշխարանաց, վայելուչ էր որ անոր մէջ մարմնոյ հաճոյքներէն եւս կենային, ինչպէս որ Սուրբ Եկեղեցին ապաշխարանաց օրերուն մարմնոյ հաճոյքները կ'արգիլէ:

Իսկ ելնելու ատեն, իւրաքանչիւրին կինն իւր եւսէն ելնելը տապանէն դուրս գալէն յետոյ զատակ ունենալու թոյլատուութեան նշան է:

ԵՐԿՐՈՐԴ ԴԱՐ

Հարցո–ՏՐ Ա.

Երկրորդ դարն ինչով կը տարբերի առաջինէն։

Պատասխան

Առ ինքեան վերջին Ոգին Աստուած արաւ Նոյի հետ, օրհնելով զանի, երբ տապանէն նա դուրս ելնելով գոհ մատուց Աստուծոյ։ Այո՛, առաջին դարուն մարդոց անարդար վարք ու բարքի պատճառաւ Աստուած զանոնք պատժեց, բայց երկրորդ դարուն մէջ մարդասիրութեամբ կը մխիթարէ, որ չը յուսահատին։ Որովհետև Նոյ տապանէն ելնելէ յետոյ երկնից երեսը փրկութեան նշանը սկսաւ երեվիլ, այս առթիւ ծիածանը հաշտութեան նշան կոչուեցաւ։

Հարցո–ՏՐ Բ.

Նոյ տապանէն ելնելէ յետոյ ինչ ընակեցաւ։

Պապ. Հայաստանի Արարատեան գաւառի՝ Մասիս լերան մօտ Նախիջևան կոչուած տեղում, որ

առաջին իջևան կը նշանակէ։ Այստեղ լաւ ուշադրութիւն ս րա՛ Նոյի առաքինութեան, նա՝ որ տարի մը տապանին մէջ փակուած էր, դուրս ելնելուն պես ուրիշ ո և է բանով չզբաղած՝ անմիջապէս սեղան շինելով Աստուծոյ գոհ կը մատուցանէ[1] գոհութեամբ և շնորհակալութեամբ՝ Նորա բարութեան համար։

Կը կարծուի թէ Նոյ նահապետէն առաջ սեղան կանգնող չեղաւ, թէպէտ Աբել գոհից բայց սեղան շինելը գրուած չէ։ Մանաւանդ Նոյի մատուցած գոհը կամ պատարագը այնպէս հաճելի եղաւ Աստուծոյ, որ «հոտառեց զայն անուշ հոտով»[2] գեղեցիկ բացատրութեամբ կը յիշատակուի։ Աստուած Նոյի պատարագն ընդունելով կօրհնէ զայն և անոր որդիքը, միանգամայն ուխտ հաստատելով կը խոստանայ որ այլ ևս ջրհեղեղ չը լինի։ Ցիրաւի, յառաջագոյն Աստուծոյ օրհնութիւնը առաջաւ, բայց այս անգամ նորէն օրհնութիւն շնորհելով Աստուծոյ ողորմութեան դուռը վերստին բացուեցաւ։ Որովհետև կը հրամայէ որ ամէն ու

1. Շինեաց Նոյ սեղան Աստուծոյ և առ յամենայն անասունոց սրբոց, կամ յամենայն թռչնոց սրբոց և եհան ողջակէզ ի վերայ սեղանոյն։ Ծննդ. Ը. 20։

2. Հոտոտեցաւ Տէրը Աստուած և հոտ անուշից։ Ծննդ. Ը. 21։

3. Եւ հաստատեցից զուխտ իմ ընդ Ձեզ, և ո՛չ ևս մեռցի ամենայն մարմին ի ջրհեղեղէ. Ծննդ. Թ. 11։

բազմանան, և ըստ առաջնոյն երկրին տիրեն, ու միս ուտելու արտօնութիւն ևս առացան, որ առաջ թոյլատրուած չէր:

Հարցո՜ւմ Գ.

Մինչէ ծիածանն արդէն չէր երևեր, զոր Աստուած հաշտութեան նշան կը յայտարարէ:

Պաս. Այո՛ կերևէր, բայց ջրհեղեղ չէր լինելու պայմանաւ՝ Աստուած յատկապէս իւր ուխտին ու հաշտութեան նշան դրաւ զայն, զոր մարդիկ տեսնելով գիտանան թէ նա իրենց հետ հաշտուած է և ուրախ լինին: Զորօրինակ մի մարդ ձեռքը գաւազան կամ մատը մատանի կրելու սկիզբէն սովորութիւն ունեցած ևս լինի, երբ թագաւորը այդ մարդուն նկատմամբ յայտարարէ թէ «սոյն գաւազանը կամ մատանին որչափ ատեն այս մարդուն ձեռքը տեսնէք, գիտնալու էք, որ նա իմ բարեկամն է, նմանապէս ծիածանը թէպէտ արդէն ամպերուն մէջ կերևէր, բայց եռքը հաշտութեան նշան համարուեցաւ, որպէս զի մարդիկ երկիւղածութեան զգացմամբ մեղքէ հեռու կենան:

ԵՒսան զի հաշտութիւնը՝ թշնամութիւն կամ բարկութիւն կենթադրէ. երբ որ Աստուած մարդուն հետ հաշտուեցաւ կասենք, կը նշանակէ թէ առաջ բարկացած էր. և բարկութիւնը յանցանքի համար է: Ահա, այս տեսութեամբ, երբ ծիածանը տեսնենք, արժան է խորհիլ թէ պարտական ենք

Աստուծոյ պատուիրանաց հակառակ չը գործել, որպէս զի նորէն մեր վրայ բարկանալով չը պատժէ զմեզ: Թէպէտ Աստուած խոստացաւ վերստին ջրհեղեղով չը պատժել, բայց այս խոստմամբ մեզաւորին թոյլ չը տուաւ, որ ամէն ուզածն անէ և պատժէ վերջ ու ազատ մնայ, այլ ուրիշ կերպ պատիժ կը տայ:

Արդարև ծիածանը՝ ազեղի ձևն ունի [1], և ազեղը պատերազմի գործիք է. և այս երկրին վրայ առանց նեափ անոր երևումը Աստուծոյ զթութիւնը կը յայտնէ: Ինչու որ մահացու մեղայ մարդիկ իրրև թէ պատերազմի ելած են Աստուծոյ դէմ, և նա ողորմած լինելով շատ անգամ առանց պատժելու համբերութեամբ կսպասէ, որ մեղաւորը դառնայ և ղղջայ. բայց մի՛ կարծեր թէ միշտ կը համբերէ. զի ազեղը լարուած է, հարկաւ մի օր բարկութեան նետը պիտի ձակուի [2]:

Մանաւանդ նկատել հարկ է, որ ազեղն որչափ պրկուած լինի, նետն այնչափ ուժգնութեամբ կը դարնէ. նոյնպէս Աստուած որչափ աւելի համբերէ, պատիժն էլ նոյնչափ սաստիկ և խիստ կը լինի [3]:

---

1. Զազեղն իմ եդից յամպս. Ծննդ. Թ. 13:

2. Ապա թէ ոչ դառնայք առ նա, զսուր նորա պրեալ է, և զազեղն նորա լարեալ, Սաղմ. Է. 13:

3. Ցորժամ ժամ առից, ես ուղիղ դատեցայց. Սաղմ. ՀԴ. 2:

Արդ՝ ծիածանը խրատ է աշխարհին, որ Աստուծմէ վախնալով զգաստութեամբ ապրինք, պատժոյ նեռաէն զգուշ և ազատ մնալու համար[1]։

Հաւքսո՜ն Գ.

Մարդուն հետ Աստուծոյ հաշտուիլն ու ուխտ անելը ինչպէս հասկնանալու է։

Պաւ. Մէկ մարդու խօսք հասկացնելու համար անոր լեզուովը խօսիլ պէտք է. այլ պատճառաւ Աստուած՝ մարդուն հասկացած եղանակաւ Ս. Գրոց մէջ իւր կամքը կը յայտնէ, համրին նշանացի խօսք հասկացնելու պէս։ Որովհետև մարդիկօրէն հաշտուիլ կամ ուխտել կամ գաշն դնել՝ հաւասարաց միջև կրնէ մը յետոյ երկու կողմերու կամաց միութիւնը կը յայտնէ, բայց Աստուծոյ հաշտութիւնն ու ուխտադրութիւնը միայն իւր կամքով և իւր կողմէն լինելով[2], նորա ողորմութիւնը կիմացնէ։ Վասն զի Աստուած ոչ թէ ի հարկէ սոսկալ ուխտ կը հաստատէ, որով որպէս թէ պարտական կը մնայ մարդուն, այլ մանաւանդ Նոյ նահապետն ու բոլոր մարդիկը մեխթարելով իւր ողորմութեան կարժանացնէ, որ-

1. Եռուր երկիւղածաց քոց նշան, զի ապրեսցին յերեսաց աղեղան. Սադմ. ԾԹ. 4։

2. Եւ ասէ Աստուած ցնա, այս է նշան ուխտին՝ զոր ուխտեցի ես ընդ ես և ընդ ձեզ. Ծննդ. Թ. 17։

պէս զի Աստուծոյ բարեխառնութիւնը անմոռաց ի մտի ունենալով միշտ գոհութեամբ հնազանդին և յաւիտենական փառաց ևս հասնին։

Հաւքսո՜ն Ե.

Նոյ ևս իւր որդիքը յետոյ ինչ եղան։

Պաւ. Հոգագործութիւնն ամէն բանէ առաւել կարևոր լինելուն՝ Նոյ Մասիս լերան ստորոտն այգի անկեց (անգլոյն անունը ցարդ հայկէն Արկուսի կը կոչուի, որ կը նշանակէ օրթ անկուած վայր) և անոր գինիէն խմելով մերկ և բաց պառկեցաւ։ Նոյի երկրորդ որդին Քամ զայն տեսնելով փոխանակ անոր մերկութիւնը ծածկելու, ծաղրանօք իւր եղբարց ևս իմացուց։ Սակայն Սեմ և Յաբեթ՝ հայրական պատիւը պահպանելու նպատակաւ զգեստ առած՝ նո՛ւ նո՛ւ գնալով իրենց հօր մերկութիւնը ծածկեցին։

Նոյ զարթնելէ ետքը, երբ իրողութիւնն իմացաւ, Քամի որդին Քանանը անիծեց[1]. որովհետև կը կարծուի թէ Քանան առաջին անգամ իւր մեծ հայրն այդ վիճակին մէջ տեսած և իւր հօրը Քամին յայտնած էր, նա էլ իւր եղբարց։ Ինչպէս որ առաջին գարուն մէջ կայէն անէծք ընդունելով օր ըստ օրէ չարութեան մէջ յառաջ գնալուն պատճառաւ իւր հօրէն մերժուեցաւ, նմանապէս

1. Անիծեալ Քանան մանուկ. Ծննդ. Թ. 25։

երկրորդ դարուն մէջ Քանանին անէծք արուեցաւ. և Քամ եւս հայրական օրհնութեան արժանի չը լինելով հետզհետէ վատթարացաւ, այնպէս որ Նոյ պարտաւորեցաւ մերժել զայն։

Որովհետև կը կարծուի թէ Քամ՝ կախարդութեան և այլ անարժան ընթացքի կը հետևէր. բայց Սեմ ու Յաբեթ, որոնք իրենց հօր պատիւը յարգել գիտցան, օրհնութիւն ընդունեցին Նոյէն, որ՝ Քամը իւր եղբարց ծառայ կանուանէ։ Մանաւանդ որ Քրիստոս Սեմի ցեղէն պիտի ծնէր, և Յաբեթին ցեղն էլ Աստուածոյ ներշնչութեամբ Նոյ կը յայտնէ զայն մարգարէաբար[1]։ Արդարև, այս կէսը՝ բոլոր կռապաշտներուն մի օր Քրիստոսի հաւատալը կիմացնէ, ինչպէս որ Հայ ազգն էլ Յաբեթի սեռունդին լինելով Քրիստոսի հաւատաց։

Մանաւանդ որ Աբգար՝ Եդեսիոյ թագաւորն, ազգաւ Հայ, Քրիստոսի սուրբ Երուսաղէմի մէջ փորձած հրաշքները լսելով, յատուկ մարդ և թուղթ գրկեց Անոր, և բոլոր հեթանոս թագաւորներէն առաջ հաւատաց, և Քրիստոս մեր Փրկիչն էլ նորա թուղթին պատասխան գրել հաճեցաւ, ինչպէս որ Մովսէս Խորենացին իւր պատմութեան երկրորդ մասին 19-րդ գլխոյն մէջ կը գրէ։

1. Ընդարձակեցէք Աստուած Յաբեթին, և բնակեսցէ ի տան Սեմայ. Ծննդ. Թ. 27։

Դու նայէ Քամի չարութեան, որ մեզայ հօրը դեռ նոր ջրհեղեղով ջնջած լինելով, նորէն արձարձեց և իւր սերունդին չար օրինակ լինելով մեզայ սերմերը նորէն սկսան բողբոջիլ մարդոց սրտերուն մէջ։

Հատուած Զ.

Մարդիկ ինչպէս ցրուեցան աշխարհի չորս կողմերը։

Պապ. Սեմայ, Քամի և Յաբեթի սերունդք օր ըստ օրէ բազմանալով, իրենց գանուած տեղում ամենուն բնակիլ անկարելի եղաւ, ուստի ի հարկէ սահպեալ՝ իւրաքանչիւր ցեղի մարդիկը մի մի կողմ ցրուեցան գնացին բաւականութիւն գտնելու համար։ Որովհետև այն ժամանակի մարդոց վեճամաներութիւնը երկրագործ լինելով, ընդարձակ դաշտերու և լեռնահովիտներու կարօտ էին։ Ուստի յարմար տեղ որոնելու նպատակաւ մի բաւական մեծ ամբոխ՝ մանաւորապէս անիրաւ մարդկանց դասակարգէն, Պաղատասի դաշտը չուելով միաբանից հետ խորհրդակցեցան, որ իրարմէ չը բաժանուած՝ աշտարակամոյն մի քաղաք շինեն, որուն կատարը մինչև երկինք հասնի, և այն աշտարակը իբրև յիշատակ թողլով անուն և համբաւ ստանան. և իրենց սոյն ամբարտաւան խորհուրդը գործադրելու համար, իսկոյն եռանդով շինութեան ձեռնարկեցին։

Սակայն սոյն գործի սկսման պէտաւոր շարժառիթն՝ իրենց մի լեզուով խօսելու կարողութիւնը լինելով, Աստուած անոնց հակացած բարձրն իմասաք խառնակեց, որպէս զի իրարու լեզուն չիմանալով՝ սկսուած շինութիւնը թողուն: Վասն զի այդ մարդոց միշեալ ընթացքը՝ միայն իրենց հպարտութեան արդիւնքը լինելուն պատճառաւ, Աստուծոյ հրամանին և դիտաւորութեան հակառակ էր: Ու երբ իւրաքանչիւրն իրեն յատկացնալ գործին վրայ կաշխատէր, ահա սաստիկ փոթորիկ և հով մը փչելով, իսկոյն ամէն մէկը սարօրինակ վիճակի մը ենթարկուեցաւ. այնպէս որ էլ իրարու խօսք չը կարողանալով հասկնալ, իւրաքանչիւրը ցեղ առանձին լեզուով խօսիլ սկսան, և այսպէս իրենց միաբանութիւնը քակտելով շինութեան գործն էլ ետ մնաց: Ահա այն առեն, ամէն մի ցեղ՝ իւր մարդիներով ուզած կողմը գնալով զատ զատ ազգեր կազմեցին, որոնց լեզուները իրարմէ կը տարբերին, ինչպէս յայտնի է սրդէն:

Նկատէ, պէս ջրհեղեղը չը մոռացուած՝ մարդիկ նորէն Աստուած բարկացնելու հետամուտ են, բայց մի զարմանար, վասն զի աշտարակը շի-

1. Նկատք իջցուք և խառնակեցուք անդ պէսպէս նոցա. զի մի լսեցեն իւրաքանչիւրք բարբառոյ ընկերի իւրոյ. Ծննդ. ԺԱ. 7:

նողայ պարապուխը՝ Քամայ Թոռը Նեբրովթն էր: Ցիշեալը՝ սաստիկ հպարտ և իր զօրութեան վրայ վստահող պատերազմիկ մի անձ լինելով, շատերը բռնութեամբ իրեն հպատակեցուց, և Պաղտատի մէջ սկսաւ թագաւորել առաջին անգամ[1], զի մինչև այն առեն թագաւորութիւն չկար:

Բացի այդ՝ բանակ կազմելով զիրար կոտորելը Նեբրովթին սկսաւ, որ ինչպէս մարդոց հետ պատերազմի կը ձեռնարկէ, նոյնպէս Աստուծոյ դէմ կռապաշտութիւնը կը հնարէ. վասն զի կասուի թէ իւր պատկերը ամենուն պաշտել տալով կռապաշտութեան պատճառ և հիմնադիրն եղաւ: Ու անոր պատկերն եղող կուռքը որ Աստուածաշունչին մէջ Բահաղ անունով կը յիշուի, բոլոր Արաբիոյ մէջ և արևմտեան (կամ Հարաւի) կողմերը հռչակաւոր լինելով, Նիւխ մարգարէն նախանձաւորութեամբ անոր քուրմերը կոտորեց: Գ. Թագ. ԺԸ. 40:

Թող խրատուին հպարտ և Աստուծոյ հրամանին հակառակ գործող անզգամները: Արդարև կարողութեան առը մարդիկ պարտաւոր են երկրի վրայ յիշատակ թողուլ, բայց պայմանաւ որ անկէ ուրիշներուն օգուտ լինի, և ոչ թէ իրենց անուան փառաց համար հպարտութեամբ մեղանչեն, ինչ-

1. Եւ եղև սկիզբն թագաւորութեան նորա Բաբելոն. Ծննդ. Ժ. 10:

պէս որ յիշեալ աշտարակը չվնոզք արին։ Նաև կը կարծուի թէ անոր համար աշտարակ չվնել ուզեցին, որպէս զի եթէ մի անգամ ևս ջրհեղեղ լինի, անոր մէջ պատսպարուին, բայց այս միտքը շատ անպտղար և ապօրէն էր. որովհետև երբ Աստուած կը կամի պատժել, միթէ կարելի է որ մարդիկ անկէ ազատուին։ Թող մարդ Թռչունի նման երկինք թռչի, թող մրջնոյ նման երկրի ներքև մտնէ, թող ձկան պէս ծովուն յատակն իջնէ, դարձեալ Աբարչին ձեռքէն կարող չէ ազատուիլ. եթէ կամիս պատիժէ զերծ ու ազատ մնալ, հրամանի կամ օրէնքի հակառակ մի՛ գործեր։

Հարց. Ե.

Լեզուաց խառնուելէն առաջ մարդիկ ինչ լեզուով կը խօսէին։

Պաս. Կը կարծուի թէ հայերէն կը խօսէին. որովհետև յայտնի է որ մինչև աշտարակաշինութեան ժամանակը Ադամայ լեզուն կը խօսուէր, և միայն աշտարակը շինող այդ հպարտ և բռնաւոր մարդոց ի պատիժ՝ անոնց լեզուն Պատառաժ դաշտին մէջ խառնակուեցաւ[1]։ Արդ՝ Նոյ և իւր մերձաւորք Հայաստանի մէջ գտնուելուն՝ անոնց լեզուն անփոփոխ մնաց. ինչու որ մինչև այն առանն

1. Ընդ խառնակեաց Տէր Առաւաւոտ պղեղոյս առ մինոյն երկիր. Ծննդ. ԺԱ. 9։

Նոյ պէս ողջ էր, և աշտարակը չվնոզաց հետ չէր միանալէ պատ, եթէ ձեռնհաս լինէր անշուշտ անոնց ապօրէն գործը կը խափանէր։ Ուրեմն կը մնակարերուի թէ լեզուները խառնակուելէ յետոյ մեր Հայկ նահապետը Հայաստանի կողմը գալով, այնտեղ յառաջադոյն խօսուած լեզուն խօսել սկսաւ, քանի որ արդէն իւր լեզուն էլ այն էր։

Արդարև, ինչպէս որ մարդիկ մեզաց պատճառաւ աշխարհիս վրայ և նեղութեանց ենթակայ եղան, նմանապէս մեզաց պատճառաւ լեզուները շատացան, որպէս զի մարդիկ չարութեան մէջ չէր միաբանին։ Որովհետև մարդկային բնութիւնը զարմանալի է, լաւ բաներու հակամէտ չէ լինելով, ընդհակառակն յոռի և չար բաներու շատերը հեռեւիլ կը սիրեն, և այսպէս ի վերջոյ բոլորն էլ կը չարանան, ինչպէս Ջրհեղեղէն առաջ պատահեցաւ։ Ուրեմն այս նկատմամբ լեզուաց շատութիւնը մեծապէս օգտակար եղաւ մարդոց. և գարձեալ՝ լեզուաց խառնակութիւնը մեծ հնչակ առաւ աշխարհի. իբր թէ երկիրն մի օրինակ գաշտային եղած լինի, յանկարծ լեռներով, ձորերով և բլուրներով զարդարուեցաւ. կամ ինչպէս մի ծաղիկ միագոյն լինելէն առաւել հաճելի է՝ երբ զանազան գոյներ կունենայ։

Հարցում Ը.

Նոյ քանի տարեկան մեռաւ։

Պաս. Ինչը հարիւր յիսուն տարեկան. Ծննդ. Թ. 29։ Նկատ. դուն մարդոց Թշուառ վիճակը։ Որովհետև իւրաքանչիւր ժողովուրդ՝ իւր վիճակին համեմատ երկիր գրաւելու պայմանաւ, թէպէտ այլ և այլ ազգութիւններ կազմելով աշխարհային բաներու մէջ տեսակ տեսակ ճարտար գիւտերու շնորհիւ փառքի և պատուոյ հասան, բայց հոգևոր ճանապարհին մէջ յետին սահման խեղճ և ողորմելի մնացին։ Ասանկ զի երկինքն ու երկիրը ստեղծող Արարչին տեղ անհամար կուռքեր շինելով երբեք զԱստուած պաշտել սկսան։ Ցիրաւի, բոլոր արարածոց Արարիչ և աշխարհս կառավարող իմաստուն և գերագոյն էակի մը գոյութիւնը կը խոստովանին ի հարկէ, բայց թէ Նորա հրամանն ի՞նչ է, և ի՞նչ եղանակաւ Անոր ծառայել հարկ է, ահա այդ չը գիտեն[1]։

Հարցում Թ.

Ի՞նչ բանէ յառաջ եկաւ կռապաշտութիւնը։

Պաս. Առաջին հպարտութենէ. ասանկ զի ինչպէս որ վերոյիշեալ Նեբրովթ՝ իւր պատկերին երկրապագութիւն մատուցանելու կատիպէր հպատակները, նմանապէս իւր որդիքն և այլք նոյն ընթացքը բռնեցին, և անհնազանդ գտնուողները կը պատժէին։

Ինչպէս որ երեք մանկունք Բաբելոնի մէջ Նաբուգոդոնոսորի շինած պատկերին երկրպագութիւն չը մատուցանելու համար բորբոքեալ (կրակին) հնոցին մէջ ձգուեցան. Դանիէլ Գ. 21։ Սակայն դիւրին է գուշակել թէ ամանք առ երկիւղի, ամանք կեղծաւորութեամբ և այլք սոսկալով՝ կուռք պաշտել սկսան։

Երկրորդ՝ զաւակաց ցաւակրութենէ[1]. վասն զի երիտասարդութեան առեն ժառնող որդւոյն հայրը մխիթարուելու համար անոր պատկերը հիւսան շինել կուտայ փայտէ, և գտնազան թանկագին նիւթերով զարդարած պատիւ կընծայէ անշունչ պատկերին. նորա հպատակներն էլ առ ի պատիւ հօր կսկսին միևնոյն յարգը տալ, իսկ ամանք էլ յար և նմանը շինելով ուրիշ տեղ կը-տանին պատուով պահելու համար, և այլք նոյնպէս համոյանալու նպատակաւ տեսակ տեսակ ընծաներ կը բերեն անոր։

Երրորդ՝ ագահութենէ[2]. որովհետև ճարտա-

1. Զի տարտամ սգով թախծեալ հայր, վաղամեռիկ լինելոյ որդւոյ արար պատկեր. Իմաստ. ԺԴ. 15.

2. Ի յամախութիւն պաշտամանն զանգիտան յետ այնորիկ ճարտարին համարձակեաց առատութիւն արուեստագիտութեան. Իմաստ. ԺԴ. 18։

1. Ծանեան զԱստուած, և ո՛չ երբեք զԱստուած փառաւորեցին. Հռոմ. Ա. 21։

բագէտ մարդիկ հարստանալու մտքով սկսան ոսկին, արծաթէ, փայտէ և մինչև իսկ ցեխէ կուռքեր շինել ու ծախել։ Սոյն մոլեկիծն սովորութիւնն այնչափ յարդ գտաւ որ տիրապետեց և բռնաւորացնելով պաշտօնեաներ յատկացուցին, որոնք իրենց շահուն համար այլ և այլ պայմաններ հնարեցին։

Ջոլլոյդ՝ սատանայի գաւաճանութիւնէն. վասն զի փափաքը արարածոց վրայ կայացած չը լինելով, միշտ իւր փափաքը լրացնելու կարող անձ կը փնտռէ, և Աստուծմէ զատ անոր փափաքանաց յագուրդ տալու կարող մէկը չը գտնուելուն՝ ի հարկէ մարդ զԱստուած կը փնտռէ, և զայն չը գտած՝ հանգիստ չունի. ուստի սատանան պայծառ գիտնալով կռոց մէջ կը մտնէ, և մարդոց հրապուրիչ պատասխաններ կուտայ, որպէս զի զայնս իրը Աստուած ճանաչել տալով յուսադրէ զիրենք, որ իրենց փափաքանաց գոհացումը այդ կուռքերէն սպասեն երկրպագելով և պաշտելով։

Հիմայ տես դու սատանայի ճարպիկ, խորամանկ և չարագործ յաջողութիւնն ու մարդոց թշուառ և անմիտ վիճակը, ինչու որ նա այն տիճան կապեց կաշկանդեց գմարդիկ այդ անշունչ և անզգայ կռոց, որ իրենց պաւակներն անգամ այդ գարշելեաց սիրոյն զոհ տալով կրակի մէջ կայ-

լէին[1]։ Եւ երբ մի քանի խելացի մարդիկ՝ մարդուն շինածը կարող չէ Աստուած շինել ըսելով կը տարակուսէին, այն ատեն սատանան իւր նենգաւոր հնարագիտութեամբ կսկսի կենդանիները ցոյց տալ իրրև աստուած և զանոնք ևս պաշտել տալու կը յաջողի[2]։ Նմանապէս երբ կենդանեաց մասին էլ տարակոյս կը ծագի, նզովեալ չար ոգւոյն ձարը հատնելով, արևը, լուսինը, կրակն ու ջուրը կը ներկայացնէ իրրև Աստուած։ Որովհետև վերջիններս մարդոց օգտակար և հարկաւոր լինելուն՝ թերևս անոնց նկատմամբ ամէն տարակոյս և կասկած չունենալով միշտ կռապաշտութեան մէջ կը մնան, և մարդիկ՝ իրրև նման իրրև ապստամբները Աստուծոյ դէմ, դժոխք կերթան։

Այսպէս ահա, թէպէտ սատանան շատ աշխատեցաւ բոլոր մարդիկը կռապաշտութեան խաւարին մէջ բանտարկելու, այսու հանդերձ արարածոց վրայ նայելով միշտ գտնուեցան մարդիկ, որոնք արարածը չընդունեցին իրը Աստուած, այլ երկինքն ու երկիրը ստեղծող գերագոյն տէր մի ճանաչեցին ընդ ադօտ։ Վասն զի միայն բնական լուսով և առանց շնորհաց կարելի չէ այդ գերագոյն և սուրբ էակին վրայ բաւական գիտութիւն

---

1 Զոհեցին դուստերս և զդստերս իւրեանց դեւսաց, և հեղին զարիւն անբիծ. Սաղմ. ՃԵ. 33։

2 Եւ էր վիշապ մի մեծ՝ և պաշտէին զնա Բաբելացիքն. Դան. ԺԴ. 22։

ատանալ, ուսաի Ք՝ գիտունն ու ազէտ և թէ մեծն ու պզտիկը կառապաշտութեան խոր խաւարին մէջ ընկղմած Թշուառ ու գառապարտեալ վիճակի մը մատնուած էին, մինչև որ բարեգութեն Աստուած՝ մարդուն վրայ գթալով հայր Աբրահամը կոչեց։

Զգուշացիր, ով մարդ, կառապաշտութիւնը երկու տեսակ է, մին՝ յայտնի, իսկ միւսն՝ գաղտնի։ Յայտնի կառապաշտը նա է, որ Արարիչը չը ճանաչելով կուռց կերկրպագէ. իսկ ծածուկ կառապաշտը նա է, որ թէև Արարիչը կը ճանաչէ, բայց իւր սիրան արարածոց տալով, անոնց սիրոյն համար Աստուծոյ պատուիրանաց հակառակ կը գործէ։ Ուստի մարդն՝ Աստուծմէ աւելի ինչ որ սիրէ, զայն կառաուածացնէ։ Այսպիսի մարդիկ՝ եթէ իրենց արածին վրայ զղջալով մեզաց կուռքերը չը թողուն, յայտնի կառապաշտներէն աւելի մեծ պատժի պիտի ենթարկուին. ինչու որ նոքա անգիտութեամբ գործեցին, իսկ սոքա՝ գիտութեամբ՝ մին՝ կառապաշտ է կրօնիւ, միսը կառապաշտ է գործով։

Արդարև Աստուծոյ հրամանին ընդդէմ գործող մարդն, ով որ էլ լինի, և ինչ ժամանակ էլ լինի, արժանի է պատժոյ և պատասխանատուութեան։ Սակայն որովհետև մարդն երեք պատճառներով կը մեղանչէ — ագիտութեամբ, տկարութեամբ և չարութեամբ, ուսաի նա որուն խելքը չը հասնելով, կամ անճար միացած կը մեղանչէ, յայտնի է թէ անոր պատիժը թեթև կը լինի. իսկ նա՝ որ գիտութեամբ և չարութեամբ կը մեղանչէ, անոր պատիժը խիստ ծանր և սաստիկ լինելու է, ըստ Աւետարանի [1]։

1. Եւ ծառայ՝ որ գիտեցէ զկամս Տեառն իւրոյ, և ոչ պատրաստեսցէ ըստ կամաց նորա՝ արբցէ գան բազում. և որ ոչն գիտեցէ՝ և արժանի գանի ինչ գործեցէ, արբցէ գան սակաւ։ Ղուկ. ԺԲ. 47, 48։

ԵՐՐՈՐԴ ԴԱՐ

Հպցած Ա.

Երրորդ դարը ինչով կը զանազանուի երկրորդէն։

Պատասխան

Աստուծոյ՝ Աբրահամը կանչելովը։ Թէպէտ երկրորդ դարուն մէջ օրհնութիւնն շնորհուեցաւ մարդուն, և ծիածանը հաշտութեան նշան տրուեցաւ (ինչպէս որ Բ. դարու առաջին հարցման մէջ յայտնի է), բայց մարդն Երուսաղէմի երկիրը չը կանչուեցաւ, և Աստուած մարդուն չերևեցաւ։ Միայն երրորդ դարուն մէջ Աստուած յատկապէս Աբրահամը կոչելով[1] անոր երևցաւ, և Աբրահամու ևս հնազանդութեամբ մի կողմանէ Աստուծոյ սերն առ մարդ, իսկ միւս կողմանէ մարդուն հնազանդութիւնն առ Աստուած յայտնուեցաւ։

1. Եւ ասէ Աստուած ցԱբրահամ, ել դու յերկրէ քումմէ և յազգէ քումմէ, և ե՛ւ ի տանէ հօր քո, և ե՛կ յերկիրն՝ զոր ցուցից քեզ։ Ծննդ. ԺԲ. 1։

Որովհետև ո՛չափ որ Աստուած մեզմէ պատճառաւ մարդը պաժեց, արտու հանդերձ իւր շրջնորհքը չըզգացաւ անոր։ Նմանապէս մարդն էլ որչափ որ յանցանք գործեց, այնուամենայնիւ մարդոց մէջ Աստուծոյ հրամանին հնազանդող անձինք անպակաս եղան։ Զոր օրինակ.

Ադամ դրախտէն արտաքսուելէն յետոյ իւր կեանքը սգով և արտմութեամբ անցուց. Աբել, Սեթ և Նոյ՝ Աստուծոյ կատարեալ հնազանդութիւն ցոյց տուին։ Նմանապէս Աբրահամ Սեմի ցեղէն լինելով, ոչ միայն անարժան ընթացքի մէջ չը գտնուեցաւ ո՛չ մի կերպով, այլ և կատարեալ հնազանդութեան անմիտ և յիմար ըմբռնութեան ո՛չ կը հաւանի և ո՛չ երբէք կը հետևի, որ՝ իւր հօրը Թարայի հետ Բաբելոնի կողմերը կը բնակէր։ Սա Աստուծոյ ազդեցութեամբ իւր հօրը հետ Խառան կոչուած տեղը գնալով միջոց մի և առժամանակ անդ կը բնակի, ուրկէ եօթանասուն հինգ տարեկան հասակին մէջ Աստուած կը կանչէ զինքը, որ իւր ծնած տեղը, ազգը և հօրը տունը թողլով՝ իրեն ցուցնելիք տեղը երթայ։

Լաւ ի միտ առ, ինչպէս որ Ծովուն վրայ խաւար գիշերին մէջ իւր ճամբան կորուսած նաւաստին՝ փայլատականց լուսոյն եղելքը նշմարելով ճամբան կը գտնէ, այսպէս էլ Աստուծոյ՝ Աբրահամը կոչելն, մարդոց՝ հաւատոյ ճանապարհը յայտնել էր։

Որովհետև Աստուած Մեսիայի ձեռամբ մարդը պիտք է ազատէր սատանայի գերութենէն Աբրահամու սիրտը շնորհօք լեցնելով կը կոչէ զայն, որ բոլոր մարդոց կողմէն իրեւ փոխանորդ և ներկայացուցիչ՝ կատարեալ հաւատով և սիրով Աստուծոյ հնազանդելով, Մեսիան անոր ցեղէն ծնանի, և բոլոր Մեսիայի հաւատացողներուն Հայր կոչուի. որպէս զի ամէն մարդ անոր մէջ խրատ և օրինակ առնելով հնազանդի Աստուծոյ և Մեսիայի շնորհօքն ազատութեան արժանանայ։

Ցիրաւի, Աստուած Աբրահամու սիրան իւր շնորհոց բնակարան կազմելու արժանի տեսաւ, բայց Աբրահամ էլ իւր սիրտը կատարեալ հպատակութեամբ Աստուծոյ տալուն համար հայր հաւատոյ կոչուեցաւ. և նորա գոգը՝ արքայութեան օրինակ եղաւ. Ղուկ. ԺԶ. 22։ Աբրահամ առաջ հրամանին հաւնմամբ հայրենիք թողլով, իւր կնոջ Սառայի և եղբօր որդւոյն՝ Ղովտայ հետ և բոլոր իրեն պարագայիւք քանանու երկիրն եկաւ։ Սակայն չը կարծուի թէ նա՝ իւր պանդխտութեան մէջ խեղճ և թշուառ վիճակ ունեցաւ. ընդհակառակն, Աստուած զանի՝ մեծ ազգ արաւ և շատ մեծ հռչակաւ ու համբաւով փառաւորեց։ Վասն զի ամէն ձշմարտապէս առաքինի մարդ՝ ուր ուրեք էլ լինի, իւր անարատ և անպարտ կեանքով կը փառաւորուի։

Հարկ է ուրեմն, որ մենք ոչ միայն Աստուծոյ

բարութեան ու մարդասիրութեան վրայ խորհելով գոհ և շնորհակալ լինինք, որ մարդը կատարելութեան խաւարէն հանեց, այլ նաև Աբրահամու նժդեհութենէն խրատուինք. վասն զի յիշեալը թէև իւր բնիկ երկրին մէջ Աստուծոյ հաւատաց, բայց գործնականապէս էլ մինչև որ Բաբելոնի երկրէն դուրս չելաւ, սուրբ Երուսաղէմի հողը իրեն չը շնորհուեցաւ [1]։

Նոյնպէս Բաբելոն՝ խառնակութիւն, և Երուսաղէմ՝ խաղաղութիւն նշանակելով, կարող ենք դիւրաւ ըմբռնել թէ մինչև որ այս աշխարհի խառնակ վիճակէն ելոյս չի տանք, մեզ համար հոգևոր խաղաղութիւն չը կայ. Թող ուրեմն իւրաքանչիւր անձ կարի զգուշութեամբ ընթանայ այս պանդխտատեղւոյ անցաւոր և երկրաւոր կենցաղիս մէջ ի փրկութիւն հոգւոյն։

Հարցում Բ.

Աբրահամ արդէն կը ծանուչէր զԱստուած, որոյ հրամանին հնազանդեցաւ։

Պաս. կը կարծուի թէ այն ժամանակի դիտութեանց հմուտ լինելով՝ կուռքերուն Աստուած չը լինելը լաւ հասկացած և անոնց հակամիտած չէր երբէք, ուստի Աստուած անոր սրտին ազդելով

---

1. Հաւատաք առանց գործոց մեռեալ են. Կաթուղ. Ցակոբ. Բ. 26։

վինքն Աբրահամու ճանչցուց։ Եւ նա էլ առանց փշոց արտի մը նման հաւատոյ արգասիքը պտղաբերելով՝ այն աստիճան կատարեալ հնազանդութեան հասաւ, որ յաւիտենական Աստուծոյ գերագոյն հրամանին հակառակ չի գործեր։ Ինչու որ բնական լուսով միայն զԱստուած ճանաչել՝ մարդուն անկարելի լինելով անպատճառ գերբնական շնորհաց կը կարօտի, որ զայն ճանաչէ[1]։

Հարցո՜ւմ Գ.

Աստուած կը հրամայէ Աբրահամու, որ իւր լնիկ երկիրը թողու, բայց գնալու տեղին անունը ինչո՞ւ չը յայտներ։

Պաս. Կատարեալ թէ նոյ՝ Քանանու երկիրը իւր անգրանիկ որդւոյն՝ Սեմայ յատկացուցած լինելով, Աբրահամ ևս նորա սերունդին յաւաջ եկած և մանաւանդ Աստուծոյ կողմանէ նեղբնապէս ազգուած լինելուն պատճառաւ Քանանու երկիրը կուգայ։ Սակայն որչափ էլ Աստուածային ազգեցութեան նեղքոյ էր, գարձեալ ոչ մի տեղ բնակութիւն չը հաստատելով՝ վրանաբնակ կեանք կը վարէր, մինչև որ Աստուծոյ կամքն որոշ կերպով իրեն յայտնուի։ Արդ՝ Սամարիա կոչուած երկրում Սիւքեմ անուամբ տեղը կուգայ, որուն մօտ Քեռ-

1. Ոչ ոք կարէ գալ առ իս, եթէ ոչ Հայրն . . . ձգեսցէ զնա. Ցովհ. Զ. 44։

րոն քաղաքը և բարձր կաղնի մը կը գտնուէր, ահա այստեղ Աստուած անոր երևելով բոլոր այդ տիզերը կը խոստանայ տալ անոր որդւոյն[1]։ Աբրահամ այնտեղ սեղան կանգնելով շնորհակալութիւն կը յայտնէ Աստուծոյ։

Օրինակ առ, արդարև առաջ Աստուած իւր ողորմութեամբ Աբրահամը կոչեց, երբ նա դեռ իւր հայրենիքը կը գտնուէր, բայց Աբրահամն էլ հնազանդելով պանդխտութեան ելածին պէս Աստուծոյ սեղան կը շինէ։ Վասն զի ինչպէս որ Աստուած իւր շնորհն ոչ ոքի կը խնայէ, նոյնպէս մարդուս պարտքն է մտածելու որ ցանկութիւնները իւրացը մերժելով պարգևեալ շնորհաց դէմ չը կենայ, և իւր կողմէն ամէն ջանք ի գործ դնէ Աստուծոյ շնորհը չը կորսնցնելու համար։

Հարցո՜ւմ Դ.*.

Քանի որ տեղւոյ անուն չը տրուեցաւ Աբրահամու, ինչ զարմանք, որ փոխանակ ուրիշ կողմ երթալու, Քանանու երկիրը կը գնայ։

Պաս. Աբրահամու հաւատքը աշխարհին

1. Հաւատալ՝ ուր Աբրահամն կոչեցաւ՝ ունկնդիր եղև ելանել ի տեղին, զոր առնուլոց էր ի ժառանգութիւն. եւ գնաց՝ և ոչ գիտէր յո՞ երթիցէ. Եբրայ. ԺԱ. 8։

*. Սոյն չորրորդ հարցման պատասխանն է նաև հնգերորդ հարցման տրուած պատասխանը և փոխադարձաբար. նոյնպէս եմացիը երկնից վիճակութեանց մասին։

յայտնի լինելու համար: Որովհետև առանց ուր կոչուիլը գիտնալու, ճանապարհորդութեան ձեռնարկը՝ նորա կատարեալ հաւատքին ապացոյցն է[1]: Այո՛, Աստուած Աբրահամու սիրտը գիտէր, բայց մարդոց ևս յայտնելու համար տեղի անուն չը տուաւ: Եւ Աբրահամ էլ չի հարցներ, զի գիտէ թէ զինքը կոչողն Աստուած է, և մարդուն պարտքն է հնազանդիլ, քանի որ Աստուծոյ պատճառ հարցնել չի լինիր:

Լաւ նկատէ և խրատ առ, Աբրահամ Աստուծոյ ապաւինելով մեծամեծ բարեաց և շնորհաց արժանի եղաւ. որովհետև Աստուած կը խոստանայ օրհնել այն մարդիկը, որոնք Աբրահամու բարիք կը ցանկան, և անիծել զանոնք, որոնք որ չարիք կանեն, մանաւանդ թէ բոլոր մարդիկ իրմով պիտի օրհնուին[2]: Ուրեմն Չանա՛ որ Աստուծոյ հաճոյ մարդկան հետ բարեկամ լինելով անոնց համար աղօթք անես, վասն զի Աստուած իր ծառայից սիրոյն համար քեզ էլ կօրհնէ անպատճառ: Մարդս պարտական է ամեն մարդոց բարիք անել և անոնց մասին բարի խօսիլ, ինչու որ մարդուն սիրտը միայն Աստուած գիտէ. հարկ

1. Օրհնեցից զօրհնիչս քո, և զանիծիչս քո անիծից. և օրհնեսցին ի քեզ ամենայն ազգք երկրի. Ծննդ. ԺԲ. 3:

2. Դու ո՞վ ես, որ դատես զայլոյ ծառայ. Հռոմ. ԺԴ. 4:

չէ քեզ դատել ո՛չ զոք. կարող է պատահիլ, որ մեկը դատելով՝ դուն դատապարտուիս, զի Թերևս նա Աստուծոյ հաճոյ անձ մի է:

Վասն զի ինչպէս որ բոլորին ստեղծողն Աստուած է, նոյնպէս ամենուն գործերը քննողն Աստուած է, ուրեմն Աստուծոյ յատուկ գործոց դուն մի՛ խառնուիր, որպէս զի դատապարտութեան արժանի չը լինիս[1]:

Հարց՝ Ե.

Աստուծոյ՝ մարդուն երեւելն ու խօսիլը ինչպէս հասկանալու է:

Պաս. Երեք կերպով կիմացուի. կամ Աստուած տեսլեամբ կը յայտնէ մարդուն իւր հրամանը, կամ հրեշտակի միջոցաւ ձայնով, և կամ մարդին ու երևակայութեան մէջ խօսելով: Կը կարծուի թէ այս երրորդ եղանակաւ Աբրահամու կոչումը տեղի ունեցաւ, քանի որ զԱստուած մարմնաւոր աչօք տեսնել անկարելի է[2]: Թէպէտ Աստուած ամենուրիք է, բայց ուր որ Աստուծոյ կարողութիւնը յայտնի նշանով երևի, Աստուած այնտեղ

1. Ելջեցաւ Աբրահամ յերկրէն ընդ երկայնութիւն նորա մինչև ի տեղին ի Սիւքէմ, ի կաղնին բարձր... և երևեցաւ Տէր Աբրահամու, և ասէ ցնա, զաւակի քում տաց զերկիրս զայս. Ծննդ. ԺԲ. 6:

2. Ո՛չ կարես տեսանել զերեսս իմ. զի ո՛չ տեսանէ մարդ զերեսս իմ, և ապրի. Ելից. ԼԳ. 20:

է, կասուբի։ Նմանապէս երբ որ Աստուած իւր հրամանը մէկուն հաղորդէ ձայնով, կամ մարքին ազդելով և կամ հրեշտակաց միջոցաւ, Աստուած խօսեցաւ կասենք։ Վասն զի այն զօրութիւնը յայտնող, կամ մարգոն մարքին ազդող և կամ հրեշտակը առաքողն՝ ինքն Աստուած է։

Սակայն ո՛չ թէ հրեշտակաց գոյութիւնը մարմնաւոր է և մարմնաւոր զգայութեանց կարօտ, այլ մարդը մարմնաւոր լինելով և անկարող հոգևոր գոյացութիւնքը տեսնելու, Աստուծոյ հրամանաւ հրեշտակներն ըստ հարկաւորութեան մարմնաւոր կերպարանաւ կը տեսնուին և մարդոց նման շարժուած կը ցուցնեն։ Արդ՝ եթէ հրեշտակն ինքզինքը Աստուծմէ ղրկուած կը յայտնէ, հրեշտակ երեւցաւ կասուի. Դան. Ժ. 11։ Եւ եթէ Աստուծոյ ղրկուած լինելը չէ յայտնելով՝ ինքն իւր կողմէ հրամայելու կերպ ցուցնէ, Աստուած երեւցաւ կասուի, ինչպէս որ Սամփսոնի հօրը Մանովէին տեսնուողը հրեշտակ էր, բայց Մանովէն՝ զԱստուած տեսանք կասէ[1]։ Վասն զի իմաստունք և գիտնականք կը կարծեն, թէ հին օրինաց մէջ ուր որ Աստուած երեւցաւ աստուած է, հրեշտակաց միջոցաւ պէտք է հասկանալ զայնս[2]։

1. Եւ ասէ Մանովէ ցկինն իւր, մահու մեռանիմք՝ վասն զի Աստուած տեսաք։ Դատ. ԺԳ. 22։

2. Ինչ առիք գոչէնս ի հրամանս հրեշտակաց։ Գործ. է։ 53։

Հատուած Զ.

Ինչու համար Աստուած Քանանու երկիրը տուաւ Աբրահամու, մինչ է անկէ առաւել պտղաբեր եւ զուարճալի երկիր չկար։

Պատ. Անշուշտ կար. բայց որովհետև մարդն արքայութեան համար ստեղծուեցաւ, և մեզայ պատճառաւ այս աշխարհի թշուառութեան ենթակայ եղած է, ուստի բարերարն Աստուած զայն մեղքէն փրկելով արքայութեան արժանացնել կամեցաւ. և այս մեծ բարիքը Մեսիայի ձեռամբ Բուսատպէմի մէջ գործադրել սահմանելուն համար, այդ երկրին մէջ Աստուած երևեցաւ Աբրահամու։ Մի և նոյն աաեն կը խոստանայ այն երկիրը տալ անոր և իւր սերունդոց ի ժառանգութիւն, որպէս զի մարդկի իմանան թէ Մեսիան (Քրիստոս) Բուսատպէմի մէջ պէտք է ծնի Աբրահամու սերունդէն, և թէ մարդոց փրկութիւնը անդ պիտի կատարուի. հետևաբար պարտ էր նրենց օրտեն առնա ուղղել, և վճռած աաեն Անոր հաւատալով՝ հրամանին հնազանդիլ. այս պատճառաւ Բուսատպէմի հողն Աստուաց երկիր կը կոչուի։ Եբրայ. ԺԱ. 9։

Յիրաւի Քանանու երկիրն Աբրահամու աստղու խոստումն եղաւ, բայց նա գարձեալ պանդուխտի նման կը շրջէր. որովհետև աստուածատես մարդն արքայութեան արժանանալու անհ-

մամբ երկրիս վրայ իբր պանդուխտ կը բնակի, քանի որ աշխարհի մեծութիւնն ու զօրարձութիւնն անփոփոխ չը լինելով սառոյցի վրայ գիր գրելու կը նմանի, վասնորոյ աստուածասէրն Աբրահամ պէս նժդեհութեան մէջ շրջելով ալքատութեան անվախճան փառաց հասնել կը յուսայ միշտ և անսասան կերպով [1]։

Հպցո–ՀՀ։

Քանանու երկիրը Աբրահամու խոստացուած ատեն նա տակաւին որդի չունէր, ինչո՞ւ համար Աստուծմէ զաւակ չը խնդրեց։

Պաս. Որովհետև մարդս պարտի Աստուծոյ հնազանդիլ և նորա կամքը կատարել. այդ պատճառաւ Աբրահամ ուրիշ բան չը մտածելով, միայն Աստուծոյ կամքը կատարել կը փութայ ամենայն հնազանդութեամբ։ Վասն զի Աստուած որ կը խոստանայ տալ իրեն որդի, անշուշտ տալու ժամանակն էլ գիտէ։ Ծիրաւի, Աբրահամու զաւակ խոստացուելէն յետոյ շատ ժամանակ անցաւ առանց խոստման կատարումը տեսնելու, բայց Աբրահամ ուր որ գնար, մեծ պատիւ և փառք գտնելով՝ բոլոր մարդոցմէ կը յարգուէր, քանի որ

1. Քանզի ան ունէր հիմամբք հաստատեալ քաղաքին, որոյ ճարտարապետ և արարիչ Աստուած է. Եբրայ. ԺԱ. 10։

Աստուծոյ հաւատարմութեամբ ծառայողին հատոյն աշխարհ կը ծառայէ [1]։

Այն ժամանակ Քանանու երկրին մէջ սով պատահելով Աբրահամ Եգիպտոս գնաց. Եգիպտոսի Փարաւոն թագաւորը նորա ձեռքէն առաւ իր կինը՝ Սառան, կարծելով թէ նորա քոյրն է. վասն զի Սառան շատ գեղեցիկ լինելով, Աբրահամ օտար տեղերում քոյր կը կոչէր Սառան, որպէս զի անոր պատճառաւ զինքը չը մեռցունեն։ Թէպէտ մարդասպանութիւնն ու շնութիւնը հաւասարապէս մեծ մեղք են, բայց Եգիպտացիք շնութեան մեղքը մեծագոյն կը սեպէին քան մարդասպանութիւնը, այս պատճառաւ Աբրահամ իր անձը փրկելու համար քոյր կոչեց զՍառան։ Բայց և այնպէս Փարաւոն յանդիմանելով յԱստուծոյ, առանց Սառայի պատուոյն դիպչելու, իսկոյն Աբրահամու կը յանձնէ զայն անվնաս և իր մարդոց էլ կը պատուիրէ որ նոցա չը վնասեն։

Նկատէ Աստուծոյ զօրութիւնը. Աբրահամ մի պանդուխտ անձ էր, և սակայն թագաւորն անկէ կը վախնայ. և մի՛ կարծեր թէ նա Աբրահամէն վախցաւ, այլ մանաւանդ նորա Աստուծմէն, զի Աբրահամ զինքն Աստուծոյ պաշտպանութեան յանձնած էր [2]։

1. Քան զամենայն ինչ զօրաւոր է աստուածապաշտութիւն. Իմաստ. Ժ. 12։

2. Ո՛չ եթող մարդկան մեզանչել նոցա, և կշտամբեաց զթագաւորս վասն նոցա. Սաղմ. ՃԴ. 14։

ՀՈՒՅՆ Ը.

Աորահամ Եգիպտոսէն դառնալէ յետոյ ուր գնաց։

Պապ. Երկիրն կը վերադառնայ այնտեղ, ուր յառաջագոյն սեղան կանգնած էր Աստուծոյ (ինչպէս որ չորրորդ հարցման մէջ յիշուեցաւ) և իւր եղբօր որդին Ղովտն էլ միասին կար։ Եւ որովհետև Աբրահամ և Ղովտ բազմաթիւ ոչխար, կով և ուրիշ անասուններ ունէին, նոցա հովիւներուն միջև արածատեղւոյ համար վէճ ծագեցաւ։ Աբրահամ վէճերէ չսիրժելուն՝ Ղովտայ կառաջարկէր, որ ուզած կողմը գնայ, որպէս զի հանդիսա կառավարուին երկուքն էլ։ Յորդանանու կողմերը խիստ արգասաւոր և բերրի լինելուն համար, Ղովտ՝ Աբրահամէն բաժանուելով Սոդոմ քաղաքը գնաց և անդ բնակեցաւ։

Դու տես Աբրահամու առաքինութիւնը. Ղովտին սիրտը չը վշտացնելու և իրենց միջև կռուոյ առիթ չը թողնելու համար, նորա կամաց կը յանձնէ որ հաւանած կողմը երթայ, և ինքն անոր չը հաւնած տեղովը կը բաւականանայ։ Յետոյ Աստուած յառաջագոյն տուած խոստումը կրկնելով՝ երկրի աւազին չափ անհամար զաւակներ կը խոստանայ տալ Աբրահամու[1], հրամայելով որ իրեն

1. Զամենայն երկիրք՝ զոր տեսանես դու՝ քեզ տաց զդա . . . և արարից զզաւակ քո իբրև զաւազ երկրիդ. Ծննդ. ԺԳ. 15։

զաւակաց ժառանգելիք երկրին ամբողջ կողմերը շրջի, թէ երկայնութեամբ և թէ լայնութեամբ. որպէս զի Աստուծոյ բարերարութիւնը յայտնի լինի և Աբրահամ ճանաչէ իւր գրաւելու տեղերը։

Ըստ հրամանին, Աբրահամ շրջելով կուգայ Քեբրոն և այնտեղ կը բնակի, ուր սեղան կը շինէ Աստուծոյ։ Իսկ Ղովտ, որ արգասաւոր տեղ որոնելով, Սոդոմ քաղաքի մերձակայ մէջ սկսաւ ապրիլ, մեծ վտանգի հանդիպեցաւ. յիրաւի, Ղովտ առաքինի և Աստուծոյ հաճոյ մարդ էր, բայց չար մարդոց մէջ գտնուելով նոցա հետ գերութեան մատնուեցաւ։ Որովհետև Սոդոմ Գոմորի բնակչաց թշնամի չորս թագաւորներ միաբանելով՝ պատերազմի կելլեն Սոդոմ Գոմորի երկրին տէր եղող հինգ թագաւորաց դէմ, և այս վերջինք յաղթուելով, Ղոտան էլ թշնամեաց ձեռքը գերի ընկաւ։ Աբրահամ այս բանը լսելուն պէս, յոյսը Աստուծոյ վրայ դնելով, իւր 318 հպատակներով յանկարծ թշնամւոյն վրայ յարձակեցաւ, որով յաջողեցաւ իրեն՝ թէ Ղովտը և թէ անոր հետ գերի գնացողները՝ իրենց բոլոր գոյքերովը ազատել։

Ինչպէս տես, բարի մարդը չարերուն պատճառաւ վտանգի հանդիպեցաւ, և չար մարդիկը՝ մի բարի մարդու պատճառաւ գերութենէ ազատուեցան։

Աբրահամ թշնամւոյն վրայ տարած յաղթութենէ վերադարձին՝ Մելքիսեդեկ քահանայն

հայց և գինի մատուցանելով օրհնեց զայն. Աբրահամ ևս թշնամիէն առած կողոպուտէն տասանորդ տուաւ. Եբրայ. Ը. 9: Աբրահամու քահանային տասանորդ տալը՝ յաղթութիւնը յԱստուծոյ ձանաչելով շնորհակալ լինել էր: Աբրահամ Սոդոմացիներուն տացուածքը թշնամիներէն ազատելուն համար, իրաւամբ իրեն կը պատկաներ այն, և նոցա թագաւորն էլ յօժարակամ կատիպեր վինքը որ առնու, բայց ոչինչ կամեցաւ առնուլ, որպէս զի չասուի թէ Աբրահամ Սոդոմացւոց տացուածքովն հարստացաւ: Արդարև այս պարագային մէջ Աբրահամ մեծ փառք վաստակեցաւ, բայց մի և նոյն ժամանակ սրտին մէջ երկիւղ ընկնելուն՝ Աստուած կը քաջալերէ զայն, որ բնաւ չերկնչի:

Հարց. Թ.

Մելքիսեդեկ քահանայն ո՞վ էր:

Պաս. Թագաւորական ցեղէ և Սաղիմ կոչուած տեղւոյն թագաւորն էր, սա՝ աստուածապաշտ, առաքինի և սուրբ մարդ մի լինելով Մելքիսեդեկ կոչուեցաւ, որ հաւատարիմ թագաւոր կը նշանակէ, վասն զի Մելքը թագաւոր և Սեդեկ հաւատարիմ կը թարգմանուի. իւր բնակութեան տեղն Սաղիմ խաղաղութիւն նշանակելուն համար, խաղաղութեան թագաւոր ևս կոչուած է: Նա ինքն քահանայ լինելով Աբրահամու հայց և

գինի նուիրել՝ հոգևոր մաքով պատարագի խորհուրդ կամ օրինակը կը յայտնէ:

Մանաւանդ որ Ս. Գրոց մէջ նորա ցեղաբանութիւնը գրուած չը լինելուն՝ ինչպէս նաև նորա անուն ու քաղաքը, մատուցած նուէրն և Աբրահամը օրհնելով անորմէ տասանորդ առնելովը՝ Քրիստոսի օրինակ եղաւ: Որովհետև Քրիստոս՝ խաղաղութեան և արդարութեան թագաւոր լինելով՝ Երուսաղէմի մէջ մարդկութիւնը գերութենէ ազատից, և սուրբ պատարագը՝ յաւիտենական կենաց անուշիկ պարգևից. որոյ շնորհիւ մարդը վերանորոգուած՝ պարտական եղաւ հաւատալ նմա և հնազանդիլ, ինչպէս նաև իւր տացուածքէն տասանորդ տալ, որովհետև Քրիստոս ինքն է Ձշմարիտ քահանայ, ըստ կարգին Մելքիսեդեկի[1]:

Հարց. Ժ.

Աբրահամ ինչե՞ն կը վախնար, որ Աստուած կը քաջալերէ զայն:

Պաս. Ինչպէս որ բարձր տեղի մը վրայ կեցողը առաւել կը վախնայ որ չընկնի, նմանապէս Աբրահամու վարքը քանի կատարեալ, նոյնչափ խոր-

1. Մելքիսեդեկ թագաւոր էր Սաղեմայ, քահանայ Աստուծոյ բարձրելոյ. անհայր անմայր՝ չհամարեալ յազգս, որոյ ոչ սկիզբն աւուրց, և ոչ կատարած կենաց. նմանեալ Որդւոյ Աստուծոյ՝ հայ մնայ քահանայ մշտնջենաւոր. Եբրայ. Է. 1:

նարհ սրտով կ՚ակնկի որ զԱստուած չը բարկացնէ։ Աբրահամ որքան կը խոնարհի, նոյնքան Աստուծոյ գթութիւնը կը յայտնուի[1]։ Վասնորոյ Աստուած կը մխիթարէ և կը քաջալերէ զայն, որ չերկնչի[2]։ Մինչև այն ատեն Աբրահամ Աստուծմէ ոչինչ խնդրած չէր, և գեռ որդի չունենալուն համար այս անգամ կը խնդրէ, որ գոնէ իւր հաւատարիմ ծառայն՝ Եղիազարը իրեն ժառանգը լինի. (յիշեալը իւր տան վերակացուն էր, և ի մանկութենէ իւր մօտ մեծացած լինելով զաւկի մը պէս կը սիրէր)։

Սակայն Աստուած՝ փոխանակ Եղիազարը անոր ժառանգ կարգելու, կը յայտնէ թէ նորա զաւակունք՝ երկնքի աստղերուն չափ անթիւ պէտք է լինին[3]։ Իրրև թէ ասէր ՚ով Աբրահամ, դուն կը գոհանաս ծառայէդ քեզ ժառանգ լինելովը, բայց քու ժառանգդ պէտք է որ քու որդին լինի. և չէ թէ միայն աշխարհի հարստութեան և ստացուածոց, այլ մանաւանդ երկնից թագաւորութեան. որովհետև ՚ով որ քեզ նման կատարեալ

1. Որ խոնարհեցուցանէ զանձն, բարձրացուի. Ղուկ. ԺԴ. 11։

2. Մի՛ երկնչիր Աբրամ, ես վերակացու եղեց քեզ, և վարձք քո բազում եղիցին յոյժ. Ծննդ. ԺԵ. 1։

3. Հայեաց ընդ երկինս, և թուեա զաստեղս, եթէ կարասցես թուել զնոսա... այնպէս եղիցի զաւակ քո. Ծննդ. ԺԵ. 5։

հաւատով ու սիրով Աստուծոյ հնազանդելով Մեսիային կը հաւատայ՝ նա քեզ հոգևոր որդի համարուելուն՝ ատոր նման պէտք է փայլի երկընքումը։ Ինչպէս որ քրիստոնեայք՝ Աբրահամու հոգևոր զաւակ լինելով՝ երկնից աստղերուն նմանցուած են, իսկ Հրէայք՝ մարմնաւոր որդիքը լինելով՝ երկրի աւազին կը նմանին։

Ցիրաւի, Աբրահամ Աստուծոյ խոստման հաւատալով իւր արդարութիւնը յայտնի եղաւ[1], բայց իւր սրտի խնդութենէն կը փութայ միանգամայն հարցունել Աստուծոյ, թէ ի՞նչպէս պէտք է խոստացեալ երկիրը գրաւէ ու տիրապետէ[2]. մի՛ կարծեր թէ Աստուծոյ խոստման վրայ տարակուսելով այս հարցումը կուղղէ, այլ տեսակին և կերպի մասին տեղեկութիւն ստանալու համար կը խնդրէ, որ Աստուած նշանով մը յայտնէ թէ երբ և ի՞նչ եղանակաւ պիտի գործադրէ իւր խոստումը։

Արդ՝ թէ երբ և ի՞նչպէս Աբրահամու սերունդը պէտք էր խոստացեալ երկիրը ժառանգելը յայտնելու համար հրաման կը լինի իրեն, որ երեքական տարեկան մի երինջ, մի քօշ և մի խոյ

1. Հաւատաց Աբրամ Աստուծոյ, և համարեցաւ նմա յարդարութիւն. Ծննդ. ԺԵ. 6։

2. Տէ՛ր տէր, ի գիտացից եթէ ժառանգիցեմ զսա. Ծննդ. ԺԵ. 8։

առնու և զանոնք երկաթ մասերու բաժնելով իրա-
րու յանդիման կանգնեցնէ, նոյնպէս մի առարակ
և մի ազաւնի առնու, բայց զանոնք չը յօշոտէ:
Արրահամ ըստ հրամանին բոլորը կատարելով,
թռչուններըը այդ միսերուն վրայ կիջնեին, և արիւն
ի մուռս խառնարհելու ժամ յիշեալին վրայ (Աբ-
րահամու) մի թմրութիւն, երկիւղ և խաւար
սիրեց, ու կրակին բոցախառն ծուխը այդ միսե-
րու միջէն կանցնէին:

Երբ Արրահամ այս վիճակին մէջ էր, առուե-
ցաւ իրեն թէ «գիտնալով գիտնաս որ քու զա-
ւակներդ օտար երկրի և պանդխտութեան մէջ
400 տարի չարչարուին պիտի[1], և գիրենք չարչա-
րող ազգը պիտի պատժուի, յետոյ բազում
ստացուածքով Քանանու երկիրը պիտի գան: Ար-
գարև այս կերպով Աստուած Արրահամու հետ
ուխտ դրաւ[2], որով յայտնի եղաւ թէ նորա ա-
րունդն Եգիպտոսի մէջ չարչարուելու, և յետոյ
ազատուելով Քանանու երկրին տէր լինելու են:
Ինչպէս որ Մովսէսի ձեռամբ Իսրայէլի ժողովուրդ-
գնան Եգիպտոսէն ելնելն ու չորրորդ գարուն մէջ
Յեսուայ առաջնորդութեամբ Երուսաղէմի կող-

1. Պանդուխտ եղեցի զաւակ քո... և տառապե-
ցուսցեն զնոսա ամս չորեք հարիւր. Ծննդ. ԺԵ. 13:
2. Յեսուայ յայտնի եղ Տէր ուխտ ընդ Աբրա-
մու. Ծննդ. ԺԵ, 18:

մանց տիրապետելը Ս. Գրոց մէջ ընդարձակ կը
պատմուին:

Հարց. Ժ.

Ի՞նչ նշանակութիւն ունին վերոյիշեալ երինջն
ու քօշը, խոյն, տատրակը եւ աղաւնին:

Պաս. Երինջն, որ գիւր լուծի նեցուկ մտած
չէ, իսրայէլեան ազգին առաջին սերունդը կը
յայտնէ, որունք առաջ Եգիպտոս գնալով, Յովսէփի
շնորհիւ առանց հարկի և նեղութեան ենթար-
կուելու, հանգիստ և զուարճութեամբ իրենց
կեանքը անցուցին: Քօշն՝ երկրորդ սերունդը ցոյց
կուտայ, զորս Եգիպտացիք Յովսէփայ մեռնելէն
ձկնի սկսան հարստահարել, որպէս թէ նոցա կա-
թը կթելու պէս. վասն զի տարապարհակ (առանց
վարձքի) կաշխատցնէին զանոնք:

Խոյը երրորդ սերունդը կը յայտնէ, զոր Փա-
րաւոն որչափ կը չարչարէր, նոքա այնչափ կաճէին,
և խոյի նման նեղութեանց տակէն իրենց մար-
մինը անվնաս կը ճնար: Նմանապէս արևն իւր
մուտքը խոնարհած տանն բոցախառն ծուխին մի-
սերուն միջէն անցնիլն, ինչպէս նաև Թռչնոց
թառելը՝ Յովսէփէն ետքը կատարեալներէն յառաջ
գալիք թշնամութիւնը կը ցուցնէ, զոր տեսան և
կրեցին Իսրայէլացիք թէ Եգիպտոսի մէջ, և թէ
յետոյ անապատին մէջ Ամաղէկի ցեղէն և ուրիշ
հեթանոս թշնամիներէ:

Ինչ երկու թռչուք, տատրակն և աղաւնին, զորս առանց յօշոտելու թռցուց, չորրորդ սեռունդն օրինակ էին, որոնք թռչունի նման հրաշքով Եգիպտոսէն ելան, և քառասուն տարի անապատին մէջ ճանապարհորդաց յատուկ ամէն նեղութեանց ենթարկուած՝ տատրակի նման արտում ու ախոռ, յետոյ Աբեհաց երկիրը գրաւելու յուսավը միայն ոգեւորուած՝ և այնտեղ Աբեհաց երկրին մէջ՝ աղաւնիի նման պարզամիտ և ուրախ՝ իրենց ցեղերով բնակելու և բազմանալու նշան և ապացոյցներ էին:

Որովհետև Իսրայէլի ժողովրդեան չորս հարիւր տարի Եգիպտոս ծառայութեան մէջ մնալը՝ անոնց չորրորդ սերունդին՝ Եգիպտոսէն ելնելուն օրինակը եղաւ[1]: Ամենք այս չորս հարիւր տարին Իսահակի ծննդեան ժամանակէն կը հաշուեն: Գալով Աբրահամու վրայ Թմրութիւն, երկիւղ և մթութիւն սիրելուն՝ ասոնք նորա մահը կը գուշակէին. վասն զի վերոյիշեալ նշանաց կատարումը Աբրահամու մահէն յետոյ տեղի պիտի ունենային[2]:

1. Եւ ի չորրորդում ազգի դարձցին այսրէն. Ծննդ. ԺԵ. 16:

2. Եւ դու երթեցես առ հարս քո խաղաղութեամբ. Ծննդ. ԺԶ. 15:

Հարցում ԺԲ.

Աստուած ամենակարող է եւ լինելու բաները յառաջագոյն կը յայտնէ, ինչու համար իւր խոստման զորձադրութիւնը այնչափ ատեն յապաղեց:

Պատ. Ինչու համար Աստուած այսպէս կանէ ասիկն պարզապէս յանցանք է: Որովհետև Աստուած առանց պատճառի բան չանէր: Ս. Գիրքը՝ վերջէն կատարուելու բաները առաջուց իմացնելովը Աստուծոյ կարողութիւնը, իմաստութիւնը և խոստմանց մէջ հաւատարիմ լինելը կը յայտնէ, որպէս զի մարդիկ Աստուծոյ հաւատալով՝ նորա երախտիքը ճանչնան և հրաւանին հնազանդին: Վասն զի հզօր լինելով իւր բոլոր կամեցածը ի գործ կը դնէ. իմաստուն և նախատես լինելով՝ վերջէն պատահելիք բաները իրեն ներկայ գիտէ և կը տեսնէ. հաւատարիմ լինելով խոստումը կը կատարէ. բայց մարդուն միտքը Աստուծոյ խորհրդոց և գաղտնեաց հասու և գիտակ չը լինելով, երբ իւր խնդիրքն իսկոյն չը գործադրուիր, յուսահատութեամբ ինքզինքը կը տանջէ:

Արդ՝ դու ժամանակի երկարութեան մի՛ նայիր, այլ գործին ստուգութեան ու ստուգութեան յառաջ գնալուն ուշադրութիւն արա, որովհետև այս անգամ խոստացեալ վայրերն և անդ բնակող ազգերը

իրենց անուններովը կը յիշատակէ[1]։ Մանաւանդ այս միջոցին Սարա՝ (կը կարծուի թէ Աստուծոյ ներշնչմամբ) իւր Ագար աղախինը Աբրահամու կուտայ, որ անորմէ զաւակ ունենայ, բայց Ագար յղանալուն պէս հպարտանալով Սարային չուզեց հնազանդիլ այլ եւս. այս ըմբոստութիւնը Սարային խիստ դժուար և ծանր թուելով, գանգատանաց ձևի տակ՝ խնդիրը Աբրահամու կիմացնէ պատասխանը Աստուծոյ թողլով. Աբրահամ կը պատասխանէ թէ աղախինը քու ձեռքդ է, ինչ որ քեզ հաճոյ է, զայն արա։

Ցիշելու սոյն լիազօր պատճառութիւնն ստանալով Ագարը նեղել սկսելուն պէս՝ սա Աբրահամու տունէն փախաւ. բայց Տէր կոչուած տեղւոյն ճանապարհին վրայ Աստուծոյ հրեշտակը երևնալով կը հրամայէ որ ետ դառնայ և տիկնոջը հնազանդի, միանգամայն յայտնելով Ագարին թէ իրմէ ծնելիք զաւակը Իսմայել պէտք է կոչուի, որ շատ ուժեղ և վայրագ պիտի լինի ու պիտի ամէն և բազմանայ։ Ագար շնորհակալ լինելով Աստուծոյ կը վերադառնայ առ Սարա, և մանուկը

1. Եւ ասէ, զաւակի քում ասց զերկիրդ զայդ, ի գետոյն եգիպտացւոց մինչև ի գետն մեծ Եփրատ։ Զկինեցիս, և չկինեցացիս, չբեսացիս և չփեսեզացիս, չՖաւիմացիս և չԱմովրհացիս, չքանանացիս, չԳերգեսացիս և չՑեբուսացիս. Ծննդ. ԺԵ. 18—21։

ծնելով Իսմայէլ անունը կոտանայ Աբրահամէն, որ այն ատեն ՁԽԶ ութսուն և վեց տարեկան էր։

Արդարև այս անցքն էլ Աստուծոյ առ Աբրահամ եղած խոստման իբր վաւերացում համառհաւատչեայ կրնայ նկատուիլ. որովհետև Ագարը՝ սինաքոկային, Սարան՝ ս. եկեղեցւոյ օրինակ լինելով, առաջ Ագարէն որդի ծնաւ Աբրահամու, յետոյ՝ Սարայէն. ինչպէս որ Աստուած՝ առաջ Իսրայէլը իւր սեփական ժողովուրդ ընդունեց, յետոյ քրիստոնեայքը։

Աբրահամ 99 տարեկան եղած ատեն, Աստուած նորէն երևնալով իրեն, անուան վրայ գիր մը աւելցուց. վասն զի առաջ Աբրամ կը կոչուէր, յետոյ Աբրահամ անուանեցաւ, որ շատ ազգաց հայր կը նշանակէ[1]։ Նմանապէս Սարայի անուան վրայ գիր մը աւելցնելով՝ Սարան՝ Սարրայի փոխուեցաւ, որ՝ շատ ազգաց մայր ասել է։

Ասկէց զատ, Աբրահամու ցեղը կուսապաշտութենէն զատուելու համար, հրաման եղաւ որ Աբրահամ և նորա հպատակներն ու ցեղը թլփատուին. այս պատուէրը Ցիսուս փոխեց մկրտութեան, հետևաբար թլփատութիւնը խափանուեցաւ. վասն զի մկրտութիւնը՝ հոգևոր թլփատութիւն լինելով՝ մարմնաւորն ետ մնաց, ինչպէս որ

1. Հայր ազգաց բազմաց եդից զքեզ. Ծննդ. ԺԷ. 5։

արեգակը ծագելուն պես զիշերային մթութիւնը կը փարատուի[1]։ Մրչև յայնժամ Սարան տակաւին զաւակ ծնած չէր, վասնորոյ Աբրահամու աւետիս կը տրուի թէ Սարայէն զաւակ պիտի ունենայ, և անունն էլ Իսահակ պիտի դնէ, որով Աստուծոյ խոստումը պիտի կատարուի և ան իմայելի ծնմամբ[2]։

Ծիրաւի, յաչս մարդոյ այնպէս կը թուի թէ Աբրահամու եղած խոստման կատարումը օր ըստ օրէ եւս կը ճեայ. բայց յաչս Աստուծոյ արդէն կատարեալ է։ Որովհետև մարդուս անհնար է անփոփոխելի ճշալ, ուստի Աստուծոյ ողորմութիւնը մարդու վիճակին համեմատ կը շնորհուի իրեն, որպէս զի Աստուծոյ փառք և մարդուն օգուտ լինի։ Ինչպէս որ վերը յիշատակուածներէն յայտնուեցաւ թէ Աբրահամու որչափ որ քանիցս զաւակի խոստում և աւետիս արուեցաւ, միայն ժամանակը յայտնուած չէր։ Ահա այս անգամ մարդկային կերպարանքով երեք հրեշտակներ նորա վրանը գալով մանկան ծնանելու ժամանակն էլ կը

1. Հանգոյ Թուեցաւ Հոգւոյն սրբոյ և մեզ, մի՛ ինչ աւելի բերն դնել ձեզ։ Գործ. ԻԵ. 28։

2. Ահա Սարբա կին քո ծնցի քեզ որդի, և կոչեցես զանուն նորա Իսահակ, և հաստատեցից զուխտ իմ ընդ նմա. Ծննդ. ԺԷ. 19։—Եւ ոչ որ զաւակն Աբրահամու են, ամենեքեան որդիք կոչեցան, այլ Իսահակ կոչեցի քեզ զաւակ. Հռոմ. Թ. 7։

յայտնեն[1], բայց Սարան՝ իւր ծերութեան նայելով մտքին մէջ այդ բանը անկարելի դատելուն համար յանդիմանութեան կարժանանայ։ Ճշմարիտ էր որ մարդկօրէն անհնար էր, բայց Աստուծոյ համար՝ հնարաւոր[2]։

Աբրահամու հիւրասիրութենէն օրինակ առնելու է[3]. որովհետև յատկապէս վրանի դրան առջև կսպասէր, որ անցորդ ճամբորդները պատուասիրէ, ինչպէս արաբ երեք հրեշտակաց ճաշ տալով։ Թէ և հրեշտակներն իրրև հոգիներն էակ մարմնաւոր կերակուրի կարօտ չեն, բայց մարդկային կերպարանօք երևնալուն պատճառաւ, իրրև մարդ կերակուր ուտելու շարժուած կը ցուցնեն վայելչօրէն։

Հաբյա—Ա ԺԳ.

Ինչո՞ւ երեք հրեշտակներ կուգան առ Աբրահամ՝
Միթէ մի հատոր բաւական չէր։

Պաս. Բաւական էր. սակայն ոչ թէ միայն Աբրահամու զաւակ աւետելու եկան, այլ մանա-

1. Եւ ասէ, դարձեալ եկից առ քեզ ի ժամանակի յայսմիկ և որդի աւուրս, և ունիցի որդի Սարբա կին քո. Ծննդ. ԺԸ. 14։

2. Մի՛թէ անկարանայէ առ ի Աստուծոյ բան. Ծննդ. ԺԸ. 14։

3. Զօտարասիրութիւն մի՛ մոռանայք, զի այնու ոմանք յանդիման ընկալան զհրեշտակս. Եբրայ. ԺԳ. 2։

ւանդ Սոդոմ Գոմորը կործանելու և Ղովտ, ահա-
դին վտանգէն փրկելու համար, այդ պատճառու-
եր՛ք հրեշտակները պիտ եղան, ինչպէս որ անունդմէ
մին՝ Աբրահամու մօտ մնաց խօսակցելու համար,
իսկ երկուքը Սոդոմ քաղաքը դնացին: Մանա-
ւորապէս երեք հրեշտակները հպարտ իմաստով
իբրև օրինակ սուրբ Երրորդութեան ընդունելով,
երեքին մի անգամ երկրպագելով և մի՛ Տիրոջ
անուամբ կը խօսի Աբրահամ [1], ինչպէս նաև Հր-
եշտակաց մին միայն կը պատասխանէ [2]:

Այս պարագային մէջ Աստուած իւր ողոր-
մութիւնն ու արդարութիւնը յայտնապէս ցոյց
կուտայ, որպէս զի օրինապահ և հնազանդ մար-
դիկ ուրախանան, իսկ չարագործներն ու պարսա-
ւանքները վախնալով ապաշաւեն: Վասն զի ղոր
օրինակ Սոդոմ Գոմորի ժողովուրդը՝ իբրև ամբա-
րիշտ և անօրէն, պատժելու համար հրեշտակ
յատկացաւ, նոյնպէս առաքինի և աստուածա-
պաշտ Ղովտը ազատելու համար հրեշտակ կը
յատկացուի: Բացի այդ, Աբրահամու արդարու-
թիւնն ու հաւատարմութիւնը ի լոյս բերելու
համար, Աստուած իւր ծառային կանուանէ զայն,
որպէս զի մարդիկ անոր օրէրը լաւ ձանաչելով,

1. Եւ ասէ, Տէրը եթէ պակ չնորհս առաջի քո· Ծննդ· ԺԸ· 3:

2. Եւ ասէ Տէրը ցԱբրահամ· Ծննդ· ԺԸ· 13:

հաւատարմութեամբ ծառային Աստուծոյ և այ-
պէս ամէն վտանգէ փրկ լինին. վասն զի ինչպէս
որ Աբրահամ Աստուծոյ հաւատարիմ էր, նոյն-
պէս և իւր որդւոց պէտք է պատուիրէր, որ նոքա
ևս հաւատարմութեամբ ծառային և հնազանդին
Աստուծոյ [1]:

Դու ևս օրինակ առ, ով ընթերցող, մարդու
համար Աստուծոյ ծառայ կոչուելէ առաւել մեծ
պատիւ չի լինիր [2]: Շատերը մարմնաւոր պատիւ
ու փառք կորնչացնելով թշուառ եղան, բայց
Աստուծոյ հաւատարիմ ծառային երկու աշխար-
հաց մէջ պատուոյ ու փառաց արժանի եղաւ: Քաջ
ի միտ առ բարի ու չար մարդոց ապրելութիւ-
նը, վասն զի Աբրահամու առաքինութիւնը արևու
պէս պայծառ կերևի: Իսկ Սոդոմ Գոմորի ժողո-
վրդեան չարութիւնը և անոնց նկատմամբ ազա-
դակները շատնալով խիստ մեծ [3] մեղաց մէջ անյա-
րիր կործանած լինելու ցաւալի վիճակը յայտնելէն

1. Եւ ասէ Տէր, Միթէ թագուստ լինի ցԱբ-
րահամէ ծառայէ իմմէ՝ զոր գինչ գործելոց եմ···
քանզի գիտէի եթէ պատուիրեսցէ որդւոց իւրոց և տան
իւրոյ յետ իւր, պահել զճանապարհս Տեառն· Ծննդ·
ԺԸ· 17:

2. Մեծ է քեզ այդ, կոչելդ քեզ ծառայ իմ·
Եսայ· Խթ· 6:

3. Աղաղակ Սոդոմայեցւոց և Գոմորացւոց յաճա-
խեաց, և մեղք նոցա մեծացան յոյժ· Ծննդ· ԺԸ· 20:

զատ, հրեշտակը կը յայտնէ նմանապէս թէ չարա-
չար պէտք է պատժուին, որպէս զի ուղղութեան և
օրինակ լինին բոլոր մարդոց: Այդ ամբարիշտ ժո-
ղովուրդը չէ թէ մի փոքր ժամանակի մէջ չարա-
ցած էր, այլ ի վաղուց չար լինելով օր ըստ օրէ
աւելի և աւելի անզգամութիւնը բազմապատիկ
աւելցուցին. զի ոտքա մեղաւորութիւնը յառա-
ջագոյն ևս Ս. Գիրք կը գրեն և կը յիշեն [1]:

Մարդ կայ որ թէ Աստուծոյ և թէ մարդ-
կան հաճոյ է, ինչպէս Աբրահամ: Նոյնպէս մարդ
կայ որ թէ Աստուծոյ և թէ մարդկան թշնամի է,
ինչպէս Սոդոմացիները: Կան մարդիկ, որոնք Աս-
տուծոյ առջև մեղաւոր են, բայց մարդոց առջև
արդար կերևին, և մարդիկ էլ կան, որ թէև
Աստուծոյ հաճոյ են, բայց մարդիկ նոցա վրայ չար
կը խօսին և կը բամբասեն: Որովհետև նոքա իրա-
րու սիրտը չը ճանաչելով, շատ անգամ բարիին՝
չար, և չարին՝ բարի կասեն: Ուրեմն դու ջանա՛
որ թէ Աստուծոյ և թէ մարդոց առջև բարի լի-
նիս, և եթէ երկոցունց միանգամայն չը կարողացար
հաճոյ լինիլ, Աստուծոյ հաճոյ լինել նախընտրէ.
և եթէ մարդիկ զքեզ պարսաւեն, հոգ մի՛ աներ,
միայն թէ դուն ինքնին բամբասանաց առիթ մի՛
տար:

---

1. Մարդկին Սոդոմացւոց չարը և մեղաւորը էին առաջի Աստուծոյ յոյժ. Ծննդ. ԺԳ. 13:

Դարձեալ, նայէ որ բանի մը լաւ չը տեղե-
կացած՝ վճիռ չարձակես. քանզի Սոդոմացւոց մեղ-
քը յայտնի լինելով հանդերձ Աստուած՝ մի մար-
դու նման՝ քննութեամբ գործը ստուգելու երե-
ւոյթ մը կը ցուցնէ [1]:

Նկատէ որ Ս. Գիրքը մեղքը կը նմանցունէ
աղաղակի և գանգատի, որովհետև արարածք մե-
ղաւոր մարդու մասին գանգատանօք աղաղակ կը
բառնան առ Աստուած: Գիտնալ պէտք է որ Աս-
տուած զայնս մարդուն ծառայութեան յատկա-
ցուց, որ ինքն էլ Աստուծոյ ծառայէ. արդ՝ երբ
մարդ կը մեղանչէ, Աստուծոյ ծառայութենէ ետ
կենալով արարածը իւր մեղաց գործիք շինած կը
լինի, ուստի արարածք կաղաղակեն և կը բողոքեն
որ կամ զիրենք մեղաւորին ձեռքէն ազատէ և
կամ զայն պատժէ իրաւամբ: Ինչպէս որ Նոյի
մարգարէն երկնքի և երկրի հրաւէր կը կարդայ՝ որ
իսրայէլեան ազգի հետ Աստուծոյ ունեցած դա-
տաստանին ունկն դնեն, իբրև թէ վկայելու հա-
մար [2]:

Յիրաւի, մեծ մեղաւորաց դէմ բովանդակ

---

1. Եւ լջեալ տեսլեաց, եթէ ըստ աղաղակին նոցա որ գան հասանէ՝ վճռիցեն, ապա թէ ոչ, զի գիտացից. Ծննդ. ԺԸ. 20:

2. Լո՛ւր երկինք և ունկն դիր երկիր... Որդիս ծնայ և բարձրացուցի, և նոքա զիս անարգեցին. Եսայ. Ա. 1:

արեգելք դառնալով են, ըստ որում Աբրահամ Աստուծոյ գթութեան վրայ յոյս դրած՝ մանաւանդ թէ Սոդոմացւոց մեղքն իրեն յայտնելովը համարձակութիւն առած՝ կսկսի աղաչել պնդաւուած, որ եթէ հինգ քաղաքայ մէջ—Սոդոմ, Գոմոր, Սեբոյիմ, Ադամա և Սեգոր անուն—յիսուն արդար և անմեղ մարդիկ գտնուին, ի սէր այս վերջնոց [1], բոլորին մեղաց ներումն ու թողութիւն շնորհէ, թէև նոքա ներման և գթութեան անարժան են:

Բայց երբ Աստուած կը յայտնէ թէ յիսուն արդար մարդիկ չկան այդ քաղաքայ բնակիչներուն մէջ, Աբրահամ խոնարհութեամբ հող և մոխիր [2] կոչելով զինքը կրկին և կրկին կաղաչէ և կը թախանձէ որ եթէ 45, 40, 30, 20 և վերջապէս 10 արդարք գտնուին, խնայէ այդչափ բազմութեան, և պատասխան կընդունի որ եթէ տասն արդար գտնուին [3], դարձ պատճառաւ մնացեալներուն չեմ կորնչեցնելու:

Սակայն ո՛չ թէ տասն կամ հինգ, այլ մի հատ անգամ արդար մարդ չը գտնուիր: Այո՛, Ղովտ արդար է և Սոդոմ քաղաքի մէջ կը բնակի,

1. Եթէ կրնեն յիսուն արդար ի քաղաքի, կորուսանելցես զնոսա, և ո՛չ ներեսցես ամենայն տեղեացն. Ծննդ. ԺԸ. 24:

2. Բայց ես հող և մոխիր. Ծննդ. ԺԸ. 27:

3. Եւ ասէ, ո՛չ կորուսանեմ վասն տասանցն. Ծննդ. ԺԸ. 32:

բայց նա արդէն Սոդոմացի չէ: Ուրեմն, ով մարդ, թող Ղովտի ապաւէնութիւնը և Սոդոմացւոց ահեղ պատուհասը քեզի փրկարար խրատ լինի բոլոր կեանքիդ մէջ:

Հարց. ԺԻ.

Սոդոմացւոց մեղքն ինչ էր:

Պաս. Բնութեան օրինաց դէմ պղծագործութիւն: Ցիշեալ օրէնքը մարդուս էութեան մէջ բնութեան ձեռքով գրուած գրքի մը պէս տպուած լինելով, անոր ներշնչող գործողը Աստուծոյ հրամանին հակառակ գտնուելուն՝ անպատճառ կը պատժուի: Սոդոմացիները այսպիսի չար ընթացքի մը մոլեգին հետեւած էին, և հետեւաբար, շատ մեծ էր իրենց մեղքը: Եւ այս նողկալի մոլութեան պատճառ՝ իրենց հպարտութիւնն ու չափազանց կերուխումի և զուարճութեան սէրն էր [1]: Վասն զի հպարտ մարդն ինքն իրեն հաւանած լինելով, այդ պիղծ ախտը պատիժ կը լինի իրեն, աշխարհի առջև գինքը խայտառակելու համար:

Եւ դարձեալ, զուարճասիրութիւնն ու շռայտութիւնը, ինչպէս նաև անգործութիւնը կրակին վրայ իւղ թափելու պէս ցանկական ախտին զօ-

1. Այս էը անօրէնութիւն Սոդոմայ քեռ քո. ամբարտաւանութիւն, ի լիութեան հացի և յդխութեան գինւոյ վատնիսայը ինքն և դստերք իւր. Եզեկ. ԺԶ. 49:

թութիւնը յաւելլով անթան անասունէն աւելի կատարացնէ մարդը։ Ինչպէս որ Լրհեղկի ժամանակ մարդիկ ամէն կերպով անառակ գուարճութեանց անձնատուր եղած էին, նմանապէս Սոդոմացիները[1]. որովհետև այդ երկրին բերքն առատ առատ լինելուն՝ ամէն մարդ իր ապրուստն առանց դժուարութեան կը շահէր, ուստի բոլորն էլ միաբան մարմնոյ ցանկութեանց յագուրդ տալու հետամուտ էին, զի հանգստութիւնը զիրենք կատարութեան ասպիճանին հասուցած էր։

Ինչպէս որ պարարտացած ձին՝ ոտնակապը կոտրելով իր տիրոջը դէմ կաքացէ, այսպէս էլ այդ անիրաւներն ամօթոյ ոտնակապը խորտակելով Աստուծոյ հնազանդութենէն վտարանջեցին։ Մի հրաշալիր ստացուածոց, մեծութեան և հաճոյքներու վրայ, ընդհակառակն վախցիր որ չը հրապուրուիս. որովհետև մարմնաւոր ճոխութիւն, մեծութիւն և հաճոյք մեծ վտանգ են մարդուս, և շատ շատերն անզգած և անդարձ կերպով վտանգուեցան։

Դու նայէ Աստուծոյ ողորմութեանը, թէպէտ Սոդոմ գոմորի ժողովուրդն ամէն տեսակէտով պատժոյ արժանի, բայց Աստուած իր բազում ողորմութեամբ երկու հրեշտակ կը ղրկէ Սոդոմ,

1. Եւ որպէս յաւուրսն Նոյեայ եղև, ուտէին, ըմպէին, պնդէին, վաճառէին, առնէին, շինէին. Ղուկ. ԺԷ. 28։

որ ստուգապէս գիտնալով թէ պատժուելու են, փութան ապաշաւել, սակայն նոքա փոխանակ զղջալու, աւելի լրբացան։ Միայն զի Ղովտ՝ որ Սոդոմի մէջ կը բնակէր, հրեշտակները տեսնելուն պէս՝ ձանապարհորդ կարծելով իր տունը հրաւիրեց, որ հիւրասիրութեան պարտքը կատարէ։ Ինկոյն քաղքի բնակիչները, երիտասարդ և ծեր առհասարակ, Ղովտի տունը շրջապատելով բռնի տանիլ կուզեն հիւրերը չար մտքով[1]։

Ղովտ՝ զանոնք չը յանձնելու համար դուրս կելնէ, և, թէև շատ խրատ կուտայ, շատ աղաչանք կանէ, բայց չեն համոզուիր։ Այն ատեն Ղովտ՝ խիստ նեղը ճնալով յանձն կառնու իր երկու կոյս աղջիկները տալ նոցա ձեռքը, պայմանաւ որ իր հիւրերուն չը դպին, այլ անօգուտ. զի նոցա սրտին Աստուծոյ երկիւղն ու մարդուն ամօթը ջնջուած լինելով, ոչ միայն չեն զիջանիր, այլ Ղովտին և ս կսկսին սպառնալ, զի խրատ լսել չուզողին խրատ տալը՝ կրակին վրայ իւղ թափելուն կը նմանի։

Մինչ Ղովտը Սոդոմացւոց հետ վիճելու վրայ էր, յանկարծ հրեշտակները դուրս ելնելով Ղովտը այդ անզգաճներուն ձեռքէն ազատելէն ի բաց, Սո-

1. Եւ ամբ քաղաքին Սոդոմացւոց՝ պատեցին զտունն յերիտասարդաց մինչև ցծերս, ամենայն ժողովուրդն ի միասին. Ծննդ. ԺԹ. 4։

գոմացւոց աչքերը կը կուրացնեն[1]. և, ինչպէս որ նոցա նոգւոյն աչքը մեղաց խաւարով փակուած էր, նոյնպէս մարմնոյ աչքերուն վրայ ևս վարագոյր իջնելով, ոտն դուռն որչափ էլ որոնեցին, բայց չը կրցին գտնել: Ցիրաւի, մինչև այն ատեն Ղովա՝ Սոդոմացւոց չար ընթացքին վրայ միշտ կը ցաւէր[2], այլ՝ այս անգամ հիւրերէն ակնածելով յետին ատիճան տխրեցաւ. վասն զի գէռ անոնց հրեշտակ լինելը չը գիտէր: Արդարև այս պարագային մէջ, Ղովաին առաքինութիւնը յերևան գալով, Սոդոմացւոց չարութիւնն ու ժպրհութիւնը բազմապատիկ աւելցան:

Նկատէ ատ թէ Աստուած ոչքան երկայնամիտ է, և չարագործք ոչքան յամառ են: Այո, Սոդոմացւոց աչքերը կուրացան, բայց դարձեալ չը զղջացին: Հրեշտակները քաղաքին կործանման համար եկած լինելնին իմաց տալով Ղովոը կատարեն որ իսկոյն Սոդոմէն ելնէ, բայց նոքա չեն հաւատար. մանաւանդ Ղովաի աղջկանց նշանածները խնդալով կը ծաղրեն[3]: Բայց այդ, երբ Ղովայ

1. Զարան՝ ոչք առ դուրս ատեն կայլն, հարկն կուրութեամբ. Ծննդ. ԺԹ. 11.

2. Արդարն ընակեալ ի մէջ նոցա, օր ըստ օրէ զիւր զառւրը հոգին՝ նոցա անօրէն գնացուքն տանջէր. Բ. Պետ. Բ. 8:

3. Եւ թուէը ծաղր առնել յաչս փեսայից իւրոց. Ծննդ. ԺԹ. 14:

կինն ու աղջիկներն էլ Սոդոմէն ելնելու շատ կը դանդաղէին, այն ատեն հրեշտակները Ղովաի, նորա կնոջ և երկու աղջկանց ձեռքէն բռնելով դուրս հանեցին, միանգամայն պատուիրելով որ առանց յետս նայելու, փութան շուտով լեռը հասնիլ, որպէս զի վերահաս պատիժէն ազատուին:

Թէպէտ Ղովա հրեշտակաց խօսքին հաւատալով Սոդոմէն ելաւ, բայց մի՛ գուցէ լեռը չը հասած՝ պատիժը վրայ հասնի ասելով՝ կսկիծ վախնալ և ազաչել հրեշտակները, որ գոնէ Սեգոր քաղաքին խնայեն, ուր կարենան ապաստանիլ[1], (ինչու որ Սեգորը ճանապարհին վրայ և իրենց մօտ էր): Ցիրաւի, այդ քաղաքը կործանուելիք հինգ քաղաքաց մին էր, այսու հանդերձ առ ի պատիւ Ղովայ հրեշտակը կը պատասխանէ թէ քու ազաչանացդ համար Թող այդ քաղաքը ձեզ անկործան: Հիմայ ի միտ առ արդար մարդուն օգտակարութիւնը. վասն զի Ղովաի սիրոյն համար, մի ամբողջ քաղաք[2] պատժէն ազատեցաւ:

Սակայն Ղովաին կինը հրեշտակաց խօսքին հաւատաք չընծայելով, հակառակ նոցա պատուէրին

1. Աղաչեմ տեառըք իմ... և արդ՝ ես ոչ կարեմ դերծանել ի լեառն, գուցէ հասանիցեն ինձ չարիք և մեռանիցիմ. Ծննդ. ԺԹ. 18:

2. Անաւասիկ արարի մեծարանս երեսաց քոց, և ի բանիդ յայդմիկ չկործանել զքաղաքն վասն որոյ խօսեցար. Ծննդ. ԺԹ. 21:

նա դառնալով դէպ ի Սոդոմ նայածին պէս՝ աղէ արձան եղաւ[1]: Յիրաւի, յիշնալը Սոդոմացւոց հետ չայրեցաւ, զի Սոդոմէն ելաւ, բայց Ղովմին հետ էլ չազատեցաւ, քանզի պատուէրին ընդդէմ գործեց: Քար եղաւ, այլ՝ անպէտ շինուածի համար, զի աղ է. նմանապէս կերակուրի համ չիտար, վասն զի քար է և անձրևէն իսկ չը հալիր:

Արդարև մի այլ տեսակ քար չը դառնալով իբր աղի արձան ձանապարհին վրայ կենալը՝ մեծ խրատ է բոլոր մարդոց. վասն զի, ինչպէս որ մահապարտները ճամբայի վրայ կը կախեն, որպէս զի անցորդները տեսնելով վախնան, նմանապէս յիշեալ կնոջ պատմութեան վրայ խորհողները մեծ և զարհուրելի սարսափով կը համակուին: Ինչպէս որ աղը կերակուրին համ կուտայ, այսպէս էլ Ղովմի կնոջ պատիժէն՝ մարդիկ պարտական են խրատ համ առնուլ և աստուածային պատուիրանաց հակառակ գործելէ կարի զգուշանալ[2]: Այս պատճառաւ մեր Տէր Յիսուս Քրիստոս կը պատուիրէ մեզ Ղովմի կինը չը մոռանալ և յիշել[3]:

---

1. Դարձաւ կինն Ղովմայ յետս, և եղև արձան աղի. Ծննդ. ԺԹ. 26:

2. Խորագիտին տեսեալ զչարագործն պատժեալ՝ հաստատութեամբ խրատէ զանձն, և անմտաց անցեալ առ նոքօք վնասեցան. Առակ. Իբ. 3:

3. Յիշեցէք զկինն Ղովմայ. Ղուկ. ԺԷ. 32:

Լաւ խորհէ, Ղովմ՝ Սոդոմ գնալու ատեն ձեռքէն բռնելով չը տարին, այլ իւր կամաւն ու յօժարութեամբը գնաց, բայց Սոդոմէն ելնելուն՝ հրեշտակի օգնութեան կարօտ եղաւ. նմանապէս մարդս կամաւը կը մեղանչէ, բայց միայն իւր զօրութեամբ կարող չէ փրկուիլ, այլ՝ Աստուծոյ շնորհաց և օգնութեան կը կարօտի[1]: Ղովմ՝ բարերիր և բազմաբեղուն երկրի մէջ բնակելով, առաջ գերի ընկաւ, և եթէ այս անգամ երկնից օգնութիւնը չը լինէր, պիտի կորսուէր: Եւ թէպէտ պատժէն ազատեցաւ, սակայն մահու չափ երկիւղ կրեց. և եթէ նա՝ որ Սոդոմացւոց մեղքին անհաղորդ, և իւր ազատութեան հրեշտակ յատկացած էր, այսպիսի մեծ վախ ենթարկուեցաւ, ի՞նչ պէտք է լինի այն մարդուն վիճակն, որ աշխարհի հարստութեան և մարմնոյ հանգստութեան պատճառաւ ո՛չ թէ միայն մարմինը, այլ և նամանաւանդ հոգին վտանգի ներքոյ կը դնէ:

Ափսո՛ս, շատերը մարմնոյ հաճոյից և գուարճութեան համար յաւիտենական տանջանաց կենթարկուին իրենք զիրենք անմտաբար:

---

1. Զի առանց իմ ոչինչ կարէք առնել. Յովհ. ԺԵ. 5:

Հարց—Տ ԺԲ.

Սողոմ Դամոլի արուած պատիժն ինչ էր։

Պաս. Հուր և ծծումբ[1]. սակայն այս հուրը ոչ թէ ըստ բնական օրինաց երկրի խորքերուն բորբոքումէն յառաջ եկաւ, այլ յատկապէս առաւածակոյս կողմանէ պատիժ էր։

Նայէ դուն սա խեղճ մեղաւորաց Թշուառ վիճակին, որովհետև Ղովա Սեգոր մանելուն պէս՝ արևը ըստ սովորականին մթնոլորտին սև քողը պատռելով իր լուսեղէն կերպարանը մահկանացուներուն ցոյց կուտար գաշնակից խնդութեամբ և բերկրանօք լեցնելու համար, երբ յանկարծ, Աստուած ողորմի, մի գարշահոտ կրակ՝ սևաթոյր ծխով երբև անձրև սկսաւ այդ ամբարիշտներուն վրայ իջնել։ Ուրիշ տեղեր առաւօտեան ցօղն իջնելով կենդանութիւն կը պարգևէ, իսկ Սոդոմ Գոմորին վրայ կրակ կը տեղայ. այլուր՝ առաւօտեան զովագին զեփիւռը շնչելով աշխարհի ուրախութիւն կը պատճառէ, իսկ սոցա վրայ ծծմբախառն բոց շնչելով ամենքն էլ կայրէ կը մրկէ[2]։

---

1. Տէր տեղաց ի Սոդոմ և ի Գոմոր ծծումբ և հուր. Ծննդ. ԺԹ. 24։

2. Յորում աւուր եւ Ղովտ ի Սոդոմայ, տեղայց հուր և ծծումբ յերկնից՝ և կորոյս զամենեսեան. Ղուկ. ԺԷ. 29։

Ո՛հ, ո՞ւր են այժմ ամէն առաւօտ իրենց գործարքներուն անձնատուր եղողները։ Ո՞ւր են նոքա, որոնք օրէ օր մի մի կերպ հաճոյքով ժամանակ անցնելու համար այգիներու և պարտէզներու մէջ կուտէին ու կըմպէին. ո՞ւր են, որոնք Ղովտին տունը պատելով բռնութեամբ կուզէին հիւրերը ստանալ. ո՞ւր են Ղովտին փեսացուքը, Ղովտը յիմարի տեղ դնող խնդացողները. հիմայ արդեօք ո՞րքան լաց ու կոծով կողբան և կարտասուեն։ Բայց կրակին բնութիւնը յայտնի է, արտասուելու իսկ ժամանակ չը թողուր, և փախուստեան ճանապարհ չի տար։

Որովհետև Աստուծոյ հրամանաւ և արուած վճռոյն համաձայն, սահմանեալ արդարութեան ղօրքը—կրակը—թշնամւոյն բանակը շրջապատելու պէս Սոդոմ Գոմորի երկիրը իսկոյն պատելով ոչ միոյն միջոց կուտայ ազատութեան։ Փրկութեան պատհութիւնը կորուսողը՝ պատժոյն առեն փըրկուելու կարող չէ։ Աստուծոյ բարերարութիւնը չը ճանաչողը՝ գթութեան և ողորմութեան արժանի կարող չէ լինել։ Խորհէ՛, թէ կրակը տեղալ սկսելուն՝ արդեօք այդ անիրաւներու մտքէն ինչ կանցնէր. արդեօք տեղ մի օգնութիւն խնդրեցին. արդեօք իրենց մեղաց փոխարէն Աստուծոյ պատիժ կրելու գիտակցութիւնն ունենալով ազօթք և աղաչանք արի՞ն, քաւ լիցի. վասն զի ամէն մարդ դեռ իր տունը մահիճին մէջ, ո՞վ կարող էր

աչք բանալու, ով կը համարձակէր տեղէն շարժիլ. կրակը մերէն սաստկութեամբ կիջնէ, և ընկած տեղը բռնկելով՝ երկրի երեսը հրեղէն սալայատակով կը ծածկուի. ուստի ամէնքն իրենց կրակ դարձած բնակարանին մէջ կայրին։

Ինչպէս որ չորացած թիւեր մի հնոցի մէջ նետուին, որչա՞փ շուտ բռնկելով կը վառին, նոյնպէս այդ երկրին լեռն ու քարը կրակ կտրած՝ Թիւի նման Սոդոմացիները այրելով մոխիր դարձուցին։ Մինչ կրակին բնութիւնն է բոցը միշտ դէպ ի վեր ուղղել, այս անգամ բնութեան հակառակ դէպ ի վար դարձուց իւր երեսը, որ բնութեան օրինաց հակառակ գործողները այրէ։

Պէտք չէ առարկել թէ՝ անասնոց և մանուկներուն յանցանքն ինչ էր, որոնք մեղաւորաց հետ պատժուեցան. ո՞չ ապաքէն անասունք նոցա սուտացուածքն էին, և մանկունք մեծանալով իրենց ծնողաց նման և չարագոյն պիտի լինէին։ Մեղաց համար յառաջագոյն շատ անգամ պատիժ տրուած էր, սակայն շատերուն հետքն իսկ կորսուելով, միայն գրոց մէջ անոնց պատմութիւնը մնաց։ Իսկ Սոդոմ Գոմորին պատահած սոսկալի անցքին պատմութիւնը Ս. Գրոց մէջ գրուելէն ի զատ, ապացոյցները մինչև ցարդ յայտնի կերևին։

Որովհետև, մինչ այդ երկիրը՝ առաջ խիստ արգասաւոր և այգիներով ու պարտէզներով լիքն

էր[1], անցքէն յետոյ հրդեհեալ աւերակ մի դարձաւ։ Ցայսօր իսկ հրդեհի ծուխին նման կը մնայ և տեղւոյն պտուղը չուտուիր բնաւ. այո՛, ծառին վրայ տեսնուած ատեն պտուղ կը կարծես, բայց մէջը բոլորովին փոշի ու մոխիր է։ Նմանապէս Ղովտայ կնոջ աղի արձանը մինչև ցայսօր անհալ կը կենայ[2]։

Իմացիր, եթէ բնական օրէնքի ներքոյ մարդիկ այսպիսի խիստ պատժոյ արժանացան, հիմայ Քրիստոսի փրկչին շնորհական օրինաց տակ այդ կերպ մեղանչող մարդիկ՝ արդեօք ո՞րչափ առաւել սաստիկ պատժոյ արժանի պէտք է լինին[3]։

Հայցո՛ց ԺԲ.

Աբրահամ ինչպէ՞ս իմացաւ Սոդոմ Գոմորի այրիլն ու Ղովտայ ազատիլը։

Պաթ. Աբրահամ գիտէ որ Աստուած անմեղ

---

1. Մինչչև կործանեալ էր Աստուծոյ զՍոդոմ և զԳոմոր, իբրև զդրախտ Աստուծոյ էր. Ծննդ. ԺԳ. 10։

2. Նա զարդարն և կորստական ամբարշտաց փախուցեալ՝ փրկեաց յԼՋանել հրոյն զՆինդ քաղաքաւն, որ և վկայութիւն չարութեանն ճնշեալ կայ խոպանացեալ, և անկատար ժամանակօք տունկք մրգաբերք, անհատատն ոգւոյն յիշատակ հաստատեալ զարձանն աղի։ Իմաստ. Ժ. 6։

3. Զքաղաքս Սոդոմացւոց և Գոմորացւոց դարձուցեալ յաճիւն դատեցաւ, օրինակ առ յապայ ամբարշտելոցն կացուցանէր. Բ. Պետ. Բ. 9։

մարդը կը պահպանէ[1]։ Մանաւանդ Սոդոմացւոց համար բարեխօսած առնն՝ Ղովթի փրկութիւնն էլ խնդրած էր[2]. յիրաւի, Ղովթին անունը չը-յիշեր, բայց միայն Ղովթին համար լինելը յայտնի է[3]. հետևաբար Ղովթի փրկութեան վրայ Աբրահամ երբէք չը տարակուսեցաւ։ Եւ զի առաջի օրէն գործին տեղեակ էր, երկնից երեսը հրեղէն բոցը տեսածին պէս՝ իմացաւ թէ Սոդոմացիք են որ կայրին[4]։

Սակայն այս անցից պատճառաւ իր հանդերձութիւնը զրկել կորսնցուց։ Որովհետև Սոդոմի երկիրը՝ իւր բնակած տեղին մօտ լինելով, բնականաբար հրդեհից բոլորքուրմը այդ կողմերուն ևս պիտի ճեասէր, ուստի Քերրոնէն կը գաղթէ դէպ բարձ կոչուած տեղը։ Եւ ահա այստեղ ևս, յառաջագոյն Եգիպտոսի մէջ պատահածին պէս՝

---

1. Գիտէ Տէրը պատուհածապաշտս փրկել և փորձութենէ. Բ. Պետ. Բ. 9։

2. Մեթէ կորուսանիցես զարդարն ընդ ամբարշտին. Ծննդ. ԺԸ. 23։

3. Զիշեաց Աստուած զԱբրահամ, և եհան զԼովթ ընդ հակեաց զՂովտա և մէջոյ կործանմանն. Ծննդ. ԺԹ. 29։

4. Եւ կանխեալ Աբրահամ ընդ առաւօտն ի տեղին ուր կայր առաջի Տեառն, և հայեցաւ յերեսս Սոդոմացւոց և Գոմորացւոց, և յամենայն երեսս երկրի գաւառին, և եահս և ահա ելանէր բոց երկրին իբրև մրրիկ հնոցի. Ծննդ. ԺԹ. 27։

(ինչպէս ևօթնեւորդ հարցման մէջ յիշուած է), Աբիմելէք թագաւորը Սարրան՝ Աբրահամու քոյրը կարծելով կառուց զայն՝ իրեն կին անելու համար։

Արդ՝ որովհետև յիշեալը՝ անգիտաբար և ոչ թէ չար դիտաւորութեամբ այս բանն արաւ, վասն որոյ Աստուած նորա երազին մէջ կը պատուիրէ որ Սարրան վերադարձնէ իւր ամուսնոյն, եթէ ոչ՝ կը մեռնիս, և Աբրահամ աղօթելու է քեզ համար որ չը մեռնիս։ Ասկէ զատ, մեղքէ հեռացնելու համար զայն, իբրև պատիժ, այնպիսի սիրտ մի կուտայ անոր և հպատակներուն, որ՝ ինչքան առնն Սարրան նորա մօտ մնաց, նոքա ծննդագործութեան ոևէ շարժում անելու անկարող եղան, ինչպէս նաև նոցա կիներուն ամլութեան դատապարտելով ծննդաբերութենէ բոլորովին դադրեցան։

Սոյն պատժին վրայ Աբիմելէք շատ վախնալով իսկոյն Աբրահամը կը կանչէ, և Սարրան յանձնելէն զատ խոնարհ և քաղցր խօսքերով կը մեղադրէ զայն ասելով թէ ինչո՞ւ այդ բանն արաւ, որով զինքը մեծ վտանգի մէջ ձգեց, և իբրև ընծայ հազար ոսկեր, երինջ, ոչխար, ծառայ և աղախիններ տալով Սարրային, կարծես զիրենք որ իւր երկրին մէջ ցանկացած տեղն բնակին։ Աբրահամ էլ նորա համար աղօթելով՝ իբր պատիժ յայտնի ախտը կը փարատուի, ու Աբիմելէքի կինն ու հարճերը կսկսին զաւակ ծնել։

Օրինակ առ, և Աբրահամու նման հաւատարմութեամբ ծառայէ Աստուծոյ որպէս զի ամէն վտանգէ և փորձութենէ ազատ լինիս, քանի որ Աստուած իւր հաւատարիմ ծառային միշտ կը հովանաւորէ ու կը փառաւորէ։ Աբիմելէք թագաւորն Աբրահամու աղօթից կարօտ եղաւ, վասնզի արդար մարդուն աղօթքով Աստուած ուրիշներուն էլ կողմի, ուստի մեծ բարիք է այն տեղին համար, ուր արդար մարդ կը գտնուի։ Նոյնպէս մեծ շնորհ է այն մարդուն, որուն Աստուած վիշտ և նեղութիւն կրտայ մեղքէ խնայելու համար։

Արդարև մարդս պարտական է շնորհակալ լինել Աստուծոյ, երբ այս աշխարհիս մէջ ո և է կերպով մի պատուհաս տեղի կունենայ, վիճանալով թէ յԱստուծոյ է այն, և թէ մեզ համար բարի է այն, եթէ խոնարհութեամբ ընդունինք. վասնզի նա՝ որ մարմնաւոր նեղութեանց կենթարկուի ի մեզաց խոյս կուտայ [1]։

Այս միջոցին, ինչպէս երկոտասանեորդ հատուածին մէջ յիշուած է, ըստ խոստմանն Աստուծոյ և կրկին աւետեաց, որ առ Աբրահամ, Իսահակ կը ծնի. Աբրահամ ու Սարրա չափազանց ուրախ կը լինին և կը բերկրին ի սիրտ և ի հոգի, արդէն Իսահակ՝ խնդութիւն կը նշանակէ. վասն զի բոլոր

1. Զի որ չարչարի մարմնով՝ դադարէ ի մեղաց. Ա. Պետ. Դ. 2։

աշխարհի հոգևոր ուրախութիւն պարգևող մեր Տիրոջ Յիսուսի Քրիստոսի օրինակ պէտք է լինէր։ Այս պարագային մէջ՝ մի՛ կարծեր թէ Աբրահամ միայն Իսահակայ ծննդեան համար կուրախանայ. այլ մանաւանդ Աստուծոյ մարդկային ազգին անեղիք բարեաց և ողորմութեան համար։ Որովհետև Քրիստոս Իսահակայ ցեղէն պէտք է ծնէր, մարդկային ազգը՝ նորա զաւակին՝ Մեսիայի շնորհիւ օրհնութեան պիտի արժանանար։ Արդ՝ երբ զաւակը ծնաւ, յայտնի է որ խոստացեալ բարիքն էլ պիտի շնորհուէր, այս պատճառաւ Իսահակ աւետեաց զաւակ կը կոչուի [1]։

Տես դու Աստուծոյ ողորմութիւնը. Աբրահամ ծերանասուն հինգ տարեկան էր, երբ Քանանու երկիրը եկաւ, և քսան հինգ տարի շարունակ Աստուծոյ ողորմութեամբ կերպ կերպ բարիքներու և պատուոյ ժամանելով իւր ծերութեան հասակին մէջ ժառանգին ծնունդը՝ Աստուծոյ յատուկ և մասնաւոր սիրոյն ու շնորհաց մի փայլուն ապացոյց էր։ Որովհետև Աբրահամ շատ ազգաց հայր պիտի լինէր, վասնորոյ Աստուած իւր խոստման կատարումը այնչափ ատեն կը յապաղէ, որ նորա հաւատքը յայտնի լինի բոլորին։

1. Քանզի աւետեաց խակ է բանս, թէ ի ժամանակի յայսմիկ եկից՝ և եղեցի որդի Սառայի. Հռոմ. Թ. 9։

Ըստ մարգարէն Աբրահամը մի հասս ատուն վէմի՝ և Սարրան մի չորացած հողի կը նմանցուներ[1]: Վասն զի մինչ բնական օրինօք զաւակ ծնանելու ժամանակն անցած էր, Աստուած զաւակ կը շնորհէ նոցա, որպես զի մարդիկ խրատուելով անոնց պես Աստուծոյ անկեղծութեամբ հաւատան և հաւատարմութեամբ ծառայեն: Իսահակ ծնած ատեն Աբրահամ հարիւր, իսկ Սարրա իննսուն տարեկան էին: Երիտասարդութեան ժամանակ զաւակ ծնիլ՝ բնութեան զօրութիւնն է, իսկ բնութիւնը ձեռք քաշելէն յետոյ զաւակ ծնիլ՝ Աստուծոյ յատուկ պարգեւն է:

Իսահակ մեծնալով կաթէն կարուելու օրը Աբրահամ մեծ կոչունք և ուրախութիւն արաւ: Սակայն այստեղ պէտք է ուշադրութիւն տալ Աբրահամու և Սարրայի վիճակին, որոնք միշտ միասնաց հետ վերին աստիճան սիրով էին, և Սարրան միշտ Աբրահամու հնազանդ. միայն թէ Իսահակ մեծնալ սկսելով՝ Իսմայէլը գայն նեղել և վշտացնելուն պատճառաւ, Սարրան Աբրահամու կառաջարկէ իւր աղախինն ու անոր որդին վռնտել[2]:

1. Նայեցարուք ի վէմն հատատուն՝ յորմէ կոփեցաք, և ի գուբ հորոյն՝ յորմէ փորեցայք, (այսինքն յԱբրահամ և ի Սարրա) որ երկնեացն զԶեզ. Եսայ. ԾԱ. 1:

2. Ի բաց հան զաղախինդ և զորդի դորա. Ծննդ. ԻԱ. 10:

Թէև այս առաջարկը ժուժարին և ծանր թուեցաւ Աբրահամու, սակայն Աստուած կը հրամայէ որ Սարրայի լսէ: Ուստի Աբրահամ Աստուծոյ հրամանը իմանալուն պէս հայ և մի տիկ ջուր Ագարին տալով և որդին Իսմայէլն էլ անոր յանձնելով կը հեռացնէ զանոնք իր տունէն[1]:

Արդարև (ինչպէս որ 12-րդ հարցման մէջ յիշուեցաւ) առաջ էլ Ագար յղութեան առթիւ իւր տիկնոջ՝ Սարրայի հնազանդիլ չուզելով խոյս տուած էր, իսկ այս անգամ նորա որդին՝ Իսմայէլը Իսահակին դէմ ելնելով Աբրահամու տունէն հեռացան: Ագար Աբրահամէն բաժանուելով անապատին մէջ երկման ջրհոր կոչուած տեղին կողմը եկած ատեն ձանապարհը կորսնցուց. և տիկին մէջ գտնուած ջուրը սպառելով՝ երկուքն էլ յոգնած, տաքած և ծարաւի, այնպէս յուսահատ կերպով մանուկը ծառի մը տակ թողլով՝ մայրը հեռուն կը նստի, որ զաւկին մահը չը տեսնէ, որ բարձր ձայնով կուլար այն միջոցին:

Բայց ահա հրեշտակը ձայն կուտայ Թէ՝ մի՛ վախնար, որովհետև Աստուած քու որդւոյդ ձայնը լսեց, եւ՝ առ մանուկը. վասն զի «մեծ ազգ պիտի անեմ զայն»: Իրաւ է որ այն տեղին մօտ ջրի

1. Յարեաւ Աբրահամ ընդ առաւօտն, և էառ հաց և տիկ ջրոյ, և ետ յԱգար, և եդ յուս նորա զմանուկն, և արձակեաց զնա. Ծննդ. ԻԱ. 14:

աղբիւր կայ, բայց խեղճ չուարած լինելով տրտմութենէն չէր կրցած տեսնել. ուստի Աստուած նորա աչքը բանալով աղբիւրը տեսածին պէս՝ տիկը կը լեցունէ և կը խմցունէ մանկան, որով կը զօրանան և կը գնան Փառան կոչուած անապատին մէջ կը բնակին։ Իսմայէլ մեծնալով, մայրը Եգիպտոսի երկրէն նորա համար կին կառնու, և նորա ցեղը հետզհետէ բազմանալով այն տեղերուն կը տիրանան։

Կարևոր է իմանալ թէ Աստուած Աբրահամու սիրոյն համար Իսմայէլի ցեղը զօրացնելով մարմնաւոր մեծութիւն կը խոստանայ անոր, ոչ թէ հոգևոր զաւկի աստիճանաւ, այլ՝ մարմնաւոր, քանի որ աղախնէն ծնաւ, ինչպէս և Աբրահամ մարմնոյ պէտքն հոգայ, հայ և ջուր տալով։ Մ՚ինչդեռ Իսահակ միշտ Աբրահամու մօտ մնալով նորա աստուածոյ, փառքին և նա մանաւանդ հոգևոր պարգևաց ևս ժառանգ եղաւ, և Յիսուս Քրիստոս Իսահակայ ցեղէն ներելով՝ բոլոր քրիստոնեաք էլ Աբրահամու հոգևոր ժառանգները կը համարուին[1]։

Վերոյիշեալ Արիմելէք թագաւորն, որ Աբրահամու աղօթքով բժշկուած էր, հասկնալով որ Աստուած Աբրահամու հետ է, և նորա ամէն գործերը յաջող գնալով. օր քան զօր կը զօրանայ, միշտ նորա հետ բարեկամ լինել կը տենչայ այս պատճառաւ։ Այս միջոցին իւր մարդոց հետ Աբրահամին գալով՝ կասէ, «երդուա՛ր ինձ որ ինձ և իմ զաւկիս պիտի չը վնասես, ինչպէս մենք քեզ վնաս կամ չարիք չը հասուցինք»։ Ճշմարիտ է որ Աբրահամ ոչ ոքի զրկանք չանելէն զատ, իրեն զրկանք հասցնողներուն ևս առանց փոխարէնը հատուցանելու կը համբերէր, ինչպէս Արիմելէք թագաւորին մարդիկը նորա փորած ջրհորը գրաւած էին, բայց Աբրահամ մինչև այն աստեն երբէք ձայն հանած՝ մի խօսք անգամ ասած չէր. այս առթիւ միայն Արիմելէքին գանգատեցաւ նոցա դէմ։ Թէպէտ յիշեալը այս մասին տեղեկութիւն չունենալ ձևացուց, ուստի Աբրահամ գիտնալով որ դժուար պիտի լինի թագաւորին՝ իր մարդոց յանցանքը յայտնի հատատել, եօթն ոչխար կուտայ իրեն ջրհորը իրեն պատկանելուն գրաւական։

Այս կերպով երկուքն էլ երդմամբ ուխտեցին որ միշտ բարեկամ մնան, և տեղւոյն անունը՝ երդման ջրհոր կոչուեցաւ Աբրահամին։ Երբ Արիմելէք վերադարձաւ իւր տեղը, Աբրահամ այն տեղ ծառ տնկելով՝ յաւիտենական դաւանեց զԱստուած իւր աղօթից մէջ[1]. և շատ ժամանակ հոն բնակե-

1. Այլ մեք եգբարք՝ ըստ Իսահակայ աւետեացն որդիք եմք։ Գաղ. Դ. 28։

1. Եւ կարդաց անդ զանուն Տեառն, Աստուած յաւիտենական։ Ծննդ. ԻԱ. 33։

ցաւ: Արդարև, Ագր և Իսմայէլ Աբրահամու տունէն հեռանալով՝ Սարրան և Իսահակ հանդրստացան, և Աբրահամ ևս, մինչ ամէն կերպով փառաւորեալ՝ խաղաղ վիճակ մի կը վայելէր, և ահա Աստուած զայն փորձելու համար [1] կասէ. «Աբրահամ, Աբրահամ, առ քու սիրելի որդիդ՝ Իսահակը և գնա այն բարձր լեռը, զոր քեզ պիտի յայտնեմ, այն տեղ զայն ողջակէզ արա, նուիրէ [2] ինձ»: Այս անգամ Աբրահամու անունը երկիցս յիշելուն պատճառը՝ արուած հրամանը փութով կատարելու խիստ մեծ կարևորութիւնը զգացնելու համար է:

Հարցո՞ւմ ենք.

Իսահակը զոհելու հրամանն առած ատեն
Աբրահամ ինչ կը խորհէր:

Պատ. Ուրիշ բան չը մտածեր, բայց միայն Աստուծոյ հրամանը գործադրել: Այս կէտին՝ մեծ ուշադրութիւն ալա՛ Աբրահամու առաքինութեան: Որովհետև բնական է մի հօր՝ իւր զաւակը սիրել, մանաւանդ երբ միածին մէկ հատիկ է այն, և

1. Փորձեաց Աստուած զԱբրահամ. Ծննդ. ԻԲ. 1:

2. Եւ ասէ ցնա, Աբրահամ, Աբրահամ... առ զորդի զքո սիրելի՝ զոր սիրեցեր զԻսահակ, և գնա յերկիրը բարձր, և հանցես զդա անդ յողջակէզ ի վերայ միոյ լերանց յորոց ասացից քեզ. Ծննդ. ԻԲ. 1:

առաւել ևս, երբ հրաշիւք պարգևեալ՝ ու Աստուծոյ խոստումը նորա վրայ կատարուելու է, կրկին և կրկին յայտնուած լինելով հանդերձ, զայն ողջակէզ արա և զոհէ ասելը՝ կարի ծանր մի առաջարկ է: Բայց այդ, հօրը կը հրամայուի որ իւր ձեռամբ զաւակը մորթելով արիւնը հեղու. և արդարև այս ևս բնութեան դէմ մի գործ է: Սակայն Աբրահամու առ Աստուած ունեցած սէրն այնքան հզօր է, որ առանց սիրտը կոտրուելու կամ առանց վհատութեան պատրաստութիւն կը տեսնէ, Իսահակը զոհելու:

Նայէ դուն յիշեալի հնազանդութեանը, այն՝ որ ըստ բնութեան անհանդուրժելի էր, բայց Աստուծոյ շնորհօք և հաւատոյ զօրութեամբ՝ բնութիւնը յաղթուեցաւ. և Աբրահամ ոսկիի նման փորձի բովին մէջ հալուելով՝ երբէք իւր հաւատոյ կշիռը չը նուազեցաւ: Սակայն չէ թէ Աբրահամու սիրտը հասկնալու համար Աստուած փորձեց զայն, այլ՝ նորա զօրաւոր հաւատը մարդոց ցոյց տալու համար:

Պարտիս իմանալ որ սատանան մարդը կը փորձէ մեղանչել տալու համար, մարդն՝ զմարդ կը փորձէ, նորա միտքը հասկնալու նպատակաւ. իսկ Աստուած իւր սիրելին կը փորձէ, նորա վարձն աւելցնելու միակ դիտումով: Վասն զի ինչպէս որ ադամանդը տաշելու գործիքովն աւելի կը փայլի, նմանապէս կատարեալ հնազանդ մարդը փորձի

անիւին տակ առաւել կառաքինանայ: Ահա այս պարագային մէջ Աբրահամու առաքինութիւնը արեւու դման աշխարհի առջև փայլեցաւ: Որովհետև նա՝ ո՛չ Աստուծոյ խոստումէն յոյսը կտրեց և ո՛չ հրամանին գործադրութեան մէջ ամենափոքր մի վարանում յայտնեց:

Աբրահամ գիտէր որ Աստուծոյ խոստումը հաւհակաւ պէտք է կատարուի, ինչու որ ճիշդ նոյն նպատակաւ հաւհակը իրեն պարգեւած էր, բայց գարձեալ նոյն ամենակարող Աստուածն էր, որ զոհը կը պահանջէր, և որ, եթէ կամենար, կարող էր նաև վերակենդանացնել զայն[1]. ուստի նորա հաւատքը չէր խախտիր բնաւ, խորհելով թէ անպատճառ Աստուծոյ մի խորհուրդը կայ այս բանիս մէջ, որուն մարդուս խելքը չէ հասնելուն՝ հարկ է խոյին առանց կասկածանքի և ամենայն հնազանդութեամբ նորա հրամանը կատարել. ուստի հաւհակը, երկու ծառայ և իշու մը վրայ բարձած փայտ առնելով առաւօտ կանուխ ճամբայ կելնէ առանց գիտնալու թէ ո՞ւր պիտի գնայ, թէպետև զոհելու համար ճանապարհ ընկաւ, և

1. Հաւատովք մատոյց Աբրահամ է փորձութեան ետքում զԻսահակ պատարագ, և զմիամօրն մատուցանէր, որոյ զաւետիսն ընկալեալ էր, որում ասացան՝ թէ Իսահակաւ կոչեսցի քեզ զաւակ. եդ է մակ ետքում թէ և է մեռելոց կարող է յարուցանել Աստուած. Եբրայ. ԺԱ. 17:

զոհն էլ իւր հետն է, բայց զոհ մատուցանելու տեղն մինչև այն ատեն նշանակուած չէր յԱստուծոյ, Աբրահամ առանց հարցնելու Երուսաղէմի կողմերը երեք օր կը շարժի մինչև որ տեղը յայտնուի իրեն:

Երրորդ օրը զոհելու կամ պատարագելու վայրն հեռուէն (որ Գողգոթա լեռն էր) տեսնելով՝ ծառային ու էշը ետևը կը թողու, և փայտը Իսահակայ ուսին վրայ դնելով ինքն էլ կրակն ու սուրն առած՝ դէպ ի վեր բարձրացած ատեն, Իսահակ կը տեսնէ որ պատարագի պատրաստութիւն կայ, բայց պատարագելու ոչխար չը կայ, ուստի հօրը կը հարցնէ ասելով. «Հայր, ահա կրակ, ահա փայտ, ո՞ւր է պէտքելիք ոչխարը»[1]. Հայրը կը պատասխանէ թէ Աստուած թող տեսնէ իրեն պատարագու ոչխարը[2], զաւակս: Այս խօսքը ո՛չ թէ Իսահակայ հարցման պատասխանն էր, այլ մանաւանդ՝ հոգևոր մտքով Քրիստոսի աստուածային զոհին նկատմամբ մի կանխասաց մարգարէութիւն էր, իբրև թէ կը կամենայ ասել.

Ո՛վ իմ սիրելի զաւակս, առ այժմ պատարագը դուն ես, բայց քու պատարագովդ մարդիկ չեն կարող ազատուիլ, այլ՝ մի օր մարդոց

1. Ահա հուր՝ և ահա փայտ, ո՞ւր է ոչխար յողջակէզ. Ծննդ. ԻԲ. 7:

2. Աստուած տեսցէ իւր ոչխար յողջակէզ ո՛ր-պեսզի. Ծննդ. ԻԲ. 8:

փրկութեան համար այս լերան վրայ Մելիան պէտք է պատարագուի[1] Աստուծոյ Հօր հաճութեամբ: Երբ որոշեալ տեղը հասան, տղան կանգնելով փայտերը վրան կը դնէ: Լաւ, ահա տղանը պատրաստ է, ինչպէս նաև հուրն ու սուրը, մնը է պէտք Աբրահամ. Իսահակ գործէն անտեղեակ է, գիտ պատարագելու ոչ թէ պատարագուելու փափաք կը ցուցնէ: Արդարև Ս. Գրոց մէջ գրուած չէ թէ Աբրահամ ինչ խօսքերով իմացուց Իսահակայ, և սա ինչ պատասխանից. սակայն յայտնի է որ Աստուծոյ հրամանը լսելով առանց տրտունջման կատարեալ հնազանդութեամբ յօժարեցաւ ի սէր Աստուծոյ գոհունելու:

Որովհետև նա գիտէ որ Աստուծոյ հրամանն ամեն կերպով մարդուն օգտակար է և բարի, ուստի մարդուն պարտքն է իւր կեանքէն աւելի զԱստուած սիրել և ի սէր նորա նուիրել անձը: Հիմայ, ով մարդ, մաքովդ գողգոթա լեռը ել, և մտապրութեամբ նայէ Աբրահամու և Իսահակայ հաւատոյ մեծութեան: Ւաան զի Աբրահամ Իսահակը կապելով սեղանին վրայ կը դնէ որ զենու[2]: Մխայն չը գիտցուիր թէ հայր ու որդի, ոբն արդեօք առաւել եռանդով ու սիրով կը փութայ

1. Աբրահամ հայր ձեր յանկացաւ տեսանել զօրն իմ, եւտես՝ և ուրախ եղև. Յովհ. Ը. 56:

1. Եւ կապեաց զԻսահակ զորդի իւր, և եդ զնա ի սեղանն ի վերայ փայտին. Ծննդ. ԻԲ. 9:

որ ժամ առաջ Աստուծոյ հրամանը կատարուի: Ճշմարիտ է որ Աբրահամու եռանդը յայտնի է, քանզի երեք օրէ ի վեր կապասէր որ գոհելու վայրն որոշուի. Իսահակ նաև անձնատուր եղած և կապուած լինելովը յայտնի եղաւ որ Աստուծոյ հրամանին կատարման եռանդով կը փափաքի և նորա սիրոյն ընծայ ու նուէր լինիլ ըղձանօք կը տենչայ, որպէս զի ալքայութեան մէջ յաւիտենական կենաց ուրախութեան շուտով հասնի:

Այսպէս լինելով, թէև հարկ չէր մինչև իսկ Իսահակը կապել, բայց Քրիստոս Քրիստոսի մեր պատուական փրկչին օրինակն ու նկարը լինելուն՝ կապուիլը խորհրդով եղաւ: Քանզի Քրիստոս Իսահակայ նման այդ լերան վրայ ի խաչափայտին կապուած՝ պէտք է բևեռով գամուէր: Ահա Աբրահամ ձեռքը կերկնցուցնէ սուրն առնելու, որ իւր սիրելի որդին Իսահակը իւր ձեռամբ մորթէ[1]: Ո՛հ, այս ինչ մեծ տեսարան է. որդին գառան նման վիզն երկնցուցած, հայրը սուրն ի ձեռին կը պատրաստուի որդւոյն գլուխը կտրելու. այլ զարմանքն այս է որ երկոցուն սիրտն էլ ուրախ է, երկուքն էլ յօժար, երկուքն էլ միաբան և գոհունակ:

Ինչպէս մարդս կարող է հանդուրժել այս

1. Եւ ձգեաց Աբրահամ զձեռն առնուլ զսուրն և զնուլ զորդին իւր. Ծննդ. ԻԲ. 10:

վիճակին. որ աչք՝ փոքր-ինչ պատասուաղ՝ արիւն չը հեղուր, որ սիրտ կարող է դիմանալ և չը նուաղիլ. Դողգոթա լեռը կոկսի դողալ. որովհետև Քրիստոսի խաչելութեան պատկերը սկսաւ նկարուիլ: Արդ՝ Աբրահամ սրտին խորքէն ապաչելով (ով Տէր, ընդունէ պահանջածդ պատարագը) սուրը ուժգին կերպով Իսահակայ պարանոցին զարնելու ատիճան մի շարժում արածին պէս՝ իսկոյն երկինքէն ձայն մի կը լսուի, հրեշտակը կապազակէ ասելով. «Աբրահամ, Աբրահամ, մի՛ դիպչիր պատանեկիդ, ձեռքդ եա քաշէ»· իբրև թէ ասել կը կամենայ—սուրը թո՛ղ, արածդ պատարագն ընդունելի եղաւ, ծառայութիւնը կատարեալ է, հնազանդութիւնը գոհացուցիչ և բաւական է, սէրդ անթերի տեսնուեցաւ: Նկատէ, ինչպէս որ Իսահակը զոհ մատուցանել ուզած ատեն երկու անգամ Աբրահամու անունը կուտայ, նմանապէս այս անգամ էլ երկիցս կոչմամբ՝ պատարագին մեծապէս ընդունուած լինելը կը յայտնէ:

Իրաւ է որ Աբրահամու հաւատարմութիւնը Աստուծոյ յայտնի էր, սակայն այսպիսի մի մեծ գործ՝ զոր Աբրահամ կատարեց, բոլոր աշխարհին յայտնի լինելով, մարդիկ անտի խրատ առնելու

1. Կոչեաց զնա հրեշտակ Տեառն յերկինից՝ և ասէ, Աբրահա՛մ, Աբրահա՛մ... մի՛ մերձ զձեռն քո ի պատանեակդ. Ծննդ. ԻԲ. 11:

համար, հրեշտակը կասէ—հիմայ գիտցայ որ Աստուծմէ կը վախնաս[1], այսինքն քու առաքինութիւնդ հիմայ յայտնեցի աշխարհի: Որովհետև այս գործին ոչ միայն երկիրն ու երկինքը հանդիսատես կը լինին, այլ և բոլոր հրեշտակները պահապան կը լինին, այլ և բոլոր հրեշտակները պահանջօք կը դիտեն ու կզմայլին: Այս պարագային մէջ Աստուած Աբրահամու կամաց հաւատքը իբր պատարագ ընդունելով Իսահակը նոր ի նորոյ իրեն պարգեւեց:

Այո՛, Աբրահամ սրով Իսահակը չը մորթեց, և սա էլ արիւն չը թափեց, բայց երկուքն էլ իրենց վարձքը չը կորուսին: Որովհետև, եթէ Աստուած չարգելէր, գործնականապէս զոհը պիտի կատարուէր: Վասնորոյ Աբրահամ յատկապէս Աստուծոյ սիրելի, և Իսահակ ևս յատկապէս Աստուծոյ ծառայ կոչուեցան[2]: Երբ Աբրահամ սուրը ձեռքէն թողուց, տեսաւ որ Սաբեկայ ծառին վրայ եղջիւրն խոյ մի կախուած է, զոր իսկոյն առնելով ողջակէզ մատոյց, և Իսահակ Աստուծոյ պատրաստած ծառայն եղաւ:

Թէպէտ և յառաջագոյն խոստում եղած էր Աբրահամու թէ իւր սերունդը պէտք է ածի ու բազմանայ, բայց այս անգամ Աստուած երդմամբ

1. Այժմ գիտացի թէ երկիւղած ես դու յԱստուծոյ. Ծննդ. ԻԲ. 12:

2. Վասն Աբրահամու սիրելւոյ քո, և վասն Իսահակայ ծառայի քոյ. Գանկ. Գ. 35:

կը խոստանայ, որ նորա դաւակները երկնից աստղերուն և ծովու եզերքի աւազին պէս անթիւ պիտի լինին։ Այն աստեն Նահակին տարիքը քանի՞ էր արդեօք։ Ս. Գրոց մէջ գրուած չէ թէև, բայց կը կարծուի թէ քսան ու հինգ տարիկան կար։ Այսպիսի մի մեծ դէպք՝ որ Գոլգոթա լերան վրայ տեղի ունեցաւ, ինչպէս նաև Աստուծոյ աչքին, որ առ մարդիկ, չը մօտցնելու համար, մանաւանդ որ յետ ժամանակաց Մ՚եսիան այնտեղ խաչին վրայ բարձրանալը ներկայ տեսածի պէս, այն տեղին անունը «Տէր կտես» դրաւ, որ միշտ պատմեն թէ այն լերան վրայ Աստուած երևեցաւ։ Տես հիմայ և խրատ առ. Աբրահամ մի զաւակ նուիրեց Աստուծոյ սիրոյն, բայց Աստուած նորա փոխարէն երկնքի աստղերուն և ծովու աւազին նման անհամար զաւակներ կը խոստանայ անոր։ Նմանապէս այն մարդը՝ որ Աստուծոյ սիրոյն համար երկրաւոր հաճոյքն ու մեծութիւնը կարհամարհէ և կը թողու, Աստուած անոր աղքատութեան անվախճան երանութիւնը կը խոստանայ։ Նա՝ որ իւր անձը և երկրաւոր բանները Աստուծմէ առաւել կը սիրէ, մեռած ատեն դանոնք թողլէն զատ՝ գրաւոր փաստերէն էլ կը զրկուի[2]։

1. Կոչեաց Աբրահամ զանուն տեղւոյն այնոյնիկ Տէր երեւեալ. Ծննդ. ԻԲ. 14։

2. Ոը սիրէ զանձն իւր՝ ապձառիէ զնա, և որ ատեայ զանձն իւր յաշխարհիս յայսմիկ, ի կեանսն յաւիտենականս պահեսցէ զնա. Ցովհ. ԺԲ. 25։

Այսու ամենայնիւ, չէ թէ երկրաւոր հաճոյքն ու մեծութիւնը թողլով մարդս կարօտութեան մէջ թշուառ վիճակի կենթարկուի, այլ մանաւանդ առաւել մեծ հաճոյք և մեծութիւն կը գտնէ։ Որովհետև մեծ հաճոյք՝ մտքի անպորսութիւնն է, և ճշմարիտ մեծութիւն՝ աշխարհային իրաց կարօտ չը լինելն է։ Քանի որ անոնք մարդէն ստորին և մարդուն համար ստեղծուած լինելով, կարող չեն մարդը ուրախ և երջանիկ անել, վաստնոյց անոնց վրայ յոյս դնողը մարդկութեան պատիւը կորսնցնելով՝ իւր անուան արատ կը բերէ։

Եթէ փառաւորուիլ և զուարթանալ կը կամիս, Աստուծոյ յուսա՝ զոյն սիրէ, նորա հրամանին հնազանդէ. զի նա՝ ամենէն մեծ և ամենակարող լինելով զինքը սիրողը կը փառաւորէ և կը հանգստացնէ[1]։ Սակայն մի՛ կարծեր թէ մարդուս երկրաւոր պիտոյից համար կարևոր եղած բաները ձեռք բերելը յանցանք է, ո՛չ, քաւ լիցի, այլ միայն ամբողջ սէրդ անոնց մի՛ տար, և զանոնք Աստուծմէ առաւել մի՛ սիրեր, մանաւանդ ի պատահել հարկին, ի սէր Աստուծոյ զանոնք զոհել գիտցիր։

Որովհետև, ինչպէս որ անոնք քեզ համար

1. Եկայք առ իս ամենայն վաստակեալք և բեռնաւորք, և ես հանդուցից զձեզ. Մատթ. ԺԱ. 29։

ստեղծուած լինելով ըեզ կը ծառայեն, նմանապէս՝ դուն ևս Աստուծոյ համար ստեղծուած լինելով, մեն կերպով պարտական ես հաւատարմութեամբ անոր ծառայել, և նորա պատիւը պահելով՝ ի հարկին նորա սիրոյն զոհուիլ, այս է մարդկութեան ամենաէական պայմանը:

Հարց.— Ժ.Ը.

Ինչու Աստուած հրամայեց Աբրահամու, որ Իսահակը զոհ մատուցանէ:

Պաս. Աբրահամու հաւատքն ու հաւատարմութիւնը բոլոր աշխարհի յայտնելու համար: Որովհետև Աբրահամ ազգաց բազմաց հայր պէտք է կոչուէր, ուստի նորա հաւատքին ի սփիւռս աշխարհի հռչակուիլը յոժ կարևոր էր, որպէս զի ամեն մարդ անորմէ օրինակ առնելով նորա բռնած ուղղութեան ճանապարհէն ընթանայ [1]:

Մանաւորապէս, որովհետև բովանդակ մարդկային ազգը Աբրահամու զաւակով պէտք է օրհնուէին, և այս զաւակը՝ ինքն Քրիստոս էր [2], որոյ պատկերն էր Իսահակ: Եւ դարձեալ, ճշմարիտ է որ Աբրահամ իւր ամբողջ կենաց մէջ փորձուեցաւ վերջ չը ճնաց, բայց այս անգամ նորա արդարութիւնն ու հաւատարմութիւնը այնպէս պայծառ փայլեցան, որ երկրիս վրայ առաքինութեան մի տիպար լինելէ զատ, նաև բոլոր մարդոց մեծ յոյս և մխիթարութիւն եղաւ [1]:

Որովհետև, եթէ մարդն, որ բնութեամբ ակար է, Աստուծոյ սիրոյն համար իւր որդին չը խնայեց, միթէ մարդոց փրկութեան համար Աստուած՝ իւր որդին կը խնայէ: Արդարև նշանաւոր է սուրբ Աւետարանի մէջ այն պատգամը թէ «ինչպէս կը կամիք որ մարդիկ ձեզ անեն, դուք ևս նոցա այնպէս արէք»: Բայց չը կարծուի թէ Աբրահամու այս գեղեցիկ գործին համար Փրկիչը յաշխարհ եկաւ. նա արդէն մարդկային ազգը մեղաց սարկութենէն փրկելու պէտք է գար, իսկ այս անցքը նորա գալստեան օրինակ եղաւ, ինչպէս վերը յիշուեցաւ:

Վասն զի Աստուած այն աստիճան սիրեց մարդը, որ նորա փրկութեան համար իւր Միածին որդին՝ զԲանն Աստուած յաշխարհ ղրկել հաճեցաւ [3]: Մարդն էլ այն աստիճան պարտական

---

1. Եթէ որդիք Աբրահամու էիք՝ գործէր Աբրահամու գործէիք. Յովհ. Ը. 39:
2. Եւ յառակս ընկալաւ զնա. Եբրայ. ԺԱ. 19:

1. Աբրահամու խոստացան աւետիքն և զաւակի նորա, և ո՛չ ասէ զաւակաց երբև զբազմաց, այլ երբև զմիոյ, թէ և զաւակի քումմ, որ է Քրիստոս. Գաղատ. Գ. 16:
2. Որպէս կամիք թէ արասցեն ձեզ մարդիկ, այնպէս արասջիք և դուք նոցա. Ղուկ. Զ. 31.
3: Զի այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ մինչև զՈրդին իւր Միածին ետու. Յովհ. Գ. 16:

մեաց Աստուծոյ, որ Լթէ հարկը պահանջէ, նորա սիրոյն և փառաց համար իւր անձը պէտք է զոհէ։

Այս պատճառաւ հաւատոյ համար մեռնողները վկայ կը կոչուին։ Որովհետև իրենց արեամբ կրօնի ճշմարտութիւնը կը հաստատեն։ Քանի Աբրահամու կինը՝ Սարրան 127 տարեկան մեռնելով՝ Աբրահամ գերեզմանի համար յատուկ տեղ գնեց Քեբրոնի մէջ ուր թաղուեցաւ Սարրա։ Աստ նկատել պարտ է, որ Աբրահամ Քանանու երկրին մէջ այն աստիճան փառքի հասած էր, որ իբրև թէ յատուկածակոյս կողմանէ թագաւոր կարգուած լինելը[1], ամեն մարդ զայն կը յարգէր ու կը մեծարէր, այսու ամենայնիւ սեփական հող գնելով տուն չը շինելը, այլ՝ վրանարնակ իբրև պանդուխտ շրջելով կապրի, միայն թէ Սարրան թաղելու համար գերեզմանատեղի կը գնէ։ Վասն զի երկրաւոր կալուածք կամ սեփականութիւն մարդուս համար ճշայուն և տևական չը լինելով, Աստուծոյ արքայութեան անվախճան ժառանգութեան ըղձանօք կը տոչորէր միշտ։

Արդարև Աբրահամու խիստ շատ բարիք պարգևեցաւ ի վերուստ, բայց նա էլ Աստուծոյ պարգևած բարիքն ու երախտիքը ճանաչելով ամեն կերպով հնազանդեցաւ նորա պատուիրանաց, և

1. Թագաւոր յԱստուծոյ ես ի մէջ մեզ։ Ծննդ. ԻԳ. 6.

այսպէս երկու աշխարհաց մէջ ևս փառաւորուեցաւ։ Ուստի էլ եթէ Աստուծոյ քով պարգևած բարիքը կը ճանաչես՝ պիտի փառաւորուիս երկրաւոր և երկնաւոր կենաց մէջ։ Վասն զի Աստուած չէ թէ միայն Աբրահամը հրաւիրեց որ իւր բնիկ երկիրը, ազգը և հօրը տունը թողլով Ներսաղէմի երկիրը գնայ, այլ նաև բոլոր մարդիկները կը կոչէ երկնային Ներսաղէմը գնալ և ժառանգել[2]։

Սակայն չէ թէ ամենքն էլ Աբրահամու նման պէտք է երկիր կամ տեղ փոխեն, այլ՝ մեզաց պատճառ ամեն ինչ թողլով՝ առաքինութեան ճանապարհով ընթանան դէպ ի հոգևոր կատարելութիւն, որպէս զի՝ ինչպէս որ Ներսաղէմի երկիրը Աբրահամու տրուեցաւ, այսպէս էլ արքայութեան փառք ու վեճութիւնը բոլորին շնորհուի. վասն զի Ներսաղէմը՝ արքայութեան օրինակ է։

Հարց. ԺԹ.

Սարրա մեռնելէն զկնի Աբրահամ նորէն ամուսնացաւ։

Պաս. Ամուսնացաւ, բայց առաջ Իսահակը կամուսնացնէ։ Քանանու ազգէն իւր որդւոյն հա-

2. Զի այն է բաւն և ընդունելն առաջն Փրկչին մերոյ Աստուծոյ, որ զամենայն մարդիկ կամի՝ զի կեցցեն և ի գիտութիւն ճշմարտութեան եկեսցեն. Ա. Տիմոթ. Բ. 4։

մալ չուզեց աղջիկ առնուլ այլ՝ իւր հաւատարիմ Եղիազարը (որ ատենօրդի հարցման մէջ յիշուեցաւ) իրենց ծովորութեան համեմատ երդուեցնելով կը դրկէ Յառաջու երկիրը մեծամեծ ընծայիւք, իւր ցեղէն մի աղջիկ բերելու համար, որ Իսահակայ կին լինի։

Եղիազար ըստ այմ հրամանի գնալով Յառաջու մերձ մի աղբիւրի մօտ կը կենայ, ուր ապրիկներ ջուր առնելու կուգային, և առ Աստուած աղօթելով՝ միտքը կը դնէ որ եկող աղջկանց մէկէն ջուր ուզէ, և եթէ այդ աղջիկը իրեն ջուր խմցնելէն յետոյ ուղտերուն ևս ջուր խմցնեմ ասէ, նա լինի կին Իսահակայ։ Ցիշեալը այս խորհրդին վրայ էր, երբ Աբրահամու ցեղէն Բաթուէլի դուստր Ռեբեկա՝ սափորն ուսին վրայ աղբիւրը գալով սափորը կը լեցնէ, և Եղիազար աղջիկն ջուր ուզածին պէս նա էլ թէ իրեն և թէ ուղտերուն էլ ջուր խմցնեմ ասելով հրկէն ջուր կը քաշէ ու կը խմցնէ։

Ասոր վրայ Եղիազար ուրախանալով շնորհակալ կը լինի Աստուծմէ, որ իւր խնդիրքն ընդունեց։ Ցետոյ հարցնելով որուն դուստրը լինելը իմացածին պէս բերած ընծաներէն Ռեբեկայի ականջին ոսկի օղ և ձեռքին ապարանջան կը դնէ։ Աղջիկը տուն գնալով եղբօրը Լաբանին կը պատմէ եղելութիւնը, որ Եղիազարը տունը հրաւիրելով խնդիրը կը հասկանայ, որով երկուց կողմանց հաւանութեամբ Եղիազարը Ռեբեկան առնելով կը բերէ և Իսահակ նորա հետ ամուսնանալով մխիթարուեցաւ իւր մօր Սարրայի մահուան վրայ։

Հոգևոր մտքով Եղիազարը սուրբ առաքելոց, Ռեբեկան՝ սուրբ եկեղեցւոյ օրինակ են, իսկ օղ և ապարանջանը՝ քրիստոնէից առաքինական և բարի գործքերն են, զոր կը գործեն հաւատով ի Ցիսուս Քրիստոս և նորա պատուիրանաց ու օրինաց հնազանդելով[1]։

Որովհետև Աբրահամ շատ ազգաց հայր պէտք է լիներ, ուստի (Աստուծոյ հրամանաւ) իւր ապրանքն՝ Քետուրայի հետ ամուսնանալով վեց զաւակներ ունեցաւ անկէ։ Բայց ինչպէս առաջ Իսմայէլն ու նորա մայրն Ագարը բաժնած էր իրմէն, նմանապէս Քետուրային ծնած զաւակները իւր մօտ չը պահելով արևելեան կողմերը կը դրկէ պանդուխտ, որպէս զի աճելով՝ իւրաքանչիւրը մի մի ազգ կազմէ։ Քանզի Աբրահամու եղած խոստումը՝ Իսահակայ վրայ կատարուելու էր, ազատներն եղած զաւակունք՝ իրենց մօր անուամբ կոչուեցան։ Աբրահամ 175 տարեկան լինելով մեռաւ, զոր թաղեցին Իսահակ և Իսմայէլ Քերրոնի մէջ Սարրայի մօտ։ Իսահակ չորը օրհնութիւնը, փառքն ու

1. Գիտեմք զամենայն միտս ի հնազանդութիւնն Քրիստոսի. Բ. Կորն. Ժ. 5։

Նախանձեցուցանեմ զձեզ ի նախանձն Աստուծոյ. զի խօսեցայց զՁեզ. եւն. Բ. Կորն. ԺԱ. 3։

ստայուածքը ժառանգելով օրհնուհյս աւ յԱստուծոյ:

Հարց. Ի.

Իսահակ քանի՞ տարեկան էր, երբ ամուսնացաւ:

Պաս. Քառասուն տարեկան: Բայց Աստուած այնպէս կամեցաւ որ ինչպէս Աբրահամու երկար աաեն զաւակ չեզաւ, նմանապէս 19 տարիներ անցան առանց Իսահակայ զաւակ լինելու. և սակայն նա չէր յուսահատելով միշտ կաղօթէր առ Աստուած, որ իրեն որդի պարգևէ[1]:

Ցիրաւի, ինչպէս վերը յիշուեցաւ, Աբրահամու տրուած խոստումը Իսահակաւ կատարուելու էր, և, հետևաբար, նա շատ զաւակներ պիտի ունենար, քանի որ Աստուած հաւատարիմ է իւր խոստման, բայց խոստման գործադրութեան համար կը կամի որ մարդը իւր կողմէն կատարեալ հաւատքով ենդրէ, որպէս զի նորա յոյսը միշտ Աստուծոյ վրայ լինի, և Աստուծոյ՝ բարերար և շնորհատու լինելը յայտնուի[2]: Եւ ահա Իսահակ այնչափ տաեն առանց Աստուծմէ յոյսը կտրելու՝ աղաչանք և խնդիրք անելովը՝ Աստուծոյ ողորմութիւնն ու Իսահակայ հաւատքը յայտնի եղան:

1. Եւ ազաչէր Իսահակ զՏէր վասն Ռեբեկայ կնոջ իւրոյ՝ զի ամուլ էր. Ծննդ. Իե. 21.

2. Որպէս ասի. նախատահմանութիւնն աղօթիւք կատարի:

Ամուսնութեան քսաներորդ տարին՝ Ռեբեկա յղացաւ, արդասիքը երկուորեակ լինելով մանուկներն իրենց մօր արգանդին մէջ իրարու հետ պատերազմ մղելու պէս շարժուելիներ անելով՝ մայրը շատ անհանգիստ կը լինի: Նա ելլալէն առջև գնալով Աստուծոյ հարցնելուն՝ պատասխան կստանայ որ երկու ազգ կայ արգանդիդ մէջ, և երկու ժողովուրդներն բաժանուելով՝ իրենց կըլսաերոյն պիտի ծառայէ[1]: Արդարև ժամանակը լրանալուն՝ առաջ Եսաւ և յետոյ Յակոբ կը ծնին: Եւ ինչպէս որ դեռ չծնած միմեանց հակառակ էին, նոյնպէս ծնելու ատեն՝ մէկը միւսէն առաջ ծնելու փափաքով, Յակոբ Եսաւի գարշապարէն կը բռնէ ձեռքով, որպէս զի պոյն նա կեցնելով առաջ ինքը ծնի[2]: Այսպէս նոքա կռուոյն հիմը մօր արգանդին մէջ գնելով թէ իրենց և թէ վերջէն իրենց ցեղերու միջև թշնամութիւն միշտ անպակաս եղաւ: Վասն զի Յակոբ՝ որ Եսաւէն յետոյ ծնաւ, անդրանկութեան պատիւը գրաւելուն համար, Եսաւայ բարկութիւնը իւր վրայ հրաւիրեց: Բայց նայէ թէ գործը ի՞նչ եղանակաւ ելլի ունեցաւ:

1. Եւ գնաց հարցանել ի Տեառնէ, և ասէ ցնա Տէր, երկու ազգք են յարգանդի քումմ... երէցն կըսաերոյն ծառայեսցէ. Ծննդ. Իե. 22:

2. Եւ ձեռն նորա ունէր զգարշապարէ Եսաւայ. Ծննդ. Իե. 25:

Որովհետև Եսաւ մի վայրագ և անգութ անձ էր, միշտ դաշտաց մէջ որսորդութեամբ կը պարապէր, մինչ ընդ հակառակն Յակոբ տունը մնալով՝ մի օր ոսպէ ապուր եփելով կերած ատեն Եսաւ դաշտէն եկաւ սաստիկ անօթի և Յակոբէն ապուր խնդրեց. նա էլ յանձն առաւ տալ, պայմանաւ որ անդրանկութեան իրաւունքը իրեն վաճառէ։ Եսաւ կը խոստանայ վաճառել, վասն զի խիստ սոված լինելով կը կարծէ թէ՝ իսկոյն պիտի մեռնի, եթէ չուտէ. ուստի Յակոբ երդմամբ ևս սոյն առևտուրը հաստատել տալով հաց և ապուր կուտայ և փոխարէն անդրանկութիւնը ծախու կառնէ։

Ծրատ առ Եսաւայ Թշուառ վիճակէն. անդրանկութիւնը բնութեան պարգեւը լինելով ոչ ոք կարող էր զայն իւր ձեռքէն խլել, բայց իւր որկրամոլութեան և անհամբերութեան, և առաւել ևս, Աստուծոյ պարգեւը չը ձանաչելուն համար կորնցուց զայն[1]։ Մի կարծեր թէ այս մասին Յակոբ անիրաւութիւն գործեց, որովհետև յայտնի դաշինքով երդմամբ և իւր հաւանութեամբ ու կամքով ծախեց Եսաւ անդրանկութիւնը, երբ ապուրը մէջ տեղն էր։ Թէև նա կարևորութիւն տալ չուզեց այս սակարկութեան, բայց երդուելուն համար, Աստուած՝ արդարութեան տումարին մէջ

1. Եւ անարգեաց Եսաւ զանդրանկութիւնն. Ծննդ. Իե. 34։

արձանագրեց նոցա դաշինքը, որով Եսաւ իրաւամբ անդրանկութեան իրաւունքը կորսնցնելով հօրը օրհնութենէն զրկուեցաւ։

Վասն զի այն ժամանակի պահանջման համեմատ, անդրանիկ զաւակը՝ հինգ կէտերու մէջ իւր եղբարց վրայ առաւելութիւն ունէր։ Առաջին կարող էր իշխել և հրամայել եղբարց իրրև ներկայացուցիչ հայրական իշխանութեան, երկրորդ՝ հօր սեպհական ժառանգութիւն կատարեալ, քանի որ մինչև յարդ հրէից սովորութիւնն է. երրորդ՝ իւր տան մէջ քահանայի պէս էր, չորրորդ՝ հայրը մեռած ատեն՝ անդրանիկ զաւկին յատուկ օրհնութիւն կուտար, որ շատ յարգի սեպուած էր իրենց մէջ. վերջապէս հինգերորդ՝ հանդերձով ևս միւս եղբայրներէն կը տարբերէր, ասոր համար էր որ Ռեբեկան՝ Եսաւի զգեստները Յակոբին հագուեցուց, կասուբ։

Հարկ է իմանալ որ Յակոբ ոչ թէ նիւթական հարստութեան համար արաւ այս բանը, այլ հոգևոր օրհնութեան արժանի լինելու համար։ Վասն զի, զոր օրինակ մարմինը հացով կը սնանի, նոյնպէս հօր և մօր օրհնութեամբ հոգին կը սնանի, այս պատճառաւ մարմնաւոր սնունդը կուտայ, որ ի փոխարէն հոգևոր սնունդն առնու։ Ուրեմն է որ եղբէն զղջալով լացաւ ու շատ ողբայ իւր կորստեան վրայ, այլ ինչ օգուտ, ոչ ևս կարողացաւ կորուսածը գտնել։

Այս միջոցին սով պատահեցաւ Իսահակ թէ և կամեցաւ Եգիպտոս գնալ, սակայն Աստուած երևնալով ասաց—Եգիպտոս մի՛ երթար, այս տեղերը քեզ և քու զաւակացդ պիտի տամ, և քեզի օրհնելով կը խոստանայ երկնից աստղերուն նման բազմացնել նորա զաւակները. Իսահակ Աստուծոյ հրամանը խնամալով Եգիպտոս չգնաց, այլ բոլոր իւր ընտանիքով Գերարայի Թագաւոր Աբիմելէքին երկիրն երթալով անդ բնակեցաւ: Ժողովուրդը Ռեբեկայի մասին հարցուցած ատեն, քոյրս է կասէր:

Որովհետև Ռեբեկան շատ գեղեցիկ էր, մի՛ գուցէ նորա համար զինքը մեռցնեն, այս պատճառաւ սոյն պատասխանը կուտար Իսահակ: Յաքէն Աբիմելէք լսելով որ նորա կինն է, թէպէտ մեզադրեց զայն, բայց իւր մարդոց էլ պատուիրեց որ նոցա չարիք չը հասցունեն, ապա թէ ոչ, մահուամբ կը պատժուին: Իսահակ միջոց մը Գերարա ճեպաւն սկսաւ երկիրը մշակել, և Աստուծոյ օրհնութեամբ այնչափ առատ արդիւնք եղաւ, որ միոյն փոխարէն հարիւր ստացաւ: Նմանապէս իւր անասունքն այնչափ շատցան, որ բնակիչքը նախանձելով՝ նորա հօր Աբրահամու փորել տուած հորերը հողով լեցուցին:

Աբիմելէք Թագաւորն էլ՝ Իսահակայ ստացուածոյ շատնալը տեսնելով՝ կը խնդրէ որ այդ կողմէն հեռանայ, զի գուն՝ մեզմէ առաւել զօրաւոր եղար, կասէ: Նա էլ գնալով՝ ձորի մը մէջ

փորել տալով ջուր կը գտնէ, բայց բնակիչքն առնախանձու նորա փորել տուած բոլոր հորերը կը գրաւեն: Իսահակ կռիւ չախորժելով նոցա սոյն անիրաւութեանց կը համբերէ, մինչև որ ինքնին կը դադարին այլ ևս իրեն ձեռնասէլ: Աստուած նորա համբերութիւնը վարձատրելու և զինքը մխիթարելու համար կը քաջալերէ որ չը վախնայ, և յառաջագոյն ասած խոստումը կը կրկնէ. որուն համար Իսահակ սեղան կանգնելով շնորհակալութիւն կը մատուցանէ Աստուծոյ:

Իսահակ օր քան օր համբաւի և փառաց տէր դառնալով, Աբիմելէք Թագաւորը նորա մօտ կուգայ իւր ժեծամեծաց հետ, որ դաշնակցելով միշտ իրարու հետ բարեկամ լինին: Իսահակ կը պատասխանէ թէ դուք զիս չընդունեցիք, հիմայ ինչո՞ւ համար կուգաք, նոքա խոնարհաբար կասին թէ «տեսանք որ Աստուած քեզ հետ է, այս պատճառաւ կը փափագինք ուխտ և դաշն դնել քեզ հետ, որ մեզ ոևէ չարիք կամ ձեռս չը հասցունես, ինչպէս որ մենք քեզ չարիք չանելով խաղաղութեամբ արձակեցինք»:

Այս առթիւ Իսահակ նոցա մի կոչունք տալով յաջորդ օրը միմեանց հետ կուխտադրեն և կը դաշնակցին, որով Աբիմելէք կը գնայ իւր տեղը: Իսահակ այնտեղ հոր փորելով ջուր կը գտնէ և տեղոյն անունը կանուանէ Ջրհոր երդման: Կը կարծուի թէ սոյն Աբիմելէքը Աբրահամի ժամա-

նակին թագաւորող Աբիմելէքը չէ. քանզի Աբիմելէք բառը՝ Գերարայի թագաւորաց յատուկ լինելով իբրև մի տիտղոս, ով որ անդ կը թագաւորէր՝ Աբիմելէք տիտղոսը կտանար ըստ իրաւանց և ըստ այն ժամանակի սովորութեան։

Հարցում ԻԱ.

Յակոբ հօր օրհնութիւնը ինչպէս առաւ։

Պաս. Իսահակ ծերացած լինելով աչքերը բոլորովին տկարացած էին ու չէր տեսնէր, ուստի կամեցաւ ըստ սովորութեան անդրանիկին յատուկ եղած օրհնութիւնը տալ Եսաւին։ Սա՝ որսորդ լինելով միշտ որս կը բերէր հօրը. բայց այս անգամ յատկապէս որս կը խնդրէ, որ իբր օրհնութիւնը տայ, ուստի Եսաւ կը գնայ որսը բերելու։ Բայց որովհետև Ռեբեկա Յակոբը Եսաւէն աւելի կը սիրէր, Իսահակայ միտքը իմացածին պէս Յակոբին կասէ—գնա երկու ուլ բեր, որ խորովեմ, և տար հօրդ որ ուտէ և քեզ օրհնէ։

Յակոբ՝ Եսաւին մատաղ լինելը մտաբերելով կը վախնայ, որ չը լինի թէ հօրը մօտ խաբեբայութեան կերպարան առնելով, փոխանակ օրհնութեան՝ անէծք ստանայ։ Ռեբեկան կը պատասխանէ որ այդ անէծքը իմ վերայ թող լինի, դու գնա բեր. նա էլ ուլերը կը բերէ, զորս Ռեբեկա կը խորովէ, և Եսաւայ պահնամի զգեստները Յակոբին կը հագուեցնէ, և որպէս մի բոլորովին

Եսաւայ նմանի՝ ուլերին—ուլի մորթը—Յակոբի պարանոցին և ձեռքերուն վրայ կանցուներ, որ եթէ Իսահակ շօշափէ էլ, կարող չը լինի իմանալ ով լինելը։

Յակոբ խորտիկը տարաւ հօրը, որուն՝ դու ով ես հարցման կը պատասխանէ թէ քու անդրանիկ որդիդ Եսաւն եմ, հրամանիդ համեմատ որ բերի, էլ, կեր և օրհնէ զիս։ Իսահակ զարմանօք կը հարցնէ թէ՝ ինչ շուտ գտար, որդեակ, որուն Յակոբ այս խորհրդաւոր պատասխանը կուտայ թէ Աստուած այսպէս պատրաստեց, գործը Աստուծոյ կամայ յանձնելով։

Թէպէտ և Իսահակ նորա ձայնէն կասկածելով՝ մտածեց, որ տեսնեմ գո՞ն ես որդիս Եսաւը, և ձեռքով զայն շօշափելէ յետոյ՝ ձայնդ Յակոբայ ձայնին, իսկ ձեռներդ Եսաւայ ձեռաց կը նմանին[1], ասաց. բայց թէ զգեստուց հոտէն և թէ ուլինիկ մազերէն, որ ձգուած էր Յակոբայ ձեռաց և պարանոցին վրայ չը կարողացաւ լաւ զանազանել, ուստի և խորտիկը ուտելէն և գինին խմելէ յետոյ՝ անդրանիկ որդւոյ յատուկ օրհնութիւնը տուաւ Յակոբայ։

Պէտք չէ ասել թէ Յակոբ խաբից իւր հայրը, զի յառաջագոյն անդրանկութիւնը Եսաւէն

---

1. Ձայնդ՝ ձայն Յակոբայ. և ձեռքդ՝ ձեռք Եսաւայ. Ծննդ. Իէ. 22։

գնած լինելով, իրաւամբ անդրանիկը կը համարուէր: Նոյնպէս մի՛ կարծեր թէ Ռեբեկա զաւակներէն միոյն բարիք կամեցած աներ, մեւսին անիրաւութիւն արաւ: Այդպիսի կարգադրութիւնը քան կրեւութիւն միայն Ռեբեկային է, բայց նա պրպուած և նկրշնուած է ի վերուստ: Վասն զի (ինչպէս որ քանիերորդ հարցման մէջ յիշուեցաւ) Աստուած յայտնած է անոր յառաջագոյն թէ մեծ որդին՝ պէտք է ծառայէ փոքրին, մանաւանդ որ Մեսիան Ցակոբի ցեղէն գալ սահմանուած լինելուն՝ հայրական օրհնութիւնը անոր կը վայելէր:

Դուն մի՛ նայիր ո՛չ Իսահակայ կամեցողութեան և՛ չ Նաւայ որսի գնալուն. այլ՝ նայէ Աստուծոյ ողորմութեան[1]: Այո՛, Իսահակ առաւել կը սիրէր Նաւը, բայց Աստուած Ցակոբը սիրելուն՝[2] անդրանիկ օրհնութիւնը անոր արժան տեսաւ: Այսպէս Ցակոբ օրհնութիւնը ստանալով Իսահակայ ժառէն գուբս ելնելէ յետոյ, Նաւ ևս իւր եփած խորտիկը հօրը բերաւ որ ուտէ:

Նայէ Իսահակայ առաքինութեանը, որ լսելով Նաւայ նոր վերապարձը որսէն, և առաջ օրհնու-

1. Ո՛չ ըստ այնմ՝ որ կամիցի, և ո՛չ ըստ այնմ՝ որ ընթանայցէ, այլ ըստ Աստուծոյ՝ որ ողորմի. Հռոմ. Թ. 16:

2. ԶՑակոբ սիրեցի և զԵսաւ ատեցի. Հռոմ. Թ. 13:

թիւն առնողը Ցակոբ լինելը իմանալով՝ թէպէտ և շատ զարմացա[1], բայց երբէք Ցակոբին չի նեղացաւ, այլ՝ Աստուծոյ ապաւինելով կատարուած գործը նորա գաղտնի խորհրդոյ կը վերագրէ: Ճշմարիտ է որ իրողութիւնը Իսահակայ դիտաւորութեան հակառակ էր, ինչու որ Նաւը օրհնել կամեցած աներն՝ Ցակոբը օրհնեց. Սոյն խորհրդաւոր կարգադրութիւնը Աստուծմէ դիտնալով, տուած օրհնութիւնը կը կրկնէ և կը հաստատէ Ցակոբի վրայ, առաջ՝ չը դիտութեամբ օրհնեց Ցակոբը, իսկ յետոյ դիտնալով կօրհնէ զայն[2]:

Իրաւ ամէն Նաւին թշուառ վիճակէն. վասն զի ախորժակով կերած ոսկէ ապուրին ճաշակը նոր զգալով կսկսի բարձր ձայնիւ լալ և ողբալ, և մի և նոյն ժամանակ Ցակոբի մասին գանգատիլ: Անդրանկութեան օրհնութենէն յայսբ կարած՝ զիս էլ օրհնէ, ասելով, հեծեծանօք լալ սկսելուն՝ Իսահակ թէև հայրական կարեկցութենէ դրդեալ օրհնութիւն կուտայ փոքր ինչ, բայց անդրանկութեան օրհնութիւնը Ցակոբի վրայ կայացած լինելով, Նաւը ծառայ կը կարգէ Ցակոբին[3]: Ասոր վրայ Նաւ սաստիկ բարկանալով միտքը

1. Զարմացաւ Իսահակ զարմացումն մեծ յոյժ. Ծննդ. ԻԷ. 33:

2. Օրհնեցի զնա, և եղիցի օրհնեալ. Ծննդ. ԻԷ 33:

3. Եղբօր քումդ ծառայեսցես. Ծննդ. ԻԷ. 40:

կը դնէ որ հօրը մահէն յետոյ Յակոբը մեռցուներ։

Նայէ դուն Եսաւայ չարութեանը. ամէն կերպով յանցաւոր լինելը յայտնի եղած առեն, իւր վիճակէս գոհ չէ, և ուրիշ եղանակաւ բարկութիւնը մեղմելու անկարող լինելով բռնական միջոցներու դիմել կը բաղձայ, իրր թէ Յակոբէն վրէժ առնելով մխիթարուի, միայն թէ չի խորհիր թէ հակառակորդին վրէժ առնելով մարդս կարող չէ մխիթարուիլ. ընդ հակառակն աւելի ցնաւութեամբ կը պատժուի։ Ահա այսպէս է իրենց վիճակէն գոհ չեղողներուն բոլորին կացութիւնը։ Փոխանակ իրենց յանցանքը ճանաչելով ղջումէ յայտնելու, վրիժառութեան լոզն կը տածեն, և առաւել մեծագոյն պատժոյ արժանի կը հանդիսանան։

Սակայն Ռեբեկա խոհական և հնարատէտ կինն էր, որ՝ երբ իմացաւ Եսաւայ չար միտքը, մի գուցէ երկու զաւակներէն միանգամայն զրկուի, կորոշէ Յակոբը Խառանու երկիրը իւր հօրօր Լաբանի մօտ ղրկել մինչև որ Եսաւայ բարկութիւնն անցնի, և Յակոբ՝ փոխանակ Քանանու ցեղէն աղջիկ առնելու, Խառանու երկրին մէջ ամուսնանայ։ Վասն զի Եսաւայ կիները Քանանացի լինելով Ռեբեկա զզուած էր անոնցմէ։ Այս պարագային մէջ, Ռեբեկան ոչ միայն Յակոբը վտանգէ, այլ նաև Եսաւը ոճիր գործելէ ազատ պահելու անհրաժեշտ իւր դիտաւորութիւնը Իսահակայ հաղորդեց, որ՝ իւր հաւանութիւնը տալով կը կոչէ Յակոբը, և

պատուիրելով որ Քանանացի աղջիկ չառնու, կը յորդորէ միանգամայն գնալ ի Խառան և անդ ամուսնանալ, և օրհնութեամբ կը ճամբէ։

Հաջորդ ԻԹ.

Յակոբ միայնակ գնաց ի Խառան։

Պապ. Այո՛, միայնակ գնաց։ Տրտում ու տխուր վիճակի մէջ, ցուպ ի ձեռին, քալելով աղքատի պէս կը գնայ։ Երբ արևը մայրը մանելով մութը կը սիրէ, դաշտին մէջ ամայի տեղ մի պառկելով կը քնանայ, որուն մահիճն էր հողը, իսկ բարձը՝ քար[1]։ Այստեղ ի միտ առ մարդոց խորհուրդներն ու Աստուծոյ կարգադրութիւնը։

Վասն զի Եսաւ՝ վրիժառութեան խորհրդով Յակոբը սպաննել կուզէ, Ռեբեկա՝ անզաւակ չը ձգելու խորհրդով Յակոբ յօտար երկիր ղրկելով Եսաւէն կը բաժնէ ու կը հեռացնէ, Իսահակ՝ Քանանացի աղջիկ չառնելու նպատակաւ Յակոբին հրաման կուտայ Խառան գնալ և ամուսնանալու։ Յակոբ կը հաւանի երթալ, որպէս զի Եսաւի չարութենէն ազատի։ Յիրաւի, սոցա իւրաքանչիւրը՝ մի մի առանձին խորհրդով գործեց։ բայց կը հաստատուի միևնոյն առեն որ Աստուած իւր անսահման ողորմութիւնը Յակոբին յայտնելու համար Խառան ղրկեց։

---

1. Առ ի քարանց տեղւոյն և եդ ընդ անարս նր, և ննջեաց ի տեղւոջն յայնմ. Ծննդ. ԻՀ. 11։

Սակայն Ճանապարհին մէջ և գնալու տեղը իրեն ինչ պատահելիքը չը դիանալուն համար Յակոբին սիրտը անհանգիստ է։ Ապահով կայ, ոմ Յակոբ, և հայրենիքդ Թողլով միայնակ ու առանձին ճնալուդ վրայ մի՛ տրտմիր. և մանաւանդ մի՛ վախնար, քանզի քո ապահովութեան համար երկնից հրեշտակները մեծ շարժման մէջ են և կը փափաքին սանդուղ դնելով յերկիր իջնել և քեզ ընկերանալ։

Արդարև Յակոբ այն գիշեր երազին մէջ տեսաւ որ սանդուղ մի երկրէն մինչև երկինքը բարձրացած է, որուն վրայ հրեշտակները կելնէին ու կիջնէին. Աստուած խօսելով իւր հետ կը մխիթարէ զինքը և կը քաջալերէ որ չը վախնայ, որովհետև իրեն հետ պիտի լինի և ամէն կերպով զինքը պահպանելով Քանանու երկիրը պիտի վերադարձնէ[1]։ Բացի այդ, Աբրահամու և Իսահակայ տրուած խոստումնք իրեն ևս կը լինին, թէ իւր սերունդը խիստ շատ պիտի ածի և բազմանայ, և թէ բոլոր մարդիկ նորա զաւակով՝ օրհնութեան պէտք է արժանանան։

1. Տես տեսիլ, և ահա սանդուղք հաստատեալ յերկրի, որոյ գլուխն հասանէր յերկինս, և հրեշտակք Աստուծոյ ելանէին և իջանէին ընդ նա, և Տէր հաստատեալ կայր ի նմա։ Եւ ասէ, ես եմ Տէր Աստուած Աբրահամու հօր քո, և Աստուած Իսահակայ, մի՛ երկնչիր... ահաւասիկ ընդ քեզ եմ. Ծննդ. ԻԸ. 12։

Ուշադրութիւն արա՛, Յակոբ բնիկ երկրէն, հօրէն և եղբօրէն բաժանուելով առանձին ճնալուն պէս, Աստուած զայն կը մխիթարէ որ չը տրտմի։ Ման պի նա՝ որ Աստուծոյ կը հաւատայ և կը յուսայ, Աստուած էլ իրեն հայր կը պահպանէ զայն, ու հրեշտակներն էլ իրեն եղբայր անոր ընկերակից կըլլինին, ինչպէս նաև երկինց արքայութիւնը իրեն ձգմարիտ հայրենիք անոր կը շնորհուի։ Յակոբ արթնցած առեն կը վախնայ և կը խոստովանի թէ «այս տեղ՝ Աստուծոյ տունն է և երկնից դուռը[1]»։

Ոյսվհետև հոգևոր իմաստով Յակոբ քնացած տեղն՝ Գողգոթա լերան, իսկ սանդուխը՝ սուրբ խաչին օրինակ և պատկեր կիմացուի։ Սոյն երազին վրայ Յակոբ մեծապէս մխիթարուելով շնորհակալութիւն կը յայտնէ Աստուծոյ, և իրեն բարձ դործածած քարը օծելով նշանագար կը անկէ. միանգամայն կառաջադրէ որ եթէ խաղաղութեամբ վերադառնայ, այն տեղ երկրպագութիւն մատուցանէ Աստուծոյ, և ինչ նիւթական կարողութիւն որ իրեն շնորհէ, տասանորդ տայ։

Յետոյ Ղառանու դաշտին մէջ մի ջրհորի մօտ հասնելով կեցաւ. բայց ջրհորին բերանը մեծ

1. Եւ ասէ, Տէր ի տեղւոջս յայսմիկ, և ես ո՛չ գիտէի։ Զահի հարաւ և ասէ, ահեղ է՛մն է տեղիս այս. և ո՛չ է սա՝ եթէ ո՛չ տուն Աստուծոյ, և այս է դուռն երկնից. Ծննդ. ԻԸ. 16։

քարով մի փակուած լինելով՝ մինչև որ ամբ հօտի հովիւները չը հաւաքուէին, կարելի չէր քարը վեր դունել։ Վասնորոյ Խառանցի հովիւներ իրենց հօտերուն այդ միջոցին անդ կսպասէին ու ուրիշներ էլ գան, և քարը վերցնելով հօտերուն ջուր տան։

Յակոբ Լաբանը հարցուց, և նորա յիշեալին վրայ տեղեկութիւն տալով ասացին թէ՝ ահա նորա աղջիկը Ռաքէլ դէպի մեզ կուգայ։ Արդարև այս միջոցին Ռաքէլ (որ հօրը ոչխարները կարածէր) կուգար ոչխարաց ջուր տալու. այն տեն Յակոբ յիշեալ քարը հորին բերանէն մէկէն քաշելով նորա ոչխարները կը ջրէ։ Միանգամայն աղդականութեան սիրով կսկսի ասասիկ լալ, ու Իսահակայ որդին լինելը կը յայտնէ Ռաքէլին։ Նա ևս գնալով Յակոբին գալուստը Լաբանին կիմացնէ, որ դիմաւորելով՝ զայն սիրով իւր տունը կը տանի, ու Յակոբ կը մնայ նորա մօտ։

Սոյն պատմութեան մէջ Յակոբ Մեսիային օրինակ է հոգևոր մտքով. վասն զի՝ ինչպես որ նա՝ հորին վրայի քարը վերցունելով Ռաքէլի ոչխարներուն ծարաւը յագեցուց ու մեծ սէր յայտնեց Ռաքէլին, նմանապես Մեսիան (Քրիստոս) հին օրինաց վրայի ծանր վարագոյրը վերցնելով քրիստոնեաները հոգևոր շնորհօք լիացուց և սուրբ եկեղեցւոյ իւր սէրն ընծայեց։

Հպցո–ՀՀ. ԻԹ.

Յակոբ հրչափ առեն Լաբանին մօտ մնաց։

Պատ. Քսան տարի։ Բայց Լաբանու մօտ գընալու առեն, մի ամիս յետոյ՝ Լաբանը առաջարկեց Յակոբին, որ ձրի ծառայած չը լինելու համար ըստանալիք վարձն յայտնէ։ Յակոբ՝ որովհետև Խառանու մէջ պէտք է ամուսնանար, (ինչպէս հայրն ու մայրը պատուիրած էին) վասնորոյ կը պատասխանէ թէ փոքր աղջկանդ՝ Ռաքէլին համար հօթը տարի կը ծառայեմ քեզ, տուր ինձ զայն։ Լաբան կը հաւանի այս պայմանին. ուստի Յակոբ հօթը տարի սիրով ծառայելէ յետոյ Ռաքէլը պահանջելուն՝ Լաբան խօստացած պայմանին դրժելով նորա մեծ քոյրը Լիան կուտայ, որոյ աչքերը ցաւագար էին։ Ջէզբա անուն՝ իւր աղախին ևս օժիտ Լիային կուտայ։

Յակոբի հարցման թէ ինչո՞ւ խաբեցիր վիս, Լաբան կը պատասխանէ թէ մեր սովորութեան մէջ չկայ մեծէն առաջ փոքրը ամուսնացնել, եթէ հօթը տարի ևս կը ծառայես ինձ, զայն էլ կուտամ քեզ։ Արդ՝ Յակոբ Ռաքէլը շատ սիրելուն համար հօթը տարի ևս ծառայել խոստանալով կստանայ զայն, այն է կամուսնանայ Ռաքէլի հետ ևս։ Լաբան՝ բալլա անուամբ աղախին մի ևս Ռաքէլին օժիտ կուտայ։

Դուն նայէ ատ Աստուծոյ պատասխանին։

Որովհետև Լիայի աչքը ցաւագար է, և մանաւանդ Յակոբ Ռաքէլը առաւել կը սիրէ քան զԼիան, բայց Ռաքէլ երկար ժամանակ զաւակ չը ծնիր, մինչ Լիան չորս արու զաւակներ կունենայ— Ռուբէն, Շմաւոն, Ղեւի և Յուդա։ Ռաքէլ կը տեսանէ որ Աստուած իրեն զաւակ չը տուաւ, իւր ադախինը Յակոբին կուտայ, որ գոնէ անօրմէ ծնած զաւակը իրեն արդեգրէ։ Ռաքէլի ադախինէն կը ծնին Դան և Նեփթաղիմ։

Նմանապէս Լիա Ռաքէլէն օրինակ առնելով, իւր ադախինը Յակոբին կուտայ, որ անօրմէ ևս զաւակ ունենայ. Լիայի ադախինէն կը ծնին Գադ և Ասէր։ Յետոյ Լիայէն նորէն կը ծնին երկու արու և մի աղջիկ զաւակ—Իսաքար, Զաբուղոն և Դինա։

Լաւ նկատէ, ինչպէս որ աշխարհիս վրայ անկարելի է միշտ անապատում և անվիշտ լինել, նմանապէս անհնար է միշտ ուրախ և երջանիկ լինել. այս պատճառաւ երբ մի մարդ ինչ ինչ պատգամից մէջ տրամութեան և վշտաց նկարագիր կը հեծէ, Աստուած զան ուրիշ պարագաներով կը մխիթարէ, որ Աստուծոյ ողորմութենէն չը յուսահատի։ Դարձեալ, երբ մի մարդ այս ինչ պատճառաւ ուրախութիւն ունի, Աստուած նորա ուրախութիւնը մի այլ պատճառաւ տրամութեան կը փոխարկէ, որպէս զի Աստուծոյ երկիւղը սրտին չը հանելով իւր չափը ճանչնայ միշտ։

Որովհետև աշխարհային կամ մարմնաւոր գործոց մէջ, եւ մարդս իւր ամէն փափաքանաց կը հասնի, այն աստեն չափը մոռնալով շատ անգամ կը հպարտանայ և կը մեծանչէ։ Օրինակի համար, տես Լիան, որոյ աչքերը ցաւագար լինելուն պատճառաւ, Աստուած զաւակներ կը պարգեւէ անոր, որ չը տեսի և մխիթարուի. և Ռաքէլին կ զաւակ չի տար, որ իւր գեղեցկութեամբ չը հպարտանայ։ Արդարև այս մասին Ռաքէլ մեծապէս տրամեցաւ, բայց չը յուսահատելով Աստուծոյ աղաչելուն համար, նորա ազաչանքը ընդունելով Աստուած անոր պարգեւեց մի որդի, որ էր Յովսէփ[1]։

Այս պարագային մէջ, դուք մի՛ ասէր թէ Յակոբ ինչու համար երկու կին միանգամայն կառնու և երկուք էլ ադախիններ, ինչու որ այն աստեն և հին օրինաց նկարագիր այսպիսի սովորութիւն արգելուած չէր։ Յիսուս Քրիստոս աշխարհ գալով, այսպիսի անվայելուչ սովորութիւնները խափանեց, և ինչպէս ի սկզբան մարդուն ստեղծուած աստեն մի այր և մի կին ստեղծեց, նոյն հրամանը վերահաստատեց։ Արդ՝ Քրիստոսէ յետոյ երկու կին միանգամայն և կամ ադախին առնուլ շատ մեծ մեղք է, քանզի ս. աւետարանի հակառակ է։ Մատթ. ԺԹ. 4։

---

1. Եւ յիշեաց Աստուած զՌաքէլ, և լսեաւ նմա Աստուած, և եբաց պորտանդ նորա։ Ծննդ. Լ. 22։

Ցետոյ՝ երբ Յակոբ իւր բնիկ երկիրը վերադառնալու փափաք յայտնեց, Լաբան խմանալով որ նորա գալստեամբ իւր առնը օրհնուեցաւ[1], նորա վերադարձը արգիլելու համար կը յայտարարէ թէ ինչ վարձ որ կամենայ, պատրաստ է և կը խոստանայ տալ։ Զի Աստուծոյ հովանաւորութիւնն ու խնամքը Յակոբայ հետ լինելով Լաբանի առաջուածքը կը բազմապատկէին։ Յակոբ յանձն կառնու նորէն անոր մօտ մնալ, բայց պայմանաւ որ գոյնզգոյն բոլոր ոչխարներն ու այծերը, որք ծնին քու հօտին մէջ այսուհետև, իմ վարձք լինին, որոնք միագոյն եղածներէն զատելով պէտք է ինձ յանձնուին իբրև սեփական։

Սոյն պայմանը Լաբան ընդունելով՝ որչափ բազմագոյն ոչխար կամ այծ կը գտնուէր իւր հօտին մէջ զատեց և յանձնեց իւր որդւոց, իսկ միագոյն եղածները յանձնեց Յակոբին, և ղրկեց զանոնք երեք աւուր ճանապարհ իրմէ հեռի տեղը։ Արդ՝ Յակոբ մի այսպիսի հնարք ի գործ դրաւ, առաւ ընկուզի և սօսի ծառոց դալար ոստեր, զորս տեղ տեղ կեղևելով գոյնզգոյն յօրինեց, տեղ մը կանանչ և տեղ մը սպիտակ, և դրաւ զանոնք աւազանաց մէջ. այնպէս որ ոչխարներն ու այծերը ջուր խմած առեն անոնց նայելով գոյնզգոյն կը ծնէին։

1. Առ ինա Լաբան... հմայեցեալ զի օրհնեաց ինս Աստուած յառնն քումմ. Ծննդ. Լ. 27։

Արդարև այս հնարքն ու կարպաղրութիւն բնութեան օրինաց համաձայն է, բայց անոր գործադրութիւնը և յաջողութիւնը Աստուծոյ օրհնութեամբ կատարեալ եղաւ։ Լաբան, որ մի ագահ մարդ էր, Յակոբին իրաւունքը կողոպտելու փափաքող էր միշտ. բայց Յակոբ այն ատենն հաւատարմութեամբ կը ծառայէր Լաբանին, որ ցերեկը տաքէն և գիշերը ցուրտէն անհանգիստ լինելով քունն անգամ կարուած էր աչքէն[1]։

Որպէս զի իրաւունքը յաղթանակէ, Աստուծոյ հրամանաւ ոչ միայն Յակոբի արածած ոչխարներն ու այծերը, այլ նաև Լաբանի որդւոց յանձնուած միագոյնք ևս սկսան խայտախարիսխ կամ բազմագոյն ծնիլ, և Լաբան կը տեսանէ որ այն տարի գոյնզգոյնք կարի շատացան, ուստի խորամանկութեամբ յաջորդ տարին պայմանն ու դաշինքը փոխելով միագոյն ծնած ոչխարներն ու այծերը Յակոբին, իսկ գոյնզգոյնները իրեն կը յատկացնէ. բայց՝ զարմանալի բան, այս տարի էլ միագոյնները շատացան[2]։

Ցետոյ ուռ, ոչխարաց՝ նկատէն գալար ոստե-

1. Ձցերեկ այրեալ լինէի ե ասէիոյ, և պղտիգ ե ցգուռց, հատեալ էր քուն յաչաց իմոց Ծննդ. Լ.Ա. 40։

2. Եթէ ասիցէ, Եթէ նկատէնգր եղիցին քո վարձք, ամենայն խաշինքս նկատէն ծնանին. և եթէ ասիցէ Թէ սպիտակիգ եղիցին քո վարձք, ամենայն խաշինքս սպիտակս ծնանին. Ծննդ. Լ.Ա. 8։

բուն նայելով դոյզդոյն Խնելուն նման, մանդիկ էլ առեակ առեակ բարի խրատուց անսալով, մանաւանդ սուրբ գրոց խրատականները ի մտի ունելով միշտ անոնց վրայ խոկալու լինին, Աստուծոյ պաղատմունքեամբ զինուած կը կարողանան նաև առաքինութեան խորհուրդներ յղանալ և ապա իրենց կենաց ընթացքին գործնականապէս ի կատար ածել զայնս։ Ասոնց պի ինչպէս որ աչքն ուր որ նայի, միաքն էլ անդ կը նայի, նմանապէս մարդն ինչ որ միաքը դնէ, կամքն էլ դէպի այն կը հակամիտի։ Ուրեմն բարի գործոց վրայ խորհէ, որ բարեգործ լինիս։

Հոգևոր մաքով՝ վերոյիշեալ ոսաները կամ գաւազանները սուրբ խաչին, աւազանը՝ սուրբ Աւազանին, և Յակոբին հօտը քրիստոնէից օրինակ են։

Հաղորդութիւն.

Երբ Յակոբի անասունք շատացան, Լաբան եւ նորա որդիքը նախանձեցան։

Գաղ. Նախանձեցան։ Արդարև, ինչպէս որ վերը յիշուեցաւ, Յակոբ տասն ու չորս տարի ծառայից Լաբանին՝ նորա երկու աղջիկներուն համար, և վեց տարի ընկերութեան պայմանաց համաձայն աշխատեցաւ, բայց ամէն կերպով հաւատարիմ լինելով Աստուած նորա ստացուածքը կաճեցնէր, օրհնելով նորա աշխատանքը։ Մանաւանդ որ ոչ միայն Լաբանու ոչխարները կարածէր,

այլ նաև, ինչպէս կը կարծուի, ուրիշ տուրմ ձեռնարկելով ծառայից, ապահնոց և այլ բազում ստացուածոց տէր կը լինի իւր քրտնաջան աշխատութեամբ։ Այս պատճառաւ Լաբանու որդիքը նախանձելով նորա մասին կը գանգատին թէ մեր հօր ինչքը գրաւեց, նմանապէս Լաբան ատ նախանձու երեսը կը թեթուեցնէ։

Սակայն՝ որովհետև Աստուած միշտ և ամէն տեղ արդարին ու անմեղին պաշտպան ու օգնական է, և ինչպէս որ Յակոբը Նաւէի ձեռքէն ազատեց, նոյնպէս էլ Լաբանու չարութենէն կամէր փրկել, վասնորոյ հրաման կանէ Յակոբի որ դառնայ առ հայրն։ Յակոբ իսկոյն իւր կանանց ապրդարարելով ճանապարհի պատրաստութիւնը կը տեսնէ. Լաբանը այդ միջոցին իւր ոչխարաց բուրդը խուզելու գնացած լինելով՝ Յակոբ իւր բոլոր պարագայիւք և ստացուածքով ճանապարհ կելնէ դէպի Քանան։

Երեք օրէն յետոյ Լաբան կը լսէ և իւր մարդիկներով նորա ետևէն կընկնի, որ պատժէ զայն։ Եօթնեերորդ օրը Գաղաատու լերան վրայ կը հասնի անոր, ոյ ինչու՞ ինձմէ գաղանի գացիր և աղջիկներս գերիներու պէս քշեցիր տարիր կասէ, որուն Յակոբ կը պատասխանէ թէ վախցայ որ աղջիկներդ ու ստացուածքը ինէ ետ կառնուս։ Յիրաւի, Լաբանու միտքը չար էր և նորա ապօրէն ընթացքը Յակոբ քաջ գիտնալով ծածուկ ճամբայ ելաւ։

Որովհետև, եթէ Աստուած երազին մէջ Լաբանոյ չը պատուիրեր Յակոբին ոևէ ձևաս և չարիք հասցնելէ զգուշանալ, մեծ նեղութիւն և վիշտ պէտք է պատճառէր, ինչպէս Լաբան ինքը խոստովանեցաւ ասելով թէ, հիմայ կարող էի քեզ վնասել, բայց քու Հօրդ Աստուածը ինձ պատուէր տուաւ որ զգուշանամ[1]:

Նայէ, որ Աստուած ինչպէ՞ս իւր հաւատարիմ ծառայն կը պաշտպանէ. վասն զի առանց Յակոբ գիտնալու օր յառաջ իւր ոսխին յանդիմանութիւն կը լինի ի պաշտպանութիւն նորա կեանց և ստացուածոց: Սակայն Յակոբէն ծածուկ Ռաքէլ իւր Հօր կուռքը գողցած լինելով, Լաբան այս միջոցաւ կսկսի Յակոբը մեղադրել թէ ինչո՞ւ իմ աստուածս գողացար, Յակոբ կը պատասխանէ թէ որու մօտ որ քու աստուածդ գտնուի, թող մեռնի նա:

Որովհետև Լաբան Յակոբը յանցաւոր հանել կուզէր, այսպիսի մի թոյլտուութիւն առաջին պէս իսկոյն Յակոբի, Լիայի և աղախիններուն վրաններըը խուզարկելով կուռքը չի կարող գտնել: Երբ որ Ռաքէլի վրանը կուգայ, Ռաքէլը անմիջապէս կուռքը ուղտի թամբին ներքև պահելով՝ ինքն

1. Եւ այժմ ձեռնհաս էի առնել քեզ զչար, բայց Աստուած հօր քոյ եբէկ առաց ցիս, ասէ՝ զգոյշ լեր և այլն. ԼԱ. 29:

էլ անոր վրայ կը նստի. և երբ Հայրն իրեն կուգայ, փոխանակ աչքի ելնելու, որով կուռքը կարող էր յերևան գալ, կը յայտնէ թէ կանացի տկարութեան ենթակայ է, վասնորոյ և ներողութիւն կը խնդրէ Հօրէն. այս մասին Լաբան Ռաքէլի վրայ կասկած չունենալով չափեր զայն որ աչքի ելնէ, այլ միայն նորա գոյքերը խուզարկելով կը բաւականանայ, և այսպէս չի կարողանար կուռքը գտնել:

Այն աստն Յակոբ բարկանալով Լաբանու անիրաւութիւնն ու իւր քսան տարուան հաւատարիմ ծառայութեան փոխարէն ցոյց տուած ապերախտ ընթացքը կը պարզաւէ, որուն նա պատասխանելու ոչինչ չէր գտնելով սիրալիր և քաղցր ու խոնարհ խօսքերով Յակոբի սիրտը կը շահի, որով կը հաշտուին: Մինչդեռ աստն զԱստուած վկայ բռնելով իրենց միջև հաստատուած խաղաղութեան և ուխտին տևական լինելու ի նշան քարէ կոթող կը անկնի, որ իրրև սահմանագլուխ ճանաչուելով՝ կերշնուն թէ իրարու ձնասչելու խորհրդով և մտքով երբէք այդ սահմանէն չանցնին: Ցետոյ՝ ի միասին ճաշելէ զկնի Լաբանը սիրով և խաղաղութեամբ իւր տեղը կը գառնայ, իսկ Յակոբ իւր ճամբան կը շարունակէ ամբողջ իւր պարագայիւք:

Ռաքէլի վերոյիշեալ կուռքը առնելուն պատճառը՝ ոչ թէ զայն պաշտելու մտադրութիւն և

կամ ազահութիւնն էր (ինչու որ կը կարծուի թէ ոսկեղէն էր), այլ՝ որպէս զի իւր հայրը կատարեալ ուրախութիւն չունենայ։

Հպրյտ՝ ԻԵ.

Յակոբ խաղաղէն եկեղեցով Քանանու երկիրը գնացած ատեն, միջէ իր եղբայրը Եսաւէն շատ վախցաւ արդեօք։

Պաթ. Վախցաւ։ Որովհետեւ գիտէ որ Եսաւայ բարկութիւնը ժամանակ անցնելով չի պիջանիր. այս պատճառաւ մեծ մտատանջութեան մէջ էր, ուստի նորա սիրտը հանգստացնելու համար, Աստուծոյ կողմանէ հրեշտակներ կը ղրկուին յօդնութիւն, որոնք իրեւ պատերազմական մի բանակ ընդ առաջ կելլեն Յակոբայ[1]։ Թէեւ սա՝ իմացաւ նոցա առաքման նպատակը, այսու հանդերձ մարդուս վայել եղածն էլ ի գործ դնել պարաք սեպելով՝ յատկապէս մարդ կը ղրկէ ըստ եղբայրական սիրոյ Եսաւին իմացնելու իւր գալուստը, որպէս զի անկեղծութեամբ նորա եղբայրութեան վրայ վստահութիւն ունենալը յայտնի լինի։

Եսաւ այս լուրը առածին պէս՝ թէ ի պատիւ Յակոբին և իւր փառքին համար, չորս հարիւր մարդոց ընկերութեամբ գայն դիմաւորել կամեցաւ։

1. Ընդ առաջ եղեն նմա հրեշտակք Աստուծոյ. Ծննդ. ԼԲ. 2։

Յիշեալին այդչափ բազմութեամբ գնալուն լուրը Յակոբ լսելով սաստիկ վախցաւ, ու ազօթից օգնութեան դիմելով՝ նախ շնորհակալութեամբ մինչև այն ատեն Աստուծոյ իրեն արած բարիքները մի առ մի կը յիշէ, որոց համար երախտագիտութեան պզտաւճիները արտայայտելու բաւական խօսք գտնելու անկարող լինելը խոստովանելով՝ ապա կը խնդրէ որ Եսաւայ ձեռքէն զինքը կրկին ազատելու շնորհն անէ[1]։

Սորվէ այսեղ ազօթից պայմանները, որպէս զի խնդրուածքդ ընդունիս յԱստուծոյ։ Յիրաւի, Յակոբ ազօթից մասին անթերի գտնուեցաւ. բայց մարդուս պատշաճ ու յարմար երեւցած խոհական կարգապրութիւնն էլ ձեռքէ չը թողլով, իւր ընտանիքն ու մարդիկը երկու մասերու բաժնեց, որպէս զի, եթէ Եսաւ մէկուն վրայ գայ միւսը ազատուի։ Եւ այն ժամանակ պահանջմանց համաձայն, այծ, կով, ուղտ և ասոնց նման անասուններ իրեւ ընծայ օր առաջ Եսաւին կը ղրկէ, զոր նա տեսնելով թերևս բարկութիւնը իջնէ։

Բայց այդ, ինքզինքը ծառայի տեղ դնելով խոնարհութեամբ սրտի և ապաշնօք լուր կը ղրկէ

1. Ձեմ բաւական ամենայն արդարութեան՝ և ճշմարտութեանն զոր սրտերը ընդ ծառայի քում, զի ցուսալ է ձեռն անցի ընդ այս Յորդանան, և արդ՝ աւասիկ եղէ յերկուս բանակս։ Եւ ապրեցո զիս ի ձեռաց եղբօր իմոյ Եսաւայ. Ծննդ. ԼԲ. 10։

կամ ագահութիւնն էր (ինչու որ կը կարծուի թէ ոսկեղէն էր), այլ՝ որպէս զի իւր հայրը կատարտուրթիւն չանէ։

Հարցում Ժե.

Յակոբ խաղաղութեան ելնելով Քանանու երկիրը գնացած ատեն, միթէ իւր եղբայր Եսաւէն չը վախցա՞ր արդեօք։

Պատ. Վախցաւ։ Որովհետև գիտէ, որ Եսաւայ բարկութիւնը ժամանակ անցնելով չի դիջանիր. այս պատճառաւ մեծ մտատանջութեան մէջ էր, ուստի նորա սիրտը հանգստացնելու համար, Աստուծոյ կողմանէ հրեշտակները կը ղրկուին յօդնութիւն, որոնք իրրև պատերազմական մի բանակ ընդ առաջ կելնեն Յակոբայ[1]։ Թէև սա՝ իմացաւ նոցա առաքման նպատակը, այսու հանդերձ մարդուս վայել եղածն էլ ի գործ դնել պարաք սեպելով՝ յատկապէս մարդ կը ղրկէ ըստ եղբայրական սիրոյ Եսաւին իմացնելու իւր գալուստը, որպէս զի անկեղծութեամբ նորա եղբայրութեան վրայ վստահութիւն ունենալը յայտնի լինի։

Եսաւ այս լուրը առածին պէս՝ թէ ի պատիւ Յակոբին և իւր փառքին համար, չորս հարիւր մարդոց ընկերութեամբ պատրաստուել կամեցաւ,

1. Ընդ առաջ եղեն նմա հրեշտակք Աստուծոյ. Ծննդ. ԼԲ. 2։

Յիշեալին ազդեցութեամբ գնալուն լուրը Յակոբ լսելով աւստիկ վախցաւ, ու ազօթից օգնութեան պիտի լայ՝ նախ շնորհակալութեամբ մինչև այն տեղն Աստուծոյ իրեն արած բարիքները մի առ մի կը յիշէ, որոց համար երախտագիտութեան զգացումները արտայայտելու բաւական խօսք զըտնելու անկարող լինելը խոստովանելով՝ ապա կը խնդրէ որ Եսաւայ ձեռքէն գինքը կրկին ազատելու շնորհն անէ[1]։

Սորվէ այստեղ ազօթից պայմանները, որպէս զի խնդրուածքդ ընդունելի լինի Աստուծոյ։ Յիրաւի, Յակոբ ազօթից մասին անթերի գտնուեցաւ. բայց մարդուս պատշաճ ու յարմար երևցած խոհական կարգադրութիւնն էլ ձեռքէ չը թողլով, իւր ընտանիքն ու մնացորդը երկու մասերու բաժնեց, որպէս զի, եթէ Եսաւ մէկուն վրայ հասնի ազատուի։ Եւ այն ժամանակ պահանջմանց համաձայն, այծ, կով, ուղտ և ասոնց նման անասուններ իրրև ընծայ օր առաջ Եսաւին կը ղրկէ, զոր նա տեսնելով թերևս բարկութիւնը իջնէ։

Բացի այդ, ինքզինքը ծառայի տեղ դնելով խոնարհութեամբ սրտի և ազաչանօք լուր կը ղրկէ

1. Զեմ բաւական ամենայն արդարութեան՝ և ճշմարտութեանն զոր արարեր ընդ ծառայի քումմ, զի ցուցեր ի ձեռն անցի ընդ այս Յորդանան, և արդ՝ աւասիկ եղէ յերկուս բանակս։ Եւ ապերեցո զիս ի ձեռաց եղբօր իմոյ Եսաւայ. Ծննդ. ԼԲ. 10։

որ բարեհաճի ընդունել իւր ընծայն։ Ցետոյ ամբողջ ընտանիքը Յորդանան գետի դիմացի եզերքն անցնելով՝ ինքն այն գիշեր եղած տեղը կը Քնայ, որպես զի նորէն Աստուծոյ դիմէ աղօթիւք և խնդրուածովք։

Օրինակ առ Յակոբէն, որուն Աստուած հրամայեց Քանանու երկիրը գնալու, և նորա օգնութեան հրեշտակներ յատկացուց, և սակայն դարձեալ աղօթից կը պարապի։ Որովհետև որչափ որ Աստուած իւր ողորմութիւնը մարդուն չը խնայէ, սա պարտական է դարձեալ աղօթքէն եա չը մնալով՝ միշտ գոհութեամբ և շնորհակալութեամբ հանդերձ աղաչել զԱստուած որ առաւել շնորհաց և ողորմութեան արժանի անէ։ Ինչպէս՝ այս անգամ Յակոբ աղօթքի կայնած տեղն, իսկոյն մարդկային կերպարանքով մի հրեշտակ գալով նորա հետ կը գօտեմարտի, և Յակոբ մարդ կածելով գայն, կը ջանար որ չը յաղթուի[1]։

Այս բանը պատահեցաւ ո՛չ թէ երազին մէջ, այլ արթուն եղած տեղը յայտնապէս, և մինչև առաւօտ շարունակուեցաւ մարտը միմեանց յաղթելու փափաքով, բայց երբ Յակոբ անպարտելի մնաց, հրեշտակը կասէ՝ Թող գիս, քանզի առաւօտ եղաւ, սակայն Յակոբ չի Թողուր. ուստի

1. Եւ մնաց Յակոբ միայն, և մարտեաւ այր մի ընդ նմա մինչև ցառաւօտ. Ծննդ. Լ Ե. 24։

հրեշտակը նորա ազիսին մի չիզը ձգելով կը կաղցնէ զայն, որ Թողու գինքը. Յակոբ դարձեալ չի Թողուր, մինչև որ գինքը օրհնէ[1]. ինչու որ կիմանայ Թէ իրեն հետ գօտեմարտողը Աստուծոյ հրեշտակն է, վասնորոյ օրհնութիւն կը խնդրէ։

Առարկելու չէ Թէ հրեշտակը ինչո՞ւ չը յաղթեց Յակոբին. վասն զի գիտաւորութիւնը յաղթել չէր, այլ Նաւայ երկիւղը նորա սրտէն փարատել, մանաւանդ Աստուծոյ անոր արած շնորհն, ինչպէս նաև նորա հաւատքը աշխարհի յայտնել։ Այդ պատճառաւ հրեշտակը կը յայտարարէ Թէ այսուհետև քու անունդ Յակոբ Թող չը կանչեն, այլ Իսրայէլ[2]։ Ոմանք Իսրայէլ բառով օրհնութիւն կիմանան. ինչու որ Յակոբ օրհնութիւն կը խնդրէր, կամ Թէ որովհետև Յակոբ խաբող կը նշանակէ, առաջ անունը կը փոխէ և ապա կօրհնէ, որպես զի չը կարծեն Թէ Յակոբ խաբեբայ մի անձ է, այլ մարգարէ, սուրբ և հաւատարիմ։

Վասն զի, ինչպես որ Աբրահամ՝ Աստուծոյ սիրելին, Իսահակ՝ Աստուծոյ ծառայն, նմանապես Յակոբ՝ Աստուծոյ սուրբը կոչուեցաւ[3]։

1. Ո՛չ արձակեցից զքեզ՝ եթէ ոչ օրհնեսցես զիս. Ծննդ. Լ Ե. 26։

2. Յայսմհետէ ո՛չ կոչեսցեն զանուն քո Յակոբ, այլ Իսրայէլ եղիցի անուն քո. Ծննդ. Լ Ե. 28։

3. Վասն Աբրահամու սիրելւոյ քո, և վասն Իսահակայ ծառայի քո՝ և վասն Իսրայէլի սրբոյ քո. Դանիէլ. Գ. 35։

Նկատէ, որ Արր Համու անուան վրայ միայն մի գիր աւելցաւ. բայց Յակոբի անունը փոխուեցաւ: Յովհետև Աբրահամ բառը շատ ազգայ հայր նշանակելուն՝ Աբրահամու վրայ կասացաւ. բայց Իսրայէլ բառը՝ Աստուածատես նշանակելուն համար, միայն Յակոբին վերապահեալ էր, այլ՝ նորա ցեղն ևս Իսրայէլ պէաք է կոչուէր: Ուստի անունը փոխուելով Իսրայէլ կը կոչուի, որպէս մի մարդիկ անոր նշանակութիւնը և պատճառը իմանան, ու Յակոբի նման կատարեալ հաւատով և մաքուր սրտով Աստուծոյ ապաւինելով թշնամիէն ազատուին և դրախտին մէջ զԱստուած տեսնելու արժանի լինին:

Դարձեալ, մարդկային կերպարանքով հրեշտակի գօտեմարտը Յակոբայ հետ, ու Իսրայէլ անուանակոչութիւնը՝ Մեսիային Յակոբի ցեղէն սերելը կիմացնէր, և ով որ Քրիստոսի հաւատալով նորա հրամանին հնազանդի, նա է Իսրայէլ, ասոր համար քրիստոնեայք նոր Իսրայէլ կը կոչուին իրաւամբ:

Վերջապէս Յակոբի խնդրանաց համեմատ հրեշտակը զայն օրհնելով կը քաջալերէ որ Եսաւէն չը վախնայ, քանի որ հրեշտակի հետ մենամարտելու կարող եղաւ, մարդկան ևս պիտի յաղթէ[1]:

---

1. Ծուժկալեցեալ ընդ Աստուծոյ, և ընդ մարդկան զօրաւոր լեալ. Ծննդ. ԼԲ. 28:

Յակոբ հրեշտակէն բաժանուելուն ատեն, առաւօտը կը ծագի, բայց նա սկսաւ կաղալ: Սակայն մի կարծեր թէ Յակոբին կաղալը իրեն պատիժ էր, այլ՝ ազգապարտութիւն, որ ամէն քայլափոխին Աստուծոյ ողորմութիւնը մտաբերելով գոհանայ. նմանապէս նորա որդիքը Աստուծոյ բարիքը չը մոռնան. (այս է պատճառը որ հրէայք կենդանիին զիսաը չեն ուտեր). նմանապէս Յակոբի կաղութիւնը տեսնելով՝ թերևս Նաւայ բարկութիւնը իջնէ:

Յակոբ տեսնելով որ Նաւը կուզայ, իսկոյն ընդ առաջ գնալով եօթն անգամ մինչև գետին խոնարհեցաւ ողջունելու համար, նոյնպէս Նաւ Յակոբը տեսնելուն պէս յառաջ եկաւ և լալով միմեանց պարանոցին փաթաթուած՝ սիրալիր տեսակցեցան: Նաւ կուզե որ ի միասին գնան, բայց Յակոբ իւր ընտանեաց բազմութիւնը պատճառելով կազաչէ որ նա յառաջ երթայ, և ինքը ծանրաքայլ յառաջանայ: Ուստի Նաւ բաժանուելով իւր տեղը գնաց, Յակոբ ևս Սոքովթ կոչուած տեղը գալով իրեն և անասնոց համար տեղ կը շինէ, ուր միջոց մի բնակելէ յետոյ Սամարիոյ կողմը Սիկեմ անուն վայրը կը փոխադրուի, որ այժմ Նապուլուս կանուանի:

Այս տեղ Յակոբ հարիւր ոչխար տալով հողը կը գնէ անասնոց կառավարութեան համար, և քաղաքին մօտ վրան կանգնելով տեղան կը շինէ, և

աղօթելով կը գոհանայ Աստուծմէ[1]։ Մտապրութիւն արաւ, Յակոբ ինչ էս որ յառաջագոյն, երբ երկիւղի մէջ էր, աղօթքի կը դիմէր, նմանապէս՝ իւր սիրտը ամրապնդէ յետոյ ևս, զգալով աղօթելէ չի դադարիր։ Որովհետև աղօթքը հարկաւոր է ոչ թէ միայն այն ժամանակ, երբ մարդիկ նեղութեան և տառապանաց մէջ կը գտնուին, ու աշխարհի փիշտանութեան, վտանգներուն և վախի սպառնալեաց տակ չարաչար ճնշուելով, աստուածային օժանդակութեան կը կարօտին ազատելու համար, այլ նաև հանգստեան և երջանկութեան օրերուն մէջ պարտականութիւն է շնորհակալութեամբ և երախտագիտութեամբ աղօթք, գոհութիւն և փառք մատուցանել Աստուծոյ, որպէս զի նորա մարդասէր բարիքները չը մոռացուին։

Հպյո–ՙ ԻՉ.

Յակոբ Խառանէն վերադարձին՝ հայրը ողջ էր։

Պաթ. Ողջ էր։ Որովհետև Իսահակ 180 տարեկան մեռաւ, զոր Յակոբ և Եսաւ Քնբրոնի մէջ Աբրահամու մօտ թաղեցին։ Այս տեղ խրատ առնելու է աշխարհի ընթացքէն և սրտոյ ու արդարոյ առաքինութենէն։ Զան զի, ինչպէս որ Աբրահամ իւր ամբողջ կեանքին մէջ այլ և այլ փոր-

1. Եւ շինեաց անդ սեղան, և կարդաց զԱստուած Իսրայէլի. Ծննդ. ԼԳ. 20։

ձութեանց ենթարկուեցաւ, բայց այնու ամենայնիւ երբէք իւր հաւատքին նուաղութիւն չը բերելով միշտ գոհութեամբ և աստուածպաշտութեամբ իւր նժդեհութեան օրերը կանցնէր։ Նմանապէս Իսահակ փորձութենէ ազատ չը մնաց, մանաւանդ Ս. Գրոց խօսքին նայելով քառասուն տարիէն աւելի կուրութեամբ անցուց առանց երբէք դժգոհելու։

Յակոբ ևս գրեթէ միշտ փորձութեան բովէն անցնելով, թէև ծանրածանր վշտաց օրեր ունեցաւ, բայց բնաւ Աստուծոյ ողորմութենէն չը յուսահատեցաւ ոչ մի անգամ։ Այս նկատմամբ մի՛ կարծեր թէ արդարոց վրայ եկած նեղութիւնք և դժբաղդութիւնք իրենց յանցանաց պատճառաւ է, այլ՝ ի սկզբանէ անտի ըստ բնութեան օրինաց, աշխարհի ընթացքն ու բնական պահանջն է[1]։ Այս պատճառաւ առաքինի մարդը գրչի և մոմի նմանցնելով հասարակաց առած եղած է (Թրքաց մէջ) թէ՝ մարդս ուղղութեան մէջ գրիչ՝ վառելուն մէջ մոմ լինի, կարող չէ փորձանաց մրրատէն գլուխն ազատել։

Արդարև գրիչն ու մոմը մարդուս օգտակար

1. Որդեակ եթէ մերձենաս ծառայել Աստուծոյ, կաց յարդարութեան և յերկիւղի, և պատրաստեա զանձն քո ի փորձութեան. Սիրաք. Բ. 1։

Եւ ամենեքեան, որք կամիցին Աստուածպաշտութեամբ կեալ ի Քրիստոս Յիսուս, ի հալածանս կացեն։ Բ. Տիմոթ. Գ. 12։

և պիտանի լինելով հանդերձ, երբեմն երբեմն ելուկքին էլ գլուխը կը կտրեն։ Նոյնպէս մարդն՝ գրչի նման շիտակ և մտի նման լուսաւոր եւս լինի այս աշխարհի մէջ, դարձեալ կարող չէ իւր գլուխը փրկանաքէ փրկել։ Թէպետ և Յակոբ Պատանէն վերագարձին՝ Եսաւի հետ հաշտուելով միջոց մի ուրախ և երջանիկ եղաւ. սակայն երկրիս վրայ մարդուս համար տեւական երջանկութիւն անհնար լինելով, Յակոբ եւս իւր աղջկան՝ Դինայի պատճառաւ մեծ մտատանջութեան մատնուեցաւ։

Որովհետեւ, ինչպէս վերը յիշուեցաւ, Նաբուղուսին մօտ կը բնակէր, Դինա՝ քաղաքին ազջիկները տեսնելու հետաքրքրութեամբ, երբ առանձին կը շրջէր, քաղքին կառավարչի որդին բռնութեամբ նորա պատիւը բռնաբարեց։ Յետոյ ըստ օրինի զոյն կնութեան առնուլ ուզեց, Յակոբի որդիքն ըստ երեւոյթին կը հաւանին, պայմանաւ որ քաղաքի բոլոր բնակիչները թլփատուին։ Ոչքա համաձայնութեամբ սոյն առաջարկն ընդունելով, ամէնքը մի աւուր մէջ թլփատուեցան։ Սակայն տակաւին իրենց ցաւը չանցած՝ Յակոբի երկու որդիքը Շմաւոն և Ղեւի առ ի վրէժխնդրութիւն, Յակոբէն գաղտնի քաղաք մտնելով բոլոր այր մարդիկը ի սուր սուսերի կատորելէն զատ՝ կանայքն էլ կը գերեն ու քաղաքը կողոպտելով իրենց քոյրն առին, այս պատճառաւ Յակոբ մեծ տխրութեան մէջ ընկաւ։ Մանաւանդ կը վախնայ որ Քանանացիներէն վտանգ կը հասնի իւր ընտանեաց, երկու եղբարց անխոհեմ յանդգնութեամբ։

Թող խրատ առնուն մայրերն ու աղջիկները. Դինա տունէն առանձին դուրս ելնելով շրջագայելուն և անոսի հետաքրքրութեան համար մեծ վտանգի հանդիպեցաւ և այնչափ մարդոց կորստեան էլ պատճառ եղաւ։ Սակայն Աստուած կը հրամայէ Յակոբին, որ անտի մեկնելով Բեթէլ կոչուած տեղը գնայ, և անդ սեղան շինէ։ Այս այն վայրն է, ուր յառաջագոյն Յառան գնալու առեն՝ Յակոբ հրաշալի երազը տեսնելով այն տեղը *Աստուծոյ տուն և երկինից դուռ անուանած էր*, վասն դի Բեթէլ՝ *Աստուծոյ տունը կը թարգմանուի*։

Դուն լաւ նայէ Յակոբի առաքինութեան և ճշմարիտ Աստուածպաշտութեանը, որովհետեւ Բեթէլ երթալ և սեղան կանգնելու հրաման սատացաւ, այս առթիւ կը պատուիրէ իւր ընտանեաց բազմաթիւ անդամներուն, որ իրենց մօտ եղած կուռքերը ոչնչացնեն, և ամէնքն էլ զգեստները փոխելով և ամէն կերպով մաքրուին, որպէս զի Բեթէլ երթան արժանի պատրաստութեամբ[1]։ Վասն զի, ինչպէս վերը յիշուեցաւ, Լաբանու կուռքը Ռաքէլի մօտ գտնուելէն զատ, (Սիկիմ-Նապու-

1. Ի բաց առէք զաստուածսդ օտարոտիս... սրբեցարուք, և փոխեցէք զպատմուճանս ձեր, և յառնեցեալ ելցուք ի Բեթէլ, և արասցուք անդ սեղան Աստուծոյ. Ծննդ. Լե. 2։

լուս) քաղաքը կողոպտած առեն, նոցա կուռքերն ու ընծայուած ու նուիրած զարդերն էլ առած էին։

Արդ՝ որի մօտ որ կուռք և կամ կռոց վերաբերեալ ինչ կար, մինչև անգամ իրենց ականջաց օղերը հանելով բերին առ Յակոբ, որ զայնս թաղելով կոչնչացնէ միւս անգամ նոցա ձեռքը չանցնելու համար։ Օրինակ առ. նա՝ որ երկնից թագաւորութիւնը մտնել կը փափաքի, պարտի առաջ մեզաց կուռքերը խոստովանելով սրտէն ի բաց վտարել, ու մեղաց աղտերը արտասուաց ջրով ու լուացմամբ բոլորովին սրբել՝ և հանդերձը փոխելու պէս չար գործերն էլ մի կողմ դնելով առաքինութեան զգեստը պարտի հագնել, որ Աստուծոյ արքայութեան փառքերուն արժանի հանդիսանայ։

Յետոյ ըստ հրամանին Աստուծոյ Յակոբ Բեթէլ երթալուն՝ սեղան կը շինէ, ու սրտի զեղումով յաւիտենականին երկրպագութիւն կը մատուցանէ, և Աստուած նորէն երևնալով անոր, ոչ միայն կօրհնէ, այլ և՝ Ես եմ Աստուած քո բաւական ասելով առաջուայ խոստումը կը կրկնէ[1]։ Այս խօսքով Աստուած կը յայտնէ թէ ինքն ամենակարող է և ամենուն փափաքները իրմով և իր մէջ կարող են լիութիւն գտնել, իբրև թէ Յակոբին ասել

1. Եւ ասէ ցնա Աստուած. ես եմ Աստուած քո բաւական. Ծննդ. Լե. 11.

կուզէր—Հոդ մի՛ աներ, ով Իսրայէլ, և Քանանացիներէն մի՛ վախնար, քանի որ դուն ինձ յանձնուեցար, ես քեզ ամէն չարէ պահպանելով փառաւորելու կարող և բաւական եմ։

Արդարև, եթէ Աստուած Քանանացիներուն սրտին մէջ երկիւղ չը ձգէր, Յակոբը կը պատժէին անպատճառ[2]։ Եւ սոյն խօսքը ոչ միայն Յակոբին մխիթարութիւն եղաւ, այլ և բոլոր մարդոց. վասն զի Աստուած բաւական է թէ այս աշխարհի և թէ հանդերձեալին մէջ ամէն կերպով երջանկացնել և փառաւորել այն մարդը որ Աստուծոյ ապաւինելով հաւատարմութեամբ և սիրով կը ծառայէ Անոր։

Յակոբ այդ միջոցին Բեթէլէն դէպի Բեթղեհէմ գնալու տաեն, Ռաքէլ Բենիամինը ծնելէն յետոյ կը մեռնի։ Յակոբ զայն թաղելով վրան մահարձան կը կանգնէ, որ մինչև յարդ Բեթղեհէմի ճամբուն վրայ յիշեալ տրձանը կը ճնայ, որուն հրկայք ուխտի կերթան։ Յակոբ Բեթղեհէմի մօտ կը բնակի այս անգամ. այս՝ այն տեղն է, յորում, կը կարծուի թէ՝ Քրիստոսի ծննդեան գիշերը հրեշտակներն աւետիս տուին հովիւներուն։

Այս տեղ սուրբ Գիրքը Եսաւի ցեղաբանու-

2. Եւ չուեաց Իսրայէլ ի Սիկիմայ, և եղև ահ Աստուծոյ ի վերայ քաղաքացն, որք շուրջ զնովաւ, և ոչ ելին զհետ որդւոցն Իսրայէլի. Ծննդ. Լե. 5։

թիւնը ընդարձակ կը պատմէ, զոր մենք ի հարկէ զանց առնելու սահպուած ենք:

Հարցում Ժ.

Յակոբ քանի որդիք ունէր:

Պաթ. Տասն երկու. Ռուբէն, Շմաւոն, Ղեւի, Յուդա, Դան, Նեփթաղիմ, Գադ, Ասեր, Իսաքար, Զաբուղոն, Յովսէփ և Բենիամին: Տասներկու այս զաւակներ մեծ ուրախութիւն էին Յակոբին, մանաւանդ որ Աբրահամու սերունդին աճելութեան խոստումը Յակոբին վրայ կսկսի կատարուիլ: Ասոնք էին այս երկոտասան որդիներէն երկոտասան ցեղեր յառաջ գալով Իսրայէլի ազգ կոչուեցան: Ի մասնաւորի, Քրիստոս Իսրայէլի ցեղէն պէտք է ծնէր, այս պատճառաւ Աբրահամու, Իսահակայ և Յակոբայ խոստացուած շնորհքն ու ողորմութիւնը նոցա վրայ կայացաւ: Միայն թէ ուշադրութեամբ նկատելի պէտք է թէ Աստուած ինչ խորախորհուրդ կարգադրութեամբ հաճեցաւ իւր բարերարին կամքը կատարել:

Արդարև Աստուծոյ համար դժուարութիւն չկայ. ինչ եղանակաւ որ լինի, նա կարող է իւր կամքը ի գործ ածել. բայց որպէս մի իւր հզօր զօրութիւնը բոլորին յայտնուելով հանդերձ մարդոն միանգամայն օգտակար լինի, երբեմն իւր կարողութիւնը յայտնի հրաշքով կը յայտնէ, երբեմն բնութեան օրինաց ներքոյ կը թաքցունէ: Վասն զի, եթէ Աստուած իւր զօրութիւնը միշտ

հրաշքով յայտնէ, առաքինութեան վարձ չէր ծնար մարդոն: Ու եթէ միշտ բնութեան պայմանաց ներքև գտնէր, այն մարդը պիտի կարծէր թէ աշխարհս իւր բնութեամբը կը կառավարուի:

Ահա այս պատճառաւ իրաւացի չէ ասել թէ դիպուածի արդիւնք են, ինչ որ ըստ օրինաց բնութեան տեղի կունենան, մանաւանդ՝ արարածք Արարչին հզոր հպատակ լինելով[1], բնութեան շարժմունք ու զօրութիւնք միշտ նորա բարձր կամաց համաձայն կը կատարուին, որպէս զի մարդն ըմբռնելով զայդ խրատուի, ու առաքինութիւն գործելով վարձատրութեան արժանանայ: Այս մասին կարժէ խորին մտադրութեամբ խորհրդածել, և եթէ վտանգ կամ փորձանք պատահի, մի ասեր թէ պատճառը մարդն է, և կամ արևելեան, արևմտեան, կամ անապատի ու լերանց կողմերէն հողմը փչելով և կամ թշնամի յերեւան գալով այդ արկածն ու փորձանքը գոյացան. այլ նկատէ որ ամէն բանի պատուար Աստուած է, և նորա հրամանաւ ու թոյլտուութեամբ միայն կարող են անոնք այդպիսի դիպաց և գործոց ծնունդ տալ[2]:

Թէպէտև Յակոբ երկոտասան որդիք ունէր,

---

1. Զի արարածք քեզ Արարչիդ արբանեկեն. Իմաստ. ԺԶ. 24:

2. Զի ո՛չ յարևելից և ո՛չ յարևմտից և ո՛չ յանապատէ լերանց. այլ Աստուած դատաւորը է. Սամղ. ՀԳ. 6:

ինչպէս վերը յիշուեցաւ, բայց ամէնքէն առաւել կը սիրէր Յովսէփը իրեւ իւր ծերութեան զաւակը, որ ո՛չ միայն դէմքով շատ գեղեցիկ էր, այլ նամանաւանդ հոգւոյր շնորհօք զարդարուած լինելուն՝ նորա համար ծաղկանկար պատմուճան մի կը շինէ, իբր թէ՝ ինչպէս որ Յովսէփի հոգին առաքինութեան ծաղիկներով զարդարուն է, նոյնպէս մարմինը զարդարուած՝ նորա առաքինութեան արտաքին նշանակը լինի։

Բայց Յովսէփի եղբայրները այս բանիս վրայ սաստիկ նախանձելով նորա նկատմամբ միշտ գանգատաներ և ամբաստանութիւն կանէին իրենց հօր առջև[1]։ Բայց անմեղ մարդուն վրայ գանգատել և զրպարտել՝ կը նշանակէ նորա պատիւն ու փառքը աւելցնել. յանցաւորն իրենք են, բայց Յովսէփը յանցաւոր կը ներկայացնեն, որ հօրէն չը սիրուի։ Մինչև իսկ ատելութեան և չար նախանձու կիրքը այն աստիճան կը տիրապետէ նոցա սրտին վրայ, որ այլ եւս չեն կարող նորա հետ մարդավայել կերպով խօսել[2]։

Կարևոր է յիշանալ որ թէպէտ եղբարքը զինք չեն սիրեր, բայց Յովսէփ կը սիրէ իւր եղբայրները, ուստի Աստուած էլ Յովսէփը սիրելով նորա

1. Բերբէլն համբաւ չար զՅովսէփայ առ Իսրայէլ Հայր իւրեանց. Ծննդ. Լէ. 2։

2. Ո՛չ կարէին խօսել ինչ ընդ նմա խաղաղութեամբ. Ծննդ. Լէ. 4։

եղբայրներէն աւելի զայն փառաւորել կամենալով՝ երազին մէջ կը յայտնէ անոր թէ ինչ մեծութեան հասցնելու է զինք ապագային մէջ։ Վասն զի երազին մէջ կը տեսնէ որ իւր եղբարց հետ դաշտին մէջ որայ կապած ատեն, նոցա որայքը իւր որային առջև խոնարհելով ողջունեցին։ Յովսէփ իւր եղբայրները իրեն հաւատարիմ գիտնալով իւր տեսած երազը պարզապատութեամբ և միամտօրէն նոցա կը պատմէ, որոնք զայն լսելուն պէս, մէթէ մեր վրայ թագաւո՞ր պէտք է լինիս ասելով, կսկծին զայն առաւել ևս ատել ու զրպարտել նորա վրայ։

Յովսէփ կրկին անգամ երազ կը տեսնէ. այն է թէ արեգակը, լուսինը և մեռասան աստղեր խոնարհութեամբ զինքը կողջունէին, այս երազն էլ կը պատմէ։ Թակոր այսպիսի երազն յաստուածակոյս կողմանէ լինելն հասկնալով՝ թէև մտքին մէջ կը պահէ, սակայն՝ որպէս զի միւս եղբարքը չը նախանձին, յանդիմանական ձևով մի Յովսէփին կասէ, «մէթէ ես, մայրդ և եղբայներդ քո՞ առջև պիտի խոնարհինք»։ Արդարև այս վերջին երազին վրայ նորա եղբարց նախանձն ու ատելութիւնը իրենց բարձրագոյն կատարը հասան։

Վասն զի նախանձը ծնունդ է հպարտութեան և նախանձոտ մարդը չի կամենար որ իրմէն յառաջադէմ անձինք գտնուին։ Վասնորոյ որոց վրայ որ մի առաւելութիւն կամ գերազանցութիւն

տեսանէ, կը դժկամակի և չախորժիր, որ մի դուցէ իւր փառաց նուազումին յառաջ բերէ։ Ինչպէս որ Յովսէփ յաչս իւր հօր առաւել պատուական լինելով քան եղբայրնելը, նախանձեցան։ Ճշմարիտ է որ բոլոր նախանձոտք անիրաւ են, բայց Յովսէփայ եղբարք առաւել ևս, քանզի նորա պատիւ՝ իրենց ևս մեծ պատիւ էր։

Ծեռոյ եղբայրները հեռու տեղ կը դնան ոչխար արածելու։ Յակոբ կը ղրկէ Յովսէփը, որ նոցա վրայ տեղեկութիւն բերէ։ Հնազհոդի Յովսէփ՝ դեռ տասն և հօթն տարեկան, շատ տեղեր շրջելով նոցա գտնուած տեղն կիմանայ. և նոցա մօտենալուն՝ եղբայրները կը ճանչնան զայն հեռուէն. և իրենց սրտին մէջ բոյն դրած նախանձու թելադրութեանց հետևելով առիթը չեն փախցուներ և իրարու կասեն, ահա երազատեսը կուգայ. եկէք զայն մեռցունելով հորի մի մէջ նետենք և ասենք թէ մի չար գազան զայն պատառեց, և տեսնենք թէ նորա երազը ի՞նչ հետևանք պիտի ունենայ[1]։

Նկատէ, որ ինչպէ՞ս շուտով Յովսէփի սպանութեան նկատմամբ համաձայնեցան. մի՛ զարմա-

1. Եւ ասեն ի բաց քաշելուն ցեղապյս եւ, ահա երազատեսն գայ. եկայք սպանցուք զնա, և ընկեցուք ի մի ի գոց ասի, և ասացուք եթէ գազան չար եկեալ զնա, և տեսցուք թէ զի՞նչ լինիցին երազքն նորա. Ծննդ. Լէ. 19։

նար, վասն զի նախանձոտ մարդուն վիճակն այսպէս է, քանի որ Յասուծոյ երկիւղը, հօր պատիւը և եղբայրական սէրը նոցա սրտերէն վերացած էր, և իրենցմէ զատ մարդ էլ չկար, որ ակնածին ու պատկառին, նախանձու ու թշնամութեան զգացումն այն աստիճան հասաւ որ հորի մի մէջ ձգել կը կամենան, որպէս զի գերեզմանը բոլորովին անհետ մնալով անունն ու յիշատակն էլ աշխարհիս վրայէն կորնչի։

Այսպիսի մի անգթութեան գործ մարդուս անվայելչութիւնը գտնելով թերևս՝ մի փարատիչ զգանի վրայ նետել կուզեն։ Յիրաւի, նախանձէն զատ ուրիշ ի՞նչ գազան կայ այնպէս չար, որ իւր եղբայրը սպաննէ։ Բայց դու տես Յասուծոյ զատաստանը. Յովսէփը մեռցնել կը կամին, որպէս զի նորա երազը չը կատարուի. այսու ամենայնիւ Յասուած դարձեալ իրենց ձեռամբ զայն ի գործ դնել ուզելով, Ռուբէն կառաջարկէ որ փոխանակ սպաննելու հորի մի մէջ ձգեն. խորհելով որ յետոյ կը հանէ և հօրը կը յանձնէ զայն։

Ռուբէնի առաջարկը[1] թէ փոխանակ իրենց եղբօր արիւնը թափելու մի հորի մէջ նետեն, համաձայնութեամբ կընդունուի, և կորոշեն Յով-

1. Իբրև լուաւ Ռուբէն, կորզեաց զնա ի ձեռաց նոցա և ասէ... մի՛ հեղցուք զարիւն, այլ արկէ՛ք զնա ի գուբ յանապատի աստ, և ձեռն մի՛ արկանէք ի նա. Ծննդ. Լէ. 21։

սէրը մի չորացած ջրհոր նետել, ուր կարող էր անօթութենէ մեռնիլ։ Այո՛, Ռուբէնին դիտաւորութիւնն էր զայն վերատին դուրս հանել, բայց միւսներուն միտքը իսկ և իսկ զայն մեռցնել էր։ Թէպէտ և նոքա Յովսէփի սպանութեան խորհրդով և բաղձանօք կայրին ու կը մրկին, բայց նա՝ եղբարց մօտ հասնելուն վրայ կուրախանայ, որ խաղաղութեան լուրը հօրը տանելով, զայն ևս ուրախացնէ, իբրև ծնողասէր զաւակ, որ շատ բնական է։

Ըստ սովորութեան խոնարհութեամբ (քանի որ նոցա մէջ ամենէն փոքրն և առաքինին էր) ողջունելով նոցա որպիսութիւնը հարցուցած ատեն, յանկարծ իբրև թշնամի նորա վրայ յարձակելով հագած ծաղկանկար զգեստը կը հանեն և հորի մը մէջ կը նետեն զայն[1]։ Արդեօք Յովսէփ իւր եղբայրներն այսպիսի մի կատաղի վիճակի մէջ տեսած ատեն, մանքէն ի՞նչ կանցնէր, ով կը յուսար մի այսպիսի ամբարիշտ ոճիր կրել իւր եղբօրէն, մանաւանդ ատան եղբայրներ է միասին, ինչպէս չը խնայեցին այդ անմեղ պատանեկին։

Արդեօք այս անխիղճ և եղբայրասպան մարդիկը Կայէնի պատիժը չը յիշցի՞ն։ Մի՛ զարմանար, ինչպէս որ կրակին ծուխը մարմնոյ աչքը

1. Մերկացուցին զպատմուճանն նորա ծաղկեայ է նմանէ, և ընկեցին զնա է գուբն. Ծննդ. Լէ. 23։

կը կուրացնէ, նախանձու կիրքն ևս հոգւոյ աչքը կը խաւարեցնէ, վասնորոյ նոքա իրենց չարութեան մէջ այնչափ առաջ կը գնան, որ իրենց է գործ դրած անասելի ոճիրն ու անզգամութիւնը չը ճանաչելով Յովսէփը հորին մէջ նետելէն զկնի, թշնամիէն վրէժ առածի պէս բերկրելով իսկոյն կը նստին ուտելու[1], որպէս թէ բնաւ մի բան պատահած չը լինէր։

Հաբչո՜ Իր.

Յովսէփը հորին մէջ նետած ատեն, արդեօք լացա՞ւ ու աղաչե՞ց իւր եղբայրները։

Պաթ. Այո՛, լացաւ ու աղաչեց, ինչպէս որ վերջը նորա եղբարքը խոստովանեցան իրենց բերնով[2]։

Մի՛ լար, ով Յովսէփ, քու եղբայրներդ քեզ հորը ձգեցին. բայց ստեղծող Աստուածդ քեզ շուտ կը հանէ անտի. մի՛ կարծեր թէ դուն մատղաշ պատանեակդ միայնակ իջար հորին մէջ, այլ երկինքն ու երկիրը արարչագործող Լակն էլ քեզ հետ մէկտեղ է[3]*, վասն զի Յովսէփի սէրը Աստուա-*

1. Եւ նստան ուտել զհացն. Ծննդ. Լէ. 25։

2. Արհամարհեցաք զնեղութիւնն ոգւոց նորա, յորժամ աղաչէրն զմեզ, և ոչ լուաք նմա. Ծննդ. ԽԲ. 21։

3. (Աստուած)... ընդ նմա էջ է գուբն. Իմաստ. Ժ. 13։

ծոյ վրայ կենդրոնացած լինելով՝ Աստուած չմոռցաւ զայն միայնակ։ Արդեօք ինչ կը խորհի Յովսէփ հորին մէջ, ինք իր վրայ կողբայ, թէ հայրը կը մտածէ, կամ թէ եղբարց վրայ կը ցաւի, որոնք մեծ մեղք գործեցին։

Որովհետեւ, իրենց զրկոտաց կարեկցելով՝ չար ճանապարհէն դառնալու համար սուրբերուն սովորութիւնն է նոցա համար աղօթել, ինչպէս սուրբ Ստեփանոս և Յակոբ Տեառն—եղբայր զիրենք սպանողներուն համար կաղօթէին, որ Աստուած ներէ նոցա յանցանաց։

Դուն նայէ Աստուծոյ գաղտնի դատաստանը, մինչ Յովսէփ հորին մէջ էր եղբայրները խնջոյք սարքած՝ իրենց զուարճութեան հետամուտ էին, սակայն Ռուբէն մի կողմ կը քաշուի, որ վերջէն գալով դուրս հանէ և ազատէ։ Եւ որովհետեւ Յովսէփի նկատմամբ սահմանուած վճիռը գործադրուելով Քրիստոսի օրինակ պէտք է լինէր, հրաշիւք ինն նոյն միջոցին Եգիպտոս կը գնար մի վաճառականաց կարաւան[1], Յուդայի մօքին մէջ նոր մի դադափար յղացաւ, և առաջարկեց եղբայրներուն՝ ասելով, փոխանակ մեր եղբայրը հորին մէջ մեռցնելու, լաւագոյն է այս Եգիպտոս գնացող վաճառականաց վաճառել, որուն միւս

1. Առաքեաց առաջն նոցա այր, ի ծառայութիւն վաճառեցաւ Յովսէփ. ՃԳ. 17։

եղբարք ևս հաւանելով, իսկոյն հորէն կը հանեն և իրրև գերի քսան դահեկանի կը ծախեն[1]։

Ցետոյ Ռուբէն գալով Յովսէփը հորին մէջ չը գտածին պէս՝ օձիքը պատռելով լաց ու կոծի կսկիծ. ինչու որ հորէն հանելով զայն ծախելին չէր գիտեր. ուստի երբ խնդիրը կամ իրողութիւնը եղբայրներէն իմացաւ նա էլ լռեց։

Կարևոր է նկատել թէ՝ որովհետև իրրև գերի վաճառեցին Յովսէփը, ի՞նչ զարմանք, որ նա չը յայտնեց թէ գերի չէր. վասն զի եթէ վաճառականները իմանային որ գերի չէր, չպիտի գնէին։ Ռուբեմն Յովսէփ յանձն կառնու գերի լինել, որպէս զի իւր եղբարց ձեռամբ չսպանուի։

Այս տեղ լաւ խորհրդածելու ևս. մի՛ կարծեր թէ աշխարհի վրայ պատահած ամէն չարիք ու նեղութիւնք մարդոց մեղքին համար են, այլ շատ անգամ Աստուծոյ կողմանէ անոնք կը տնօրինուին իւր իմաստուն և խորհրդաւոր գաւառատանին համեմատ աշխարհի կառավարութեան համար, երբեմն ընդհանրապէս, և երբեմն մասնաւորապէս։ Այսպիսի պատահարաց պատճառը միայն Աստուած գիտնալուն՝ մարդս պարտական է առանց գանգատանաց համբերութեամբ տանել։

Ինչպէս որ Յովսէփ՝ թէև բնաւ յանցանք

1. Եւ վաճառեցին զՅովսէփ Իսմայէլացւոցն քսան դահեկանի. Ծննդ. ԼԻ. 28։

չունենալով իբրև գերի վաճառեցաւ, և դնող վաճառականէ պարզապէս իրենց նիւթականի համար գործեցին, բայց Աստուած մի բարձրագոյն նպատակի համար, այն է Եգիպտոսի իշխան կարգելու համար կը կարգապրէ և կը պրկէ զայն, ինչպէս Յովսէփ ինքն էլ վերջէն խոստովանեցաւ[1] Աստուծոյ սոյն հեռատես և խորհրդաւոր տնօրէնութիւնը։

Ը։

Յովսէփին եղբարները ի՛նչպէս իմացուցին իրենց հօրը նորա վիճակը։

Պապ. Յովսէփի վիճակը չէն իմացուներ, այլ մի գազան կերաւ զայն ասելով կը խաբեն իրենց Հայրը։ Զոր օրինակ անարդար գործ գործողներն՝ եթէ իրենց յանցանաց քաւութիւն չտրուներն, գնալով իրենց եղբօր դէմ գործած անիրաւութեան ու անգթութեան վրայ ատելօսութեան յանցանքն էլ կը բարդեն։ Ուստի զի՝ իբրև թէ Յովսէփ մեռնելով չրհորին մէջ թաղուեցաւ, և յետոյ յարութիւն առածի պէս հորէն ելնելով Եգիպտոս գնաց։ այսպէս Յովսէփ ողջ եղած աեն՝ մի չար գազան զայն կերաւ ասելով իրենց Հայրը խաբել՝

1. Ոչ եթէ դուք առաքեցիք զիս այսր, այլ Աստուած։ և արար զիս... իշխան ամենայն երկրին Եգիպտացւոց։ Ծննդ. խե. 8։

մեծ յանցանք էր։ Իրաւ է՝ որ Ռուբէն առաջ Յովսէփը ազատել ուզելով հորը նետել, և Յուդա էս ծախել առաջարկեցին, բայց այս անգամ ամէնքն էլ սուելու կը միաբանին, որպէս զի իրենց յանցանքը չը յայտնուի։

Թէպետև եթէ Յովսէփը մեռցնէին, իրենց յանցանքը առաւել կը ծանրանար, բայց մեռեալը միջաեղ լինելով թշնամիի չարագործութեան հանդիպած է, կասուէր։ Ուստի ենդը մնալով մի ուլ կը մորթեն և Յովսէփի ծաղկենկար պատմուճանը արեան մէջ թաթախելով՝ իբր թէ իրենք բնաւ տեղեկութիւն չունենալով դաշտին մէջ գտածի պէս իրենց հօրը Յակոբին կը պրկեն որ նայի թէ արդեօք իւր որդւոյն պատմուճանն է[1]։ Ընդա այս վարմունքով ասել կուզեն թէ՝ «տե՛ս, չինած զգեստդ Յովսէփը ի՛նչ վիճակի մէջ ձգեց»։ զի կարող էին զայն ոչնչացնելով բոլորովին լռութիւն պահել։

Նկատէ, թէ նախանձն ո՛ր աստիճան չար է, քանզի պատմուճանը պրկելու ժամանակ չեն ասեր թէ՝ նայէ, մեր եղբօր Յովսէփի՛ն է, այլ՝ նայէ՛, թէ քո որդւո՞յն է։ Վասն զի ընդա այն աստիճան թշնամացած էին Յովսէփին, որ իբր եղբայր չընդ-

1. Առաքեցին զպատմուճանն ծաղկեայ տանել առ հայրն լուբեանց և ասեն, զայդ գտաք, ծանի՛ր, եթէ որդւո՞յ քո իցէ պատմուճանդ։ Ծննդ. Լէ. 32։

դանելով անուն էլ չեն յիշեր բնաւ։ Բայի այդ՝ այս կերպ հարցմամբ իրենց հօր յանդիմանելէն ուղղած կը լինին, թէ Յովսէփ շատ սիրելովդ՝ նա էր միայն քու որդին, հիմայ ահա ուրեմն քու սիրելի որդուն վիճակը։ Մանաւանդ շատ անգութ և անհաւատարիմ գտնուեցան իրենց հօր. ինչու որ Յովսէփի պատմուճանը այդ եղանակաւ դրկելը Յակոբին կեանքը մեծապէս վտանգի ենթարկել էր. քանի որ Յովսէփը սաստիկ սիրելուն՝ նորա արիւնաշաղախ զգեստը տեսածին պէս անխուսափելի կարող էր մինչև անգամ մեռնիլ։

Այո՛, թէպետև Յակոբ յաւէն չը մեռաւ, բայց մահուան դուռն հասաւ. ով պէտք է միխիթարէր Յակոբը, արդեօք որչափ դառն կսկծանօք նորա սիրտը ի իւր խոցեցաւ[1], որ աստիճան նորա հոգին այս ահագին հարուածէն անբուժելի կերպով վիրաւորեցաւ։ Դարձիր՝ պատերազմի դաշտին վրայ իւր Աբիսողոմ որդւոյն մահը լսելով այն աստիճան լացաւ ու կոծեց, որ մինչև իսկ նորա տեղ ինքը մեռնելու բաղձանք յայտնեց[2]։ Իսկ Յովսէփ՝ որ այնչափ առաքինի և բարեբարոյ պատանի մի էր, և միշտ էլ իւր հօր կատարելապէս

1. Ծանեաւ զնա և ասէ, պատմուճանն որդւոյ իմոյ է. գազան չար եկեր զնա. Ծննդ. Լէ. 33։

2. Որդեակ իմ Աբիսողոմ, Աբիսողոմ ո՛րդեակ իմ, ո՛ տայր զմահ իմ փոխանակ քո. Ր. Թագ. ԺԸ. 33։

հնազանդ, արդիօք որչա՞փ մեծ վիշտ պատճառեց Յակոբին, և արտասուք քամեց նորա աչքերէն։

Որովհետև նա բարձրաձայն լալով ու ողբալով զգեստները կը պատռէ, քուրձ կը հագնի, և երկար ատեն մահուան սուգը կը պահէ[1]։ Թէև նորա որդիքը կուղեն մխիթարել զինքը, բայց անկարելի կը լինի. ընդհակառակն կը փափաքէր մեռնել, որ Յովսէփը գտնի[2], Յիրաւի, Յակոբին այս սրատապոյզ և ապէխարշ վիճակը, նորա լացն ու կոծը նորա որդիքը տեսնելով նոցա սիրտն ևս կը մորմոքի և կարիւնոտի, քանի որ յանցանքը՝ մարդուս վիրքը չի թողուր երբէք որ հանդարտի. ինչպէս հաքէն իրենք էլ խոստովանեցան[3]։ Թէև Յակոբ մեռնել կը կամենայ, որ Յովսէփը գտնի, բայց Աստուած՝ իւր մահէն առաջ նորա մօտ կը ղրկէ զայն, ինչպէս որ ասկէ վերջը պիտի տեսնենք ըստ կարգի։

Ուրեմն ահա աշխարհի այս դիւրափոփոխ և անհաստատ վիճակէն։ Յակոբ որչափ որ Յովսէփը շատ սիրելով նորա վրայ կուրախանար, այնչափ

1. Եւ պատառեաց զհանդերձս իւր, և քուրձ զգեցաւ ի վերայ մէջոյ իւրոյ. և սուգ ունէր ի վերայ որդւոյն իւրոյ աւուրս բազումս. Ծննդ. Լէ. 34։

2. Ասէ, զի իջից ես սովին սգով առ որդի իմ ի գժոխս, և ելաց զնա հայրն իւր. Ծննդ. Լէ. 35։

3. Քանզի ի մեզն եմք վասն եղբօր մերոյ. Ծննդ. Խբ. 21։

աւելի նորա պատճառաւ տրամաբթեան և յաւուց ենթակայ եղաւ։ Վասն զի մարդս ի մարմնաւորս ինչ բանի որ չաս սէր տայ, մի օր անպատճառ նորա երեսէն վիշտ պէաք է կրէ։ Ըրբ հայր մի իւր որդւոց միոյն, կամ իշխան մի իւր հպատակներէն մի քանիսին կողմնակցութիւն և մասնաւոր հակում կը ցուցնէ, կարող է միւսներուն նախանձ և հակառակութիւն ծագել, ու տեսակ տեսակ ազէտալի խռովութեանց և երկպառակութեանց պատճառ դառնալ[1]։

Այսպէս Ս. Գիրք՝ Յակոբի չորրորդ որդուն վրայ կը խօսի, որ ամուսնանալով երեք որդի կունենայ, Էր, Օնան և Սիլօմ՝ բայց Էր և Օնան ամբարիշտ և չար լինելով Աստուած զանոնք կը մեռցունէ։ Ցետոյ երկու որդիք ևս կը ծնի. Փարէզ և Զարա, ինչպէս որ իւր տեղւոյն կը յայտնէ և արդէն։

Հատոր I.

Յովսէփը գնող վաճառականաց ուր տարաւ զայն։

Պաղ Եգիպտոս, ուր Թագաւորին պահճապետը, որուն անունն էր Պետափրէս, գնեց զայն։ Յովսէփ ամէն կերպով խոհեմ, հաւատարիմ և

1. Երբեմն տեսնին եղբարք նորա թէ սիրէ զնա հայրն քան զամենայն որդիս, իւր, ատեցին զնա. Ծննդ. Լէ. 4։

աջողակ լինելով նորա բոլոր գործերը յաջողութեամբ պսակուէլէն զատ[1], նորա պատճառաւ Աստուած Պետափրէսի տունն էլ օրհնեց[2], վասնորոյ յիշեալը շատ գոհ մնալով տան կառավարութիւնը կը յանձնէ Յովսէփին։ Այո, Յովսէփ անուամբ գերի է, բայց յաչս իւր տիրոջ յոյժ պատուաւոր։

Դուն տես Յովսէփի առաքինութիւնը. վասն զի՝ ինչպէս որ նորա եղբայրները մնալովնը միայն սպաննել ցանկացան, նմանապէս Պետափրէսի կինը մեղանչելու բազմանօք նորա հոգին մեռցնելու հետամուտ կը լինի։ Վասն զի իւր ծառայութեանց առթիւ կանանոյը երեւելութիւն ունենալով, թշուառական կինը երկար առեն կը ձանձրացնէ զայն իւր չար և հրապուրիչ առաջարկութեամբ, բայց Յովսէփ Աստուծմէ կը վախնայ, և իւր տիրոջ ևս հաւատարիմ լինելով՝ աւելի կը նախընտրէ մեռնել քան թէ յիշեալի չար առաջարկին ամենափոքր հակում և յօժարութիւն ցոյց տալ։

Ընդ հակառակն, նա կը համարձակի խրատ տալ վատաշուք կնոջ թէ՝ իմ տէրս ամէն կերպով ինձ յանձնուած է, ես ի՞նչպէս կարող եմ այսպիսի չար և մեծ գործ կատարելով առաջի Աս-

1. Եւ էր Տէր ընդ Յովսէփայ՝ և էր այր աջողակ. Ծննդ. Լթ. 2։

1. Օրհնեաց Տէր զտուն Եգիպտացւոյն վասն Յովսէփայ. Ծննդ. Լթ. 5։

աուծոյ մեղանչել[1]։ Յովսէփ՝ թէև երկար ժամանակ սոյն փորձութեան կրակին ենթակայ մնաց, բայց Աստուծոյ շողոմութեամբ չպրկցաւ կան մեղքեր, որոց կարելի է հաղթահատել ազով և դիմադրութեամբ յաղթել։ Բայց այնպիսի մեղք, յորմէ մարդուս պաաիւք կը վնասուի, խոյս տալով[2] կը յաղթուի։

Ցետոյ երբ Յովսէփ գարձեալ ծառայութեան մի տրթիւ կանանոց գնացած էր, յիշեալը ձեռք նետելով զգեստէն կը բռնէ, որ իւր չար միտքն ի գործ դնելով մեղանչէ։ Յովսէփ նորա սոյն ապօրէն ընթացքը տեսնելով, իսկոյն իւր վերարկուն անդ թողլով անմիջապէս կանանոցէն կը փախչի։ Ցիրաւի, վերարկուն այնտեղ թողուլ՝ Յովսէփին համար ցաւալի էր, բայց այդ անամօթը՝ այն առիթեան լրբացաւ որ նորա մօտ մնալն, ու նորա դիպած զգեստը վերատին հագնիլը վտանգաւոր սեպելով՝ բռնկած տունէ մի փախածի պէս, հոգին ազատելու ճարը կը նայի ամենէ առաջ։

Այս պարագային մէջ Յովսէփ մեծ քաջութիւն արաւ, ինչու որ անձին յաղթելն մեծ քաջութիւն չկայ մարդուս համար։ Մանաւանդ թէ Աստուած զանի մեղքէ փրկեց։ Քանզի ցանկու-

1. Չիմ՞րդ առնիցեմ զբանդ զայդ գչար և գմեծ, և մեղանչիցեմ առաջի Աստուծոյ Ծննդ. Լթ. 9։

2. Փախեարուք ի պոռնկութենէ. Ա. Կորն. Ջ. 18։

թեան կրակին մատնուիլ և չպրկիլ Աստուծոյ յաուկ շնորհաց և օգնութեան կարօտ է[1]։ Արդարև Յովսէփ հոգևոր մահ պատճառող մեղքէն ազատեցաւ, բայց նախ որ Աստուծոյ երկիւղը սրտէն հանող և ամօթոյ քողը երեսէն պատառող անզգամ կինը ստութեամբ իւր իսկ յանցանքը Յովսէփի վրայ ձգելով՝ ինչպէս զայն արատաւորել կամեցաւ, իրեև թէ արևուն վրայ ցեխ ձգելու ձիգ թափեց։

Սակայն մի՛ զարմանար, քանի որ նոյն ընթացքին մէջ գանուողներուն վիճակն այս է։ Նա՝ որ մի անգամ սատանային ձեռքը գործիք կը լինի, երբ իւր կրից յագուրդ տալով սիրականը կարող չէ հոգւով սպաննել, կը ջանայ մարմնով սպանելու։ Վասն զի մարմնաւոր սիրոյ վախճանը թշնամութիւն և ատելութիւն է, ինչպէս որ յիշեալ անզգամ կինը՝ մեղաց սուրը դահճի սուրին փոխարկեց։ Իրև թէ Յովսէփ չար դիտաւորութեամբ կանանոցը մտած և վերարկուն այնտեղ թողած է ասելով՝ Պետափրէսին կը գանգատի, նա էլ առանց քննութեան և միայն կնոջ խօսքին վրայ Յովսէփը կը բանտարկէ։

Այո՛, Յովսէփ մահապարտից կարգին մէջ

1. Նա (Աստուած) զարգասն վաճառեալ ոչ եթող ի ձեռանէ, այլ ի մեզաց փրկեաց. Իմաստ. Ժ. 13

շղթայակապ նետուեցաւ[1], բայց նորա հոգին ազատ է և ոչ մի կապանաց տակ ձնշուած չէ, նա կապուած է միայն մարմնով. ինչու որ անմեղ մարդը նիւթական շղթայի նեղքև ընկճուած միջոցին անգամ, նորա հոգևոր քաղցր ազատութիւնը կայ ու կմնայ։ Շատ ժամանակ չանցած բանտապետը Յովսէփի ոտքին շղթայն հանելով բանտի կառավարութիւնը անոր կը յանձնէ[2]։

Սկսաւ, ինչպէս որ Պետափրէսի տան մէջ Յովսէփ մեծ պատիւ առնէր, և ուրիշներուն վրայ կիշխէր, նոյնպէս բանտին մէջ իշխանութիւն կը տրուի իրեն։ Ուստի նա՝ որ Աստուծմէ կը վախնայ, մեզքէ կը փախչի, ամէն անդ պատիւ կը վայելէ։

Ուրտա՛ռ, եթէ կուզես ցանկութեան հրոյն բորբոքումէն ազատիլ, Աստուծոյ երկիւղը սրտիդ երբէք մի՛ հաներ, կրկին մի՛ հետևիր, բարեպաշտութիւն մի՛ անհետանալ մի՛ աներ, անզգամ կնոջ հետ երբէք բարեկամութիւն ու յարաբերութիւն մի՛ հաստատեր, նորա գոնուած տեղէն խոյս տուր. ինքնիրեն վստահելով մեզմէ պատ-

1. Խնամարկ արարին ի կապանս պատս նորա. և էանց ընդ երկաթ անձն նորա. Սաղմ. ՃԳ. 17։

2. Եւ ի կապանս ոչ եթող զնա ի ձեռանէ, մինչեւ եբեր նմա զաւազան թագաւորութեան. Իմաստ. 14։

ճառ տուող տեղը բնաւ մի՛ յամձախեր։ Վասն զի մարդս ոչքան առաքինի ևս լինի, զարձեալ զարատաւոր է մեզմէ շարժառիթներէն հեռանալով հեռանալ[1]։ Ցիւրաքանչիւր կրակն ընկած քարը վառելով փոշի չի դառնար, բայց կը ջնաւորի և կանպիտանանայ։

Հատուած Ի.Ա.

Յովսէփ որշափ ատեն բանտին մէջ մնաց։

Պատ. Երեք տարի։ Սակայն մի՛ կարծեր թէ Աստուած նորա վրայէն իր ակնարկը վերցուց կամ հսկողութիւնը պակսեցուց, այլ մանաւանդ մեծ վառօք հանելու համար այնչափ ատեն բանտին մէջ կը թողու։ Վասն զի թագաւորաց սիրտը ի ձեռին Աստուծոյ[2] է. և ահա Եգիպտոսի Փարաւոնն թագաւորը իւր երկու պաշտօնէից՝ առկառապետին և մատակարարին, վրայ բարկանալով Յովսէփի գտնուած բանտը կը նետէ, որոնք երկուքն էլ մի գիշերի մէջ երազ տեսնելով Յովսէփին կը պատմեն։

Տակառապետը երազին մէջ որթատունկ մի կը տեսնէ, որուն վրայ երեք ճիւղեր կա-

1. Ըստ առաջինն՝ Ի բառնալ պատճառին՝ բառնի և պատճառեցեալն։

2. Սիրտ թագաւորի ի ձեռս Աստուծոյ. Առակ. Իա. 1։

յին և սոցա վրայ երեք ողկոյզներ, իւր ձեռքը բռնած էր Փարաւոնի գինու բաժակը, որոյ մէջ երեք ողկոյզները քամելով Փարաւոնին կուտար։ Յովսէփ կը պատասխանէ թէ երեք ճիւղերն ու երեք ողկոյզները երեք օր կը յայտնեն, ուսոի երեք օրէն քու պաշտօնիդ պիտի հաստիս։ Մա՛ տակարարն էլ կը տեսնէ թէ գլխուն վրայ երեք ամաններ կային, և երեք ամաններուն մէջ Թագաւորին կերած կարկանդակէն գտնուելով, յորմէ Թռչունները կուտէին։ Յովսէփ կը պատասխանէ թէ երեք օրէն Թագաւորը գլուխդ կտրելով փայտէ պիտի կախէ, և մարմինդ Թռչունները պիտի ուտեն։

Արդարև Յովսէփի մեկնութեան համեմատ գործը կատարուեցաւ։ Վասն զի երրորդ օրն, որ Փարաւոնի ծննդեան օրն էր, նա իւր ծառայից և մեծամեծաց խնջոյք տալուն առթիւ վերոյիշեալ պաշտօնեայքը յիշելով՝ տակառապետը իւր պաշտօնին մէջ կը վերահաստատէ և մատակարարն էլ կախել կուտայ։ Յովսէփ՝ տակառապետին երազը մեկնած ատեն կը խնդրէ յիշեալէն որ Փարաւոն Թագաւորին ազաչելով զինքը բանտէն ազատէ։

Յովսէփի առաքինութենէն օրինակ առ։ իրաւ է որ իւր ազատութեան համար կաղաչէ, բայց գլուխը եկած զժբաղտութիւնը եղածին պէս չը պատմելով լսողը կարելւոյն լաւ երևոյթով կը բացատրէ և կը ներկայացնէ իւր խնդիրքը, որպէս զի

ոչ զոք մեղադրած և բամբասած լինի։ Վասն զի փոխանակ յայտնելու Թէ իւր եղբայրքը զինքը վաճառեցին, և իւր տէրոջ կինը զինքը զրպարտեց, պարզապէս կասէ Թէ զիս իմ երկրէն գողցան և այստեղ առանց յանցանքի բանտարկեցին[1]։

Իրօք իւր եղբայրները՝ երենց հօր գրկէն գողցան զինքը, և իրր գողօնք՝ հանդիպած մարդուն ծախեցին. նմանապէս ճշմարիտ էր որ Եգիպտոսի մէջ առանց որևէ յանցանք գործած լինելու բանտարկուեցաւ։ Այո՛, ինչ որ Յովսէփ խօսեցաւ և պատմեց ճշմարիտ էր, բայց ամէն ճշմարտութիւն չը յայտնեց։ Վասն զի մարդս պարտական է, ինչ որ ճշմարիտ է, զայն միայն խօսիլ, և ոչ Թէ ամէն ինչ որ ճշմարիտ է, ամէն տեղ խօսիլ։

Դուք ասա՛ ի միտ առ Աստուծոյ գաղտնի գաղտասանքը, նա՝ որ Յովսէփի հետն էր, կարող էր անշուշտ քիչ ժամանակի մէջ զայն ազատել, բայց որովհետև Յովսէփ տակառապետն ազատելով նորա միջնորդութեամբ շուտով ազատիլ յուսաց այս պատճառաւ իսկ երեք տարի բանտին մէջ ձեռց։ Վասն զի տակառապետը ազատուելէն յետոյ Յով-

---

1. Գողանալով գողացան զիս յերկրէն Եբրայեցւոց, և առա ոչինչ արարեր, և արկեր զիս ի տուն գերեզմանի։ Ծննդ. Խ. 13։

ակը կը մոռանայ երկու տարիէն աւելի ժամանակ։ Արդ՝ երբ ազատութեան ժամը կը հնչէ, Աստուծոյ կարգադրութեամբ Փարաւոն զարմանալի մի երազ կը տեսնէ, որպէս թէ ինքը Նեղոս գետին եզերքը զանուելով կը տեսնէ որ եօթն պարարտ և գեղեցիկ երինջներ նոյն գետին միջէն դուրս կուգան և այն տեղ կարածէին. յետոյ եօթն ուրիշ երինջներ, որոնք սատիկ նիհար և տգեղ էին, նոյն գետէն ելնելով յիշեալ պարարտ երինջները կերան։ Ցետոյ զարթնելով նորէն կը քնանայ այս անգամ կը տեսնէ որ մի ցօղունի արմատէն եօթն գեղեցիկ և լեցուն հասկեր կը բուսանին, և ապա եօթն ուրիշ հասկեր, որոնք տկար և խորշակահար էին, նոյն արմատէն ելնելով առաջին լաւ և ընտիր հասկերը կերան։

Փարաւոն սոյն երազները տեսնելէն զկնի, երբ արթնցաւ, Եգիպտոսի բոլոր դիտուններն կը հրաւիրէ իր մօտ, որ տեսած երազոց մեկնութիւնը տան, բայց անոնցմէ ոչ ոք կարող կը լինի մեկնել, այն ատեն տակառապետը իսկոյն Ցովսէփը մտաբերելով Փարաւոնին կը պատմէ թէ ինչպէս նա կարող եղած էր մեկնել իւր երազը և թէ նորա տուած մեկնութիւնն էլ ճշդութեամբ կատարուած էր. վասնորոյ Թագաւորը մարդ կը ղրկէ

1. Մինչև եկեսցէ բան նորա. և բան Տեառն փորձեաց զնա. Սաղմ. ՃԴ. 18։

Ցովսէփը բանտէ հանելու, որուն երկարած մազերը կարելով և հանդերձն էլ փոխելէն յետոյ մեծ պատուով Փարաւոնի ներկայութեանը կը հանեն զայն. այն ատեն Ցովսէփ երեսուն տարեկան էր։

Թագաւորը՝ տեսած երազներուն պատմութիւնը կը կրկնէ նորա առջև, որ Աստուծոյ շնորհօք լեցուած կը պատասխանէ թէ Աստուած քեզ յայտնած է ինչ որ պիտի անէ։ Վասն զի եօթն պարարտ երինջները եօթն առատութեան տարիներ իսկ եօթն նիհար երինջները եօթն սովի տարիներ կը նշանակեն։ Նմանապէս եօթնական ընտիր և ազազուն հասկերն՝ առատութեան և սովի տարիները կը յայտնեն, երկու երազներն էլ միևնոյն միտքն ունին։ Ցովսէփ յայտնելով վրանգամայն թէ այս գործը շուտով պէտք է իրականանայ և կատարուի, գործը կառավարելու եղանակն էլ կը թելադրէ ասելով թէ իմաստուն մարդ մի գտնելու և նորան յանձնելու է, որ եօթն առատութեան տարիներուն երկրին բոլոր արդիւնքը ժողովէ, որպէս զի սովի տարիներուն մէջ կարող լինի երկիրը կառավարել։

Նայէ դուն Ցովսէփի համարձակութեանը, Փարաւոն՝ իւր երազին մեկնութիւնը միայն կուզէ, իսկ նա երազը մեկնելէն յետոյ, այդ մասին հարկ եղած միջոցն էլ ցոյց կուտայ։ Արդարև պանդոխտ մարդու մի համար մեծ համարձակութիւն էր մի փառաշուք թագաւորի՝ կառավարութեան եղանակ

ուսուցանել։ Սակայն մի՛ կարծեր թէ Յովսէփ ինքն իրեն այս համարձակութիւնը առաւ, կամ Փարաւոն ինքնին նորա առաջարկն ընդունեց. այլ Յովսէփին խօսել տուող Աստուածը Փարաւոնին ևս ընդունել տուաւ ցոյց տրուած միջոցը։

Վասն զի Փարաւոն Յովսէփի խօսքերուն շատ ախորժելով՝ քեզմէ առաւել իմաստուն մարդ ո՞վ կարող է լինել, քանի որ Աստուած քեզ յայտնեց այդ բանները, զքեզ կը կարգեմ իշխան Եգիպտոսի վրայ, ասելով, իւր մատանին նորա մատը կը դնէ, և նախարարաց յատուկ փոխարքայի վերարկուն հագցնելով, ըստ ժամանակի սովորութեան նորա պարանոցէն ոսկի մանեակ կախեց, և երկրորդ կառքի վրայ հեծցնելով նորա առջև մունետիկ կանչելու հրաման կուտայ, որ ամէն մարդ տեսնելով նորա հրամանաց հնազանդին առանց բայառութեան, միայն ևս գահովս քեզմէ վեր լինիմ կասէ։

Փարաւոն Յովսէփի անունն էլ փոխելով Փսոմթոմփանէ կը կոչէ, որ աշխարհի փրկիչ կը նշանակէ, ըստ եգիպտական բարբառին։ Մինչդոյն ժամանակ Արեգ քաղաքի Պետափրէս քուրմին Ասանէթ անուն աղջիկն էլ անոր կնութեան կուտայ։

Ապրած ատեն, Թէպէտև Յովսէփ իբր գերի ծախուելով միջոց մի Պետափրէսին տունը և յետոյ բանտին մէջ մնաց, բայց Աստուծոյ երկիւղը սրտին չը հանելով միշտ նորա ողորմութեան յու-

սալուն համալ, չափազանց մեծ փառքերու հասաւ։ Որովհետև այն ատեմնան ընդարձակ արտօնութիւններ կը շնորհէ անոր, որ բոլոր թագաւորութեան գործերը ըստ ամենայնի նորա խնամոց և հսկողութեան կը յանձնէ։

Ցիրաւի Աստուծոյ ողորմութեամբ եօթը տարի երկրին արգիւնքը այնչափ առատ կըլինի, որ Յովսէփ ծովու աւազին նման անհամար ցորեն կը ժողովէ։ Ցետոյ եօթը տարիներ ևս սով լինելով, ժողված ցորենով սովամահ լինելէ բոլոր ժողովուրդը կազատէ իւր խոհական և իմաստուն կարգադրութեամբ։ Տակաւին օվոու տարիները չը հասած՝ երկու արու զաւակներ կը ծնին Յովսէփի, որոց մեծին անունը Մանասէ, իսկ փոքրին անունը Եփրեմ կը դնէ։

Հարց. Ի.

Յովսէփ իշխան լինելէ յետոյ գինք զրպարտող անամօթի կինն ինչ վրէժ առաւ։

Պատ. Ո՛չ երբէք. վասն զի վրէժխնդրութիւնը Աստուծոյ կենդանի պէտք է։ Արդ՝ Յովսէփ՝ ինչպէս որ Աստուծոյ շնորհօք իւր կրից չարչարանքն ևս զսպելով ոչ ոքէ վրէժխնդրութիւն առնել կուզէ։ Նա մանաւանդ պատուհասութիւն առնելով փոխանակ վրէժ խնդրելու, ընդհակառակն բարերարութիւն ևս կանէ յօժարակամ։

Վասն զի նա ոչ միայն մարմնաւոր կառավարութեան պատկանեալ խնդրոց, այլ և առաքինութեան ճանապարհին մէջ կատարեալ լինելով Եգիպտոսի նախարարք ու մեծամեծք ևս նորա խրատներուն կանազին յօժարամիտ[1]: Բայց այդ, զինքը բամբասողները նորա առաքինութենէն պատկառելով ի հարկէ ստիպեալ իրենց անիրաւութիւնն և սահմանսութիւնը կը խոստովանէին[2], քանի որ ուշ կամ կանուխ Աստուած ճշմարիտը կը յայտնէ: Յովսէփ չարին փոխարէն բարիք անելով իւր առաքինութիւնը յայտնեց, որով իւր Թշնամիք էլ զղջացին:

Ուրեմն՝ չարին փոխարէն բարիք անելը՝ Թշնամին անաշխատ յաղթել է. քանզի բուռն զօրութեամբ յաղթուողը՝ ապստամբութիւն կը խորհի: Եթէ կուզես մեղայդ քաւութիւն դանել, հակառակորդիդ յանցանաց նկուն[3]. որովհետև Աստուած է, որ ամէնուն գործերը քննելով կը դատէ արդարութեամբ: Երբ դուն ըստ հաճոյս քո ոտխէն վրէժխնդիր կը լինիս, Աստուծոյ յաւուկ դատաստանը դուն ինքնին անտած և գործադրած

1. Խրատել զիշխանս նորա որպէս զինքն, և զծերս նորա իմաստունս ուսուցէ. Սաղմ. ՃԴ. 21:

2. Սուտ եցոյց զբամբասողս նորա. Իմաստ. ԺԴ. 14:

3. Թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց. Մատթ. Զ. 12:

կը լինիս, որ վհետև չես համբերեր որ Աստուած իւր բարձր և արդար կամաց համաձայն դատէ, այս պատճառաւ պարտական կը մնաս, քանի որ յանցաւորը պատժել՝ Աստուծոյ յաւուկ է[1]:

Ինչպէս որ աշխարհիս վրայ ոստիկան և դատաւորներ կան, որոնք Աստուծոյ կողմանէ իրենց նորա փոխանորդ՝ պատժոյ արժանի եղողները պատժելու և զրկեալը զրկողին ձեռքէն ազատելու համար կարգուած են: Միայն թէ սա պայմանը ի նկատի ունենան, որ իրենց անձնական հակառակորդները պատժելու չեն, այլ ուրիշներուն միաբանողները ըստ արդարութեան և իրաւանց պատժելով՝ իրենց անձանց համար երբէք պատասխանատու կանգնած չը լինին[2]:

Վասն զի, զոր օրինակ իւր հակառակորդին վրէժ լուծող մասնաւոր անհատը Աստուծոյ առջև յանցաւոր կը լինի, նմանապէս եթէ իշխանք և դատաւորք իրաւանց և արդարութեան սկզբանց համաձայն յանցաւորը դատելով չը պատժեն, անմեղ և անյանց մարդոց դէմ կանիրաւին[3], այս

1. Ցաւուր վրէժխնդրութեան հատուցից, ի ժամանակի յորում սխալեսցի ոտն նոցա. Բ. Օրին. ԼԲ. 35:

2. 2. Մի զանձանց վրէժ խնդրէք սիրելիք, այլ տուք տեղի բարկութեան. Հռոմ. ԺԲ. 19:

3. Ըստ առաջին, ներել անիրաւաց է անիրաւել արդարոց:

պատճառաւ իրենք ևս Աստուծոյ կողմանէ կը պատժուին։

Հատուած Լ.Գ.

Յովսէփ՝ իւր եղբարց անզգամ վարմունքն եւ իւր վիճակը Եգիպտոսի մէջ հօրը Յակոբին իմաց տուած արդեօք։

Պապ. Ինձ չի տուաւ։ միւսներ, զարմանալու բան է, որ Յովսէփ Եգիպտոսի, իսկ Յակոբ Քեբրոնի մէջ գտնուելով, որոց հեռաւորութիւնը վեց ժամուան չափ է (Սուէզի կողմէն), ինչ խորհրդով արդեօք Յովսէփ քսան երեք տարի իւր վիճակին վրայ տեղեկութիւն չի տար հօրը։ Մինչ Յովսէփ այնչափ կարծրասիրտ մի անձ էր, քանի՞ ընդհակառակն՝ հօրը սիրովը միշտ կը տոչորէր և հառաչանօք կանգնէր ժամանակը։ նա՝ այլ և այլ խորհրդածութեանց պատճառաւ այդչափ ժամանակ իւր վիճակը յայտնելու կը դանդաղի։

Յովսէփ գիտէ որ եղբայրքը ի հարկէ իրեն համար «մեռաւ» պէսք է ասեն իրենց հօրը, մինչ ինքը գլուխն եկածը լմայնէր, անպատճառ հայրը նոցա դէմ բարկանալով կամ նեղանալով՝ թերևս իրենց միջև մի մեծ հակառակութիւն յառաջ գալն զատ՝ հայրական տան ցրուիլը հաւանական հետևանք կը լինէր այդ ընտանեկան անհամաձայնութեան։ Որովհետև, մինչ լսէր Յակոբ թէ՝ իւր սիրելի որդին զերի և Եգիպտոսի մէջ է, բո-

լոր սաստուածքը կը զոհէր նորա փրկութեան համար, կամ ինքը նորա մօտ կը գնար։ Կարելի է որ այս պատճառաւ Բենիամինն էլ միւս եղբայրներէն ձեռուէր, քանի որ երկուքին մայրը մի էր, և այժմ Յակոբի մտնաւոր գորովին առարկան։

Նմանապէս, մեծ իշխանութեան հասնելէ յետոյ իւր փառաւորեալ վիճակն յայտնէր, գարձեալ ծանր անպատեհութիւնք կարող էին ծագիլ իսկոյն։ Վասն զի եղբայրները առ երկիւղի կամ ցաւոց՝ իւրաքանչիւրը մի մի կողմ կրնային ցրուիլ, որով նոքա կը ձեռուէին։ Նմանապէս, մեծ գերութեան մէջ գինքը ճանկելով՝ փոխարքայ դառնալէն յետոյ յայտնէր, հպարտութեան կարելի էր վերագրել։ Բայց այդ՝ տեսած երազին նայելով փոխանակ օր ըստ օրէ փառք ձեռք բերելու, գերի և բանտարկեալ վիճակի մտնաւածին պէս՝ սկսաւ խորհիլ թէ՝ հարկաւ սորա մէջ մի գաղտնիք կայ, ուստի գինքը Աստուծոյ կամաց յանձնելով կը համբերէ և վիճակն գոհ լինելով Աստուծմէ յոյսը չի կտրեր, և իշխան լինելէ յետոյ ևս առանց հպարտանալու, խոնարհ սրտով շնորհակալ կը լինի Աստուծոյ։

Նմանապէսև Աբրահամն եղած աստուածային յայտնութեան համեմատ՝ (ինչպէս որ առանեթորդ հատուածին մէջ յիշուեցաւ) նորա որդիքը Եգիպտոսի մէջ չորս հարիւր տարի պանդխ-

տուքիւն քաշելով և արշաւանք կրելով հանդերձ պէտք է բաղմանային, և այս պատճառաւ, հարկ էր որ Յակոբ իւր ամբողջ ընտանիքով Եգիպտոս գնայ և այնտեղ ապրելով Աստուծոյ սահմանած կարգադրութիւնն ու վճիռը կատարուի կամ առ կէտ: Վասնորոյ Աստուած համբերել կուտայ Յովսէփին, որ սովի ժամանակ մինչև որ Յակոբ Եգիպտոս չը փոխադրուի իւր բոլոր պարագայիք ինքզինքը չը յայտնէ:

Դարձեալ, որպէս զի Յակոբին այնչափ երկար առանն Յովսէփի համար ի խոր սուգ համակեալ թախծագին ողբերէն ու հառաչանքներէն համայն աշխարհ օրինակ առնու. որովհետև յիշեալը Աստուածապաշտ և առաքինի լինելով հանդերձ միշտ մի օրինակ ուրախութիւն ու աւետական երջանկութեան օրեր չունեցաւ, ինչպէս որ Արրահամ և Իսահակ ևս, թէև առաքինի և բարեկրօն մարդիկ էին, բայց այս երկրի վրայ շատ տառապանք կրեցին:

Հարց. ՀԴ.

Յովսէփին երազը ինչպէ՞ս կատարուեցաւ:

Պաս. Վերոգրելոց հատուածին՝ երբ առաւուտեան տարիները անցնելով սովու տարիները յաջորդեցին, ամէն կողմէ մարդիկ Եգիպտոս կերթային Յովսէփէն ցորեն գնելու: Քանանու երկրին մէջ ևս սով լինելով՝ Յովսէփի եղբայրները իրենց հօր

կարգադրութեամբ Եգիպտոս կը գնան ցորեն գնելու նպատակաւ: Նոքա տասն եղբարք ի միասին Յովսէփի ներկայութեան ելածին պէս՝ Յովսէփ իսկոյն կը ճանաչէ զիրենք, բայց նոքա չեն ճանաչեր Յովսէփը. և երբ բոլոր մարդոց պէս երեսայ վրայ մինչև գետին խոնարհելով ողջոյն կուտան, Յովսէփի առաջին երազը կատարուեցաւ: Վասն զի ինչպէս որ եղբայրներուն կապած որայք՝ իւր կապած որային առաջին խոնարհելով երկրպագեցին, նմանապէս նոքա ցորեն գնելու առթիւ գալով Յովսէփի առջև խոնարհեցան մինչև գետին և երկրպագեցին[1]: Այն տասն Յովսէփ տեսած երազը միտքը բերելով սրտովին կը գոհանայ Աստուծոյ[2]:

Սակայն՝ որովհետև փոքր եղբայրն Բենիամին նոցա հետ ի միասին եկած չէր, այլ հօր հետ ի տուն և ընտանի հանգիստ ծառայելով կը կատարի վանալ: Եւ որպէս թէ նոցա լիզուն չը հասկանար, թարգմանի միջոցաւ խօսելով և պատասխանելով դուք լրտեսներ էք, կասէ, և բարկութեան երևոյթ ցոյց կուտայ: Նոքա կը պատասխանեն թէ իրենք Քանանու երկրէն, տասներկու եղբայրներ՝ ու մի հօր որդիք են, որոց փոքրը

---

1. Եւ եկեալ եղբարքն Յովսէփայ երկրպագանէին ի վերայ երեսաց խոնարհ յերկիր. Ծննդ. ԽԲ. 6:

2. Եւ յիշեաց Յովսէփ զերազսն իւր՝ զոր եաես. Ծննդ. ԽԲ. 9:

հօրը մօտ կը գանուի և իրենց միւս եղբայրը չկայ ի միջի։

Ծովինէ արդէն այս պատասխանին կսպասէր, ուստի իրենց խօսքէն փոյթ առնելով կսկի «եթէ դուք լրտեսներ չէք, թող ձեր փոքր եղբայրն այստեղ գայ, որ հաստատուի թէ ձեր խօսքերը ճշմարիտ են. ապա թէ ոչ զձեզ լրտես կը ճանաչեմ ասելով բանտարկել կուտայ զանոնք։

Ինքզինք առ, որովհետև նոքա խոստովանեցան թէ իրենք տասներկու եղբայրք են, որոց տասը ներկայ էին, մին իրենց հօրը մօտ, իսկ միւսին համար կը յայտնեն թէ մչնաղ չկայ[1]։ Ծովինէ ինչո՞ւ համար չը հարցուներ թէ ձեր մչնաղ չեղող եղբայրն ինչ եղաւ, ինչ պատճառաւ և երբ կորսուեցաւ, նորա անունն ինչ էր։ Ցիրաւի, ամենէն աւելի հարցնելու կարևոր կէտն այս էր. բայց նորա յանցանքը իրենց երեսին չը տալու, և իր անձին համար պատսպարան չերևելու համար, այդ կէտը լռութեամբ անցնելով զոհութիւն կը մատուցանէ Աստուծոյ, որ այդ մչնաղ չկայ տասնէն ոչ միայն ներկայ էր անդ, այլ մանաւանդ իրենք նորա ձեռքը մատնուած։

Սակայն մի՛ կարծէր թէ վրէժխնդրութեան

1. Եւ նոքա ասեն, երիտասարդն եղբարք եմք ծառայք քո, որպէք առն մերոյ՝ յերկրին Քանանացւոց. և կրտսերն առ հօր իւրում է այսօր, և միւսն չէ ի միջի. Ծննդ. Խբ. 13։

զգայմամբ բանտարկել տուաւ, այլ՝ իւր հօր և Բենիամինի վրայ անգիտութիւն ստանալու դիտմամբ, մանաւանդ փորձելու և գիտնալու համար թէ արդիօք իրեն հաստացած չարիքին և անիրաւութեան վրայ զղջացած են։ Որովհետև Ծովինէ երեք տարի բանտը մնաց, մինչ ինքը գանոնք միայն երեք օր բանտարկեց, նոքա գինքը սպաննել կամեցան, բայց ինք՝ նոցա միայն վախ տուաւ։ Երրորդ օրը՝ իւր ներկայութեան կոչելով կը յայտնէ իրենց թէ, ձեզմէ մին պէտք է այստեղ բանտարկեալ մնայ, իսկ միւսներդ ցորեն տանելով փոքր եղբայրներդ միասին կը բերէք, որպէս զի լրտես չը լինելնիդ ստուգուի և դուք մահուանէ ազատուիք։

Երբ նոքա սոյն խօսքը լսեցին, շուարեցան թէ ի՞նչ անենն, և այս փորձանքին ուրիշ պատճառ կարող չեն գտնել, եթէ ոչ Ծովինէին դէմ իրենց գործած անիրաւութիւնը։ Ուստի զի կը խորհին թէ իրենց դէմ պատահած կանխողը՝ արդար նախատինք մի է, որ ոչ օրի անիրաւութիւն արած է, մանաւանդ որ՝ եթէ անիրաւ լինին, պաշտպան չի տար։ Արդ՝ մարդուս միաքն՝ իւր մէջ մի անուստ վկայ լինելով, նոքա կը խոստովանին թէ Ծովինէին արիւնն է, որ իրենցմէ կը պահանջուի արդարապես[1]։

1. Եւ ասէ ի բաց անչուք ոք ցեղացս իւր, այո՛, քանզի ի մեղս եմք վասն եղբօր մերոյ, զի արհամարհեցաք զնեղութիւն ոգւոյ նորա... վասն այնորիկ եկն ի վերայ մեր այս նեղութիւն. Ծննդ. Խբ. 21։

Այս տեղ պէտք է նրան առնուլ ՅԷ՝ երբ մարդս իւր յանցանաց վրայ ղղջալով չի քաւեր, սիրտը ո՛ր ասաիճան աւելի կասկածանաց և խղճահարութեան կը մատնուի. վասն զի ինչպէս որ եթէ նորա մարմնոյն մէջ մի փուշ մտնէ, նրան անհանգիստ կը լինի, նմանապէս մեղայ փուշը մարդուն միտքը անհանգստութեան կը դատապարտէ միշտ: Արդարև Ծովսէփի եղբարքն իրը լրտես բանտարկուեցան, բայց այս մասին յանցաւոր չը լինելով հանդերձ, փոխանակ Ասուածոյ աղաչելու կամ լրտես չը լինելնին ապացուցանելու, կը խոստովանին թէ յանցաւոր են:

Լաւ նկատէ, ձեր յանցանքն ի՞նչ է և ի՞նչ պատճառաւ բանտարկուեցաք՝ իրենց հարցնող չկայ, ուրեմն ի՞նչ զարմանալի բան է, որ ուրիշ պատճառ չեն կարող գտնել, եթէ ո՛չ ինչ որ Ծովսէփին արած էին. նորա արեան վրայ խորհած չէին, երբ զայն սպաննել կուզէին, բանտը մտածնուն պէս այդ բանին վրայ կսկսին մտածել լրջօրէն: Մի զարմանար, պատիժը բացաւ այն աչքերը, որ մեղքը փակած էր, միայն ժամանակ անցնելով յանցանքը չի քաւուիր. մանաւանդ՝ առանց իսկ մտքէն հեռնելու, մարդս իւր արած չարութեան փոխարէնը անպատճառ պէտք է կրէ:—

Ահա այս պատճառաւ, նոքա՝ Ծովսէփը մեռցնել փափաքելուն համար՝ իրենց միտքը՝ իրր գահիճ մահուան երկիւղ կուտայ իրենց. զայն հոգին

մէջ ձգելուն համար՝ բանտը կը մտնեն, իսկ նաև ծախելնուն համար՝ իրրև լրտես կամբաստանուին: Բացի այդ, ուշադրութեան արժանի է թէ ինչպէս նոքա, որոնք չարութեան մէջ կը միանան, յետոյ ղղջալով ո՛չ միայն իրենց միջև տարաձայնութիւն և հակառակութիւն յառաջ կուգայ, այլ և կսկսին միմեանց յանցանքը երևան հանել:

Վասն զի Ռուբէն՝ որ կուզէր Ծովսէփը ազատել, բայց եղբարցը հակառակ չերևելու համար առաջարկած էր զայն ջրհորը ընտել նետէն հանելու նպատակաւ, և նոքա իրմէ գաղտնի հօրն հանելով ծախած էին, Ռուբէն այս պարագային մէջ իրաւունք ունենալով կսկսի յանդիմանել եղբայրները ասելով. «ես ձեզի չասացի՞ թէ մանկան մի գործէք, դուք ինձ չանսացիք, ահա նորա արիւնն է, որ կը խնդրուի»[1]:

Նոքա՝ սասն եղբարք երրայեցերէն այս կերպ վիճաբանելով, թէպէտ և իրենց ալաճին վրայ կը ղղջան, բայց իրենց աչքերէն արտասուք չեն հոսեր ու չեն լար, մինչդեռ Ծովսէփ՝ որ իրրև թէ նոցա լեզուին անհմուտ թարգմանի միջոցաւ կը խօսէր, իր նկատմամբ նոցա խօսակցութիւնը լսած պէս աչքերն արտասուօք կը լեցուին և

1. Պատասխանի ետ Ռուբէն և ասէ ցնոսա, ո՞չ խօսեցայ ընդ ձեզ և ասեմ. թէ մի մեղանչէք մանկանդ, և ո՛չ լուայք ինձ, և ահա արիւն նորա խնդրի. Ծննդ. ԽԲ. 22:

մեկուսի տեղ գնալով կակղի անդ լալ[1]։

Յետոյ Թշնամական երևոյթով մի Եմաուն եղբայրը նոցա աչաց առջև կապել տալով կը բանտարկէ. (կը կարծուի Թէ Յովսէփը հորը նետուած տանն Եմաուևնը կապած է զայն, և իր մարդոց հրաման կուտայ որ ոչ միայն նոցա տոպրակները ցորենով լեցնեն, այլ և բերած սահիկին էլ իրենց տոպրակներուն մէջ դնեն, և ճանապարհի համար ևս ուտելու պաշար տալով ճամբայ հանեն անմիջապէս երթալ իրենց վրքը եղբայրը՝ Բենիամինը բերելու համար։

Հարցում Ա.

Յովսէփ եղբայրները տեսնելուն պէս ինչու զինքը չը յայտնեց նոցա։

Պա. Որպէս զի եղբայրները չը վախնան, մանաւանդ հաստատելու համար Թէ ինչ ընթացք պիտի բռնեն և Բենիամինին ինչ աչքով կը նային։ Սակայն հիմա նոցա վիճակին. վերը յիշուածին համեմատ Եմաուն բանտին մէջ պատանդ մնալով իրենք՝ ինչ եղբայրներ Թէպետ Եգիպտոսէն ճանապարհ կընկնին գնալու, բայց առաջին իջևանին մէջ անասնոց կեր տալու համար տոպրակներէն մին բանալով սահիկը այնտեղ տեսնուածին պէս

1. Եւ տեսեալ մեկուսի ի նոցանէ՝ եկաց Յովսէփ։ Ծննդ. Խբ. 24։

երկիւղի մէջ ընկնելով զանազան կասկածներու կը գնան Թէ մի՛ գուցէ իրենց համար նոր վտանգ պատահի։

Այս բանին մի մեկնութիւն տալու անկարող գտնուելով կը զարմանան ու կասեն Թէ Աստուած ինչ բան արաւ մեզ[1]։ Մանաւանդ կակղին մտածել Թէ Եմաունը ազատելու համար ինչպէս Բենիամինը Եգիպտոս տանին, ու մեծ մտատանջութեան մէջ հասնելով իրենց հօր մօտ՝ բոլոր դէպքերը մի առ մի կը պատմեն Յակոբին, որ նոյնպէս շատ կը զարմանայ։ Բացի այդ, տոպրակները պարպած տեսնի՝ խուճապահարութեան մատնուելով ևս տոպրակէն դուրս եկածին պէս կապշին և սարսափելի կերպով երկիւղը կը պաշարէ զիրենք[2]։

Հիմայ նայէ դուն Յակոբի գլխուն եկած դժբաղդութեան. նա՝ որ երկար տարիներ ի վեր Յովսէփը կորսնցուցած, Բենիամինն էլ Եգիպտոս տանելու խօսք եղածին պէս, դանդաղանաց ձևով կասէ. «անդուստ արիք զիս, Յովսէփ չկայ, Եմաուն չկայ, Բենիամինն էլ առնուլ կուզէք, այս բոլոր պէտերը իմ վրայ եկան»[3]։ Սակայն Յակոբ

1. Եւ ասեն՝ զի՞նչ է այս՝ զոր արար ընդ մեզ Աստուած։ Ծննդ. Խբ. 28։

2. Եւ երբեմն տեսին զծրար արծաթոյ իւրեանցո՝ ընդ բերանս և հայրն իւրեանց երկեան յոյժ։ Ծննդ. Խբ. 35։

3. Առէ ցնոսա Յակոբ... զիս անորդեն արարիք.

այս խօսքով ո՛չ թէ Աստուածմէ յոյսը կտրելով իւր վիճակէն կը դանգատի, այլ իւր որդիքը կը յանդիմանէ թէ ինչո՞ւ համար իրենց փոքր եղբօր վրայ տեղեկութիւն տուին։

Ի հարկէ այս պարագային մէջ նոքա մեղք չունէին. վասն զի Յովսէփ զանոնք տեսնելով ղուկ լուտեանները էք ասած տեսն, կարևոր էր զայն յայտնել, բայց ևկ տե՛ս որ Յակոբ երբէք Բենիամինը իր մօտէն զատել չուզեր։ Այն տեսն, Ռուբէն շատ նեղը մնալով կասէ թէ «ինձ յանձնէ Բենիամինը, եթէ ես ողջ առողջ զայն չը վերադարձուցանեմ, իմ երկու որդիքս մեռցուր»· այսու սակայն Յակոբ չի համոզուիր, ինչու որ նորա սոյն առաջարկութիւնը ապօրէն և հետևաբար անընդունելի էր։

Դժբաղդաբար բերուած ցորենը կսպառի և նոքա ծանր մտատանջութեամբ կը համակուին, զի օրէ օր սովը կը սաստկանայ, և եթէ կրկին գնալով ցորեն չը բերեն սովամահ պէտք է լինին անպատճառ. սակայն առանց Բենիամինի չեն կարող Եգիպտոս գնալ, վախնալով որ Յովսէփի մօտ ստախօս պիտի երևին և իրաւամբ նորա բարկութիւնը իրենց վրայ հրաւիրելով խստագոյն պատ-

---

Յովսէփ չէ ի մէջն, Շմաւոն չէ ի մէջն. և զԲենիամին ևս առնուցուք, յիմ վերայ եին այս ամենայն. Ծննդ. խԲ. 36։

ժոց ենթարկուին, այսու հանդերձ Յակոբ ո՛չ մի կերպով կը հաւանի թողլ տալ որ Բենիամինը Եգիպտոս տանին։

Ապա Յուդան կը խնդրէ հօրմէն որ իրեն յանձնէ Բենիամինը, զոր եթէ ողջամբ չը վերադարձունէ, ամբողջ կեանքին մէջ յանցաւոր համարուի[1]։ Յակոբ այս խօսքին կը համոզուի, որ Բենիամինը գնայ Եգիպտոս եղբայրներուն հետ։ Նկատե՛ք թէ որչա՛փ ծանր խնդիր է յանցաւոր լինել, վասն զի ուրիշ կերպով չը կարացին Յակոբը համոզել, բայց եթէ յանցաւոր լինելով։ Արդարև այս գործը մեծ փորձութիւն մի էր Յակոբին. վասն զի 12 որդիներէն ո՛չ մին իւր մօտ կը մնայ. յառաջագոյն միայն Յովսէփին համար կուլար, իսկ այս անգամ կարծես թէ բոլորն էլ կորուսած պէս եղաւ։ Սակայն՝ ինչպէս մինչև այն տեղն շատ աղէտից և դժբաղդութեանց հանդիպելով Աստուածմէ երբէք իր յոյսը չը կտրեց, նմանապէս գարձեալ առանց յուսահատութեան իւր որդիքը Աստուծոյ կամաց յանձնեց[2]։

---

1. Առէ Յուդա... ես առնում զդա յերաշխաւ, ի ձեռաց իմոց խնդրեսջիր զդա, եթէ ո՛չ ածից զդա՝ և կացուցից առաջի քո, յանցաւոր եղէց զամենայն աւուրս. Ծննդ. խԳ. 8։

2. Եւ Աստուած իմ տացէ ձեզ շնորհս առաջի առնն, և արձակեսցէ ընդ ձեզ եղբայրն ձեր զմիւսն, և զԲենիամին. Ծննդ. խԳ. 14։

Մի վախնար, ով Յակոբ, թէև քիչ ժամանակ առանց որդւոց կը մնաս, բայց յետոյ Յովսէփն էլ կը գտնես, ինչու որ Բենիամին Եգիպտոս դնալուն պէս Յովսէփ կը գտնուի: Ըստ պատուիրանաց Յակոբայ, տան եղբայրք կառնուն իրենց հետ ընծայ և երկպատիկ արծաթ, ու Բենիամինն էլ ի միասին կը գնան յԵգիպտոս: Յովսէփ զանոնք տեսնելուն՝ կը հրամայէ իր տան վերակացուին որ տուն տանելով կերակուր պատրաստել տայ: Բայց նոքա կասկածելով թէ նախորդ անգամուայրենի արծաթին համար ղերնիք պիտի տանին, իսկոյն կը փութան յայտնել թէ նա բերած են զայն: Յիշեալ վերակացուն նոցա սիրտը կը հանդարտացնէ, յայտնելով թէ վախնալու բան մի չունին, ու Շմաւոնն էլ բանտէն հանելով ամենուն ոտքերը կը լուայ ըստ սովորութեան:

Յովսէփ տուն եկածին պէս իրենց բերած ընծան մատուցանելով նորա առջև կխոնարհին ողջունելու համար. նա էլ նոցա ողջոյնը հարցնելով՝ երբ կը լսէ հայրերնին ողջ է, կը գովէ ու պրուատէ զայն[1]: Ստանալէս Բենիամինի համար կը հարցունէ թէ «այո է ձեր փոքր եղբայրը, ու նորա համար էլ կաղօթէ»[2]:

1. Եւ ասէ օրհնեալ է այրն այն յԱստուծոյ Ծննդ. ԽԳ. 28:

2. Եւ ասէ Աստուած ողորմեսցի քեզ որդեակ. Ծննդ. ԽԳ. 20:

Նոքա այս լսօքերէն թէև մի բան չը հասկացան, բայց Յովսէփի սիրտը չը դիմանալով ուրիշ սենեակ կը մտնէ լալու համար: Կերակուրի ժամանակ Յովսէփ Եգիպտացւոց հետ սեղանի նստելով, եղբարց համար առանձին սեղան պատրաստել կուտայ, և զանոնք իրենց տարիքին համար կարգաւ նստեցնելուն վրայ կը զարմանան, թէ ինչպէս իրենց ստուգութիւնները կարող է զանազանել, ինչու որ առաջ մեծը, նաքը փոքրը կը նստեցնէ: Յիրաւի, այս կէսին պէտք էր որ իմանային թէ Յովսէփ զիրենք կը ճանչէ, բայց չեն իմանար բնաւ:

Բացի այդ, ըստ սովորութեան քաղաքին Յովսէփ իւր սեղանէն նոցա կերակուր տուած ատեն, Բենիամինին հնգապատիկ աւելի կուտայ[1]: Որովհետև երկուքը միասայր լինելով, զայն առաւել կը պատուէ, և սակայն նոքա դարձեալ չեն ճանաչէր Յովսէփը: Կերակուրէն յետոյ նա կը հրամայէ ատն վերակացուին որ նոցա բեռները ցորենով լցնելէ նաքը, արծաթը վերատին տոպրակներուն մէջ դնէ: Նմանապէս իւր գործածած գինիի բաժակը Բենիամինի բեռան մէջ դնել կուտայ, ու յաջորդ օրը վեռասան եղբարք ճանապարհորդ կը լինին ուրախութեամբ:

1. Եւ մեծացաւ մասն Բենիամինի քան զամենայնս ամենեցուն հնգապատիկ քան զնոցայն. Ծննդ. ԽԳ. 34:

Հարց — ՃԻ.

Ցովսէփ ինչո՞ւ իւր գինւոյ բաժակը Բենիամինի տոպրակին մէջը դնել կուտայ։

Պապ. Իւր եղբայրները փորձելու համար, որովհետեւ քանի որ Բենիամինին շատ պատիւ ցոյց տալով հնդապատիկ կերակուր աւելի տուաւ, կը կամի նոցա միտքը հասկանալ թէ արդեօք նախանձելով՝ բաժակը նորա բեռան մէջ գտնուելուն համար իրեւ յանցաւոր զայն միայնակ կը թողո՞ւն։ Նոյնպէս կը փափաքի իմանալ թէ ի՞նչ պայմանաւ իրենց հօրմէ առած են զայն, և ի՞նչ աչքով իրենց հօր վրայ կը նային։

Այս տեղ Ցովսէփի եղբարց վիճակը լաւ ի նկատի առնուլ կարժէ։ Արդարեւ նոքա շատ մեծ ցնծութեամբ Եգիպտոսէն ելան. վասն զի մի փառապանծ իշխան նախարար զիրենք պատուոց մեծ խնջոյքով, Շմաւոնն բանտէն ազատեցաւ, Բենիամինը իրենց հետ է, ի վերայ այսր ամենայնի բեռնէրն էլ ցորնով լեցուն են. միայն թէ շատ չի տեւեր որ այս ուրախութիւնը մեծ տրտմութեան կը փոխուի։ Մի զարմանար, աշխարհի վիճակն այսպէս է, մի աչքով կը խնդացնէ, իսկ միւս աչքով կը լացնէ. մի ձեռքով կուտայ, իսկ միւսով նա կառնու։

Վասն զի Ցովսէփ իր գործակատարը փուճով և բարկութեան կերպարանաւ կը զրկէ որ նոցա

բեռները խուզարկելով բաժակը գտնէ, և որու բեռան մէջ որ գտնուի, զայն ձերբակալէ և իրեն բերէ։ Նա էլ խուժմբ մի մարդոց հետ գող բռնելու գնացողի պէս նոցա հասնելով՝ այս ի՞նչ վատութիւն գործեցիք, բարերարութեան փոխարէն գողութիւն արիք ասելով ծանրապէս կը յանդիմանէ, որուն ամէնքը մէկէն կը պատասխանեն թէ «քաւ լիցի որ մենք գողութիւն անենք, եթէ առաջին անգամ մեր բեռներուն մէջ գտած արծաթը ետ բերինք, ինչպէս կարելի է որ մենք բաժակը գողանանք, որու մօտ որ գտնուի, թող մեռնի այն մարդը, և մենք բոլորս մեր ուրոյն ծառաները կը լինինք։

Այս պայմանով վերակացուն նոցա բեռները կը խուզարկէ, սկսեալ մեծէն մինչև ամենէն փոքրը, և բաժակը Բենիամինի բեռան մէջ գտնուածին պէս կսկսին բարձրաձայն լալ ու կոծել, ինչու որ ինչ բանի հանդիպելնին չը գիտցան։ Ցիրաւի, նոքա գիտեն թէ Բենիամինը գողութիւն չաներ, բայց բաժակը նորա տոպրակէն ելաւ։ Ամէնքը կուգեն Ցովսէփին ծառայ լինել, միայն թէ Բենիամինը ազատուի, բայց անկարելի կը լինի. բաժակը որու ամանին մէջ որ գտնուի, Ցովսէփ զայն կը պահանջէ։

Այն առեն բոլորն ի միասին ետ կը դառնան, և Ցովսէփի ներկայութեան եկած ժամանակ, Ցուդան գետնատարած կսկսի աղաչել և պաղատել։

Եւ զիրենք արդարացնելուն համար ուրիշ որևէ խօսք պետք չունենալով Աստուծոյ դատաւորի մի դատաստանին կը վերապրի այս գործը։ Միայն թէ հաստատապէս պիտի որ այս պարագային մէջ բնաւ յանցանք չունին, այսու հանդերձ դոզուԹիւնը իրենց վրայ հաստատուկայաւ. չեն համարձակիր ասել Թէ Թշնամւոյ նենգուԹեան հանդիպեցանք, ինչու որ Յովսէփէն ԹշնամուԹիւն չեն ակնկալեր։ Ուստի երբ կասեն Թէ «այս մեր մեղքն է, որուն հետևանքը պէտք է կրենք, ամենքս էլ ձեզ ծառայ կը լինինք», Յովսէփ կը պատասխանէ Թէ քաւ լիցի, որ ես այդ բանն անեմ, բաժակը որու մօտ որ գտնուեցաւ, Թող նա ծառայ լինի ինձ, և դուք խաղաղուԹեամբ գնացէք առ հայրն ձեր»։

Սոյն որոշումը սայրատուր նետի մի պէս Յուդայի սիրտը խոցելով կը վիրաւորէ, և ինչ անելիքը չը գիտնալով կը շուարի կը մնայ։ Վասն զի առանց Բենիամինի ինչպէս կարելի է իրեն հօրը մօտ գնալ, քանի որ ամբողջ կեանքին մէջ պարտական մնալու պայմանաւ երաշխաւոր եղած է, որ զայն անվնաս հօրը վերադարձնէ։

Թէպետև մինչև այն ատեն Յուդա՝ Յովսէփը չը բարկացնելու խորհրդով իւր ապաշնորհ մէջ միայն ներողուԹիւն խնդրելու համարձակած էր, բայց այս անգամ նորին սրտառուչ կիրքով ապաշնորհի սկսելով կը պատմէ անոր մի առ մի և կը-

դաւ Թէ ինչ ապշնորհով Բենիամինը հօրմէն առաջ ևն, կը յիշէ հօր խօսքերը. և մանաւանդ Թէ ինչպէս Յովսէփի համար երբեմն մեռաւ[1] և երբեմն գազանը կերաւ[2] ասած են իրենց հօրը, և Թէ՝ եԹէ Բենիամինը չը գնայ, հայրը արտմուԹենէն նեղուԹեամբ պիտի մեռնի. այս ամենը կը պատմէ, որպէս զի Ծերունի հօրը զԹալով Բենիամինը արձակէ և ինքը՝ նորա փոխարէն Յովսէփին գերի դառնայ[3]։

Արդ՝ Յովսէփ իր եղբայրներն այս վիճակին մէջ տեսնելուն պէս՝ կիմանայ Թէ առանց Բենիամինի նախանձելու նորա փրկուԹեան համար սրտի մտօք կաշխատին և Թէ սէր ունին իրենց հօր վրայ. մանաւանդ Թէ կը տեսնէ Բենիամինը, որ այն ատեն հազիւ քսան ու չորս տարեկան ամօԹևած երիտասարդ մի էր, ներկայից առջև մի յանցաւոր մարդու նման կանգնած՝ ամօԹևածուԹեան պատճառաւ ոչ սրի ներսը կը նայի և Յովսէփի վեհապանծ տեսքէն զարհուրած կը դողայ։

---

1. Եղբայրը նորա մեռաւ, և նա միայն մնաց մօր իւրոյ։ Ծննդ. ԽԴ. 20։

2. Եւ ասացաք Թէ գազանակուլ եղև. Ծննդ. ԽԴ. 28։

3. Եւ արդ՝ կացից ես ծառայ քո փոխանակ մանկանդ տղուկ տեառն իմոյ, և պատանեակդ ելցէ ընդ եղբարս իւր... զի մի տեսից զչարիսն՝ որք գտանիցեն զհայրն իմ. Ծննդ. ԽԴ. 33։

նմանապէս կը նկատէ թէ միւս եղբարց սրտերն ել ցաւոց փշերով արիւնած և աչքերնին արտասուօք լցուած են, և իրենց մաքերն առ Աստուած բարձրացնելով նորա օգնութիւնը կը խնդրեն լռելեայն. վասն զի նոքա պանդուխտ լինելով երբեք որ և է պաշտպան մի չունին, և իրենց դատախազն է հզօր և փառապանծ մի նախարար Փարաւոն թագաւորին:

Յորս ա՛ռ, ձիշդ այս տեսարանին նման էր, երբ որ Յովսէփի ծագկեալ պատմուճանը վրայէն առնելով հօրը նետեցին, և հօրէն հանելով գերիի մի նման վաճառեցին. վասն զի Յովսէփ միայնակ կաղաչէր և կը պաղատէր նոցա, բայց նոքա՝ նորա արտայոյզ աղաչանաց ձայնին ականջ չը դրին. Ինչպէս որ Բենիամինը յանցանք չունի, բայց յանցաւորի մի նման կեցած կը դողար, նմանապէս Յովսէփ յանցանք չունէր, բայց յանցաւորի նման կապուեցաւ:

Հիմայ որ Յովսէփի եղբարց վիճակն իմացար, ով ընթերցող, մի անգամ ևս Յովսէփի վիճակն իմացիր, այո՛, յիշեալը Թագաւորի նման մեծափառ մի նախարար է, սակայն եղբայրներն այդ ողորմելի կացութեան մէջ տեսնելուն՝ այլ ևս դիմանալու անկարող լինելով սիրտը կը ճմլուի, աղիքը կը գալարին և աչքերն արտասուօք լցուած՝ շուրջը գտնուող օտար մարդիկը դուրս հանելէ յետոյ, երբ իր եղբարց հետ առանձին կը

մնայ, կը փութայ ասել թէ «ես եմ ձեր Յովսէփ եղբայրն, որ դուք վաճառեցիք»[1]:

Այս տեղ նայէ դուն Յովսէփի եղբարց տասը օրինակ վիճակը. մինչև այն տեղն բաժակը Բենիամինի ամանին մէջ գտնուելուն համար՝ միևնակ զայն ազատելու փափաքով թէև խոստովանեցան թէ այս բանը մեր մեղաց պատճառաւ է, բայց այդ պարագային մէջ իրենք յանցաւոր չը լինելով իրենց միտքն ու խիղճը հանգիստ էին, միայն Յովսէփ ինքզինքը յայտնելուն պէս՝ իւրաքանչիւրին միտքը մէկ մէկ դահիճի նման մահուան երկիւղն պաշարեց զիրենք, որով խոկոյն դէմքերնին գունատելով սկսան սաստիկ դողալ, և կարծելով թէ հիմայ իրենց մահուան վճիռը պիտի արտասանէ, այն սաստիկ խռովեցան ու սոսկման զգացումով համակուեցան, որ լեզուները բռնուելով իրենց շուարման մէջ չը կարացին ո՛չ մի խօսք արտասանել այդ րոպէին[2]:

Որովհետև մարդուս միտքը՝ իւր անձին մէջ մի անսուտ և անկաշառ վկայ լինելով գործած չարութիւնը մտաբերած ատեն՝ անպատճառ խղճի խայթով կը տառապի չարաչար: Սակայն Յովսէփ լալով կը համբուրէ զանոնք, և մխիթարելու ու

1. Եւ ասէ, ես եմ Յովսէփ եղբայրն ձեր, զոր դուք վաճառեցիք յԵգիպտոս. Ծննդ. Խե. 4:

2. Եւ ո՛չ կարէին եղբարք նորա տալ նմա պատասխանի, զի խռովեցան յերեսաց նորա. Ծննդ. Խե. 3:

հանգստացնելու համար նոցա կասկ «մի՛ վախնաք և մի՛ տրտմիք, մի՛ նեղանաք վասն վաճառելնուդ համար. վասն զի զձեզ զդոքս ՀՕԳԻՈՏ առաւել զկնի զձեզ կերակրելու համար, ինչու որ ասկաւին հինգ տարի սով պիտք է շարունակուի»։ Այն ատեն միայն հազիւ հազ եղբարքն ուշաբերելով կարողացան խօսիլ նորա հետ[1]։ Ցովսէփի եղբայրներուն գալուստը Փարաւոն թագաւորը լսելով կուրախանայ և կը պատուիրէ որ Հայրն էլ բերել տայ Եգիպտոս։ Ուստի Ցովսէփ մեծ պատուով ու շատ պաշարով եղբայրները կը դրկէ, որ երթան իրենց Հայրն Ցակոբը բերեն, միանգամայն պատուէր տալով թէ ճանապարհին միմեանց վրայ զայրանալով կռիւ չը հանեն[2]։

Օրինակ առ, ինչպէս որ Ցովսէփ Բենիամինը աւելի սիրելուն համար՝ իր բաժակը նորա ամանին մէջ դնելով՝ թէպետև նա առ ժամանակ երկիւղ և նեղութիւն կրնց, բայց եղբը Ցովսէփ պինքն յայտնելուն վրայ բոլորէն առաւել նա ուրախացաւ, նմանապէս Աստուած թէև իր սիրած ծառաները ժամանակ մի վշտաց և երկիւղի մէջ կը պահէ, բայց եաքէն նոցա առաքինութիւնը յե-

1. Ձեռ այնորիկ խօսեցան եղբարք նորա ընդ նմա. Ծննդ. խե. 15։

2. Առ ցնոսա, մի զայրանայցէք ընչ ի ճանապարհի Ծննդ. խե. 24։

րեան բերելով երկրիս վրայ փառաւորելէն զատ արքայութեան մէջ ևս ինքզինքը նոցա յայտնելուն պէս՝ նորա ամէնէն առաւել պիտի բերկրին և ցնծան անվախճան ուրախութեամբ։

Հարց. Ժ.

Ցովսէփի ինչու պատուիրեց եղբարցը թէ ճամբան իրարու հետ չը կռուին։

Պաս. Որպէս զի իրեն հասուցած չարիքը միմեանց վրայ ձգելով իրենց միջև գժտութիւն չը ծագի. վասն զի կրակը առաջ ինքը կը վառի, յետոյ ուրիշները կայրէ, նմանապէս ուրիշներուն վնասողն՝ առաջ ինքը կը վնասուի, միայն թէ իրեն վնասը առաջ չզգալը յետոյ կզգայ։ Այսպէս Ցովսէփի եղբարքն իրենց չարութեան հետևանքը առաջ չմտանալով՝ երբ Ցովսէփ պինքն յայտնեց նոցա, այն ատեն իմանալով խելքի եկան, սակայն ինչպէս որ եղած կատարուած գործը ետ չի գառնար, այսպէս էլ չարութեան վրայ մեր ղղջումը անհնար է որ մաքէ բոլորովին ելնէ։

Արդարև Ցովսէփ նոցա յանցանքը ներեց, բայց նոքա իրենց կողմէն անպատճառ ապաշաւանաց զգացումն միշտ չինքեանս կը կրեն։ Ահա այս պատճառաւ կը պատուիրէ որ ճանապարհին միմեանց վրայ մեղադրանք գնելով չերկպառակին, այլ Աստուծմէ շնորհակալ և գոհ լինին. վասն զի Աստուած նոցա արած չարութեան գործը բարու-

թեան փոխարկեց: Արդարև այս կէտին մէջ Աստուծոյ ծածուկ խորհուրդ ունենալը յայտնի կերևի. քանզի տասն և մի անձինք ի միասին՝ այսպիսի մի մեծ անիրաւութեան գործի մէջ քսան երիք տարի իրենց մէջ գաղտնի պահելով յայտնի չանելնին շատ զարմանալու մի բան է: Վասն զի այնչափ ատեն այդպիսի մի չար գործի ծածուկ մնալն՝ անպատճառ նոցա միաբանութեան կարօտ էր, և սակայն չարագործաց միջև միաբանութիւն չի լինիր, քանի որ միաբանութիւնը լաւ է, իսկ չարութիւնը՝ վատ է, և բարութեան ու չարութեան միջև համաձայնութիւն անհնար բան է: Ուրեմն յայտնի է որ այդ գործին մէջ Աստուծոյ կամքը կայ: Բայց մի՛ կարծեր թէ նոքա Աստուծոյ կամքը կատարելու համար Յովսէփը ծախեցին, այլ՝ թշնամութեան համար, այդ պատճառաւ շատ մեծ մեղքի տէր եղան:

Հպցս՝ Ի.Ը.

Երբ Յակոբ լսեց թէ Յովսէփ ողջ Եգիպտոսի մէջ նախարար է, ինչ կը խորհէր:

Պաս. Յայտնի է չափազանց ուրախութիւնն ու չափազանց տխրութիւնը, որք յանկարծ կը պատահին, կարող են մարդուս մեծ վնաս տալ: Սակայն Յակոբ ինչպէս որ առաջ Յովսէփի արիւնաշաղախ զգեստը տեսած ատեն՝ անչափ վիշտ և թախիծ կրելով հանդերձ նորա մարմինը կամ

անձը չէր վնասուեցաւ, նմանապէս Յովսէփին ողջ և նախարար լինելը լսած ատեն՝ թէև անչափ ուրախութիւն զգաց, բայց իսկոյն հաւատալ ևս չուզելով զարնացաւ իւր մտքին մէջ[1]:

Յակոբ Յովսէփի մահուան լուրին շուտ հաւատաց. բայց նախարար լինելուն իսկոյն հաւատալ չի կամիր, վասն զի վնասու հանդիպիլ՝ հեշտ բան է, բայց բաղդաւորութեան հասնել՝ մանաւանդ նախարար լինել՝ դժուարին գործ լինելուն պատճառաւ կասկածի կերթայ, այլ երբ կը տեսնէ այն կառքերը, զորս Յովսէփ յուզարկած էր նոցա փոխադրութեան համար, այն ատեն ձշմարտապէս կը հաւատայ թէ նա ողջ է և Եգիպտոսի իշխան միանգամայն, ուստի պատրաստութիւն տեսնելով՝ իւր բոլոր ընտանիքով ճամբայ կելնէ, գնալ Յովսէփը տեսնելու համար:

Սակայն՝ որովհետև Աստուած Քանանու երկիրը խոստացած էր իրեն տալ, կը վախնայ թէ մի գուցէ Եգիպտոս գնալով խոստացեալ երկրին զրկուի: Նմանապէս կը վախնայ որ չը լինի թէ իւր որդիքը Եգիպտացւոց ընթացքին հետևելով զԱստուած բարկացնեն: Այդ պատճառաւ երկմտե-

---

1. Եւ պատմեցին նմա և ասեն, որպէս զոյ Յովսէփ կենդանի է, և նա է իշխան ամենայն երկրին Եգիպտացւոց. և զարմացաւ ի միտս իւր Յակոբ, զի ոչ հաւատայր նոցա. Ծննդ. Խե. 26:

Ջրհոր կոչուած տեղը հասած առեն պատարագ մատուցանելով վինքն Աստուծոյ ողորմութեան կը յանձնէ։ Աստուած էլ նորա երազին մէջ տեսնուելով կը քաջալերէ որ Եգիպտոս գնալէ չը վախնայ, վասն զի ինքը նորա հետ Եգիպտոս իջնելով և զայն անդ մեծ ազգ անելով նաբէն պէտք է որ անոր հանէ[1]։

Այն առեն Յակոբ ապահովուած և ուրախ Եգիպտոսի մերձենալով Յուդա որդին կը դրկէ առ Յովսէփ իւր գալուստը լմայնելու համար. որով վերջինս մեծ պատուով կը դիմաւորէ իւր հայրն, որ զայն տեսածին պէս՝ նորա պարանոցին կը փաթաթուի լալով և երկուքն էլ ի սիրտ և ի հոգի կուրախանան։ Ետոյ Յովսէփ իւր հայրն ու եղբայրներէն հինգը Փարաւոն թագաւորին ներկայացնելով՝ Յակոբ կօրհնէ զայն. և սա ախորժելով՝ գեսեմ կոչուած տեղը կուտայ Յակոբին ի բնակութիւն։

Յակոբ Եգիպտոս մտած առեն, բայլ որդւոց կիներէն, ծառաներէն և աղախիններէն, միայն իւր որդիք ու թոռները վաթսուն վեց հոգի էին, և Եգիպտոսի մէջ ծնած իրը թոռներն էլ նոցա վրայ աւելնալով՝ ընդամենը եօթանասուն

1. Խօսեցաւ Աստուած ընդ Իսրայէլի ի տեսլեան գիշերոյ և ասէ... Մի՛ երկնչիր եջանել յԵգիպտոս, զի յազգ մեծ արարից զքեզ անդր, ես իջից ընդ քեզ յԵգիպտոս, և ես հանից զքեզ նստուցանել։ Ծննդ. ԽՋ. 2։

հինգ հոգի կը հաշուին, որոնցմէ Իսրայէլեան ազգը յառաջ եկաւ, ինչպէս որ իւր տեղւոյն մէջ կը յայտնուի արդէն։

Հարցում 19.

Յակոբ քանի տարեկան էր Եգիպտոս գնալու առեն։

Պատ. Հարիւր երեսուն տարեկան։ Ցասն ու եօթը տարի ևս Եգիպտոսի մէջ ապրելով հարիւր քառասուն եօթը տարեկան լինելուն՝ ըստ իրենց սովորութեան կերդուեցնէ Յովսէփը, որ իւր մեռնելէ վինի Եգիպտոսի մէջ չթաղէ զինքը այլ Աբրահամու և Իսահակայ գերեզմանաց կից թաղէ Քեբրոնի մէջ։ Յովսէփ նորա խնդիրքն ընդունած և կատարումը ապահոված առեն, Յակոբ նորա ի ձեռին ունեցած նախարարական գաւազանին գլուխը խոնարհելով ողջունեց[1]։

Ահա այս կերպով Յովսէփի տեսած երկրորդ երազը կատարուեցաւ, թէ տասն ու մէկ աստղեր, արեւն ու լուսինը իրեն երկրպագութիւն կը մատուցանէին, (ինչպէս որ քսան եօթներորդ հարցման մէջ յիշատակուեցաւ)։ Այո՛ Յովսէփի մայրը մեռած էր, բայց հօր խնամարկական ողջունատուութեան մէջ մօրն էլ ի միասին կը հասկացուի։ Ետոյ

1. Երկիր եպագ Իսրայէլ ի վերայ գլխոյ գաւազանի ևւրոյ։ Ծննդ. Խէ. 31։

Յովսէփ իւր երկու որդիքը՝ Մանասէ և Եփրեմ հօրը կը բերէ որ օրհնութիւն տայ, զորս Յակոբ իւր գիրկը առնելով կը համբուրէ և կը գոհանայ Աստուծմէ, ինչու որ ոչ միայն Յովսէփի երեսաց կարօտ չը թողուց զինքը, այլ և նորա որդիքը տեսնելու արժանացուց։

Մանասէն անդրանիկ լինելով՝ Յովսէփ իւր հօր աջ կողմը, իսկ Եփրեմը ձախ կողմը կը նըստեցնէ, որպէս զի աջ ձեռքը անդրանկին, իսկ ձախը երկրորդ որդուն գլխոց վրայ դնելով օրհնէ. բայց Յակոբ Աստուծոյ ներշնչութեամբ աջ ձեռքը Եփրեմի, իսկ ձախը Մանասէի գլուխներուն վրայ կը դնէ։ Եւ որովհետև ծերութեան պատճառաւ աչքերը կարող չէին զանազանել, Յովսէփ կը փափաքի որ աջ ձեռքը Մանասէի գլխուն վրայ դնէ, բայց հայրն առանց ձեռքը փոխելու կօրհնէ զանոնք երկու ձեռքերը երկու թոռանց վրայ խաչաձև դրած, զորս իրեն կորդեզրէ ի պատիւ Յովսէփին և կը յայտնէ թէ Եփրեմը Մանասէէն մեծ և զօրաւոր պէտք է լինի թէ բազմութեամբ և թէ համբաւով, և այսպէս երկուքն էլ Յակոբին ժառանգ կը լինին, ինչպէս որ եւքէն Իսրայէլի երկոտասան ցեղերէն մին՝ Եփրեմէն, իսկ միւսը Մանասէէն յառաջ եկան։ Հոգևոր մտքով Մանասէն՝ հրէից, իսկ Եփրեմը՝ քրիստոնէից օրինակ եղան։

Յակոբ միւս որդիներէն առաւել Յովսէփը

սիրելուն համար հարիւր ոչխարաց գնով ծախու առած (25-րդ հարցման մէջ յիշուած) Սիկիմ անուամբ տեղը իբր սեփական ժառանգութիւն Յովսէփին կուտայ, այն պայմանաւ որ եղբարքը երբէք բաժին և մասնակցութիւն չունենան անոր մէջ, այլ միայն Յովսէփին պատկանի։ Այս տեղւոյն նկատմամբ թէև Յակոբ կը յայտնէ թէ պատերազմաւ առած է, բայց պատերազմով տեղ գրաւելը յիշատակուած չը լինելուն՝ կը կարծուի թէ առաջ գնած և մի ժամանակ այնտեղ բնակելէ յետոյ ուրիշ կողմ մեկնած տանն՝ Ամորհացիքը առանց իրաւունքի զայն գրաւած լինելով՝ նոցա ձեռքէն պատերազմաւ եւս առած է[1]։

Ապա Յակոբ բոլոր որդիքը իւր շուրջը ժողվելով իւրաքանչիւրին ըստ արժանւոյն օրհնութիւն կուտայ և յետ ժամանակաց նոցա ցեղերուն ինչ պատահիլքը Աստուծոյ ազդեցութեամբ մի առ մի կը յայտնէ։ Նամանաւանդ կանխաւ կը գուշակէ թէ իւր չորրորդ որդի Յուդայի ցեղէն պէտք է ծնի Մեսիան, որ սուրբ խաչին վրայ սրիւն թափելով պիտի մեռնի և յարութիւն պիտի առնէ[2]. նւանապէս խորհրդաւոր կերպով և

---

1. Զոր առի ի ձեռաց Ամովրհացւոցն սրով եմով և աղեղամբ. Ծննդ. ԽԸ. 22։

2. Մի՛ պակասեսցէ իշխան ի Յուդայ, և մի՛ պետ յերանաց նորա, մինչև եկեսցեն նմա հանդերձեալքն, և նա է ակնկալութիւն հեթանոսաց. Ծննդ. ԽԹ. 10։

այլաբանօրէն կը զուշակէ թէ իւր հինգերորդ որդի Դանի ցեղէն յառաջ պէտք է գայ Նեռը[1]։

Օրհնութիւնը վերջացնելէն յետոյ Յակոբ մեռնելով՝ ըստ իրենց սովորութեան զմռսելին նորա մարմինը, և սգոյ օրերն անցնելէ ետքը Յովսէփ և իւր եղբարքը, ինչպէս նաև ի պատիւ Յովսէփայ Փարաւոնի կողմանէ որոշուած պատուաւոր անձինք զայն կը տանին և Քերրոնի մէջ Մաղելով ետ կը գառնան Յեգիպտոս։ Յետոյ Յովսէփի եղբարքը տակաւին իրենց սրտին մէջ երկիւղ կրելով անոր կասեն, «Հայրդ երդուեցուց զմեզ քեզ ասելու որ ներես մեր յանցանաց»։ Նոքա ներողութիւն խնդրած ատեն միևնոյն ժամանակ իրենց յանցանաց յիշատակը նորոգելով Յովսէփը լացուցին[2]։

Վասն զի խօսքով զայն ոխակալ և քինախնդիր կարծեցին, մանաւանդ թէ սուտ խօսեցան. ինչու որ Յակոբ մի այդպիսի երդում անել տուած չէր նոցա։ Սակայն Յովսէփ նոցա ստախօսութիւնը իրենց երեսին չը զարնելով կը պատասխանէ թէ դուք թէև իմ մասին չար խորհեցաք, բայց Աստուած ինձ համար բարիք խորհեցաւ. մի՛ վախ-

1. Եւ եղեցի Դան՝ օձ գաղանակալ ի ճանապարհի, հարկանել զգաբշապար երիվարն, և գնիճնուլ զհեծեալն յետս. Ծննդ. խթ 17։

2. Ելայց Յովսէփ վասն բանիցն՝ զոր խօսեցան ընդ նմա. Ծննդ. Ծ. 17։

նաք, ես ձեզ և ձեր տունը կը կերակրեմ և այսպէս կը մխիթարէ զանոնք[1]։ Յիրաւի, այս պատգային մէջ Յովսէփի եղբարց առաջարկը սաստիկ վշտացուց զայն, բայց նորա պատասխանը փառազարդ գուա մարգարէ է։

Այստեղ լաւ խորհի թէ յանցանքը որ ատելուն վատ բան է, և որքան տպղնապի ու խղճահարութեան պատճառ լինելով անհանգիստ կանէ մարդը։ Թշնամին որչափ գօրաւոր և յաղթող լինի, կարելի է որ ժամանակ անցնելով թշնամութիւնը թողու, կամ թէ կարելի է փախատեամբ նորա ձեռքէն ազատիլ, բայց մարգուս յանցանքը միշտ իւր մտքէն չելնելով՝ անկարելի է որ մարդս ազատի անոր ձեռքէն ուշ ժամանակ անցնելով և ուշ էլ փախուստով։ Թէև Յովսէփայ վաճառման ժամանակէն մինչև այն ատեն քառասուն տարի անցած և Յովսէփ իւր եղբայրներուն ներած էր, բայց նոքա իրենց չարութիւնը միտք բերելով տակաւին կը վախնան։

Մարդուս մեղքը այն ատելուն իրեն թշնամի է, որ այս աշխարհում գինքն երկիւղի մէջ պահելով անհանգիստ անելէն զատ հանգիստ աշխարհում էլ անվախճան տանջանաք կը պատճէ,

1. Դուք խորհեցայք զինէն ի չարութիւն, և Աստուած խորհեցաւ վասն լաւ ի բարութիւն... մի՛ երկնչիք՝ ես կերակրեցից զձեզ և զտունս ձեր, և մխիթարեաց զնոսա. Ծննդ. Ծ. 20։

քանի՞ որ մարդուս գժտիք գնալուն պատճառ իւր մեղքն է։

Վասն զի ինչպէս որ նիւթական մարմնոյ մի շուքն ու ծանրութիւնը իրեն բնական լինելով անկէ չի բաժանուիր, նմանապէս պատիժը մեզայ շուքն ու ծանրութիւնը լինելով մեզաւոր մարդուն օձիքը թող չի տար ո՛չ մի րոպէ, մինչև որ արդարութիւնը բան օրինաց զայն պատժէ։ Եթէ կը կամիս, ով մարդ, թէ այս աշխարհումն և թէ հանդերձեալին մէջ հանգիստ և երջանիկ լինել, բնաւ մի՛ մեղանչեր, և եթէ ակարութեամբ մեղանչեցիր, ժամանակ չը կորուսած զղջա և խոստովանէ, որ պատժոյ չենթարկուիս։

Հարցո՛ւմ Ժ.

Ինչո՞ւ Ցակոբ Քանանու հողին մէջ թաղուիլ կամեցաւ։

Պաս. Որովհետև Աստուած այն երկիրը Աբրահամու, Իսահակայ և իրեն խոստացած էր, ուստի կը փափաքի որ Աստուծոյ՝ իրեն խոստացած տեղում թաղուի։ Նմանապէսև Աբրահամու և Իսահակայ գերեզմանները Քեբրոնի մէջ գտնուելով նոցա մօտ թաղուիլ կը բաղձայ, որ իւր որդիքը լաւ ըմբռնեն և հասկանան թէ Եգիպտոսէն եկնելով Քանանու երկիրը պէտք է գնան, և թէ մի՛ գուցե Եգիպտոսում մնալու բաղձանօք Եգիպտացւոց չար և անօրէն գործոց հետևին։ Քանզի

Ցակոբ գիտէր ի Աստուծոյ խոստման համաձայն իւր սերունդը մի օր Եգիպտոսէն պէտք է գնէ։

Բացի այդ, որովհետև Յիսուս Քրիստոս մեր Փրկիչը Քանանու երկրին մէջ ծնելով՝ անդ պէտք է մարդկային ազգը մեղքէ ազատէր, և անդ թաղուելով յարութիւն պէտք է առնէր, այս պատճառաւ Քանանու երկրում Քեբրոն կոչուած տեղում (այն որ Երուսաղէմէն 6 ժամու չափ ճանապարհ է) թաղուիլ կը փափաքի, որ ինքն էլ Յիսուսի՝ Փրկչին հետ յարութիւն առնէ[1]։

Հարցո՛ւմ ԺԱ.

Ցովսէփ քանի՞ տարի իշխանութիւն վարեց։

Պաս. Ութսուն տարի. վասն զի երեսուն տարեկան էր, երբ իշխան կարգեցաւ, և հարիւր տասը տարեկան մեռաւ։ Նկատէ՛ որ կատարեալ Հաւատով Աստուծոյ յուսացողը ինչպէ՛ս կը փառաւորուի։ Ցովսէփ շատ կէտերում Քրիստոսի օրինակ լինելէ զատ՝ մարդոց ևս առաքինութեան պանչելի տիպար եղաւ։

Վասն զի իր մանկութեան առեն հօրն ու եղբարց կատարեալ էն հնազանդ էր, երիտասարդական անմիտ ընթացքէ հեռի, իրեն նախանձու աչօք նայողներն անգամ կը սիրէ, և երբ հօրը

1. Թագում մարմինք ննջեցելոց սրբոց յարեան Մատթ. Ի։ 52։

ձգուեցաւ կամ իբրև գերի ծախուեցաւ, Աստուծոյ յուսալով խոնարհաբար կը համբերէ։ Իր տիրոջ անհաւատարիմ չի լինիր, չը մեղանչելու համար իւր կրից յաղթելով մահ պատճառելու չափ անգութ դրպարտութեան կը հանդիպի, և սակայն իւր գաղանիքն ու ցաւը ոչ ոքի իմացնելով լռիկ ինքնիկ կը տառապի։ Բոլորովին ի զուր և անիրաւ տեղը բանտարկուելով Աստուծմէ չոյալ չի կարեր։

Ոսկ երբ իշխանութեան կը հասնի, ոչ երբէք կը հպարտանայ, իրեն չարիք անողներուն բարիք կանէ. թագաւորին հաւատարմութեամբ ծառայելով՝ երբէք այլոց դրկանք չանէր, մինչդեռ ընդհանրապէս իշխանաւոր անձինք իրենց պատուհասի պատճառաւ, և կամ յանցաւորին պաշտպան կանգնելու նպատակաւ անմեղին թշնամի դառնալով արդարութեան հակառակ կը գործեն շատ անգամ։ Քանզի ինչպէս որ գանձ փիգելու հետամուտ անձանց միտքը կարող չէ ուղիղը յստակ տեսանել[1], նոյնպէս մարդս իւր սիրելոյն յանցանքն և ատելոյն առաքինութիւնը չէ կարող ճանաչել[2], և, հետևաբար, արդարութեան հակառակ վճիռ կայձակէ։

1. Կաշառ մի առնուեցուսս զի կուշտ կուրացուցանէ զաչս համաթձակահայեցաց, և ապականէ զբանս արդարս. Ելից. ԻԳ. 8։

2. Ըստ առածին, Կոյր է ատելութիւն և սէրն։

Սակայն Յովսէփ չնորհիւն Աստուծոյ այսպիսի անարժան վարմունքէ բոլորովին զերծ և ազատ լինելով՝ այն ատելոյն ամէնքը ըստ արժանւոյն կը հատուցէ, և թէ աղքատ և թէ հարուստ առ հասարակ գոհ կը լինին իրմէ։ Այնչափ փառաւոր պաշտօնին մէջ երբէք մարմնոյ ցանկութիւններէն խաբուելով կամ յաղթուելով նորա հնշտալից պատուհասէն անձնատուր չի լինիր։ Այնպիսի ազգասիրութեան և հայրենասիրութեան նշանդ ունէր, որ մեռնելէն վերջն էլ իր ցեղէն բաժանուիլ չուզեր։ Որովհետև Աստուծոյ խոստման համեմատ կը հաւատայ թէ Իսրայէլի ազգը Եգիպտոսէն պակաս է ելնէ, ուստի մեռած ատեն կտակ անելով կերդուընցունէ իր եղբայրներն ու ցեղակիցները, որ Եգիպտոսէն ելած ատենին՝ իրեն ոսկորներն էլ ի միասին տանին և Քանանու երկրին մէջ թաղեն[1]։

Նկատողութեան առ, ինչպէս որ Յովսէփի Եգիպտոս երթալուն պատճառ եղբայրներն եղան, նմանապէս նոցա որդիքը պարտական եղան նորա ոսկորները Եգիպտոսէն հանելով Քանանու երկիրը տանել և թաղել։ Դարձեալ, ինչպէս որ Յովսէփ Եգիպտոս մինակ գնալով՝ որչափ որ այնտեղ շատ

1. Հաւատով Յովսէփ ի վախճանելն իւրում յիշեաց զելս որդւոցն Իսրայէլի, և զաւան ոսկերաց իւրոց պատուիրեաց. Եբրայ. ԺԱ. 22։

նեղութիւն և տառապանք կրեց, բայց վերջէն մեծամեծ պատիւներու և փառաց արժանացաւ նմանապէս Իսրայէլի ժողովուրդը շատ սակաւ թուով Եգիպտոս գնալով այնտեղ բազմացաւ, և թէպէտ Փարաւոնի ձեռքէն շատ չարչարանք քաշեց, բայց եղքը մեծ փառքով Եգիպտոսէն ելաւ։

Ուրեմն առ, Յովսէփ ոչ միայն օտարներէն, այլ նաև իր հարազատ եղբայրներէն մեհարեր վանդ և ձեռս կրելով հանդերձ Աստուծմէ գոհ էր և կը համբերէր, եթէ գուն ևս թէ օտարներէ և թէ ազգական բարեկամներէ ձեռաւոյ ենթարկուիս, առանց գանգատելու Աստուծոյ ազօթէ, որ ներէ նոցա յանցանքը[1]։ Վասն զի նոքա թերևս նաժաթար քեզ ձեռս հասուցած ատեն՝ քեզի մեծ բարեկամութիւն և բարերարութիւն ալած կը լինին, քանի որ նոցա համար ազօթելով քու վարձքդ կը շատնայ։

Մի՛ ասեր թէ ինչպէս համբերեմ, երբ առանց պատճառի կը ձեռաեն ինձ. այստեղ լաւ խորհրդածէ, եթէ յանցանքիդ պատճառաւ պատժուիս, ոչ զոք մեղադրելու և արդարանալու պատրուակ արդէն չունենալով ստիպուած ես համբերելու. բայց երբ առանց յանցանքի պատժուելով գոհութեամբ և սիրով համբերելու լինիս, Աստուծոյ կողմանէ վարձուց և ողորմութեան կարժանանաս[1]։ Ուրեմն ես մի՛ ասեր թէ մինչև երբ համբերեմ. զի այս մասին ժամանակ որոշուած չը լինելով՝ մինչև ի մահ մարդս պարտական է համբերել[2] ամենայն յօժարութեամբ և երկայնամիտ սիրով։

Դարձեալ, մի՛ գանգատիր թէ պատահած դժբաղդութիւնն ու տապնաղը քու համբերելու կարողութենէն վեր է, որովհետև Աստուած զքեզ և միանգամայն արդար լինելով մարդուս կարողութենէն վեր վիշտ և նեղութիւն չի տար։ Սմանաւանդ նորա ողորմութիւնը շատ մեծ և անչափ լինելով[3] մեղաւորը կը պատժէ նուազ քան որչափ արժանի է, իսկ առաքինին կր փառաւորէ առաւել քան որչափ արժանի է[4]։ Այս պատճառաւ երբ մի վշտակիր մարդ անհամբերութեամբ կը գանգատի, Աստուծոյ զթութեան և արդարու-

1. Քանզի զի՞նչ երախտիք լսեն, եթէ յօրժամ մեղանչեցէք՝ տանջիցիք և համբերիցէք. այլ եթէ զբաւսիս գործեցէք՝ չարչարիցիք և համբերիցէք, այն ընծայք յԱստուծոյ են. Կաթուղ. Ա. Պետ. Բ. 20։

2. Որ համբերեսցէ խոպան՝ նա կեցցէ. Մատթ. ԻԴ. 13։

3 Տէր՝ յերկինս է ողորմութիւն քո, ճշմարտութիւն քո մինչև յամպս. Սաղմ. ԼԶ. 6։

4. Ըստ առատաձեռնութեան, պատժէ զմեղաւորս՝ այլ քան զարժանն, պահէ զարդարս՝ անդր քան զարժանն։

1. Աղօթս արասէք ի վերայ նեզչաց ձերոց. Ղուկ. Զ. 28։

թեան պէմ մեղք գործած կը լինի։ Դարձեալ մի՛ ասեր թէ՝ Ճառագիները ազգական և բարեկամ մարդիկ էին, այս մոռածումը նոցա կը պատշաճի։ Քանզի, քանի որ բնապէս ամէն մարդ իւր ազգականին ու բարեկամին բարեբարիլ պարտական է, նոքա բարիք չանելէն զատ՝ թշնամութիւն ու չարիք անելով, շատ աւելի մեծ պատժոյ արժանի կը լինին ի Տարիէ [1]։

Արդարև, ազգականաց ու բարեկամաց ներելն վիշտ կրել՝ շատ ծանր [2] է, բայց երբ մարդս կը համբերէ, վարձն էլ ըստ այնմ շատ է։ Մարդս այս աշխարհում ինչպէս որ բարեկամի կարօտ է, որպէս զի իւր նեղ օրերում մխիթարութիւն գտնէ, նմանապէս թշնամիի կարօտ է, որպէս զի իր բաղդաւոր օրերում զգոյշ կենայ, որ չը սխալի [3]։ Զի բոլորը բարեկամ եղած տաեն, այլ և ոչ ոքէ զգուշանալու պատճառ չունենալով մարդս կարի համարձակութիւն տացած՝ չափն աւելի անհարկ գործելու կը միտի։

---

1. Խակ եթէ ոք ըսայ՝ և մանաւանդ քրիստոնեաց եղեամ՝ չէ տանեցի՝ ի հատատացն ուրացեալ է, և չոր ևս քան զանհաւատսն է. Ա. Տիմոթ. Ե. 8։

2. Զի թէ թշնամւոյն նախատեալ էր, համբերէի արդեօք, կամ տանելոյն մեծաբանեալ էր և վերայ իմ թափէի արդեօք ի նմանէ. Սազմ. Ծննդ. 10։

3. Ըստ առածին, բարեկամաց և մեծամեծ թըշնամեաց կարօտելիք։

Ահա այս տեսութեամբ մարդս իւր թշնամին ներէն զոհ լինելու պարտական է. քանի որ նոքա զինքը անարատ գործերէ հեռի պահելու կը ծառայեն։ Առաքինի մարդը կը նմանի Աստուծոյ պարթիզին, իսկ թշնամին փշոտ թփերուն։ Ինչպէս որ պարտիզին շուրջը այդպիսի թփերով պատ կը շինեն, որ կենդանիք ներս մտնելով պարտէզը չաւերեն ու չապականեն, այսպէս էլ Աստուած իւր սիրելիները թշնամիներով կը շրջապատէ, որպէս զի անվայելուչ ընթացքի հետևելով իրենց առաքինութիւնը չը կորսնցնեն։ Մանաւանդ որ համբերութիւնը մարդուս կամաց հակառակ գործոց մէջ յայտնի կը լինի. արդ եթէ ամէն մարդ կամացդ համաձայն շարժէր, համբերելով վարձ առանալու առիթ, նեղութ և միջոց գտնել կարող չէիր։ Բացի այդ, համբերութեամբ թշնամւոյն յաղթելէ զատ նորա ուղղութեան և փարձին պատճառ կը լինիս։ Ուստի զի թշնամին որչափ վէ զօրաւոր և յաղթող լինի, երկարատև համբերութենդ տեսնելով խրղճահարութեամբ իւր թշնամութիւնը կը թողու։ Համբերութեամբ թշնամւոյն յաղթելու նման մեծ և ազնիւ յաղթութիւն չկայ, որուն փրցանակը նոյն համեմատութեամբ մեծ կը լինի։

Ինչպէս որ Յովսէփ Եգիպտոս գերի գնալով, թէև այնտեղ միջոց մի նեղութիւն կրեց, բայց առանց յուսահատելու համբերութեամբ իւր թշնամեաց յաղթելէ զատ թէ այս աշխարհում

և թէ ալքայութեան մէջ փառաւորուեցաւ նմանապէս մարդիկ իբրև գերի այս տառապանաց աշխարհը գալով՝ մի ժամանակ թէպէտև կրնեղուին, բայց երբ միշտ համբերութեամբ իրենց յոյսը Աստուծոյ վրայ կը գնեն, երկու աշխարհաց մէջ ևս պէտք է փառաւորուին անպատճառ։ Վասն զի ինչպէս որ Եգիպտոս փրկութեան վայր եղաւ Յովսէփին համար, նոյնպէս այս աշխարհը բոլոր մարդոց համար փրկութեան վայր համարուած է ըստ առաքը գրոց[1]։

Այս մասին լաւ խորհէ. մարդս ոչ միայն գժբաղդութեան, այլ նաև բաղդաւոր վիճակին մէջ ևս կարող է փորձուիլ։ Ուստի ինչպէս որ նեղութեան ժամանակ Աստուծոյ յաւտալ պարտական է, նոյնպէս բաղդաւոր եղած ատեն՝ առանց Աստուծոյ երկիւղը մոռնալու ու սրտին հանելու խոնարհութեամբ Աստուծոյ պատուէրները միշտ կատարելու պարտական է։ Քանզի շատերը իրենց բազդաւորութեան ատեն հպարտանալով կորստեան անդունդը զլորուեցան։ Մի՛ կարծեր թէ Աստուած միջոց կընծայէ մարդուն, որ պատժուի, ոչ երբեք, այլ չարագործը կը պատժէ, որ ուղղուի։

Արդարև պատիժը մարդկային կամաց հակառակ լինելով՝ անհեթհեթաս մարդը չար կը համարի. սակայն այս տեսակ պատիժը այս աշխարհում տեղի կունենայ, որ ամէն կերպով մարդուս համար օգտակար և բարի է։

Այս նկատմամբ մեծ ուշադրութիւն հարկաւոր է. վասն զի չարը՝ երկու տեսակ է—մինն է մեղաց չարը, որուն Աստուած պատճառ չէ[2], իսկ միւսը՝ պատժոյ չարը, որուն պատճառ Աստուած է։ Սակայն ոչ թէ մարդուն չարիք հասցնելու համար պատճառ կը լինի, այլ արդար լինելով՝ մեղաւորը կը պատժէ, որ ուղղելով յաւիտենական պատժէն ազատուի։ Իրօք այս տեսակ պատիժը՝ մեծ ողորմութիւն է, և նա՝ որ այս ողորմութիւնը ճանաչելով իւր չար ընթացքէն ետ չի կենար, անպատճառ հանդիպելոյ աշխարհում Աստուած կը պատժէ զայն յաւիտենական տանջանքով, որպէս զի արդարութիւնը ի գործ դրուի ըստ օրինի։

Արդ՝ եթէ կը ցանկաս պատիժէ ազատ լինել, չար մի գործեր. և քեզ չարիք հասցնողին կամաց համբերելով նոցա համար աղօթէ, որ նոցա մեղքը ներէ, որպէս զի քու մեղացդ էլ նոյնպէս

1. Ո՞չ ապաքէն նոյն վշտութիւնն են վաղք մարդոց ի վերայ երկրի, և նոյն զառապեալ վարձք վաստկանի կեանք նորա Յովբ. Է. 1։

1. Մի՛ ոք որ և իցէ փորձութեան իցէ, ասասցէ թէ յԱստուծոյ փորձիմ՝ զի Աստուած անփորձ է չարեաց. Կաթուղ. Յակոբ. Ա. 13։

2. Եթէ իցէ՞ն չարիք ի քաղաքի՝ և Տեառն չիցէ արարեալ. Ամով. Գ. 6։

ստանալով ողորմութեան արժանի լինիս[1]: Դարձեալ, եթէ հանգիստ մնալ կը կամիս այնպես ննջեցիր որ այս աշխարհի վրայ դուն միայնակ ես, և մին էլ Աստուած կայ: Դուն ինչ որ ուրիշներուն անես, գիտցիր որ Աստուծոյ կանես[2]: Ամենապէս ինչ որ ալլք կանեն քեզ, համարէ թէ Աստուած է անողը:

Այս կերպով գիտնալու ես թէ քեզմէ զատ երկրիս վրայ գտնուած բոլոր մարդիկ Աստուծոյ գործէն փոխանորդ և քու վրայ հսկող պաշտօնեայ կարգուած են, որոց մի քանին բարեկամական եղանակաւ քեզ բարիք կանեն, որ մխիթարուիս և յուսահատ չը լինիս, իսկ ուրիշները թշնամական ձեւիրով քեզ չարիք կը հասցունեն, որ չափդ ճանաչելով ուղղութեան և բարեկրթութեան ճանապարհին մէջ քալես: Այս պատճառաւ, երբ մի մարդէ երախտիք տեսնես, նախ շնորհակալ եղիր Աստուծոյ և ապա քու երախտատուդուկ:

Ամենապէս, երբ որ մի մարդէ չարիք կը տեսնես, բնաւ մի զայրանար, և մի կարծեր թէ մարդն է անողը, այլ յիշէ որ այդ մարդուն գոր-

1. Զի եթէ թողութիւք մարդկան զյանցանս նոցա, թողցէ և ձեզ հայրն ձեր երկնաւոր զյանցանս ձեր. Մատթ. Զ. 14:

2. Արտհեաև արարիք միւսմ յեղբարցդ այսոցիկ փոքրիկանց՝ ինձ արարիք. Մատթ. ԻԵ. 40:

ծել տուող մի կայ. վասն զի Աստուած իր բարձրագոյն կամքը արարածոց ձեռքով կը գործադրէ (ինչպէս որ քանի եօթներորդ հարցման մէջ յիշուեցաւ): Սակայն լոկ թշնամական դիտաւորութեամբ ոչնչոց չարիք հասցնողը Թո՛ղ չը կարծէ թէ Աստուծոյ հրամանը ի գործ կը դնէ, այլ միայն իր թշնամութիւնը, վասնորոյ նա պատժոյ արժանի կը լինի:

Արտհեաև, եթէ չարեաց պատճառ եղող անձը գիտնար թէ իր հակառակորդին ուղղութեան յատկացեալ մի պաշտօնեայ է, չարութենէ և կենդանով թշնամութիւնը կը թոզուր, որպէս զի մի գուցէ մի օր ուրիշն էլ իբր ուղղութեան համար յատկացուի: Բայց եթէ ՚ի գործ անձը՝ պատահած չարիքը Աստուծմէ համարելով առանց գանգատի համբերէ, թշնամանքն չար մտքով արարածը՝ բարիի կը փոխէ: Ցիրաւի, մարդկային բնութիւնը տակաւ լինելով նեղութեան դժուարութեամբ տոկալուն համար «փրկեա զմեզ ի չարէ» աղերսով Աստուծոյ պիտել ազօթքով՝ մի պարտականութիւն է[1], բայց չարը պատահած ատեն էլ առանց քրթմնջանաց համբերել նոյնպէս հարկ է[2]:

1. Մի՛ տանիր գմեզ ի փորձութիւն, այլ փրկեա ի չարէ. Մատթ. Զ. 13:

2. Ամենայն ուրախութեան ազգանի համարիջիք եղբարք, յորժամ ի պէս պէս փորձութեան ի մէջ անկանիջիք Կաթուղ. Յակոբ. Ա. 2:

Վասն զի եթէ պատահած չարիքը՝ յանցանքի փոխարէն յառաջ եկած է, թողութիւն կը գտնեսկամ եթէ յանցանք չունենալով Աստուծոյ մի դաղտնի պատասխանի պատճառաւ է, երբ անտրտունջ կը համբերես, արքայութեան մէջ վարձդ կաւելնայ[1]: Այս եղանակաւ յայտնի է որ մարդս ինչ կերպ ցաւոց էլ ենթարկուի, իրեն համար բարի է: Նամնաւանդ ցաւոց մէջ անհամբերութեամբ տրտնջողը մի օգուտ չը քաղելէն զատ իւր ցաւերն էլ աւելի կը շատցնէ:

Քանզի պատահած ոևէ ցաւ և վիշտ ինքն ըստ ինքեան որչափ ևս թեթեւ լինի, տրտունջ եղած ատեն այն աստիճան ծանր կը թուի, որ մարդս յուսահատութեան կը մղէ. ընդհակառակն, գլխու եկած ոևէ դժբաղդութիւն որչափ էլ ծանր լինի, յօժարութեամբ համբերելով արիասիրտ և շնորհակալ լինի, անպատճառ կը թեթեւնայ:

Ինչպէս որ ի սէր կրօնի և հաւատոյ արիւն թափող նահատակներուն վրած տանջանքն անհանդուրժելի և բնութեան իսկ հակառակ էին, բայց նոքա կատարեալ հաւատով իրենց վիրքն ու սիրտը և սէրը Աստուծոյ վրայ կեդրոնացուցած

1. Երանեալ է այր՝ որ համբերեցէ փորձանաց. զի եթէ ընտիր ևս գտանիցի, առցէ զպսակն կենաց. Կաթուղ. Ցակոբ. Ա. 12:

լինելով՝ Աստուծոյ ողորմութեամբ և օգնութեամբ մարդկային տկար բնութիւնը այն աստիճան մեծ զօրութիւն առացաւ, որ սրոյ և հրոյ դիմադրելով զանազան չարչարանօք մեռնել ցանկացան[1]: Արդարև, զոր օրինակ մի դժուարին գործ սիրով կատարողին համար կը դիւրանայ, այսպէս էլ մի դիւրին գործ սիրով և յօժարութեամբ չը կատարող մարդուն խիստ ծանր կը թուի:

Եթէ մարդիկ՝ որչափ որ մարմնաւորին մէջ միշտ կը ձգտին դիւրաւ գերազանցել, նոյնպիսի եռանդ ցոյց տային նաև հոգևորին մէջ, դժոխքում սատանային զատ ոչ ոք պիտի գտնուէր: Սակայն դժբաղդաբար շատերը առաքինութիւնը ուրիշներուն թողլով՝ իրենք չարագործներուն օրինակին հետևելու հետամուտ են և այս սատանայի դժոխային ընկերակցութիւնն աւելի կը նախընտրեն քան արդարոց երկնային բնակակցութիւնը: Ցիրաւի, եթէ նոքա առաքինի մարդոց օրինակին հետևելով Աստուծոյ պատուիրանաց համաձայն ապրէին, արքայութեան մէջ հրեշտակաց ընկեր պէտք է լինէին:

1. Վասն զի հզօր է սէրն մահ. Երգ. Ը. 6:

Հարցում. Ի՞նչ

Յովսէփի մահէն ետքը, Եգիպտոսի մէջ Իսրայէլեան ազգին վիճակը ի՞նչպէս եղաւ։

Պաս. Շատ թշուառ։ Վասն զի Յովսէփի ժամանակակից Թագաւորն ու մեծամեծները մեռնելով՝ շատ ժամանակ չանցած նորա՝ Եգիպտացիներուն որած բարկութիւնը մոռացուեցան[1]։ Մանաւանդ Աստուծոյ զօրութեամբ Իսրայէլացիք օր ըստ օրէ խիստ շատ բազմանալով՝ ժամանակի Թագաւորը նոցա այս տարօրինակ և չափազանց աճումէն կսկսի վախնալ, թէ մի՛ գուցէ Եգիպտոսի վրայ թշնամիք յարձակելու առեն, Իսրայէլացիք ևս ապստամբելով ցանկան Եգիպտոսէն մեկնիլ, և գնալ Քանանու երկիրը։

Որովհետև լսուած էր թէ Իսրայէլացիք Եգիպտոսէն փնալ կուգին իրենց երկիրը։ քանի որ Յովսէփի պատճառաւ Քանանէն եկած և իրեւ հիւր անոք մնացած էին, Արդարև ոչ ոք կարող էր իրաւամբ արգելուլ նոցա այն փափաքանաց կատարումը, բայց յիշեալ Փարաւոն Թագաւորը մի անիրաւ անձ լինելով չէր կամեր Թողուլ և իրեւ գերի չարաչար կաշխատցնէր զանոնք։ Նայէ դուն Փարաւոնի չարութիւնը, քանզի ոչ Իսրայէլացւոց մեկնիլը կուզէ և ոչ նոցա աճիլն ու բազմանալը,

1. Եկաց այլ Թագաւոր՝ որ ոչ գիտէր զՅովսէփ։ Ելից. Ա. 8։

և որպէսզի հանդիստ վիճակի մէջ լինելով չը բազմանան, միակ նման աղիւս և քաղաք շինելու ստոր և դժուարին գործոց կը ծառայեցնէ զանոնք շարունակ։

Ուրեմն տես, ինչպէս որ Փարաւոն Իսրայէլի ժողովուրդը իր իշխանութեան տակ առնելով ցեխ կոխոտելու և շաղախելու նման անարգ կամ ստուերին գործերով կզբաղեցնէ, այսպէս էլ չար գործոց հետամուտ մարդն՝ Սատանայի իշխանութեան տակ մտնելով իրը թէ ցեխ և աղիւս կը շինէ նորա համար։ վասն զի Փարաւոն սատանային, իսկ ցեխը՝ չար գործի օրինակ են։ Չար մի՛ գործեր, որ ազատ լինիս այդ անարգ ծառայութենէն։

Հիմայ դուն Աստուծոյ զօրութիւնը նայէ. վասն զի Փարաւոն որչափ Իսրայէլացիները կը նեղէր, որ չը շատնան, ընդհակառակն, նոքա նոյնչափ և աւելի ևս կաճէին զգալի կերպով։ Վասնորոյ նորա ճարը հատնելով գայեակ կանանց կը հրամայէ, որ Իսրայէլի ժողովրդեան նորածին մանուկները խեղդելով սպաննեն. բայց նոքա զթալով անմեղ մանկանց՝ Թագաւորին չար կամքը չեն կատարեր։ Երբ Փարաւոն այս բանին համար կը յանդիմանէ զայեակ, սոքա կը պատասխանեն թէ Իսրայէլացի կանայք Եգիպտացւոց նման չեն, նոքա դեռ գայեակը չգնացած՝ կը ծնանին։ Թէպէտ այս խօսքը կէտ առ կէտ ճշմարիտ չէր, բայց որովհետև նոքա Աստուծմէ վախնալով՝ գթութեամբ ան-

մեղ երեխայից խնայեցին, ուստի Աստուած նոցա գործոց յաջողութիւն պարգեւեց այնպէս որ զաւակաց և շատ ստացուածոց տէր եղան[1]:

Օրինակ առ, ինչպէս որ չարութիւնը Աստուծոյ կամաց հակառակ լինելով չարագործը՝ եթէ մարդկինէրէն չը պատժուի, անպատճառ Աստուծմէ կը պատժուի, նմանապէս բարութիւնը՝ աստուածային կամաց համաձայն լինելով բարեգործ մարդը՝ եթէ մարդոց կողմէն չը վարձատրուի, անպատճառ Աստուած կը վարձատրէ զայն, զի բարեգործին վարձը երբէք չի կորսուիր, ուր և ուր որ էլ լինի նա, և ինչ ժամանակ էլ որ լինի:

Այս տեղ խիստ մեծ ուշադրութեամբ խորհէ թէ որչափ մեծ մեղք է մանուկը մեռցունել, կամ զաւակ չը լինելու համար դեղ խմել և կամ բնութեան հակառակ գործել. Եթէ զաւակ չես կամիր, զաւակի ցաւ քաշել չես ուզեր, բնաւ մի՛ ամուսնանար, եթէ կամուսնանաս, Աստուծոյ կարգադրած ճանապարհին հակառակ մի՛ կենար, վասն զի զաւկի նեղութիւն չը կրեմ խորհած ատենդ՝ հոգիդ դժոխքին կը մատնես:

Նայէ հիմայ դուն Փարաւոնի չարամտութեանը. երբ նա կը տեսնէ որ Իսրայէլացւոց նեղութիւն տալով, դայեակներուն հրաման տալով իր

1. Թարգ. առնէը Աստուած մանկաբարձացն ... յորմէ հետէ երկեան. Եւից. Ա. 20:

նպատակին չը հասաւ, այն ատեն հրաման կը հանէ որ Իսրայէլացւոց նորածին արու մանուկները գետը նետեն[1]: Արդարև սոյն հրամանը բնութեան հակառակ և անօրինակ է, բայց Աստուած Փարաւոնին իւր չարութեամբը գինքը պատժել որոշած լինելով՝ Յակոբի երրորդ որդի Ղեւիի ցեղէն Մովսէս կը ծնի, (որուն հօր անունն էր Ամրամ, իսկ մօրը՝ Յոքաբեդ), զոր երեք ամիս կը պահեն[2], փոխանակ անմիջապէս Ջուրը ձգելու կը խնայեն կայտառ մանկանը:

Սակայն երեք ամիսէն գինի չը համարձակելով այլ ևս պահել, մայրը պրտուեղէն տապանակ մի շինել կուտայ, և Ջուրը նետ չանցնելու համար կպրաձիւթով ծեփել կուտայ, որուն մէջ կը դնէ Մովսէսը: Ի՜նչ աստիճան տարօրինակ թշուառութիւն, իրրև թէ մայրը զաւկին համար դագաղ կամ գերեզման կը շինէ, որուն մէջ կենդանի կը թաղէ զայն, Ջուրը նետելու համար: Մանուկը մօրէն զատուիլ չուզեր, մայրը՝ իւր զաւկէն. բայց բռնաւորին երկիւղը կը բաժնէ մայրը զաւկէն, և զաւակն էլ՝ իւր մօրէն:

Նայէ դուն Մովսէսի մօր հաւատքին. քանդի տրչափ որ ատիպուհացաւ իւր որդին Ջուրը նետել

1. Զամենայն արու որ ծնանի Եբրայեցւոյ, ի գետ ընկեսջիք. Եւից. Ա. 22:

2. Հաւատովք Մովսէս երբև ծնաւ՝ թագուցաւ ամիսս երիս. Եբրայ. ԺԱ. 23:

բայց Աստուծոյ ողորմութենէն բոլորովին յոյսը չը կտրեց։ Այս պատճառաւ արտասուօք զԱստուած ապաչելով՝ գետին լմնցման և հոսանքէ ազատ մի կողմը տապանակը ձգելով Յուդին կը յանձնէ զայն, որպէս զի, եթէ մարդկէ իրենց նմանուն չը գթացին, գոնէ Յուդը գթալով չը խեղդէ երկնան։ Մովսէսին քոյրը՝ Մարիամ, որ այն ատեն դեռ տասը տարեկան էր, հեռուն կսպասէ, տեսնելու թէ ի՞նչ կը պատահի մանկան։ Աստուծոյ ողորմութեամբ իսկոյն Փարաւոնի ապջիկը նոյն տեղը լուացուելու եկած ատեն Յրին վրայ տապանակը տեսնելով բերել կուտայ, որոյ մէջ մանուկը տեսնելուն՝ սիրտը չի դիմանար, և հասկանալով որ Իսրայէլացւոց մանուկներէն է՝ ի գութ կը շարժի։

Եւ որովհետև Մարիամ այնտեղ կսպասէր՝ համարձակութիւն առնելով կը հարցնէ Փարաւոնի աղջկան, թէ «կը կամի՞ս որ Եբրայեցի սանտուռ մի կանչեմ, որ այս մանուկը քեզ համար մեծցունէ»։ Նա էլ «կանչէ» ասածին պէս, ուրախութեամբ գնալով մայրը կը կանչէ իրեն թէ մի օտար սանտուռ։ Այն ատեն Փարաւոնի աղջիկը կը յանձնէ մանուկը նորա մօր, որ անուշանալով մեծցնէ զայն իրեն համար, և վարձ էլ կը խոստանայ։

Լաւ նկատէ, թէ հաւատով Աստուծոյ դիմողը ի՞նչպէս իր ցանկութեան կը հասնի։ Մովսէսի մայրն իր որդին կորսնցուց, բայց շուտ գտաւ։ Որովհետև Աստուծոյ ողորմութեան յուսալով զայն Յուդին յանձնեց, և Յուդն էլ շուտով իր աւանդը սիրոյը հասուց։ Երբ մանուկը մեծցաւ, Փարաւոնի աղջկան յանձնեց զայն, նա էլ որդեգրեց զայն։ Եւ որովհետև Յուդին հանած էր, անունը Մովսէս դրաւ, որ կը նշանակէ Յուդէն։ Վասն զի մօ Յուդ ասել է, սէմ եգիպտական լեզուով կը նշանակէ անկէ, որպէս թէ Յուդէն։ Մովսէս ինծ Փարաւոնի պալատում։

Հարց. ՅԹ.

Մովսէս քանի՞ տարի մնաց Փարաւոնի աղջկան մօտ։

Պաս. Մինչև քառասուն տարեկան հասակը։ Ցիրաւի, Աստուծոյ գաղտնաւանին մարդուս խելքը չի հասնիր, բայց տեղի ունեցած դէպքերուն վրայ խորհելով խրատ առնուլ պարտական ենք։ Վասն զի Փարաւոն Եբրայեցւոց մանուկները գետը նետել կուտայ, որպէս զի մի՛ գուցէ շատանալով Եգիպտոսէն գնալ ուզեն, բայց Աստուած այդ Յուդը ձգուած մանկանց միոյն ձեռամբ Իսրայէլացիները Եգիպտոսէն հանել կամենալով՝ Մովսէսը Յուդէն ազատել և Թագաւորի աղջկան որդեգրել կուտայ, ինչպէս որ առաջ Յովսէփը բանտէն հանելով իշխան կարգել տուաւ։

Վասն զի Մովսէս՝ որ Իսրայէլի ժողովրդեան առաջնորդելու էր, պէտք ունէր որ Թագաւորին

և նորա մեծամեծաց բնութեան, ինչպէս նաև նոցա հետ խօսակցելու կերպերուն վարժուիլ Նմանապէս կառավարութեան և պատուոստանի վերաբերեալ գործոց, ինչպէս նաև ուսման ու ժամանակի գիտութեանց մէջ կատարելութիւն ստանայ [1]։

Ի միտ առ, Մովսէս թագաւորի որդւոյ նման մեծաշուք փառք կը վայելէ. բայց աշխարհային մեծութիւնն ու զուարճութիւնը երբէք չեն կարող նորա սիրտը գրաւել. և նա միշտ իր ազգին սիրովը վառուած՝ նոցա կրած չարչարանքը աեսած աաեն՝ թագաւորի պալատին մէջ իւր հանգիստը մի անարժան և անարդ բան համարելով կը փափաքի իւր ազգը այդ անտանելի և ծանր գերութենէն ազատել, և կամ ինքն էլ նոցա հետ ի միասին չարչարուիլ [2]։ Այս պատճառաւ Փարաւոնի դստեր մօաէն բաժանուելով Իսրայէլի ժողովրդեան մէջ կեաի բնակիլ։

Երբ Մովսէս մի օր Եգիպտոսի մէջ կը շրջէր, տեսաւ մի Եգիպտացի, որ անիրաւութեամբ Իսրայէլացի մը կը հարուածէր. և չը կարողանալով հանդուրժել և միանգամայն նկատելով թէ ոչ ոք չկայ անդր, ազգային նախանձաւորութեամբ լեցուած՝ իսկոյն զարկաւ և սպաննեց Եգիպտացին, զոր աւազի տակ ծածկեց։

Այս պարագայումս, մի՛ ասեր թէ Մովսէս ինչ իրաւամբ մարդ սպաննեց, քանի որ ոստիկան կամ դատաւոր չէր։ Այո՛, մարդոց կողմէն կարգեալ մի պաշտօնեայ չէր, այլ որովհետև Աստուած նորա ձեռամբ պիտի ազատէր Եգիպտոսէն Իսրայէլի ժողովուրդը, ուստի իր ազգին վրայ Աստուծոյ կողմէն կարգեալ պաշտօնեայ էր։

Արդ՝ պաշտօնեայն կամ դատաւորը՝ երբ կը տեսնէ պրկող անձը, պարտաւոր և սիրելի է արդարութիւնը ի գործ դնել իրաւամբ։ Դարձեալ, որովհետև Եգիպտացիք անիրաւութեամբ կիշխէին Իսրայէլացւոց վրայ, ղի սոքա հիւր էին և ոչ թէ գերի, նամանաւանդ հարստահարողին ընդդէմ դանգատ բարձողը առաւել խստութեամբ կը պատժէին. վասն զի հարստահարելու արտօնութիւն տուողը՝ նոյն ինքն կառավարութիւնն էր։ Ուստի այսպիսի մի անարդար գործ կատարուած տեղւոյ՝ անմեղը անիրաւին ձեռքէն ազատել արդարութիւն և իրաւունք է։

1. Եւ վարժեցաւ Մովսէս ամենայն իմաստութեամբ Եգիպտացւոցն, և էր զօրաւոր բանիւք և գործովք իւրովք. Գործ. Ը. 22։

2. Հաւատովք Մովսէս երբև ածեաց՝ ուրացաւ կոչիլ որդի դստերն Փարաւոնի. լաւ համարեցաւ չարչարիլ ընդ ժողովրդեանն Աստուծոյ, քան առ ժամանակ մի վայելել ի մեղս. Եբրայ. ԺԱ. 24։

1. Զմտաւ ածէը թէ իմացին եղբարք նորա, զի Աստուած ի ձեռն նորա տալոց էր փրկութիւն նոցա. Գործ. Է. 25։

Յաջորդ օրը Մովսէս քաղաքում նրբին չրջած ատեն կը տեսնէ որ երկու Իսրայէլացիք իրարու հետ կը կռուին, և կամենալով նոցա միջև հաշտութիւն գոյացնել «դուք եղբայրներ էք, պիտի մի՛ զրկէք» ասածին պէս՝ զրկող անձը կը պատասխանէ թէ «քեզ ո՞վ կարգեց պատուոր մեզ վրայ, միթէ դիս էլ սպանանե՞լ կուզես, ինչպէս երէկ Եգիպտացին սպանեցիր[1]։

Այս խօսքը լսածին պէս՝ Մովսէս կը վախնայ, տեսնելով որ գործը յայտնուած է։ Իրաւ է որ Եգիպտացին սպանած ատեն մէկ Իսրայէլացիէն զատ ուրիշ մարդ չկար, բայց նա գաղանիքը չը պահելով և առանց իր ազգին ու Մովսէսի խնայելու ուրիշներուն պատմած և բերանէ ի բերան տարածուելով մինչև Փարաւոնին ականջը հասած էր։ Ու սա որ արդէն թշնամի էր, այս պէսքին վրայ առաւել կատաղելով Մովսէսը սպանել կուզէ, որ իսկոյն Եգիպտոսէն փախչելով Մադիամու երկիրը կ՚երթայ[2]։

---

1. Եւ նա ասէ, ո՞ կացոյց զքեզ այր իշխան և դատաւոր ի վերայ մեր, միթէ սպանանե՞լ դիս կամիցիս, որպէս և երէկ սպաններ զԵգիպտացին. Ելից. Բ. 14։

2. Հաւատովք (Մովսէս) թողոյր զերկիրն Եգիպտացւոց, և ո՛չ երկնչէր ի ցասմանէ Թագաւորին. զի զանեւևոյթն երբէք դառնալ համբերութեամբ համբերեցաւ. Եբրայ. ԺԱ. 27։

Տե՛ս դու Մովսէսի առաքինութիւնը. նա՝ որ անմեղն ու պիտակը զրկողին ձեռքէն ազատելու համար հայրենիքը թողլով օտար երկիր ապաստանելու սպասուած էր, դարձեալ պղտութեան սէրն ու նախանձաւորութիւնը ձեռքէ չը թողուր։ Որովհետև Մադիամ հասնելով ջրհորի մի մօտ նստած ատեն, տեղւոյն մեծաւոր հռոգուել անուամբ մի մարդու աղջիկները, որոնք իրենց հօր ոչխարները կարածէին, կուգան հոն ոչխարներուն ջուր տալու համար, բայց հովիւները բռնութեամբ կը վռնտեն զանոնք։

Մովսէս՝ նոցա այս անիրաւութիւնը տեսնելով չէ կարող համբերել, ուստի իսկոյն հովիւները մէկդի մղելով աղջկանց ոչխարներուն ջուր կուտայ։ Սոքա ևս այն օր կանուխ տուն գառնալով Մովսէսի լաւութիւնը և արած բարիքը հռոգուէլին կը պատմեն, որ Մովսէսը իւր տունը հրաւիրելով՝ միմեանց համակրելուն համար Մովսէս նորա տունը կը մնայ, և յետոյ Սեպփօրա անուն ազջիկը կնութեան առնելով նմա կը փեսայանայ ըստ օրինի և ըստ սովորութեան այն ժամանակի։

Սկսաւ դուն Իսրայէլացւոց ապերախտութիւնը. քանզի Մովսէս իրենց փրկութեան աշխատած ատեն՝ նոքա ընդդէմ կենալով բերան կուտան և կը հռչակեն նորա գործը. իսկ հռոգուէլը, որ օտար ազգէ և կռապաշտ էր, իւր պատերաց օգնելուն համար Մովսէսը չը ձանձրացնելով

հանդերձ շնորհակալութեամբ կը պատուէ զայն և մինչև իսկ կը փեսացնէ իրեն, որուն Մովսէս եւ հաւատարմութեամբ կը ծառայէ, նորա ոչխարները արածելով։ Շատ ժամանակ նաքը Մովսէս երկու արու զաւակներ կունենայ, որոց մեծին անունը Գերսամ, իսկ փոքրին՝ Եղիազար կը դնէ. Ելից. ԺԸ. 4։

Այս պարագայում, հոգևոր մտքով Մովսէս Քրիստոսի օրինակ եղաւ. քանզի ինչպէս որ Մովսէս Իսրայէլի ժողովուրդը Փարաւոնի ձեռքէն ազատելու չանացած առեն՝ քեզ ոմն մեր վրայ դատաւոր կարգեց ասելով մերժեցին զայն, իսկ Հռագուէլ կռապաշտ լինելով հանդերձ ընդունեց նորա բարւոք ծառայութիւնը, նմանապէս Քրիստոս Իսրայէլեան ազգը սատանայի գերութենէն ազատելու համար յաշխարհ եկած առեն՝ Իսրայէլի ժողովրդէն մերժուեցաւ, բայց կռապաշտ ազգերը ընդունելով հաւատացին նորա քարոզած կրօնին և ձշմարտութեանց։

Հարց՝ Խ.

Մովսէս քանի՞ տարի մնաց Մադիամում Հռագուէլի մօտ։

Պաս. Քառասուն տարի։ Օրինակ առ, Մովսէս Եգիպտոսում թագաւորական պալատին մէջ

Ցնծան եկն, և լեռքն գնա ա՛չ ընկալան. Ցովհ. Ե. 11։

ազնուական կերպով մեծանալով հանդերձ հովիւ լինելու կը զիչանի և իւր վիճակն երբէք չէ գանգատիր։ Վասն զի իմաստուն և առաքինի լինելով, ոչ աշխարհային փառքերով կը հպարտանայ, և ոչ էլ աղքատի նման հովիւ լինելուն վրայ կը տխրի, այլ յանձնելով զինքն Աստուծոյ կամաց, իւր ազգի փրկութեան համար զԱստուած աղաչելու կը նուիրէ իւր ժամանակն ու խոհուրդները։ Արդարև Մովսէս առ երկիւղի Մադիամ փախչելով ոչխար արածել կսկսի, բայց նոյն իսկ այս կէտում գաղտնի խորհուրդ կայ։ Վասն զի Աստուած՝ որ Մովսէսը Իսրայէլի ժողովրդեան գլուխ և հովիւ պիտի կարգէր, նախ՝ անոր ոչխարաց հովուութիւն անել կուտայ, յորմէ մարդիկը կառավարել սորվի։ Ինչպէս որ քառասուն տարի Փարաւոնի պալատում ուսում և գիտութիւն ստացաւ, նոյնպէս քառասուն տարի Մադիամում հովուութեամբ ապրեցաւ, և յետոյ քառասուն տարի ևս անապատում Իսրայէլի ժողովրդեան առաջնորդ եղաւ։

Հաւ ի միտ առ, Մովսէս Մադիամում մարմնով հանգիստ, իսկ մտքով անհանգիստ էր, վասն զի Եգիպտոսում իւր ազգի կրած տառապանքը մտաբերելով սաստիկ տխրութեամբ կը համակուէր իւր հոգին։ Այո՛, զինքն ապանել ուզող Փարաւոնը մեռաւ, բայց նորա յաջորդող թագաւորն առաւել անագորոյն մի անձ լինելով, Իսրայելացւոց վրայ

համբերելու կարողութիւն չէր մնացած, ուստի Թաւդափին հառաչանօք և սրտի պաղատագին գոչմամբ առ Աստուած կը դիմէն, որ զերծնէ փրկէ։ Ուստի Աստուած իւր ողորմութեան գուռը բանալով կը կամի Մովսէսը Եգիպտոս դրկել և նորա ձեռամբ Իսրայէլը Փարաւոնի ձեռքէն ազատել, միայն թէ դիտնալով թէ Մովսէս առ խոնարհութեան՝ ազգի և ժողովրդեան գլուխ լինել պիտի չուզէր, այս պատճառաւ Իսրայէլացւոց քաշած չարչարանքը զգալի օրինակաւ ցոյց տալով հրաշագործելու կարողութիւն ևս կուտայ Մովսէսի, որ չը վախնայ։

Վասն զի երբ Մովսէս իւր անլրոջ ոչխարները արածելու ժամանակ Քորեբ լերան մօտեցաւ (որ Սինա լերան կից է) հեռուէն կը տեսնէ թէ մի մորենի կամ մացառ, որ կը վառի, բայց այրելով փոշի չի դառնար, այլ նոյն վիճակի մէջ կը մնայ։ Այս ի՞նչ հրաշալի բան է, առելով, երթ անոր մօտենալ կուզէ, և ահա մորենիէն ձայն կը լսէ, «Մովսէս, Մովսէս, մի՛ մօտենար այստեղ, հանէ կօշիկներդ քո ոտքէն, ինչու որ կայնած տեղդ սուրբ է։ ես եմ քո հօրդ Աբրահամու, Իսահակայ և Յակոբայ Աստուածը։ տեսայ իմ ժողովրդեան Եգիպտոսում քաշած չարչարանքը, լսեցի նոցա հառաչանայ ազաղակը, և իջայ որ զանոնք փրկեմ ձեռվով Քանանու երկիրը տանիմ, ուր կաթ և մեղր կը բղխի։ գնա պէտք է Փարաւոնին դրկեմ, որպէս

զի Իսրայէլի որդիքը Եգիպտոսէն հանես»։

Սակայն Մովսէս զանազան առարկութիւններ յառաջ բերելով կը հրաժարի Եգիպտոս գնալէ, և պատճառներ կը ներկայացնէ իւր անկարողութիւնը ցոյց տալու համար։

Հարց։ Յն.

Ի՞նչ էին Մովսէսի յառաջ բերած պատճառը։

Պաս. Առաջին՝ ինքզինքը մի այնպիսի մեծ և կարևոր պաշտօնի արժանի չի տեսներ, որով իրեև դեսպան պարտ էր գնալ առ Թագաւորն և նորա ներկայութեան խօսիլ։ Այս պատճառաւ խոնարհութեամբ կը հարցնէ թէ ես ո՞վ եմ, որ Եգիպտոսէն դուրս հանել համարձակիմ[1]։ Մովսէսի այս խօսքին վրայ Աստուած կը խոստանայ իրեն հետ լինել. որպէս զի համարձակութիւն և քաջալերութիւն ստանայ։ Նոյնպէս կը յայտնէ թէ Իսրայէլը անպատճառ Եգիպտոսէն ելնելով այս լերան վրայ պէտք է երկրպագեն Աստուծոյ։

Երկրորդ՝ կառարկէ որ Իսրայէլի ժողովրդեան գնալով, «ձեր հայրերուն Աստուածը զիս առ ձեզ առաքեց ասած տեսնես, երթ ինձ հարցնեն թէ նորա անունն ի՞նչ է, ինչ պատասխանեմ իրենց»։

1. Եւ ասէ Մովսէս յՏէր, ո՞վ եմ ես, զի երթայեմ առ Փարաւոն և հան... Ելից. Գ. 11։

Այս խօսքին Աստուած պատասխան կուտայ թէ «ինքն է որ էն[1], յաւիտենական էակ. որպէս զի կռապաշտից կուռքերուն նման արարած չը կարծեն Իսրայէլի Աստուածը. այլ՝ գիտնան թէ նա է երկնի ու երկրի Արարիչը, և ամէն արարածոց տէրն ու ստեղծողը, նա է Աբրահամու, Իսահակայ և Յակոբի Աստուածը»:

Որովհետև Քանանու երկիրը Աբրահամու, Իսահակայ և Յակոբին խոստացած էր տալ, այս պատճառաւ նոցա անունները կը յիշէ, որ յայտնի լինի թէ նոցա եղած խոստումը պէտք է անպատճառ կատարուի: Վասն զի ինչպէս որ ինքը յաւիտենական և անփոփոխ է, նմանապէս իր խոստման ևս հաւատարիմ և հաստատ լինելով Մովսէս Եգիպտոս կը ղրկէ տրուած խոստումը ի գործ դնելու համար:

Այս տեղ լաւ ի միտ առ Մովսէսին եղած առանձին շնորհն ու ոդորմութիւնը: Արդարև Աստուած երևեցաւ Աբրահամու, Իսահակայ և Յակոբայ, բայց իր անունը նոցա չը յայտնեց[2]: Արդ՝ մեծ շնորհ և փառք է Մովսէսին, որուն Աստուած յայտնեց իր անունը: Դարձեալ, որով-

1. Եւ ասէ Աստուած ցՄովսէս, ես եմ Աստուած որ էն. Ելից. Գ. 14:

2. Երևեցայ Աբրահամու, Իսահակայ և Յակոբայ... և անուն իմ Տէր է, և ոչ յայտնեցի նոցա. Ելից. Զ. 3:

հետև Փարաւոն Իսրայէլը թողուլ չուզելով պէտք է վերջապէս ստիպուէր, ուստի Մովսէսին կը պատուիրէ, որ նորա մօտ գնալով Թոյլատուութիւն խնդրած ատեն, ուրիշ պատճառ չը յայտնէ, բայց միայն թէ Աստուծոյ պատարագ մատուցանելու նպատակաւ երեք օրուան ճանապարհ դէպի անապատը գնալու են:

Կը պատուիրէ նաև որ Եգիպտոսէն ելած ժամանակ դատարկաձեռն չելլեն, այլ՝ իւրաքանչիւրն իր դրացիէն ոսկի, արծաթ և այլ զարդ ու հանդերձ խնդրելով իրենց գաւակները զարդարեն: Այսպիսի պատուէր կուտայ Մովսէսի, որպէս զի գիտնալով թէ Իսրայէլացիք աստուգապէս պէտք է ելլեն Եգիպտոսէն, այլ ևս ո և է առարկութիւն չը յարուցանէ: Սակայն Մովսէս դարձեալ կը հարցնէ որ եթէ իր խօսքին չը հաւատալով ասեն թէ «Աստուած քեզ չերևեցաւ» ինչ պատասխան տայ նոցա: Այս անգամ Աստուած հրաշագործելու զօրութիւն կը շնորհէ Մովսէսի, որ եթէ իր խօսքին չը հաւատան, թող հրաշք գործէ, որ հաւատան:

Որովհետև Մովսէս իրրև հովիւ ձեռքում գաւազան ունէր, Աստուած անոր կասէ «թող

1. Եւ ասացես ցնա՝ Տէր Աստուած Եբրայեցւոց կոչէ զմեզ առ ինքն, արդ՝ երթիցուք մեք երից աւուրց ճանապարհ յանապատ, զի զոհեսցուք Տեառն Աստուծոյ մերում. Ելից. Գ. 18:

գաւազանը ձեռքէդ»։ Երբ նա ձգեց, իսկոյն գաւազանը օձ եղաւ, զոր Մովսէս տեսնելով սկսաւ փախչիլ։ Բայց Հրաման կը լինի իրեն օձի պոչէն բռնել. երբ կը բռնէ, իսկոյն ըստ առաջնոյն գաւազան կը դառնայ։ Դարձեալ Աստուած կը հրամայէ իրեն ձեռքը ծոցը դնել, երբ նա ձեռքը ծոցը դնելէ յետոյ կը հանէ, կը տեսնէ որ ձեռքը բորոտած է։ Նորէն կը հրամայուի որ ձեռքը ծոցը դնէ, նա էլ կը դնէ, և հանելով կը տեսնէ որ բորոտութիւնն բոլորովին անցած է։

Որպէս զի Մովսէս ամէն կերպով ապահով լինի, Աստուած կը յայտնէ իրեն թէ՝ եթէ առաջին հրաշագործութեան չը հաւատան, երկրորդին կը հաւատան, և եթէ երկրորդ հրաշքին էլ չը հաւատան, այն ատեն գետէն ջուր առ և ցամաքին վրայ թափէ, և այն ջուրը ցամաքին վրայ թոյլ արեան փոխարկուի։

Արդարև այս նկատմամբ Աստուած կրկին և կրկին իր բարձր կամքը յայտնեց Մովսէսի, որ թէև խոնարհաբար որչափ էլ առարկութիւններ յարոյց և պատասխաններըը ստացաւ, բայց այս անգամ էլ նա սկսաւ ապաշնօք առարկել թէ ինքը նրբաձայն և ծանրալեզու է, և հետևաբար մի այնպիսի կարևոր և մեծ պաշտօնի անընդունակ և անկարող է[1], որուն Աստուած կը պատասխանէ

1. Եւ ասէ Մովսէս ցՏէր, աղաչեմ զքեզ Տէր,

թէ՝ Նա քու բերանը պիտի բանամ, և ինչ որ արժան ու հարկն է խօսիլ, խելամուտ պիտի անեմ քեզ։ Այսու հանդերձ Մովսէս դարձեալ պաղատանօք կը խնդրէ, որ աւելի համարձակախօս մի անձ առաքէ իր տեղ[1], այն ատեն Աստուած բարկութեան ձևով նորա մեծ եղբայր Ահարոնը կը յատկացնէ, որուն Մովսէս հաղորդէ Աստուծոյ կողմէն ինչ որ հարկ է և Ահարոն էլ՝ ժողովրդեան[2]։

Այս պարագայում, մի՛ կարծեր թէ Մովսէս իր ապրին համար նեղութիւն յանձն առնուլ չը կամենալուն պատճառաւ այսպիսի առարկութիւններ կանէր, այլ՝ խոնարհ սիրտ ունենալուն համար մեծութենէ խոյս տալ կը ջանար, սակայն նա որչափ իր խոնարհամտութիւնը կը յայտներ, նոյնչափ Աստուած իւր օգնութիւնը բազմապատկել կառաջարկէր յայտնապէս։ Վերջապէս Մովսէս Եգիպտոս գնալ յանձն առնելով գաւազանն ի միաին կառնու, որպէս զի ի հարկին նովաւ հրաշքներ գործէ, ինչպէս որ Աստուած հրամայած է։

չեմ բաւական որպէս թէ յերկնէ և յեռանդէ, և ո՛չ յօրմէ հետէ սկսաւ խօսիլ ընդ ծառայն քում, զի նրբաձայն և ծանրալեզու եմ ես։ Ելից. Գ. 10։

1. Եւ ասէ, աղաչեմ զքեզ Տէր, առ քեզ ի ձեռն զոյր ոք զօրաւոր, զոր առաքիցես։ Ելից. Գ. 13։

2. Նա եղիցի քո բերան, և դու եղիցես նմա յԱստուածականս կողմանէ. Ելից Գ. 16։

Հարցում ԽԶ.

Ի՞նչ իմաստ ունի վերը յիշուած մորենին եւ միջի կրակը։

Պապ. Մորենին կը յայտնէ Իսրայէլի ժողովուրդը, իսկ կրակը նորա կրած չարչարանքը։ Ուստի մորենին մի սակաւ մացառ է եւ շուտ կը վառի, նոյնպէս Իսրայէլացիք իբրեւ գերի թշուառ մի ժողովուրդ լինելով՝ անագորոյն Փարաւոնի ձեռքէն ազատելու անկարող՝ նորա անդուլ հարստահարութիւնքը կրակի նման զիրենք կայրէր։ Բայց ինչպէս որ հուրը յիշեալ մորենին կայրէր եւ չէր կարող զայն ի մոխիր դարձնել, նմանապէս Իսրայէլի ժողովուրդը թէպետեւ անտանելի եւ ծանր չարչարանք կրեց, բայց Աստուծոյ ողորմութեամբ իրենց անձն անվնաս մնալով օր ըստ օրէ կը բազմանային եւ կաճէին։

Իսկ մորենիէն եկած ձայնը, թէ «կօշիկդ ոտքէդ հանէ» Աստուծոյ ներկայութեան նշանակ էր, որուն մօտ համարձակութեամբ գնալ կամ այնտեղ կօշիկով կանգնիլ՝ անպատշաճ էր։ Քանզի Մովսէս հասարակ կրակ կարծելով զայն, անոր մօտենալ կուզէր։ Մանաւանդ որովհետեւ Փարաւոն Իսրայէլացւոց կաւ շինել կուտար ոտքով, վասնորոյ Մովսէսի հրաման կը լինի ոտից կօշիկները հանել, որպէս զի իր ապգայնոց մերկ ոտքով իբրեւ գերի այդ անարգ եւ դառն ծառայութեան մատ-

նուած եւ սոսկալի տառապանաց ենթարկուած լինելը մտաբերելով Եգիպտոս գնալու եւ ժողովուրդը փրկելու ծանրատար պաշտօնէն չը հրաժարի։

Այստեղ արժան է նկատել թէ մարդ որչափ առաւել պարտական է ս. եկեղեցւոյ եւ սրբազան տեղեաց յարգանք եւ պատիւ ընծայել ու Աստուծմէ վախնալով ակնածութեամբ անոնց մտենալ, վասն զի կօշիկը ոտքէ հանելն՝ մարմնաւոր ցանկութիւնները մեր մտքէն ու սրտէն կտրել հանելու նշանակ էր։

Իսկ հոգևոր մտքով յիշեալ մորենին՝ ս. Աստուածածնին, և մէջը երեւցած հուրը՝ Աստուծոյ բանին մարմնառութեան օրինակ կիմացուի։

Իսրատ ասէ, երկրիս վրայ մարդն իբրեւ թէ մի մորենի է, մարմնաւոր ցանկութիւնք և մեծութեան հոգերը կրակի նման, որոց անձնատուր եղող մարդն իբր թէ կրակի մէջ ընկած՝ իւր հոգևոյ տառապանաց և տանջանքին պատճառ կը լինի։ Բայց նա՝ որ մարմնոյ հաճոյից և աշխարհի մեծութեան հետամուտ և հակամէտ չէ, ու միշտ Աստուծոյ յուսալով նորա կամաց համաձայն կեանք կը վարէ, այրելով մոխիր չի դառնար, վասն զի Աստուած իրեն յուսացողը այդպիսի կրակներէ իւր ողորմութեամբ անպատճառ կը պահէ։

Հարց. Ի՞նչ է Աստուծոյ տեսնելը, լսելը եւ իմացական խօսքին իմանալը։

Պատ. Աստուծոյ տեսնելը՝ իրաւունք տալ, լսելը՝ մարդոց աղաչանքն ընդունիլ, իսկ իմանալը՝ իսկոյն գտատստանը տեսնել կամ արդարութիւնը ի գործ դնել կը նշանակէ։ Վասն զի Աստուած ոչ թէ մարդոց նման տեսնելու, լսելու եւ տեղափոխելու կարօտ է, այլ՝ ամէն բան Աստուծոյ յայտնի է եւ նա ամէնուրեք է, ուստի այսպիսի խօսքեր նորա արդարութիւնը, զթութիւնը եւ օգնութիւնը կը յայտնեն պարզապէս։

Արդարեւ Աստուած արդարութիւն ի գործ դնելով՝ իւր զթութիւնն ու օգնութիւնը մարդոց չի ցանար, բայց գաղտնի եւ իմաստուն պատճառներով շատ անգամ կը համբերէ։ Ինչպէս որ Իսրայէլացւոց Եգիպտոսի մէջ այնչափ երկար ժամանակ չարչարուած ատեն՝ Աստուծոյ համբերութիւնը՝ մեծ եւ իմաստուն մի պատճառի համ պատճառաց արդիւնք էր։ Վասն զի, քանի որ յառաջագոյն Աբրահամու եղած յայտնութեան համեմատ թէ նորա սերունդը չորս հարիւր տարի Եգիպտացւոց մէջ պէտք էր մնալ եւ ածիլ (ինչպէս որ տասներորդ հարցման մէջ յիշուեցաւ), այս պատճառաւ կը համբերէ որ վճռուած ժամանակը լրանայ, նամանաւանդ Փա-

րաւոնի մեղաց չափը լցուելով պատժուին։ Նոյնպէս Քանանացւոց և ուրիշ կռապաշտից մեղաց չափը լրանալով[1], Իսրայէլը Եգիպտոսէն ելած աեն՝ նոցա երկիրները գրաւելու իրաւունքն ունենայ։

Դարձեալ, Աբրահամու որդիքը երկրի աւազին և երկնի աստղերուն նման բազմանալու են, ասուած էր յառաջագոյն, ուստի քան այժմ՝ ինչպէս որ նոքա աւազի նման Եգիպտացւոց առնակոխ եղան, նմանապէս պէտք է որ Եգիպտոսէն ելած ատեն՝ Իսրայէլացւոց փառքը երկնից աստղերուն և աւազական նման աշխարհի յայտնուի։ Քանզի նոցա ազատութեան պարագայում կատարուած հրաշքները տեսնող և լսողները հիացման և պակուցման մատնուած՝ Աստուծոյ ահեղ զօրութիւնը կը խոստովանէին։ Ահա այս պատճառաւ Ս. Գիրք՝ Իսրայէլացւոց ազատելու ժամանակը կը յայտնէ տեսնել, լսել և իմնիլ բառից մարդկային սովորական կամ հասարակ բացատրութեամբ։

Նմանապէս, Աստուծոյ ողորմութիւնը յայտնի լինելու համար Քանանու երկրին մէջ կաթի և մեղրի առատութիւնը կանխաւ իմաց կը տրուի Մովսէսի, որպէս զի Իսրայէլի անմխիթար և հար-

---

1. Քանզի չև ևս լցեալ է մեղք Ամովրհացւոցն մինչև յայժմ. Ծննդ. ԺԵ. 16։

ստահարեալ ժողովրդեան սիրտը փոքր ինչ մխիթարուի։ Վասն զի զայն չարչարանքէ փրկելէ զատ՝ տանելիք երկրաւոր կաթով և մեղրով կը խոստանար անուշացնել զայն[1]։ Ինչ հոգևոր մաքով կաթն ու մեղրը՝ հին և նոր օրինաց նշանակ են[2]։

Օրինակ առ, այս աշխարհը փորձութեան և հրահանգի վայր լինելով, մարդս իւր ամբողջ կեանքին մէջ փորձութենէ զերծ չի լինիր։ Արդ՝ երբ որ փորձութիւն պատահի, Աստուծոյ ողորմութենէն յոյսդ մի՛ կտրեր, այլ՝ համբերութեամբ և աղօթիւք Աստուծմէ զոհայիր, ու վիճակէդ մի՛ գանգատիր, վասն զի փորձութիւնը ղրկող Աստուածը՝ զքեզ անկէց ազատելու ժամանակն էլ գիտէ։ Այո՛, ժամանակ մի նեղութիւն կը կրես, բայց հաքը ուրախ կը լինիս։ Արդարև այս անցաւոր աշխարհիս մէջ ագէտք ու փորձանք մարդուս նկատմամբ օգտակար են[3]։

1. Տանելի վնասս յերկինք բարի և ընդարձակ, յերկինք, որ բղխէ զկաթն և զմեղր. Ելից. Գ. 8։

2. Ի Սինայէ ելեալն օրէնք, և բան Տեառն յԵրուսաղէմէ. Եսայ. Բ. 3։

3. Զի թէպէտ և յաչս մարդկան տանջեցան, այլ յայս նոցա լի է անմահութեամբ և տակաւին լինչ խրատեալք՝ գացեն զմեծ բարութիւնս. Իմաստ. Գ. 4։

Հարցո–ՀՒ։

Վերոյիշեալ երեք տեսակ հրաշից զօրութիւնը (Մովսէսին տրուած) ինչ կը յայտնէ։

Պաս. Դաւազանին օձ լինելը՝ Փարաւոնի անգթութիւնը կը ցուցնէ, և թէ Մովսէսի ձեռամբ պէտք է պատժուէր։ Վասն զի ինչպէս որ հովիւը գաւազանաւ կարածէ ոչխարները, նմանապէս իշխանը՝ արդարութեան օրինօք կը կառավարէ մարդիկը։ Եթէ իշխանը արդարութեամբ չի կառավարեր իր հպատակները, նորա գաւազանը իբրև թէ օձ կը դառնայ, ինչպէս Մովսէսի գաւազանը օձ դարձաւ, որ անօրէն Փարաւոնը թունաւորելով ի կորուստ մատնէ, որուն կատարեալ արժանի էր։

Աստուծոյ պատուէրը գաւազանի նման է, որուն դէմ գործել՝ գաւազանը ձեռքէ ձգելու պէս է. և երբ պատուէրը գետին կընկնի, օձ դառնալով կը թունաւորէ մարդը՝ վասն զի ինչպէս որ պատուէրին հակառակ չը գործողը՝ չի պատժուիր, այսպէս էլ հակառակ գործողը հարկաւ կը պատժուի։ Ռուբէմն եթէ պատժուիլ չէս ուզեր, պատուէրի գաւազանը բնաւ ձեռքէ մի՛ թողուր։

Նմանապէս, Մովսէսի ձեռաց բորոտիլը՝ Իսրայէլի ժողովրդեան վիճակը կը յայտնէ։ Վասն զի նոքա Եգիպտոս գնացած ատեն՝ այն ժամանակի Փարաւոնը ի պատիւ Յովսէփայ զանոնք կը պահպանէր անվնաս ու անվտանգ իբրև թէ իւր ծո-

ցում, բայց եաքէն եկող թագաւորները զանոնք հալածահարելով և չարչարելով վիրաւորեցին, նոյնպէս Իսրայէլի ժողովուրդն էլ Եգիպտացւոց վատ սովորութեանց հակամիտելով իրեւ թէ բոլոտեցաւ: Մովսէսի ձեռքը բորոտելէ յետոյ վերստին ողջանալն՝ կը նշանակէ թէ Իսրայէլացիք որչափ որ Եգիպտոսում վիրաւորուեցան բարոյապէս, բայց անտի ելնելով նորէն իրենց առաջին վիճակը պէտք է ստանային: Դարձեալ, գետի ջուրին արիւն դառնալը՝ Իսրայէլացւոց մանուկներուն գետը ձգուելը կը յայտնէ, ուր իրենց մահը կը գտնէին:

Այժմ նկատողութեան առ, Փարաւոն որչափ որ ընդդէմ արդարութեան գործելով պատժոյ արժանի եղաւ, բայց Աստուած իւր գթութեամբ նախ՝ Մովսէսը առ նա կը ղրկէ, որ ղղջայ, և եթէ չը ղղջայ, ըստ այնմ պատիժը կրէ: Քանզի Աստուած մարդը չի պատժեր, բայց միայն իր յանցանքին համար. բայց նախ՝ ղղջման կը հրաւիրէ, որ իւր գթութիւնը յայտնի լինի: Եւ եթէ մարդը՝ Աստուծոյ գթութիւնը արհամարհելով իւր չար ճանապարհէն չի դառնար, այն ատեն կը պատժէ, որ իր արդարութիւնը յայտնուի:

Ուրեմն ահա, Փարաւոն մի մեծաշուք թագաւոր լինելով հանդերձ մի հովիւ կը ղրկուի առ նա պատիժի համար, և այն էլ, ոչ թէ ցինուք և զօրօք, այլ բոլորովին միայնակ և մի ցուպ

կամ գաւազան ի ձեռին: Արդ՝ թող մարդ չը հպարտանայ աշխարհի զօրութեան վրայ. վասն զի երբ Աստուած՝ իր ակնարկը վերցուներ, թագաւոր իսկ լինի, մի ակար հովիւ կը յաղթուի:

Ցետոյ (ինչպէս 45-րդ հարցման վերջը յիշուեցաւ) ըստ հրամանին Աստուծոյ՝ Մովսէս Եգիպտոս գնալու համար իր կինն ու երկու որդիքն առնելով ճամբայ կելնէ, բայց փոքր օրդին Եղիազարը՝ այն օրերուն ծնած լինելով ճանապարհին չը նեղուելու պատճառով սակաւին թլփատուած չէր, կը կարծուի: Երբ առաջին լչլեանը կը հասնին, հրեշտակը երեւնալով կուզէ Մովսէսը սպանել. Մովսէսի կինը գուշակելով այս բանին պատճառը, իսկոյն զայլահազով մի մանուկը կը թլփատէ և հրեշտակին ոտիքը փարելով կը յայտնէ թէ ահա մանկան արիւնը դադրեցաւ. որուն վրայ հրեշտակը կը մեկնի անտի. իբրև թէ այդ խօսքով կինը ասել կուզէր, թէ ահա Աստուծոյ հրամանը կատարուեցաւ, մի սպաներ Մովսէսը, որ ուրիշ յանցանք չունի, արժանի պատժոյ:

Ուրեմն առ, Մովսէս Աստուծոյ հրամանը գործադրելու համար Եգիպտոս կերթայ, բայց յառաջագոյն եղած հրամանը գործադրած չը լինելուն պատճառաւ, քիչ մնաց որ պիտի պատժուէր. ուրեմն մարդ պարտական է Աստուծոյ բոլոր հրամանները կատարել. եթէ բոլորը պատուէրները կատարելով միայն միոյն մէջ թերանայ,

բոլորին պարտաւոր կը մնայ[1]: Ուստի պատուէրն Աստուծոյ հրամանը լինելով՝ անոնց ծրը որ անկատար մնայ, հրամանի հակառակ գործած կը լինի, որով մարդս պատժոյ արժանի կը լինի:

Մովսէս կը տեսնէ որ կինն ու մանուկները՝ իրեն արգելք և նեղութիւն կը պատճառեն, այս պատճառաւ զանոնք աներոջ հա ղրկելով ինքը միայնակ և առանձին կը գնայ: Ու երբ Քորեք լեռը կը հասնի, Ահարոն կը դիմաւորէ զայն. և զիրար տեսնելով կուրախանան, Մովսէս կը պատմէ Ահարոնի՝ Աստուծոյ բոլոր հրամանները:

Այսպէս երկուքն ի միասին Եգիպտոս գնալով՝ Ահարոն ժողովրդեան ծերերուն կը հաղորդէ ինչ որ հարկն է: Մովսէս էլ նոցա առջև հրաշք գործելուն պէս, նոքա հաւատալով ուրախ կը լինին Աստուծոյ այցելութեան վրայ: Ցետոյ Մովսէս և Ահարոն Փարաւոնի ներկայութեան երթալով կը խնդրեն որ Իսրայէլը Թողու երեք օրուան ճանապարհ դէպի անապատը գնալով Աստուծոյ զոհ մատուցանելու համար:

Հարցում ԽԹ.

Փարաւոն ի՞նչ պատասխանեց Մովսէսի:

Պատ. Փարաւոն հպարտ և յամառ՝ ոչ միայն

1. Որ ոք զամենայն օրէնսն պահեցէ, և միով եւթք ինչ գթիցէ, եղև ամենայն օրինացն պարտապան. Կաթուղ. Ցակոբ. Բ. 10:

տուած կը ճանչնար և ոչ Իսրայէլը կը Թողուր, ասելով վճռական մի պատասխան կուտայ: Ցիրաւի, Մովսէս իբր պատգամաւոր Աստուծոյ կողմանէ և Ահարոն իբրև նորա Թարգման Փարաւոնին գնալ և խնդրելը՝ որ իւր կամքով Թոյլ տայ Իսրայէլի Եգիպտոսէն ելնելու, մեծ պատիւ և փառք էր իրեն, բայց յիշեալը այս պատիւը չը ճանաչելով Իսրայէլը չը Թողուէ զատ, այն պճ է, որ նորա խօսքին անսալով Իսրայէլը Թող տար ասելով, Աստուծոյ ամենակարողութեան դէմ կը խօսի: Բացի այդ, դիտմամբ կսկսի Իսրայէլի ժողովրդեան առաւել սաստիկ նեղութիւններ տալ:

Որովհետև պիւս չինել կուտար նոցա, մինչև այն ատեն պիւսի յարդը կառավարութեան կողմէն կը տրուէր, այս դէպքին վրայ յարդն էլ նոցա վրայ պարտք գրաւ գտնել և միանգամայն պիւսանեղուն Թիւն ամբողջ պահանջելով՝ Իսրայէլացւոց խիստ ծանր եկաւ այս գործը, ինչու որ յարդ գտնել խիստ շատ դժուարին գործ էր: Նամանաւանդ այս գործին վրայ կարգուած հրէայ քարտուղարները Փարաւոնին գնալով իրենց գառն և տաղնապալից վիճակը կը յայտնեն և կը գտնեն Թէ ինչո՞ւ այսպիսի բռնութիւն ի գործ կը դնէ իւր ծառայից դէմ և պիւսից Թիւն էլ ամբողջ կը պահանջէ:

Անգութն Փարաւոն փոխանակ զթալու յանդիմանական խօսքեր կուղղէ նոցա Թէ պարապ և

անդրադ մնալնուդ պատճառաւ «երթանք զոհ մատուցանենք» կասէք, ուրեմն գնացէք, աշխատեցէք, ձեզի յարդ ոչ ոք կուտայ և ալիւսից Թիւն էլ ամբողջացուցէք։

Յրատ ուռ, ինչպէս որ Փարաւոն հսկայից աշխատութիւնը բազմապատկեց[1], երբ նոցա՝ Եգիպտոսէն երթելով Աստուծոյ զոհ մատուցանելու նպատակաւ անապատը գնալու որոշումը իմացաւ, որպէս զի Աստուծոյ հրամանին վրայ խորհելու ժամանակ չունենալով Եգիպտոսէն երթելու խորհուրդը իբաց թողուն, նմանապէս երբ մի մարդ իւր չար ճանապարհէն դառնալով Աստուծոյ հրամանին համեմատ առաքինութիւն գործել կսկսի, սատանան նորա վերայ աշխարհային զբաղմունք բարդելով երկրաւոր զբօսանայ սէրը կը ներշնչէ, որ առաքինութիւն գործելու ժամանակ գտնելու անկարող լինելով երբէք մեղքէ ազատ և գերծ մի վիճակ չունենայ։

Վասն զի Եգիպտոսէն երթելով երեք օրուան ճանապարհ գնալ և անապատում պատարագ մատուցանել՝ կը նշանակէ մարմնոյ հաճոյքը թողուլ, աշխարհային հոգերէ հրաժարիլ և ղղջմամբ, խոստովանութեամբ ու ապաշխարութեամբ ապրիլ։ Վերոյիշեալ քարտուղարները, որոնք Փարաւոնէն

1. Ծանրացոյց գործ մարդկան և անմիտ հոգատացեն. Ելից. Ե. 9։

փոխանակ օգնութիւն առանալու, յանդիմանութիւն լսեցին, ամէն կերպով յուսահատ մեկնելով Փարաւոնի պալատէն, Մովսէսի և Ահարոնի հանդիպեցան, և դանդաղելով կասեն, թէ «զմեզ Փարաւոնի աչաց առջև առարատուցիք, և մեր կորատեան ու կատարածին պատճառ պիտի լինիք»։ Տես, Աստուած Մովսէսը կը զրկէ որ Փարաւոնին գնալով իւր հրամանը հաղորդէ, բայց նա փոխանակ անսալու՝ հակառակը կը գործէ, և ժողովուրդն էլ առանց համբերելու գանգատիլ կսկսի։

Նմանապէսանդ Մովսէս նոցա կրած չարչարանքը տեսնելով՝ սիրտը չկտրին ատելեան կատարած երբ կսկսի Աստուծոյ ազաչել, Աստուած զայն մխիթարելու համար կասէ թէ հիմայ պիտի տեսնես թէ ես Փարաւոնին ինչ պէտք է անեմ[1]։ Այս խօսքով թէև յայտնեց որ Փարաւոն սաստիկ պատիժ պէտք է կրէ և Իսրայէլը Աստուծոյ ամենակարող զօրութեամբ պէտք է շուտով ազատի, բայց ժողովուրդն էլ վստահացնելու համար Մովսէսի կը հրամայէ որ յայտարարէ նոցա թէ Աստուած զերեզնք գերութենէ փրկելով Քանանու երկիրը պիտի տանի, ինչպէս որ Աբրահամու, Իսահակայ և Յակոբին խոստացած է։

Արդարև ըստ հրամանին Մովսէս գնալով լուր

1. Եւ ասէ Տէր ցՄովսէս, այժմ տեսցես, զինչ արարից ընդ Փարաւոն. Ելից. Զ. 1։

կուտայ ժողովրդեան, սակայն նոքա անհամբեր և խիստ մեծ նեղութեան մէջ լինելով այլ ևս նորա խօսքը չեն լսեր: Աստուած՝ երբ նորէն կը հրամայէ Մովսէսի գնալ առ Փարաւոն, և ասել որ Թողու Իսրայէլի ժողովուրդը, կը պատասխանէ Մովսէս թէ Իսրայէլի որդիք ինձ չը լսեցին, Փարաւոն ինչպէ՞ս լսէ. ինչու որ ես պերճախօս մի մարդ չեմ և ձայնս տկար է:

Լաւ նկատէ աստ թէ Մովսէս որչափ կը խոնարհէր Աստուծոյ առջև, Աստուած էլ այնչափ նորա փառքը կաւելցնէր, այս անգամ ևս Մովսէս Աստուծոյ նման Փարաւոնի վրայ տէր և իշխան կը կարգուի, որ այլ և այլ հրաշքներ գործելով զայն պատժէ: Իսկ Ահարոն մարգարէ կը լինի Մովսէսին[1]: վասն զի ինչպէս որ մարգարէք Աստուծոյ հրամանը մարդոց իմացնելու պաշտօն ունէին, նմանապէս Ահարոն Մովսէսի հրամանը Փարաւոնին և ժողովրդեան կիմացնէր: Այն առեն Մովսէս ութսուն, իսկ Ահարոն ութսուն երեք տարեկան էր:

Այսուհետև ուշադիր եղիր Մովսէսի ձեռամբ գործուած հրաշից և յամառ ու ինքնահաւան Փարաւոնի կրած պատիժներուն. վասն զի Մովսէս և Ահարոն Աստուծոյ հրամանաւ երկրորդ անգամ

1. Ահա եղաւ զքեզ Աստուած Փարաւոնի, և Ահարոն եղբայր քո եղիցի քեզ մարգարէ. Ելից. Է. 1:

կը ներկայանան Փարաւոնին և կը պահանջեն որ Իսրայէլը թողու: Բայց որովհետև նա առաջ ասած էր թէ զԱստուած չեմ ճանաչեր այս պատճառաւ Մովսէս կսկսի հրաշք գործել, որ Աստուծոյ կարողութիւնը ճանաչէ: Ուստի Ահարոն Մովսէսի գաւազանը առնելով Փարաւոնի առջև գետին ձգածին պէս օձ կը դառնայ:

Սակայն Փարաւոն այս հրաշքը կախարդութեան՝ և ո՛չ թէ Աստուծոյ զօրութեան ընծայելով Յաննէս և Յամբրէս անուն կախարդները կոչել կուտայ, որպէս զի նոքա ևս իրենց գաւազանները օձ շինեն, (Բ. Տիմոթ. Գ. 8.): Արդարև ատոնցմէ հնարքով նոցա գաւազաններն էլ օձ եղան, բայց զարմանալին այն էր որ օձերը ի ներկայութեան Փարաւոնի իրարու հետ կռուիլ սկսելով՝ Մովսէսի (օձը) գաւազանը կախարդաց գաւազանը կուլ տալուն վրայ միայն ինքը ճնաց մէջտեղ. զոր Մովսէս, բռնածին պէս նորէն գաւազան եղաւ, վանորոյ կախարդները առանց գաւազանի ճնալով ծաղրելի և ամօթապարտ մեկնեցան: Մի կարծեր սակայն թէ նոցա արածը ճշմարիտ հրաշք էր, այլ սատանայական հնարք:

Սակայն հրաշքը՝ յորդոր և խրատ էր Փարաւոնին որ զղջայ: վասն զի Մովսէս Աստուծոյ հրամանաւ Իսրայէլեան ազգին վրայ հովիւ կարգուած լինելով՝ յուզն ի ձեռին իր հօտը որոնելու եկած էր, և Փարաւոն իր յօժար կամքով հօտը

հովուին չը յանձնելուն պատճառաւ գաւազանը օձ կը լինի, որ անիրաւը պատուհասէ: Բայց նա այս օրինակէն խրատ չառնելուն՝ բնականաբար խրատը պատիժի փոխուելայաւ, ինչու որ խրատ մարիկ չառնողին իրաւացի բաժինը պատիժն է:

Արդարև Փարաւոն ըստ ամենայնի պատասխանատուութեան արժանի, բայց Աստուած ողորմած և զթառատ լինելով նորէն երրորդ անգամ Մովսէսը կը ղրկէ որ Իսրայէլը թողու. և եթէ չի թողուր, գիտնայ թէ պէտք է պատժուի: Բայց այդ, տալիք պատժոյն ժամանակը, անունը և եղանակը միանգամայն կը յայտնէ կանխաւ, որ բնական պատահար չը համարի, այլ Աստուծոյ կողմէ ղրկուած յատուկ պատուհաս գիտնալով դարձի և ղղջումի գայ:

Հարց. Ե.

Քանի՞ տեսակ պատիժ կամ հարուած տրուեցաւ Փարաւոնի:

Պաս. Տասը տեսակ: Առաջին հարուածն էր այն, որ Ջուրը արիւն դարձաւ: Նկատէ, ինչպէս որ Փարաւոն Իսրայէլի մանուկները ջրոյն մէջ նետել կուտար, նորա փոխարէն Եգիպտացւոց խմելիք ջուրերն արեան փոխարկուեցան: Վասն զի Մովսէս Աստուծոյ հրամանաւ կանուխ Նեղոս գետի եզերքը կը գնայ, ուր կուգար նաև Փարաւոն, և Աստուծոյ հրամանը հաղորդելով՝ անդամ

թագաւորը անհամոզելի տեսնուածին պէս Ահարոն Մովսէսի գաւազանը գետի ջուրին զարկաւ, որով իսկոյն ոչ միայն գետին և լիճերուն, այլ և տուներուն գտնուած հորերուն, կարասներուն և սափորներու ջուրերը արիւն դարձան հրաշիւք, և գետի ձուկերը մեռնելով սկսան հոտիլ: Այս պատիժը եօթն օր տեւելով՝ խմելու ջուր գտնելու անկարող լինելու պատճառաւ պարտաւորեցան նոր հորեր փորել, ջուր գտնելու համար: Սակայն Փարաւոն այս հրաշքն կլ ոչ թէ Աստուծոյ կողմէն, այլ կախարդութեան արուեստ համարելով իր կախարդաց ևս ջուրը արիւն դարձնելու հրաման կուտայ և սատանայական հնարիւք կը յաջողի:

Երկրորդ հարուած՝ գորտերն եղան. վասն զի Աստուծոյ հրամանաւ Մովսէս Փարաւոնին գնալով կասէ թէ՝ Աստուած այսպէս կը հրամայէ. «Թող իմ ժողովուրդը, և եթէ չես թողուր, քու երկիրդ գորտերով կը հարուածեմ: Եւ երբ Փարաւոն չը հնազանդեցաւ, Ահարոն Մովսէսի գաւազանը գետին զարկածին պէս, իսկոյն ջուրէն անհամար գորտեր դուրանալով այն աստիճան կը շատնան, որ Եգիպտոսի ցամաք երկիրը պատելէն զատ տուները, սենեակները, մահճակներն ու սեղան ևս իրենց վրայ ևս լեցուելով կը յարձակին ներքացուցիչ ոստոստուածներով. այնպէս որ բոլոր Եգիպտացիք խիստ անհանգիստ կը լինին և

սարսափելի կերպով կը պատժուին։ Սակայն Փարաւոն կախարդաց ձեռօք ևս ջուրէն գորտ հանել տալու կը յաջողի։

Նայէ դուն Փարաւոնի թշուառ վիճակին վրան որ յիշեալը այն աստիճան յամառութեան մէջ յառաջ կը գնայ, որ արդէն գորտերէն կոխելու և կանգնելու տեղ չը գտնելով հանդերձ ի հեճուկս Մովսէսի գորտերը շատացնելու փորձ կը փորձէ։ Այո՛, կախարդները գորտեր կը շատացնեն, բայց չեն կարող զանոնք ոչնչացնել. և Փարաւոն որչափ էլ հպարտ և անաստուածէ, բայց գորտերուն ձեռքէն այնչափ անհանգիստ կը լինի, որ ստիպեալ կը կոչէ Մովսէսն ու Ահարոնը. որոց կասէ թէ աղօթեցէք առ Աստուած, որ գորտերը հեռացնէ, որպէս զի Իսրայէլը թողում։

Ի միս ատ, նա՝ որ առաջ Աստուած չեմ ճանաչեր կասէր, պատիժը կրածին պէս՝ կը խնդրէ որ աղօթեն առ Աստուած, բայց ոչ թէ ուրիշ մտքով, այլ ակամայ։ Մովսէս նորա անհաւատութիւնը գիտնալով՝ պայման կը դնէ որ իւր ուզած ատենը թող գորտերը անհետանան, որպէս զի Աստուծոյ զօրութիւնը իմանայ։

Փարաւոն յաջորդ օրը որոշելուն՝ Մովսէս կը խոստանայ յաջորդ օրը հարուածը վերացուցնել։ Արդարև նոյն օրն Աստուծոյ աղաչելով՝ իւր պատիժ յառաջ եկած բոլոր գորտերը կը մեռնին։ Սակայն որչափ որ գային ժողովելով քաղաքէն

դուրս թափեցին, այսու հանդերձ այնչափ անհամար գորտերու դիակաց հոտը Եգիպտոսի ժողովուրդը խիստ շատ կը նեղէ։ Ցիրաւի, Ահարոն գաւազանը գետի ջուրին զարկածին պէս՝ իսկոյն գորտերը գոյացան, բայց Մովսէս անոնց չքացման համար աղօթած ատեն՝ իսկոյն նոքա չեն փարատիր, այլ մեռնելով մէջտեղ կը ծնան։ Վասն զի եթէ յանկարծ անհետանային, կարելի էր կասկածութեան վերագրել. բայց մեռած դիականց մէջտեղ ծնելովն կը հասկանան թէ պատիժ է։

Հիմայ մեր դի՛ր Փարաւոնի խարդախ բնաւորութեան։ Թէպէտ գորտերու ներկայութենէն խիստ շատ նեղուեցաւ, բայց նոցա անհետացման համար փոխանակ ինքը աղօթելու՝ Մովսէսի և Ահարոնի կը յանձնէ աղօթելու և աղաչելու զԱստուած։ Բացի այդ, անմիջապէս աղօթել չի խնդրեր, այլ՝ վաղը աղօթեցէք կասէ։ Վասն զի հպարտութենէն չի զիջանիր մեղայ գոչելով Աստուծոյ դիմել աղօթքով, նոյնպէս անհաւատ լինելուն՝ կարելի է ինքնին կը փարատին ասելով, վաղն աղօթել կը խնդրէ։

Երրորդ հարուած՝ մժեղն եղաւ. քանզի գորտը փարատածին պէս Փարաւոն խօսքին վրայ հաստատ չը կենալով Իսրայէլի ժողովուրդը չարձակեր։ Այն ատեն Ահարոն Մովսէսի գաւազանը գետնին զարնելով իսկոյն անհամար մժղուկներ կը գոյանան, և այն աստիճան բազմութեամբ կը յար-

ձակին մարդոց և անասնոց վրայ, որ ամէնքն ալ կը ջլատուին։ Թէպէտ կախարդք ևս կը փորձեն մինչ (մժեղ) գոյացնել, բայց անկարող գտնուելով կը հարկադրին յայտնապէս խոստովանելու թէ Աստուծոյ մատը կայ այդ բանի մէջ։

Վասն զի նոքա ևս իմացան թէ Մովսէսի հրաշքները սատանայական գործեր չեն, այլ Աստուածային զօրութեան կարօտ է մի մարդ այնպիսի հրաշք գործելու համար։ Արդարև առաջ կախարդներուն արածները սատանայական հնարք էին, բայց Աստուած յանկարծ չարգիլեց զայն, որպէս զի Փարաւոնի պատիժը սաստկանայ, և յետոյ արգիլեց· որպէս զի իմանայ թէ նոցա գործը ճշմարիտ հրաշք չեն և ամէն ատեն իրենց կամեցածը ի գործ դնելու կարող չեն· ինչու որ եթէ Աստուած կամենայ, կարգիլէ սատանան որ զմարդիկ խաբելու կարող չը լինի։

Չորրորդ հարուած՝ շանաճանճն էր, որ խիստ կատաղի տեսակէն լինելով խայթած տեղը վէրք կը լինէր։ Քանզի Մովսէս Փարաւոնին գնալով կը պահանջէ որ Իսրայէլի ժողովուրդը թողու, եթէ ոչ, վաղը քու և ժողովրդեանդ վրայ շանաճանճ պիտի ղրկեմ, որոնք Իսրայէլացւոց տեղը բնաւ չը պէտք է երևին, որպէս զի իմանաս թէ Աստուած մարդոց և անասնոց վրայ, որ ամէնքն ալ կը ջլատուին։ Թէպէտ կախարդք ևս կը փորձեն մինչ (մժեղ) գոյացնել, բայց անկարող գտնուելով կը հարկադրին յայտնապէս խոստովանելու թէ Աստուծոյ մատը կայ այդ բանի մէջ։

Վասն զի նոքա ևս իմացան թէ Մովսէսի հրաշքները սատանայական գործեր չեն, այլ Աստուածային զօրութեան կարօտ է մի մարդ այնպիսի հրաշք գործելու համար։ Արդարև առաջ կախարդներուն արածները սատանայական հնարք էին, բայց Աստուած յանկարծ չարգիլեց զայն, որպէս զի Փարաւոնի պատիժը սաստկանայ, և յետոյ արգիլեց· որպէս զի իմանայ թէ նոցա գործը ճշմարիտ հրաշք չեն և ամէն ատեն իրենց կամեցածը ի գործ դնելու կարող չեն· ինչու որ եթէ Աստուած կամենայ, կարգիլէ սատանան որ զմարդիկ խաբելու կարող չը լինի։

Չորրորդ հարուած՝ շանաճանճն էր, որ խիստ կատաղի տեսակէն լինելով խայթած տեղը վէրք կը լինէր։ Քանզի Մովսէս Փարաւոնին գնալով կը պահանջէ որ Իսրայէլի ժողովուրդը թողու, եթէ ոչ, վաղը քու և ժողովրդեանդ վրայ շանաճանճ պիտի ղրկեմ, որոնք Իսրայէլացւոց տեղը բնաւ չը պէտք է երևին, որպէս զի իմանաս թէ Աստուած

---

1. Ասեն գէաքն ցՓարաւոն, մատն Աստուծոյ է այդ· Ելից· Ը· 19։

ծոյ զօրութեամբն է, բայց յամառ Փարաւոնը դարձեալ չի համոզուիր։ Արդ՝ Մովսէսի ասածին համեմատ յաջորդ օրը անթիւ շանաճանճ երևեցաւ Փարաւոնը և բոլոր Եգիպտացիները խայթեցին, որոնք վիրաւորուած՝ խիստ անհանգիստ եղան։ Իսկ Իսրայէլի գտնուած տեղում երբէք շանաճանճ չերևեցաւ, ինչպէս որ միւս հարուածներն էլ նոցա բնաւ չը պատահեցան։ Այս հարուածին վրայ Փարաւոն հրամայեց, որ Եգիպտոսի մէջ զոհ մատուցանեն, բայց Մովսէս երբ կը յայտարարէ թէ առանց անապատ գնալու անկարելի է, Փարաւոն ակամայ կը խոստանայ հրաման տալ, երբ պօռթեն և շանաճանճի պատիժն էլ վերնայ։ Մովսէս գիտնալով թէ սուտ կը խօսի, կը պատասխանէ թէ կպօռթեմ, որ վաղը շանաճանճը փարաւոն, բայց դարձեալ չը խաբես։ Իրօք Մովսէսի ազօթքով պատիժը վերցաւ, բայց Փարաւոն հրաման չը տուաւ։

Հինգերորդ հարուած՝ անասնոց մահն եղաւ։ Մովսէս ըստ հրամանին Աստուծոյ Փարաւոնին կասէ, «արձակէ ժողովուրդը, եթէ ոչ, դաշտաց մէջ գտնուած բոլոր անասունք պէտք է մեռնին, որոնք Եգիպտացւոց կը վերաբերին, իսկ Իսրայէլացւոց անասուններուն բնաւ ոևէ վնաս չը պիտի լինի։ Բայց յիշեալը դարձեալ չը համոզուեցաւ։

Ուստի յաջորդ օրը Եգիպտացւոց պատկա-

նեալ որչափ կով, ոչխար, ուղտ, ձի, էշ և այլ անասուններ կային ամենքն էլ մեռան։ Ճշմարիտ է որ նախորդ հարուածներէն խիստ շատ նեղութիւն կրեցին, բայց ստացուածք չէր կորուսին, իսկ այս անգամ նիւթական ահագին կորուստ ունեցան։ Փարաւոն կը տեսնէ որ Եգիպտացւոց անասուններ միայն մեռնելով, իսկ Իսրայէլի անասնոց բնաւ մի ճիւաս չէր հասած, առաւել ևս իւր յամառութեան մէջ կատաղած՝ Իսրայէլը չի թողուր։

Վեցերորդ հարուած՝ մարդոց և անասնոց վրայ գոյացած վէրքն եղաւ, որ կեղ կամ խազուարտ կը կոչուի։ Մովսէս և Ահարոն Աստուծոյ հրամանաւ իրենց ձեռամբ հնոցի վառարանէն մխիւ առնելով ի ներկայութեան Փարաւոնի դէպի վեր երկինքը ցանեցուն պէս՝ իսկոյն բոլոր Եգիպտացւոց և նոցա անասուններուն վրայ ուռուցեալ վէրքեր գոյանալով՝ ցաւէն խիստ շատ անհանգիստ կը լինին բոլորը։ Նոյն իսկ կախարդաց մարմիններուն ևս գոյացած լինելով՝ այլ ևս Մովսէսի ներկայութեան չեն կարող կենալ։

Եօթներորդ հարուած՝ հրեղէն կարկուտն, սաստիկ որոտումն և զարհուրելի փայլակներն եղան։ Բայց Մովսէս մի օր առաջ իմաց առաւ թէ կարկուտ պէտք է տեղայ, որ ինքզինքը և անասունները պահպանէ։ Արդարև որոնք որ Մովսէսի խօսքին հաւատալով զգուշացան, ոևէ ճնաս չէր կրեցին, իսկ որոնք չէր հաւատալով դաշտերում

մնացին, բոլորն էլ ոչնչացան։ Վասն զի Մովսէս ձեռքը դէպի երկինքը վերցնելուն՝ իսկոյն սարսափելի որոտումն ակսելով՝ այն սաստիկ խոշոր կարկուտ կը տեղայ, որուն նմանը մինչև այն ատեն տեսնուած չէր։

Զարմանալին այն է որ կարկտահարէն մէջ կրակ գտնուելուն համար Ջուրը կարող չէ մարել զայն, ընդհակառակն առաւել զօրութիւն տալով կրակին, ընկած տեղը այրելով կը փոշիացնէր[1]։ Փարաւոն սոյն հարուածին վրայ Մովսէսն ու Ահարոն կոչելով ո՛չ միայն զղջում կը յայտնէ, այլ և Աստուծոյ արդարութիւնն ու իրեն չարութիւնը խոստովանելով կը խնդրէ որ ապօթեն հարուածը վերացնելու համար, որպէս զի Իսրայէլը արձակէ։

Մովսէս կը պատասխանէ թէ հիմայ քաղաքէն դուրս գնալով ձեռքերս վեր բարձրացնեմ, որ պատերը վերանայ, և դուն իմանաս թէ բոլոր աշխարհ Աստուծոյ է։ Բայց գիտեմ որ դուն տակաւին Աստուծմէ չէր վախցար։ Արդարև Մովսէս քաղաքէն դուրս ելնելով ձեռքերը վեր բարձրացնելուն՝ անմիջապէս կարկուտը, անձրևն ու որոտումն ձայները դադարեցան։ Սակայն Փարաւոն հանգիստը գտածին պէս՝ խոստումը կատարել չէր կամեցաւ իր սովորական յամառութեամբը։

1. Չէ ամենաշնջոյց Ջուրն առաւել զօրեալ զհրայ զօրութիւն. լմաստ. ԺԶ. 17։

Ուրեմն երբոր Հարուածն մարախն եկաւ։ Ուստի Մովսէս և Ահարոն ըստ հրամանին Աստուծոյ գնալով առ Փարաւոն կը յայտարարեն, «Իսրայէլի Աստուածը այսպէս կասէ, Մինչև ե՞րբ պիտի չհամաչես ինձմէ, արձակէ ժողովուրդս, որ ինձ երկրպագութիւն մատուցանեն, և եթէ չարձակես, վասն այս ամէն քու բոլոր երկիրներդ այն առիւծան բազմութեամբ մարախ պիտի գայ, որուն նմանը ոչ դուն և ոչ նախնիք հայրերդ տեսած են», և պատասխանի չսպասելով կը մեկնին։

Այն ատեն Փարաւոնի հպատակները կսկսին գանգատիլ և ասել, Թէ «մինչև երբ պիտի մնք այս հարուածները կրենք, արձակէ որ գնան, որովհետև Եգիպտոսը աւերակ դարձաւ։» Ցիրաւի, Փարաւոնի միտքը ժողովուրդը Թողու հակամէտ չէ, բայց իր հպատակաց սաիպմամբը Մովսէսն ու Ահարոնը կը կանչէ և կը հրամայէ որ գնան՝ սակայն մի և նոյն ժամանակ կը հարցնէ, Թէ որո՞նք պիտի երթան, և երբ Մովսէս պատասխան կուտայ Թէ «մենք ամէնքս մեծ ու պզտիկ պիտի գնանք հանդերձ մեր բոլոր ունեցած ստացուածով, այդպես չի լինիր, կը գոռայ Փարաւոն, միայն այր մարդիկ Թող գնան», և բարկութեամբ կը վռնտէ զանոնք իր ներկայութենէն։

Ուստի Մովսէս Աստուծոյ հրամանաւ ձեռքը դէպի երկինք բարձրացուց, և ահա խոտոն այդ օրն ցերեկ ու գիշեր հարաւէն հողմը փչելով

առաւօտեան՝ եմ անհամար քանակութեամբ մարախ կը լեցուի Եգիպտոսի երկիրը, այնպէս որ երկինք և երկիր աներևոյթ կը լինին, և Փարաւոնի պալատին ու բոլոր Եգիպտացւոց տուներուն վրայ յարձակելով՝ որչափ ծառեր ու տունկեր կամ բոյսեր կային, բոլորն ել կը փճացուցին Թէ ներս և Թէ դուրս դաշտաց մէջ։ Այս հարուածին վրայ, Փարաւոն աճապարանօք Մովսէսն ու Ահարոնը կոչելով իբրև Թէ ուղղուած և արածին վրայ անկեղծօրէն զղջացած՝ կասէ «յանցանք գործեցի, այս անգամ էլ ներեցէք իմ յանցանաց, ու միանգամ աղօթեցէք առ Աստուած, որ մարախները անհետացնէ։ Ես Մովսէս աղօթելով՝ անմիջապէս սաստիկ մի հով սկսաւ փչել և մարախները կարասասկի մի հով սկսաւ փչել և մարախները կարասասկի մի հով սկսաւ փչել և մարախները կարասասկի

բածում իրեն յատուկ զատ զատ կարողութիւն գտնուելով՝ թէև իրարմէ կը զանազանին, բայց մարախի նկատմամբ հասարակաց կարծիքն է թէ՝ նորա գլուխը՝ ձիու գլխոյն, աչքը՝ լոպի աչայ, կուրծքը՝ առիւծի կուրծքին, փորը կարիճին փորին, ոտքը՝ եգ ուղտու ոտից, պոչը՝ օձի պոչին, թևերը՝ թռչնոց թևերուն կը նմանի։

Ինն երորդ հարուած՝ խիստ թանձրամած խաւարն եղաւ. Մովսէս բան հրամանին Աստուծոյ ձեռքը դէպի երկինք բարձրացուցած առին՝ իսկոյն մի սեւագոյն մուխով այն աստիճան թանձր խաւար երկիրը կը պատէ, որ Եգիպտացիք իրենց գտնուած տեղէն շարժելու անկարող լինելով՝ ոչ իսկ կրակ կամ ճրագ վառել կը յաջողին, քանզի օդը խիստ խտնաւ և մշուշոտ լինելուն պատճառաւ այն աստիճանին կը հասնի, որ խաւարը շօշափելի կը դառնայ։

Բացի այդ առ երկիւղի իրենց մտաց և երեւակայութեան առջև այլ և այլ զարհուրելի ձիւաղներ գալով ամենուն մարմինն ու սիրտը գողալ կսկսի և ո՞ր լինելնին չեն գիտնար և ո՛չ ոքէ օգնութիւն կամ մխիթարութիւն գտնելու անզօր կը լինին, ինչու որ միևնոյն սենեակին մէջ գտնուողներն ևս իւրաքանչիւրն իր ընկերը տեսնելու անկարելիութեան հանդէպ շուարած կը մնայ։ Ի լուր ահի այսր ամենայնի, այդ թանձր և շօշափելի խաւարում իրենց երկիւղը բազմապատկելու համար երբեմն լուսաւոր փայլակներ յանկարծ կը ծագէին, իրը հրոյ մէջ ճնացած և կերպ կերպ պակուցիչ սեւարանաց առջև գտնուած՝ մի և նոյն ատեն քաոսնելի և ահաւոր ձայներ կը լսէին[1]։

Յսկ ամենայն եղիր ընթերցող, Եգիպտացիք երբ Աստուծոյ երկիւղն ու դառնաստանը իրենց սրտերն վանելով կերպ կերպ հարատահարութիւններով Իսրայէլի ժողովուրդը կը կեղեքէին, երբեք նոցա հառաչանաց ու ողբերուն ունկնդրելով ըզթութիւն ու կարեկցութիւն ցոյց տալ չէին կամենար, այս անգամ նորա փոխարէն իրենք մահու չափ վախերու և նեղութեանց ենթարկուած՝ իրենց ողբոց և հառաչանաց ձայները բնաւ լսող չկայ։

Եւ ինչպէս որ վերոյիշեալ բոլոր հարուածներէն Իսրայէլացիք ամէն կերպով ազատ և զերծ կին, նոյնպէս այս անգամ նոցա բնակած տեղում երբէք խաւար կամ մթութիւն չերևեցաւ[2]։ Իսկ Եգիպտացիք և Փարաւոն երեք օր անօթի և ծարաւի մէջ ճնացին։ Երեք բաւ այդ շօշափելի խաւարի մէջ ճնացին։ Երեք օրէն յետոյ Աստուծոյ հրամանաւ խաւարը փարատելուն պէս՝ Փարաւոն Մովսէսն և Ահարոնը

1. Քանզի և ո՛չ՝ որ աներէց գնոսա մթութիւն, աներկիւղ պատեաց . . . և ցնորք անժպեաք խոժոռատեսմանց երեւէին։ Իմաստ. ԺԷ. 4։

2 Բայց ամենայն որդւոցն Իսրայէլի լոյս էր յամենայն բնակութիւնս իւրեանց։ Ելից. Ժ. 23։

կոչելով հրաման կուտայ որ գնան Աստուծոյ զոհ մատուցանելու, բայց իրենց արջառն ու խաշինքը Եգիպտոսում մնան։

Մովսէս համարձակ կը պատասխանէ, թէ ոչ միայն մեր բոլոր անասուններըը մեզ հետ պէտք է տանինք, այլ և դու ևս պարտիս կենդանիներ մեզ տալ մեր Աստուծոյն զոհ մատուցանելու համար։ Այս խօսքին վրայ Փարաւոն բարկանալով կասէ. «մեռա անգամ էլ աչքիս մի՛ երևար, եթէ ոչ, կը մեռնիս»։ Այն ժամանակ Մովսէս Աստուծոյ զօրեղութեամբ պատասխան կուտայ թէ «քու ասածին պէս մի անգամ էլ չեմ գար ներկայութեանդ, միայն թէ այս գիշերի կիսում քու անդրանիկ որդին և բոլոր Եգիպտացւոց անդրանիկները, ինչպէս և նոցա անասնոց առաջին ծնածները պէտք է մեռնին, և բոլոր Եգիպտոսի երկրում այն ատիճան լաց ու կոծ պիտի լսուի, որուն օրինակը երբէք տեսնուած չէ։

Իսկ Իսրայէլի ժողովրդեան մէջ թէ մարդու և թէ անասնոց որ և է ձևաս չը պատահելով, բնաւ մի ձայն չը պէտք է լսուի, որպէս զի ճանաչես Աստուծոյ զօրութիւնը և քու հպատակներդ պէտք է գան և ինձ երկրպագելով ասեն, թէ «գնա՛ Եգիպտոսէն ժողովրդեանդ հետ»։ Այս խօսքերէն յետոյ Մովսէս բարկութեամբ դուրս ելաւ։

Տասներորդ հարուածն եղաւ ուրեմն Փարաւոնի և բոլոր Եգիպտացւոց անդրանիկ որդւոց,

ինչպէս նաև նոցա անասուններուն առաջին ծնածներուն մահը։ Սակայն՝ Մովսէս Աստուծոյ հրամանաւ յառաջապէս Իսրայէլացւոց կը պատուիրէ, որ ամսոյն տասներորդ օրէն սկսեալ՝ իւրաքանչիւր անձ իր անուամ գտնուող անձանց թուոյն համեմատ մի տարեկան անարատ գառն առնելով չորս օր սնուցանէ, և ամսոյն չորեքտասաներորդ օրը երեկոյ գառն կտրելով արեան մէջ մի զոպայի փունջ թաթախէ, որով առներու սեմոց վրայ սրսկելով նշան դնէ. և առանց ոսկրը կոտրելու միսը խորոված ուտէ, մէջքը գօտի կապած, ոտքը կօշիկ և գաւազան ի ձեռին ուտելու է, աճապարանօք գառնահամ հացպարի հետ։ Ու եթէ աւելնայ՝ առանց առաւօտեան հա. ալ պահելու, ոսկորներովը կրակոմ այրէ, և այն գիշեր ոչ ոք տունէն դուրս պէտք է ելնէ։ Ըմանապէս եօթն օր առանց խմորի բաղարջ հաց ուտելու է, և այդ եօթն օրում ոչ ոքի տունէ խմոր չը պէտք է գտնուի բնաւ երբէք։

Հիմայ դուն նայէ յամառ Փարաւոնի և բոլոր Եգիպտացւոց խեղճ և թշուառ վիճակին, վասն զի Իսրայէլի ժողովուրդը վերը յիշուածին համեմատ Աստուծոյ հրամանը գործադրելով ուրախ և զուարթ դիւրութեան մէջ էին, ևս գիշերին Փարաւոնի պալատում և բոլոր Եգիպտացւոց տներում այն ատիճան լաց ու կոծի ձայն կը բարձրանայ որուն նմանը բնաւ լսուած չէ։

Որովհետև Աստուածային կամօք բոլոր Եգիպ-

տոյի անպրանիկ որդիք և առաջին ծնունդ բոլոր կենդանիք անմիջապես մեռան: Իրօք, ինչպէս Մովսէս յայտնած էր, Եգիպտացւոց աներուժ այդ ոդորմելի տեսարանը պարզուած ժամանակ, նոյն գիշեր Իսրայէլացւոց մէջ ոչ մի հիւանդ կամ տկար անձ չի գտնուիր:

Հարց՝ ԾԱ.

Տաւնեղորդ Հարուածէն ետքը Փարաւոն հրամայեց տուաւ Մովսէսի, որ Իսրայէլը Եգիպտոսէն հանէ:

Պաս. Հրաման տուաւ: Սակայն ոչ թէ Աստուծմէ վախնալով կամ թէ ուզիղ սրտով և անկեղծ մտքով, այլ՝ ակամայ կամօք: Քանզի նա՝ որ ասած էր թէ մի անգամ էլ առջևս չելնես, եթէ ոչ, կը մեռնիս, այս տաւնեղորդ Հարուածին վրայ ինքը կը կոչէ Մովսէս ու Ահարոնը, սաստիկ զանոնք որ ժամ յառաջ Իսրայէլի ժողովուրդը Եգիպտոսէն առնէ տանի, իրենց բոլոր ստացուածքով մէկտեղ և միանգամայն խնդրելու որ իրեն համար էլ աղօթեն առ Աստուած: Սմանապէս Եգիպտոսի ժողովուրդը ոտքի ելնելով սաստիկ թախանձանօք կսպիսին որ շուտով գնայ. վասն զի Եգիպտոսում ոչ մի տուն չկար, յորում այն գիշեր մի մարդ մեռած չը լինէր: Այս պատճառաւ այս անգամ՝ իրենք սկսան աղաչել զՄովսէս գնալու համար:

Այսպէս ուշադրութեան առ Աստուծոյ արդարութիւնը վասն զի երկար ժամանակ ի վեր Եգիպտացիք Իսրայէլի ժողովրդեան իրաւունքը յափշտակած էին, առանց վարձու և փոխարինութեան իրրև գերի չարաչար աշխատացնելով զանոնք, ուստի Աստուծոյ հրամանաւ Մովսէս Իսրայէլացւոց յառաջագոյն պատուիրած էր, որ իւրաքանչիւր անձ՝ իւր գրացիէն կամ ծանօթ Եգիպտացիէ ոսկի, արծաթ, զարդ և զգեստ ուզէ և առնայ, յայտնելով թէ Աստուծոյ զոհ մատուցանելու պէտք է գնայ, (ինչպէս որ 45-րդ Հարցման մէջ յիշատակուեցաւ):

Արդ՝ այն տափնապալից ժամանակում, ինչ որ խնդրուեցաւ, իսկոյն տուին առանց առարկութեան. մանաւանդ Աստուած յաչս Եգիպտացւոց փառաւոր երևցոյց Իսրայէլը, որպէս զի նոցա ամէն ուզածը առանց խնայելու տան, իրաւունքը չը կորսուելու համար[1]: Սակայ դուն Աստուծոյ Իսրայէլի ժողովրդեան արած ողորմութեանը: Նոքա՝ որ երկար ժամանակ Եգիպտացւոց ձեռքով անտանելի վիշտ և չարչարանք քաշած էին, այժմ վերջինելը տեսակ տեսակ ծանր հարուածոց ներքև ընկճուած կը գտնուին, իսկ իրենք անվնաս և ուրախ՝ բազում ստացուածով կը մեկնին:

---

1. Հատոյց սրբոցն զվարձս վաստակոց նոցա. Իմաստ. ԺԷ. 17:

Բացի այդ, Իսրայէլի որդիքը Եգիպտոս գնա-
լիս՝ (ինչպէս 38-րդ հարցման մէջ յիշուեցաւ),
միայն եօթանասուն հինգ հոգի էին, բայց Եգիպ-
տոսէն մեկնած միջոցում՝ բացի ծերունիներէն,
մանուկներէն, կիներէն, ծառաներէն և աղախին-
ներէն, միայն պատերազմելու կարող անձինքը հա-
շուելով, վեց հարիւր հազար հոգի էին: Մանա-
ւանդ շատ Եգիպտացիներ վերոգրեալ հրաշքները
տեսնելով հաւատացին Աստուծոյ և Իսրայէլի հետ
իրենց միասին մեկնեցան:

Ոմանց հաշուով կը կարծուի թէ երկու մի-
լիոնէն աւելի մարդոց բազմութեան կը հասնէր
նոցա թիւը հաւանականաբար: Սոյնպէս նոցա ոչ-
խարաց, կովուց և այլ անասնոց թիւը խիստ շատ
էր: Եւ որովհետև Աստուած կամեցաւ տանիլ զա-
նոնք ոչ թէ մօտ և ընդարձակ ճանապարհով,
այլ անապատի կողմէն, ուսաի այնչափ բազմու-
թեան կառավարութիւնը Աստուծոյ օգնութեան
կարօտ լինելով՝ նորա կամեցողութեամբ հրեշտակ
յատկացաւ Իսրայէլի առաջնորդելու համար, և
այս էլ՝ ոչ թէ ծածուկ, այլ՝ մի զարմանալի և
յայտնի կերպով:

Վասն զի բարձր սիւնանման մի ամպ յերե-
ւան գալով յերկնի կը լինէր նոցա, արե-
ւու ջերմութենէն պահպանելու համար, իսկ գի-
շերը մթութեան մէջ չը ճնալու համար, լոյս
կուտար: Երբ ամպը գնար, նոքա ևս իսկոյն կը

չուէին, իսկ երբ կը կանգնէր, նոքա ևս կը կեցա-
յին իջևանելու համար: Ահա այդ ամպի միջէն
Աստուած ձայն տալով իր հրամանները կը հա-
ղորդէր նոցա: Սոյն հրաշալի ամպը քառասուն
տարի Իսրայէլացւոց առաջնորդից անապատում,
և երբ Իսրայէլը Յորդանան գետն անցնելով տուրբ
Երուսաղէմի երկիրը մտան, աներեւութացաւ նոցա
աչքերէն անմիջապէս:

Արդ՝ երբ որ նոքա Եգիպտոսէն ելան, յիշեալ
ամպը շիտակ դէպի անապատը կը գնայ, մանա-
ւանդ Աստուած կը հրամայէ Մովսէսի, որ դէպի
անապատը կարմիր ծովու եզերքը պէտք է իջե-
ւանին:

Հարց. ՃԾ.

Իսրայէլացիք ո՞ր ամսում եւ ամսի քանիին
Եգիպտոսէն ելան:

Պաս. Ապրիլ ամսոյ Հնգետասաներորդ օրը:
Այս պատճառաւ յիշեալ ամիսը՝ տարեգլուխ եղաւ
նոցա համար: Վասն զի առաջ սեպտեմբերն էր
տարեգլուխ, որ աշնան եղանակ է. Աստուած
դիտմամբ փոխեց նոցա տարեգլուխը, որպէս զի
Եգիպտոսէն իրենց ելքը անմոռաց ի մտի պահելով

1. Աստուած առաջնորդէր նոցա զցերեկ սեամբ
ամպոյ, ցուցանել նոցա զճանապարհն, և զցայգ՝
սեամբ հրոյ, լուսաւոր լինել նոցա, Ելից. ԺԳ. 21:

շնորհակալ լինին Աստուծոյ։ Նոյնպէս այս պատճառաւ պատուէր ալուեցաւ իրենց, որ ամէն տարի ապրիլի տասն ու հինգէն սկսեալ եօթն օր բաղարջ հաց ուտեն. ինչպէս որ մինչեւ յայսօր հրէայք բաղարջակերաց տօն կը կատարեն այդ պատուէրին համեմատ։

Հրեից բաղարջ հաց ուտելն՝ Եգիպտոսում քաշած չարչարանքը և անտի շուտափոյթ ելնելու նշանակն է. վասն զի ինչպէս որ նկանը (կարկանդակ) մոխիրում կեփի, նոքա ևս չարչարանաց մէջ կեփէին, երբ ազատուելով այն ատիճան արտօրանօք կը շարժին, որ իրենց շաղած խմորը չը հասած՝ կապուտամ ծրարելով մէկտեղ կը տանին և իջևանում նկան շինելով կուտեն։ Նմանապէս վերոյիշեալ գառան խորովածը դառնահամ հազարի հետ ուտելն էլ՝ նոյն նշանակութիւնը ունի։

Հարց. Ծ.

Ինչո՞ւ համար հրաման եղաւ որ զառան արիւնով տանց սեմից վրայ նշան դնեն Իսրայէլացիք։

Պաս. Նոցա տուները Եգիպտացւոց տուներէն զանազանելու համար։ Վասն զի Աստուած հրեշտակ ղրկելով Եգիպտացւոց անդրանիկները պէտք է կոտորել տար, ուստի հրեշտակը եկած ժամանակ նշանակուած տուները անցնելով միայն Եգիպտացւոց տուները պէտք է մտներ։ Ահա այս

պատճառաւ այն գիշերը երրայեցերէն զատեք կամ զատգա կոչուեցաւ, որ զատել կը նշանակէ, ինչպէս որ հայերէն Զատիկ ասուած է։

Սակայն մի՛ կարծեր թէ՝ եթէ նշան չը տուեր, հրեշտակը կարող չէր զանազանել, այլ յիշեալ գառը՝ քրիստոսի օրինակ լինելուն համար այս հրամանը տուեցաւ։ Ինչպէս որ ապրիլի տասնեւերորդ օրէն գառը պատրաստելով՝ չորս օրէն յետոյ մորթեցին և առանց ոսկորը կոտրելու խորովելով կերան, և ապա Եգիպտացւոց անդրանիկ որդիքը չարչրուելուն պէս՝ իրենք ազատուեցան, այսպէս էլ քրիստոս մեր Փրկիչը ապրիլ ամսում ծաղկազարդի օրը ովսաննայով Երուսաղէմ գալով՝ չորս օրէն յետոյ վերնատան մէջ սուրբ պատարագի խորհուրդը կատարեց, որուն յաջորդ օրը խաչին վրայ առանց ոսկրը բեկանելու[1] արիւն թափեց և իւր անպարտական մահուամբ մեզաց առաջին պատճառն՝ սատանան պատժելով մարդկութիւնը փրկեց։

Դարձեալ, մէջքները գօտի կապած, ոտքները կօշիկ անցուցած և գաւազան ի ձեռին ամենայրանօք գառն ուտելը կը նշանակէր թէ յաջորդ օրը անպատճառ Եգիպտոսէն պէտք է ելնեն, բայց հոգևոր մտքով քրիստոնեից օրինակ է։ Վասն զի

1. Եւ ոսկր մի՛ բեկանիցէք ի նմանէ. Ելից. ԺԲ. 10։

գօտին՝ քաջութիւն և արթնութիւն, կօշիկը՝ ճանապարհորդութիւն, իսկ գաւազանը իշխանութիւն կը յայտնէ, որ սուրբ խաչի զօրութեամբ կը լինի։ Եւ ինչպէս որ գառան արիւնով Իսրայէլացւոց տան դռներուն նշան դրուելով՝ իրենք մահուընէ ազատեցան, նմանապէս քրիստոնեայք Քրիստոսի սուրբ արեամբ գնուած՝ և սուրբ խաչի նշանով կնքուած լինելով հոգևոր մահուընէ ազատեցան։

Դարձեալ, բազարջ հացով գառն ուտելը Քրիստոսի ի կոյս մօրէ ծննդեանն նշանակ է, ինչպէս որ սուրբ պատարագի խորհուրդը բազարջ հացով կը կատարուի։ Իսկ դառնահամ հազար ուտելն՝ Քրիստոսի կրած չարչարանքը կը ցուցնէ։

Արդ՝ ինչպէս որ Իսրայէլի ժողովուրդը Քրիստոսի չարչարանաց և սուրբ պատարագին նկարն և օրինակը գործադրելով Փարաւոնի ձեռքէն և Եգիպտոսէն ազատեցան և Երուսաղէմ գնացին, նմանապէս քրիստոնեայք Քրիստոսի օրէնքները հաւատքով կատարած ժամանակ սատանայի ձեռքէն և դժոխքէն ազատելով երկնային Երուսաղէմ այսինքն արքայութիւն կը գնան։ Վասն զի Եգիպտոս՝ դժոխոց, Փարաւոն՝ սատանայի, իսկ Իսրայէլը չարչարող Եգիպտացիք սատանայից օրինակ են։ Պէտք է գիտնալ թէ Եգիպտոսի համայն թագաւորաց անունը Փարաւոն չէր, այլ՝ նոցա առանձին իրենց անուններէն զատ՝ Փարաւոն բառը իբր տիտղոս կը տուէր նոցա ինչու որ Փարաւոն՝

թագաւոր կը նշանակէ եգիպտական լեզուով։

Դարձեալ, որովհետև Աստուած Իսրայէլի փրկութեան համար Եգիպտացւոց անդրանիկները կոտորեց, այս պատճառաւ Մովսէս Աստուծոյ հրամանաւ կը պատուիրէ Իսրայէլացւոց, որ իրենց անդրանիկ որդիքը Աստուծոյ ընծայելով, նոցա փոխարէն մի տարեկան գառն պատարագ մատուցանեն, և անկարողները միայն երկու տատրակ կամ աղաւնի նուիրեն։ Այս մասին տե՛ս Թուոց երրորդ գլուխը, ուր գրուած է թէ Իսրայէլի փոխան Իսրայէլի անդրանիկ որդւոց՝ Ղեւտացիները մանաւորապես իրեն կապելով՝ խորանի ծառայութեանց յատկացեալ մի դասակարգ կազմեցին։

Նմանապէս Եգիպտացւոց առաջին ծնած անասուններուը կոտորելուն համար, Մովսէս կը պատուիրէ Իսրայէլացւոց, որ իրենց անասնոց առաջին ծնունդը Աստուծոյ նուիրեն իբրև ընծայ։ Իսկ այն կենդանին, որ չի ուտուիր, նորա փոխարէն ուտելի կենդանի տան զոհի համար։ Այս պատուէրը այն նպատակաւ արուեցաւ, որ Եգիպտոսէն հրաշիւք իրենց ազատութիւնը միշտ անմոռաց պահելով իրենց մտքում, Աստուծոյ բարերար ողորմութիւնը որդւոց յորդի յիշատակելով միշտ շնորհակալ և գոհ լինին Աստուծմէ։

Հարց. ՃԲ.

Ինչո՞ւ Աստուած Իսրայէլը փոխանակ ուղիղ եւ մօտ ճամբայէն Երուսաղէմ տանելու, անապատի կողմն խոտորնցուց։

Պաս. Որովհետեւ հրաշքով կարմիր ծովէն պէտք է անցնէր գայն, և Փարաւոնն էլ այդ ծովում պիտի ընկղմէր. բայց այդ, Սինա լերան վրայ օրէնք տալով անապատում այլ և այլ հրաշքներով նոր օրինաց պատկերը պիտի գծէր։ Դարձեալ, քանանու կողմերը կռապաշտ ազգեր գտնուելով, եթէ արահետ ճանապարհէն գնային, նոցա հետ շուտով պատերազմիլ հարկ պիտի լինէր. այս պատճառաւ անապատի կողմը դարձուց, որ չը լինի թէ Թշնամին վախնալով ետ դառնալ խորհին։

Ցե՛ս հիմայ անողոք և յամառ Փարաւոնի թշուառ վիճակը. նա որ այնչափ հրաշքներ տեսնելէ և հարուածներ կրելէ յետոյ, իրօք անուղղայ մնացած էր, երբ տեսաւ թէ Իսրայէլացիք յանուն պատերազմի Եգիպտացիներէն բազում ստացուած և հարստութիւն առնելով՝ Եգիպտոսէն մեկնեցան անդառնալի կերպով, զանոնք արձակելուն վրայ զղջաց, և իսկոյն պատերազմի պատրաստութեամբ զօրքերը ժողովելով Իսրայէլի ետևէն կը վազէ, որպէս զի ետ դարձունէ և կամ

կոտորելով ստացուածքը յափշտակէ[1]։

Իսրայէլացիք, որ կարմիր ծովու եզերքը իջեւանած էին, Փարաւոնի գալուստը լսելով սաստիկ կը վախնան, և Մովսէսի դէմ գանգատելով կասեն, թէ «ինչո՞ւ Եգիպտոսէն հանեցիր զմեզ, մի՛թէ անդ գերեզման չկար, որ հիմայ անապատում կոտորել պիտի տաս։ Արդարեւ, նոքա այսպիսի խօսքերով Աստուծոյ բարութիւնն ու զօրութիւնը ուրացան. վասն զի Եգիպտոսում տեսած այնչափ հրաշքները մոռնալով՝ Աստուծմէ իրենց յոյսը կտրեցին։ Սակայն Մովսէս՝ Աստուծոյ ապաւինած՝ կը պատասխանէ նոցա, թէ մի՛ վախնաք, ինչու որ Աստուած կը պատերազմի ձեզի համար ընդդէմ Եգիպտացւոց և մի անգամ էլ չէք տեսնելը զանոնք։

Այո՛, Մովսէսի հաւատքը կատարեալ էր, և թէև այս պատճառաւ այդպիսի քաջալերական խօսքեր ուղղեց ժողովրդեան, բայց մարդկօրէն խորհելով փրկութեան միջոց չէր երևեր. վասն զի նոցա առջևն էր ծովը, ետևը՝ Թշնամին, իսկ մի կողմ խոյս տալու ճանապարհ գտնել՝ անկարելի էր։ Իրաւ է որ նոքա բազմաթիւ էին, բայց դեռ կանոնաւոր կերպով Թշնամւոյն դիմադրելու համարձակութիւն չունէին։ Այսու հանդերձ Աստու-

---

1. Ասաց Թշնամին (Փարաւոն). հալածեցից՝ հասից՝ բաժանեցից զաւարն, և լցուցից ի նոցանէ զանձն իմ. Ելից. ԺԵ. 9։

Ծոյ զօրութիւնը՝ մարդոց անհնարին երևցած բաներում յայտնի լինելուն՝ Մովսես ի սրտէ ջերմօրէն Աստուծոյ աղօթած ժամանակ, Աստուած կը հարցնէ Մովսէսի, թէ «ինչո՞ւ առ իս կաղաղակես[1], ձեռքի գաւազանդ զարկ ծովուն, որ ձեղքուելով, ճանապարհ տայ Իսրայէլի իր միջէն անցնելու համար»:

Ուշադրութիւն արա՛, Մովսես բերանը չը բանալով ի սրտէ կաղաչէր, բայց Աստուած կասէ թէ «ինչո՞ւ կաղաղակես առ իս»: Օրինակ առ, Մովսէսի միտքը առ Աստուած բարձրացած լինելուն համար նորա սրտագին պաղատանքը բարձր ձայնիւ աղաղակելու նմանեցաւ. վասն զի ընդունելի աղօթքն այն է, երբ մարդն իւր միտքն ու սիրտը առ Աստուած կուղղէ[2]: Ուստի ըստ հրամանին Աստուծոյ Մովսէս իր գաւազանը ծովուն զարկածին պէս՝ կարողութեամբն Աստուծոյ իսկոյն մի սաստկաշունչ հողմ ծովը երկու մասանց բաժանելով և երկու կողմերը բերդանման կանգնած՝ ծովուն յատակը մի ընդարձակ ճանապարհ կը բացուի հրաշալի կերպով:

Սակայն՝ որովհետև հրեշտակը ամպէ սիւնով Իսրայէլացւոց կառաջնորդէր, (ինչպէս որ 51-րդ հարցման մէջ յիշուեցաւ), այս անգամ եւս

1. Եւ ասէ Տէր ցՄովսէս, պէ՛ դուէս առ իս Ելից. ԺԴ. 15:

2 Աղօթք է վերացումն մտաց առ Աստուած:

կողմն անցնելով Իսրայէլի և Եգիպտացւոց բանակներուն միջև կը կանգնի. Իսրայէլի կողմը լոյս, իսկ եգիպտացւոց կողմը խաւար դործելու համար, որպէս զի վերջինքս անկարող լինին յառաջ գնալով Իսրայէլի բանակին հետ խառնուելու: Այսկերպով Իսրայէլի ժողովուրդը այն գիշերում դիմացի ևզերքը անցնել սկսելով՝ երբ նոցա վերջին խումբն էլ անցաւ վերջացաւ, այն ժամանակ յիշեալ ամպը նորէն Իսրայէլի բանակին առաջն անցաւ:

Երբ առաւօտ եղաւ, Փարաւոն կը տեսնէ որ ծովը պատառուած՝ Իսրայէլացիք ողջամբ կանցնին կերթան յատակի վրայէն, ինքն էլ իւր զօրքով ծովը կը մտնէ նոցա հասնելու համար, և երբ հասնելու մօտ էին, նոքա արդէն ցամաքը ոտք կոխեցին ամէնքը: Այդ միջոցում Աստուածային կամաք Եգիպտացւոց վրայ մի սաստիկ երկիւղ և շփոթութիւն կը տեսնուի, որով ոչ յառաջ և ոչ էլ ետև գնալու կարող կը լինին: Այն ժամանակ ահա, վերջապէս իրենց խելքը գլուխնին գալով կը հարկադրուին խոստովանիլ և ասել, «Իսրայէլի երեսէն փախչինք, ինչու որ Աստուած նոցա համար Եգիպտացւոց հետ կը պատերազմի[1]»:

Այստեղ արժան է խիստ մեծ ուշադրութեամբ խորհիլ յաման և խոստասիրտ Փարաւոնի

1. Փախեցաք յերեսաց Իսրայէլի, պէ՛ Տէր պատերազմի վասն նոցա ընդ Եգիպտացիս. Ելից. ԺԴ. 25:

ողորմելի վիճակին վրայ. նա՝ որ Իսրայէլը կոտորելով նորա ստացուածքը կողոպտելու տենչանքով վառուած էր, ինքը կորստեան մատնուելով Իսրայէլը՝ նորա աւարն առաւ. Քանդի մեր աց չափը լեցուած, ապաշաւանաց ժամանակն անցած և պատժոյ ժամը հասած լինելով՝ Մովսէս գաւազանը ծովուն զարնելուն պէս՝ խակոյն ծովը վերստին իր բնական ընթացքն ու դիրքը ընդունելով Փարաւոն՝ իւր բոլոր զօրքերով և պարագայիւք ընկղմեցաւ ալիքներում: Հրաշալին այն է որ ծովուն ալիքները նոցա դիակները դէպի Իսրայէլի գանուած կողմը կը մղէին, որով Իսրայէլի ժողովուրդը կառնու նոցա վրայ եղած բոլոր զէնքերը, ինչպէս նաև այլ տեսակ պատերազմի զարդեր և գործիքներ, որոց կարի յոյժ պէտք ունէին:

Տես հիմայ, մի քիչ յառաջ Իսրայէլացիք Մովսէսի դէմ գանգատեցան, թէ զմեզ անապատում կոտորել պիտի տար, այժմ Աստուծոյ ողորմութեամբ կատարուած հրաշքը և Թշնամւոյն աչնչացումը տեսնելով՝ բոլորն ի միասին չափազանց ուրախացած՝ կսկսին զԱստուած փառաբանել և գովել: Մովսէսի քոյրն Մարիամ ևս՝ բոլոր Իսրայէլացի կանանց հետ թմբուկ զարնելով Աստուծոյ կարողութիւնն ու հզօր զօրութիւնը կը գովաբանեն[1]:

1. Օրհնեսցուք զՏէր, զի փառօք է փառաւորեալ. Ելից. ԺԵ. 1:

Այս պարագայում, գու մի՛ ասեր թէ՝ ինչու Աստուած չը մեռցուց Փարաւոնը, որպէս զի Իսրայէլի ժողովուրդը օր յառաջ նորա անգորոյն ձեռքէն ազատուէր: Այո՛, Աստուած կարող էր մի րոպէում Իսրայէլի բոլոր թշնամիները ջնջել, սակայն նորա համբերութիւնը, գթութիւնը, զօրութիւնը և արդարութիւնը յայտնի լինելու, ինչպէս նաև Փարաւոնի չարութիւնը աշխարհի առջև պարզելու համար երկայնմտութեամբ կը համբերէ ի խրատ և ի զգուշութիւն այլոց, որոնք աչք և գաղտղութիւն ունին, և այլ ևս չեն մարձակիր նորա չար օրինակին հետևելու:

Վասն զի, Փարաւոնին այնչափ ժամանակ ողջ ձգելովն՝ նորա գթութիւնը, տեսակ տեսակ հրաշքներ գործելովն՝ իր մեծ կարողութիւնը, Իսրայէլի ժողովուրդը մեծ փառքով Եգիպտոսէն հանելովն՝ նորա ողորմութիւնը, և Փարաւոնը ծովուն մէջ ընկղմելովն նորա արդարութիւնը յայտնուեցաւ, այնպէս որ մարդիկ խրատուելով՝ երբ որ անգութ և հարստահարիչ բռնաւորին ձեռքէն ընդդէմ իրաւանց կեղեքուին և պատժուին, առանց յուսահատութեան զԱստուած աղաչելով համբերեն, որ ի վերջոյ իրենց արդիւնք իրենց համբերութեան, ուրախութեան օրեր վայելեն, ինչպէս որ Իսրայէլացիք՝ թէև Եգիպտոսում խիստ շատ նեղութիւն կրեցին, բայց երբ որ ազատուեցան, նմանապէս առաւել եղաւ իրենց ուրախութիւնն ու ցնծութիւնը:

Թող լաւ խորհին նոքա, որոնք Աստուծոյ կամաց և հրամանին հակառակ ընթացք ունին և չեն ապաշաւեր։ Վասն զի, ինչպէս որ Փարաւոն սոսկալի հարուածներով պատժուեցաւ, նմանապէս նոքա եւ ուշ կամ կանուխ պէտք է պատժուին։ Արդարև Աստուած երկայնամիտ և ողորմած լինելով մեղաւորը շուտով չի պատժեր, որ դառնայ և ապաշխարէ. սակայն նա՝ որ Աստուծոյ բարութիւնը չը գնահատելով օր ըստ օրէ իր չար ընթացքում յառաջ կը գնայ, անպատճառ իւր գործոյ համեմատ կը պատժուի մի օր։ Մեղաց փոխարէն վճռուած պատիժն արչափ յապաղի և ուշանայ, նոյնչափ սաստիկ պէտք է լինի։

Հարց՝ 8.

Կարմիր ծովու եզերքէն Իսրայէլացիք ո՞ր կողմն գնացին։

Պաս. Սուր կոչուած անապատը։ Երբ երեք օրուան ճամբայ գնալէն յետոյ Ջուր չը գտան, Մեռա անուամբ տեղը եկան։ Այն տեղ թէև Ջուր կար, բայց այնչափ դառն էր, որ չէր խմուիլ, վասնորոյ կոչուեցաւ Մովսէսի դէմ տրտունջ բառնալ, այս պատճառաւ այն տեղին անունը դառնութիւն դրաւ Մովսէս[1]։ Արդարև ժողովուրդն՝

1. Վասն այնորիկ անուանեաց զանուն տեղւոյն այնորիկ դառնութիւն. Ելից. ԺԵ. 23։

դառնութիւն ասյց տուաւ անդ, մոռնալով տեսած հրաշքներն ու Մովսէսի լաւութիւնը։ Սակայն Մովսէս նոցա յանցանքին չը նայելով Աստուծոյ պիմեց աղաչանօք, և Աստուծոյ կողմէն մի փայտ յայտնուեցաւ, զոր Մովսէս Ջուրին մէջ ձգելուն պէս՝ Աստուծոյ կամօք դառն Ջուրը՝ անուշ Ջուրի փոխուեցաւ[1]։

Ցետոյ եկան Եղիմ, ուր տասն երկու աղբիւր և եօթանասուն արմաւենեաց ծառեր կային։ Նա երբ անկէ Սին անապատը գնաց, Եգիպտոսէն իրենց հետ առած ալիւրը կապառի. որովհետև մինչև այն ժամանակ Եգիպտոսէն իրենց ելքը՝ երեսունն օր եղած էր։

Այն տեղ ժողովուրդը Մովսէսի և Ահարոնի դէմ դանգատելով կը յայտնեն թէ՝ փոխանակ անապատում անօթութենէ մեռնելու, լաւագոյն էր որ Եգիպտոսում մսի սաներուն շուրջը նստած՝ կուշտ ու կուռ հաց ուտելէն յետոյ թշուառ մեռնէինք։ Արդարև նոքա իրենց որկորին այն աստուձան գերի եղած էին, որ կը զլջանին իրենց նախկին հարստահարեալ դրութեան մէջ մեռնելու, միայն թէ կուշտ հաց ուտեն. ուստի յայտնի էր թէ իրենց միտքը՝ Եգիպտոս վերադառնալ էր։

Այս կէտում, Իսրայէլացիք յետին աստիճան ապերախտ գտնուեցան։ Վասն զի Եգիպտոսում

1. Եւ եցոյց նմա Տէր փայտ, էառն զայն և Ջուրն, և քաղցրացաւ Ջուրն. Ելից. ԺԵ. 25։

իրենց քաշած չարչարանքը և հրաշալի կերպով գտած ազատութիւնը չը մոռնալու, փոքր և անշան մի նեղութիւն պատահածին պէս՝ Մովսէսը յանցաւոր կը գտնեն, թէ ինչու Եգիպտոսէն հանեց զիրենք. բայց Մովսէս Աստուծոյ հրամանաւ հանած լինելով՝ իրենց գանգատը (անուղղակի) Աստուծոյ դէմ էր։

Թէպէտև յառաջագոյն ջուրի համար գանգատ և որոնուած եղած ժամանակ՝ Մովսէսի աղօթքով դառնահամ ջուրը քաղցրացաւ, բայց այս անգամ նա չաղօթեր. որովհետև նոցա սըրտումնըը խիստ ապօրէն և անվայել էր։ Սակայն Աստուած իր գթութեամբ նոցա յանցանաց չը նայելով հացի տեղ՝ մանանայ, և մսի տեղ՝ լորամարգի տուաւ նոցա։

Բայց չը կարծուի թէ մանանան և լորամարգին բնական եղանակաւ յառաջ եկան, այլ՝ Աստուածային մի պարգև և շնորհ լինելու էրեւ ապացոյց, Մովսէսին կը յայտնէ թէ երեկոյ՝ միս, առաւօտ հաց պէտք է ուտեն։ Արդարև այն օր երեկոյեան ժամանակ այն առատ լորամարգի կուզայ, որ ամբողջ բանակը կը շրջապատէ. նմանապէս յաջորդ օրը առաւօտեան կանուխ մանանայ կը տեղայ, զոր տեսնելով Իսրայէլացիք և չը գիտնալով թէ ի՞նչ է այն, միմեանց կը հարցնեն թէ ի՞նչ է այս, եբրայեցերէն մանհու, այս պատճառաւ անունը մանանայ կոչուեցաւ։

Հրաշալին այն է, որ մանանան՝ առաջին անգամ ինչպէս յայտնուեցաւ, նոյն կերպով շարունակեց երկինքէն իջնել ամէն օր, բացի շաբաթ օրերէ, մինչև որ նոքա Երուսաղէմի երկիրը մտան։

Սակայն լորամարգին միայն երկու անգամ եկաւ. առաջինը՝ վերոյիշեալ Սին անապատում, երկրորդը՝ գերեզմանի ցանկութեան կոչուած տեղում, ինչպէս որ յայտնի է Թուոց ԺԱ. 34։ Եւ խիստ շատ գալուն համար վանդակներու մէջ կը պահէին և հեռուհեռ կարելով և աղելով երկար ժամանակ լորամարգին միս կերան։

Հարց՝ ՃՀ.

Մանանան ինչ էր, եւ ինչպէս ժողովելով հաց կը շինէին։

Պաս. Գինձի նման կլոր, գոյնը սպիտակ և համը քաղցր էր, որ ամէն առաւօտ Իսրայէլեան բանակին շուրջը եղեամի նման կը տեղար։ Սակայն առաջ ցօղ իջնելով երկրի վրայ կը մաքրէր և կը սրբէր զայն. որպէս զի մանանայի իջած տեղը մաքուր լինի, քանզի արևուն ջերմութենէն կը հալէր։ Զարմանալին այս է որ ամանով կրակի վրայ դրուած ժամանակ փոխանակ հալելու, բոլորովին կը թանձրանար. այնպէս որ զայն կամ տանդի մէջ ճեճեղով և կամ ջաղացքուամ աղալով ալիւր կը շինէին, և կրակի վրայ եփելու ժամանակ խառնուրդն՝ խիստ լաւ և պատուական հաց կը շինուէր։

Եւ որովհետեւ բացի շաբաթի օրերէ ամէն օր կիջնէր, այս պատճառաւ, ով որ մէկ աւուր կը-բաձէն աւելի ժողվէր, յաջորդ օրը կորդնուէր. միայն թէ ուրբաթի օրերը երկու աւուր համար բաւականաչափ ժողոված ժամանակ առանց որդ-նուելու՝ իր վիճակով կը մնար, որ շաբաթ օր ուտէն։ Մանաւանդ թէ ինչ կերակուրի որ փա-փաքէին, նոյնին համն ու ճաշակը կառնէին մա-նանայէն. ինչպէս Դաւիթ Մարգարէն կը յիշա-տակէ զայն բոլոր կերակուրներու անունով, որ կը հաստատէ այս կարծիքը։

Սոյն պարգեւը՝ Աստուծոյ յատուկ խնամոյ մի արդիւնքը լինելով, Ահարան Մովսէսի հրամա-նին համեմատ ոսկի սափորի մէջ մանանայ լեցու-ցած կը պահէ, որ Աստուծոյ ողորմութիւնը չը մոռանան։ Հոգեւոր մտքով մանանան՝ սուրբ պա-տարագի խորհուրդը կը յայտնէ։ Ցետոյ Ռափի-դիմ կոչուած տեղը գալով, երբ այն տեղում էլ ջուր չեն գտներ, ժողովուրդը նորէն կսկսի տրտնջալ և բամբասել Մովսէսը, թէ ինչո՞ւ համար Եգիպ-տոսէն հանեց զիրենք, որ անապատում ծարաւէն պիտի կոտորուին։

Նայէ դուն Իսրայէլացւոց չարամտութեանը. պատճառ կորոնն միշտ Մովսէսի դէմ խօսելու և յանդիմանութիւն ուղղելու։ Եւ այս անգամ նոցա անհամբերութեան համար Մովսէս Աստու-ծոյ դիմելով կաղաղակէ «ի՞նչ անեմ այս ժողովըր-

դեան, քանզի քիչ մնաց որ քարկոծեն զիս»։ Թէպէտև չուբ խնդրել՝ յանցանք չէ, վասն զի այնչափ բամբութիւն՝ առանց չըղ էի կառավա-րուիլ, բայց ասել՝ թէ ինչու համար Եգիպտոսէն զմեզ հանեցիր, մեծ յանցանք էր։

Բացի այդ, յառաջագոյն կատարուած հրաշք-ները տեսած լինելով՝ պարտական էին աղօթիւք Աստուծոյ դիմել, և Մովսէսն էլ միջնորդ բռնելով խնդարհութեամբ չուբ խնդրել. վասն զի զիրենք հրաշիւք անապատը բերող Աստուած՝ հարկա-նոցա բոլոր պէտքերը հոգալու կարող և բաւա-կան էր։

Այս մասին որչափ որ ժողովուրդը պատժոյ արժանի էր, այլ՝ Աստուծոյ ողորմութիւնը անչափ լինելով՝ առանց նոցա կոպտութեան նայելու, Մովսէսին կը հրամայէ որ ժողովուրդէն մի քանի ծերունի մարդիկ առնելով Քորեբ լերան առոյգը գնան, և այն տեղ իրեն յայտնի եղած վէմին զարնէ իւր գաւազանը, չուբ հանելու համար։ Արդարև, Մովսէս ըստ հրամանին իւր գաւազանը յիշեալ վէմին զարկածին պէս՝ իսկոյն առատ չուբ բղխելով Իսրայէլի բանակին ծարաւն ու պատակը լիովին կը զովացնէ։

Զարմանալին այն է, որ սոյն չուբը ոչ միայն այդ իջևանում նոցա պէտքը լրացուց, այլ և այ-նուհետև բնաւ չը կարելով գետի նման նոցա հետևէն կը գնար, որով ամբողջ անապատի ճանա-

պարհոլոդութեան ժամանակ Իսրայէլը կառավարուեցաւ։

Իսկ ամուր եղիր. Աստուած յատկապէս կը հրամայէ, որ Ժողովրդեան ծերերէն մի քանի մարդիկ Մովսէսի հետ գանուին, որպէս զի հրաշալի կերպով վէմէն ջուրին բղխումը տեսնելով բոլորին առջև վկայութիւն տան[1]. վասն զի յանկարծ Մովսէսը բամբասելով զԱստուած փորձեցին և Մովսէսի սիրտը դառնապէս վշտացուցին։ Այս պատճառաւ այն տեղին անունը՝ փորձութիւն և բամբասանք դրուեցաւ[2]։

Հոգևոր մաքով Մովսէսի գաւազանը՝ սուրբ խաչին, իսկ յիշեալ վէմը՝ Քրիստոսի օրինակ և նկարն էր[3]։

Հարց՝ ՟Ի.

Անապատում Իսրայէլի դէմ Թշնամի պատահեցաւ։

Պաթ. Պատահեցաւ. բայց Մովսէսի աղօթիւք Թշնամին յաղթուեցաւ։ Վասն զի Իսրայէլեան բանակը դեռ Ռափիդիմում եղած ժամանակ, Նաւէի սերունդէն Ամաղէկայ ցեղը՝ այն կողմը

1. Եհար զվէմն և բղխեցին ջուրք, և գնացին պետք քնդ անջրդիս. Սաղմ. ՃԴ. 40։

2. Եւ անուանեաց զանուն տեղւոյն այնորիկ փորձութիւն և բամբասանս. Ելից. ԺԷ. 7։

3. Եւ վէմն էր Քրիստոս. Ա. Կորն. Ժ. 1։

վերձենալով Իսրայէլի հետ պատերազմել ուզելուն՝ Մովսէսի ծառայն՝ Յեսու զօրք պատրաստելով Ամաղէկի ընդդէմ պատերազմի կելնէ. Մովսէս իւր գաւազանով Ահարոնի և Ովրի հետ մի բլուրի վրայ կը բարձրանայ, ուրկէ պատերազմի դաշտը կը տեսնուէր։

Այս պատերազմում Մովսէս ձեռքերը դէպի երկինքը վերացած ժամանակ՝ Իսրայէլի կողմը, իսկ վար իջուցած ժամանակ՝ Ամաղէկի կողմը յաղթող կը հանդիսանային։ Բայց երբ ձեռքերը միշտ դէպի վեր բարձրացնելով բազուկները կը յոգնէին, զայն մի քարի վրայ կը նստեցնեն. մի կողմէն Ահարոն, իսկ միւս կողմէն Ովր ձեռքերը վեր բռնելով, Յեսու Ամաղէկը կոտորելով յաղթութիւնը կը շահի։

Արդարև, Ամաղէկի ցեղը թէև խիստ շատ կոտորուեցաւ, բայց առաջին անգամ անապատում Թշնամական դիտաւորութեամբ Իսրայէլի դէմ պատերազմի ելնելուն պատճառաւ, Աստուած Մովսէսի կը հրամայէ որ արձանագրութեան տումարին մէջ նշանակէ, և Յեսուայ տուր որ չը մոռացուի։ Վասն զի Ամաղէկի ցեղը կոտորելով աշխարհիս վրայէն բնաջինջ պէտք է անեմ։ Իրօք, չորս հարիւր տարի անցնելէ յետոյ այս վճիռը գործադրուեցաւ Սաւուղ թագաւորին ձեռամբ. (ինչպէս յայտնի է Ա. Թագ. ԺԴ. 2)։ Ըստ որում Աստուծոյ օգնութեամբ եղաւ այս յաղ-

թուրթիւնը, այս պատճառաւ Մովսէս անոնք կանգնելով «Աստուած է յոյսս» կը դնէ, անոնք անունը, որ Աստուծոյ կրախտիքն ու բարութիւնը չը մոռացուին:

Նոյնի՛սկ առ թէ արդարոց աղօթքը որքան ընդունելի է, վասն զի Մովսէսի աղօթքով շահեցան այդ յաղթութիւնը. Այո՛ Մովսէս ամէն ժամանակ Աստուծոյ կաղօթէր ժողովրդեան փրկութեան համար, բայց այս անգամ յատուկ մի բարձր տեղ ելնելով ձեռքերը դէպի վեր բարձրացուցած կաղօթէ, որպէս զի ժողովրդեան սովորեցնէ թէ թշնամւոյն յաղթելու համար պարտին միշտ Աստուծոյ վրայ յոյս դնելով անդադար աղօթել ի պատէ. Քանզի թշնամւոյն վրայ յաղթութիւն տանել՝ Աստուծոյ օգնութեան կարօտ դործ է, և Աստուծոյ օգնութեան արժանաւորիլ՝ աղօթքի կարօտ է:

Նմանապէս բարձր տեղ եղած աղօթեղը՝ աշխարհային իրերը մոռքէ հանել կը նշանակէ: Ահարոն և Ովր, որոնք նորա ձեռքերը վեր կը բռնէին, կը յայտնէ թէ ուղիղ հաւատքով և առանց ձանձրանալու աղօթքի պարապիլ կը սորվեցնէ մեզ:

Այն օրերուն Մովսէսի անունը Ծոթոր (Հռագուէլ) Մովսէսի ձեռամբ Իսրայէլացւոց ազատութիւնը և կատարուած հրաշքները կը լսէ: Ուրովհետև Մովսէսի կինն ու երկու որդիքը նորա մօտ էին, (ինչպէս որ 40-րդ Հատուածին մէջ յիշատակուեցաւ) զորս Ծոթոր առնելով կը բերէ Մովսէսին, ու զայն կընդունի պատուով և Իսրայէլի ժողովրդեան Աստուծոյ արած ողորմութիւնը կը պատմէ անոր, Ծոթոր, որ կուռ պաշտօնեայ մի քուրմ էր, կատարեալ հաւատքով Աստուծոյ կը հաւատայ և զոհ կը մատուցանէ, և իւր ցեղին ել հրահանգ կուտայ, որ այնուհետև ճշմարիտ Աստուծոյ երկրպագութիւն տան:

Ցետոյ Ծոթոր կը տեսնէ որ Մովսէս ժողովրդեան մէջև յառաջ եկած դատերը ինքն անձամբ և միայնակ տեսնելուն համար սաստիկ կը նեղուի, նոյնպէս և ժողովուրդը. ուստի և խորհուրդ կուտայ Մովսէսի կառավարելու մի հեշտ եղանակ ի գործ դնել, այն է ժողովրդեան հաւատարիմ և խոհական մարդիկ ընտրել, որոնք ժողովրդեան դատերը տեսնեն, և ինքը Աստուծոյ հրամանը նոցա հաղորդէ:

Մովսէս՝ իւր անկրոջ հրահանգին համաձայն՝ ժողովրդեան կառավարութեան համար հազարապետ, հարիւրապետ, յիսնապետ և տասնապետներ կարգելով բարւոք կերպով կը կառավարէին:

Օրինակ առ, Մովսէսի համբերութենէն և խոնարհութենէն, վասն զի, առաջ այնչափ բազմաթիւ ժողովրդեան դատաստանը միայնակ տեսնելով անգամ չի ձանձրանար, և ետքը՝ երբ Ծոթոր կառավարելու մի ձև կը սովորեցնէ, հպարտութեամբ չը մերժեց. այլ սիրով նորա առաջարկութիւնը

կընդունի և կը գործադրէ։ Այո՛, Սովսէս Աստուծոյ մարգարէն է, բայց այս պարագայիս՝ Աստուած Յոթոբոր ձեռամբ կառավարութեան եղանակը ցոյց կուտայ անոր։ Ուրեմն, մարդս ոչչափ իմաստուն և իշխանաւոր լինի, նորէն խրատուն ընդունիլ պարտական է։ Յեթոյ Յոթոր կը դառնայ իւր տեղը, և Իսրայէլն էլ Ամալիկիմէն չուտ լով Սինա լերան առջևը բանակ կը գնէ։

ՎԵՐՋ ԵՐԿՐՈՐԴ ԴԱՐՈՒ։

Յ Ո Վ Բ։

Երկրորդ դարը այստեղ վերջացաւ, Յոբ երանելին եւս նոյն դարում՝ Իսրայէլացւոց Եգիպտոսում եղած ժամանակ ապրելուն համար նորա պատմութիւնն էլ համառօտ յառաջ բերել արժան է։

Հ Ա Յ Ր Ե Ա Ն Ք Ը.

Յ ո բ ի վ է ր։

Պաղ. Եսաւայ ցեղէն Երուսաղէմի գաւառին սահմանակից Եդեմի Օսեր կոչուած տեղում խիստ առաքինի և հարուստ մի մարդ էր, մանաւանդ աղքատ և անօգնական մարդոց ամէն կեր-

պով ապաւէն՝ այնպիսի մի համբաւաւոր և անուանի անձ էր, զոր Ս. Գիրք թագաւոր անուամբ կը յիշատակէ։ Ծննդ. Լ.Զ. 33։

Արդարև, յիշեալը մարմնաւորին մէջ ոչչափ էլ բազդաւոր էր, Աստուծոյ հնորհօք հոգևոր և առաքինական ճանապարհով ևս նոյնչափ կատարեալ էր։ Այո՛, շատերուն կը հրամայէր, բայց ոչ թէ զրկանքով և անիրաւութեամբ, այլ իրաւամբ և արդարութեամբ։ Հարստութիւնը մեծ էր, բայց ոչ թէ իւր զբօսանաց և զուարճութեան՝ այլ աղքատաց մխիթարութեան համար կը գործածէր զայն։

Նա՝ եօթն արու և երեք աղջիկ զաւակ ունէր, որոնք միմեանց տունը գնալով ուրախ ու զուարթ կուտէին ու կը խմէին։ Բայց Յոբ, որ Աստուծմէ կը վախնար, ամէն չարութենէ հեռու, արդար և հաւատարիմ էր, իւր որդւոց՝ մարմնաւոր զբօսանաց և կերուխումի հետամտութիւնը տեսնելով, կը խորհէր որ թերևս նոքա Աստուծոյ հրամանին հակառակ մի որ և է խորհուրդ ունենան, ուստի նոցա համար միշտ զոհ կը մատուցանէր Աստուծոյ[1]։

Թէպէտև Յոբայ որդիքը չար ճանապարհով

1. Մատուցանէր վասն նոցա զոհս. . քանզի ասէը Յովք թէ գուցէ որդիքն իմ ի միտս իւրեանց եմացան չարութիւն զԱստուծոյ. Յովբ. Ա. 5։

գանուած չէին, սակայն ուտել խմելու սէր ունէին, և ընդհանրապէս մարմնաւոր ըբօսանաց խնջոյքներն պակասութենէ զերծ չեն, ուստի Ծոր նոցա նկատմամբ Աստուածմէ ներում կը խնդրէ։ Թող մտածեն նոքա, որոնք ամէն ժամանակ չափաչալ անձնատուր եղած են խնջոյքներուն մեղսալից ըբօսանաց։

Այս տեղ լաւ խելամտէ։ Աստուած՝ թէ հըրեշտակները և թէ մարդկային ազգը արքայութեան երանական փառաց արժանացնելու համար ստեղծեց, բայց այն հրեշտակները, որոնք առ հպարտութեան երկնային բարձունքէն արտաքսուելով և իրենց կամակոր յամառութեամբ ոչ միայն անզիղջ և անուղղայ մնացին, այլ և առ նախանձու մարդն էլ ալքայութեան փառքէն զըրկելու տենչանքն ունեցան, ահա նոյն անկեալ հրեշտակաց պարագլուխն՝ Սատանայ՝ թէպետև յաջողեցաւ մարդն հանել Աստուծոյ հնազանդութեան շաւղէն, բայց չնորհօքն Աստուծոյ մարդն՝ ապաշխարութեամբ և զղջմամբ նորէն ողորմութեան և Աստուածային փառաց արժանանալուն համար յիշեալ չարին կատաղութիւնն ու մարդատեղութիւնը աւելցաւ։

Նա մանաւանդ՝ ինքը՝ որ բոլոր հրեշտակաց պետն էր՝ ամբարտաւանութեամբն այն աստիճան յիմարացաւ, որ իւր ճշմարիտ բարին զանազանելու և ընտրելու անկարող՝ ապստամբութեան մէջ

հաստատուն մնալով դժոխոց անվախճան տանջանքը կրել պարտաւորեցաւ. որովհետև հպարտութիւնը՝ յիմարութենէ յառաջ գալուն համար ամէն հըպարտ՝ յիմար կամ խելագար կը համարուի[1]։

Բացի այդ, մարդն՝ իւր խոնարհութեամբ ղղջալով քաւութիւն և թողութիւն գտնելուն համար անկեալ հրեշտակին աւելի խնամատուն սեպուեցաւ[2], այս պատճառաւ թէ հոգևոր և թէ մարմնաւոր գործերուն միշտ մարդուն ձեռս և չարիք հասցնել կաշխատի բոլոր զօրութեամբ։ Մանաւանդ բարեպաշտ և առաքինի մարդոց իբրև մոլեգին հակառակորդ՝ տեսակ տեսակ դառնութիւններ կը լարէ նոցա, որպէս զի Աստուծոյ օրհնութիւնը նոցա ներհակ ընթացքի մէջ ձգելով իրեն նման ապստամբ հանդիսացնէ։

Չոր օրինակ, ահա Ծոր երանելին Աստուծոյ հաճոյ մի անձ է, բայց որովհետև ամէն կերպով բաղդաւոր էր, սատանան կը յուսայ որ եթէ նա մի ծանր դժբաղդութեան հանդիպելով աղքատանայ, Աստուծոյ պատուիրանաց կամ օրինաց հակառակ կը շարժի և կը գործէ, ինչպէս որ սուրբ գիրք ընդարձակօրէն կը գրէ նորա նկատմամբ։

---

1. Ըստ առածին, ամենայն հպարտ՝ է տգէտ։

2. Որովհետև այսօրինակ խնամատուութիւնը են զանազանեալ յատուկ յատկութիւնք։ Ղուկ. ԺԶ. 8։

քերը։ Վասն զի նա կասէր «Միթէ Ցոբ ձրի՞ կը պաշտէ զԱստուած»[1]։

Այդ նկատմամբ, Աստուած Թոյլատրեց սատանային որ Ցոբայ վրայ տեսակ տեսակ փորձանք բերէ, որպէս զի նորա առաքինութիւնը երեւան գայ և չարադործին էլ խարդախութիւնն ու քմահաճութիւնը յայտնուելով խայտառակուի։

Միա գիր այս տեղ Թէ սատանան որչափ մեծ Թշնամի է մարդուն։ Որովհետեւ երբ նա մի այսպիսի արտօնութիւն ձեռք բերաւ, իսկոյն Ցոբայ հարստութիւնը փճացնելու ձեռնարկելով, անմեղ մարդուն ծառաներէն մին կուգայ փութով և կասէ. «Երկիրը վարելու ժամանակ եւազակներն յարձակելով մեր վրայ՝ եղներն և էշերու հօտը քշեցին տարին, ծառաները կոտորեցին, ես միայն ազատեցայ և եկայ քեզ լուր տալու»։

Մինչդեռ նա կը խօսէր, մի ուրիշը գալով կը յայտնէ Թէ՝ երկինքէն հուր տեղալով ոչխարաց հօտն ու հովիւները այրեց, ես միայն ազատուելով եկայ որ իմաց տամ։ Տակաւին այս երկրորդ ծառան խօսքը աւարտած չէր, երրորդ մի ծառայ աճապարանօք գալով կը գուժէ Թէ՝ դողերը՝ ուղտերու երամակը պաշարելով առին և տարին, և ուղտապաններն էլ սպանեցին, ես միայն ազատուեցայ, և եկայ որ քեզ իմացնեմ այդ անցքը։

1. Միթէ ձրի՞ պաշտեցէ Ցովբ զՏէր. Ցովբ. Ա. 9։

Ըստ նմանապէս սոյն գուժաբերին պատմութիւնն էլ հազիւ վերջանալու վրայ էր, մի ուրիշ գուժական կը հասնի և կը պատմէ Թէ՝ որդիքդ և աղջիկներդ իրենց մեծ եղբօր անուամ, մինչ կերուխումի զբաղած էին, յանկարծ անապատէն սաստիկ մի հողմ շնչելով տունը փլաւ և իրենք էլ բոլորը փլատակաց ներքև մնալով մեռան, ես միայն ազատեցայ և ահա փութացի լուրը հաղորդել քեզ։

Ցոբ՝ վերոյիշեալ սրկանչներն ու ցաւագին անցքերը լսելուն՝ հանդերձը պատառեց և գլխուն մազերն էլ կտրեց. և ապա Աստուծոյ երկիր պագնելով պատասխանեց, «Մերկ ծնայ և մերկ պիտի գնամ, Աստուած տուաւ և Աստուած առաւ, Տիրոջ ինչպէս հաճոյ էր, այնպէս եղաւ, Թող նորա անունը օրհնեալ լինի[1]։

Ըստ եմատա եղիր. չար սատանան կը կարծէր որ եթէ Ցոբայ հարստութիւնն ու սատցուածքը փճանան, անպատճառ Աստուծոյ երկիւղը սրտէն հանելով կը մեղանչէ. սակայն սրդարն Ցոբ ևս առաւել Աստուծոյ հրամանին և կամաց հպատակելով նորա սուրբ և օրհնեալ անունը փառաւորելուն պէս՝ Աստուծոյ և մարդկան ոխերիմ հակառակորդն՝ Թէպէտ իւր լարած որոգայթին մէջ

1. Եւ ասէ (Ցովբ) մերկ եկի ես յորովայնէ մօր իմոյ, և մերկանդամ դարձայց անդր, Տէր ետ և Տէր էառ, որպէս Տեառն հաճոյ Թուեցաւ... եղիցի անուն Տեառն օրհնեալ. Ցովբ. Ա. 21։

ինքն ընկաւ, բայց գալձեալ չար դիտաւորութենէ
հա չը կենալով կառարկէ թէ որչափ որ Ծորայ
հարստութիւնը աշնչացաւ, բայց նորա անձը ան-
ձկաս է, եթէ անձը կամ մարմինը ձկասու-
հարկաւ կը մեղանչէ։

Երբ սատանան կրկին անգամ թոյլատուութիւն
սատացաւ նորա մարմինն էլ հարուածելու, իսկոյն
Ծորայ վրայ գլխէն մինչև ոտքը այն ասպիճան բո-
րոտանման վէրքեր կը գոյանան, որուն գարշահո-
տութեան ոչ ոք հանդուրժել չը կարողանալով՝
սահպուեցաւ քաղաքայ մի անկուտ աղբանոցի
վրայ նստել, ուր խեցիներով իւր վէրքերուն վրայի
թարախը քերկով կը սրբէր [1]։ Ընանեցին այնպիսի
անտանելի վիճակի ենթարկուեցաւ, որ ոչ ոքէ
օգնութիւն և մխիթարութիւն գտնելու յոյսը
կտրեց։ Սակայն նա իւր միտքը երբէք չի պղտորեր
և Աստուծոյ շնորհակալ լինելէ չի դադարիր։

Այս անգամ անիծեալ սատանան Ծորայ կինը
ձեռք կառնու, որ գոնէ նորա միջոցաւ Աստուծոյ
դէմ մեղանչել տայ Ծորայ։ Վասն զի վերոյիշեալ
անհանդուրժելի և սրտամաշ վիճակում երկար
ժամանակ մնալուն պատճառաւ, կինն էլ դժբաղդ
և յուսահատ լինելով՝ Ծորին կասէ թէ «մինչև

1. Եւ սատանայ յերեսաց Տեառն. և եհար զՅովբ
չարաչար վէրովք, յատից մինչև ցգլուխ։ Եւ առեալ
կեցեալ զերեսն զթաթախան, և նստէր յաղբևս արտաքոյ
քաղաքին. Յովբ. Բ. 7։

երբ պէտք է համբերեա Աստուծոյ դէմ մի խօսք
ասա, որպէս զի մեռնելով ազատիս»։ Ծոբ այսպիսի
մի անօրէն առաջարկ իւր կնոջ բերնէն լսելով կը
պատասխանէ յանդիմանական կերպով, «միթէ
Աստուծոյ բարիքները ընդունելէ յետոյ, այս չա-
րեաց համբերելու պարտական չենք [1]։

Արդարև, ոչ միայն յիշեալ կինը միայն՝ այս
արդարոյն յանդիմանութեան արժանի լինելով
անմիջապէս պատանդեցաւ, այլ մանաւանդ ամե-
նաչար թշնամին գլխակոր և խայտառակ մնաց։
Վասն զի ոչ միայն նպատակին չը հասաւ, այլ
նորա առաքինութիւնն էս առաւել փայլեցուց
բոլոր աշխարհի առջև [2]։

Օրինակ առ, Ծորայ հարստութիւնը փճանա-
լով, իւր որդիքն էլ մեռնելէ զատ, մարմինը վի-
րաւոր, բնակարանը՝ մի աղբիւս, ոչ ոքէ օգնու-
թիւն կսպասէ, այլ՝ դարձեալ իւր շնորհակալիքը
չընդհատելով՝ միշտ և հանապազ կը գոհանար
Աստուծմէ։

Այս պարագայում, մի՛ կարծեր թէ Ծոբ վե-
րոյիշեալ աղետից ենթարկուելով թշուառ եղաւ,
կամ իւր անուան և պատուոյն արատ եկաւ, ընդ
հակառակն, բաղդաւոր ժամանակէն աւելի համ-

1. Եթէ զբարիսն ընկալաք ի ձեռանէ Տեառն.
չարեացս ոչ համբերեցիմք. Յովբ. Բ. 10։

2. Ցայսմ ամի, որ ինչ անցք անցին ընդ նա ոչ
մեզաւ Յովբ. Յովբ. 10։

բաւը մեծնալով վերին աստիճան փառաւորուեցաւ. Յիրաւի, նորա մարմինը առ ժամանակ մի վիրաւոր վիճակում տապնապ կրեց, սակայն հոգին շնորհօքն Աստուծոյ առաւել զարգացուած՝ արևու լոյսին նման նորա հոգեկան բարեմասնութիւնք պայծառ կերպով փայլեցան:

Որչափ որ մարդիկ նկատէն ո՛և է սխալանք գտնելու անյոյս էր, բայց Աստուած այնպիսի մի նկրքին սխալանք կընծայէ նմա, որ այդ անկրելի ցաւոց վիճակում, անտարակոյս համբերել կարող եղաւ: Թէպէտև երկար ժամանակ առանց ընկերի ժեխանոցի վրայ ճնաց, բայց ո՛չ մի րոպէ Աստուծոյ երկիւղը սրտէն չը հանելով՝ միաքն ու սէրը Աստուծոյ վրայ հաստատուած լինելուն համար, հրեշտակները հանապազ իրեն ընկեր էին աներեւութապէս [1]:

Իշխանական գահի վրայ նստած ժամանակ մարդոց կը հրամայէր. տապնապի և նեղութեան ժամանակ գոհունակութեամբ համբերելով, սատանայի վրայ իշխեց և նուաճեց զայն: Վասն զի, Յոբայ չարչարանքը որչափ շատ և ծանր եղան, նոյնչափ ծանր և սաստիկ եղան սատանայի պատիժը, քանի որ Յոբը մեղաց մէջ ձգելու կը ցանկար, ընդհակառակը, նորա առաքինութիւնը

1. Բանակը հրեշտակաց Տեառն շուրջ են ղեր-կիւղածովք իւրովք, և պահեն զնոսա. Սաղմ. ԼԳ. 7:

աւելնալով՝ յօտ այնմ վարձն էլ բազմապատիկ առաւելաւ:

Յետոյ բարեկամները, Ելիփազ, Բաղդատ, Սոփար և Ելիհուս, որոնք Յոբի մերձակայ գաւառներում կիշխէին, նորա պատահած դժբաղդութեան լուրն առանալով ի միասին եկան զայն մխիթարելու համար: Բայց երանելին այն աստիճան պլակերպ կացութեան մի մատնուած էր, որ հեռուէն զինքը տեսնելով չը կարողացան ճանաչել: Ուստի և՝ բարձրաձայն լալով իրենց հանդերձը կը պատռեն, և իրենց գլխոյն վրայ մխիր ցանելով այն աստիճան կապշին և կը դողան, որ եօթն օր և եօթը գիշեր նորա շուրջը նստելով իրենց բերանը բանալու կարող չեն լինիր:

Այն ժամանակ Յոբ ինքը խօսքի սկսելով ծնած օրը կանիծէ: Սակայն, մի՛ կարծեր թէ իւր վիճակէն կը դժգոհի, այլ՝ մարդկային ընդհանուր վիճակին նայելով այդ խօսքերը կարտասանէ: Վասն զի մարդկային ազգը մեղաց պատճառաւ այս արտասուաց աշխարհն ընկնելով նեղութիւն, և վիշտ կրելու ստիպուեցաւ, որ աշխարհի սովորական ընթացքն է:

Նայէ դուն, Յոբայ բարեկամները եկած էին զայն մխիթարելու համար. բայց նորա խօսքերը լսելով կսկսին իրը դատախազ ամէն կերպ խօսքերով ցոյց տալու որպէս թէ իր յանցանաց պատճառաւ այդ վիճակին ենթարկուած է, պար-

զապէս մեղաւոր մարդու տեղ կը դնեն զայն: Ծոր ևս նոցա կը պատասխանէ, և երկու կողմէն վիճաբանութիւնը այնչափ կերկարի, որ Աստուած կը միջամտէ, յայտնելով որ Ծրբայ յանցանքին համար չէն կրած տառապանքն, այլ Աստուծոյ զաղտնի մի դատաստանն ու խորհուրդն է:

Հետևաբար, նորա բարեկամք յանիրաւի զայն յանցաւոր դատելուն պատճառաւ, Աստուածային բարկութիւնը կը շարժի բարեկամաց վրայ և կուզէ պատժել զանոնք: Արդարև նոքա այս մասին սխալ դատողութեամբ մեղանչեցին, բայց Ծոր նոցա պակասութեան չը նայելով՝ պատժոյ գործադրութիւնը չը կամեցաւ. ուստի Աստուած կը հրամայէ որ եօթը զուարակ և եօթը խոյ բերեն առ Ծոբ, որ նոցա համար ողջակէզ մատուցանելով աղօթէ որպէս զի իրենց յանցանաց ներում և թողութիւն շնորհէ. Ծովբ. XLII, 8:

Կիմանանք, թէ ինչպէս Աստուած՝ իւր հաւատարիմ ծառայն կը փառաւորէ. Ծոբայ անմեղութիւնը յայտնելէն զատ, նորա աղօթքով՝ դատախազ և հակառակորդ կանգնող բարեկամաց մեղքը կը հաձի քաւել և անպատիժ թողուլ:

Այս դէպքում, մի՛ ասեր թէ Աստուած ինչու համար արտօնեց տառապանք, որ Ծոբայ այնպիսի դժբաղդութիւն պատճառէ: Թէպետև մենք Աստուծոյ գաղտնի խորհուրդը չենք գիտեր, բայց կարող ենք մակաբերել թէ այդ թոյլատուութիւնը

եղաւ, որպէս զի Աստուծոյ անունը փառաւորի[1], Ծոբայ վարձը աւելնայ, չար ընթացքում պնդող մարդիկ վախնալով ուղղուին: Վասն զի, եթէ Ծոբայ նման մի արդար մարդ վշտաց և ցաւոց կենթարկուի, մեղաւորաց վիճակը ինչ պէտք է լինի, և թէ ամէն մարդ նորա առաքինութենէ օրինակ առնելով սատանային յաղթելու չկանան. նամանաւանդ սորա (սատանայի) յիմար և անզօր լինելը աշխարհի առջև պարզ երևելու համար:

Բնաւ, եթէ նա յիմար չը լինէր, Ծոբայ հետ մաքառելու համարձակել կարող չէր: Վասն զի որչափ որ մարդկային ազգին թշնամի է, բայց ըստ հաձոյս արդարոց ձեռնելու կարողութիւն չունի: Եւ ահա ձիշդ այդ պատճառաւ Աստուած թոյլատուութիւն տուաւ իրեն, որ Ծոբայ առաքինութիւնը և իրեն՝ սատանայի չարութիւնը յերևան գայ:

Վասն զի Ծոբ ոչ թէ միայն իւր առաքինութեան համար Ս Դրոց մէջ կը գովուի, այլ մանաւանդ անմեղ լինելով այնչափ վշտաց և տառապանաց համբերելուն և Աստուծոյ վրայ ունեցած հաւատքը անխախտ և անսասան պահելուն համար, որով աքանչելի մի օրինակ եղաւ աշխարհի[2]:

---

1. Այնպէս լուսաւորեսցէ լոյս Ձեր առաջի մարդկան, որպէս զի տեսցեն զգործս ձեր բարիս. Մատթ. Ե. 16:

2. Զհամբերութիւն Ծոբայ լուարուք. Կաթ. Ե. 11:

Արդարև, ինչպես որ ադամանդ քարը անիւէն անցնելով՝ առաւել կը փայլի, նմանապես արդար մարդուն առաքինութիւնը փորձութեանց մէջ յայտնուելով՝ նորա վարձը կաւելնայ և զայն տեսանողները Աստուծոյ սուրբ անունը կը փառաւորեն, որ՝ երբ կամենայ, իւր հաւատարիմ ծառայից այն ատեանն զօրութիւն կը շնորհէ, մինչև մահու չափ նեղութեանց սիրով տանելու կարող կը լինին։

Դարձեալ. որպէս պիտանացին խաղաղութիւնն և առ մարդիկ ունեցած հշնամութիւնը յայտնուելով, այլ և ոչ ոք նորա չար թելադրութեան չը հետևի, և ոչ ոք նորա զօրութենէն չը վախնայ. այլ՝ մանաւանդ Աստուծոյ ծառայ երկիւղածութեամբ և ի հարկին փորձութեանց և համբերելով թէ այս աշխարհի և թէ հանդերձեալի մէջ փառաւորուի։

Ինչպես որ Ծոբ և՝ թէպետ և ծանր հարուածոց ենթարկուեցաւ, բայց համբերութեամբ Աստուծմէ զոհ և շնորհակալ լինելուն համար, ոչ միայն իւր անձին առողջութիւնը, այլ և առաջինէն աւելի հարստութիւն և փառք ձեռք բերելով՝ նորէն հօրն և երիք աղջիկ զաւակներ Աստուած իրեն պագևեց, որով Ծոբ մեծապես մխիթարուեցաւ[1]։

1. Տէր օրհնեաց վերջինն Ծոբայ քան զառաջինն։ Ծոբ. Խբ. 12։

Ճետոյ Ծոբ հարիւր հօթանասուն տարի ևս ապրելով կատարեալ բաղդաւորութեան մէջ և իւր թոռները մինչև չորրորդ սերունդը տեսնելէ ետքը՝ երկու հարիւր քառասուն ութ տարեկան հասակում վախճանեցաւ, որոյ պատմութիւնը ամբողջ մարդկութեան համար խիստ օգտակար և փրկաւէտ խրատ եղաւ և պիտի լինի յաւիտեան։

Վասն զի եթէ մի անձ թափառական անգամ լինի և որչափ ևս նիւթական հարստութիւն, անուն և փառք վաստակի, Ծոբայ պատահած փորձանքը մտաբերելով միշտ զգոյշ և արթուն մնալ կը պարտաւորի երկիւղածութեամբ։ Այն ժողովուրդը չը հպարտանայ ոչ իւր հարստութեան, ոչ իշխանութեան, ոչ անձին առողջութեան և ոչ իսկ իւր զաւակաց վրայ. քանի որ մարմնաւոր այս ամէն բարիքները աւազի վրայ հիմնուած խախուտ մի շինուածի նման կարող է ոչնչանալ մի հակառակ հով փչելուն պէս։

Նմանապէս՝ եթէ մի անձ՝ տեսակ տեսակ հարուածներու և փշաքաղու ենթարկուի, Ծոբայ օրինակը աչքի առաջ բերելով Աստուծոյ ողորմութենէն առանց յոյսը կտրելու անտրտունջ կը համբերէ սիրով։ Վասն զի եթէ Աստուած կամենայ, կարող է մարդը փրկել ամէն փորձանքներէ,

1. Իջևն անձրևք՝ յաբեան գեաք՝ շնչեցին հողմք՝ հարևն զտունն, և էր կործանումն նորա մեծ յոյժ. Մատթ. է. 27։

Թէպէտ Ս. Գրոց մէջ յայտնի չէ թէ Ծորայ կրած չարչարանքի ո՞րչափ ժամանակ տևեցին, բայց շատ ժամանակ անցնելը դրուած լինելուն՝ ոմանք կը կարծեն թէ եօթը տարի տևած է, և այլք՝ աւելի պակաս ժամանակ կը դնեն. հեռևաբար ստոյգը ո՛չ ոք գիտէ:

Ուրեմն վերոյիշեալ պատմութենէն խրատառ, ո՛վ ընթերցող, և մի՛ կարծեր թէ միայն մեղաւորները փորձանքի կը հանդիպին. այլ՝ սուրբ և արդար մարդիկ ևս վիշտ և փորձանք կունենան. բայց ո՛չ թէ մեղաց փոխարէն, այլ՝ Աստուծոյ սիրելի և հաճոյ լինելով՝ այս անցաւոր աշխարհում կը խրատուին, որպէս զի մեզքէ զգուշանան:

Հարկ է նաև գիտնալ թէ որովհետև սուրբերն էլ մարդիկ են, իրենց առաքինութեան վրայ չը հպարտանալու համար կը փորձուին. կամ թէ՝ եթէ փոքր թերութիւններ ունին, այս աշխարհում կրած նեղութեամբ ներում գտնելով՝ արքայութեան մէջ յաւիտենական փառաց և ուրախութեան կարժանաւորին[2]. ինչպէս որ մեզաւորն էլ շատ անգամ բաղդաւոր կը լինի, չէ թէ Աստուծոյ հաճելի լինելուն համար է, այլ՝ Աստուծոյ գաղտնի և խորհրդաւոր մի դատաստանին պատճառաւ է:

Վասն զի, Աստուած արդար լինելով՝ ինչպէս որ բոլոր չարագործները կը պատժէ, նմանապէս բոլոր բարեգործները կը վարձատրէ. կարելի է որ մեղաւոր մարդն էլ երբեմն բարիք գործած լինի, բայց գործած բարիքը՝ արքայութեան փառաց չարժանացնէր զինքը, ուստի այսպիսի աննշան բարեաց փոխարէն այս աշխարհում հարստութիւն կը պարգևէ, որպէս զի բազում մեղաց համար ևս յաւիտենական տանջանք տրուի:

Այս կերպով, երբ դուն՝ չարագործը բաղդաւոր կը տեսնես, մի ասեր թէ նա Աստուծոյ սիրելի է, այլ՝ ընդհակառակն, բարկացած լինելուն՝ չէ՛ խրատեր զայն: Վասն զի, նա՝ որ Աստուծոյ սէրը թողով՝ մարմնաւոր յանկութեանց անձնատուր կը լինի, Աստուծոյ ողորմութեան անարժան է, և Աստուած կը թողու զայն նորա կամաց. որպէս զի յետոյ անվախճան թշուառութեան մատնէ[1]:

Սա մանաւանդ շնորհօք Յիսուսի Քրիստոսի. առաքինի անձը՝ արքայութիւնը կը ժառանգէ. այս պատճառաւ քրիստոնեայ չեղող մարդը՝ թէև բարեգործ իսկ լինի, Աստուծոյ արքայութիւնը չէ

1. Որ համբերը բազմաւ երկայնմտութեամբ անօթութեան բարկութեան՝ պատրաստեալոյն ի կորուստ. Հռով. Թ. 22:

1. Երբև բազում ժամանակ անցանէը և վերայ. Ծովք. Բ. 8:

2. Զոր սիրէ Տէր՝ խրատէ, տանջէ զամենայն որդի, զոր ընդունի. Առակ. Գ. 12:

կարող ժառանգել. քանզի միայն բնական օրինօք կամ բնութեան ազդեցութեամբ գործուած առաքինութիւնը կարող չէ զմարդ ապրեցութիւն տանիլ:

Ինչպէս որ կան մարդիկ, որոնք բնականէն ցանկասէր կամ հեշտասէր չեն, ուրիշներ կան, որոնք զթոտ են, կայն այնպիսիք՝ որոնք ապօթել կը սիրեն, և այլ սոցին նմաններ կարող են գտնուել: Արդարև Աստուած այսպիսի վարուց և ընթացից տէր անձանց կուտայ հարստութիւն, մեծութիւն և մարմնոյ առողջութիւն, որպէս զի ապրեցութեան մէջ ուրիշ վարձատրութիւն չը լինի նոցա[1]:

Այս կերպով՝ մի՛ կարծեր դուն թէ երբ մի մարդու բոլոր փափաքները կը կատարուին, բարի է իրեն համար. ընդհակառակն, նորա դատապարտութեան յայտնի նշան է այդ[2]. ինչպէս որ բժիշկները մեռնելու հիւանդին հրաման կուտան իրեն ամէն ուզածը ուտելու, բայց առողջանալու հիւանդին՝ դեղով հանդերձ ժուժկալութեան պատուէրներ կուտան, որպէս զի չը մեռնի. այս պատճառաւ սուրբերուն պատահած ագէտք և վիշտք՝ դեղ և զգուշութեան խրատներ կը սեպուին,

1. Որդեակ՝ յիշեա՝ զի ընկալար անդէն զբարիս քո ի կեանսդ քում. Ղուկ. ԺԶ. 25:

2. Ըստ առաջինն, յայտնի կորստեան նշան է մեզաւորաց, յորժամ զամենայն ցանկացեալսն ունիցին:

որպէս զի մեզք գործելով չը մեռնին հոգւով. այս կերպ նեղութիւնը՝ Աստուածային ողորմութիւն է, զոր Աստուած կը շնորհէ իւր սիրած ծառայից[1]:

Այս նկատմամբ խիստ մեծ մտադրութեամբ խորհելու ես աշխարհի ընթացքին ու վիճակին վրայ, որպէս զի բնաւ չխաբուիս. վասն զի աշխարհի զուարճութիւնք և նեղութիւնք միանդամայն փոփոխական են և ոչ թէ առևտական բաներ, ուստի օրինաւոր և արժան չէ անոնց նկատմամբ ուրախանալ կամ արտմիլ: Ճշմարիտ ուրախութիւնն ու արտմութիւնը երկնքում գանուողներուն կը վայելէ. ինչու որ անդ սրբոց ուրախութեան և մեղաւորաց արտմութեան փոփոխութիւնը անհնար լինելով՝ արդարները միշտ ուրախ են յաւիտենութեան, իսկ մեղաւորք միշտ արտում և տխուր են ի գժոխս:

Այս պատճառաւ, երկրաւոր իրաց նկատմամբ ուրախացող կամ արտմող մարդն յիմար կը համարուի: Որովհետև եթէ գիտնայ թէ այս աւուր վայելած իւր զուարճութիւնը կամ ուրախութիւնը՝ վաղը արտմութեան պիտի փոխուի, անշուշտ չէր ուրախանար, կամ թէ այս աւուր արտմութիւնը՝ վաղը ուրախութեան պէտք է փոխուի, չը պիտի արտմէր: Ուստի իմաստուն

1. Զի և այս ճշմարիտ չնորհք յԱստուծոյ են, թէ զսրբուք ինչ մտօք տանիցի ոք վշտաց յանիւրաւի, Ստեփաղ. Ա. Պետրոս. Բ. 19:

մարդ նա է, որ այս աշխարհում ոչ կուբախանայ և ոչ կը տրտմի. այլ՝ ինքզինքը Աստուծոյ կամաց յանձնելով արդար Յոբայ նման բարձրելոյն հրամաններն կատարէ խոնարհութեամբ և համբերութեամբ։

Արդարև, առաքինի մարդուն արժան է ուրախ լինել[1], բայց քանի մարդս աշխարհում կապրի, չը մեղանչելու համար միշտ երկիւղի մէջ գտնուելուն պատճառաւ, նորա ուրախութիւնն ու երջանկութիւնը կատարեալ չը սեպուիլ[2]։

Ուրեմն, ով ընթերցող, եթէ կը փափաքիս արքայութեան անվախճան ուրախութեան արժանանալ, պարտիս այս աշխարհի անհիմն և անցաւոր զուարճութեանց չը խաբուիլ և չուրախանալ[3], ինչպէս նաև աշխարհի վիշտերուն երկիւղ կրելով չը տրտմիլ, այլ՝ միշտ Աստուծոյ հնազանդ և հաւատարիմ նորա սուրբ և պաշտելի կամքը կատարելու ջանալ ամենայն երկիւղածութեամբ, սիրով և հաստատամիտ համբերութեամբ։

1. Ուրախ լեր՛ւք ի Տէր յամենայն ժամ, դարձեալ ասեմ՝ ուրախ լերուք։ Հեղութիւն ձեր յայտնի լեցի ամենայն մարդկան. Փիլիպ. Դ. 4։

2. Ծառայեցէք Տեառն երկիւղիւ, և ցնծացէք առաջի նորա դողութեամբ. Սաղմ. Բ. 11։

3. Սիրա խմաստնոց ի տան սգոյ, և սիրտ անզգամաց ի տան ուրախութեան. Ժողով. Է. 5։

ՉՈՐՐՈՐԴ ԴԱՐ

Ա՜աջին հարցո՜ւմ

Չորրորդ դարը՝ երրորդէն ինչպէս կը տարբերի։

Պատասխան

Սիրտս լերան վրայ Մովսէսին օրէնք տուեալով։ Ման զի մարդիկ մինչև այն ժամանակ միայն բնական օրինաց կը կառավարուէին, զոր Աստուած հաստատած էր մարդկային բնութեան մէջ, իբր թէ յաւիտենական օրինաց լոյսն (թէև աղօտ կերպով)։

Չորրորդ դարուն նոյն ինքն Աստուած երկուասխտակաց վրայ գրելով զայն Մովսէսի կուտայ[1], որպէս զի մարդիկ իմանան Աստուծոյ միութիւնը և նորա կամքն ու հրամանը։ Որովհետև ինչպէս որ մարդուն արարիչ և նորա էութեան

1. Եւ գրեսցես զնոսա ի վերայ սեմոց տանց քոց, և ի գրունս քո. Բ. Օրին. Զ. 9։

մէջ բնական օրէնքն հաստատողը՝ Աստուած է, նմանապէս գրաւոր օրէնք տուողն և Իսրայէլի Աստուածը՝ նա է, որուն պարտին բոլոր արարածք հնազանդիլ և օրէնքը՝ նորա հրամանն է. և մարդիկ՝ ինչ որ իրենց բնական կարողութեամբ կըմբռնէին, այնուհետև սկսան գրքին մէջ ևս կարդալ, ջր մոռնալու համար:

Այս պատճառաւ Իսրայէլի ժողովրդեան պատուէր տրուեցաւ, որ յիշեալ օրէնքը իրենց սեռնէկի դրանց վրայի սեմերուն վրայ գրեն, որպէս զի իրենց մտած և ելած ժամանակ միշտ և հանապազ մտաբերեն օրինաց տրամադրութիւնքը: Որովհետև օրէնքը գրի առնուեցաւ, ուսաի և հակառակ վարուող անձանց համար արժան եղած պատիժն էլ ի գիր առնուլ հարկ լինելով, դատաստանական օրէնք ևս տրուեցան Մովսէսի միևնոյն ժամանակ:

Մանաւանդ՝ գրաւոր կամ Մովսիսական օրինաց կէտ նպատակին՝ քրիստոնէական օրէնքն էր. ուսաի սորա նկարագրը խորհրդաւոր եղանակաւ յայտնելու համար այլ և այլ սովորութիւններ, կանոններ և խրատական օրէնք դրուեցան, զորս Իսրայէլացիք գործադրելով՝ գալիք Մեսիային վրայ իրենց հաւատքն ու յոյսը գրած կը լինէին, և Աստուծոյ հնազանդութիւն ու հպատակութիւն յայտնելով հանդերձ բոլոր կռապաշտ ազգերէն կորոշուէին:

Ծիշեալ օրէնքը՝ քրիստոնէական նոր օրէնքէն յառաջ Մովսէսի ձեռամբ տրուելուն պատճառաւ՝ հին և մովսիսական օրէնք, նոր օրինաց ատուերն ու նկարը լինելուն պատճառաւ սուրբ օրէնք, ի գիր առնուած լինելուն պատճառաւ գրական օրէնք կոչուեցաւ:

Հարց. Ե.

Օրէնքը ինչպէս տրուեցաւ:

Պաս. Մեծամեծ հրաշքներով, ահաւոր ցոյցերով և զանազան կարգադրութիւններով, որպէս զի ժողովուրդը օրինաց յարգը ըմբռնելով՝ հակառակ ընթացքի մէջ չը գտնուի: Եւ որովհետև Սինա լերան յանկման իջևանած էին, (ինչպէս որ երրորդ գարու 57-րդ հարցման մէջ յիշուեցաւ) Աստուած Մովսէսը լեռը կոչելով՝ մինչև այն ժամանակ Իսրայէլին արած բարերարութիւնքը կը յիշեցնէ անոր:

Եւ եթէ, Իսրայէլի ժողովուրդը միշտ իրեն հնազանդ մնայ, զայն իրեն սեպհական ժողովուրդ անելու ողորմած և բարձր կամքը յայտնելով՝ իբրև պետական կը դրկէ Մովսէսը, որ գնայ և ժողովրդեան իմացնէ, և անկէ պատասխան առնելով իրեն բերէ[1]:

---

1. Այսպէս առաջնոյ տանն Յակոբայ... գուք ձեղէն տեսաք՝ ուչաւ ինչ արարի ընդ Եգիպտացիսն,

Ինչպամեւ եղիր Աստուծոյ ողորմած կարգադրութեանը. վասն զի ինչպէս որ բոլոր մարդոց մէջէն միայն Աբրահամը կանչեց, նմանապէս բոլոր ազգերու միջէն նորա ցեղը իրեն անփոխան ժողովուրդ կազմել կը հաճի, բայց բռնի և ակամայ չը լինելու համար, առաջ Մովսէսը կը ղրկէ ժողովուրդին պատասխան առնելու, որպէս զի նորա հետ դաշնադիր եղած ժամանակ հաճութեամբ և յօժարութեամբը ժողովուրդը հնազանդելով վարձ ընդունի:

Այս պատճառաւ յառաջագոյն արած բարիքները կը յիշեցնէ, որ անոնց վրայ խորհելով յետոյ պարգեւելիք բարեաց և ողորմութեան հաւատք ընծայեն և միշտ յուսով հնազանդութեան մէջ մնան, կատարեալ օրինապահութեամբ:

Վասն զի նա է այն բարեգութ Աստուածը, որ՝ ինչպէս արծիւը իւր ձագերը թեւերուն վրայ կը կրէ, այնպէս հանեց Իսրայէլը Եգիպտոսէն և ազատեց Փարաւոնի ձեռքէն[1]. կը պատմուի թէ արծիւը՝ իւր ձագը թշնամիէն փախուցած ժամանակ թեւերուն վրայ առնելով կը թռչի, քանի որ իրմէ աւելի բարձր թռչող թռչուն չկայ. բայց ու-

---

և առի զձեզ ի վերայ թեւոց արծուեաց... և արդ՝ եթէ լսելով լուիցէք ձայնի իմում, և պահիցէք զուխտն իմ. ևն. Ելից. ԺԹ. 3:

1. Որպէս զարծուի ի թեւս իւր ընկալաւ զնոսա. Բ. օրէն. ԼՒ. 11:

րիշ թռչուն իրմէ աւելի բարձր թռչող թռչուններէն վախնալով երկու ոտից միջև կառնու ձագը իւր թռած ժամանակ:

Երբ Մովսէս լեռնէն իջնելով ժողովրդեան ծերերը ի մի ժողովեց, Աստուծոյ հրամանները մի առ մի բացատրեց նոցա, որոնք ամէնքը միաբանութեամբ խոստացան և յանձն առին Աստուծոյ հրամանները գործադրել և միշտ նորա պատուիրանաց և օրինաց հնազանդել[1]: Մովսէս նոյն օր դարձեալ լեռը կ'ելնելով ժողովրդեան պատասխանը տարաւ առ Աստուած[2]:

Այո՛, թէպէտև ժողովրդեան միտքը յայտնի է Աստուծոյ, բայց Մովսէս ինչպէս որ Աստուծոյ խօսքը ժողովրդեան տարաւ, նոյնպէս նոցա պատասխանն էլ առ Աստուած կը տանի, որպէս զի ժողովուրդը իւր հանդիսաւոր խոստումը չը դրժէ: Եւ որովհետև Աստուծոյ և ժողովրդեան միջև Մովսէս իբրև դեսպան ներկայացաւ, Աստուած կը յայտնէ անոր թէ ահաւասիկ ես ամպի մէջէն քեզի հետ պիտի խօսիմ, որպէս զի քեզ հաւատան:

Նայէ՛ թէ Աստուած ինչպէ՛ս իր հաւատարիմ

---

1. Պատասխանի ետ ժողովուրդն միահամուռ և ասեն, զամենայն ինչ զոր ասաց Աստուած՝ արասցուք. Ելից. ԺԹ. 8:

2. Տարաւ Մովսէս զպատգամս ժողովրդեանն առ Աստուած. Ելից. ԺԹ. 8:

ծառայն կը փառաւորէ. վասն զի մինչև այն ժամանակ Մովսէսի հետ գաղտնի կը խօսէր, այս անգամ յայտնապէս խօսիլ կը խոստանայ, որպէս զի ժողովուրդը նորա պատիւը յարգը ճանաչելով հնազանդին: Մովսէս վերստին լեռնէն իջնելով ժողովրդեան կը պատուիրէ ըստ հրամանին Աստուծոյ, որ իրենց զգեստները լուան. վասն զի երրորդ օրը Աստուած Սինա լեռը պէտք է իջնէ, և չը լինի թէ մէկը այն ժամանակ լեռը ելնէ կամ մօտենայ. քանզի ով որ մօտենայ, եթէ մարդ և թէ անասուն, պէտք է քարկոծուի և նետահար մեռնի այն[1]: Վասնորոյ յատկապէս լերան շուրջը սահման կը գծէ, որմէ ոչ ոք յառաջ չանցնի: Ուստի եղած պատուէրին համաձայն ժողովուրդը պատրաստ լինելով երրորդ օրը կանուխ լերան վրայ որոտման ձայն կը լսուի. փայլատակունք և մեգախառն ամպ կերևանն, և փողոյ սաստիկ ձայնները կը հնչեն. լեռը առ հասարակ հնոցի նման ծուխի մէջ է, վասն զի Աստուած հրով լերան վրայ կիջնէ[2]:

---

1. Զգոյշ կացէք անձանց յելանելոյ լեառն... Ելից. ԺԹ. 12:

2. Եւ եղև յաւուրն երրորդի ընդ առաւօտս, ձայնք և փայլատակունք և ամպ մեգախառն... և լեառն Սինա ծխէր առ հասարակ, քանզի կայեալ կայր Աստուած ի վերայ նորա հրով. Ելից. ԺԹ. 16:

Մովսէս՝ ժողովուրդը լերան շուրջը կը կեցնէ, որպէս զի Աստուծոյ հրամանը լսեն: Իսրայէլացիք յիշեալ նշաններէն տեսնելով և որոտման ձայները լսելով սաստիկ վախ ու սարսափ կը պատէ զիրենք: Այդ նշանք բոլորին երևցած ժամանակ՝ Աստուած Մովսէսը լեռը կանչելով նորէն կը հրամայէ որ ժողովուրդը լերան մօտ չը համարձակի գնալ, և յետոյ Ահարոնն էլ ի միասին առնելով լեռը ելնէ: Մովսէս սոյն հրամանին համեմատ լեռնէն իջնելով պատուէրը կուտայ, Ահարոնի հետ լեռը կը բարձրանայ:

Մի՞թ դիր, ինչպէս որ թագաւորին հրովարտակը կարդացուելու ժամանակ՝ բոլորին կը ծանուցուի որ գան լսելու, որպէս զի հրամանի հակառակ ընթացքի մէջ չը գտնուին, նմանապէս Աստուած՝ որովհետև իր հրամանները մարդոց պէտք է իմացնէր, այդպիսի հանդիսաւոր նշանք կը լինէին, որ ամէն մարդ երկիւղիւ և ուշադրութեամբ լսէ, որպէս զի հրամանի հակառակ վարուելով պատիժ չը կրէ:

Արդ՝ Մովսէս և Ահարոն լերան վրայ ամպի մէջ են, Սինա լեռը բոլորովին մուխի և ծուխի մէջ ընկղմած է, փայլակ և ահաւոր որոտմանց ու փողոց ձայները հետզհետե կը սաստկանան, և ժողովուրդը վարը երկիւղիւ պաշարուած սիջոցին՝ Աստուած կը խօսի և կուտայ օրէնքը Մովսէսի և Ահարոնի. նոյնպէս մի քանի Իսրայէլացւոց յա-

տուկ դատաստանի վերաբերեալ կանոնն ու և իրենց ներքին սովորութեանց պատուէրներ կատարէ, բայց ոչ թէ գաղտնի նոցա մտաց վրայ ազդելով, այլ յայտնի և մեծաձայն բարբառով[1]. ինչպէս որ քահանէն մինչև քսան չորրորդ գլխոց մէջ ընդարձակ գրուած է. (Ղևից)։ Ցետոյ երբ Մովսէս և Ահարոն լեռնէն իջնելով Աստուծոյ հրամանները կը հաղորդեն, նորէն կատարեալ հնազանդութիւն կը խոստանան[2]։ Այն ժամանակ Մովսէս ի գիր կառնու օրէնքը, ինչպէս որ Աստուած հրամայած էր իրեն։

Մովսէս՝ ժողովրդեան հնազանդութիւնը ցոյց տալու համար իրև ապացոյց՝ Իսրայէլի տասներկու ցեղերու անուններով տասն երկու քարեր առնելով սեղան կը շինէ. և նոցա անպրանիկ որդիքը տանելով՝ բոլոր ժողովրդեան փոխարէն նոցա զոհել կուտայ սեղանին վրայ, զի մինչև այն ժամանակ Ահարոն տակաւին քահանայացած չէր։

Մովսէս՝ զոհի արիւնէն մի ամանի մէջ առնելով մի քիչ ջուր կը խառնէ, որ չը խտանայ, և որուն կէսը սեղանին առջև սրսկելով օրէնքը կը կարդայ ի լուր ժողովրդեան. յետ ունկնդրութեան, երբ ժողովուրդը հանդիսաւորապէս կը

1. Խօսեցաւ Տէրը զամենայն զպատգամս զայսոսիկ, և ասէ, ես եմ Տէրը Աստուած քո. Ելից Ի. 1։

2. Եւ ասեն, զամենայն զպատգամս, զոր խօսեցաւ Տէրն՝ արասցուք, և լուսցուք. Ելից ԻԳ. 3։

յայտարարէ թէ Աստուծոյ հրամանին օրինաց պիտի հնազանդի, այն ժամանակ Մովսէս արեան ցնացեալ կէսը ժողովրդեան վրայ կը սրսկէ ասելով ահա այս է ուխտին արիւնը, որով Աստուած ձեզի հետ ուխտ դրաւ[1]։

Արդարև, Աստուած ուխտիս Իսրայէլացիքը իրեն սեպհական ժողովուրդ ընտրեց, սակայն որովհետև Աստուծոյ ժողովրդեան յատուկ արուեստն է նորա անվախճան թագաւորութիւնը ժառանգել, և Աստուծոյ արքայութիւնը սրբութեամբ կարելի է մտնել, և սրբութիւն էլ Աստուծոյ հաստատած օրինաց հնազանդութեան մէջ կը կայանայ, և օրինաց վախճանն էլ Մեսիան լինելով[2], իրև նոր օրինաց նկար՝ քահանայական պատարագի և այլ ծիսական արարողութեանց հրահանգ և պատուէրներ դրուեցան, զորս Իսրայէլացիք գործադրելով սրբուին արքայութեան արժանաւորելու համար։ Վասն զի ոչ թէ Մովսիսական օրէնքի զօրութեամբ, այլ Քրիստոսի շնորհօք և նորա տուած աւետարանական օրէնքով մարդիկ կարող են Աստուծոյ արքայութիւնը ժառանգել։

Այո՛, հին օրէնքը Աստուծոյ հրամանն է,

1. Եւ ասէ, ահա այս արիւն է ուխտին՝ զոր ուխտեաց Տէրը ընդ ձեզ վասն ամենայն բանիցս այսոցիկ. Ելից. ԻԳ. 8։

2. Կատարած օրինացն Քրիստոս է. Հռոմ. Ը. 4։

զոր գործադրող մարդիկ Աստուծոյ հաճոյ կը լինէին, բայց պայմանաւ որ նոքա պէտք էր գալու Մեսիային հաւատալով նորա շնորհաց վրայ դնէին իրենց բովանդակ յոյսը: Այս պատճառաւ նոր օրինաց կատարելութեան հետ բարդատմամբ՝ հին օրէնքին անկատարութիւնը Ս. Գրոց մէջ յայտնուած է [1]: Վասն զի, ինչպէս որ պատկերահանք իրենց շինելու պատկերին նկարը՝ նախ մատիտով կամ կաւիճով կը գծեն և ապա զանազան գոյներով կատարելութեան կը հասցնեն, նմանապէս հին օրէնքը՝ նոր օրինաց նկար կամ ստուերը [2] լինելուն Քրիստոսի գալստեամբ կատարելագործուած լինել սուրբ Աւետարանի մէջ կը կարդամք [3]:

Արդ՝ Աստուծոյ սուրբ ժողովուրդը՝ հոգևոր թագաւորութեան և քահանայութեան մէջ շնորհօքն Աստուծոյ փառաւորեալ քրիստոնեայ ժողովուրդն է [4]: Եւ քանզի Աստուած Իսրայէլի ժողովուրդը ընտրեց իրեն սեփական ժողովուրդ, այս պատճառաւ նորա համար թագաւոր չը կարգեր, զի ինքն Աստուած է նորա թագաւորը [1], թէպէտև, ամէնուն թագաւորը և ամէնքը իշխանութեամբ կառավարողը Աստուած է, բայց Իսրայէլացւոց օրէնք տուած լինելով՝ միայն նոցա հետ ուխտ հաստատած լինելուն համար, մանաւանդ պէս նոցա թագաւորը համարուեցաւ:

Հարցում Գ.

Ի՞նչու զոհին արիւնը Մովսէս սեղանին առջև եւ ժողովրդեան վրայ սրսկեց:

Պաս. Իսրայէլի ժողովրդեան հետ Աստուծոյ դրած ուխտը հաստատելու համար: Որովհետև այդ ուխտը Աստուծոյ և Իսրայէլի ժողովրդեան միջև կատարուեցաւ, բայց Աստուած անտեսանելի լինելով, արիւնը սեղանի առջև կը սրսկէ, որպէս թէ նորա ներկայութեան սրսկել համարուի, որ յայտնի լինի թէ Աստուած իւր խոստման մէջ հաւատարիմ է:

Նմանապէս սրեան միացորդ կէսը ժողովրդեան վրայ սրսկելը՝ կը յայտնէ որ եթէ ժողովուրդը ուխտին դրժելով հնազանդութեան պարտականութիւնը չը կատարէ, իրև մարդասպան

---

1. Ես ետու հրամանս անքարիս, (այսինքն անկատարս) և երաւունս, որովք ո՛չ կեցցեն, (այսինքն անբաւականս առ հոգևոր կեանս). Եզեկ. Ի. 25:

2. Քանզի զստուերը հանդերձելոց բարեացն ունէին օրէնքն, և ո՛չ զնոյն կերպարանս իրացն. Եբրայ. Ժ. 1:

3. Մի՛ համարիք եթէ եկի լուծանել զօրէնս, այլ՝ լնուլ. Մատթ. Ե. 17:

4. Դուք ազգ էք ընտիր, թագաւորութիւն, քահանայութիւն. ազգ սուրբ ժողովուրդ սեպհական. Ա. Պետր. Բ. 9:

1. Եւ ծանիցեն թէ ես եմ տէր Աստուած նոցա. Եզեկ. ԻԹ. 46:

յանցաւոր համարուելով՝ իւր արիւնը մոած կը լինի։

Ինչպէս որ երբորդ գարու տասներորդ հարցման մէջ յիշատակուեցաւ, Աբրահամու հետ Աստուծոյ արած ուխտը պատարագաւ հաստատուեցաւ, նմանապէս մեր Տէր Յիսուս Քրիստոս՝ իւր պատուական և սուրբ արիւնով քրիստոնէից հետ ուխտ հաստատեց[1], վասն զի այդ զոհին արիւնը՝ Քրիստոսի արեան օրինակ էր,

Արդ ուխտը՝ օրինաւոր լինելով. ով որ այդ ուխտին դէմ կը գործէ, արդարապէս պէտք է պատժուի։ Այդ պատճառաւ Իսրայէլի ժողովրդեան ի Բաբիլոն գերի գնալուն պատճառ՝ Աստուծոյ՝ իրենց հետ գրած ուխտին հակառակ ընթացքն էր, ինչպէս որ Երեմիա Մարգարէն որոշակի կը յայտնէ արդէն[2]։

Հարց. Դ.

Վերը յիշուածին համեմատ Մովսէս եւ Ահարոն լեռնէն իջնելէ ետքը, նորէն ելան հոն։

Պաս. Այո, շաաբերը ելան։ Վասն զի, Աստուծոյ հրամանաւ Մովսէս և Ահարոն, ինչպէս

---

1. Զի այդ է արիւն իմ նորոյ ուխտի, Մատթ. ԻԶ. 28։

2. Եւ տայց զձեզ ի ցրուման ընդ ամենայն թագաւորութիւնս երկրի, և տայց զարհուր՝ սքանչին զուխտիւ իմով. Երեմ. ԼԴ. 18։

նաև նորա երկու որդիքը Նաբադ և Աբիուդ ու ժողովրդեան խորհրդական ծերերէն 70 անձինք ի միասին լեռը ելնելով տեսան այն տեղը՝ ուր Աստուած կեցած էր, և որ աղիւսաձև ու երկնագոյն շափիւղայէ էր։ Բայց մի կարծեր թէ Աստուած նիւթական տեղոյ կարօտ է, և մարդոց պէս կանգնելու տեղ ունի. այլ այդ կերպ նշանք պէս կանգնելու տեղ ունի. այլ այդ կերպ նշանք այնտեղ երևութապէս կային և Մովսէսին հետ խօսիլը յայտնելու համար կը գործածուին։ Այն դեղին գոհարի երևոյթով նկարուած լինելը՝ նորա մեծ փառքը կը յայտնէ։

Սակայն մի՛ կարծեր թէ Աստուծոյ փառքը մարմնաւոր է, այլ որովհետև յաչս մարդոց գոհարն ու ադամանդը մեծայարգ և գեղեցկագոյն և պատուաւոր լինելով, Աստուած իւր փառքը նոցա միջոցաւ կը յայտնէ, վասն զի մարդոց հասկացած եղանակաւ երևոյթք տեղի կուենանան։ Ինչպէս որ նոյն տեղը աղիւսաձև երևցաւ, որպէս զի Իսրայէլը Աստուծոյ ողորմութիւնը իմանայ, քանի որ Եգիպտոսում ցեխ կոխտելով աղիւսագործութենէն զերծնք ազատելէն զկնի, օր ըստ օրէ փառաց ի փառս բարձրացնելէն յետոյ, իբրև թէ ցեխը ադամանդի փոխած էր։

Դարձեալ, ինչպէս որ ծովն երկնագոյն կերևի, նոյնպէս այն տեղին երկնագոյն երևումը՝ Իսրայէլացւոց ծովէն անցնելով ազատութիւնը կը յայտնէ։ Դարձեալ երկնքի նման պայծառ երևումը կը

յայտնէ որ եթէ Աստուծոյ հնազանդ մնային, երկնից փառքին և արքայութեան անվախճան երջանկութեան արժանի պէտք է լինէին։ Նմանապէս Աստուծոյ ոտից տեղը բացատրութիւնը՝ բանին Աստուծոյ մարմնաւորութեան նշանակ է։

Այս պատճառաւ ահա Իսրայէլացւոց խորհրդական ձերոց ցոյց կուտայ այն տեղը, որպէս զի դնան ժողովրդեան իմացնեն, և նոքա ևս գոհ լինելով միշտ հնազանդութեան մէջ մնան, իրենց խոստման համեմատ։ Ցնծոյ լեռնէն իջնելով, ձայն անելէն ետքը՝ Մովսէս ըստ հրամանին Աստուծոյ Ցեսուայ իրեն ծառային հետ նորէն լեռը կելնէ. և ամպը պատելով վիրինք, այն տեղ կը մնան վեց օր։ Եօթներորդ օրը Աստուած ամպի մէջէն Մովսէսը լերան բարձունքը կանչելով՝ անդ կը մնայ քառասուն օր և քառասուն գիշեր առանց ուտելու[1]։

Սակայն Ցեսու՝ Մովսէսի հետ վեր չելաւ, այլ՝ եղած տեղում մնայ։ Աստուծոյ փառաց տեսիլը՝ բոլորքեալ հրոյ նման լերան գագաթում կերևէր բոլոր ժողովրդեան[2], որ հասկանայ թէ Աստուած անդ ներկայ է և թէ նորէն Մովսէսին

1. Եւ էր Մովսէս ի լերինն անդ զքառասունս տիւս և զքառասուն գիշեր. Ելից. ԻԴ. 18։

2. Եւ տեսիլ փառացն Տեառն երևեր զհուր բորբոքեալ... Ելից. ԻԴ. 18։

հետ կը խօսի և պատուէրները պէտք է տայ, և մանաւանդ թէ նորա վերադարձէն յոյսը չը կտրէ։ Ցիշեալ տեսիլը կամ երևոյթը քառասուն օր և քառասուն գիշեր մի և նոյն դրութեան մէջ մնաց։ Քանզի Մովսէսի լեռնէն իջած ժամանակ դեռ այդ հրեղէն նշանը կար, ինչպէս յայտնի է Բ. Օրինաց. Ժ. 15. համարում։

Այն քառասուն աւուրց միջոցին՝ Աստուած կը յայտնէ Մովսէսին թէ ինչ ձև պէտք է ունենար Տապանակ ուխտին և վկայութեան խորանը, յորում պիտի պահուէր Տապանակը, զորս երկուքն էլ Մովսէս պէտք է շինել տար։ Նմանապէս անդ յայտնուեցաւ Մովսէսի թէ Ահարոն և իւր որդիքը քահանայ պէտք է լինին, և թէ ինչպէս պէտք է լինէր նոցա զգեստուց ձևն ու կերպը քահանայական պաշտօնակատարութեանց ժամանակ։ անդ՝ այն միջոցին խօսեցաւ Աստուած մատուցանել զոհերուն և նոցա յատուկ սովորութեանց անհրաժեշտ և կարևոր պայմաններուն վրայ։

Եւ դարձեալ, քարէ շինուած երկու տախտակներ կուտայ Մովսէսին, որոց վրայ Աստուած գրած էր տասնաբանեայ օրէնքը[1]. ինչպէս որ Եւից 25 գլուխէն մինչև 32 գլուխը յիշեալ կէտերէ վրայ ամէն մարդ կարող է կարդալ իսկ[2]։

1. Եւ ետ Մովսէսի... զերկուս տախտակսն վկայութեան. Ելից. ԻԴ. 17։

2. Խօսեցաւ Տէր ընդ Մովսէսի. Ելից. ԻԵ։

Ահաւասիկ տասնաբանեայ օրինաց համառօտ բովանդակութիւնը. Առաջին՝ Աստուծոյ միութիւնը ճանաչել, միայն Աստուծոյ երկրպագել, ամէն բանէ առաւել զնա սիրել և կռոց երկրպագութիւն չը մատուցանել բնաւ:

Երկրորդ՝ սուտ թեամբ չերդնուլ Աստուծոյ անուամբ:

Երրորդ՝ շաբաթ օրը սուրբ պահել. այս պատուէրը՝ կիւրակէ աւուր փոխուեցաւ, զի այն օր Քիստոս Փրկիչ յարութիւն առաւ:

Չորրորդ՝ հօր և մօր՝ պատիւ և յարգանք ընծայել:

Հինգերորդ՝ մարդ չսպանել:

Վեցերորդ՝ շնութիւն չը գործել:

Եօթներորդ՝ գողութիւն չանել:

Ութերորդ՝ սուտ վկայութիւն չը տալ:

Իններորդ և տասներորդ՝ ուրիշի ստացուածոց և կնկան ցանկութեան աչքով չը նայիլ [1]:

Հարց.՝ ե.

Մովսէս քառասուն օր լեռը եղած ժամանակ ժողովուրդը՝ վասը հնազանդ մնաց:

Պաս. Ո՛չ, ժողովուրդը՝ իւր խոստման հաւատարիմ չը մնաց: Արդարև, Մովսէս թէպէտ ժողովրդեան ծերերուն պատուիրած էր, որ այնմէ ատեն ատեան մինչև իր վերադարձը: Եւ եթէ պատուննան, Ահարոնի և Օվրի դիմեն: Սակայն՝ որովհետև նոքա մարմնաւոր գործանաց սիրահար էին, օր յառաջ Եբուսացիմի երկիրը հասնելով հանգիստ կեանք վարելու տենչանօք՝ քառասուն օր Մովսէսի յապաղման վրայ սասկիկ կը նեղանան, և յիմարաբար կը կարծեն թէ այլ ևս չը պիտի գայ և Աստուած էլ չօգնելով անապատում խեղճ և թշուառ պէտք է մնան:

Այս պատճառաւ բազմութեամբ Ահարոնի վրայ յարձակելով անորմէ Աստուած [1] կուզեն որ իրենց առաջնորդէ. վասն զի գիտեն թէ ճանապարհին մէջ թշնամի պատահած ժամանակ առանց Աստուծոյ կարող չեն ազատուիլ:

Նայէ՛ դուն, ինչպէս շուտ մոռացան Աստուծոյ բարերարութիւնը իրենց անհամբերութեան պատճառաւ, ինչպէս նորա յատկանական գոյութեան և բարութեան դէմ վատ ուրացութեամբ մեղանչեցին կուռք խնդրելով: Նմանապէս Մովսէսն էլ իրեն օսար մարդ նկատելով կասեն, «այն Մովսէսը, որ զմեզ Եգիպտոսէն հանեց, չենք գիտեր թէ ինչ եղաւ». և այսպէս նորա լաւութիւնը կուրանան [2]:

1. Աբև և աբա՝ մեզ աստուածս, որք առաջնորդեսցեն մեզ. Ելից. Լ.Բ. 1:

2. Զի այլն այն Մովսէս՝ որ հան զմեզ յԵգիպտոսէ, ո՛չ գիտեմք զի՞ եղև նմա. Ելից. Լ.Բ. 1:

1. Լուր Իսրայէլ, Տէր Աստուած մեր, մի է. Բ. Օրին. Զ. 4:

Թէպէտև Ահարոն՝ ժողովրդեան մի այսպիսի աւօրինի առաջարկէն չախորժեցաւ, բայց նոցա անհնազանդութիւնն և ըմբոստութիւնն դիտնալով կը զիջանի նոցա բաղձանքը կատարել, ոչ թէ կուռք շինելու, այլ՝ հնարքով ժամանակ շահելու միջոց կորոնէ, մինչև որ Մովսէս լեռնէն վար իջնէ։ Այս պատճառաւ, նոցա կանանց և աղջկանց ոսկեղէն օղերը կը պահանջէ, որպէս զի իրենց ապրանաց կամ ստացուածոց խնայելով իրենց պահանջէն եա կենան, բայց դժբաղդաբար արք և կանայք կուռքի սիրոյն մոլորած՝ առանց խնայութեան իրենց ոսկիէ օղերը կը բերին։

Ճշմարիտ է որ այնչափ ահագին բազմութիւն ժողովրդեան հակամէտ չեղան բոլորն էլ ի կռապաշտութիւն, բայց ոչ ոք համարձակեցաւ դիմադրել և արդելուլ, քանի որ չար բանին հետեւողք յամառ և շատ են միշտ։ Այս պարագային մէջ, Ահարոնին՝ միայն ականջի օղեր ուզելը՝ նոցա մոռացկոտ անհնազանդութիւնը կը յայտնէ. ինչու որ օրէնքը իրենց ականջով դեռ նոր լսած լինելով հանդերձ, շուտով օրինազանց դտնուեցան։

Որովհետև Եգիպտացիք հորթ կը պաշտէին, վասնորոյ հորթի կերպարանօք ոսկեղէն ձուլածոյ կուռք մը կը շինէ, որպէս զի ըմբռնելով թէ Աստուած չէ այն և թէ կարող չէ օգնել իրենց, շուտով զղջան իրենց յիմարութեան վրայ, վասն զի, այն՝ որ կարող չեղաւ Եգիպտացիները ազա-

տել, իրենց ևս առաջնորդելու ի հարկէ անկարող է։ Բայց ամէնէ ժողովուրդը կուռքը տեսնելուն պէս՝ «Ասիկա՛ քեզ Եգիպտոսէն հանող Աստուածը այս է», ասելով կսկսին զայն պաշտել և կերուխումի նստիլէ յետոյ ցնծութեամբ պարել[1]։

Նկատէ՛, ժողովուրդը՝ վարը բանակում Աստուած կուրանայ, Բայց Աստուած լերան վրայ նոցա համար Մովսէսին օրէնք կուտայ։ Արդ՝ երբ քառասուն օր կը լրանայ, Աստուած Մովսէսին կասէ «շուտ վար իջիր, որովհետև քու ժողովուրդը ուղիղ շաւղէն խոտորեցաւ»[2]։

Այստեղ առաքինութեան և մոլութեան տարբերութիւնը լաւ դիտէ. վասն զի Աստուած ինքեայլի ժողովուրդը իրեն սեփական ժողովուրդ ընտրած լինելով հանդերձ, այս անգամ նորա նկատմամբ Մովսէսի ժողովուրդը կանուանէ. քանի որ հնազանդութեան շաւղէն խոտորելուն համար Աստուծոյ ժողովուրդ կոչուելու անարժան կը հանդիսանայ, այսու հանդերձ նորա իշխանութենէն չի դադրիր ընդհակառակն ևս ընդունելով զայն պատժոյ արժանի կը լինի ըստ ինքեան։

---

1. Ասեն, այս են աստուածք քո Իսրայէլ, որք հանին զքեզ յերկրէն Եգիպտացւոց . . . և մատոյց զոհս վրկութեան . . . Ելից. ԼԲ. 4։

2. Եւ ասէ, գնա էջ դու ասէ, զի անօրինեցաւ ժողովուրդդ քո. Ելից. ԼԲ. 7։

Արդարև Աստուած ամենուն վրայ կիշխէ, բայց հնազանդութեան շաւղին մէջ գանուողներուն իբրև հայր կը նայէ և միշտ կը մխիթարէ զանոնք, իսկ հնազանդէց վրայ իբր պատուոյ իշխելով կը պատժէ, որ ուղղուին. և եթէ անդիմադրձ ձնալով չուղղուին, այս աշխարհը այնպիսի մարդոց բանտ կը համարուի, մինչև որ մի օր չարաչար վախճան գտնելով գնան իրենց դատապարտութեան վայրը։ Ինչպէս որ Իսրայէլը իւր անհնազանդութեամբ դատապարտելի լինելով, Աստուած նորէն Մովսէսի կասէ «Թող զիս, որ զանոնք ոչնչացնեմ և զքեզ մեծ ազգ անեմ»[1]։

Ինչպէսեւ եղիր դու Աստուծոյ ողորմութեանը։ Նա՝ որ մեղաւորը պատժելու ժամանակ ոչ ոքի կը հարցնէ. և ոչ ոք կարող է նորա դէմ կենալ, բայց ողորմած լինելով պատճառ կորոնէ մեղաւորին ներում շնորհելու. այդ պատճառաւ «Թող զիս որ զանոնք կորնչեցնեմ» ասելը՝ նոցա համար «ինձ ազաչէ» ասելու պէս է։ Այս խօսքը ոչ միայն Մովսէսի՝ այլ և բոլոր սրբոց՝ պատիւ համարուեցաւ։

Վասն զի Աստուած նոցա աղօթքով մեղաւորին յանցանաց ներել կը կամի, որպէս զի սուրբերուն պատիւը ճանչցուելով ամէն մարդ աշխատի

1. Եւ ասէ ցՄովսէս... Թոյլ տուր ինձ... սատակեցից զնոսա. Ելից. ԼԲ. 10։

առաքինութեամբ Աստուծոյ հաճոյանալ։ Այս խօսքը նաև մեղաւոր մարդուն մեծ մխիթարութիւն է. վասն զի երբ մի անձ սխալելով մեղանչէ, փոխանակ յանսահատելու՝ միջնորդութեամբ սրբոյ Աստուծոյ ողորմութեան ապաւինելով պատիժէ ազատիլ կրնայ։ Այնպէս՝ ինչպէս որ Մովսէս ժողովրդեան մեզայ համար աղօթք և աղաչանք անելուն պէս՝ Աստուծոյ բարկութիւնը լիջնելով այլ ևս չը պատժեր մեղաւոր ժողովուրդը[1]։

Օրինակ առ, ժողովուրդը Մովսէսի երախտիքը մոռնալով նորա նկատմամբ իրր օտարականի վրայ խօսեցաւ, բայց նա՝ գարձեալ ժողովրդեան փրկութեան համար զԱստուած կաղաչէր. վասն զի ճշմարիտ մեծութեան պայմանն այս է, որ մարդս առանց ժողովրդեան թերութեանց նայելու, միշտ նորա լաւութեան և բարօրութեան համար աշխատի։

Յետոյ Մովսէս օրինաց տախտակները առնելով կուգայ այն տեղը, ուր Յեսու իրեն կսպասէր, և երբ երկուքն ի միասին լեռնէն կիջնէին, ալմասից ձայներ լսուելով, Յեսու կը կարծէ թէ բանակում կռիւ կայ. բայց Աստուած Մովսէսին յայտնած լինելով ժողովրդեան կռապաշտութիւնը, իսկոյն կը հասկանայ թէ այդ աղմուկը՝ կռիւի

1. Եւ յածեաւ տէր ի չարեացն, զոր ասաց առնել ժողովրդեան. Ելից. ԼԲ. 14։

ձայն չէ, այլ՝ խելակորոյս արբածներու ժխոր է։

Ներբ նա՝ բանակին մօտենալով յիշեալ կուռքը և նորա շուրջը պարառեալ խաղացողները տեսաւ, սաստիկ բարկանալով օրինաց տախտակները գետինը զարնելուն պէս ջախջախեց և փշրեց, նկատելով թէ մի այդպիսի ապերախտ և անհնազանդ ժողովուրդ արժանի չէ Աստուածային ողորմութեան[1], և կուռքն առնելով կրակումբ կայրէ, զոր փոշիացնելով ջրով ժողովրդեան կը խմցնէ, որպէս զի լաւ հասկանան թէ ինչ բան է, զոր քիչ յառաջ կը պաշտէին։

Հատուած Ը.

Մովսէս կուռքը պաշտողները պատժեց։

Պաթ. Պատժեց. վասն զի նոցա այսպիսի անարժան վարմանց դէմ սաստիկ բարկացած՝ բանակին դրան առջև կանգնելով բարձր ձայնիւ կաղաղակէ. «ով որ Աստուծոյ կողմն է, թող ինձ գայ[2]. և ահա իսկոյն Ղևիի ցեղը գալով կը ժողովին նորա շուրջը. վասն զի նոքա կուռքին երկրպագած չէին բնաւ։

1. Եւ եռաց զօրէն և զպարաւորսն, բարկացեալ սրտմտութեամբ Մովսէս, ընկէց ի ձեռաց իւրոց զտախտական զերկոսին և խորտակեաց զնոսա. Ելից. ԼԲ. 19։

2. Եւ եկաց Մովսէս առ դրան բանակին՝ և ասէ, որ ոք Տեառն լիցէ, առ իս մատիցէ. Ելից. ԼԲ. 26։

Մովսէս յանուն Աստուծոյ կը հրամայէ նոցա, որ սուր ի ձեռին բանակին մի ծայրէն մինչև միւսը շրջին, և առանց նայելու ազգականի կամ եղբօր, ամբողջ կուռք պաշտողները կոտորեն սրով. և այսպէս այն օր երիք հազար անձինք մեռան։

Յետամուտ եղիր, առաջ Մովսէս ինքը ժողովրդեան փրկութեան համար աղաչեց, բայց այս անգամ ինքը կոտորել կուտայ նոյն ժողովրդեան զաւակները։ Վասն զի, ինչպէս որ յանցաւորին համար աղաչել՝ Աստուծոյ գթութեան ապաւինելով՝ նորա պատիւը և փառքը ճանաչելէ, նմանապէս յանցաւորը պատժել Աստուծոյ արդարութեանն վախնալով՝ նորա պատիւը պահպանել կը նշանակէ։

Ահա Ղևիի ցեղը այսպիսի մի արդարութեան պաշտօն կատարելով՝ զԱստուած պատուած՝ և նորա հրամանը կատարած եղան. այս պատճառաւ քահանայութիւնը այդ ցեղին տրուեցաւ, քանզի քահանայ՝ կը նշանակէ քաւէ նա (քահէ նա), այսինքն զԱստուած մարդուն հետ հաշտեցնելով մեղքը քաւել տուող։ Յաջորդ օրը Մովսէս ժողովրդեան կը յայտնէ որ՝ մեծ մեղք գործեցին, ուստի պէտք է երթալ և զԱստուած աղաչել իրենց փրկութեան համար, և վերստին լեռը կելնէ։

Մովսէսի այս խօսքը և յատկապէս աղաչելու համար լեռը ելնելը՝ պարզապէս ժողովուրդը ի

զիրք և յապաշխարութիւն հրաւիրել կը նշանակէր։ Այստեղ Մովսէսէն սորվէ ապօթելու պայմանները. նախ՝ կը խոստովանի թէ ժողովրդեան մեղքը կարի մեծ և ծանր է և ապա ներում կը հայցէ. և այն ատենն ապրելութիւն կը ցուցնէ, որ մինչև անգամ Աստուծոյ տումարէն ջնջուիլ յանձն առնելով կը գոչէ, «եթէ նոցա մեղաց ներում կը չնորհես, լաւ. ապա թէ ոչ, զիս էլ քու տումարէն ջնջէ»[1]։

Մովսէս այսպիսի խօսքով ոչ թէ իրօք Աստուծոյ յաւիտենական կենաց պարգեւն ջնջուիլ ուզեց, որովհետև ուրիշներուն լաւութեան համար Աստուծոյ ողորմութենէն զրկուիլ՝ երբեք օրինաւոր և արդար չէ, այլ՝ այդ խօսքով իւր ազգին համար օրհասը ուներացած սէրն ու հոգեղը յայտնեց մի օրհասական կերպով։

Պօղոս առաքեալն էլ մի այսպիսի սէր կը տածէր օրհասը իւր ազգին վրայ[2]։ Թող օրինակ

---

1. Դարձաւ Մովսէս առ Տէր՝ և ասէ, աղաչեմ զքեզ Տէր, մեղաւ ժողովուրդն այն մեզս անհնարինս, և արարին իւրեանց աստուածս ոսկեղէնս, արդ՝ եթէ թողուս նոցա զմեղս իւրեանց՝ թո՛ղ, ապա թէ ո՛չ, ջնջեա և զիս ի գալստեանէ քումմէ յոր գրեցեր. Ելից. Լ. 31։

2. Ուխտիւք խնդրէին, եա ինքնին նզով լինել ի Քրիստոսէ, վասն եղբարց և ազգականաց իմոց ըստ մարմնոյ. Հռոմ. Թ. 3։

առ՝ն նոքա՝ որոնք ժողովրդեան գլուխ կամ առաջնորդ եղած են, և ի սէր ազգի կրած նեղութիւնները ձանձրանալով պաշտօնէ խոյս տալու չէր փութան անձնասիրութեամբ։

Թէև Մովսէս ժողովրդեան փրկութեան համար Աստուծոյ տումարէն ջնջուելու հաւանութիւն յոյժ տուաւ, բայց Աստուած անմեղ մարդը իր դպրութենէն ի հարկէ ջնջել չուզելով կը յայտնէ թէ «ով որ մեղք կը գործէ, զայն կը ջնջեմ իմ դպրութենէս»[1]։

Ցետոյ Աստուած Մովսէսին կսէ. «գնա և առաջնորդէ ժողովրդեանդ, սար զայն Արրահամու, Իսահակայ և Յակոբայ խոստացածս երկիրը, բայց նոցա անհնազանդութեան պատճառաւ՝ ես իրենց հետ պիտի չգնամ, այլ՝ նոցա առջևէն հրեշտակս պիտի զրկեմ առաջնորդելու համար»[2]։ Ժողովուրդը՝ երբ լսեց թէ Աստուած իրենց հետ չը պիտի լինի, խիստ մեծ և սաստիկ տխրութեամբ համակուելով՝ ամէնքը սուգի մտան[3]։

Արժան է նկատել թէ՝ երբ Մովսէս օրինաց

---

1. Եւ ասէ Տէր ցՄովսէս, եթէ ոք մեղաւ առաջի իմ, ջնջեցից զնա ի գալստենէ իմմէ. Ելից. Լ. 33։

2. Առաքեցից առաջի երեսաց քոց զհրեշտակ իմ . . . ես ոչ ելից ընդ քեզ, վասն խստասրտանոց լինելոյ ժողովրդեանն. Ելից. Լգ. 2։

3. Եւ լուեալ ժողովրդեանն զբանն զայն չար, սուգ առին ազատօրէք. Ելից. Լգ. 4։

տախտակները խորտակեց և ժողովուրդն երեք հազար անձինք սպանել տուաւ, այն ժամանակ սուգ չառին. բայց երբ լսեցին թէ Աստուածն իրենց հետ չէ պիտի լինի, ի խոր սուգ կը համակուին։ Ծիրաւի, մարդուս համար ասկէ աւելի մեծ պատիժ չէ լինիր, երբ Աստուածն իրմէ կը հեռանայ և կը լքանէ զինքն[1]։

Ճշմարիտ է որ Աստուած ամենուրեք է, բայց երբ իւր շնորհքէն կը զրկէ մէկը, անոր հեռացած կը համարուի։ Սակայն մի՛ կարծեր թէ Աստուածն ինքը մարդէն կառնու իւր շնորհքը, այլ՝ մարդն է որ Աստուծոյ օրինաց հակառակ գործելով՝ զայն իւր սրտէն կարտաքսէ և այս կերպով ինքը Աստուածմէ կը հեռանայ յօժարակամ։

Արդ՝ եթէ կը փափաքիս որ Աստուած քեզի հետ լինի, մեղք մի՛ գործեր. և եթէ սխալմամբ գործեցիր, գոնէ ապաշով դարձի եկ, որ չը պատժուիս։

Հարց. ՟Ժ.

Արդեօք Մովսէսի աղօթքը ընդունուեցաւ, որ Աստուած Իսրայէլի հետ գնալ հուզելով հրեշտակ ղրկել կամեցաւ։

Պատ. Ընդունուեցաւ։ Վասն զի Մովսէսի աղաչանքովն էր որ Աստուած Իսրայէլացիները չը կոտորեցնելով հրեշտակի միջոցաւ զրկել կը կամի,

1. Վայ նոցա զի վասեցին զնոա. Ովսէ. Է. 13։

որպէս զի իրենց յանցանքը ճանաչելով զղջումի գան։ Այս պատճառաւ Մովսէսին կը պատուիրէ որ նոցա յայտնէ իրենց յամառութիւնը, անհնազանդութիւնն ու հակառակասիրութիւնը, և զղջմի կենան որ նորէն պատապարտութեան և պատժոյ չենթարկուին։

Այո՛, նոքա թէև սուգ առին, բայց մարդը իւր յանցանաց փոխարէն բոլոր սրտով զղջալ և ապաշխարելու պարտական լինելով՝ Աստուած կը հրամայէ որ իրենց զարդարուն զգեստները մերկանալով՝ սրտերնիս եղած զղջումը արտաքուստ ևս յայտնի լինի, որպէս զի յետոյ ի գործ դնէ նոցա համար ինչ որ արժանն է[1]։

Այս խօսքը՝ ժողովուրդ ի զղջում հրաւիրել էր, իրենց կամաց թողլով ապագայում լաւ կամ յոռի վիճակ ունենալու գործը։ Վասն զի եթէ ուղիղ սրտով զղջան՝ շնորհաց և ողորմութեան իսկ եթէ ոչ, պատժոյ և դատապարտութեան արժանի պէտք է լինէին։ Արդարև, ըստ հրամանին Աստուծոյ բոլոր ժողովուրդը՝ ամէն զարդ մերկանալով՝ որչափ ժամանակ որ Սինա լերան մօտ մնացին, բնաւ չը հագան[2]։

1. Մերկացարուք պատմուճանս փառաց ձերոց, և զգարդ քո ի քէն, և ցուցից զինչ առնեցեմ քեզ. Ելից. ԼԳ. 5։

2. Եւ մերկացան որդիքն Իսրայէլի զգարդ լերանց. Ելից. ԼԳ. 6։

Օրինակ առ, պովհան թէպէտև սրբոյ աղօթքը Աստուած կընդունի, բայց մեղաւորն էլ պարտական է այլ ևս հրամանի հակառակ չը գործել խոստանալով՝ ձշմարիտ զղջմամբ մեղայ վուխարէն պատուիրած ապաշխարութիւնը անթերի կատարել՝ որպէս զի պատիժ ազատուի։

Ցետոյ Մովսէս իւր վրանը բանակէն դուրս կը կանգնէ, բազմութենէն հեռի լինելուն համար, որուն անունը՝ վկայութեան խորան կոչուեցաւ, այնպէս որ՝ երբ մի անձ Աստուծմէ խնդիրք ուներ, այնտեղ կը գնար խնդրելու։ Մովսէս խորանէն ներս գնացած ժամանակ՝ ամէն մարդ իւր վրանին դուռը կանգնած կը նայէին. և հրաշալի ամպը՝ սիւնի նման խորանի դրան վրայ իջնելով իրրև թէ զեմ յանդիման իւր բարեկամին հետ խօսելու պէս՝ Աստուած ամպին միջէն Մովսէսի հետ կը խօսէր, և ժողովուրդը զայն տեսնելով երկրպագութիւն կանէր[1]։

Ո՛չ ոք կարող էր ներս մտնել, միայն՝ երբ որ Մովսէս դուրս ելնէր խորանէն, նորա սպասաւորը՝ Ցեսու ներս մտնելով՝ միշտ աղօթքով կը պահէր անդ։ Վերոյիշեալ կերպով Աստուած Մովսէսին հետ խօսած ժամանակ՝ նա՝ պարձեալ

1. Եւ խօսէր Տէր ընդ Մովսէսի դէմ յանդիման, որպէս որ մի խօսիցի ընդ բարեկամի իւրում. Ելից. ԼԳ. 11։

կապաչէ զԱստուած՝ որ համճի ժողովրդեան հետ գալ ի փառս և ի միխիթարութիւն նորա, ինչպէս նաև յայտնի լինի թէ Աստուծոյ ակնարկը նոցա վրայ է։ Եւ քանզի ժողովուրդը միաբանութեամբ զղջացած էր արդէն, այդ պատճառաւ Աստուած յայտնեց թէ կը յօժարի գնալ[1]։

Քանի ի միտ առ թէ Մովսէս մինչև այն ժամանակ իրեն համար որ և է բան խնդրած չը լինելով միշտ ժողովրդեան լաւութիւնն ու հանգիստը կը խնդրէր, Աստուած ժողովրդեան յանցանքը ներելուն պէս՝ սիրտը հանդարտելով այս անգամ իրեն համար խնդիր կը մատուցանէ, բայց չէ թէ մարմնաւոր մեծութիւն, աշխարհային հարստութիւն, և կամ կենաց երկարութիւն կը խնդրէ, այլ զԱստուած տեսնել կը փափաքի[2]։

Ի՞նչ կը խօսիս, ով Մովսէս, մտածէ թէ խնդրածդ ի՞նչ է։ Այո՛, սէրդ և բաղձանքդ կատարեալ է, բայց մարդը կարող չէ զԱստուած տեսնել այս աշխարհումս. Մովսէս կասէ, «եթէ տեսնել այս աշխարհումս. Աստուծոյ հաճոյ եմ, կը փափաքիմ զայն տեսնել, մինչև ցայսօր նորա շատ աքանչելիքը տեսայ, այս անգամ այդ աքանչելիքը գործող Տէրը կուզեմ տեսնել»։

1. Եւ ասէ, ես ինքնին երթայց առաջի քո. Ելից. ԼԳ. 14։

2. Ասդ՝ եթէ գտի շնորհս առաջի քո, ցոյց ինձն քո. Ելից. ԼԳ 13։

Պահանջումէդ եա մի՛ կենար, ո՛ Մովսէս, միայն թէ ժամանակը փոխէ. վասն զի դուն Աստուծոյ հաճոյ լինելով՝ փափաքդ պիտի կատարուի, բայց արքայութեան մէջ։ Եւ որովհետեւ այս աշխարհում զԱստուած տեսանել կարելի չէ, ուրեմն գոնէ նորա փառքը տեսանել կը փափաքի[1]։

Նայէ դուն, ինչպէս որ մինչեւ այն ժամանակ Մովսէսին եղած ողորմութիւնն ո՛չ ոքի եղած չէր, նմանապէս ո՛չ ոք նորա նման զԱստուած տեսանելու համար փափաք յայտնելու համարձակած էր։ Սակայն Մովսէս ամենէն աւելի Աստուծոյ հաճոյ եղած լինելով[3] նորա խնդիրքն ընդունուեցաւ. միայն թէ՝ փոխանակ երեսը ցուցնելու, որ անկարելի է, զայն մի ժայռի ծերպում զետեղելով՝ անցած ժամանակ նորա հետքին փառքը կը տեսանէ[2]։

Ապա կը հրամայէ Մովսէսի որ յառաջագոյն խորտակած տախտակներուն նման երկու տախտակ ևս շինէ, զորս իրեն հետ առնելով Սինա լեռը ելնէ։ Մովսէս ըստ հրամանին՝ երկու տախտակները կը շինէ, զորս իւր հետ առած լեռը կելնէ,

1. Եւ ասէ (Մովսէս) ցոյց լինձ զփառս քո. Ելից. ԼԳ. 18։

2. Ասէ Տէր ցՄովսէս, ճանաչեմ զքեզ քան զամենեսին. Ելից. ԼԳ. 12։

3. Եգից զքեզ ի ծերպ վիմին . . . տեսցես զյետոյն իմ, բայց երեսք իմ քեզ մի՛ երեւեսցին. Ելից. ԼԳ 22։

և յիշեալ քարերը իրեն իրը յենարան գործածելով այնտեղ կը կանգնի։ Աստուած ամպոց վրայ իջնելով անտի անցած ժամանակ կը յայտնէ իւր իշխանութիւնը. կը յայտարարէ թէ ինքն է ողորմած, երկայնամիտ, արդար, ճշմարիտ հաւատարիմ և անհունապէս գթած և բարերար[2]. որպէս զի բոլորին յայտնի լինի, և մարդիկ նորա ողորմութեան ապաւինելով չը յուսահատին, և արդարութենէն վախնալով մեղքէ հեռու կենան։

Վասն զի ո՛չ թէ Մովսէս ինքնին կը խօսի և կը յայտնէ զայս, այլ Աստուած նոյն ինքն, ինչպէս որ կը կարդանք. Թուոց. ԺԴ. 17, Մովսէս քարին ծերպէն Աստուծոյ փառահեղ աէրութիւնն ու մեծութիւնը տեսնելով՝ իսկոյն գեթ նամած երկիւղած ժամանակ երեսը կը լուսաւորի։

Թէպետև այսպիսի մի շնորհ ու պարգև միայն Մովսէսին տրուեցաւ, բայց այսու հանդերձ նոքա՝ որք կը փափաքին Աստուծոյ փառքն ու մեծութիւնը տեսանել, թող մտադրութեամբ արա-

2. Եւ կարգաց Տէր Աստուած՝ գթած և ողորմած, երկայնամիտ՝ բազումողորմ և ճշմարիտ, որ պահէ զարգարութիւն և առնէ զողորմութիւն ի հազար ազգս, բառնայ զանօրէնութիւնս և զմեղս. և ո՛չ անպատառ առնէ զպատուհասն, այլ զանօրէնութիւն Թիւնս հարց յորդիս և յորդւոց յորդիս, մինչև յերիս և ի չորս ազգս. Ելից. ԼԴ. 6։

բածոց վրայ նային. վասն զի արարածը՝ Արարչին հնազքը լինելով՝ Աստուածոյ գոյութեան, կարողութեան և գիտութեան ապացոյցները անոնց վրայ կը տեսնուին, ինչպէս որ առաջին գարու մեծատաններորդ հարցման մէջ յիշուեցաւ։

Իսկ հոգևոր մտքով սուրբ Նրուսապէմի բոլոր անօրինական տեսիքը՝ Քրիստոսի Փրկչին մերոյ ոտնակոխ սրբավայրերը լինելով՝ Աստուծոյ կարողութիւնը, իմաստութիւնը, մարդասիրութիւնը և ձրիապէս պարգևած շնորքն և ողորմութիւնը այն տեղերուամ լուռւի կը յայտնուին։

Որովհետև Յիսուս Քրիստոս՝ թէև իբրև աղքատ և պանդուխտ Բեթղեհեմ քաղաքուամ մի այրի մէջ ծնաւ և անասնոց մսուրի մէջ դրուեցաւ, բայց միևնոյն ժամանակ հրեշտակաց բազմութիւնը երկնքէն իջած՝ նորա ծնունդը հովիւներուն աւետելով, Աստուծոյ ողորմութեան գուռը բացուած կը համարուի բոլոր մարդկային ազգի համար[1]։

Թէպէտ Գողգոթա լերան իբրև յանցաւոր խաչին վրայ բարձրացաւ, սակայն խոցոյն արիւը երկնքուամ լոյսը առ ինքն ձգելով՝ բոլոր աշխարհը խաւարի մէջ թողուլն, և երկիրը դողալով՝ վէմերու պատառիլն, և գերեզմանները բացուելով՝

1. Եւ հրեշտակ Տեառն երևեցաւ նոցա, և փառք Տեառն ծագեցան առ նոսա, Ղուկ. Բ. 9։

բազմաթիւ սրբոց յարութիւն առնուլն՝ Աստուածոյ մեծ և ահաւոր զօրութիւնը կը յայտնեն։

Ուր կամաւ սուրբ խաչին վրայ հօր Աստուածոյ ձեռքը աւանդելով իր հոգին, թէև գերեզմանի մէջ թաղուեցաւ, բայց երեք օրէն յետոյ յարութիւն առնելով՝ Աստուծոյ փառքն ու զօրութիւնը բոլոր աշխարհի յայտնուեցան, ինչպէս որ գրուած է սուրբ Աւետարանի մէջ։

Ուրեմն, ահա այս կերպով ով որ կը փափաքի Աստուածոյ փառքը տեսնելով՝ նորա փառօքը փառաւորուիլ, թող յիշեալ սուրբ տեղերուն հոգւոյ աչքով նայի, և կատարեալ հաւատքով ու անկեղծ սիրով երկրպագութիւն մատուցանէ։ Վասն զի, ինչպէս որ Մովսէս վերոյիշեալ քարը իրեն ապաւէն և պատսպարան առնելով՝ Աստուծոյ անցնելու ժամանակ նորա փառքը տեսաւ պէս՝ դէմքը լուսով պայծառացաւ, նմանապէս քրիստոնեայք՝ այդ սուրբ տեղեաց մէջ մարդկային ազգի փրկութեան Յիսուսի կրած չարչարանաց վրայ խորհած ժամանակ՝ իրենց հոգին լուսով կը պայծառանայ, և իրենց հաւատքին համեմատ հոգևոր մխիթարութիւն ստանալով կը փառաւորուին։

Վասն զի Սինա լեռը՝ սուրբ Նրուսաղէմի, յիշեալ քարը՝ որու ծերպում Մովսէս պատսպարուեցաւ, սուրբ տեղեաց, և անկէ Աստուածոյ անցնիլը՝ Յիսուսի Քրիստոսի մարդանալով աշխարհ գալուն օրինակ և նկարը կիմացուի։ Այժ

պատճառաւ քրիստոնեայք պարտական են Յիսուսի կրած չարչարանաց վրայ միշտ խորհելով [1] մեզքէ հեռու կենալ և ի սէր նորա պատահած վիշտերու անտրտունջ համբերել, որպէս զի Աստուծոյ արքայութեան անվախճան փառաց արժանանան [2] և Աստուածային տեսութիւնը վայելեն:

Մովսէս այս երկրորդ անգամ ևս Սինա լեռան վրայ քառասուն օր և քառասուն գիշեր ճեաց առանց անուշգի. և առաջին տախտակաց վրայ գրուած տասնաբանեայ օրէնքը Աստուած նորէն գրեց Մովսէսի տարած տախտակներուն վրայ, ինչպէս նաև ուրիշ զանազան պատուիրանները տուաւ, հրամայելով որ զանոնք ևս գրի առնէ: Այս տեղ Իսրայէլի ժողովրդեան հետ Աստուծոյ արած ուխտը նորոգուեցաւ: Ցետոյ Մովսէս օրինաց տախտակները ի ձեռին լեռնէն վար իջաւ:

Հիմայ լաւ խորհէ առաքինի և արդար մարդուն ու մեղաւորին միջև եղած ահագին տարբերութեան վրայ: Մովսէս՝ որ արդէն Աստուծոյ հնազանդ էր, ծոմապահութեամբ Աստուծոյ փառքը տեսնելու արժանի կը լինի, քանի որ ծոմապահութիւնը՝ մարդը հրեշտակային պատուոյն կը

1. Քրիստոսի չարչարելին մարմնով վանն մեր, և դուք ի նոյն միտս վառեցարուք. Ա Պետ. Գ. 1:

2. Եթէ չարչարանացն կցորդ լինիցիմք, և վաստացն հաղորդ լինելոց եմք. Հռոմ. Ը. 17:

հասցնէ: Զոր օրինակ Ադամ դրախտում հնազանդեաց ժամանակ ոչ միայն հրեշտակաց հետ ուրախ և երջանիկ էր [1], այլ նաև Աստուածային տեսութեամբ և փառօք լուսաւորուած կը հըրճուէր [2]. բայց վասն որկրամոլութեան պատուիրանազանց լինելու հակամէտ՝ պահեցողութիւնը աւրելուն պէս՝ տիրական փառքէն զրկուելով այն աստիճան թշուառացաւ, որ ամօթէն Աստուծոյ երեսը չերևելու համար ծառոց միջև պահուելու վայր կորոնէ ի զուր [3]:

Մի՛ զարմանար, քանզի ինչպէս որ յանցաւոր մարդը դատաւորին առջև երևելու կը վախնայ, նմանապէս մեղաւորը Աստուծոյ առջև երևելու վախնալով խոյս տալու տեղ կը փնտռէ, քանի որ մարդկային միտքը անկաշառ վկայէ և միանգամայն դատախազ իւր մէջ:

Արդ՝ եթէ Մովսէս առաքինի լինելով այն աստիճան համարձակութիւն առաւ, որ տակաւին

1. Ի դրախտին վայելուչութեան ուրախանայը ընդհրեշտակս. Շար:

2. Ցորում ցնծայը զուարճացեալ անախորձան խնդութեամբ, քանզի զԱստուած տեսանէը մինչ խոնարհեալ ի դրախտին, յորմէ զլուսոյն ճառագայթ տպաւորէը ի յինքեան. Շար.

3. Եւ թագեան Ադամ և կին իւր յերեսաց Տեառն Աստուծոյ՝ ի մէջ ծառոց դրախտին. Ծննդ. Գ. 8:

երկրիս վրայ եղած ժամանակ Աստուծոյ լուսաւորչական կերպարանքը տեսնելու իզ՞ ունեցաւ, երբեմն ամէն առաքինի մարդու սիրտը մաքուր և միտքը Աստուծոյ շնորհօքը լուսաւորուած՝ ամէն պարագայում հոգևոր համարձակութիւն կարող է ունենալ[1]։

Արդարև, մինչև որ Աստուծոյ յատուկ մի յայտնութիւնը չեղած՝ մարդս կարող չէ իրեն՝ արքայութեան ժառանգորդ լինելը գիտնալ, բայց սիրտը մեղայ ապաւէն զերծ և մաքուր պահելը՝ Աստուծոյ արքայութեան արժանի լինելու մասնաւոր մի նշանն ու ապացոյցն է[2]։

Հատուած Ը.

Մովսէս՝ երկրորդ անգամ քառասուն օր եւ քառասուն գիշեր լերան վրայ մնացած ժամանակ՝ ժողովուրդը քանակին մէջ ինչ վիճակ ունէր։

Պաւ. Թէպետև առաջ Մովսէս լերան վրայ գտնուած ժամանակ հնազանդութեան շաւղէն խոտորելով, ժողովուրդը կուռք պաշտեց, բայց

1. Եթէ սիրտը մեր դմեզ ո՛չ ատգաստնեցուցեն, համարձակութիւն ունիմք առ Աստուած. Ա. Յովհ. Գ. 21։

2. Երանի այնոցիկ, որք սուրբ են սրտիւք, զի նոքա զԱստուած տեսցեն. Մատթ. Ե. 8։

այս անգամ հնազանդութեամբ և ոգով կապաւէ։

Եւ իրաւիկա Մովսէս Աստուծոյ փառքը տեսնելուն՝ երեսը լուսաւորուած էր, բայց ինքը չէր գիտեր։ Ուստի լեռնէն իջած ժամանակ՝ երբ Ահարոն և ժողովուրդը տեսան զայն, վախցան մօտը գնալու, մինչև որ նա կոչեց ղիրենք և Աստուծոյ պատուէրները մի առ մի պատմեց նոցա։ Այնուհետև ժողովրդեան հետ խօսած միջոցին երեսը կը ծածկէր, որպէս զի չը վախնան, բայց վկայութեան խորանը մտած ժամանակ քողը կը վերցնէր։ Մովսէսի երեսաց լուսաւորութիւնը՝ ոչ թէ միայն իրեն փառք էր, այլ և ժողովրդեան էլ օրինաց հնազանդելու և երկիւղ կը ներշնչէր, որ օրինաց հնազանդութեան։

Այնուհետև Մովսէս՝ որովհետև ըստ հրամանին Աստուծոյ պէտք է շինէր տապանակը, վկայութեան խորանը, քահանայական զգեստները և այլ սոցա վերաբերեալ բաները, ժողովրդեան հրաւէր կը կարդայ որ իւրաքանչիւր անձ՝ իւր կարողութեան չափով ընծայ բերէ, որպէս զի վերոյիշեալ պէտքերը իրենց ընծայաբերութեամբ և տուրքով հոգացուին, բայց ո՛չ թէ սակմամբ կը պահանջէ, այլ՝ Աստուծոյ հրամանը յայտնելով իրենց կամաց կը թողու, որ բռնութիւն ի գործ դրած չը լինի[1]։

1. Ամենայն որ զիարդ և յօժարեսցի և սրտի իւրում բերցէ պատուղ Տեառն. Ելից. Լ. Ե. 5։

Ժողովուրդն էլ, այլ և կին, իրենց կարողութեան համեմատ կը նուիրէ ոսկի, արծաթ, թանկագին քարեր, պղինձ և այլ ինչ որ պիտանի է, այն աստիճան առատութեամբ, որ հարկ կը լինի ազդարարել թէ այլ ևս չը բերուին, իսկ նոքա, որոնք կարողութիւն չունէին ո և է մի բան նուիրելու, անձամբ կաշխատէին. նմանապէս հնարագէտ և արուեստապետները, այլ թէ կին, իրենց յօժարութեամբ կը գործէին սոյն աստուածահաճոյ գործին մէջ։

Այս գործերուն վրայ Աստուած երկու անձեր յատկացնելով պիտութիւն և հնարամտութիւն կը պարգեւէ նոցա, որոնք շինեցին տապանակն ու խորանը, և որոց միոյն անունն է Բեսաղիէլ, իսկ միւսին՝ Ողիաբ. ինչպէս որ այս նիւթոց 36-րդ գլուխն մինչև 40-րդ գլուխը գրուած է։

Հարցո՛ւմ թ.

Տապանակ ուխտին ի՞նչ էր։

Պաս. Անփուտ փայտէ շինուած մի անուշ էր, որուն երկարութիւնը երկուք ու կէս, լայնութիւնն ու բարձրութիւնը մէկ ու կէսական կանգնուն էր. ներսն ու դուրսը զուտ ոսկիով պատած լինելով՝ չորս անկիւնները ձուլածոյ ոսկեղէն օղակներ կային, որոց մէջ անփուտ փայտէ և ոսկեով պատած հաստատուն թևեր անցուած էին.

այս թևերէն բռնելով կը վերցնէին և կը տանէին զայն։

Դարձեալ, գրուած տեղում գեանին չը դպելու համար, վարի կողմը չորս անկիւններում իրեւ ոտք կլոր անիւներ կային, որոց վրայ կը կենար։ Վրան էլ ոսկեղէն մի կափարիչով գոցուած էր, որ քաւութիւն կը կոչուէր[1]։ Սորա վրան ևս երկու կողմը իրարու դիմաց հրեշտակի ձևով մէկ մէկ Քերովբէներ կային, որոնք դէպի վար քաւութեան վրայ կը նայէին։

Այս քերովբէքը չորսական թևեր ունենալով, որոց վարի երկուքը քաւութեան վրայ իրեւ հովանի տարածուած էին, իսկ միւս երկու վերի թևերը վերէն տարածուելով կուգային և միմեանց հետ կը կցուէին, որոց վրայ՝ Աստուած իրեւ թէ իւր աթոռին վրայ կը նստէր. և անուշկին կափարիչն էլ՝ (քաւութիւնը) կը ծառայէր իրեւ պատուանդան նորա ոտից, յորմէ Աստուած կը խօսէր Մովսէսի հետ[2]։

Ձիշեալ անուշկին մէջ կը պահուէին հետեւեալք. Տաննաբանեայ օրինաց տախտակները, պատաստանական և այլ ընկերական, ու սովորու-

---

1. Եւ արարին զքաւութիւնն է վերուստ տապանակին. Ելից. Լէ. 6։

2. Որ նստիս է քերովբէս և հայիս յանդունդս. Դանիէլ. Գ. 54։

Թեանց վերաբերեալ օրէնքները զրոս Մովսէս գրած էր։ Նմանապէս ոսկեղէն մի սափորի մէջ մանանայ, Ահարոնի գաւազանը, որ ծաղկելով՝ պտուղ տուած էր—ընկոյզ[1]. և ոսկեղէն բուրվառն էլ՝ Տապանակին և կամ Սրբութիւն Սրբոցին մէջ կը պահուէին[2]։ Ցիշեալ անտուկը՝ Տապանակ վկայութեան կամ Տապանակ կտակարանաց կոչուեցաւ։ Վասն զի նորա մէջ պահուած իրերը՝ իբրև վկայ՝ Աստուծոյ զօրութիւնը, ողորմութիւնը և Իսրայէլի հետ արած ուխտը կը յայտնէին, այս պատճառաւ այն վրանը ևս յորում Տապանակը կը պահուէր, խորան վկայութեան կոչուեցաւ։

Հարցում ժ.

Ի՞նչ ձեւ ունէր վկայութեան խորանը։

Պաս. Երկարութիւնը երեսուն, լայնութիւնն ու բարձրութիւնը տասնական կանգուն էր, երկք կողմերը տախտակով պատած։ Բայց ոչ թէ միատեսակ, այլ՝ իւրաքանչիւր տախտակ մէկ ու կէս կանգուն լայնութեամբ. որպէս զի չուելու ժամանակ քակելով յաջորդ իջևանում նորէն սարքին։

---

1. Եւ ահա գալարացաւ գաւազանն Ահարոնի. Թուոց. ԻԷ. 8։

2. Որ կայիւը սրբութիւն սրբութեանց, յորում կայր բուրվառն ոսկի և արկղն կտակարանաց. Եբրայ. Թ. 3։

Քսան տախտակ՝ հարաւային կողմը՝ քսան տախտակ հիւսիսային, իսկ վեց տախտակ միայն՝ արևմտեան կողմը, և սոցա բոլորն էլ ծխնիով և պարզնակով իրարու կցուած էին ամրապէս, երբ սալքուէր խորանը։

Երկու անկիւնները մէկ մէկ սիւն կար տախտակները բռնելու համար, որոնք ամէնքը անփուտ փայտէ շինուած էին և ոսկիով պատած։ Ներսը դուռն արևելեան կողմը լինելով, միայն այն կողմէն լոյս կառնէր, և վրան զրոս թաղանթներով ծածկուած էր։ Առաջին թաղանթը՝ կապոյտ, ծիրանեգոյն և կարմիր բեհեզէ։ Երկրորդը այծի մազէ հիւսուած էր։ Երրորդը՝ այծի մորթէ էր, որ դեղինի զարնող կարմիր գոյն ունէր։ Չորրորդը բոլորովին կապոյտ ներկուած մորթ էր։ Սոքա ոչ թէ միակտուր էին, այլ՝ լայնութեամբը բաժանուած լինելով, ոսկիէ կոճակով իրարու կապուած էին, որպէս զի դնելու և վերցնելու դիւրութիւն լինի։

Ներսէն ներսի կողմը՝ լայնութեամբը չորս ոսկիով պատած սիւներ կային, որոցմէ գոյնզգոյն վաճառքին վարագոյներ կախուած էին, և այս վարագոյրներուն առաջին բաժնին ներսի կողմը՝ Սրբոցն Սրբոց կը կոչուէր, վասն զի Տապանակը այնտեղ կը պահուէր։ Ո՛չ ոք կարող էր անդ մտնել, բայց միայն մեծ քահանայապետը, տարին մի անգամ քաւութեան օրն կը մտնէր

անդ և կաղօթէր Աստուծոյ[1]: Սորա դրսի կողմը՝ Սրբութիւն կոչուեցաւ:

Այս մասին (սրբութիւն) հիւսիսային կողմն էր Առաջաւորութեան սեղանը, իսկ հարաւային կողմը՝ Խնկոց սեղանը: Նմանապէս նոյն վարագոյրին առջև ոսկեղէն աշտանակը կը դրուէր, որ եօթը ճրագարաններ ունենալով, որոց իւրաքանչիւրին վրայ կանդեղի տեղ կար, զորս կը վառէին ամէն գիշեր: Նոյնպէս խորանին դրան առջև հինգ ոսկեպատ սիւներ կային, որոցմէ թանկագին վարագոյրներ կախուած էին, որպէս զի ներսի կողմը չերևի դրսէն նայողներուն:

Իսկ խորանի դրսի կողմը՝ շուրջանակի մի բացօդեայ բակ կար, որ հարիւր կանգուն երկայնութիւն և հիսուն կանգուն լայնութիւն ունէր, որուն երկու կողմերը՝ երկայնութեամբը քսան սիւներ կային, և նաև կողմը՝ լայնութեամբը տասը սիւներ, որոնք հինգական կանգուն բարձրութիւն ունէին, որոցմէ վարագոյր կախուելով՝ խորանը այդ բակով շրջապատուած կը լինէր, և յիշեալ սիւնները բոլորն էլ անփուտ փայտէ և պղնձապատ էին:

Յիշեալ բակում կը գտնուէր ողջակիզաց Սեղանը, և պղինձէ աւազանը, զոր ջրով կը լեցնէին

1. Ցառաջին խորանն մտանէին քահանայքն. Եբրայ. Թ. 6:

և այդ ջրով զոհերը կը լուային: Նոյնպէս քահանայք՝ իրենց պաշտօնին սկսելու ժամանակ ձեռներն ու ոտքերը կը լուային: Սոյն բակը՝ երկու մասանց բաժանուած էր, որոց մէկը քահանայից յատկացած էր, յորում կը զոհէին: Իսկ երկրորդում ժողովուրդը կանգնելով՝ քահանայից զոհագործութիւնը կը տեսնէր: Քանզի ժողովուրդը խորանը մտնելու արտօնութիւն չունենալով, միայն յիշեալ հրապարակին վրայ կարող էին կանգնել:

Հարցո–ՀՒ.

Վկայութեան խորանին մէջ քանի՞ սեղան կար:

Պաս. Երեք. առաջին Սեղանը՝ երկու կանգուն երկարութիւն, մի կանգուն լայնութիւն և մէկ ու կէս կանգուն բարձրութիւն ունէր, որ անփուտ փայտէ շինուած և ոսկիով պատած էր, ու չորս ոտք ունէր, որոց վրայ կը կենար: Սա՝ Սրբութիւն Սրբութեանց կոչուած տեղւոյն առջև գտնուելուն պատճառաւ, սեղան Երեսաց կամ Առաջաւորութեան սեղան անուանեցաւ, որպէս զի հասկանան թէ իբր Աստուծոյ ներկայութիւնը կը կենայ: Սորա վրայ հաց դրուելուն համար սեղան Հացի ևս կոչուեցաւ:

Վասն զի՝ Իսրայէլի 12 ցեղերուն անուամբ տասներկու հաց կը դրուէր այդ սեղանին վրայ, որոնք անխմոր էին և ոսկեզօծ թղթով փաթա-

թաւած, և որոց վեցը՝ սեղանին մի անկիւնը և վեցը՝ միւս անկիւնը իրարու վրայ կը դնէին, այս հացերը ամէն շաբաթ օր փոխելով թարմ հաց կը դրուէր, և առաջիններուն միայն քահանայք կրնային ուտել, իսկ ժողովուրդը արտօնութիւն չունէր այդ հացէն ուտելու։ Այս սեղանին վրայ աղ և խունկ ևս Աստուծոյ կը նուիրէին։

Երկրորդն էր Յնկոց սեղանը կամ Յնկակալը, որ՝ մէկ կանգուն երկարութիւն, մէկ կանգուն լայնութիւն, և երկու կանգուն բարձրութիւն ունէր, անփուա փայտէ և ոսկիով պատած էր, որոյ վրայ առաւօտ և երեկոյ անուշահոտ նիւթերէ բաղադրուած խունկ ծխելուն համար սեղան Յնկոց անունը ստացաւ։

Երրորդն էր Ողջակիզաց սեղանը, որուն երկարութիւնը և լայնութիւնը հինգական կանգուն, բարձրութիւնը երեք կանգուն էին, վրան բաց՝ և ամբարի ձև ունէր, անփուա փայտէ և պղինձով պատած էր։ Ասոր մէջ կէս խորութեամբ պղինձէ մի կաճակալ կը դրուէր, որուն վրայ ողջակէզը այրելուն համար Ողջակիզաց սեղան կոչուեցաւ, և որուն տակը միշտ և հանապազ կրակը անպակաս լինելուն՝ բակին մէջ կը գտնուէր, որպէս զի կրակին ծուխը և գոհին հոտը՝ յօդս ցնդին։

Սակայն մի՛ կարծեր թէ Ցապանակին, խորանին և սեղաններուն զարդն ու կահքը միայն այսչափ էին, այլ նոցա դեռ ուրիշ այլ և այլ

պարագաներն ու գործիքները Աստուածաշունչին մէջ նկարագրուած են։ Արդ՝ Աստուծոյ պատուէրին համեմատ այս բոլորը կատարուելէ ջինքն Ղեւտացիներուն յանձնուեցաւ, որոնք անոր ծառայութեան յատկացած էին։

Եւ ահա իսկոյն կամօքն Աստուծոյ լուսաւորամպը երեւելով Աստուածային փառքով աքանչելամպը կը լուսաւորուի այն, այնպէս որ Մովսէսն կը լուսաւորուի այն, այնպէս որ Մովսէս ներս մտնելու անկարող կը լինի։ Սոյն հրաշալի ամպը միշտ խորանին վրայէն անպակաս լինելով, գիշերները բանակին լոյս կուտար, իսկ ցերեկները հովանի և շուք, և երբ խորանի վրայէն վերանար, այն ժամանակ կը չուէին։

Ներոյիշեալ նիւթերու նկատմամբ և հարկ եղած պատուէրներէն զատ, Ղեւտացւոց գլխին առաջին գլխէն մինչեւ ուրերորդ գլուխը, զոհերու և Իսրայէլացւոց յատուկ ծէսերու և այլ սովորութեանց վերաբերեալ զանազան պատուէրներ ևս ստանդուած և գրուած են։ Արդարեւ հինօրինաց մէջ Աստուծոյ նուիրած զոհերու և ընծայից մասին տեսակ տեսակ պատուէրներ և պայմաններ նշանակուած են, բայց կարող ենք չորս գլխաւոր տեսակներու վերածել զայնս, և համառօտակի ասա ևս նշանակել։

Առաջին՝ ի պատիւ Աստուծոյ անհուն մեծութեան ողջակէզ կամ պատարագ կը մատուցուէր։

Երկրորդ՝ իւրաքանչիւր անձ՝ պարտաւոր կը մատուցանել զոհ վասն մեղաց, իւր մեղքերուն քաւութիւն գտնելու համար։ Երրորդ՝ Աստուծոյ արած բարերարութեանց նկատմամբ շնորհակալութեան համար զոհ կը մատուցանէին, որ կը կոչուէր խաղաղական։ Չորրորդ՝ ինչ խնդիրք և կամ բարիք որ մի անձ Աստուծմէ ստանալ կը փափաքէր, պարտ էր կատարմանը համար զոհ մատուցանել, որ կը կոչուէր խաղաղարար։

Հարց. ԺԲ.

Ղեւտացիները որ ցեղէն էին։

Պաս. Յակոբ նահապետի երրորդ որդւոյն՝ Ղեւիի ցեղէն. այս պատճառաւ Ղեւտացի կոչուեցան։ Ահարոն ևս նոյն ցեղէն լինելով՝ Մովսէս Աստուծոյ հրամանաւ Ահարոնը և նորա Նաբատ, Աբիուդ, Ղազարայ և Իթամար որդիքը խորանին դուռը տանելով զանոնք կը լուայ, և քահանայական զգեստները նոցա հագցնելէն ետքն՝ օծելով կը քահանայացնէ զանոնք, ապա զոհ մատուցանելով կը պատուիրէ որ եօթն օր խորանէն բնաւ դուրս չելլեն։

Երբ եօթն օրերը վերջացան, Մովսէսի հրամանաւ Ահարոն և նորա որդիքը, ինչպէս նաև ժողովրդեան ծերերը խորանին առջև զոհ կատարելով՝ ողջակիզաց սեղանին վրայ կը գնեն, և Ահա-

րոն խորանը մտնելով կը խնկարկէ. յետոյ դուրս ելլելով ժողովրդեան համար աղօթելու ժամանակ, իսկոյն աքանչելեօք խորանէն բոց ելլելով սեղանի վրայ եղած ողջակէզը կայրէ ու մխիթը կը դարձուներ։

Ժողովուրդը սոյն հրաշքը տեսնելով մեծ երկիւղիւ և դողութեամբ կերկրպագեն Աստուծոյ, վասն զի այդ երևոյթը զոհին ընդունելի լինելուն նշանակ էր։ Միշեալ Սեղանին տակ միշտ փայտ դնելով հրաշիւք յառաջ եկած կրակը անշէջ կը պահէին ու երեկոյ և առաւօտ նորա վրայ զոհ կը մատուցուէր։

Արդարև այն օր Մովսէս, Ահարոն և բոլոր Իսրայէլացիք խիստ ուրախ եղան։ Քանզի Աստուծոյ հրամանին համեմատ վկայութեան խորանը աւարտելով՝ Տապանակ ուխտին և սեղանները՝ իրենց տեղերը դրուեցան. Ահարոն՝ քահանայապետ, և որդիքը քահանայ եղան, և զոհը Աստուծոյ հաճոյ և ընդունելի եղաւ, որ իրենց ուրախութիւնը կը բազմապատկէր։

Սակայն՝ ինչպէս որ Աստուծոյ ողորմութեան և պարգեւաց համար ուրախանալ արժան է, նմանապէս նորա արդարութենէն երկնչիլ պարտ է, որ չը լինի թէ նորա հրամանին հակառակ մի բան պատահի գիտութեամբ թէ սխալմամբ, ինչպէս որ իրօք պատահեցաւ։

Վասն զի, քահանայք՝ որ առաւօտ և երեկոյ

խորանին մէջ խունկ կը ծխէին, պարտական էին հարկ եղած կրակը զոհի սեղանին կրակէն դնել իրենց բուրվառում։ Բայց նոյն օրը երեկոյ խընկարկութեան ժամանակ Ահարոնի երկու որդիքը՝ Նադաբ և Աբիուդ՝ անուշադրութեամբ փոխանակ զոհի սեղանին կրակէն դնելու, ամպագարանօք ուրիշ կրակ դրին իրենց բուրվառում։

Եւ երբ կը խնկարկէին, յանկարծ սեղանէն կրակ ելնելով զանոնք այրեց, որոնք իսկոյն մեռան[1]. սակայն զարմանալին այս է որ իրենց մարմինն ու զգեստները չայրելով՝ իրենց նախկին վիճակում կը մնան անպարտ։ Ցիրաւի, այս մասին Ահարոնի, Եղիազարի և Իթամարայ սրտերը խիստ շատ ցաւեցան, բայց Մովսէս զանոնք մխիթարելով թոյլ չը տար որ սուգ բռնեն։ Այս ահաւոր դէպքը՝ ո՛չ միայն միւս քահանայից, այլ և բոլոր ժողովրդեան էլ մի երկիւղից լեցաւ եղաւ։

Այսուհ մեծ ուշադրութեամբ խորհէ միանգամ. նոքա՝ որ հին օրինաց մէջ գիւ նոյն օրը իրենց քահանայական պաշտօնը վարել սկսած էին, փոքր մի պակասութեան համար մեռան, ինչ պէտք է լինի մեր վիճակը, եթէ մենք նոր օրինաց մէջ պակասութիւններ ունենանք։ Որովհետև

1. Մատուցին առաջն Տեառն հուր օտար, զոր ո՛չ հրամայեաց նոցա Տէր։ Եւ էլ հուր ի Տեառնէ և եկեր զնոսա. Ղևտ. ժ. 1։

մարդս՝ երբ իւր սրտին ու մտքին մէջ մեղապէս փափաքներ կը սնուցանէ, իւր բուրվառում որպէս թէ օտար հուր կը դնէ, որ անպատճառ պատժոյ և պատասխանատուութեան կարժանանայ։

Հարցում ԺԹ.

Իսրայէլի ընտանիքը որքան ժամանակ Սինա լերան առջեւը մնաց։

Պաս. Մի տարի։ Այդքան միջոցում վերոյիշեալ պատուէրք կատարուելէն զատ, զոհերուն վերաբերեալ պայմաններն ու զանազան նիւթոց նկատմամբ ուրիշ շատ պատուէրներ ևս Աստուած տուաւ Մովսէսի, ինչպէս որ Ղևտացւոց դէքերն 10 գլուխն մինչև քսան եօթը գլխոյն վերջը կը յիշատակուին։

Որովհետև Աստուած Աբրահամու խոստացած էր որ զինքը մեծ ազգ անէ, (Ծննդ. ԺԲ. 2.) այն պատճառաւ կը հրամայէ որ քսան տարեկանէն վեր եղող այր մարդիկը արձանագրուին, որպէս զի մեծ ազգ լինելը յայտնուի, նա մանաւանդ Թշնամի պատահած ժամանակ՝ նոքա պատերազմի պատրաստ գտնուին։

Իսրայէլացիք Յակոբ նահապետին տասներկու որդիներէն յառաջ եկած լինելով՝ տասներկու ցեղերը կը հաշուին, թէպետև Յովսէփի երկու որդիքը՝ Եփրեմ և Մանասէ Յակոբի որդւոց կարգը

գասուեցան, (ինչպէս որ երբոյդ գալու երեսուն իններորդ հարցման մէջ յիշուեցաւ) որով տասներեք ցեղ եղան, բայց Ղեւիի ցեղը՝ որ Ղեւտացի անուանեցաւ, քահանայութեան պատճառաւ միւս ցեղերէն զատուելով, ինացած ժողովուրդը՝ գալ ձեալ՝ երկոտասան ցեղ կ՚ըլլուեցաւ։

Մովսէս՝ նոցա միջէն մէկ մէկ անձ կընարէ, որոց իւրաքանչիւրը՝ իւր ցեղին վրայ իշխան և խօսքի տէր ազդեցիկ անձ լինելով՝ քսան տարեկանը անցած այր մարդիկը արձանագրէ։ Երբ այդ գործողութիւնը ըստ հրամանի կատարուեցաւ, նոցա թիւը հասաւ վեց հարիւր հազար և երեք հազար վեց հարիւր յիսուն անձանց, բացի կինեերէն, ծերերէն, մանուկներէն, գերիներէն, ծառաներէն և Եգիպտացիներէն, որոնք Իսրայէլի ժողովրդեան հետ միասին Եգիպտոսէն մեկնած էին։

Եւ որովհետև Աստուած Եգիպտացւոց անդրանիկները կոտորած ժամանակ՝ Իսրայէլացւոց անդրանիկ որդիքը իրեն սեփականեց[1], այս պատճառաւ Իսրայէլի ժողովուրդը՝ անդրանիկները Աստուծոյ տալու պարտական լինելով՝ տասներկու ցեղերուն մէկ ամսական երեխայէն վեր գտնուող անդրանիկները արձանագրուեցան, որոց թիւն էր

1. Սրբեա դու զնձ զամենայն անդրանիկս նախածին, որ բանայ զամենայն արգանդ ի մէջ որդւոցն Իսրայէլի, և մատղայ մինչև յանասունն, քանզի իմ է. Ելից. ԺԳ. 2։

քսան երկու հազար երկու հարիւր եօթանասուն երեք հոգի, որպէս զի նոքա խորանին ծառայութեանց յատկանան։

Բայց այս մասին ժողովրդեան տրանջանաց տեղի չը տալու համար, նոցա փոխան Ղեւտացիները ընդունելով կը հրամայէ որ նոցա մէկ մասական երեխաներէն վեր եղած այր մարդիկ համարեն, որպէս զի տասներկու ցեղից անդրանիկներու թիւը՝ որքան որ աւելի լինի, ժողովուրդը՝ իւրաքանչիւրին համար իբրև փրկանք հինգական սիկղ (որ քսան տիրեմ արծաթ կանէ, մէկ սիկղը չորս տիրեմ) Ղեւտացիներուն վճարէ։

Եւ Ղեւտացիներուն թիւը՝ քսան երկու հազար լինելով՝ երկու հազար եօթանասուն երեք անձանց փոխարէնը վճարեց ժողովուրդը Ղեւտացիներուն։ Սոցա քսան հինգ տարեկանէն վեր և յիսուն տարեկանէն վար եղող անձինքը արձանագրելով նոցա գումարը հասաւ ութ հազար հինգ հարիւր ութսուն անձանց, որպէս զի նոքա միայն խորանին ծառայութեանց յատկանան, իսկ քսան հինգ տարեկանէն վար եղողները հոգևոր պաշտօնէ ազատ լինին և յիսուն տարին անցնողն էլ ծառայութենէ քաշուելով՝ տեղն ուրիշը յաջորդէ։

Երբ ըստ վերոգրելոց խորանը ամէն կերպով վերջացաւ, տասներկու ցեղից երևելիքը խորանին ընծայ կը բերեն, բայց ո՛չ թէ ոմանք առաւել և

ամանք նուագ, այլ՝ բոլորին ընծայք միատեսակ էին և մի և նոյն գինը ունէին, որպէս զի իրենց միջև նախանձ յառաջ չըզայ։ Դարձեալ, չէ թէ մի օրուամ կը բերեն, այլ՝ կարգաւ. առաջին օրը Ծուռպայի ցեղը կը բերէ, երկրորդ օրը՝ Իսաքարայ. նոյնպէս մնացեալք։ Մովսէս ընծայքը կը յանձնէ Ղեւտացիներուն, որոց մեծերն էին Ահարոն և իւր որդիքը։

Որովհետև Աստուած՝ ժողովրդեան անպրաւնիկներուն փոխարէն Ղեւտացիները ընդունեց, այս պատճառաւ Մովսէսին կը հրամայէ որ զանոնք խորանին առջև բերէ, և այնտեղ ժողովուրդը՝ նոցա վրայ ձեռք դնելով՝ իրենց կողմէն Աստուծոյ ընծային զանոնք, որպէս զի նոցա հոգևոր պաշտօնի յատկանալը յայտնի լինի։

Իսրայէլացիք տակաւին Սինայի անապատումն էին, Աստուած պատուիրեց Մովսէսին որ Եգիպտոսէն իրենց ելնելուն երկրորդ տարւոյն առաջին ամսոյն չորեքտասաներորդ օրը Զատիկ կատարեն, ինչպէս որ յառաջագոյն արդէն պատուիրած էր։ Բայց նա՝ որ ննջեցեալ կը թաղէ, և կամ մեռելի կը մօտենայ, ըստ օրինաց եօթն օր անմաքուր համարուելով՝ չկարող էր Զատիկ անել կամ զոհել։

Այն ժամանակ ոմանք այդ կերպով անմաքուր լինելով՝ ուրնին ժողովրդեան հետ կարող չէ՞ին Զատիկ կատարել, հարցուցին Մովսէսի, որ առանց

Աստուծոյ հարցնելու նոցա հարցման չը պատասխաներ. չանզի մինչև ցայնժամ այդպիսի մի գէպք պատահած չէր։ Մովսէս դեռ չը հարցուցած՝ Աստուած կը յայտնէ թէ այնպիսի անմաքուր անձինք և կամ այնպիսիք, որոնք հեռի տեղ գտնուելով Զատիկ կատարուած տեղում չեն լիներ, թող երկրորդ ամսոյն տասն ու չորրորդ օրը Զատիկ անեն։

Որպէս զի ժողովուրդը լաւ և կանոնաւոր կերպով կառավարուի, Աստուծոյ հրամանաւ Մովսէս տասներկու ցեղերը չորս խումբերու կը բաժնէ (ամէն մի խումբ երեքական ցեղ) և վկայութեան խորանին շուրջը նոցա համար տեղ կը յատկացնէ։ Նմանապէս իւրաքանչիւր խումբին միջև տասիճան և պայմաններ կը սահմանէ, որպէս զի երեք ցեղերն մին՝ առաւել յարգի համարուելով՝ մնացեալ երկու ցեղերը անոր հնազանդին։

Արդ՝ խորանը մէջավայրն էր, Ղեւտացիները նորա շուրջը. արևելեան կողմը առաջին խումբը կը բնակէր, յորում Ծուդայի ցեղը պատուաւոր կը սեպուէր. իւր աջ կողմը Իսաքարայ ցեղը, իսկ ձախ կողմը Զաբուղոնի ցեղը ունենալով։ Երկրորդ խումբը՝ հարաւային կողմը կը մնար, յորում Ռուբէնի ցեղը՝ պատուաւոր էր, իւր աջ կողմը ունենալով Շմաւոնի, իսկ ձախ կողմը՝ Գադի ցեղերը։

Արևմտեան կողմը երրորդ խումբը կը բնակէր,

յորում Եփրեմի ցեղը ազդեցիկ էր, որուն աջ կողմը՝ Մանասէի, իսկ ձախը՝ Բենիամինի ցեղը կար։ Զորրորդ խումբը՝ խորանին հիւսիսային կողմը կը բնակէր, յորում Դանի ցեղը առաւել ազդեցութիւն ունէր, որուն աջ կողմը Ասերի ցեղը, իսկ ձախ կողմը՝ Նեփթաղիմի ցեղը կար։ Այս պատճառաւ Իսրայէլի բանակը՝ *հորս խումբերու կամ զունդերու բանակ կը կոչուէր։*

Ցետոյ՝ որովհետեւ Սինայէն պէտք է չուէին, կանոնաւոր կարգաւ շարժելու համար Մովսէս Աստուծոյ հրամանաւ երկու արծաթէ փողեր շինել կուտայ, որոց ձայնը լսուելուն պէս՝ կարգաւ ճամբայ ելնէին։ Փողերը հնչեցնել՝ քահանայից յատկացած լինելով, փող ազդեցութեան անուանեցան։

Վասն զի ո՛չ թէ միայն ելեկնելու ժամանակ, այլ եւ երբ Մովսէս ժողովրդեան մի գործ կամ հրաման յայտնել կամենար, փողերը կը հնչեցնէին, որպէս զի ժողովուրդը խորանին դրան առջեւ հաւաքուի։ Նաեւ կը հնչեցնէին, երբ ամառգլուխ տարեգլուխ, Զատիկ հանդիսաւոր զոհի եւ ուրախութեան օր լինէր, նա՛ մանաւանդ պատերազմի ժամանակ։ Այս պատճառաւ երկու փողեր բաւական չը լինելով՝ այնուհետեւ պէտք եղածին չափ փողեր շինուեցան հետզհետէ։

Հարց. Ի՞նչ։

Իսրայէլի բանակը ինչ կերպով կը շուէ։

Պաս. Որովհետեւ լուսեղէն ամպի շարժումը բանակին շարժման նշան կը համարուէր. մինչեւ այն ժամանակ ամպը՝ խորանին վրայ լինելով՝ անտի ելնելուն պէս՝ Ցուդայի վրանին վրայ կուգայ. Ահարոն զայն տեսնելով կակի ճանապարհի պատրաստութիւն տեսնել եւ երկու որդւոց հետ խորանը կը մտնէ. եւ տապանակը Սրբութիւն Սրբութեանցի վարագոյրով կը ծածկէր. սորա վրայ եւս ուրիշ ծածկոյթ կը ձգէին, որպէս զի զայն տեսնող անձինք անծածկոյթ տեսնելով չը մեռնին[1]։ Այնուհետեւ Ղեւտացիները գալով այն տեղ կը գուրմարուին, որ թէ վերը յիշուածները եւ թէ խորանին վարագոյրները, ձողերը, տախտակները եւ այլ կահ կարասիքը կառքով եւ կամ անձամբ իրենք վերցնեն տանին։

Բայց ո՛չ թէ ըստ ցիպոց՝ իւրաքանչիւրը ինչ որ կուզէ, զայն վերցնէ, այլ՝ այդ բոլորը տանելու ահմանուած անուններով կանխաւ Աստուած Մովսէսին յայտնած լինելով՝ (Թուոց. Դ.) ամէն մարդ իւր պաշտօնը գիտնալուն համար պատրաստ կը կենային։

---

1. Մի՛ մտանեցին վայրապարը տեսանել զսրբութիւն սրբութեանցն, զի մի՛ մեռանիցին. Թուոց. Դ. 20։

Նմանապէս Ցուդայի բանակը պատրաստուելով չուելու վրայ կը լինին, և քահանայք կոչին աղաղակել փողերը հնչեցնել։ Այն ժամանակ Մովսէս Տապանակին մօտը գալով. «Արի՛, ով Տէր, թող ցրուին թշնամիքդ թող փախչին քու ատելիներդ»[1]. ասածին պէս՝ զայն վերցուցնելու յատկացած անձինք խիստ մեծ յարգանօք և ուշադրութեամբ իրենց ուսերուն վրայ առնելով ամպի եռանդն ձամբայ կելլեն։ Մովսէս, Ահարոն և նորա երկու որդիքը Տապանակին հետ կը գնան։

Ցետոյ՝ Ցուդայի բանակը կը չուէ. որովհետև Տապանակէն անմիջապէս առաջ այս բանակը կը գնար։ Երկրորդ անգամ փողը հնչած ժամանակ՝ Ռուբէնի բանակը, երրորդին՝ Եփրեմի բանակը, իսկ չորրորդին՝ Դանի բանակը կը շարժէր ըստ ամենայնի կանոնաւոր կերպով, ինչպէս որ իրենց հրամայուած էր։

Ղեւտացիները՝ ինչպէս իջևաններուն, նոյնպէս և ճանապարհին մէջ չորս գունդերուն մէջտեղ կը գնային, որպէս զի Թշնամի հանդիպած ժամանակ զօրքերէն պաշտպանուին։ Սոքա բոլորը ո՛չ թէ խառն ի խուռն կերթային, այլ՝ իւրաքանչիւր դնդին և իւրաքանչիւր ցեղին միջև բաւա-

1. Արի՛ Տէր և ցրուեսցին թշնամիք քո, փախիցեն ամենայն ատելիք քո յերեսաց քոց. Թուոց. Ժ԰. 35։

կան տեղ գատուած կը յառաջանային առանց իրարու խառնուելու, վասն զի նոցա կառավարութեան համար հազարապետներ և հարիւրապետներ նշանակուած էին յատկապէս։

Նաև իւրաքանչիւր ցեղ՝ իրեն յատուկ նշանը կամ դրօշակն ունէր, և ամէն մէկն իւր դրօշակին եռանդն կը գնար։ Նը կարծուի թէ Ցուդայի բանակին նշանը՝ առիւծի, Ռուբէնի բանակին՝ մարդոյ, Եփրեմի բանակին՝ եզան, իսկ Դանի բանակին նշանը՝ արծուոյ կերպարանքով նկարուած էր։

Արդարև Իսրայէլացիք խիստ ուրախ տրամադրութեան մէջ Սինա լեռնէն մեկնեցան։ Որովհետև լուսաւոր ամպը իրենց կառաջնորդէր, ցերեկը՝ վրանի նման արևու տօթէն կը պահպանէր զիրենք, իսկ գիշերը՝ փայլուն մի լոյս կը սփռէր իրենց ճանապարհին վրայ։ Թշնամիէ երկիւղ կրելու պատճառ չունէին, վասն զի Աստուած իրենց հետ էր։ Իրենց կերակուրը՝ Մանանայ ամէն օր պատրաստ էր։

Քորեբ լերան վրայ հրաշիւք վիմէն բղխած ջուրը գետի նման իրենց եռանդն հոսելով կը գնայ[1], (ինչպէս որ երրորդ դարուն յիսուն վերջերը հարցման մէջ յիշուեցաւ)։ իրենց հանցելորդ հարցման մէջ յիշուեցաւ։

1. Ամենեքեան գնոյն հոգևոր ըմպելին արբին, զի ըմպէին հոգևոր վիմէն, որ երթայր գհետ նոցա. Ա. Կորն. ժ. 4։

դերձ չը հնանար, և ճանապարհի նեղութենէն իրենց ոտքերը չվնասուեր[1]։ Բացի այդ, կը կարծուի թէ մանուկները հետզհետէ մեծնալով՝ իրենց զգեստներն էլ երկարելով՝ իրենց հասակին և անձին կը յարմարէին[2]։

Հարց. ՃԼ.

Իսրայէլացիք Աստուծոյ երախտիքը ճանաչելով միշտ զոհ մատչին արդեօք։

Պաս. Զը ճնացին։ Թէպէտև Աստուծոյ բարերարութիւնքը շատ մեծ էին, բայց Իսրայէլացիք ապերախտ մի ազգ լինելով՝ նորէն զԱստուած բարկացնելով չարաչար պատժուեցան։ Վասն զի հազիւ երեք աւուր ճանապարհ գնալէ յետոյ, որպէս թէ Աստուած ի զուր անապատին մէջ զիրենք կը շրջեցնէ, կսկսին սաստիկ տրտնջալ, որով իսկոյն իրենց մէջ կրակ բորբոքելով բանակին մի մասը կայրէ կոչնչացնէ։

Ժողովուրդը զայս տեսնելով Մովսէսին կաղաչեն, նա էլ Աստուծոյ աղաչելով՝ նորա ազօթքով կրակը անհետացաւ, այս պատճառաւ տեղւոյն անունը Հրայրեաց կոչուեցաւ[3]։ Սակաւիկ մի

1. Հանդերձք քո ոչ մաշեցան ի քէն. և ոտք քո ոչ փոսպռիցեն զայն ամս քառասուն։ Բ. Օրէն. Ը. 4։

2. Տես ի մեկնութեան Կուռնելիոսի։

3. Եւ ժողովուրդն տրտնջէը չարաչար առաջի

անոի յառաջ գնալէն զկնի, իրենց առաջնորդող ամպը կանդնելով այնտեղ կիջեւանին։

Այս տեղ էլ կսկին գանգատ բառնալ ընդդէմ Մովսէսի և Աստուծոյ, բայց այս անգամ ոչ թէ ճանապարհի նեղութեանց պատճառաւ, այլ՝ իրենց որկրամոլութեան, ոչ թէ անօթի ճնալուն պատճառաւ, որովհետև մանանան պակաս չէր, այլ մեղքն կերակուրի փափաքելով, «ով մեզ միս կերակրէ պէտք է տայ» ասելով իրենց յոյսը Աստուծմէ կը կտրեն[1]։

Նա մանաւանդ իրենց սիրտը Եգիպտոսի վրայ էր, անդ իրենց կերած ձուկը, անկը, ձմերուկը, սոխն ու սխտորը յիշելով՝ մի անխելահաս մանկան նման՝ իրենց վրաններու դրան առջև նստած կուլային ու կողբային։ Ճշմարիտ է որ այս փափաքը իրենց հետ եկող Եգիպտացիներէն ծնեցաւ, բայց Իսրայէլացիք էլ նոցա հետևելով, միաբան նուէրեամբ սկսան սպիսել Մովսէսը, որ իրենց միս տայ։ Մեղայ ցանկութիւնը՝ տարափոխիկ հիւանդութեան կը նմանի, որուն առաջքը եթէ

Տեսան, և բորբոքեցաւ ի նոսա հուր. և եկեր զմասն ինչ բանակին. և կոչեցան անուն տեղւոյն այնորիկ հրայրեաց. Թուոց. ԺԱ. 1։

2. Եւ խառնեցաւազանն որ էր ի մէջ նոցա՝ ցանկացան զցանկութիւն, և նստեալ լային որդիքն Իսրայէլ և ասէին. ո՞ տացէ մեզ միս ուտելոյ. Թուոց. ԺԱ. 4։

իսկոյն չառնուի, հետզհետէ բոլորին կարող է փոխանցել բնականաբար։

Նա մանաւանդ մանանան, որ ինքնին իւղի և մեղրի համ ունէր, Աստուծոյ կամեցողութեամբ իրենց քմայ կուտար այն ամէն կերակրոց համը, որոց կը ցանկային, ուսաի այսպիսի պարագայում միս ինդրել՝ մեծ յանցանք էր։ Մանանայէն ձանձրանալով՝ սոխի և սխտորի ցանկալ՝ հոգևորը թողլով մարմնաւոր ցանկութեանց և նիւթական կոշտ բաղձանքներու անձնատուր լինել կը նշանակէ։

Այս տեղ լաւ խորհէ առաքինութեան և մեղութեան տարբերութեանց վրայ։ Մանանան երկինքէն իջնելով՝ հրեշտակաց կերակուր անուանեցաւ, նմանապէս առաքինութիւնը՝ Աստուծոյ շնորհօքը ի գործ դրուելով՝ հրեշտակաց պատուոյն և աստիճանին կը հասցնէ մարդը։ բայց մեղութիւնը կամ մեղքը սատանայի պաշտամնութենէ յառաջ եկած լինելով սատանայի դատապարտեալ վիճակին կը տարընացնէ զայն։

Ծիրաւի, ինչպէս վերը յիշուեցաւ, Մովսէսի աղօթքով թէև պատուհասող կրակը անհետացաւ, բայց ժողովրդեան ապօրինի խօսից վրայ նորա սիրտը այն աստիճան կոտրեցաւ, որ Աստուծմէն իւր մահը կը խնդրէ։ Սակայն մի՛ կարծիր թէ իրը բարկացած և նեղացած՝ պաշտօնի պարտականութիւններէն և գժուարութիւններէն խոյս

տալու և ազատելու համար իւր մահը կը խնդրէ, քաւ լիցի։ վասն զի Աստուծոյ հրամանին և բնութեան հակառակ է մեր մահը խնդրել, այլ այդ խնդիրքով ժողովուրդը կառավարելու համար իւր անկարողութիւնը միայն յայտնելով՝ պատասխանը Աստուծոյ կամաց կը թողու[1]։

Որովհետև Աստուած Իսրայէլի ժողովուրդը յանձնած էր Մովսէսի այնպէս, ինչպէս մանուկը մի ստնտուի կը յանձնեն, որպէս զի տանի զայն Աբեսեաց երկիրը։ Այս պատճառաւ, ժողովրդեան դատապարտութիւն ու պատիժը չուզէր, բայց դատապարտութեան և պատժոյ արժանի նոքա դատապարտութեան և պատժոյ արժանի ընթացքով զԱստուած կը բարկացնեն և Մովսէս Աստուծոյ բարկութենէն վախնալով, միշտ ազաչանաց մէջ գտնուելուն համար մինչև իւր մահը խնդրելու յանձնառու եղաւ։

Իսկ ամէնա եղիր Աստուծոյ ողորմութեանը թէ ինչպէս իմաստուն միջոցներով Մովսէսի իրատեսութեան և հսկողութեան ներքև օգնականներ կը յատկացնէ, որ նա շատ չը նեղուի, և ժողովրդեան էլ միս կուտայ, որպէս զի չասեն թէ Աստուած անկարող եղաւ մեզի միս տալու։

Արդ՝ Աստուած Մովսէսին կը հրամայէ որ

---

1. Եւ ասէ Մովսէս ցՏէր... ո՞չ կարեմ ես միայն կրել զժողովուրդս զայս, զի ծանրագոյն քան զիս է բանդ... սպան լաւ զիս՝ եթէ հաճոյ լոյծ քեզ։ Թուոց. ԺԱ. 11։

ժողովրդեան բանակաց ծերերէն Հօթանասուն հոգի ընտրելով խորանին առջև բերէ, որպէս զի նոցա իմաստութիւն տալով ժողովրդեան կառավարութեան գործին մէջ իրեն օգնեն: Նաև ժողովրդեան լուր տայ որ յաջորդ օրը միս ուտելու պատրաստ լինին: Սակայն ո՛չ թէ մէկ երկու կամ տասն օր, այլ՝ մի ամիս ձանձրանալու չափ միս ուտեն:

Մովսէս պատասխան կուտայ թէ նոցա մի ամիս ժամանակ միս կերցնելու համար միթէ բաւական արջառ կամ ոչխար պէտք է կտրել և կամ ծովու բոլոր ձկները ի մի ժողովել, որուն Աստուած կը պատասխանէ թէ՝ ծէրը կարող չէ միթէ այդ բանին [1]: Այս պարագային մէջ, ո՛չ թէ Մովսէս Աստուծոյ կարողութեան վրայ տարակոյս ունէր, այլ՝ ինչ եղանակաւ այդչափ ժողովուրդը պէտք է մի ամիս ժամանակ կերակրէր կշտանալու չափ, զայն գիտնալ փափաքեցաւ իր պաշտօնին բերմամբ, որ կը պարտաւորէր ինքը յուսադրել ժողովուրդը այլ նկատմամբ:

Առաջ հրամանին համեմատ Մովսէս հօթանասուն ծերուկի և բանիբուն մարդիկ ընտրելով՝ երբ խորանին առջև բերաւ, Աստուած ամպի մէջ անդ իջնելով Մովսէսին հետ կը խօսի և նորա

1. Աստ տէր ցՄովսէս, միթէ ձեռն տեառն չեցէ բաւական. Թուոց. ԺԱ. 23:

իմաստութենէն այդ հօթանասուն ծերոց ևս կը հաղորդէ [1]: Արդարև նոքա իսկոյն Աստուծոյ շնորհօք լեցուած՝ կսկսին մարգարէանալ, այսինքն զԱստուած փառաբանելով օրհնութիւն և գովութիւն կը կարդան:

Սակայն՝ նոցա երկուքը գեռ խորանը չհասած՝ բանակին մէջ կսկսին մարգարէանալ, սոքա էին Եղդադ և Մովդադ անուն անձինքը, որոց վրայ ևս Աստուծոյ շնորհքը իջած էր: Սոցա մարգարէութիւնը մի պատանի լսելով՝ երբ Մովսէսին կը պատմէր, ծեսու կը խնդրէ Մովսէսին որ արգելէ զանոնք, որովհետև խորանը չհասած մարգարէանալը՝ անհնազանդութեան նշան և Մովսէսի պատուոյն պակասութիւն համարեց: Բայց Մովսէս յանդիմանական ձևով ծեսուին կը պատասխանէ թէ «նախանձ մի՛ դրգռեր իմ մէջ, երանի թէ Տիրոջ բոլոր ժողովուրդը մարգարէ լինէին»:

Օրինակ առ Մովսէսի առաքինութենէն. վասն զի, իւր ազգին վրայ այնպիսի մեծ սէր ունէր որ կը բաղձար և միանգամայն ի սրտէ կը մաղթէր ժողովրդեան բոլոր զաւակաց համար, որ ամէնքը իրեն նման մէկ մէկ մարգարէ լինէին, կը փափաքի որ ամէնքը Աստուծոյ շնորհաց արժա-

1. Եւ էջ տէր ամպով . . . և էառ ի հոգւոյն որ ի նմա, և էարկ զհօթանասունն արամբքն զծերովք. Թուոց. ԺԱ. 25:

նանալով իմաստուն և գիտուն լինին, ինչպէս Աստուծոյ ժողովրդեան կը վայելէ:

Բացի այդ, նա՝ բոլոր մարդկերէն առաւել խոնարհ լինելով՝ իւր փառքը նուազելուն վրայ ոչ կը խորհի, ոչ կը հոգայ և ոչ իսկ մէկուն կը նախանձի: Ան մանաւանդ խիստ խոհական լինելով՝ ուրիշի խօսքին վրայ ոչ զոք կը յանդիմանէ կամ կը պատժէ, վասնորոյ իւր սիրելի աշակերտը Յեսուն կը յանդիմանէ որ նախանձ գրդռող խօսք չանէ:

Քաջ ի միտ առ, Մովսէս որչափ կը խոնարհէր, Աստուած այնչափ նորա պատիւը կը բարձրացնէր: Վասն զի, նա՝ որ ժողովուրդը միաձակ կառավարելու իւր անկարողութիւնը խոստովանեցաւ, Աստուած կամենալով զայն աւելի փառաւորել, նորա հոգիէն, այսինքն իմաստութենէն յիշեալ եօթանասուն ծերոց բաժին կը հանէ, որ Մովսէսին օգնական լինելու պատուոյն կամ տիտղոսին վրայ հպարտանալով՝ ղիրենք նորա հաւասարապատիւ չը կարծեն, այլ միշտ հնազանդ լինին նորա բարձր հեղինակութեան և կարգապրութեան:

Ինչպէս վերը յիշուեցաւ, Աստուած մեծդէն կերակուր ժողովրդեան տալ որոշած լինելով, յաջորդ օրը ծովու կողմէն մի քամի սկսաւ փչել, որ՝ այն սաստիկ և անհամար լորամարգի քշեց բերաւ, մինչև որ բանակին շուրջը մէկ

աւուր ճանապարհ և երկու կանգուն բարձրութեամբ թռչուններով լեցուցաւ երկիրը: Սակայն զարմանալին այս է որ այդ թռչունք կարող չեն բարձր թռչելու, որպէս զի ժողովուրդը նեղութիւն չկրէ զանոնք ժողովելուն:

Հիմայ դուն նայէ իրենց որկորին գերի լինելով մէս ցանկացողներուն վարմունքին. վասն զի, երբ նոքա թռչուններուը տեսան, սաստիկ ուրախացած ցերեկը՝ մինչև երեկոյ, և գիշերը՝ մինչև առաւօտ, ինչպէս նաև յաջորդ օրը այն սաստիկ ձան փափաքով և ցանկութեամբ կը ժողովեն, որ ամենէն նուազ ժողովողը՝ տասն քոռ (12 քիլէ) հաւաքելով՝ թարմ թարմ զգուելու չափ ուտելէն զատ՝ ապուխտ ևս կը շինեն, որպէս զի երկար ժամանակ մէս ուտեն:

Խօսիմ դուն Աստուծոյ ահաւոր զօրութեան վրայ. ժողովուրդը հասարակ մէս ուզեց. բայց Աստուած ամենակարող լինելով՝ նոցա լորամարգի մէս տալէն զատ, այնչափ առատ կուտայ, որ երեք ամսուան չափ ժողովրդեան մի ամէս ժամանակ բաւական կը լինի: Սակայն՝ մի՛ կարծիր թէ այս պարագայում իրենց ողորմութիւն եղաւ, այլ պատիժ:

Որովհետև տակաւին լորամարգի մէսը իրենց բերանուն էր, ահագին հարուած ընկաւ ժողովրդեան մէջ և շատերը մեռան, որոնք այնտեղ թաղուելով՝ տեղոյն անունը գերեզմանք ցան-

կութեան կոչուեցաւ։ Վասն զի, կերակուրի ցանկութեան պատճառաւ մեռնելով այնտեղ թաղուեցան[1] ի խրատ և ի զգուշութիւն։

Թէպէտև միս ուտելու փափաքիլ՝ յանցանք չէ, բայց Աստուծոյ չնորհած մանանային ձանձրանալով և յուսահատ գանգատոնաց խօսքերով «անպատճառ մեզի միս տուր» ասելով յամառիլ և լալ՝ ահագին յանցանք էր։ Մանաւանդ որ երբ իրենց փափաքին հասան, պարգևատու Աստուծմէ գոհանալով չնորհակալ չեղան։

Նայէ դուն Աստուծոյ գաւազանին. քանզի այդ չնորհն ու պարգևը առ հասարակ ամենուն եղած էր և ամենքը թռչնոց միս կերան, բայց ամենքը մեկէն չը պատժուեցան, այլ՝ միայն գանգատող ու տրտնջացողները պատժուեցան։ Վասն զի Աստուած արդար լինելով տրտունջ չը բարձողները հարուածէն պահպանեց և միայն յանդգնաբար ապերախտները պատժեց։

Այս կէտն էլ նկատողութեան արժանի է որ առաջ նաև կերակուրի համար երբ ժողովուրդը տրտնջաց, Աստուած մանանայ տուաւ, բայց չը պատժեց զայն, որովհետև այն ժամանակ իրենց ալիւրը սպառած էր և հաց չունէին, (ինչպէս որ

1. Մինչդեռ միսն յատամունս նոցա էր... եհար տէր զժողովուրդն հարուածս մեծամեծս յոյժ, և կոչեցաւ անուն տեղւոյն այնորիկ գերեզմանք ցանկութեան. Թուոց. ԺԱ. 33։

երբրդ դարու յիսունհինգերորդ հարցման մէջ յիշուեցաւ) բայց այս անգամ մանանայ կարօտութեան կերակուր կամ միս խնդրելը՝ շուայտութեան պատճառաւ էր, վասնորոյ պատժոյ արժանի համարուեցաւ ամենայն իրաւամբ։

Օրինակ և միանգամայն խրատ սա։ Որովհետև, ով որ իւր վիճակէն գժգոհ լինելով Աստուծմէ կը գանգատի, հարկաւ կը պատժուի, սակայն ցաւալին այս է որ շատերը իրենց յանցանաց պատճառաւ պատժուին իսկ, դարձեալ չեն զգաստանար և անուղղայ կը մնան։ Դու մի՛ կարծեր թէ մարդս՝ երբ իւր բոլոր փափաքանաց հասնի, իրեն համար բարի է, այլ՝ շատ անգամ պատիժ է։

Ուրեմն՝ մենք պարտական ենք խնդրել ինչ որ Աստուծոյ կամաց համաձայն է, և անոր կատարումն էլ նորա բարձրագոյն հաճութեան թողուլ. միայն թէ մեր կողմէն հարկ եղած ջանքն ի գործ դնել, և եթէ մեր խնդիրքը անկատար մնաց, անտրտունջ համբերութեամբ չնորհակալ լինել, խորհելով թէ մեզ համար այդ է բարի։

Վասն զի, քանի որ մարդս անփոփոխ չէ, ամէն ինչ չը գիտեր, և ամէն բանի կարողութիւնը չը հասնիր. մանաւանդ որ շատ անգամ բուն իսկ իւր օգուտը չը ճանաչելով միամտակար և վտանգաւոր իրաց կը ցանկայ։

Սակայն Աստուած անփոփոխելի է, ամենագէտ ամենատես և ամենակարող է, և մարդասէր

է միանգամայն. այս պատճառաւ, նա՝ որ իւր խնդիրքը Նորա բարերար, մարդասէր և օրհնեալ կամաց ը յանձնէ, ո՛չ թէ միայն չը սխալիր, այլ ընդհակառակն, այն մարդը միշտ և հանապազ անփորձ և անվնաս, ամէն վտանգէ զերծ և ազատ ճնալէ զատ, Աստուծոյ յատուկ և մանաւոր խնամքով ու գօրաւոր պաշտպանութեամբ հանգիստ և երջանիկ կը լինի, վասն զի Նորա սիրտն ու հոգին խաղաղութեան մէջ են, Նորա խիղճը խայթ չունի, և Նորա միաքն էլ այնպիսի մի անդորրութիւն կը վայելէ, որ միայն արդարոց և ճշմարիտ Աստուածպաշտից առանձնաշնորհուած է, յորմէ զուրկ են բոլոր մեղաւոր մարդիկ։

Հարց—ՃԺ.

Գերեզմանք ցանկութեան կոչուած տեղէն ո՞ւր գնացին Իսրայէլացիք։

Պաս. Աներաթ գնացին, ուր թէև ժողովրդեան կողմէ ո՛և է արուեստ չեղաւ, բայց Մովսէս իւր Եթովպացի կնոջ՝ Սեփորայի պատճառաւ Նոքին անհանգիստ եղաւ։ (Սա՝ որչափ որ Եթովպացի Քուշուած է, սակայն Մադիամէն ելնելը երրորդ դարու քառասուն երեքերորդ հարցման մէջ յայտնի է, միայն թէ Մադիամու երկիրը Եթովպիա էս կոչուելուն՝ Մովսէս Եթովպացի կին առաւ կը գրէ պատեղ)։

Վասն զի՝ Մովսէս ամենէն աւելի փառաւոր և իշխանութեան տէր անձը լինելով բանակին մէջ, մանաւանդ որ Աստուած Նորա հետ կը խօսէր, այս պատճառաւ Սեփորա հպարտացած՝ ո՛չ միայն զինքը ուրիշ կիներէն աւելի պատուաւոր կը համարէր, այլ և Մովսէսի քոյր Մարիամին իսկ վրայ գերազանցութիւն ունենալ կը յաւակներէր, որ՝ սակայն չը կրցաւ տանել կամ հանդուրժել Նորա ամբարտաւանութեան։

Ահարոն էս Մարիամի հետ միաբանելով կսկսին Մովսէսը բամբասել այս նկատմամբ, առաջ կելով թէ՝ Աստուած միայն Մովսէսին հետ չը խօսեցաւ, այլ նաև իրենց հետ խօսեցաւ[1]։ Ցիւրաքանչիւր, սոքա ամէն կերպով Մովսէսի պատիւը կը պահէին, բայց Սեփորային չափը իրեն ճանաչել տալու և հպարտութենէն նա կեցնելու համար այդպիսի մի առարկութիւն անելու համաձայնեցան, որով զիրենք Մովսէսի հաւասար ճանաչելով Նորա վրայ չարախօսելու պէս եղան։

Որչափ որ Մովսէս իւր խոնարհութեամբը Նոցա խօսքերը չը լսելու զարկաւ, բայց Աստուած կը լսէ Նոցա բամբասանքը և յանգաւորը կը դատէ[2]։

---

1. Բամբասեցին Մարիամ և Ահարոն զՄովսէս... և ասեն մեզ ընդ Մովսէսի՝ միայն խօսեցաւ Տէր, ո՞չ ապաքէն և ընդ մեզ խօսեցաւ. Թուոց. ԺԲ. 2։
2. Եւ լուաւ Տէր. Թուոց. ԺԲ. 2։

Նայէ գուն Աստուծոյ գաւառատանին. Մովսէս նոցա նկատմամբ գանգատ յայտնելով գաւառազ չէր, բայց Աստուած ամենուն խորհուրդն ու գործը գիտնալով միշտ արդարութեամբ իւրաքանչիւրին պատասխանը տեսնալուն համար, Մովսէսին, Ահարոնին և Մարիամին կը հրամայէ որ խորանին առջև գան ներկայանան։

Երբ երեքն էլ ի միասին խորանին առջև իբր ի ներկայութեան Աստուծոյ կը գտնուին, Աստուած հոն կիջնէ ամպով, Մովսէսի պատիւն ու փառքը յայտնելու և զայն բամբասողները յանդիմանելու և պատժելու համար։ Եւ որովհետև Ահարոն և Մարիամ ասած էին թէ Աստուած մեզ հետ էլ խօսեցաւ, և այդ խօսքով գիրենք Մովսէսի նման մարգարէ կը համարէին, այս պատճառաւ Մովսէսի և այլ մարգարէից տարբերութիւնը ցոյց տալով կը յայտնէ նոցա թէ «ուրիշ մարգարէից հետ տեսիլքով կը խօսիմ. բայց Մովսէսի հետ, որ իմ տան ամենէն աւելի հաւատարիմ է, բերան առ բերան յայտնի կը խօսիմ. գուք ինչպէս չէք վախցաք իմ ծառային՝ Մովսէսը բամբասել»[1]։

Թէպետև ի ներկայութեան Մովսէսի այսպիսի մի յանդիմանութիւն՝ մեծ պատիժ էր Ահարոնի և Մարիամի համար, բայց նոցա յան-

1 Եւ ընդէ՞ր ո՛չ երկերուք բամբասել զծառայն իմ զՄովսէս. Թուոց. ԺԲ. 8։

ցանքը այդ չափով չէր նեղուեցաւ, մի ամպը իսկոյն խորանին վրայէն վերացաւ։ Ամպին վերանալը Աստուծոյ հաւանութեան և հեռանալուն նշան էր[1], ինչու որ Մարիամ անմիջապէս բորոտեցաւ։ Ահարոն զայն տեսնելուն պէս՝ ապաշնորհ և պատասխանօք Մովսէսէն ներում կը խնդրէ[2]։

Երբ Մովսէս տեսաւ Մարիամը այդ ողորմելի վիճակին մէջ, իսկոյն աղաղակեց առ Աստուած և նորա բժշկութիւնը խնդրեց[3]։ Սակայն որչափ որ ի սրտէ աղաչեց զԱստուած, այսու հանդերձ թէ Մարիամի և թէ այլոց խրատ լինելու համար, Աստուած կը հրամայէ որ Մարիամը եօթն օր բանակէն դուրս մնայ, մինչև որ բժշկուի։

Աստուածային հրամանին համեմատ Մարիամ եօթն օր բանակէն դուրս մնալով՝ ինչպէս որ երբաշքով նորա պատիժը յառաջ եկաւ, նոյնպէս հրաշքով Մովսէսի աղաչանաց վրայ եօթն օրէն յետոյ բժշկուելով բանակը կուգայ։ Թէպետև Ահարոն ևս Մարիամի հետ միաբանած էր Մովսէսի դէմ

1. Եւ եղև բարկութիւնն Տեառն ի վերայ նոցա. Թուոց. ԺԲ. 9։

2. Ասէ Ահարոն ցՄովսէս. խնդրեմ ի քէն Տէր, մի՛ ածես ի վերայ մեր մեղս. զի անպիտացաք. Թուոց. ԺԲ. 13։

3. Եւ աղաղակեաց Մովսէս առ Տէր, և ասէ, խնդրեմ ի քէն Աստուած՝ բժշկեա՛ զնա. Թուոց. ԺԲ. 13։

սէսը բամբասելու, բայց գործին պատճառն ու հիմը Մարիամ լինելով՝ Ահարոն նորա պատիժը կրելու չը դատապարտուեցաւ: Մանաւանդ՝ եթէ Ահարոն ևս բորոտէր, բանակին դուրս ելնել պէտք պիտի լինէր. բայց քահանայապետին հարկ էր ժողովրդին չը բաժնուիլ, այս պատճառաւ պատիժ չը տրուեցաւ անոր:

Օրինակ առ, Մովսէս վինքը բամբասողներուն համար աղօթելով հին օրինաց մէջ սուրբ աւետարանի պատուէրը կատարեց[1]: Ահարոն էլ թէև յանցանք գործեց, բայց յանցանքը ճանչնալով իսկոյն զղջում յայտնելուն համար Թողութիւն գտաւ, որ Աստուածային ներման արժանանալու միակ միջոցն այս է:

Ուրեմն՝ եթէ քեզ էլ յանիրաւի բամբասեն կամ վնասեն, Մովսէսի նման նոցա յանցանաց ներելով՝ քեզի չարիք անողներուն բարիք անել պարտական ես, որպէս զի Աստուած փառքդ աւելցնէ: Եթէ Ահարոնի նման մեղանչեցիր, նորա պէս իսկոյն զղջա, որ պատիժ ապատուիս: Ու եթէ Մարիամի նման պատժոյ ենթարկուեցար, նորա նման կամաւ և յօժարութեամբ կրէ մեզայդ փոխարէն սահմանուած պատիժը, որպէս զի բժշկուիս:

1. Աղօթա արտաբէք ի վերայ նեզչաց ձերոց. Դատ. Զ. 28:

Նաև Աստուծոյ սիրելի ծառաներէն մի սուրբ անձէ խնդրէ, որ քեզ համար ապօթէ առ Աստուած: Նա մանաւանդ եթէ պատիժ ապատ և հանդիստ լինել կը կամիս, առաւել պատուոյ և աստիճանի հասնելու մի՛ փափաքիր և ո՛չ զաք մի՛ բամբասել:

Հարցո՜ւմ ԺԲ.

Ցերոյ իսրայէլի քանակը ո՞ր գնաց:

Պաք. Փառանի անապատէն Կապէսբառնէա կոչուած տեղը, որ Երուսաղէմի մօտ լինելով՝ Մովսէս ժողովրդեան կսկ, «Աստուծոյ ձեզ տալիք երկիրը եկաք, ելէք և գրաւեցէք զայն, ու բնաւ մի՛ վախնաք»[1]: Ժողովուրդը այս խօսքը լսածին պէս՝ փոխանակ յոյսը Աստուծոյ դնելով ուրախութեամբ և օր ժառաջ այդ երկիրը մտնելու համար հարկ եղած ջանքն ի գործ դնելու՝ կը պատասխանեն թէ «առաջ մարդ ղրկելով մեր գնալիք տեղերուն վիճակը իմանանք»: Վասն զի այնտեղ գտնուած ազգերէն վախնալով ժառաջ գնալ չեն համարձակիր, ինչպէս յայտնի է Բ. Օրին. Ա. 22:

Արդարև այդ խուհուրդը օրինաւոր և հիմ-

1. Տեսէք՝ զի Տէր Աստուած մեր մատնեաց առաջի երեսաց ձերոց զերկիրն, ելէք և ժառանգեցէք . . . Բ. Օրին. Ա. 21:

նաւոր էր, ևթէ Աւետեաց երկիրը իրենց սեփական դօրութեամբ գրաւել առաջադրած լինէին։ Բայց որովհետև Աստուած իւր բարձր կամաց համաձայն այդ երկիրը Աբրահամու, Իսահակայ և Յակոբու խոստացած լինելով՝ որուն կատարման համար մեծամեծ հրաշքներով զանոնք մինչև այնտեղ բերած էր. և Մովսէս էլ յայտարարած էր թէ վախնալու հարկ չկայ, ուստի իրաց այս վիճակում վախնալ և նախ լրտես դրկենք ասել՝ պարզապէս հաւատքի պակասութիւն կը ցուցնէ։

Եւ որովհետև նոքա զգուշութեան և խոհեմութեան տեսակէտով առաջարկել կը ձեւանային, Մովսէս ևս հաւանելով՝ մանաւանդ ժողովրդեան ընթացքին նայելով Աստուած էլ հրամայած էր, ուստի տասներկու ցեղերէն մի մի անձ կը դրկեն, որ գնալով Քանանու երկիրը ամէն կերպով քննեն և նորա պտուղէն իրենց հետ բերեն։

Արդարև նոքա քառասուն օր Քանանու երկիրը կը շրջին և այնտեղ բնակող ժողովուրդը լրտեսելով յետս կը դառնան։ Վերադարձին ծորողկուզոց կոչուած տեղէն մի ողկոյզ խաղող, նուռ և թուզ առնելով իրենց հետ կը բերեն, որպէս զի տեղական մրգեղինաց խիտ նշանաւոր լինելը յայտնուի։ Եբրաւի, բերուած խաղողին ողկոյզը այն աստիճան մեծ էր, որ ձողէ մի անցնելով երկու անձինք իրենց ուսերուն վրայ կրելով կը բերին զայն։

Բերք բանակը հասնելով պատմները ցոյց տուին, և Բէև միանգամայն յայտնեցին որ այնտեղ կաթ և մեղր խիստ առատ է, բայց՝ բացի Ենսուէն և Քաղէբէն, ճեացեալ տասն անձինք Աստուծոյ խոստման վրայ կատարեալ հաւատք չունենալով՝ ժողովրդեան միտքն էլ պղտորելու պատճառ եղան։ Վասն զի նոքա կը յայտարարեն թէ այդ երկրում բնակող ազգերը՝ զօրաւոր, քաղաքները՝ մեծ և պարիսպները՝ ամուր են։

Սակայն Քաղէբ նոցա այսպիսի վհատեցուցիչ և խռովայոյզ խօսքերը լսելով կը պատասխանէ թէ այդպէս չէ, մենք կարող ենք նոցա բոլորին յաղթել, ուստի եկնենք և գրաւենք երկիրը։ Իսկ միւսները՝ ժողովրդեան սիրտը երկիւղ ձգելու համար կը կրկնեն թէ չենք, մենք կարող չենք նոցա յաղթել, զի նոքա հզօրագոյն են քան զմեզ, այն երկիրը՝ մարդուս ճաշակալ երկիր է, որոյ բնակիչները հսկայի պէս մարդիկ են, և մենք նոցա մօտ մարախի նման փոքր էինք։

Ժողովուրդը՝ այդպիսի խօսքեր լսելով բոլորովին վհատեցան և սկսան ասել «լաւ էր որ Եգիպտոսում և կամ այս անապատին մէջ մեռնէինք. ինչո՞ւ համար Աստուած զմեզ այն երկիրը կը տանի, ուր մենք պէտք է պատերազմելով մեռնինք և մեր ընտանիքները թշնամեաց ձեռքը պիտի ընկնին»։ Միևնոյն ժամանակ Մովսէսի և Ահարոնի դէմ կը գանգատին։ Բայց այդ՝ այն

գիշեր մինչև առաւօտ լալով և Եգիպտոս դառնալ մեզի համար լաւագոյն է, ասելով՝ Զօրապետ կընտրենք, որ Եգիպտոս վերադառնան[1]:

Մովսէս և Ահարոն ժողովրդեան այդպիսի անվայելուչ խօսքերը լսելով՝ իրենց երեսին վրայ ընկան երկուքն էլ միասին, որպէս զի գոնէ ամաչելով հնազանդին և նորէն չը պատժուին[2]:

Ապրատ ան, երբ ժողովուրդ խօսքով ուղղութեան գալ չուզեր, գործնական օրինակով զայն յուղղութիւն բերելու նպատակաւ Մովսէս և Ահարոն գետնամած կը խոնարհին, սակայն այն խստապարանոց և անհնազանդ ժողովուրդը ոչ Աստուծմէ կամաչէ և ոչ պատիժէ կը վախնայ, ոչ Մովսէսի խրատուց կանայ և ոչ նորա առաքինութիւնէն կը խրատուի:

Իսկ Յեսու և Քաղէբ՝ Մովսէսի և Ահարոնի գետնամած խոնարհելը տեսնելով՝ իրենց հանդերձը կը պատռին և ժողովրդեան խրախոյս կուտան ասելով թէ «մեր լրտեսած երկիրը շատ լաւ է, մի՛ ըմբոստանաք և մի՛ վախնաք, որովհետև Աստուած մեզի հետ է», և այլ այսպիսի յուսատու և քաջալերական խօսքեր թէև նոքա յառաջ

1. Եւ ասէ այլ ցընկերս. արասցուք զօրավար, և դարձցուք յԵգիպտոս. Թուոց. ԺԴ. 4:

2. Եւ անկան Մովսէս և Ահարոն ի վերայ երեսաց իւրեանց առաջի ամենայն որդւոցն Իսրայէլի. Թուոց. ԺԴ. 5:

բերին, բայց ժողովուրդը ոչ մի կերպով չը համոզուելէ զատ՝ ուզեցին մինչև իսկ զանոնք քարկոծել, ահա այն ժամանակ խորանի վրայի ամպը իսկոյն ահաւոր հրեղէն բոցի փոխուեցաւ[1], ի տես ժողովրդեան:

Ամպին այսպիսի կերպարանափոխութիւնը՝ թէև յայտնի նշան էր թէ Աստուած բարկացած է և թէ կը պատրաստուի տալ նոցա արժանի պատիժը, բայց իւր անհուն ողորմութեամբ կը դիմէ Մովսէսին հարցնել թէ «մինչև ե՞րբ ժողովուրդդ զիս պէտք է նեղացնէ, մինչև ե՞րբ չը պէտք է ինձ հաւատայ, թող որ զանոնք կոտորեցնեմ և զքեզ մեծ ազգ անեմ»[2]:

Ճշմարիտ է որ ժողովուրդը խիստ անհնազանդ և ապերախտ լինելուն համար Աստուած կսպառնայ կոտորել զայն և Մովսէսը աւելի մեծ ժողովրդեան գլուխ անել, բայց Մովսէս խոնարհ և համբերող և մանաւանդ ազգասէր լինելով իւր ազգակիցներուն պակասութեանց աչք կը գոցէ և աղաչանօք Աստուծոյ առջև կը փաստաբանէ ասելով:—

«Այս ժողովուրդը դուն հանեցիր Եգիպտոսէն

1. Եւ փառք Տեառն երևեցան ամպով ի վերայ խորանին վկայութեան. Թուոց. ԺԴ. 10:

2. Եւ ասէ Տէր ցՄովսէս... Թոյլ տուր ինձ՝ և հարից զդոսա մահուամբ և կորուսից զդոսա. և զքեզ և զտուն հօր քոյ արարից յազգ մեծ. Թուոց. ԺԴ. 11:

քու բարձր բազկաւդ և հզօր զօրութեամբ, և հիմա ամզով նոցա կառաջնօրդես, եթէ զանոնք կոտորես, լսողը կասէ թէ ժողովուրդը խոստացած երկիրը տանելու կարող չը լինելուն համար անապատում կոտորեց զայն, ուստի, Ցէր, կաղաչեմ, քու մեծ ողորմութեամդդ ներէ ժողովրդեանդ բազմութիւ և ծանր մեղքերուն»[1]:

Քաջ ի միտ առ, երբ Աստուած ժողովրդեան վրայ կը բարկանայ, պայն Մովսէսի ժողովուրդը կը կոչէ, իսկ Մովսէս նոցա համար աղօթելու և բարեխօսելու ժամանակ՝ Աստուծոյ ժողովուրդը կանուանէ զայն, Իբր թէ կը կամի ասել. «ով Ցէր, այս ժողովուրդը իմն չէ, այլ՝ քուկդ, որովհետև մինչև ցայսօր յատկապէս զայն քեզ սեփականելով մեծամեծ բարիք և պաշտպանութիւն ընդհեցիր նոցա, քու սուրբ և օրհնեալ անունդ նոցա վրայ է, ուրեմն քու փառաւորեալ անունդ համար ներէ նոցա յանցանաց, որպէս զի քու հզօր զօրութիւնդ և անսահման ողորմութիւնդ բոլոր աշխարհի յայտնի լինի և հեթանոսները քու անուանդ դէմ կարող չը լինին խօսել[2] իրենց սրտի ցանկութեան համեմատ»:

1. Թող զմեզս ժողովրդեան քոյ ըստ մեծի ողորմութեան քում. Թուոց. ԺԴ. 19:

2. Եւ արդ բարձրասցի ձեռն քո Տէր, որպէս խօսեցար և ասացեր, թէ Տէր երկայնամիտ և բազումողորմ և ճշմարիտ. Թուոց. ԺԴ. 17:

Մովսէսն թող իրաւ և օրինակ առնին նոքա, որոնք ազգի գլուխ և առաջնորդ եղած են. թող չասեն թէ ազգը ապերախտ և անհնազանդ է, այլ՝ միշտ նոցա լաւութեան և բարօրութեան համար աշխատեն, որ պարտական չը ճնան: Նաև եթէ կուզես որ աղօթքդ ընդունուի, նախ՝ զուն Աստուծոյ փառաց նախանձախնդիր եղիր, և նորա շնորհ ու պարգեւները խոստովանելով միշտ գոհ եղիր և նորա ողորմութեան ապաւինէ, ինչպես որ Աստուած իւր բազում գթութեամբ Մովսէսի աղօթքն ընդունելով ժողովուրդը չը կոտորեց այն օր[1]:

Սակայն՝ նաև իւր արդարութեամբ կը վճռէ որ նոցա Եգիպտոսէն ելած ժամանակ բոլոր քսան տարեկանէն վեր եղողները (բացի Յեսուէն և Քաղէբէն) անապատին մէջ մեռնելով Ըրուսաղէմի Աւետեաց երկիրը չը մտնեն, այլ միայն նոցա որդիքը, որոնք Եգիպտոսէն ելած ժամանակ փոքր լինելով կարող չէին չարն ու բարին զանազանել. նոքա գնան և Աստուծոյ խոստացած երկիրը դրաւեն: Նաև Յեսու և Քաղէբ պէտք է մտնեն Աւետեաց երկիրը, ինչու որ նոքա հաւատարմութեամբ խօսեցան Աստուծոյ յուսալով:

Նայէ դուն Աստուծոյ արդարութեանը: Ման-

1. Ասէ Տէրը «Մովսէս, տեսեցեր զոգա ըստ բանի քում. Թուոց. ԺԴ. 20:

զի նոքա անձնիշխան էին, և մինչև այն ժամանակ կառարուած հրաշքները տեսած լինելով հանդերձ՝ առանց Աստուծոյ զօրութեան հաւատալու կը գանգատին ասելով «լաւ էր անապատին մէջ մեռնել» և յետս վերադառնալ կամենան, այս պատճառաւ նոցա գանգատանաց համեմատ պատուհաս տրուելաւ իրենց [1]: Քանզի Երուսաղէմէ մօտեցած լինելով՝ փոխանակ քառասուն օրէն սուրբ երկրին տիրանալու, Աստուած զանոնք կատ դարձնելով երեսուն ութ տարի ևս խոպան և ամայի անապատներուն շրջեցուց, որպէս զի քառասուն տարին աւարտելով իրենց գործոց համեմատ պատժուին [2]:

«Երանի թէ անապատում մեռնէինք» բուն իսկ իրենց փափաքանաց համաձայն՝ երեսուն ութ տարի միջոցում այդ բոլոր գանգատողները անապատին մէջ մեռնելով կորսուեցան գնացին [3]: «Մեր զաւակները թշնամեաց ձեռքը պիտի անցնին» ասածին համար Աստուած նոյն այդ զաւակաց ձեռամբ յետոյ կատարել կուտայ թշնամիները:

Իսկ այն տասն լրտեսները, որոնք խոստա-

1. Կենդանի եմ ես... որպէս խօսեցայք յականջս իմ... Թուոց. ԺԴ. 28:

2. Ըստ թուոյ աւուրցն քառասնից... Թուոց. ԺԴ. 34:

3. Ցանապատի աստ ձախեցին, և ասոնք մեռանիցին. Թուոց. ԺԴ. 35:

ցեալ երկրին վրայ չար խօսեցան և մարդաձախ անուանելին, խորանին առջև իսկոյն ասուածահաճոյ ապաւիժ կրելով մեռան և աշխարհի օրինակ հանդիսացան [1]: Բացի այդ, վճռուած պատժոյն գործադրութեան համար Աստուած կը հրամայէ Մովսէսի որ յաջորդ օրը դէպի կարմիր ծովու ճանապարհը գնան [2]:

Սակայն դուն անհնազանդ և յամառ ժողովրդեան ոդորմելի վիճակին. վասն զի, երբ յիշեալ լրտեսներու մահը տեսան և Մանաւանդ Մովսէս էլ Աստուծոյ հրամանին համեմատ յետագարձի լուրը տուաւ, խիստ մեծ սուգ մտան: Բայց իրենց յանցանքը չէր ներուելաւ. ինչու որ ինչպէս որ նախ ապրիլէն դուրս ելնելէն յետոյ՝ էլ ետ չէր դառնար, նմանապէս վճռուած պատիժը անպատճառ կը գործադրուի և Աստուածային վճիռը ետ չէր դառնար:

Յաջորդին՝ մինչ Մովսէս և Ահարոն գետնամած խոնարհելով կաղերսէին, չէր կամեցան լսել. Յեսու և Քաղէբ՝ երբ կաղաչէին զիրենք, քարկոծել ուզելու չափ յանդգնեցան: Այո՛, վերջէն թէև

1. Եւ մեռան արքն այնոքիկ՝ որք հանին համբաւ չար վերկրէն, չարաչար հարուածովք առաջի Տեառնէ. Թուոց. ԺԴ. 37:

2. Բայց դուք վաղիւ դարձարուք և չուեցէք յանապատէն ընդ ճանապարհ կարմիր ծովուն. Թուոց. ԺԴ. 25:

զղջալով կամեցան Թշնամւոյն դէմ քալել, բայց Մովսէս պատասխանեց «Ամաղէկացիք և Քանանացիք ձեր առջև են, մի՛ գնաք, կը կոտորուիք, որովհետև Տէրը ձեզի հետ չէ։ Սակայն նոքա դարձեալ չը համոզուելով՝ նորա կամաց հակառակ իրենք զիրենք խրախուսեցին և Թշնամւոյն դէմ ելան, և ահա Ամաղէկն ու Քանանացիք լեռնէն իջնելով կոտորեցին զանոնք։

Այս պարագայում, ժողովուրդը նորէն անհնազանդ գտնուելով յանցանքը կրկնապատկուեցաւ։ Որովհետև ինչպէս որ առաջ Տիրոջ հրամանաւ Թշնամւոյն ընդդէմ չելնելը՝ մեծ յանցանք էր, նմանապէս իրենց զօրութեան ապաւինած՝ պատերազմի խիզախելը՝ մեծ յանցանք էր. այս պատճառաւ Թշնամիէն յաղթուելով անապատում կորնչելու վճիռը գործադրուիլ սկսաւ։

Օրինակ առ, իրաւ է որ ժողովուրդը արածին վրայ զղջաց, բայց իրեն զղջումը ընդունելի չեղաւ. որովհետև զղջման ժամանակը անցած էր։ Նա՛ մանաւանդ ոչ ի պատիւ Աստուծոյ կը զղջան, այլ՝ պատժոյ երկիւղէն, բայց պատիժը տեսնելէն զկնի վախնալ և ապաշաւ յայտնել՝ անհաւատութիւն և զԱստուած փորձել է, քանզի եթէ կատարեալ հաւատք ունենային, պատիժէն առաջ նորա հրամանին հնազանդելով կը հաւատային։

Թող լսեն նոքա, որոնք խրատ մարիկ չեն աներ, և մանաւանդ թող խրատուին նոքա, որոնք

իրենց մեղքերուն վրայ զղջալու պատեհութիւնը անցած ժամանակ կամակոր յամառութեամբ կը գտնուին կը ճնան այդ գարշելի և զզուելի մեղացմէջ, որք կորուստ կը պատճառեն իրենց յաւիտեան։ Վասն զի ինչպէս որ անհնազանդ ժողովուրդը Երուսաղէմի երկիրը մտնելու արժանի չեղաւ, նմանապէս մեղայ չասելով մեղքի մէջ մեռնող մարդիկ Աստուծոյ արքայութիւնը կարող չեն մտնել, որովհետև Աւետեաց երկիրը՝ արքայութեան օրինակ է հոգևոր մաքով։

Հարց–ՀԺ.

Ուրիշ ի՞նչ դէպքեր պատահեցան անապատում Իսրայէլացւոց մէջ։

Պաս. Մի անձ շաբաթ օր փայտ կը ժողվէր, բայց շաբաթ օրեր մարմնաւոր գործերով զբաղիլ՝ Աստուծոյ պատուիրանին հակառակ լինելով, այդ անձը քարկոծմամբ կսպանեն։ Ուրիշ մի մարդ էլ բանակում կռուած ժամանակ հայհոյած լինելուն համար՝ Աստուծոյ հրամանաւ քարկոծելով սպանեցին[1]։

Թող հայհոյիչ մարդիկ խրատ առնեն, ինչպէս նաև նոքա որոնք կիւրակէ օրերը սուրբ չեն պա-

---

1. Եւ խօսեցաւ Տէրը ընդ Մովսէսի և ասէ, հանէք զայն որ անէծն՝ արտաքոյ բանակին... և քարկոծեցեն զնա ամենայն ժողովուրդն. Ղեւ. ԻԴ. 13։

հեր. վասն զի, եթէ հին օրինաց ժամանակ հայհոյիչ և Աստուածային պատուիրանաց հակառակող մարդիկ մահուան արժանի պատուհասին, նոր օրինաց ժամանակ այդպիսի ընթացք ունեցողները որչա՛փ աւելի մեծ պատժոյ արժանի պէտք է համարուին:

Դարձեալ, Ղեւիի ցեղէն Կորէ անունով ազգեցիկ մի անձ՝ Ահարոնի փառաց նախանձելով՝ նորա ձեռքէն քահանայապետութիւնը առնել կուզէ. այս պատճառաւ պատուաւոր Ղեւացիներէն երկու հարիւր յիսունի չափ անձինք ևս իրեն համախոհ գտնելով՝ նոցա օգնութեամբ կը յանդգնի իւր նպատակին հասնել:

Սակայն՝ գիտնալով թէ Մովսէս այս գործին հաւանութիւն չը պիտի տայ, նորա դէմ ևս հակառակորդներ յարուցանել առաջադրելով՝ Յակոբ նահապետի անդրանիկ որդւոյն՝ Ռուբէնի ցեղէն երեք երևելի անձինք—Դաթան, Աբիրօն, և Օնան—գրգռիչ միջոցներով իրեն հետ կը միացնէ, որպէս զի սոքա իրրև անդրանիկ ցեղէ յառաջ եկած պատուաւոր անձինք՝ մեծութեան հետամուտ լինելով Մովսէսի ազդեցութիւնը կոտրեն, և կամ ժողովրդեան գլուխ լինին, որ ինքն էլ կարողանայ քահանայապետ լինել:

Այս մասին նորա Մովսէսի և Ահարոնի ընդդէմ այս խօսքերը կը գրուցեն, «այդչափ բաւական է ձեզ, մինակ գո՛ւք էք սուրբ, բոլոր ժո-

ղովուրդը սուրբ է, և Աստուած նոցա մէջ է»: Ա՛լ կուզեն որ եթէ սրբութեան պատճառաւ կիշխէք, բոլոր ժողովուրդը սուրբ է, ինչո՞ւ համար դուք պէտք է իշխէք միշտ:

Այս խօսքերը Մովսէս լսելուն պէս՝ իսկոյն երեսի վրայ կընկնի, ո՛չ թէ երկիւղէն, այլ՝ նոցա խօսքերուն վրայ ունեցած ահագին զարմացումէն: Նա երեսը գետնամած՝ կը խնդրէ Աստուծմէ որ հաճի յայտնել թէ ո՛վ է սուրբ, որպէս զի իրենց միջև հակառակութիւն չը ծագի: Վասն զի Կորէ՝ հպարտ մի անձ լինելով Ահարոնին կը նախանձէր. բայց նախանձը չը յայտնելու համար սրբութեան խնդիր կը յարուցանէ, և միայն «ես սուրբ եմ» ասել՝ շատ անհարկի լինելուն համար, «բոլոր ժողովուրդը սուրբ է» կառարկէ, որ ինքն էլ սուրբ համարուի իբրև ժողովրդեան մի անհատ:

Ու որովհետև Ահարոն Աստուծոյ հրամանաւ քահանայապետ եղած էր, այս պատճառաւ Մովսէս պատասխանը Աստուծոյ կամաց թողլով, կորխին և նորա հետևողաց կառաջարկէ որ յաջորդ օրը իրենց բուրվառներուն կրակ և խունկ դնելով խորանին առջև ներկայ գտնուին, «Աստուած զո՛ր ոք և ընտրէ, նա է սուրբ: Մխիթ փո՛քր պատիւ է, որ Աստուած զձեզ խորանին ծառայութեան յատկացուց, արդ՝ ձեր այս ընթացքով ո՛չ թէ Ահարոնի, այլ՝ Աստուծոյ դէմ եղած էք. Ահարո՞ն ո՛վ է, որ նորա դէմ կը գանգատիք»:

Մովսէս այս խօսքերով կամեցաւ զանոնք ի զղջում հրաւիրել, որ պատիժ կրելու չը դատապարտուին, և մարդ ղրկելով Դաթանն ու Աբիրոնը ևս կը հրաւիրէ որ խորանի առջև ներկայանան. քանզի նոքա՝ իրենց վրանը գնացած ննջերոյն ելից կսպասէին. որպէս զի եթէ Կորխ իւր նպատակին յառաջ տանել յաջողի, իրենք ևս Մովսէսի վրայ յարձակելով՝ նորա իշխանութիւնը ձեռքէն կորզեն:

Սակայն յիշեալ երկու անձինքը Մովսէսի մօտ չը գալէն զատ լուր կը ղրկեն թէ՝ «բաւական չէ որ զմեզ Եգիպտոսի նման արգասաւոր երկրէն հանեցիր անապատին մէջ մեռցնելու համար, և տակաւին իշխանութիւն կը վարես. միթէ կաթ և մեղր բղխող երկիրը տանելով՝ արտ և այգի տուիր մեզ. եթէ մեր աչքն իսկ փորելու լինիս, չենք գար»:

Մովսէս այսպիսի հակառակ խօսքերը լսելով խիստ բարկացաւ. վասն զի առաջ «ելէք, Աբեւտեաց երկրին տիրեցէք», ասած ժամանակ՝ գնալ չը կամեցան. այս անգամ կը յանդիմանեն թէ ինչու զմեզ այնտեղ չը տարիր: Մանաւանդ մինչև այն ժամանակ Մովսէս ոչ միայն նոցա ոչ մի զրկանք տրած չէր, այլ միշտ բարեբարած, և ահա զինքը մի անգութ բռնաւոր համարելու չափ անխիղճ կը գտնուին:

Յաջորդ օրը Մովսէս և Ահարոն խորանին

դրան առջև կեցած՝ Կորխի համախոհ երկու հարիւր յիսուն անձինքը ևս, իւրաքանչիւրը մի մի պղնձէ բուրվառ ի ձեռին, խորանին առջև գալով կրակ և խունկ կը դնեն բուրվառաց մէջ: Կորխ ղրկմամբ ժողովրդեան մի ահագին բազմութիւն էլ կը հաւաքուի անդ, և ահա Աստուծոյ փառքը ամպով ահաւոր հրոյ նման կերևի, և ամպէն խօսելով Աստուած Մովսէսին և Ահարոնին կասէ «զատուեցէք այդ ժողովրդեան միջէն, որ ևս դոցա բոլորը միանգամայն ջնջեմ»[1]:

Սակայն Մովսէս և Ահարոն գետնամած աղաչանօք կը խնդրեն որ մի մարդու մեղաց պատճառաւ այդպիսի ժողովուրդ չը կորսընդունելով նոցա աղաչանքը: Աստուած Մովսէսին կը պատուիրէ՝ ասել ժողովրդեան որ Կորխի, Դաթանի և Աբիրոնի մարդոցմէն զատուին, որպէս զի նոցա հետ միասին չը կորսուին: Ըստ հրամանին Մովսէս գնալով կը հրաւիրէ ժողովուրդը հեռանալ այդ չար և ապստամբ անձերէն: Եւ որպէս զի յայտնուի թէ ինքը Աստուծոյ կողմանէ ղրկուած է, յիշեալ ապստամբներուն մահուան և կորստեան կերպն ու եղանակը կանխաւ կիմացնէ, ասելով, «եթէ նոքա հասարակ և բնական մահուամբ մեռնին, զիս Աստուած չը ղրկեց. բայց

---

1. Մեկնեցարուք ի միջոյ ժողովրդեանդ այդորիկ, և սատակեցից զդոսա միանգամայն. Թուոց. ԺԶ. 21:

եթէ գեամինը ձեղքուելով զանոնք և նոցա սուրացուածքը կուլ տայ, զիարնք որ Աստուած ղրկեց զիա, ինչու որ նոքա բարկացուցին զԱստուած»:

Հապա թէ Մովսէս սոյն խօսքերը արտասանած էր, և ահա հրաշիւք ինն գեամինը իսկոյն ձեղքուելով կուլ կուտայ զանոնք, նոցա վրանները և նոցա բոլոր համախոհները[1]: Շուրջը գտնուող ժողովուրդը այս նորանշան երեւոյթը տեսնելով և միանգամայն գետնին տակը անցնողներուն ահաւոր ձայները լսելով սաստիկ երկիւղիւ համակուած կը փախչին: Իսկ այն երկու հարիւր յիսուն անձինքը, որոնք խորանին առջեւ խունկ կը ծխէին, խորանէն ելած կրակով այրեցան[2]:

Արդարեւ խռովարարները այսպէս կորսուեցան, բայց ուրիշներուն եւ խրատ լինելու համար, Աստուած կը հրամայէ Մովսէսի և Ահարոնի որդւոյն՝ Եղիազարին որ այրուած երկու հարիւր յիսուն անձանց բուրվառները ողջակիզած սեղանին առջեւ իրեւ վարագոյր կախեն, որպէս զի ամէն տեսնելու ժամանակ՝ պատահած պատժական դէպքը մոռնալով չը համարձակին այլ եւս ծխելոջ դէմ հակառակ ընթանալ:

1. Բացաւ երկիր և եկաւ զնոսա և զտունս նոցա. Թուոց. ԺԶ. 32:

2. Եւ ել հուր ի Տեառնէ և եկեր զերկերիսն և դիտուն արան՝ որք մատուցանէին զխունկան. Թուոց. ԺԶ. 35:

Կորխի պատիժէն խրատ առ, վիճակիդ գոհ եղիր, մի՛ հպարտանար, մի՛ նախանձիր ոչ ոքի, չար մարդոց բնաւ մի՛ հետեւիր, և եթէ սխալելով միջոց մը հետեւեցար, շուտով ղջա՛ և հեռացիր անոնցմէ, որ չը գտատպարտուիս, թէեւ Կորխ, Դաթան և Աբիրօն ժողովրդեան մէջ պատուաւոր և ազդեցիկ մարդիկ էին, բայց իրենց ամբիծները չը ձանաչելով հպարտացան, և Մովսէսի ու Ահարոնի վրայ նախանձելով օրինակը չը տեսնուած մի բանի վրայ պատուհասով դժոխք իջան իրենց բոլոր համախոհներու հետ ի միասին: Բայց ով որ չարերուն հետ միացած չէր անշքաս ձեաց, ինչպէս որ նոյն իսկ Կորխի որդիքը իրենց հօր գործոց և ընթացից մասնակից չը գտնուելով ազատուեցան (Թուոց. ԻԶ. 11·): Նմանապէս Օնան առջ թէեւ Դաթանի և Աբիրօնի հետ միաբանած էր, բայց վերջը ղջացած նոցա ընկերութենէն զատուելով փրկուեցաւ կը կարծուի, վասն զի Դաթան և Աբիրօնի ապստամբութիւն սկսած ժամանակ՝ նոցա անունն էլ գրուած է, բայց պատժուելու ժամանակ նոցա անունը չը յիշատակուիր:

Հարց՝ ԺԹ.

Վերոյիշեալ պատժին վրայ ժողովուրդը զղջալով հնազանդութիւն ցոյց տո՞ւաւ:

Պաս. Ո՛չ երբէք: վասն զի յաջորդ օրը Մովսէսի և Ահարոնի վրայ կը յարձակին թէ դուք

կոտորեցիք Աստուծոյ ժողովուրդը և Մովսէս ու Ահարոն նոցա այսօրինակ շարժուքմբ տեսնելով կը փախչին և խորանը կը մտնեն։ Եւ ահա ամպը հրաշալի կերպով կը ծածկէ զանոնք և Աստուած կը հրամայէ որ ժողովրդէն բոլորովին զատուին, որպէս զի բոլորը կորնչին[1]։

Թէպէտև Մովսէս և Ահարոն մինչեւյն ժամանակ իրենց երեսին վրայ ինկած՝ աղաչեցին զԱստուած նոցա փրկութեան համար, բայց անմիջապէս հուր բորբոքելով կսկսի ժողովուրդը կոտորել։ Ասոր վրայ Ահարոն Մովսէսի հրամանաւ սեղանէն կրակ և խունկ դնելով բուրվառին մէջ կը գնայ ժողովրդեան մեռելոց և կենդանեաց մէջտեղ կանգնած՝ կսկսի խնկարկել, որով Աստուծոյ բարկութիւնը դիջանելով պատուհասը կը դադարի[2]։

Ինկատի առ, ժողովուրդը Մովսէսի և Ահարոնի մահը կամեցաւ, բայց նոքա ժողովրդեան համար կաղօթեն. քանզի Մովսէս խորանին՝ և Ահարոն ժողովրդեան մէջ կեցած՝ իրենց ջերմ և արտասուալից աղօթիւք պատուհասը դադարեցուցին, սակայն՝ նոյն օրը տասն ու չորս հազար հօթը

1. Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսէսի և ընդ Ահարոնի և ասէ, մեկնեցարուք ի միջոյ ժողովրդեանդ այդոցիկ... Թուոց ԺԶ. 44։

2. Եւ եկաց (Ահարոն) ի մէջ մեռելոց և կենդանեաց, և դադարեաց սատակումն. Թուոց. ԺԶ. 48։

հարիւր անձինք մեռան ժողովրդէն, բացի վերոյիշեալ Կարխի հետ մեռածներէն։

Թող խրատ առնեն ըմբռստ և անհնազանդ մարդիկ, որ Աստուծոյ հրամանաւ կարգուած մեծաւորաց և իշխանաց դէմ կենալով պատժոյ չենթարկուին. վասն զի Մովսէս և Ահարոն ծերոջ հրամանաւ ժողովուրդը կատավարելու համար պաշտօնեայ կարգուած լինելով՝ նոցա նկատմամբ եղած գանգատները իրեն դէմ համարելով՝ այդչափ մարդ կորստեան մատնեց առանց խնայելու։

Ինչ է որ Ահարոնի նախանձով անձինք մեռան, բայց նոքէն այդպիսի մի շարժում յառաջէը գալու համար Աստուած նորա քահանայապետութիւնը կամենալով հրաշիւք ևս հաստատել, կը հրամայէ որ տասներկու ցեղից երեւելի անձինք՝ իրենց գաւազաններուն վրայ իրենց անունը գրեն, նոյնպէս և Ահարոն՝ իւր գաւազանին վրայ անունը գրելով՝ խորանում տապանակին առջև դնեն, և որուն գաւազանը որ ծաղկի, նա է քահանայապետ։

Մովսէս ըստ հրամանին՝ գաւազանները տապանակին առջև դնելով՝ յաջորդ օրը կը տեսնեն որ Ահարոնի գաւազանը բողբոջ արձակելով ծաղիկ տուած և ընկոյզ պաղարեցած է։ Այս հրաշալեաց առջև, ամէն մարդ ձայնը կարած՝ պարտաւորեցաւ հնազանդել Մովսէս՝ ծերոջ հրամանաւ այդ գաւազանը տապանակին մէջ կը դնէ, որ Աստու-

ծոյ հրաշքը չը մոռցուի ապագայում: Ժողովուրդը վերոյիշեալ պատիժը տեսած ժամանակ՝ Մովսէսին կասէ, ահա կը կոտորուինք, ով որ խորանին կը մերձենայ՝ կը մեռնի, այնպէս որ ամէնքս էլ պիտք է մեռնինք: Չի նոքա այն աստիճան վախցան, որ այլ ևս խորանին մօտ գնալու չէին համարձակեր:

Եւ որովհետև այս պատիժը քահանայապետութեան պատճառաւ պատահեցաւ, այս առթիւ Աստուած ցոյց կուտայ թէ ինչ պէտք է լինին Ահարոնի, նորա որդւոց, ուրիշ քահանայից և Ղեւտացիներուն խորանում ունեցած պաշտօնները և միանգամայն նոցա ապրուստի համար յատկացուելի եկամուտն ու ռոճիկը, որպէս զի իւրաքանչիւրն իւր պաշտօնին ու ծառայութեան նուիրուելով երբէք իրենց միջև ո և է հակառակութիւն չը ծագի:

Ժողովուրդն էլ ըստ հրամանին սահմանուած տուրքը Ղեւտացիներուն վճարելով թո՛ղ խորանի ծառայութեանց երբէք չը միջամտեն և չը խառնուին, որպէս զի չը մեռնին: Այս պատուէրին միշտ հաստատուն և տևական մնալուն ապացոյց տալու համար, մի օրինակաւ կը յայտնէ թէ «աղի ուխտ է այս[1], ինչպէս որ աղը՝ միօրինակ և անփոփոխ կը մնայ առանց ապականելու կամ աւրուե-

1. Քանզի ուխտ աղի է առաջի Տեառն... Թուոց. ԻԸ. 19:

լու, այս ուխտն էլ յաւիտեան անփոփոխ և հաստատուն թող մնայ ձեր մէջ»:

Բացի այդ, քահանայապետին պաշտօնն էր՝ տարին մի անգամ ի տօնի Քաւութեան, անարատ և լուծի տակ չը մտած մի երինջ կարել բանակէն դուրս, որոյ արիւնը ամանի մէջ առնելով խորհրդական յանդիման եօթն անգամ սրսկել մատովը՝ ժողովրդեան մեղաց քաւութեան համար: Ցետոյ պէտք էր զայն այրել իւր բոլոր պարագայիւք և մոխիրը պահել, և այս մոխիրը ի ջուր խառնելով՝ ըստ օրինաց անմաքուր համարուած անձին վրայ ցանել, որ մաքրուի:

Հոգևոր մաքով յիշեալ երինջը Քիստոսի Քրիստոսի օրինակ է. որովհետև Քրիստոս բոլոր մարդոց մեղաց քաւութեան համար Երուսաղէմին դուրս Գողգոթա լերան վրայ խաչուած՝ իւր ամենասուրբ արիւնը թափելով մեռաւ[1]: Ճշմարիտ է որ ներկայ ժամանակում Գողգոթա լեռը քաղաքին մէջ կը գտնուի, սակայն պատմութիւնը և սուրբ աւետարանը յայտնապէս ցոյց կուտան թէ ի հնումն քաղաքէն դուրս էր:

1. Քիստոս՝ զի սրբեսցէ իւրով արեամբն զժողովուրդն՝ արտաքոյ դրանն չարչարեցաւ. Եբրայ. ԺԳ. 12:

Հատոր Ի.

Ցեղոյ Իսրայէլի քանակը ուր գնաց։

Պապ. Սին անապատում կապէս կոչուած տեղը, որ երրորդ գարու յիսուն հինգերորդ հարցման մէջ յիշուած Սին անուանեալ տեղէն տարբեր է։ Վասն զի Եգիպտոսէն ելնելով դեռ Սինա լեռը չը հասած ութերորդ իջևանն էր այդ տեղը, ուր մանանայ իջնել սկսաւ երկինքէն, բայց այս Սին անապատը երեսուն երեքերորդ իջևանը եղաւ։

Նմանապէս այս կապէսը՝ տարբեր է կապէսբառնիայէն, յորմէ ետ գառնալով՝ (ինչպէս որ տասնուօթերորդ հարցման մէջ յիշուեցաւ) երեսուն ութ տարի անապատին մէջ շրջելէ յետոյ՝ քառասներորդ տարւոյն առաջին ամիսում Իսրայէլացիք կրկին յիշեալ տեղը եկան, ուր Մովսէսն քոյրը Մարիամ մեռնելով թաղուեցաւ։

Այստեղ ևս ջուր չը գտնուելով՝ ժողովուրդը նորէն սկսաւ Մովսէսն ու Ահարոնը բամբասել թէ ի՞նչու համար զմեզ Եգիպտոսէն հանելով այս վատ տեղը բերիք, ուր վարուցան չը լինիր, այգի, սեխ, նուռ և խմելու ջուր չկայ»[1] ասելով կը

1. Ընդէ՞ր հանիք զմեզ յերկրէն Եգիպտացւոց, գալ ի տեղիս յայս չարս, ուր ո՛չ սերմն սերմանիւ, ո՛չ սեխեներք, և ո՛չ այգիք, ո՛չ նռներներք և ո՛չ ջուր դոյ։ Թուոց. Ի. 5։

յարձակին նոցա վրայ, որոնք խորանը փախչելով երեսներուն վրայ կը տարածուին Աստուծոյ առջև։

Խնդրեցին եղիր, Մովսէս և Ահարոն՝ երբ մի ծանր տագնապ ունենան, Աստուծոյ ողորմութեան ապաւինելով խորանում կապաստանին և օգնութիւն կը խնդրեն, և Աստուած՝ իւր փառքն յայտնելով՝ ոչ միայն զանոնք ձեասկ կը պահպանէ, այլ և կը հաճի ժողովրդեան ջուր տալ, որպէս զի իւր անհուն կարողութիւնն ու գթութիւնը յայտնէ բոլոր ժողովրդեան, ապերախտ և ապաշնորհ ժողովրդեան։

Այս պատճառաւ կը հրամայէ Մովսէսին, որ գաւազանը առնելով ի ձեռին հաւաքէ ժողովուրդը, և նոցա առջև Ահարոնին հետ քարին ասեն որ ջուր տայ։ Արդարև ըստ հրամանին ժողովուրդը որոշեալ քարին առջև կը հաւաքեն, բայց «ջուր տուր» չեն ասեր, այլ՝ ժողովրդեան վրայ նեղացած և բարկացած լինելով՝[2] Մովսէս տարակուսանօք երկու անգամ քարին կը զարնէ իւր գաւազանով։ Սակայն՝ մի՛ կարծեր թէ Մովսէս Աստուծոյ կարողութեան վրայ կը տարակուսի, այլ՝ ժողովրդեան ընթացքին նայելով կը տարակուսի թէ մի

1. Եւ եբևեցան վտառքն Տեառն ի վերայ նոցա։ Թուոց. Ի. 6։

2. Բարկացուցին զնա ի ջուրսն հակառակութեան, չարչարեցաւ Մովսէս վասն նոցա, զի դառնացուցին զոգի նորա։ Սաղմ. ՃԶ. 32։

այսպիսի անհնազանդ ժողովրդեան համար քարէն ջուր կելնէ։ Ցիրաւի, ժողովուրդը՝ անարժան էր, բայց Աստուծոյ ողորմութիւնը չափ և սահման չունենալով իսկոյն քարէն խիստ առատ ջուր կըղխէ, յորմէ թէ ժողովուրդը և թէ նոցա անասունքը կը խմեն։

Յառաջադոյն Քորէք լերան վրայ Մովսէս իւր գաւազանը քարին զարկած ժամանակ ջուր բղխեցուց, (ինչպէս երրորդ գարուն վեցերորդ հարցում յիշուեցաւ) բայց այս անգամ հրամայուած չէր որ քարին զարնէ, այլ՝ խօսքով միայն զուրցելու հրաման լինելուն և քարին զարնելը՝ հրամանի հակառակ լինելուն համար՝ Աստուած բարկանալով կը վճռէ որ Մովսէս և Ահարոն չը տանին ժողովուրդը Աւետեաց երկիրը [1]։

Թէպէտև Մովսէս և Ահարոն Իսրայէլի ժողովուրդը Աւետեաց երկիրը չը տանելը՝ հոգևոր մաքով կը նշանակէ թէ մարդիկ հին օրինաց զօրութեամբ արքայութիւն գնալու անկարող լինելով՝ անպատճառ Յիսուսի Քրիստոսի շնորհաց կարօտ էին, այսու հանդերձ այս դէպքը մեծ խրատ եղաւ մարդոց։

---

1. Եւ ասէ Տէր ցՄովսէս և ցԱհարոն, վասնզի ոչ հաւատացիք դուք ինձ, սուրբ առնել զիս առաջի որդւոցն Իսրայէլի, վասն այնորիկ ոչ տանիցիք... Թուոց. Ի. 12։

Որովհետև բարերարն Աստուած՝ ողորմութեան անարժան եղողներուն ևս գթալով, մեղաւորաց խրախոյս կուտայ, որ առանց յուսահատելու Աստուծոյ անսահման ողորմութեան ապաւինելով քաւութեան արժանի հանդիսանան։

Նմանապէս Մովսէսի և Ահարոնի նման սուրբերուն մի փոքրիկ օրինազանցութեան համար պարտազանցութեան պատճառաւ, ժողովուրդը Յորտանէմ տանելու փառքէն և պատիւն զանոնք զրկելով՝ սուրբերուն էլ երկիւղ կուտայ և կզգուշացնէ, որ ժողովրդեան պակասութեանց վրայ նեղանալով բարկութեամբ իրենց պարտուց դէմ չը գործեն, նա մանաւանդ իրենց առաքինութեան վրայ հպարտանալով չը մեղանչեն։ Վասն զի, մարդս օրչափ ևս սուրբ և իմաստուն լինի, այնչափ աւելի զգուշանալու պարտական է, քանի որ քանի մարդ ողջ է՝ վատնգէ կարող չէ ազատ և զերծ լինել [1]։

Վերոյիշեալ պապէս անուն տեղը՝ Եղոմի երկրին մերձ լինելով՝ Մովսէս երկրի թագաւորին մարդ կը զրկէ խնդրելու համար որ Եդոմի երկրէն անցնելու թոյլտուութիւն տայ իրենց, բայց այս պայմանաւ որ առանց նոցա արտերն ու այգիները կոխտելու, ուղիղ ճանապարհէն անցնին գնան,

---

1. Քան առաջին, ոչ է արժան յառաջ քան զվախճան երանել զոք։

և եթէ ջուր խմեն, գինը վճարեն։ Սակայն՝ յիշեալ թագաւորը ոչ մի կերպով կը հաւանի ձանապարհ տալ Իսրայէլացւոց, ընդ հակառակն բազում զօրքով պատերազմի կելնէ նոցա դէմ արգելելու համար։

Թէպէտև Մովսէս կարող էր բռնի անցնել այդ երկրին, բայց Եդոմայեցիք Նաւէի ցեղէն լինելով՝ Աստուած պատուիրած էր Մովսէսի որ նոցա հետ չը պատերազմին. որովհետև Նաւէի երկրին Իսրայէլացիք տէղ գրաւելու չէին, ինչպէս որ յայտնի է (Բ. Օրին. Բ. 5)։ Այս պատճառաւ Մովսէս առանց նոցա հետ պատերազմելու կողմնակի ճանապարհով շարունակեց ընթացքը։

Հպցած ԻԱ.

Ցեղոյ Իսրայէլը ոչը իջևանեցաւ։

Պաթ. Հովը լերան սորոտը։ Այստեղ Աստուած Մովսէսին կը պատուիրէ որ Ահարոնն ու նորա որդին Եղիազարը լեռը հանէ, ուր Ահարոնի զգեստը հանելով Եղիազարին հագցնէ, և թոզ Ահարոն այնտեղ մեռնի։ Մովսէս սոյն Աստուածային հրամանը գործադրելէ յետոյ՝ Ահարոն հարիւր քսան երեք տարեկան մեռաւ, և ժողովուրդը երեսուն օր սուգ առնելով լացաւ նորա վրայ։

Արաղ երկրին թագաւորը՝ Քանանիս՝ պատերազմաւ Իսրայէլացւոց դէմ գալնելով՝ գերի կը

տանի այս վերջիններէն իւր երկիրը, որ մօտ էր Իսրայէլի բանակին։ Ուստի Իսրայէլի ժողովուրդը յոյսը Աստուծոյ վրայ դրած՝ կուխտ որ՝ եթէ Աստուած յաղթութիւնը իրենց տայ, նզովէ Արադի քնակիչներն ու երկիրը միանգամայն։ Արդարև Իսրայէլացիք կը յաղթեն Աստուծոյ զօրութեամբ և կը կոտորեն այդ երկրի մարդիկը, անասուններըը և կը կործանեն նոցա քաղաքներըը, այս պատճառաւ այն տեղին անունը Հօրմա (նզովս) կոչուեցաւ Իսրայէլացիներէն։

Ցեղոյ Հովը լեռնէն դէպի կարմիր Ծովու ճանապարհը կը չուէին։ Եւ երբ այն տեղէն էլ Եդոմի երկրին բոլորտիքը շրջելով կը դիզբլէին, ժողովուրդը ճամբան յոդնելով դարձեալ սկսաւ գանգատիլ և բամբասել զԱստուած և զՄովսէս, ասելով թէ՝ «Եդիպտոսէն զմեզ հանեցիր անապատին մէջ կոտորելու համար, ոչ հաց ունինք ոչ ջուր, տաղտկացանք այս անոտի հացէն»[1] (Մաթ. Ժ. 5)։

Նայէ դուն ժողովուրդի ապերախտութեանը, ճանապարհի առաւել կամ նուազ կրած նեղութեան համար մինչև այն ժամանակ տեսած հրաշքը

---

1. Բամբասեաց ժողովուրդն զԱստուած և զՄովսէս՝ և ասեն, ընդէ՞ր հաներ զմեզ յԵգիպտոսէ կոտորել զմեզ յանապատիս յայսմիկ, զի ոչ գոյ հաց և ոչ ջուր, և անձինք մեր տաղտկացեալ ի սնոտի հացէս, Թուոց. ԻԱ. 5։

նները մոռնալով՝ երկինքէն իջնող մանանայէն կը ապրեցանայ, զոր և մնոտի հաց անուանելու չափ կը յանդգնի, Ծայռի էր ուրեմն որ նոցա սիրտը՝ Եգիպտոսի, նոցա միտքը՝ զուարճութեան և հեշտասիրութեան հակամէտ էր, նոցա լեզուն թունաւոր լինելով՝ միշտ և ամէն առթիւ «ինչու մեզ Եգիպտոսէն հանեցիր» կասէն մեզադրանօք, որով իբրև թէ մի թունաւոր նետով Մովսէսի սիրտը վիրաւորելէ զատ՝ Աստուծոյ բարկութիւնը կը գրգռեն։

Ուստի Աստուած նոցա յանցանքին համեմատ թունաւոր օձեր կը ղրկէ ի պատիժ, որով խիստ շատերը մեռան։ Ժողովուրդը՝ երբ այս կերպ պատիժը տեսաւ խոստովանելով թէ յանցաւոր են և կաղաչեն զՄովսէս, որ օձերուն անհետացման համար աղօթէ առ Աստուած։ Մովսէս՝ ինչպէս յառաջագոյն նոցա համար կաղօթէր, այս անգամ էլ սրտագին աղաչանօք դիմեց առ Աստուած, և նորա պատուէրին համաձայն պղնձէ օձ մի շինելով՝ ձողի վրայ կը դնէ, զոր մի բարձր տեղի վրայ կը կանգնեցնէ, որպէս զի օձէն վիրաւորուած անձինք անոր նայելով բժշկուին։ Արդարև, որոնք որ գնալով նայեցին իսկոյն Աստուծոյ զօրութեամբ կառողջանային[1]։

---

1. Եւ լինէր, յորժամ հարկանէր օձ զմարդ, հայէր ընդ օձն պղնձի, և կեայր. Թուոց. ԻԱ. 9։

Օրինակ մեր, պղնձէ օձին գանուած տեղը գնալ և անոր նայելով բժշկութիւնը՝ մեզմէ փոխանցեն ապաշխարելու օրինակ կիմացուի. որովհետև միայն զղջմամբ մարդս թողութիւն կարող չէ գտանել. այլ՝ պարտական է իւր յանցանաց համեմատ ինչ որ խոստովանահայրը ապաշխարանք դնէ իբր մեզմէ հատուցումն, զոյն սրտի մաքրութեամբ կատարել, այս է թողութիւն գտանելու միակ և օրինական միջոցը։

Դառն նայէ Աստուծոյ ողորմութեանը, ցիրտաբեր օձերը պատիժ էին, և պղինձէ օձը՝ իբր դեղ կանգնեցաւ, բայց այս անօրէնութիւնը՝ շատ խորհրդաւոր էր. քանզի հոգևոր մաքով ցիտասի Քրիստոսի գազգոթա լերան վրայ խաչուելով մարդկային ազգը մեղքէ փրկելուն օրինակ եղաւ։

Ոթայելացիք այդ պղինձէ օձը Երուսաղէմ տանելով մի ժամանակ յետոյ զոհերու մատուցմամբ թէև զայն պաշտել սկսան, բայց Երուսաղէմի Եզեկիա թագաւորը կոտրելով զայն չքացուց, ինչպէս յայտնի է (Դ. Թագ. ԺԸ. 4)։

---

1. Եւ որպէս բարձցայոյր Մովսէս զօձն յանապատի, նոյնպէս բարձրանալ պարտ է որդւոյ մարդոյ. Յովհ. Գ. 14։

Հարց—Տ ԻԲ.

Վերոյիշեալ պատիժէն ետքը՝ ժողովուրդը նոյնէն Աստուածային հրամանի ընդդէմ գործե՞ց։

Պաս. Այո՛, գործեց։ Վասն զի Նպոմայեցւոց երկրէն չուած ժամանակ՝ այդ կռվերը գանուող կռապաշտ ազգերէն որոնք որ իրեն դիմադրեցին՝ կոտորելով և նոցա տեղերը գրաւելով հկան հասան Յորդանան գետի մօտ Նիլքով քաղաքին առջև Սատտիմ կոչուած տեղը, ուր իջևանեցան։ Բաղակ՝ որ կռապաշտ Մովաբացւոց թագաւորն էր, որոնք մօտերը կը բնակէին, սաստիկ կը վախնայ Իսրայէլի ներկայութենէն։

Թէպէտև Աստուծոյ պատուէրին համեմատ Իսրայէլացիք վեսս չը պէտք է տային նոցա, (Բ. Օրին. Բ. 9.) բայց ուրիշ երկիրներու հասած վնասուց նայելով՝ Բաղակ կը կասկածի, և իր երկրին սահմանակից Մատիամու երեւելեաց հետ կը խորհրդակցի թէ ինչ կերպով իրենք զիրենք պահպանեն. քանզի բազկի ուժով Իսրայէլացւոց դիմադրելու կարողութիւնն ու համարձակութիւնը չունէր։

Այն ժամանակ Բաղաամ անունով մի հռչակաւոր կախարդ կար, որ Մուրատո (Եփրատ) գետի եղերքը գանուող Փաթուր քաղաքում կը բնակէր, և որուն Բաղակ մեծամեծ ընծաներով մարդ ղրկեց, որ գայ Իսրայէլը անիծէ։

Վասն զի նա կը յուսար որ այդ կախարդ մարդու անէծքին զօրութենէն Իսրայէլեան ժողովուրդ վնասուելով իրեն չարիք հասցնելու կարող չը լինիր։ Բաղաամ գնացող մարդոց կը պատասխանէ թէ «սպասեցէք այս գիշեր Աստուած ինչ որ հրամայէ ըստ այնմ ձեզ կը պատասխանեմ»։ Սակայն Բաղաամու վիսաւորութիւնն էր՝ ո՛չ թէ իւրաց Աստուծոյ հարցնելով՝ ըստ այնմ շարժիլ և գործել, այլ՝ կախարդութեամբ սատանային հարցնել։

Արդ՝ Աստուծոյ իր զօրութիւնը Բաղաամու և իւր անհուն ողորմութիւնը Իսրայէլի յայտնելու էր, Բաղաամու թեկտրից որ չգնայ և Բալաքայելը չանիծէ։ Այն ժամանակ եկող մարդոց Բաղաամ պատասխան առաւ թէ կարող չէ գնալ և չը գնաց։ Նրբ որ Բաղակ այս լուրն առաւ, նորէն պատուաւոր մարդիկ ղրկելով՝ շատ ընծայ կը խոստանայ անոր, միայն թէ փութայ առանց յապաղման գալ։

Այս անգամ Աստուած Բաղաամու կը հրամայէ որ գնայ, բայց ինչ որ ինքը թելադրէ իրեն, զայն խօսի։ Եւ որովհետև յիշեալ կախարդը շատ խորամանկ և ագահ մարդ էր, միտքը կը գնէ որ գնայ և Իսրայէլը անիծէ, որպէս զի ուզածին պէս Բաղակէն ղրամ առնայ։ Նրբ նա՝ իշուն վրայ հնձած կը գնար, Աստուծոյ կամեցողութեան հրեշտակը սուր ի ձեռին իսկոյն իշուն առջև կը

կանգնի, որ երկիւղէն կը խոտորի ճանապարհէն ղեռւշանալու և պահպանուելու համար։

Բաղաամ գաւազանովը իշուն կը զարնէ որ ճանապարհէն գնայ։ Ցետոյ երբ փոս մի տեղ կանցնէին, հրեշտակը նորէն ճանապարհին յանդիման կը կենայ, որով անասունը պատին չինուիլ կամենալով Բաղաամեա ոտքը կը ճմլէ, և նա՝ զարձեալ կսկիծ էշը գանահարել։ Վերջապէս խիստ նեղ մի վայրէ անցած ժամանակ՝ երբ հրեշտակը կերևի, անասունը խոտորելու տեղ չը գտնելով իսկոյն կը նստի։ Բաղաամ երբ կսկիծ նորէն հարուածները տեղալ խեղճ կենդանիին վրայ, հրաշիւք իմն էշը լեզու կելնէ և մարդկային բարբառով կը հարցնէ «ես ի՞նչ յանցանք գործեցի, որ այս երեք անգամ է դիս կը հարուածես, մինչև ցայսօր մի այսպիսի բան արած չի»։

Բաղաամ կը պատասխանէ իշուն թէ՝ «ծաղրեցիր զիս, և եթէ ձեռքս սուր ունենայի, կը վիրաւորէի զքեզ անշուշտ», այս խօսքին վրայ նորա աչքերը բացուելով հրեշտակը տեսածին պէս՝ իսկոյն երկրպագութիւն կը մատուցանէ։ Հրեշտակը կասէ Բաղաամին, «ի՞նչու էշը ծեծեցիր, ես էի որ դէմ կը կենայի, և եթէ այն չը շեղէր, կսպաննէի զքեզ, վասն զի սիրտդ ուղիղ չէ իմ առջև։ Այն ժամանակ՝ Բաղաամ թէպէտ զղջալով յայտնեց թէ պատրաստ է նա դառնալ, եթէ կը հրամայէ, բայց հրեշտակը կը պատուիրէ գնալ, և

ինչ որ ինքը թելադրէ, միայն զայն խօսիլ։

Իշուն մարդկային բարբառով խօսիլը Բաղաամ տեսնելի չեղաւ, ի հարկէ պարտական էր խորհիլ թէ մի խորհրդաւոր բան կայ այս անօրինակ դէպքումն և ետ կենալու էր իւր չար ընթացքէն. սակայն նա կախարդ լինելով՝ փոխանակ խրատուելու կսկիծ իրը ընկերը իշուն հետ խօսակից, այն պատճառաւ հրեշտակը ինքզինքը յայտնեց անոր, որպէս զի Աստուծոյ զօրութիւնը և ատ Ռաբայել ունեցած խնամքն ու պաշտպանութիւնը իմանալով հրամանի հակառակ չը վարուի։

Բաղակ՝ Բաղաամու գալուստը լսելուն պէս՝ դիմաւորելով առաջ փառաջ կընդունէն զայն. և առաւօտեան կը տանի այն տեղը, ուրկէ Ռաբայելի բանակին մէկ կողմը կը տեսնուէր։ Ու որովհետև Բաղաամ հարստութեան կը ցանկար, Բաղակին կառաջարկէ եօթը սեղան շինել, եօթը զուարակ և եօթը խոյ զոհ մատուցանել, և ինքը գնայ Աստուծոյ հարցնելու, ինչ որ Նա կը յայտնէ զայն կը պատմէ։

Արդարև նորա այս կերպ կարգադրութիւնը՝ ուրիշ բան չէր, եթէ ոչ նիւթական վարձատրութիւն տանելու համար կախարդաց յատուկ խոթամանկութիւնն և հնարք. բայց Աստուած չը պէտք է թոյլ տար, որ ըստ հաճոյս խօսի, ուստի փոխանակ նզովելու՝ ընդհակառակն կօրհնէ Ռաբայելը. վասն զի Աստուած կը խօսցնէր զայն։

Երբ Բազակ նորա խօսքերը լսեց, կասէ «ես քեզ հրաւիրեցի որ իմ թշնամին անիծես և ոչ թէ օրհնես»։ Այնուհետեւ մի ուրիշ տեղ կը տանի զայն, թերևս տեղափոխութեամբ յանձն առնու անիծել։ Թէպետև այնտեղ ևս ըստ առաջնոյն տեղան չհնել և զոհել տուաւ, բայց երբ առանց անիծել կարենալու նորէն կսկսի օրհնել Իսրայէլը, այս անգամ Բազակ կասէ «եթէ չես անիծեր, գոնէ մի՛ օրհներ»։ Բազաամ կը պատասխանէ թէ «Աստուած ինչ որ յայտնէ, զայն կը խօսիմ»։

Դարձեալ մի այլ տեղ կը տանի զայն Բազակ, բայց այն տեղ առաւել ևս կօրհնէ, և միանգամայն կը յայտնէ թէ Իսրայէլեան ազգը պէտք է խիստ շատ զօրանայ և փառաւորուի և իւր թշնամեաց յաղթէ, նա մանաւանդ նորա ցեղէն Մեսիան պիտի ծնի[1]։ Երբ Բազաամ Աստուծոյ ազդեցութեամբ սոյն մարգարէական խօսքերը կատաանէր, Բազակ բարկանալով կասէ, «կոչեր» տեղդ դնա, ես կամեցայ քեզ ընծայիւք պատուել, բայց Աստուած քու բազդաւորութեան և հարստութեան արգելք եղաւ։

Այս տեղ քաշ ի վիտ ած Բազաամու չար նպատակը, որովհետև Իսրայէլը անիծելու անկարող եղաւ, ուստի իւր նիւթական շահը չը կո-

1. Ծագեսցէ աստղն Յակոբայ, և յարիցէ այր ի Իսրայէլէ· Թուոց· ԻԴ· 17։

սընդնելու համար, Բազակին մի այնպիսի վատշուէր խորհուրդ և խրատ կուտայ, որով գործադրութիւնը կարող կը զայն իւր նպատակին հասցնել· այն է ազջիկները ղրկել Իսրայէլի բանակը, որոց միջոցաւ ժողովուրդը շնութեան մեղքին մէջ ձգելէն զատ՝ իրենց կուռքերն էլ պաշտել սոխրեն, որպէս զի Աստուած բարկանալով իւր խնամքն ու պաշտպանութիւնը վերցնէ Իսրայէլի ժողովրդեան վրայէն, և այս կերպով կարող լինի նոցա յաղթել։

Արդարև Բազաամու չար խորհուրդին համաձայն՝ Բազակ անպարկեշտ ազջիկներ ղրկեց Իսրայէլի բանակը, որոց պատճառաւ ժողովուրդը այն աստիճան մոլորեցաւ, որ առանց ամաչելու իւր ցանկական կրից յագուրդ տալու համար խորանին մօտ յատուկ տեղ շինելով՝ նոցա կուռքերն էլ պաշտել սկսաւ, որով Աստուծոյ սաստիկ բարկութիւնը հրաւիրից իւր վրայ[1]։

Իսրատ ած նոցա Թշուառ վիճակէն, որոնք այսպիսի գալշելի պղծութիւն գործելու յանդգնելով՝ թէ մարմնով և թէ հոգւով կորսուեցան։ Վասն զի յետաջգային երբ մեզաց համար պատժոյ արժանի կը լինէին, Մովսէս կաղաչէր զԱստուած, որ ներէ նոցա· սակայն այս անգամ փո-

1. Եւ պղծեցաւ ժողովուրդն պառնկիլ ընդ դստերսն Մովաբու... և եբկիր պաղէն կուռց նոցա, և նուիրեցաւ Իսրայէլ Բէլփեգովրայ, և բարկացաւ Տէր... Թուոց· Իե· 1։

խանակ նոցա համար ապօթելու՝ Աստուծոյ հրամանաւ պղծապղծ բազմութեան գլխաւորները կախել կուտայ, և կը հրամայէ ժողովրդեան, որ բոլոր կուռք պաշտողները մեռցնեն անխնայ։

Թէպէտև նոքա, որոնք այդ պղծութենանց մասնակցած չէին, խորանին դրան առջև կեցած կուլային, բայց նոյն հարուածին ժամանակ, երբ բազմաթիւ անձինք կախուած՝ և ժողովուրդը առանց ապստամբութեան իսկ նայելու յանցաւորները կոտորել սկսած՝ Մովսէս և ուրիշ անմեղ անձինք անդ ներկայ էին, և ահա Շմաւոնի ցեղին պատը՝ Զամբրի անուն, որոյ հետ մի մի այլ մարդ նոյն միջոցին յայտնի կերպով կը մտնեն վիրոյշեալ վայրը չնութեան մեղքը գործելու համար։

Փենէէս՝ որ Եղիազար քահանայապետին որդին էր, երբ սոյն անառմթի և լիրբ վարմունքը տեսաւ, չը կրնալով համբերել՝ իսկոյն տէզով (նիզակ) թէ այդ երկու անձինքը և թէ գանգը ի մեզս հրապուրող պոռնիկ կինը սպանեց։

Նայէ դուն Աստուծոյ փառաց և արդարութեան նախանձախնդիր մարդուն առաքինութեանը. վասն զի Փենէէսի՝ այդ չնացող մարդիկը սպանելը՝ արդարութիւն և իրաւունք լինելով, Աստուծոյ հաճոյ մի գործ համարուեցաւ, որով խսկոյն պատիժը դադարեցաւ, բայց մինչև այն ժամանակ քսան չորս հազար անձինք մեռան։ Նե ինչպէս որ Աստուածային սուրբ կամաց ընդդէմ գործողները

պատժուեցան, նմանապէս Աստուածային կամքը գործադրելու եռանդ և սէր ցուցնող անձը փառաւորուեցաւ. քանզի Աստուած՝ քահանայութիւնը խոստացաւ Փենէէսի և նորա ցեղին[1]։

Ինչպէս եղիր, Իսրայէլի ժողովուրդը, որ պատերազմական ահեղ գօրութեամբ չէր յաղթուիր, անպարկեշտ և լիակ կանանց հրապուրանքէն յաղթուեցաւ, որուն հետևանքն եղաւ ահաւոր պատիժ և կոտորած իւր մէջ։ Այն չարահնար հրահանգը, զոր Բաղաամ տուաւ Բաղակին, սատանային մեկնելով հնարքն էր. վասն զի ինչպէս որ նա օձին ձեռքով Եւան, և սորա ձեռամբ ևս Ադամը մեղաց մէջ ձգեց. նմանապէս Բաղաամու ձեռքով կանանց սերմանին կորստեան պատճառ եղաւ[2]։

Ամէն մեղք Աստուծոյ հրամանին հակառակ լինելով մարդուն յաւիտենական կրակով դժոխոց մէջ այրուելուն պատճառ կը լինի, բայց զգայական ցանկութեան բորբոքումը երբ մի անգամ մարդուս սիրտը գրաւէ, նորա մարմինն ևս իրեւ հուր կը վառէ, կայրէ և կը փոշիացնէ, այս պատճառաւ

---

1. Ապա եկաց ի մէջ Փենէէս, քաւեաց և արգելաւ մահ. համաքեցաւ նմա յաջորդութիւն ազգէ յազգ... Սաղմ. ՃԶ. 30։

2. Թողեալ զուղղորդ ճանապարհն՝ մոլորեցան զհետ երթեալ ճանապարհին Բաղաամայ. Բ. Պետ. Բ. 15։

Ս. Գիրքը հնոցի կը նմանցնէ այն վայրը, ուր շնութեան մեղքը կը գործէին, և ուր փինէէս մահուամբ պատժեց այդ անառակ և անզգամ մարդիկը [1]։

Այս կերպ վտանգներէն ազատուիլ կամեցողը՝ պէտք է պատճառէն խոյս տայ, չարասէր մարդոց հետ չը միարանի, այս պատճառաւ Մովսէս Աստուծոյ հրամանաւ Իսրայէլացւոց կը պատուիրէ թշնամի լինել և կոտորել այն ամէն կռապաշտները, որոնք զիրենք մեղաց մէջ ձգելու պատճառ կը լինին։

Ինչանուէթեան տէր անձինք պարտին փինէէսի նման Աստուծոյ փառաց նախանձաւոր լինել, որպէս զի պատասխանատու չը ճնան առաջի Աստուծոյ։ Որովհետև եթէ չարիքը չը պատժուին, բարիները կը ճնասուին. նա՝ որ կարող է յանցաւորը պատժել և զանցառութեամբ անպատիժ կը թողու լինքն էլ յանցաւոր կը լինի։ Անուղղայ անձը պատժելը՝ ոչ թէ անգթութիւն է, այլ՝ Աստուծոյ հրամանը գործադրել է։

Հարցում Ի'.

Ինչու համար Աստուած թոյլ տուաւ Բաղաամու որ Բաղակին մօտ գնայ։

Պաս. Իւր զօրութիւնը նոցա յայտնելու համար։ Վասն զի Բաղակ իւր յոյսը Բաղաամու վրայ

1. Եմուտ զհետ առն Իսրայէլացւոյ ի հնոցն, և խոցեաց զերկոսին. Թուոց. ԻԵ. 8։

դրած լինելուն համար պէտք չէ կարծել թէ Աստուած անոր համար արգիլեց զայն, իբրև թէ նա կարող էր Իսրայէլի ժողովրդեան ձնասել իւր անէծքով, այլ՝ Բաղաամ կը խօսի ինչ որ Աստուած կը հրամայէ և եթէ պատուիրեց Իսրայէլը չանիծել, պատճառն այն է որ երբ Իսրայէլացիք մեղաց համար պատժուելին կարելի էր սխալմամբ կարծել թէ Բաղաամու անէծքն յառաջ եկաւ։

Որովհետև թէպէտ և Բաղաամ Իսրայէլը օրհնեց, բայց երբ սա մեղանչեց, Աստուած զայն ձեռալ պատժեց զայն։ Ուրեմն Իսրայէլացւոց նկատմամբ Բաղաամ թէ լաւ և թէ վատ խօսելով՝ նոցա ոչ օգուտ և ոչ վնաս յառաջ կուգայ, այլ նոցա գործոց համեմատ Տիրոջ կողմէն հատուցում կը լինի իրաւամբ և արդարութեամբ ըստ օրինաց։ Վասն զի՝ ինչպէս որ Բաղաամու էշը մարդու պէս խօսելով մարդ չեղաւ, նմանապէս թէև Աստուած Բաղաամը խօսիլ տուաւ, բայց նա առով աւրբ չեղաւ, այլ միայ նոյն չարութեան մէջ։

Այս, կատարուած հրաշքը առնելով պէտք էր ուղղել իւր ընթացքը, մինչդեռ ընդհակառակն, վոխանակ ուղղուելու, այդ անօրէնն և չարեաց պատճառ եղող խրատը տալով՝ առաւել սատակցուց իւր պատիժը։ Զի Աստուծոյ հրամանաւ Իսրայէլացիք այն երկիրներու կռապաշտները կոտորած ժամանակ՝ Բաղաամ ևս նոցա հետ կորաւեցաւ ինչպէս որ կը յիշուի (Թուոց. ԼԱ. 8)՝

Այս մասին մի՛ կարծեր թէ միայն սուրբեր-
ուն ձեռքով հրաշք կը գործուի, որովհետեւ, ինչ-
պէս սուրբ աւետարանի մէջ կը կարդանք[1], եր-
բեմն Աստուած մեղաւոր մարդոց հրաշագործու-
թեան զօրութիւն կուտայ, որպէս թի նոցա ձեռքով
եւս Իւր Աստուածային կարողութիւնը ցոյց ասյ
աշխարհի իրրեւ Ցէր ամենեցուն։

Նմանապէս երբեմն չար մարդոց՝ գիտութիւն
եւ մարգարէական շնորհ եւս կը տուին, ինչպէս
Կայիափա քահանայապետը Յիսուսի Փրկչին մեր-
մահը կանխաճանչցոյց[2] Իսրայէլեան ազգի փրկու-
թեան համար, քանի որ հրաշք, գիտութիւն եւ
մարգարէութիւն կարող չեն մարդն արքայութիւն
առնել, այլ ուղիղ հաւատով առաքինութեան
պէտք է։ Արդ՝ այսպիսի մարդիկ՝ եթէ Աստուծոյ
զօրութիւնը ըմբռնելով չուզուին, խիստ սաստիկ
պատիժ պիտի կրեն։

---

1. Բազումք ասեցեն ցնս յաւուրս յայնմիկ, Տէր, Տէր, ո՞չ յանուն քո մարգարէացաք, և յանուն քո դեւս հանաք, և յանուն քո զօրութիւնս բազումս արարաք։ Եւ յայնժամ առացից ցնոսա՝ եթէ ո՛չ երբեք գիտէի զձեզ, և քաշ կացէք ամենեքեան, ոյք գործէք զանօրէնութիւն. Մատթ. Է. 22, 23։

2. Զայս ո՛չ յանձնէ ինչ առաց, այլ զի քահանայապետ էր տարւոյն այնոսիկ մարգարէացաւ, եթէ մեռանելոց էր Յիսուս ի վերայ ազգին. Յովհ. ԺԱ. 51.

Հարցում ԻԹ.

Իսրայէլացիք՝ Եգիպտոսէն ելլելէն մինչեւ
վերջիշեալ Սատոիմ կոչուած տեղը՝ որ-
քան ժամանակէն եկան։

Պաս. Քառասուն տարիէն։ Ըստ որում յի-
շեալ վայրը՝ Յորդանան գետին մօտ կր, յորմէ
անցնելով Աւետեաց երկիրը պէտք է մտնէին,
ուստի Աստուծոյ հրամանաւ Մովսէս և Եղիա-
զար քահանայն՝ Իսրայէլի երկոտասան ցեղերէն
պատեհազվելու կարող քսան տարեկանէն վեր եղող
այր մարդիկը կարձանագրեն, որպէս թի Քշնամւոյն
դէմ պատերազմի ելլելու պատրաստ գտնուին, և
նոցա թիւն էր վեց հարիւր հազար և հազար եօթն
հարիւր երեսուն անձինք։ (Միայն հազար լինը
հարիւր քսան հոգի պակաս՝ երեսուն ութ տարի
յառաջ Սինա լերան առջև կատարուած զօրահա-
մարի թիւէն)։

Աստուած կը հրամայէ Մովսէսի որ քանա-
նեռ երկիրը վիճակաւ բաժնէ իւրաքանչիւր ցեղի
առաւելութեան և նուազութեան համեմատ, և
գրաւելու երկիրները՝ չորս կողմանց սահմանելով
յայտնապէս որոշուին։ Նմանապէս Ղեւտացիներն
առանձին հաշուելով՝ մէկ ամսական մանուկէն վեր
եղող արու անձանց թիւը՝ քսան երեք հազարի
հասաւ։

Եւ որովհետեւ Իսրայէլի ժողովրդեան մէջ մի

աղջիկ զաւակ կարող չէր հօր սահմանածքը ժառանգել, Մանասէի ցեղէն Սաղպատ անուն մի մարդ անապատում մեռած և հինգ աղջիկ զաւակ թողած էր, որոնք խնդիր մատուցին Մովսէսին, Եղիազար քահանայապետին և ժողովրդեան մեծամեծաց, որ իրենց հօր սահմանածքը նորա եղբարց հետ իրենց տրուին, որպէս զի հանգուցեալին անունը չը կորսուի, քանի որ արու զաւակ չունի։

Մովսէս Աստուծոյ հրամանաւ նոցա խնդիրքը կատարելէ յետոյ ժողովրդեան կը պատուիրէ որ արու զաւակ չունեցող անձին սահմանածքը նորա աղջկան տրուի, և եթէ աղջիկ էլ չունի՝ եղբօրը, եթէ եղբայր չունի՝ հօրեղբօրը, եթէ հօրեղբայր չկայ՝ մերձաւոր ազգականին տրուի, որպէս զի մի ցեղին ժառանգութիւնը՝ միւսին չանցնի։

Այս պատճառաւ վերոյիշեալ աղջիկներուն պատուէր տուեցաւ որ ուրիշ ցեղէ երիկ չառնեն, այլ՝ իրենց ցեղէն առնեն. որպէս զի իրենց հօր ժառանգութիւնը ուրիշ ցեղի սահմանածոց հետ խառնուելով նոցա միջև հակառակութիւն չը ծագի. ինչպէս որ գրուած է (Թուոց. Լ.Զ. գլ.)։

Յետոյ Աստուած Մովսէսին կը հրամայէ որ Նաբաւ լեռն ելնելով՝ այն տեղէն Քանանու երկիրը տեսնէ և անդ վախճանի[1]։ (Յիշեալ լեռը

1. Եւ ասէ Տէր ցՄովսէս, ել դու ի լեառն... Նաբաւ, և տես զերկիրն Քանանացւոց՝ զոր ես տայ

շատ բարձր էր, որուն վերի մասը՝ Նաբաւ, իսկ վարի մասը՝ Աբարիմ կը կոչուի)։ Երբ Մովսէս այն հրամանը լսեց, Աստուծմէ ուրիշ բան չը խնդրեր, բայց միայն ժողովրդեան կառավարութեան համար մի անձ որոշէ։

Նայէ դուն Մովսէսի առաքինութեանը. վասն զի, թէև չուրի խնդրոյն առթիւ ժողովրդեան ապօրէն արանջանաց պատճառաւ ինքը Աւետաց երկիրը չը մտնելու վճիռ առաւ, բայց զարձեալ նոյն ժողովրդեան համար Աստուծոյ կաղաչէ որ իւր խնամքը նորա վրայէն անպակաս անելով մի առաջնորդ կարգէ իրեն յաջորդելու համար։

Այո, Աստուած առանց առաջնորդի չը թողուր ժողովուրդը, բայց Մովսէսի յատուկ խընդիրքը այդ մասին, իւր ազգին վրայ ունեցած սաստիկ սէրը ցոյց կուտայ. մանաւանդ որ չը խնդրեր որ իւր որդին կամ ազգականներէն մին՝ գլուխ և առաջնորդ լինի, այլ՝ Աստուծոյ կամաց կը թողու նորա ընտրութիւնը։ Աստուած կը հրամայէ որ Նաւեայ որդին՝ Յեսուն կարգէ առաջնորդ ժողովրդեան, նա՝ որ Մովսէսի ծառայն էր պառաջ, և որու առաջնորդութեամբ Իսրայէլացիք պէտք է Աւետաց երկիրը մտնէին։

Ուստի Մովսէս ի ներկայութեան Եղիազար

որդւոցն Իսրայէլի ի կալուածս, տեսցես զնա՝ և յաւելցես առ ժողովուրդ քո. Թուոց. ԻԷ. 12։

քահանային և ժողովրդեան Ցեսուին վրայ ձեռք դնելով՝ իւր տեղ ժողովրդեան առաջնորդ կը կարգէ։ Ցետոյ զոհերու, Աստուծոյ նուիրեալի ընծայից և այլ Իսրայէլացւոց յատուկ սովորութեանց նկատմամբ նորէն պատուէրներ կուտայ Աստուած Մովսէսին, որ հաղորդէ ժողովրդեան։

Ամանապէս Աստուած կամենալով արդարութեամբ պատժել Մադիանացիները, որոնք՝ քանի մը տարի առաջ Փէորայ միջադէպին համեմատ անպարկեշտ աղջիկներ դրկելով Իսրայէլի բանակը, մեղաց պատճառ եղած էին, կը հրամայէ Մովսէսի, որ նախ՝ այդ ամպարիշտ ցեղը կոտորէ և ապա Ներաւ լերան վրայ վախճանի։

Մովսէս՝ քանի հրամանին կը կատարէ ցեղին հազարական հոգի առնելով Եղիազար քահանայապետի որդւոյն՝ Փենեհէսի առաջնորդութեամբ կը դրկէ Մադիանացւոց վրայ, զոր կը կոտորեն իրենց հինգ թագաւորներով, վհուկիշնալ կախարդ Բաղաամ ևս այնտեղ գտնուելով նոցա հետ կը սպանուի չարաչար մահուամբ։ և թէպէտ բոլոր Մադիամու երկիրը կողոպտելով կաւերեն, բայց իգական սեռը և մանուկները առանց մեռցնելու կը գերեն։

Մովսէս զանոնք տեսածին պէս կը բարկանայ թէ ինչո՞ւ համար կանայքը ողջ թողած են, քանզի նոքա էին որ Բաղաամի թելադրութեամբ Իսրայէլացւոց մեղաց և պատժուելուն պատճառ եղան,

ուստի բացի կոյս աղջիկներէն բոլոր գերեալ կիները և արու մանուկները կոտորել կուտայ, և կը հրամայէ որ ևօթն օր բանակէն դուրս մնալով մաքրուելէ յետոյ բանակը մանէն քան օրինաց։

Ու որովհետև ահագին քանակութեամբ ոսկի, արծաթ, ուրիշ այլ և այլ ապրանք և անասուններ աւար բերած էին, Աստուծոյ հրամանաւ բոլոր ժողովրդեան, Ղեւտացիներուն և խորանին բաժինք կը հանեն, իսկ աղջիկները իբրև ալախին կը ծառայեցնեն։

Սակայն՝ զարմանալին այս է որ այսպիսի մեծ պատերազմի մէջ Իսրայէլացի զօրքէն և ոչ մի անձ կը մեռնի։ Հետևաբար սոյն յաղթութիւնը՝ յայտնի լինելով թէ Աստուծոյ մանաւանդ օգնեալ, նուիրեալ շահաւած էր, ուստի զօրքը, աւարած բոլոր ոսկեղէն զարդերը կը բերեն առ Մովսէս և Եղիազար քահանայապետ՝ Աստուծոյ նուիրելու համար, նոքա էլ խորանում կը գնեն, որպէս զի այդ յաղթութեան յիշատակը անմոռաց մնայ ապագային մէջ։

Թէպետև թշնամիքը հետզհետէ յաղթուելով՝ Իսրայէլեան ազգը պէտք է Յորդանան գետը անցնէր Երուսաղէմի երկիրը մտնելու համար, բայց այդ տեղը շատ խոտաւէտ և արգաւառ լինելուն պատճառաւ Ռուբէնի և Գադի ցեղից երեւելիքը՝ Մովսէսի, Եղիազար քահանայապետին և ժողովրդեան ծերերուն կառաջարկեն որ յիշեալ գետի

այս կողմը իրենց տեղ յատկացնեն առանց դիմացի եղբերը անցնելու, առարկելով թէ իրենց անասունքը խիստ բազմաթիւ են։

Մովսէս՝ սոյն առաջարկը լսելով կը բարկանայ և կը յանդիմանէ երկու ցեղերուն ներկայացուցիչները, վասն զի նա կը կարծէ թէ նոքա՝ միայն իրենց հանգստութեան և շահուց համար Աւետեաց երկիրը դնալու կը ժխտամիին, և տառնեօթնեղորդ հարցումէ յիշուած լուսաններուն նման ժողովրդեան միաքը պղտորել կը կամին։

Սակայն՝ նոքա կը պատասխանեն թէ մեր որդիքն ու ընտանիքը, ինչպես նաև մեր անասունները այստեղ պահպանելով՝ մենք պիտի առաջ կանցնինք Յորդանան գետը և մինչև որ բոլոր ժողովուրդը չը տեղաւորուի, մեր տուները չենք վերադառնար։ Սոյն վստահ և ապահովիչ խօսքերուն վրայ Մովսէս համոզուած լինելով որ նոքա արտ անկեղծութեամբ մասուցած են իրենց առաջարկը, նոյա խնդիրքը կը կատարէ։

Այն միջոցին Մանասէի ցեղը դաղտագրուելիւմ Ամովրհացիները կոտորած և նոյա տիրերը գրաւած լինելով՝ Մովսէս այդ երկիրը Մանասէի ցեղին կուտայ բնակելու համար։ Բայց տեղւոյն փոքրութեան պատճառաւ յիշեալ ցեղին կէսը անդ բնակելով՝ միւս կէսը կանցնի Յորդանանու միւս կողմը։ Ահա այս կերպով երկուք ու կէս ցեղ Յորդանանու այն կողմը բնակելու տեղ

կատանան, իսկ ինն ու կէս ցեղ տպրիլ կողմն անցնելով՝ որոշեալ տեղերում բնակութիւն կը հաստատեն, որոց անուններն ու սահմանները միատեղ Ս. Գիրք կը յիշատակեն (Թուոց. ԼԳ. ԼԴ. պ.)։

Ես սրովհետև Ղևտացիներուն յատուկ տեղ տրուած չէր, (վասն զի նոքա քահանայ լինելով՝ հարկ էր որ տասն երկու ցեղերու քաղաքաց մէջ ևս պտտուէին Աստուծոյ օրէնքը և պատուիրանները նոցա տորվեցնելու համար), այս պատճառաւ Աստուածային հրամանաւ Մովսէս ժողովրդեան կը պատուիրէ որ իւրաքանչիւր ցեղ իւր սահմանին մէջ Ղևտացիներուն տեղ յատկացնէ բնակելու համար, և քառասուն ու երկու քաղաքներ յատկացան նոցա։

Այս քաղաքներէն վեցը՝ քառասը ապաստանի կոչուեցան, որոց երկուքը Յորդանանու անդին կողմը, իսկ միւս երկուքը տպրիլ կողմը գտնուելով, երբ մի մարդ դիպուածով և ակամայ մարդասպանութիւն գործելէ յետոյ այդ քաղաքներէն միոյն մէջ փախչելով ապաստաներ, առանց մեկուն կողմանէ սրգելուելու՝ պարտաւոր էր մինչև ժամանակի քահանայապետին մահը այնտեղ մնալ, և ապա իւր ծննդավայրը դարձած ժամանակ՝ ազատ էր օրինօք, այսինքն նոցա դէմ արեան դատ պահք չէր բանալ։

Այստեղ (Թուոց. պ. Լ.) Ս. Գիրք նորէն կը խօսի վերոյիշեալ Սապատաի դստերաց վրայ,

և այդ առթիւ ցեղական ժառանգութեանց նկատմամբ ամէն շփոթութեան առջևն առնելու համար մանաւանդ և հետայկացուց յատուկ պատուէրներ կը տուէին:

Հարց՝ ԽԵ.

Որովհետև Մովսէս նաև զերան վրայ պէտք է մնայէր, արդեօք իրեն վերադարձնել մի կտակ թողից:

Պատ. Ո՛չ, իրեն վերադարձնել կտակ չը թողուց, սակայն Աստուծոյ պատուիրանները ժողովրդեան կրկին և կրկին յանձնարարից զգուշութեամբ և ճշդութեամբ կատարել: Ուշադրութիւն արա, թէպէտև Մովսէս քառասուն տարիէ ի վեր ժամանակ առ ժամանակ Աստուծոյ պատուէրն ու օրէնքները ժողովրդեան բացատրելու պարտուց մէջ երբէք չը թերացաւ, այսու հանդերձ մեռնելու ժամանակը մօտեցած պահուն՝ ժողովուրդը գումարելով՝ մինչև այն ժամանակ Աստուծոյ՝ իրենց արած բարերարութիւնը, գործած հրաշքները, իրենց հայրերուն ապօրէն ընթացքին պատճառաւ շատ անգամ բարկանալով պատժելը և մանաւանդ Աստուծոյ օրէնքները վերատին կը յիշատակէ. որպէս զի հրամանի հակառակ ընթացից մէջ գտնուելով՝ իրենք ևս չը պատժուին:

Վասն զի Եգիպտոսէն ելնող ժողովուրդը

որոնք որ քանի տարիկանէն վեր էին, իրենց անհնազանդութեան պատճառաւ բուն Աստուածային վճռոյն՝ բոլորն էլ անապատին մէջ մեռան, բացի Յեսուէն և Քաղէբէն որոնք ողջ էին, ինչպէս որ տասնըհօթներորդ հարցման մէջ յիշուեցաւ:

Արդ՝ այն ժամանակ ներկայ եղող ժողովրդեան առջև, որոց ոմանք ի մանկութեան Եգիպտոսէն ելած և ոմանք անապատում ծնած լինելով՝ յառաջագոյն տրուած պատուէրները մի անգամ ևս նորէն հաստատելէն զատ՝ ուրիշ պատուէրներ էլ կատարեց: Նա մանաւանդ Քրիստոսի Փրկչին մերոյ գալուստը կանխաւ կը ծանուցանէ նոցա, որպէս զի եկած ժամանակ նորա հրամանին և օրինաց հնազանդին[1]:

Որովհետև Իսրայէլացիք կատարելապէս հակամէտ էին, այս պատճառաւ մեծ զգուշութեամբ պատուէր կուտայ որ կատարածից հետ մտերմական յարաբերութիւն չանեն, կուռք չը պաշտեն, վասն զի երբ որ պաշտել լինին, ամէն կերպով խեղճ և թշուառ մի կացութեան մատնուելով հանդերձ սաստիկ պատժոյ ևս պէտք է նուաստանին:

Դարձեալ, Մովսէս կը պատուիրէ որ Աստուծոյ օրինաց չը հնազանդողներուն՝ անէծք, և

1. Մարգարէ յեղբաց քոց եբրև զիս յարուսցէ քեզ Տէր Աստուած քո. Բ. Օրին. ԺՔ. 18:

հնազանդողներուն՝ օրհնութիւն տուին, այնպէս որ Յորդանան գետն անցնելով՝ երկաթ (մուրճ) չը պահած քարիւղ չհնուած սեղանի վրայ զոհ մատուցանէն, և ժողովրդեան վից ցիզերը՝ Շմաւոն, Ղևի, Յուդայ, Իսաքար, Յովսէփ և Բենիամին, գարիզին լերան վրայ կենան, իսկ միւս վեցը՝ Ռուբէն, Գադ, Ասեր, Զաբուղոն, Դան, և Նեփթաղիմ, գերազ լերան վրայ կանգնին, օրէնքը չհատարողներուն անէծք տալով՝ գերազ լերան վրայ կեցողները՝ ամէն ասեն, և օրէնքը կատարողներուն օրհնութիւն տալով՝ գարիզին լերան վրայ կեցողք ամէն ասեն:

Յետոյ Մովսէս՝ երկինքն ու երկիրը վկայ բռնելով՝ մինչև այն ժամանակ խօսածներուն համառօտ բովանդակութիւնը կը զրէ իրեւ պատմութիւն կամ յիշատակարան օրհնութեան. որպէս զի ժողովուրդը միշտ կարդայ և ի բերան ուսանի չը մոռանալու համար:

Բացի այդ՝ զօր օրինակ Յակոբ Նահապետ՝ իւր մահուան ժամանակ Աստուծոյ պզտնցութեամբ տասն երկու որդւոց օրհնութիւն տալով հանդերձ՝ նոցա ապրելոց յետ ժամանակաց պատահելիքը յայտնեց, (ինչպէս որ երրորդ գարուն 39-րդ հատցուած յիշուեցաւ) նմանապէս Մովսէս՝

1. Նայեցարուք երկինք և խօսեցայց... Բ. Օրէնք. 1:

մահուան մօտ ժամանակ՝ Իսրայէլացւոց իւրաքանչիւր ցեղին արժանի օրհնութիւնը տալով՝ յետոյ նոցա պատահելի բաները Աստուծոյ պզտնցութեամբ կը յայտնէ:

Ապա Աստուծոյ հրամանին համեմատ Նաբաւելը եղած ժամանակ՝ Մովսէս կը տեսնէ այն երկիրը, զոր Աստուած Աբրահամու, Իսահակայ և Յակոբայ խոստացած էր տալ, և անդ վախճանելով հրեշտակի ձեռամբ Մովաբու ծոր կոչուած տեղը կը թաղուի, որուն գերեզմանը ոչ ոք կը յայտնէ, և ժողովուրդը երեսուն օր սուգ առնելով կողբայ իւր մարգարէ առաջնորդը:

Մովսէս՝ ամբողջ կեանքը մէջ երբէք մարմնաւոր հանգիստ չը գտաւ. վասն զի գեռ եռամսեայ մանուկ էր, Փարաւոնի երկիւղէն՝ մայրը նեղոս գետը ձգեց զայն: Թէև հրաշիւք ինն պատուելով՝ Թագաւորի պալատան մէջ մեծցաւ, բայց իւր ազգին կրած չարչարանքը տեսնելով՝ ինքն էլ նոցա չարչարակից լինելու պէս անհանգիստ էր: Ազգին փրկութեան պատճառ օտար երկիր խոյս տալով հովուութիւն անելու անգամ ղկջաւ:

Իսրայէլեան ազգին առաջնորդ լինելով՝ թէև քառասուն տարի անտանելի նեղութեանց ենթարկուեցաւ, բայց ոչ մի ժամանակ յուսով ապօրինել չը դադրեր: Այնչափ բազմաթիւ մի ժողովրդեան իշխան և առաջնորդ եղաւ, սակայն միշտ

խոնարհ լինելով ոչ երբեք հպարտութիւնը կարող եղաւ նորա սրտին տիրել: Միշտ հնազանդ և Աստուծոյ փառաց այն ատելեան նախանձախնդիր էր, որ մինչև իւր մահը նորա հրամանը ժողովրդեան յայտնելու պաշտօնին մէջ երբեք չը թերացաւ:

Աչխարհիս վրայ նա ուրիշ բան չը խնդրեր, բայց միայն զԱստուած և նորա փառքը տեսնել (կը ցանկայ): Բացի այդ, Աստուծոյ ծառայն կոչուելով՝ նորա փառքը և առաւել մեծացաւ. քանզի մարգուս համար Աստուծոյ ծառայ լինելէ աւելի մեծ փառք և պատիւ կարող չէ լինել: Մովսէսի նման մարգարէ Իսրայէլի մէջ ոչ երբեք տեսնուեցաւ, ինչպէս Ս. Գիրքը կը յայտնէ[1]:

Մովսէս՝ թէև հարիւր քսան տարեկան էր մեռած ժամանակ, բայց նորա անձը՝ Աստուածային կամաց ոչ երբեք ուժ ընկաւ, և ոչ իսկ նորա աչքերը ախտացան, ուսոի քալելով և միայնակ Տեառն լեռն ելաւ մեռնելու համար:

Օրինակ առ Մովսէսի առաքինութիւնէն. որքան կարելի է քեզ՝ քու կամքովդ մեծութեան մի՛ ցանկար[2]. քանի որ աշխարհային մեծութիւնը՝ մարդուս թէ հոգւոյն և թէ մարմնոյն մեծ վնաս է:

1. Ո՛չ ևս եկաց մարգարէ յԻսրայէլ նման Մովսէսի. Բ. Օրին. Ժ. 10:

2. Մեծութիւնն թէ առաւել գայցէ, մի՛ յօժարեսցին սիրտք ձեր. Սաղմ. ԿԱ. 11:

տանդ է: Եթէ արդար լինիս, յայտնի է որ պիտք է նեղութիւն կրես. որովհետև չարութեան համեմատ մարդիկ խիստ բազմաթիւ լինելով՝ բոլորը լաւ կառավարելու համար ահագին ջանից և աքնութեանց կարօտ է:

Եթէ անարդար լինիս, ժողովուրդը կսկսի ապստամբիլ և մի օր կարող է քեզ քարկոծել. այս պատճառաւ այս աշխարհի վրայ անիրաւ իշխանը կամ դատաւորը միշտ երկիւղ կրելէն զատ՝ հանգիստ դերձելուն էլ պէտք է առատապէս պատժուի: Եթէ Մովսէսի նման ի վերուստ հրաւէր կը լինի քեզ ժողովրդեան առաջնորդելու, Աստուածային կամաց դէմ մի՛ կենար, և նորա նման ամէն նեղութեանց անարատութեամբ համբերելով՝ միշտ ժողովրդեան բարւոյն համար աշխատէ:

Վատն զի, մեծութիւնը ոչ թէ իշխելու մէջ կը կայանայ, այլ՝ իշխանութեանդ ներքև գտնուողներուն բարեկեցութեան մէջ, ինչպէս նաև նոցա հոգւոյն համար կրելու նեղութեան և մղձաւանջի մէջ: Մինչ աշխարհ ամենայն վսեմ պայքարին մէջ, Մինչ աշխարհ ամենայն քնոյ հանգիստը կը վայելէ, ժողովրդեան արդար և բարի իշխանը՝ նոցա բարւոք կառավարութեան վրայ խորհելով՝ գրեթէ միշտ քնոյ կարօտ կը մնայ: Ամէն մարդ՝ իւր սեփական օգուտը կը մտածէ,

1. Ըստ առածին, որ բազմաց հշխէ, ի բազմաց եղինչէ:

իշխանք՝ բոլորին օգուտը մտածելով՝ ի հարկէ առաւել կամ նուազ անհանգիստ կը լինի։

Սակայն՝ եթէ արդարութեամբ կառավարելով՝ ամէնուն ուղղութեանը աշխատի և ամէնուն՝ առաքինութեան օրինակ լինի, այն ժամանակ իւր վարձը խիստ մեծ և փառաւոր կը լինի։ Որովհետև իւրաքանչիւր անձ՝ իւր առաքինութեան վարձը կառնու, իսկ պետոյ առաքինութեան պատճառ եղողը՝ նոցա համար ևս Աստուծմէ վարձ կընդունի[1]։ Սորա հակառակն՝ անարդար կառավարութեամբ պետ դպրիակղութիւն առած և մեղաց պատճառ եղած է, նոցա համար. աւելի պատժոյ արժանի կը հանդիսանայ[2]։

Այսու հանդերձ պիտանաւոր է թէ՝ հօգևոր և կամ մարմնաւոր իշխանք՝ օրշափ եւ արդարութեամբ և առաքինութեամբ կառավարեն, դարձեալ բամբասանքէ բոլորովին զերծ և ազատ չեն կարող լինիլ, քանի որ մարդիկ իրարմէ զերազանց և փառաւորագոյն լինելու բաղձանքով՝ ընդհանրապէս միտք կը մեզադրեն, իրարու պակասութիւնը գտնելու պատրուակ կը փնտռեն, ոմանք առ նախանձու և այլք՝ առ տգիտութեան։

1. Զի որ դարձուսցէ զմեզաւորն և մոլորութեան ճանապարհէ նորա, փրկեսցէ զոգի նորա և մահուանէ... Կաթ. Ցակոբ. Ե. 20։

2. Ո՛չ է մարթ չգալ դպրիակղութեան, բայց վայ անմիկ է, յոյր ձեռն գայցէ. Ղուկ. ԺԷ. 1։

Թէպէտև, եթէ մարդոյ պարտաւանքէն և չարախօս լեզուէն ազատուիլ բացարձակապէս անհնար է[1], սակայն համբերութեամբ նոցա ուղղութեան համար աղօթել և միանգամայն աշխատիլ թէ հնարաւոր է և թէ սրբազան պարտականութիւն։ Քաջ խորհէ այս մասին և մի՛ կարծիր թէ՝ երբ չարիդը չուղղուին, քու վարձդ կը կորսուի, այլ՝ նոքա աւելի մեծ պատժոյ արժանի կը լինին[2]։

Վերջապէս, թէ ինչ է մեծութիւնը, ուրիշին մի՛ հարցնիր, այլ՝ Մովսէսին, և նորա օրինակին հետևէ ամենայն համբերութեամբ և արիութեամբ, որպէս զի սխալանաց մէջ չընկնիս և պատժոյ արժանի չը լինիս։

Հարց՝ ԽԷ.

Ինչո՞ւ համար Մովսէսի գերեզմանը չը յայտնուեցաւ։

Պաս. Որովհետև Իսրայէլացիք կռապաշտութեան հակամէտ էին, մի՛ գուցէ զայն պաշտէին, ինչպէս որ սատանան այս չարեաց հետամուտ լինելով՝ Մովսէսի մարմնոյն Աւետաց երկիրը փոխադրելով՝ Մովսէսի մարմնոյն Աւետաց երկիրը փո-

1. Ըստ առածին, չկայ ոք այնքան առաքինի, որ զերծ դատնիցի և նախանձոտաց և և ոտիտաց։

2. Ոչդէ մարդոյ դէտ կացուցի զքեզ Տանդ Իսրայէլի... Եզեկ. Գ. 17։

խաղրութեան կը ցանկար, բայց Միքայէլ հրեշտակապետ արտօնութիւն չը տալով կը թագէ զայն[1]։

Նա՛ մանաւանդ Մովսէս առանց Աւետաց երկիրը կարենալ մտնելու՝ միայն Նաբաւ լեռնէն զայն տեսնելը՝ հոգևոր մտքով կը նշանակէ թէ հին օրէնքը հեռուէն նայելու էր Սինային, և թէ՝ ինչպէս երկրորդ Հարցման մէջ յիշուեցաւ, նորա զօրութեամբ Աստուծոյ արքայութիւնը մտնել կարելի չը լինելով անպատճառ Քրիստոսի շնորհաց կարօտ էր։

Վասն զի, զոր օրինակ Իսրայէլեան ժողովուրդը Մովսէսի մահէն յետոյ Յեսուի առաջնորդութեամբ Յորդանան գետէն անցնելով սուրբ Երուսաղէմի երկիրը մտաւ, այսպէս էլ քրիստոնեայք Սինայի շնորհիւ արքայութեան արժանի կը լինին։ Յեսու՝ Յիսուսի, իսկ Յորդանան՝ սուրբ Աւազանին օրինակ են։ Այս պատճառաւ Մովսէսի՝ Յորդանան գետը չանցնելով Մովաբու ձորին մէջ թաղուիլը՝ կը նշանակէ թէ քրիստոնէական սուրբ հաւատով յայտնուած ժամանակ հին օրէնքը պէտք է դադարէր։

Բայց այդ Մովսէսի գերեզմանը անյայտ մնալով, իսկ Յիսուսի Քրիստոսի գերեզմանը Երու-

1. Ուր Միքայէլ հրեշտակապետ՝ յորժամ ընդդիմանալովսկսաւ սատանայի վիճեալ տայը պատասխանի վասն Մովսիսեան մարմնոյն. Կաթ. Ցուդա. ա. 9։

սաղէմի մէջ ամենուն յայտնի լինելն՝ ապացոյց է թէ նոր օրէնքը միշտ և յաւիտեան պէտք է մնայ, այնպէս որ Յիսուս յարութիւն առած ժամանակ՝ հրեշտակը յարութեան աւետիսը կանանց տալէն զատ՝ կասէ «եկէք եւ տեսէք զտեղին»[1]։ Արդարև այս խօսքով կիմացուի թէ նորա սուրբ գերեզմանին մարդիկ պարտաւոր են ամենամեծ[2] յարգանք և երկրպագութիւն մատուցանել։



1. Եկայք և տեսէք զտեղին՝ ուր կայր. Մատթ. ԻԸ. 6։

2. Եղեցի հանդիսա նորա պատուով. Եսայ. ԽԱ. 10։

ՅԱՆԿ ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԻ

ԴԱՐ Ա.

Նախաբան հեղինակին . . . . Ե.
Երկու խօսք առ ընթերցողս . . . ԺԱ.
Հարցում երես
Ա. Աշխարհս ո՞ր ժամանակ ստեղծուած է. . 1
Բ. Քանի որ ժամանակն աշխարհի ստեղծմանէն կսկսի, անկէ յառաջ ինչպէ՞ս հաշուելու է. 2
Գ. Աշխարհ ասելով ի՞նչ կիմանանք. . . 3
Դ. Աստուած ինչո՞ւ համար արարածները ստեղծեց. 4
Ե. Կարելի՞ է արդեօք ըստ կարելւոյն աշխարհի արարչութեան եղանակը հասկանալ. . 8
Զ. Ինչո՞ւ համար աշխարհս վեց օրում լրացաւ. 11
Է. Դրախտն ո՞ւր էր. 12
Ը. Ադամ ո՞ւր ստեղծուեցաւ. 14
Թ. Աստուած ինչո՞ւ համար Ադամը դրախտին մէջ չստեղծեց. 16
Ժ. Ինչո՞ւ համար մինչև Ադամայ ստեղծուիլը՝ բարձրելոյն անունը Աստուած միայն գրուած է Ս. Գրոց մէջ, նաև Ադամ ստեղծուելէն յետոյ Տէր Աստուած գրուած է. . 17
ԺԱ. Ինչպէ՞ս պէտք է իմանալ թէ Աստուած զմարդ նախ պատկերին համեմատ և ետքն նմանութեամբը ստեղծեց. . . . 18

ԻԲ. Դրախտին մէջ Ադամ ինչ պէտք էր դործել և պահել, մինչու որ կը դրէ թէ Աստուած Ադամը դրախտին մէջ դրաւ դործելու և պահելու. 21

ԻԳ. Ինչո՞ւ համար առաջինն պատուէրը կերակուրի մասին եղաւ. 24

ԻԴ. Ադամին արգիլուած պտուղի ծառին անունն ինչ էր. 26

ԻԵ. Ադամայ պատուէրը տուած ժամանակ՝ եան տեղծուած էր. 28

ԻԶ. Ինչո՞ւ համար արգիլուած պտղոյն ծառը կոչուեցաւ ծառ գիտութեան բարւոյ և չարի. 29

ԻԷ. Ի՞նչ կիմացուի մարու մեռանիլ ասելով. . 30

ԻԸ. Սատանան ինչո՞ւ համար խաբեց մարդը. . 31

ԻԹ. Ինչո՞ւ սատանան օձի միջոցաւ խաբեց մարդը. 32

Լ. Աստուած չէը դիտեր որ Ադամ պիտի մեռանէր, ինչո՞ւ համար պատուէրը տուաւ. . 33

ԼԱ. Աստուած միթէ չէը դիտեր Ադամայ պահուած տեղը, որ կը հարցնէ թէ ո՞ւր ես. . 36

ԼԲ. Աստուած ինչո՞ւ ասաց Ադամին թէ հող էիր և ի հող դառնաս, քանի որ նա անմահ հողի ունէը. 39

ԼԳ. Ինչո՞ւ Աստուած օձին ասաց թէ քու սրտվանի վրայ քալես և հող ուտես, միթէ արդէն հիմակուան պէս չէը քալեր և հող չէը ուտեր. 40

ԼԴ. Աստուած պատժելով Ադամն ու Եւան և օձը, ինչո՞ւ համար չարեաց հեղինակ սատանային մի բան չասաց. 42

ԼԵ. Կենաց ծառն ինչ էր. 43

ԼԶ. Եթէ Ադամ կենաց ծառէն ուտէր, ինչ կը հետևէր. 44

ԼԷ. Աստուած ինչո՞ւ պատուէրը տուաւ քերովբէից պահպանելու կենաց ծառին ճանապարհը. 44 47

ԼԸ. Ադամայ յանցանքն ինչ էր. 48

ԼԹ. Ադամայ յանցանաց փոխարէն ինչ պատիժ տրուեցաւ. 50

Խ. Ադամ իւր զաւակաց և թոռանց մի պատուէր աւանդեց. 52

ԽԱ. Ինչո՞ւ Աբէլի զոհն ընդունելի եղաւ, իսկ Կայէնին՝ ո՛չ. 57

ԽԲ. Պատիժէն յետոյ Կայէն ինչ եղաւ. . . . 58

ԽԳ. Կայէնէն և Աբէլէն զատ Ադամ ուրիշ զաւակ ունեցա՞ւ. 60

ԽԴ. Ինչո՞ւ Աստուած Ենովքը փոխեց աշխարհէս. 61

ԽԵ. Ինչո՞ւ ջրհեղեղ եղաւ. 64

ԽԶ. Նոյ շաղօթից առ Աստուած, որ մարդոց մեղքերին ներէ. կամ մեղաւորները չը խրատեց, որ դառնան իրենց չար ճանապարհէն. 67

ԽԷ. Ամեն տեսակ անասուններէն առնուեցաւ նաւուն մէջ. 68

ԽԸ. Անձրևը սկսելուն՝ մարդիկ անոր պատիժ լինելը հասկնալով զղջացի՞ն. 75

ԽԹ. Նոյ կորսուելոց կաբեկցելով՝ տրտմեցա՞ւ. 76

Խ. Ջրհեղեղն ո՞ր ամսոյն մէջ պատահեցաւ. . 76

ԽԱ. Նոյ՝ տապանին մէջ որքա՞ն ժամանակ մնաւ. 77

ԽԲ. Նոյ որքա՞ն ժամանակ մնաց տապանին մէջ. 77

ԽԳ. Ինչո՞ւ համար տապանը մնալու ժամանակ,

առաջ Նոյ և որդիքը, յետոյ կինն ու որդւոց կիները կը մտնեն. մինչդեռ դուրս ելնելու ժամանակ՝ առաջ Նոյ և կինը, յետոյ որդիքն ու նոցա կիները հետզհետէ դուրս կելնեն. 79

ԴԱՐ Բ.

Ա. Երկրորդ դարն ինչո՞վ կը տարբերի առաջինէն. 80
Բ. Նոյ տապանէն ելնելէ յետոյ ուր բնակեցաւ. 80
Գ. Մինչեւ ծիածանն արդէն չկա՞ր, զոր Աստուած հաշտութեան նշան կը յայտարարէ. 82
Դ. Մարդուն հետ Աստուծոյ հաշտուիլն և ուխտ անելը ինչպէ՞ս հասկնալու է. . 84
Ե. Նոյ և իւր որդիքը ի՞նչ եղան յետոյ. . 85
Զ. Մարդիկ ինչպէ՞ս ցրուեցան աշխարհի չորս կողմերը. 87
Է. Լեզուաց խառնակիլէն առաջ մարդիկ ի՞նչ լեզուով կը խօսէին. 90
Ը. Նոյ քանի՞ տարեկան մեռաւ. . . . 92
Թ. Ի՞նչ քանէ յառաջ եկաւ կռապաշտութիւնը. 92

ԴԱՐ Գ.

Ա. Երրորդ դարը ինչո՞վ կը զանազանուի երկրորդէն. 98
Բ. Աբրահամ արդէն կը ճանչէ՞ր զԱստուած, որոյ հրամանին հնազանդեցաւ. . . 101
Գ. Աստուած կը հրամայէ Աբրահամու որ իւր

քնեկ երկիրը թողու, բայց գնալու տեղին անունը ինչո՞ւ չը յայտներ . . . 102
Դ. Քանի որ տեղւոյ անունը չը տրուեցաւ Աբրահամու, զարմանալի է, որ վոխանակ ուրիշ կողմ երթալու՝ Քանանու երկիրը կը գնայ. 103
Ե. Աստուծոյ՝ մարդուն երևիլն ու խօսելը ինչպէ՞ս հասկնալու է. 105
Զ. Ինչո՞ւ համար Աստուած Քանանու երկիրը տուաւ Աբրահամու, մինչ՛ անկէ աւելի պղտոյեր ու գուարճալի երկիր չկա՞ր. . 107
Է. Քանանու երկիրը Աբրահամու խոստացուած ժամանակ, նա տակաւին որդի չունէր. ինչո՞ւ համար զաւակ չը խնդրեց Աստուծմէ. 108
Ը. Աբրահամ եգիպտոսէն դառնալէ յետոյ ո՞ւր գնաց. 110
Թ. Մելքիսեդեկ քահանայն ո՛վ էր. . . . 112
Ժ. Աբրահամ ինչէ՞ն կը վախնար, որ Աստուած կը քաջալերէ զայն. 113
ԺԱ. Ի՞նչ նշանակութիւն ունէն վերոյիշեալ երինջն ու քօչը, խոյն, աստրակն ու աղաւնին. 117
ԺԲ. Աստուած ամենակարող է և նախապէս կը յայտնէ լինելու բաները. ինչո՞ւ նոյնը խոստման դորժադրութիւնը այնքան ժամանակ ուշացուց. 119
ԺԳ. Ինչո՞ւ երեք հրեշտակները կուգան առ Աբրահամ, մինէ մի հատը բաւական չէր. 123
ԺԴ. Սոդոմացւոց մեղքն ի՞նչ էր. . . . 129
ԺԵ. Սոդոմ Գոմորի տրուած պատիժն ի՞նչ էր. 136
ԺԶ. Աբրահամ ինչպէ՞ս խմացաւ Սոդոմ Գոմորի այրիլն ու Լովտայ ազատիլը. . . 139

ԺԷ. Խաճակը զոհելու հրամանն առած ժամանակ, Աբրահամ ինչ կը խորհէը . . 148
ԺԸ. Ինչո՞ւ Աստուած հրամայեց Աբրահամու, որ Խաճակը զոհ մատուցանէ. . . 158
ԺԹ. Սառա մեռնելէ ղինի Աբրահամ նորէն ամուսնացաւ. 161
Ի. Խոճակ քանի՞ տարեկան էր երբ ամուսնացաւ. 164
ԻԱ. Ցակովբ հօր օրհնութիւնը ինչպէ՞ս առաւ. 170
ԻԲ. Ցակովբ մնայնակ գնաց ի Խառան. . 175
ԻԳ. Ցակովբ որքա՞ն ժամանակ Լաբանին մօտ մնաց. 179
ԻԴ. Երբ Ցակոբի անասունք շատցան, Լաբան ու նորա որդիքը նախանձեցա՞ն. . . 184
ԻԵ. Ցակովբ Խառանէն Քանանու երկիրը դնալու ժամանակ, իւր եղբայրն Եսաւէն վախցա՞ւ. 188
ԻԶ. Ցակովբ Խառանէն վերադարձին՝ հայրը ո՞ղջ էր. 194
ԻԷ. Ցակովբ քանի՞ որդիք ունէր. . . 200
ԻԸ. Ցովսէփ հորին մէջ ձգուած ժամանակ, որդեօք լացա՞ւ և աղաչե՞ց իւր եղբարցը. 207
ԻԹ. Ցովսէփի եղբայրները ինչպէ՞ս իմացուցին իրենց հօրը նորա վիճակը. . . . 210
Լ. Ցովսէփը գնող վաճառականը ո՞ւր տարաւ զայն. 214
ԼԱ. Ցովսէփ որքա՞ն ժամանակ բանտին մէջ մնաց. 219
ԼԲ. Ցովսէփ իշխան դառնալէ ղինի՝ ղինքը ղըրպարտող անամօթ կինէն վրէժ առա՞ւ. . 225
ԼԳ. Ցովսէփ իւր եղբարց անգութ վարմունքն և իւր վիճակը իմացո՞ւց իւր հօր Ցակոբին. 228

ԼԴ. Ցովսէփի երազը ինչպէ՞ս կատարուեցաւ. 230
ԼԵ. Ցովսէփ իւր եղբայրները տեսնելուն պէս ինչո՞ւ զինքը չը յայտնեց նոցա. . . 236
ԼԶ. Ցովսէփ ի՞նչու Բենիամինի տոպրակի մէջ դնել կուտայ իւր գինուոյ բաժակը. . 242
ԼԷ. Ցովսէփ ինչո՞ւ պատուիրեց եղբարցը թէ ճանապարհին միմեանց հետ չը կռուին. . 249
ԼԸ. Երբ Ցակովբ լսեց թէ Ցովսէփ ողջ է և Եգիպտոսի նախաբար, ի՞նչ խորհեցաւ. . 250
ԼԹ. Ցակովբ քանի՞ տարեկան էր Եգիպտոս դնալու ժամանակ. 253
Խ. Ինչո՞ւ Ցակովբ Քանանու երկրում թաղուիլ ուզեց. 258
ԽԱ. Ցովսէփ քանի՞ տարի իշխանութիւն վարեց. 259
ԽԲ. Ցովսէփի մահէն ետքը, Իսրայէլի ժողովրդեան վիճակն ինչպէ՞ս եղաւ Եգիպտոսում. 272
ԽԳ. Մովսէս քանի՞ տարի մնաց Փարաւոնի դստեր մօտ. 277
ԽԴ. Մովսէս քանի՞ տարի մնաց Մադիամում Հռագուէլի մօտ. 282
ԽԵ. Ի՞նչ էին Մովսէսի յառաջ բերած պատճառները. 285
ԽԶ. Ի՞նչ իմաստ ունի վերը յիշուած մորենին ու մէջի կրակը. 290
ԽԷ. Ինչպէ՞ս իմանալու է Աստուծոյ՝ տեսայ, լսեցի և իջայ ասոնք լմնասը. . . . 292
ԽԸ. Վերոյիշեալ երեք տեսակ հրաշից զօրութիւնը (Մովսէսին տրուած) ի՞նչ կը յայտնէ. 295
ԽԹ. Փարաւոն ի՞նչ պատասխանեց Մովսէսի. . 298
Ծ. Քանի՞ տեսակ հարուածներ կամ պատիժ տրուեցաւ Փարաւոնի. 304
ԾԱ. Տաներորդ հարուածէն ետքը, Փարաւոն

Հրաման առաւ Մովսէսի Եգիպտոսէն մեկնելու. 318

ԾԲ. Իսրայէլացիք որ ամօրյն մէջ և ամէսի քանիին Եգիպտոսէն ելան. . . . 321

ԾԳ. Ինչո՞ւ համար հրաման եղաւ որ Իսրայէլացիք տան սեմոց վրայ գառան արիւնով նշանեն. 322

ԾԴ. Ինչո՞ւ Առաւած Իսրայէլացիքը վոխանակ մօտ ճանապարհով Երուսաղէմ տանելու՝ անապատի կողմը խոտորեցուց. . . 326

ԾԵ. Կարմիր ծովու եզերքէն Իսրայէլացիք որ կողմը գնացին. 332

ԾԶ. Մանանան ի՞նչ էր, և ինչպէ՞ս ժողովելով հաց կը շինէին. 335

ԾԷ. Անապատում Իսրայէլի դէմ Թշնամի պատահեցաւ. 338

ԾԸ. Ցաք ոմ էր. 342

Դ Ա Ր Դ.

Ա. Ձորբորդ գարը ի՞նչպէս կը տարբերի երբորդէն. 361

Բ. Օրէնքը ինչպէ՞ս տրուեցաւ. . . . 363

Գ. Ինչո՞ւ զոհին արիւնը Մովսես սեղանին առջև և ժողովրդեան վրայ սրսկեց. . . 371

Դ. Մովսէս և Ահարոն լեռնէն իջնելէ յետոյ նորէն ելա՞ն այնտեղ. . . . 372

Ե. Մովսէս քառասուն օր լեռը եղած ժամանակ, ժողովուրդը հնազանդ մնա՞ց վարը. 376

Զ. Մովսէս կուռքը պաշտողները պատժեց. 382

Է. Երբեք Մովսէսի աղօթքը չընդունուեցաւ, որ Առաւած Իսրայէլի հետ գնալ չուզելով՝ հրեշտակ ղրկել կամեցաւ. . . 386

Ը. Մովսէս երկրորդ անգամ քառասուն օր ու քառասուն գիշեր լերան վրայ մնացած ժամանակ, ժողովուրդը բանակին մէջ ի՞նչ վիճակ ունէր. 396 398

Թ. Տապանակ ուխտին ի՞նչ էր. . . . 400

Ժ. Ի՞նչ ձև ունէր վկայութեան խորանը. 403

ԺԱ. Վկայութեան խորանում քանի՞ սեղան կար. 406

ԺԲ. Ղևտացիները որ ցեղէն էին. . . 409

ԺԳ. Իսրայէլի բանակը որքա՞ն ժամանակ Սինա լերան ստորոտում մնաց. . . . 415

ԺԴ. Իսրայէլի բանակը ի՞նչ կերպով կը չուէր. 418

ԺԵ. Իսրայէլացիք Առաւածոյ երևոյթները ճանաչելով՝ միշտ զո՞հ մնացի՞ն. . . . 428

ԺԶ. Գերեզմանք ցանկութեան կոչուած տեղէն ո՞ւր գնացին Իսրայէլացիք. . . . 433

ԺԷ. Այնուհետև Իսրայէլի բանակը ո՞ւր գնաց. 443

ԺԸ. Ուրիշ ի՞նչ դէպքեր պատահեցան անապատում. 449

ԺԹ. Վերոյիշեալ պատժոյն վրայ ժողովուրդը զղջալով՝ հնազանդեցա՞ւ. . . . 454

Ի. Ապա Իսրայէլի բանակը ո՞ւր գնաց. . 458

ԻԱ. Ցեսոյ Իսրայէլը ո՞ւր երթևեկանեցաւ. .

ԻԲ. Վերոյիշեալ պատժէն յետոյ ժողովուրդը Առաւածային հրամանին ընդդէմ գործե՞ց նորէն. 462

ԻԳ. Ինչո՞ւ համար Առաւած թոյլ տուաւ Բաղաամ, որ Բաղակի մօտ գնայ. . . . 470

ԻԴ. Իսրայէլացիք Եգիպտոսէն ելնելէ մինչև Սաստիկ որքա՞ն ժամանակէն եկան. 473

ԻԲ. Որովհետև Մովսէս նաբաս լերան վրայ պնակի մեռնէր, ասդրեօք երեն վերաբերեալ մի կտակ թողո՞ւց. 480

ԻՃ. Ի՞նչու համար Մովսէսի գերեզմանը չը յայտնուեցաւ. 487

ՏՊԱՐԱՆ Մ. ՍՓՈՓՈՑ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ.

Լոյս են տեսել եւ վաճառւում են.

		Ռ.	կ.
1	**Ծաւրարի Քարոզներ.** *թարգմ.* **Ս. Մ.** .	1	
2	**Մատչելի Քարոզներ.** *տեղական թ.* **Մահար եպիս-կոպոս Բաբեռեանցեան** . . .		30
3	**Մի մանկան հոգեւ պատմութիւն.** *թարգմ.* **Տ. վ.**	1	
4	**Աւետարանը պատմութեան մէջ.** *թարգմ.* **Ա. Տ. Յ.**		25
5	**Քանդագանութիւն եկեղ դարուց.** *հատոր Ա. թարգմ.* **Մաղաքիա եպիսկոպոս Տէրմէնեան** . .		80
6	*Նոյնը Բ.*	1	20
7	*Նոյնը Գ.*		80

ԳԻՆՆ Է 80 ԿՈՊԵԿ

Գումարով գնողներին 20% զիջում.

Հասցէ՝ Св. Эчміадзинъ. Типографическому Комитету.

ՀՍՍՀ — СССР
Մ. Ա. Մաշտոցի անվան
Մատենադարան

ՀՀ Ազգային գրադարան
NL0159182